ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Աշոտ Հայրունի

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 94(100)(075.8)
ԳՄԴ 63g73
Հ 300

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Հայրունի Աշոտ
Հ 300 Ցեղասպանությունների պատմություն (բուհական դասագիրք) / Աշոտ Հայրունի: -Եր., ԵՊՀ հրատ., 2025, 422 էջ:

Դասագրքում ներկայացված են միջազգային դատարանների, միջազգային այլ կառույցների, նաև ցեղասպանություն իրականացրած պետության (իրավահաջորդի) կողմից որպես ցեղասպանություն բնորոշված զանգվածային սպանություններն ու այլ ոճրագործությունները: Ներածությունում քննության ենթարկվող հարցերի համատեքստում անդրադարձ է կատարվել նաև արցախահայության ցեղասպանությանը և Դարֆուրում տեղի ունեցած զանգվածային հանցագործություններին: Դասագիրքը, նախատեսված լինելով բուհական դասընթացների համար, կարող է օգտագործվել նաև գիտահետազոտական հաստատություններում, ավագ դպրոցներում, արտաքին քաղաքականություն իրականացնող գերատեսչություններում և հարցով հետաքրքրված այլ կառույցներում:

ՀՏԴ 94(100)(075.8)
ԳՄԴ 63g73

ISBN 978-5-8084-2716-7
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427167

© ԵՊՀ հրատ., 2025
© Հայրունի Ա., 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....9
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....16
Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը....17
Լեմկինի հետագա ջանքերը. ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայի ստեղծումը....21
Կոնվենցիան հետագա փորձառությունների լույսի ներքո....28
Միջազգային քրեական դատարանը....43
Նախապատմություն....43
ՄՔԴ-ի ստեղծումը և գործունեության հիմնարար սկզբունքները....45
Արցախահայության ցեղասպանությունը....49
Ադրբեջանական կեղծիքը և իրականությունը....63
1921 թ. Արցախի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին ոչ լեգիտիմ գործողություն էր....63
Արցախի ինքնորոշումը միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական է....66
Արցախի և ՀՀ-ի վրա ռազմական հարձակումները՝ որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ....68
Արցախահայության տեղահանումը՝ որպես ահազանգ և հրամայական....70

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ....76
Հայկական հարցի միջազգայնացումը....76
Արևմտահայության դրության հարաճուն վատթարացումը....82
Սասունի 1894 թ. կոտորածը: Բարեփոխումների մայիսյան ծրագիրը....84
Հայ ժողովրդի պարբերական կոտորածները 1895-1896 թթ.....88
1895-1896 թթ. ինքնապաշտպանական մարտերը....98
Զեյթունի ինքնապաշտպանությունը....98

Վանի ինքնապաշտպանությունը և դրան հաջորդող կոտորածը .. 100
Օսմանյան բանկի գրավումը և Կ. Պոլսի հայերի նոր կոտորածը 104
Կոտորածների հետևանքները 106
Գերմանա-օսմանյան դաշինքի ձևավորումը 107
Սասունի 1904 թ. ապստամբությունը 109
Երիտթուրքական հեղաշրջումը և կիլիկիահայերի կոտորածները 1909 թ. 110
Հայկական հարցի վերաբացումը Առաջին աշխարհամարտի նախօրեին 117
Ցեղասպանության գագաթնափուլը՝ Մեծ եղեռնը 120
Հայերի պարբերական հետապնդումներն աշխարհամարտի առաջին ամիսներին 120
Բռնագրավումներ 123
Հայ զինվորականության զինաթափումն ու սպանդը 124
Հայ մտավորականության սպանդը 127
Հատուկ կազմակերպությունը (Թեշքիլաթը մահսուսե) 129
Տեղահանության մասին օրենքը 130
Հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունը 132
ա) Կիլիկիայում և Հյուսիսային Սիրիայում 132
բ) Արևմտյան Հայաստանում 134
գ) Արևմտյան նահանգներում 140
Հրամանները 142
Մահերթը և աքսորյալների ճակատագիրը 145
Անապատ՝ աքսորի վերջնակետ հասած հայերի ճակատագիրը 152
Բռնի իսլամացումը 155
Հայապատկան ունեցվածքի կողոպուտը 159
ա) «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը: Լուծարման հանձնաժողովները 159
բ) Հինգ միլիոն ֆունտը 161
Մեծ եղեռնի հետևանքները 163

Ինքնապաշտպանական մարտերը 1915 թ. 165
Վանի ինքնապաշտպանությունը 165
Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը 166
Մուշ-Սասունի ինքնապաշտպանությունը 167
Մուսալեռցիների ինքնապաշտպանությունը 168
Ուրֆայի ինքնապաշտպանությունը 170
Հայերի կոտորածները 1918 թ. 172
Մեղքը և մեղսակցությունը 173
Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում. Սևրի պայմանագիրը 178
Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում .. 179
Ցեղասպան քաղաքականության շարունակումը քեմալականների կողմից 1920-1923 թթ. 182
Ցեղասպանության պատասխանատուների դատավարություններն օսմանյան ռազմական դատարաններում 185
Նեմեսիս գործողությունը 187
Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը 192

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԵՐԵՐՈՆԵՐԻ ԵՎ ՆԱՄԱՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ . 195
Պատմական համառոտ ակնարկ 195
Հերերոների 1904 թ. ապստամբության դրդապատճառները 196
Ապստամբության սկիզբը 198
Ապստամբության ընթացքը և առաջին ռազմական գործողությունները 201
Վաթերբերգի ճակատամարտը և ցեղասպանության մեկնարկը 204
Հերերոների բնաջնջման հրամանը 206
Վերապրած հերերոների դրությունը 208
Նամաների ապստամբությունը 211

Հասարակական արձագանքները Գերմանիայում 215
Համակենտրոնացման ճամբարներում 216
Գերմանիայի քաղաքական դիրքորոշումը: Հաշտության նախաձեռնություններ և ցեղասպանության ճանաչումը 217

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 225
ՀՈԼՈՔՈՍՏԸ 225
Վայմարյան Հանրապետության հիմնադրումը 225
Հանրապետության առաջին տարիների ծանր դրությունը 235
Ադոլֆ Հիտլերը և Գերմանական բանվորական կուսակցությունը: Հիտլերյան հեղաշրջման փորձը 1923 թ. նոյեմբերին 237
Վայմարյան Հանրապետության «ոսկեդարը» 242
Հիտլերյան կուսակցության քաղաքական վերելքը 244
Իշխանության բռնազավթումը Հիտլերի և նրա կուսակցության կողմից 249
Հիտլերի անձի պաշտամունքը 256
Հակասեմիտականությունը Գերմանիայում: Հիտլերի գաղափարական «հայրերը» 258
Հայերը գերմանական նացիոնալ-սոցիալիզմի ռասիստական հայեցակարգում 265
Հիտլերյան վարչակարգի քաղաքականությունը հրեաների հանդեպ մինչև աշխարհամարտի բռնկումը 267
Նյուրնբերգյան օրենքները 267
Հրեաների մեկուսացումը հասարակական կյանքից 270
Բյուրեղապակյա գիշերը 272
Համակենտրոնացման ճամբարներում 276
Հրեաների դրությունը Գերմանիայում և «հրեական հարցը» 1939-1941 թթ. 279
Հոլոքոստը՝ գործողության մեջ 285
Հրեաների զանգվածային ոչնչացման մեկնարկումը: Վանզեի խորհրդաժողովում ընդունված ծրագիրը 285

Մահվան ճամբարները: Հրեաների կազմակերպված գետոյավորումը և «էվակուացիան».....290
Աշխատունակ հրեաների աշխատանքային պայմանները.....294
Մարդկանց վրա կատարվող փորձարկումները.....296
Ոչնչացումը՝ «ստացիոնար» եղանակով.....297
Զոհերի կոլեկտիվ դիմադրության փորձեր.....303
Գնչուների ոչնչացումը.....303
Օսկար Շինդլեր.....305
Նյուրնբերգյան դատավարությունները և դրանց նշանակությունը միջազգային իրավունքի զարգացման հարցում.....306
Հատուցումների վճարումը.....310

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԹՈՒԹՍԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՌՈՒԱՆԴԱՅՈՒՄ.....312
Թուքսիների և հուքուների հակամարտության նախապատմությունը.....312
Հուքուների հեղափոխությունը և հուքուական վարչակարգը Գրեգորի Կայիբանդայի ղեկավարման շրջանում.....315
Հուքուները և թուքսիները մինչև 1980-ական թթ. վերջը.....317
Քաղաքացիական պատերազմը.....319
Ցեղասպանության նախապատրաստումը.....324
Ցեղասպանությունը.....327
Հետապնդումների և սպանդի մեկնարկը.....327
Ցեղասպանության ծավալումը.....329
Հրամանները.....331
Սպանդի ընթացքն ու ծավալը.....332
Մարդասպանները.....334
Վերապրողները.....336
Դիմադրության փորձեր.....337
Տվաների դերը.....340

Քաղաքացիական պատերազմի նոր ծավալումը 340
Միջազգային արձագանքները 343
Փախստականները 348
Բռնաբարությունների զոհերը 349
Եկեղեցին և ցեղասպանությունը 350
Իրավական գործընթացները 352
Հաշտեցման քաղաքականությունը 355
ՌՀՃ-ի դերակատարությունը. հակասական
մեկնաբանություններ և փոխադարձ մեղադրանքներ 356

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԲՈՍՆԻԱՑԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՐԵԲՐԵՆԻՑԱՅՈՒՄ 358
Նախընթաց իրադարձությունները 358
Պաշտպանական գոտու ստեղծումը 360
Բոսնիացի սերբերի զորամասերի ներխուժումը
պաշտպանական գոտի 364
Բոսնիակների փախուստը Պոտոկարի 365
Մարդկանց սելեկցիան Պոտոկարիում. կանանց, երեխաների և
ծերերի տարհանումը 366
Փախուստ շարասյունով 367
Սպանդը 370
Քաղաքական և իրավական գործընթացները 372
Խաղաղապահների դերակատարության հարցը 376
Վերապրածների բողոքները 378
ՎԵՐՋԱԲԱՆ 382
РЕЗЮМЕ 384
SUMMARY 389
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 393

ՆԱԽԱԲԱՆ

Դասագրքում ներկայացված են աշխարհում տեղի ունեցած այն զանգվածային սպանություններն ու այլ ոճրագործությունները, որոնք միջազգային դատարանների, միջազգային այլ կառույցների և կամ ցեղասպանություն իրականացրած պետության (իրավահաջորդի) կողմից բնորոշվել են որպես ցեղասպանություն: Ներածությունում քննության ենթարկվող հարցերի համատեքստում անդրադարձ է կատարվել նաև արցախահայության ցեղասպանությանը և Դարֆուրում տեղի ունեցած զանգվածային հանցագործություններին:

Անշուշտ, անհնար է սույն դասագրքի ծավալում մանրամասնորեն անդրադառնալ ցեղասպանություններին վերաբերող բազմազան բոլոր հարցերին: Դասագիրքը, այնուհանդերձ, ապահովում է ամբողջական իմացություն խնդրո առարկա ցեղասպանությունների վերաբերյալ:

Համաշխարհային նորագույն պատմությունը փաստում է, որ ցեղասպանություն հանցագործությունը հարաճուն կերպով շարունակում է մնալ որպես մարդկության դեմ ուղղված սպառնալիք: Ցեղասպանագիտության մեջ հաճախ է հանդիպում այն տեսակետը, որ որևէ ցեղասպանության ժխտումն այլ բան չէ, քան դրա շարունակումը: Այդ տեսակետը ճշմարիտ է այն առումով, որ ցեղասպան վարչակարգի և հանրության ժառանգորդները, գիտակցաբար ժխտելով ցեղասպանությունը, իրականում հանդես են գալիս որպես ցեղասպանության քաղաքականության կողմնակիցներ և պոտենցիալ ցեղասպաններ: Ըստ այդմ՝ անգերագնահատելի կարևորություն ունի ցեղասպան պետության կամ նրա իրավահաջորդի ժխտողականության դեմ պայքարը: Դա թելադրվում է ոչ միայն ցեղասպանության կանխարգելման ու պատժման հարցում միջազգային իրավունքի որդեգրած առաջնահերթություններով,

այլև ցեղասպանված ժողովուրդների համար ազգային անվտանգության ապահովման կարևորագույն նախադրյալ է:

Ժխտողականությունը դադարում է գործել կամ լինել սպառնալիք այն ժողովուրդների համար, որոնց ցեղասպանությունը ճանաչվել է ցեղասպան պետությունների կամ դրանց իրավահաջորդների կողմից: Օրինակ, հրեաների, հերերոների և նամաների, Ռուանդայի թութսիների կամ սերբական բոսնիակների համար այդ վտանգն այլևս չկա: Օսմանյան պետության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության ժխտողականությունը, Ադրբեջանի վարչակարգի կողմից իրականացված՝ արցախահայության ցեղասպանությունը, ադրբեջանական (ժամանակ առ ժամանակ՝ նաև թուրքական) պաշտոնական կառույցների կողմից տասնամյակներ շարունակ իրականացվող հայատյաց քարոզչությունը {(272), (273), (274), (275)}, սակայն, ցույց են տալիս, որ վերոնշյալ սպառնալիքը շարունակում է կախված մնալ հայ ժողովրդի վրա:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը, որին ի սկզբանե լծվել է հայկական սփյուռքը, և որին սատարել են նաև Հայաստանի երրորդ Հանրապետության իշխանությունները, այդ սպառնալիքի չեզոքացման կարևորագույն միջոցներից մեկն է: Ուստի լիովին հիմնավորված է այն տեսակետը, որ ցեղասպանության միջազգային ճանաչումն այնքան ժամանակ պետք է մնա որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություն, մինչև պաշտոնական Թուրքիան նույնպես կճանաչի ցեղասպանությունը:

Ներկայումս թուրքական սփյուռքում կան բազմաթիվ թուրքեր և քրդական սփյուռքում՝ քրդեր, որոնք Թուրքիայից հեռանալուց հետո են միայն տեղեկացել Հայոց ցեղասպանության մասին և այդուհետ հետևողականորեն պայքարում են, որպեսզի Թուրքիան ճանաչի ցեղասպանությունը: Նրանց օրինակը փաստում է, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցանկացած ցեղասպան պետու-

թյան կամ նրա իրավահաջորդի հասարակության իրազեկվածությունը կարևորագույն նախադրյալ է ժխտողականության չեզոքացման և, ի վերջո, տվյալ վարչակարգի կողմից ցեղասպանության ճանաչման համար: Ուստի պետք է օգտագործել բոլոր միջոցները Թուրքիայի լայն հասարակական շրջաններին իրազեկման հնարավորություն ընձեռելու համար:

Հայոց ցեղասպանությունը, որը լիովին ապացուցված է և վիճարկման ենթակա չէ (այդ հարցում միակարծիք են նաև միջազգային ցեղասպանագիտական շրջանները), իրականացվել է Օսմանյան պետության՝ իրարահաջորդ երեք վարչակարգերի կողմից՝ 1894-1923 թթ.: Այն ընթացել է չորս փուլերով. առաջին փուլն ընդգրկում է համիդյան վարչակարգի կազմակերպած և իրականացրած՝ 1894-1896 թթ. պարբերական կոտորածները, որոնք հայերի խոսույթում անվանվում են «Փոքր եղեռն»: Երկրորդ փուլն ընդգրկում է 1909 թ.ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած՝ հայերի զանգվածային կոտորածները, որոնց պատասխանատվությունը կրում են և՛ համիդյան, և՛ երիտթուրքական վարչակարգերը: Երրորդ փուլը, որը ցեղասպանության գագաթնակետն է, և որը հայերն անվանում են «Մեծ եղեռն», ընդգրկում է երիտթուրքական վարչակարգի կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան պետության հայ ժողովրդի զանգվածային տեղահանումն ու սպանդը, ինչպես և 1918 թ. ներխուժման ժամանակ թուրքական զորամասերի կողմից կամ նրանց աջակցությամբ կատարված՝ հայերի կոտորածները: Ցեղասպանության չորրորդ փուլում քեմալականներն իրականացրին հայ ժողովրդի մնացորդի կոտորածներն ու արտաքսումները: Այդ չորս փուլերում կատարված ցեղասպանական գործողությունների փոխկապակցվածությունն անժխտելի է: Ավելին, լիովին հաստատված է նաև երիտթուրքական և քեմալական վարչակարգերի գաղափարական ու կադրային շարունակականությունը {(48)}:

Ինչ վերաբերում է «Հոլոքոստ» (Holocaust) եզրույթին, ապա այն սերում է հին հունական «holokaútoma» (լատիներեն՝

«holocaustum») բառից, որը նշանակում է «ողջակիզում»: Այն ունի շուրջ 2500 տարվա պատմություն, և անտիկ շրջանում գործածվել է որպես ողջակիզման միջոցով կենդանիների զոհաբերման անվանում: Այդ եզրույթը Երկրորդ աշխարհամարտից կարճ ժամանակ անց Մեծ Բրիտանիայում ու ԱՄՆ-ում, ինչպես և անգլոսաքսոնական բոլոր երկրներում մեծ տարածում ստացավ՝ որպես գերմանական նացիոնալ-սոցիալիստների կողմից հրեաների բնաջնջման բնորոշում, չնայած կային նաև առարկություններ եզրույթի ծագումնաբանության (կենդանիների ողջակիզում) պատճառով: Գերմանախոս երկրներում եզրույթն այդ գործածությամբ տարածվեց 1979 թ. «Հոլոքոստ. Վայս ընտանիքի պատմությունը» փաստավավերագրական սերիալի հեռարձակումից հետո: Ներկայումս այդ եզրույթն ունի միջազգային գործածություն՝ բնորոշելով Աշխարհամարտի ընթացքում իրականացված՝ հրեաների, նաև գնչուների ցեղասպանությունը:

Ուշագրավ է, որ «Հոլոքոստ» եզրույթը վերոնշյալ նորացված իմաստով առաջին անգամ հայտնվել է անգլալեզու գրականության մեջ դեռևս 20-րդ դարի սկզբին՝ Մեծ եղեռնից առաջ, որպես 1890-ական թթ. հայերի պարբերական կոտորածների և կիլիկիահայության 1909 թ. կոտորածների բնորոշում {(97), (225)}:

Ֆրանսիացի ռեժիսոր Կլոդ Լանցմանի «Շոա» փաստագրական ֆիլմի ցուցադրումից հետո Եվրոպայում 1985 թ.-ից շրջանառության մեջ դրվեց նաև «Շոա» («Shoah», եբրայերեն նշանակում է «աղետ») եզրույթը, ընդ որում՝ վերջինս բնորոշում է միայն հրեաների ցեղասպանությունը, իսկ «Հոլոքոստ» եզրույթը վերաբերում է, ինչպես նշվեց, նաև գնչուների ցեղասպանությանը:

Ներկայումս միջազգային հանրային շրջաններում լայն տարածում ունի Հոլոքոստի «բացառիկության» տեսակետը, որը թերևս շրջանառության մեջ է դրվել հրեական լոբբինգի միջոցով և ամրագրվում է նաև պաշտոնական փաստաթղթերում: Մինչև իսկ Գերմանիայի Բունդեսթագի՝ 2016 թ. հունիսի 2-ին ընդունված բա-

նաձևում, որով վերջինս ճանաչել է Օսմանյան պետությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանությունը, նշված է. «Մենք ընդսմին գիտակցում ենք Հոլոքոստի բացառիկությունը, որի համար Գերմանիան մեղք և պատասխանատվություն է կրում» {(202)}:

Այդ տեսակետը, որը պատճառաբանվում է այն հանգամանքով, թե Հոլոքոստի զոհերի սպանդն «ինդուստրացված» էր, չունի որևէ հիմնավորում: Ավելին, այն ունի խիստ բացասական հետևանքներ, քանի որ այդպիսով հարաբերականացնում է ցեղասպանություն հանցագործությունը, որը հստակ սահմանված է միջազգային իրավունքով: Յուրաքանչյուր ցեղասպան վարչակարգ ցեղասպանության դեպքում օգտագործում է իրեն մատչելի գիտատեխնիկական գործիքները, և Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական վարչակարգը, բնականաբար, ուներ ավելի զարգացած գործիքներ, քան երիտթուրքերը: Դա Հոլոքոստին ամենևին «բացառիկություն» չի հաղորդում: Ընդհակառակը, եթե մենք գնանք ցեղասպանությունների հարաբերականացման այդ ճանապարհով, ապա կարելի է հիմնավորել և արձանագրել, որ, օրինակ, Հայոց ցեղասպանությունը եղել է «ամենացեղասպանական» ցեղասպանությունը, քանի որ այդ ցեղասպանության ժամանակ իրականացված՝ զոհերի ֆիզիկական և հոգեկան խոշտանգումները անհամեմատելի են Հոլոքոստի զոհերի դեպքում կատարվածի հետ, և այդ առումով Հայոց ցեղասպանության հետ կարող է համեմատվել միայն Ռուանդայի թութսիների ցեղասպանությունը:

Հայ և միջազգային ցեղասպանագետները պետք է իրենց խնդիրը համարեն ի ցույց դնել որևէ ցեղասպանության բացառիկության կեղծիքը, որը ոչ միայն որևէ իրական կռվան չունի, այլև անուղղակիորեն նսեմացնում է այլ ցեղասպանությունների զոհերի հիշատակը:

Դասագրքում օգտագործվել են արժեքավոր և անուրանալի վավերականություն ունեցող սկբնաղբյուրներ ու գրականություն,

որոնք մասամբ առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանց վավերականությունը հիմնավորվել է նաև դասագրքի պատրաստման ընթացքում որոշակի իրադարձությունների վերաբերյալ տարբեր ականատեսների ու հեղինակների ներկայացրած տեղեկությունների համադրավերլուծության միջոցով: Օրինակ, ցեղասպանության վերապրող Արամ Անտոնյանի գրքում ներկայացված (մինչև իսկ կողմնակի նշանակության) բազմաթիվ փաստեր հաստատվում են զանազան օտար հեղինակների կողմից: Ինչ վերաբերում է նրա գրքում հրապարակված՝ Թալեաթի և հայ ժողովրդի այլ դահիճների բազմաթիվ հրամաններին, ապա դրանց վավերականությունը նույնպես կասկածից դուրս է: Հարցը մանրազնին քննության ենթարկելով՝ այդ փաստաթղթերի իրական լինելը հաստատել է նաև թուրք պատմաբան ու ցեղասպանագետ պրոֆ. Թաներ Աքչամը {(14) *99-136*}:

Նկատի առնելով թուրքական ժխտողականության արդի միտումները՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող շարադրանքում առաջնահերթորեն օգտագործվել են օտար սկզբնաղբյուրներն ու դրանցում առկա վկայությունները: Դասագրքի վերջնամասում ներկայացված բոլոր սկզբնաղբյուրներն ու գրականությունը համարակալված են, իսկ հղումները տրված են տեքստում՝ ձնավոր փակագծերի միջև, ընդ որում սովորական փակագծերում տրված է տվյալ սկզբնաղբյուրի համարը, որին (առկայության դեպքում) շեղատառերով հաջորդում են էջանշումները: Միաժամանակյա երկու և ավելի հղումների դեպքում դրանք բաժանված են ստորակետերով:

Տեքստի լեզվաքերականական նույնականության ապահովման և այդպիսով այն ուսանողների համար առավել դյուրամատչելի դարձնելու նպատակով արևմտահայերեն հղումները շարադրվել են արևելահայերենով: Մեջբերումներում առկա ընդգծումները կատարել են դրանց հեղինակները:

Դասագրքում տեղ գտած օտարալեզու եզրույթների առաջին օգտագործման դեպքում կից՝ սովորական փակագծերում ներկա-

յացված են դրանց հայերեն թարգմանությունները: Նոր ժամանակագրության ընդունմանը նախորդած որոշ իրադարձությունների հիշատակման դեպքում, որոնք գիտական գրականության մեջ թվագրվել են նաև ըստ այդ ժամանակագրության, կատարվել է շեղագծով սահմանազատված երկակի թվագրում ընթերցողին շփոթությունից զերծ պահելու համար:

Օգտագործված բոլոր համացանցային նյութերը վերջին անգամ դիտվել են 2025 թ. մարտի 1-ին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

* * *

Ըստ միջազգային իրավունքի՝ ցեղասպանություն հանցագործության սահմանումը և քրեականացումը տեղի են ունեցել Երկրորդ աշխարհամարտից հետո:

Ժամանակակից միջազգային իրավունքի զարգացման առաջին քայլերն ի հայտ են եկել դեռ 1648 թ. Վեստֆալյան հաշտության պայմանագրով ստեղծված նոր աշխարհակարգում: Այդ պայմանագրում արձանագրվեց կրոնական փոքրամասնությունների պաշտպանության անհրաժեշտությունը: Հետագայում, «Ցամաքային պատերազմների օրենքների և սովորույթների մասին» Հաագայի 1899 թ. և 1907 թ. կոնվենցիաներում ամրագրվեց «Մարդկայնության օրենքներ» արտահայտությունը, և բնակչության համար էլ սահմանվեց պաշտպանություն «միջազգային իրավունքի նորմերի» ներքո: Դրանք, այնուհանդերձ, մնում էին որպես ընդհանուր ձևակերպումներ, վերաբերում էին պատերազմական իրադրություններին, բացակայում էին նաև այդ ամենի գործադրման և վերահսկման մեխանիզմները:

1915 թ. մայիսի 24-ին, երբ Օսմանյան պետությունում սկսվել էր հայ ժողովրդի բնաջնջումը, Անտանտի դաշնակիցներ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան հրապարակեցին համատեղ հայտարարություն, որում «օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ» սանձազերծված՝ հայերի «զանգվածային սպանությունները» բնորոշվում էին որպես «Թուրքիայի նոր հանցագործություն մարդկության ու քաղաքակրթության դեմ»: Դաշնակիցները միաժամանակ Բ. Դռանը ծանուցում էին, որ անձնապես պատասխանատվության են ենթարկելու «թուրքական կառավարության բոլոր անդամներին և նրանց այն լիազոր ներկայացուցիչներին, որոնք մասնակցել են նման զանգվածային սպանություններին» {(127) *200*, (195)}:

Օսմանյան պետության ռազմական դատարաններում 1919 թ. թուրք ոճրագործների դատավարությունների մեկնարկումը հույս էր ներշնչում, որ Անտանտի երեք տերությունների մեղադրանքն ի կատար է ածվելու: Այդ դատավարությունները, սակայն, քեմալական շարժման զարգացմանը զուգընթաց թուլացան և դադարեցվեցին: Չնայած վերոնշյալ մեղադրանքի որոշակիությանը և փաստական հիմնավորվածությանը՝ այն ժամանակ էլ դեռ չկային զանգվածային սպանությունների և «մարդկության ու քաղաքակրթության դեմ» այլ հանցագործությունների պատժման միջազգային իրավական նորմեր: Դրան հասնելու համար միջազգային իրավունքը դեռ պետք է շարունակեր զարգանալ, և Հայոց ցեղասպանությունը նույնպես կարևոր դեր էր խաղալու այդ հարցում:

Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը

Ցեղասպանություն հանցագործության բնութագրումը և ներառումը միջազգային քրեական իրավունքում տեղի ունեցավ Երկրորդ աշխարհամարտից հետո Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայի ընդունմամբ, որի նախագծի հեղինակներից մեկը հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինն էր:

Զանգվածային հանցագործությունների անպատժելիության հարցը Լեմկինին սկսել էր զբաղեցնել դեռևս 12 տարեկան հասակից, երբ նա ընթերցեց Հ. Սենկեվիչի «Յո՞ երթաս» վեպը: Ավելի ուշ, երբ նա տեղեկացավ մի շարք էթնիկ ու այլ խմբերի հետապնդումների պատմություններին, այդ հարցն ավելի էր զբաղեցնում նրան: Այն իրադարձությունը, սակայն, որն իր՝ Լեմկինի վկայությամբ, արմատապես փոխեց նրա կյանքը, Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունն էր: 21-ամյա Լեմկինն ուսանում էր Լվովի համալսարանում, երբ մի լրագրից տեղեկացավ Թեհլիրյանի դատավարության մասին: Դատավարությունը նրա համար նորովի բացահայտեց իրավունքի անկատարությունը զանգվածային ոճրա-

գործությունների հետաքննության և պատժման հարցում: Երբ Լեմկինը քրեական իրավունքի մի պրոֆեսորի հարցնում է, թե ինչու Թալեաթը չի ձերբակալվել հայերի կոտորածները կազմակերպելու պատճառով, ստանում է հետևյալ պատասխանը. դա կլիներ միջամտություն մի այլ երկրի ներքին գործերին և նրա ինքնիշխանության ոտնահարում:

Չնայած պրոֆեսորի տեսակետն առաջնորդվում էր ժամանակի միջազգային իրավունքով, Լեմկինը դա անընդունելի էր համարում: Այն, որ մի մարդու սպանությունը համարվում էր հանցագործություն, և հանցագործը քրեական հետապնդման էր ենթարկվում, իսկ միլիոնավոր մարդկանց սպանության դեպքում այդպիսի իրավական նորմեր չկային, շարունակ մտատանջում էր նրան: «Թեհլիրյանն ինքն է իրեն նշանակել մարդկության խղճի պահանջների իրագործող,– հետագայում իր կենսագրական նոթերում գրում էր Լեմկինը:– Կարո՞ղ է, սակայն, որևէ մեկն իրեն նշանակել արդարադատություն իրականացնող: Արդյո՞ք արդարադատության նման եղանակը չի կարող գտնվել հույզերի գերիշխանության ներքո և վերածվել կարիկատուրայի: Այդ իսկ ակնթարթից անմեղ ժողովրդի սպանդը ավելի մեծ նշանակություն ստացավ ինձ համար: Ես չնայած դեռ վերջնական պատասխաններ չունեի, բայց ունեի այն հաստատուն զգացումը, որ աշխարհը ռասայական կամ կրոնական հիմքերի վրա տեղի ունեցած սպանդի այդ ձևի դեմ պետք է մի օրենք ընդունի: Ես կարծում էի, որ ինքնիշխանությունը չպետք է թյուրիմացաբար ընկալվի՝ որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք» {(114) *236*}:

Հիշյալ պրոֆեսորի հետ զրույցից հետո Լեմկինը, տարիներ շարունակ նվիրվելով միջազգային իրավունքի ուսումնասիրմանը, համոզվեց, որ գոյություն չուներ մարդկային որևէ խմբի սպանությունը կանխարգելելու և պատժելու որևէ իրավական նորմ: Լեմկինը սխալ էր համարում ինքնիշխանության այն աստիճան բացարձակացումը, որ դա արգելակեր զանգվածային հանցագոր-

ծությունների կանխարգելումն ու պատժումը: Նա ավելի խորությամբ ուսումնասիրեց հայ ժողովրդի հետ կատարված եղեռնագործությունների պատմությունը, որը, ինչպես նա նշել է 1949 թ. CBS-ին տրված հարցազրույցի ժամանակ, իրեն վճռորոշ ազդակ է հաղորդել ցեղասպանության խնդրով զբաղվելու համար: «Ես սկսել եմ ցեղասպանության թեմայով զբաղվել, քանի որ այդ ճակատագիրը վիճակվեց հայերին,– նշում էր Լեմկինը:– {…} 1921 թ. Բեռլինում Թալեաթ փաշայի դատավարությունն այդ առումով խիստ ուսանելի է: Մի մարդ, որի մայրը ցեղասպանության ժամանակ սպանվել է, սպանեց Թալեաթ փաշային: {…} Բայց տեսեք, որպես դատավոր ես այն տեսակետին եմ, որ ոճրագործությունը պետք է պատժվի ոչ թե զոհի կողմից, այլ մի կանոնավոր դատարանի» {(114) *236*}:

1926 թ. ստանալով քրեական իրավունքի դոկտորի գիտական աստիճան և անցնելով աշխատանքի՝ նախ որպես Լեհաստանի Գերագույն վերաքննիչ դատարանի քարտուղար, իսկ 1929 թ.-ից՝ որպես Վարշավայի շրջանային դատարանի դատախազ, Լեմկինը հարաճուն կերպով զբաղվում էր նաև միջազգային իրավունքով: Նրա նպատակն էր ստեղծել մի միջազգային օրենք, որը կստիպեր կառավարություններին որևէ երկրում էթնիկ և կրոնական խմբերի սպանությունների դեպքում միջամտել ու պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Ազգերի լիգայի հովանու ներքո 1933 թ. Մադրիդում գումարված՝ քրեական իրավունքի միասնականացման 5-րդ միջազգային համաժողովին Լեմկինը ներկայացրեց զեկույց մի միջազգային կոնվենցիա ստեղծելու վերաբերյալ, որով առաջարկվում էր մարդկային խմբերի ոչնչացումը որակել որպես միջազգային հանցագործություն: Լեմկինն ընդսմին առանձնապես վկայակոչում էր հայ ժողովրդի զանգվածային սպանդը: Նա այդ ժամանակ դեռ չէր ստեղծել «ցեղասպանություն» եզրույթը և զեկույցում սահմանում էր միջազգային պատժելիության ենթակա հետևյալ հինգ

հանցագործությունները՝ «տեռորիզմ», «բարբարոսություն», որը վերաբերում էր մարդկային խմբերի հետապնդումներին, «վանդալիզմ», որն ընդգրկում էր մշակույթի և արվեստի գործերի ոչնչացումը, քիմիական աղտոտումը և միջազգային հաղորդակցության ոլորտում դավադրական պատահարների առաջացումը: {(51) *38*}:

Լեհաստանի արտգործնախարար Յ. Բեքը, որը կարևորում էր Հիտլերի հետ բարեկամական հարաբերությունների պահպանումը, արգելեց Լեմկինին մասնակցել համաժողովի աշխատանքներին, և նրա զեկույցի քննարկումը տեղի ունեցավ իր բացակայությամբ: Ուշագրավ է, որ Լեմկինի զեկույցը շատ քիչ կողմնակիցներ ունեցավ: Մասնակիցներից մեկը նշեց, թե մարդկության դեմ նման հանցագործությունները չափազանց հազվադեպ են տեղի ունենում, որպեսզի նման միջազգային իրավական փաստաթղթի ընդունումն արդարացվի: Որոշակի թերահավատություն առաջացրեցին նաև Հիտլերի մասին Լեմկինի կատարած մռայլ կանխատեսումները, մինչդեռ դրանք կարող էին զեկույցի ընդունման լրացուցիչ հիմք ծառայել: Գերմանիան այդ ժամանակ արդեն դուրս էր եկել Ազգերի լիգայից, այնտեղ հակահիտլերական քարոզչությունը շարունակ ավելի մեծ չափերի էր հասնում, և հազարավոր հրեա ընտանիքներ սկսել էին այդ երկրից հեռանալ:

Երբ սկսվեց զեկույցի քննարկումը, համաժողովի գերմանական պատվիրակությունը ցուցադրաբար լքեց դահլիճը: Զեկույցը մերժվեց, իսկ Լեմկինը Լեհաստանում մեղադրվեց իր այդ նախաձեռնությամբ «գերմանացի բարեկամներին» վիրավորելու համար: Շուտով նա հեռացվեց նաև դատախազի պաշտոնից՝ ստիպված լինելով զբաղվել մասնավոր փաստաբանությամբ: Չնայած դրան, Լեմկինը շարունակում էր դիմել հաջորդ տարիներին Բուդապեշտում, Կոպենհագենում, Փարիզում, Ամստերդամում և Կահիրեում գումարված իրավաբանական համաժողովների մասնակիցներին՝ կոչ անելով ընդունել մի այդպիսի օրենք: Խնդրո առարկա հանցագործությունների կանխարգելման և պատժման

անհրաժեշտության մասին խոսելիս Լեմկինը, որպես կանոն, վկայակոչում էր հայերի, իսկ ավելի ուշ՝ նաև հրեաների զանգվածային բնաջնջումը: Նա ցավով էր արձանագրում, որ միջազգային իրավունքը զարգանում է ոչ թե կանխատեսումների, այլ աղետալի փորձառությունների ճանապարհով: Մինչդեռ այլապես այդ աղետները կարող էին կանխվել: Նա նշում էր, որ եթե Մադրիդի համաժողովում իր ներկայացրած առաջարկներն ընդունվեին, ապա դա «կապահովեր արդյունավետ գործիք՝ պատժելու ներկայիս աշխարհի հակամարտությունների պատերազմական հանցագործներին» {(51) *57*}:

Լեմկինի հետագա ջանքերը. ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայի ստեղծումը

Լեմկինը, որի ընտանիքի 49 անդամներ զոհ դարձան Հոլոքոստին, կարողացավ փրկվել՝ դառնալով փախստական: 1940 թ. փետրվարին նա հաստատվեց չեզոք Շվեդիայում և սկսեց Ստոկհոլմի համալսարանում դասախոսություններ կարդալ միջազգային իրավունքի թեմայով՝ առաջին հերթին կենտրոնանալով իրավունքի չարաշահումների վրա: Դյուկի համալսարանում միջազգային իրավունք դասավանդելու հրավեր ստանալով՝ նա 1941 թ. ապրիլին փոխադրվեց ԱՄՆ, որտեղ ջանում էր հանրային ուշադրությունը բևեռել հիտլերյան վարչակարգի նոր զանգվածային հանցագործությունների վրա: «Եթե այստեղից 100 մղոն հեռավորության վրա սպանեն կանանց, երեխաներին և ծերերին, դուք չե՞ք շտապի օգնության,– ասում էր նա այնտեղ ունեցած իր առաջին ելույթում:– Ինչո՞ւ, սակայն, ձեր սիրտը նույն որոշումը չի կայացնում, երբ դա ոչ թե 100, այլ 3000 մղոն է» {(143) *27*}: Հրեաներին սպառնացող ճակատագրի մասին ԱՄՆ-ի տարբեր հաստատություններում նրա ունեցած հարյուրավոր ելույթները, սակայն, հանդիպում էին անտարբերության, կամ նրա տեղեկությունները հավատարժան չէին համարվում:

1941 թ. վերջից ԱՄՆ Տնտեսական պատերազմի խորհրդում դառնալով խորհրդական, իսկ ավելի ուշ Պատերազմի դեպարտամենտում ստանձնելով միջազգային իրավունքի հատուկ խորհրդականի պաշտոնը՝ Լեմկինը հույս ուներ, որ այդ կերպ ավելի մեծ ազդեցություն կունենա մարդկային խմբերի սպանությունները միջազգային հանցագործություն որակելու հարցում: Նրան հաջողվեց ԱՄՆ նախագահ Ռուզվելտին ներկայացնել մի հուշագիր, որով առաջարկվում էր եվրոպական փոքրամասնությունների պաշտպանությունը դարձնել դաշնակիցների պատերազմի առանցքային նպատակ: Ճաբաթներ անց Լեմկինին հաղորդվեց, որ Ռուզվելտը տեղյակ է Եվրոպայում էթնիկ փոքրամասնությունների խնդիրներին, բայց նման հանդուգն խնդրանքը համբերություն է պահանջում:

Պատերազմի տարիներին Լեմկինը գրեց նաև իր՝ «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» ստվարածավալ աշխատությունը, որը հրատարակվեց 1944 թ. նոյեմբերին: Այնտեղ նա թվարկում էր այն բոլոր հրամանագրերը, օրենքներն ու կանոնակարգերը, որոնք Առանցքի տերությունները՝ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան, հրապարակել էին նացիստների կողմից բռնազավթված եվրոպական երկրներում: Նա նաև ուսեզրկվածներին պատերազմից հետո իրենց գույքը վերադարձնելու և նացիստական վարչակարգի միլիոնավոր հարկադիր աշխատողներին հատուցում տրամադրելու առաջարկներ էր ներկայացնում: Գրքում Լեմկինը կրկին պնդում էր մի միջազգային կոնվենցիա ընդունել, որը թույլ կտար հետապնդում իրականացնել նրանց հանդեպ, որոնք ներգրավված են եղել բնակչության խմբերի կանխամտածված ոչնչացման մեջ: Գիրքը լայն և հիմնականում դրական արձագանք ստացավ:

Այդ գրքում ծնունդ առավ նաև «Genocide» («ցեղասպանություն») եզրույթը: Լեմկինը առնվազն 1941 թ.-ից փնտրում էր մի բառ, որը ճշգրիտ կբնութագրեր Օսմանյան պետությունում հայե-

րի և նացիստական վարչակարգի զոհերի դեմ իրականացված ոճրագործությունները: Ազգերի լիգայի հանձնաժողովի՝ Մադրիդում կայացած վերոնշյալ նիստում իր նախագծի ձախողումը Լեմկինը բացատրում էր այն հանգամանքով, որ դրանում ամրագրված «բարբարոսություն», «վանդալիզմ» և այլ եզրույթները չէին արտացոլում այդ ոճրագործությունների բուն էությունը: Փնտրվող եզրույթը պետք է լիներ միայն մի բառ, որը կընդգրկեր բնակչության վրա թիրախավորված հարձակումների բոլոր ասպեկտները, այդ թվում նաև այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են զանգվածային տեղահանությունները, ծնելիության գործակցի հարկադիր նվազեցումը, տնտեսական շահագործումը և մտավորականության նպատակաուղղված ճնշումը: «Զանգվածային սպանություն» եզրույթը չէր ներառում այդ բոլոր ասպեկտները: Փնտրվող եզրույթը նաև չպետք է արդեն օգտագործված լիներ այլ համատեքստերում, ինչը բնորոշ էր «բարբարոսություն», «վանդալիզմ» և նման բառերին:

Լեմկինի փնտրտուքը պսակվեց հաջողությամբ: Նա հունարեն «Genos» (ռասա, ցեղ) և լատիներեն «cide» (սպանել) բառերի համակցումով ստեղծեց «Genocide»՝ «ցեղասպանություն» եզրույթը, որի հետևյալ սահմանումը նա տվեց իր վերոնշյալ աշխատությունում. «{…} տարբեր գործողությունների համակարգված ծրագիր, որն ուղղված է բնակչության խմբի կյանքի էական հիմքերի ոչնչացմանը՝ նպատակ ունենալով ոչնչացնել խմբին: {...} Ցեղասպանությունն ունի երկու փուլ՝ առաջին, երբ ոչնչացվում են ճնշված խմբի բնորոշ հատկանիշներն ու կենսակերպը, և երկրորդ, երբ բնակչության ճնշող խմբի հատկանիշներն ու կենսակերպը պարտադրվում են ճնշված խմբին: Այդ պարտադրումն, իր հերթին, կարող է իրականացվել՝ թույլ տալով բնակչության ճնշված խմբին մնալ տեղում կամ նույնիսկ կարող է պարտադրվել միայն տարածքին՝ վերացնելով բնակչությանը և գաղութացնելով այդ տարածքը բնակչության ճնշող խմբի կողմից» {(143) *43*}:

Նոր եզրույթը շատ արագ տարածում գտավ, երբ ամերիկյան մի շարք լրագրեր դեռ 1944 թ. օգտագործեցին այն՝ հաղորդելով Եվրոպայում կատարված վայրագությունների մասին:

1945 թ. նացիստական գլխավոր հանցագործների Նյուրնբերգյան դատավարության ժամանակ Լեմկինն իրավախորհրդատվական օգնություն էր ցուցաբերում ԱՄՆ գլխավոր մեղադրող Ռոբերտ Ջեքսոնին և նրա հանձնախմբին: Ուշագրավ է, որ Նյուրնբերգում որպես Ջեքսոնի տեղակալ և ներկայացուցիչ հանդես եկող՝ հրեա իրավաբան Ռոբերտ Քեմպները, որն, ի դեպ, հայտնաբերեց և դատավարությանը ներկայացրեց Վանզեի համաժողովում կազմված արձանագրությունը՝ դառնալով հանրահայտ անձնավորություն, նույնպես ներկա էր եղել Թեհլիրյանի դատավարությանը: «Ես, որպես Բեռլինի՝ Ֆրիդրիխ Վիլհելմի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող, այդ ցեղասպանության սարսափելի մարդկային, քաղաքական և իրավական ողբերգությունը գիտակցեցի,– հետագայում գրում էր Քեմպները,– երբ պատերազմի ավարտից երեք տարի անց հայ ուսանող Սողոմոն Թեհլիրյանը գնդակահարեց Թուրքիայի՝ նմանապես այնտեղ բնակվող նախկին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային: Դրան հաջորդող՝ սպանության գործով դատավարությունը, որը տեղի ունեցավ 1921 թ. հունիսի 2-ին և 3-ին Բեռլինի երրորդ շրջանային դատարանին պատկանող երդվյալ ատենակալների դատարանում՝ շրջանային դատարանի տնօրեն դր. Լեմբերգի նախագահությամբ, ցնցեց ամբողջ աշխարհը» {(119) *185-186*}:

Քեմպները նաև արձանագրել է, որ Թեհլիրյանի կրակոցը առաջին անգամ աշխարհի աչքերի առջև ի հայտ բերեց միջազգային իրավունքի մի դիլեմա, որի մեջ այն գտնվել է Առաջին աշխարհամարտի ժամանակ: «Իրավաքաղաքական առումով այդ դատավարությունը առանձնահատուկ նշանակություն ուներ,– գրում էր նա,– քանի որ իրավունքի պատմության մեջ առաջին

անգամ ճանաչվեց այն սկզբունքը, որ մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների, մասնավորապես մի կառավարության կողմից իրականացված ցեղասպանության դեմ անպատճառ կարող է օտար պետությունների կողմից պայքար մղվել, և որ այդ պայքարը չի նշանակում միջամտություն մեկ այլ պետության ներքին գործերին» {(114) *233*}:

Որպես իրավախորհրդատու օգնելով Ջեքսոնի հանձնախմբին՝ Լեմկինը վերջինիս միաժամանակ կոչ էր անում ընդունել և գործածել «ցեղասպանություն» եզրույթը: Նրա ջանքերը պսակվեցին հաջողությամբ, և այն ներառվեց Նյուրնբերգյան մեղադրական եզրակացության մեջ:

Նյուրնբերգյան դատավարությունից հետո Լեմկինը շարունակում էր ջանքեր գործադրել, որպեսզի ընդունվի միջազգային օրենք ցեղասպանությունների կանխարգելման և պատժման մասին: 1946 թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հաստատեց թիվ 95 (1) բանաձևը, որով ՄԱԿ-ը ընդունում էր Նյուրնբերգի միջազգային դատարանի կանոնադրության սկզբունքները: Նույն օրը Ասամբլեան հաստատեց նաև թիվ 96 (1) բանաձևը, որը կրում էր «Ցեղասպանության հանցագործությունը» անվանումը, և որում արձանագրվում էր, որ ցեղասպանությունը, հանցագործություն է՝ համաձայն միջազգային իրավունքի: «Ցեղասպանությունը ամբողջ մարդկային խմբերի գոյության իրավունքի մերժումն է, այնպես, ինչպես առանձին մարդկանց կյանքի իրավունքի մերժումը,– նշված էր բանաձևում:– Գոյության իրավունքի նման մերժումը ցնցում է մարդկության խիղճը {…} և հակասում է Միավորված ազգերի բարոյական օրենքին և ոգուն ու նպատակներին»:

Այնուհետև ընդգծելով, որ տեղի են ունեցել ցեղասպանական բազմաթիվ հանցագործություններ, որոնց ժամանակ ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացվել են ռասայական, կրոնական, քաղաքական և այլ խմբեր, բանաձևն արձանագրում էր, որ ցեղաս-

պանության պատժումը միջազգային մտահոգության առարկա է: «Այսպիսով,– նշվում էր հաջորդիվ,– Գլխավոր ասամբլեան հաստատում է, որ ցեղասպանությունը, միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն է, որը քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է, և որի կատարման համար մեղավորներն ու մեղսակիցները, լինեն նրանք մասնավոր անձինք, պետական ծառայողներ, թե բարձրաստիճան պաշտոնյաներ, և անկախ այն բանից՝ հանցագործությունը կատարվում է կրոնական, ռասայական, քաղաքական, թե այլ հիմքերով, ենթակա են պատժի:

Կոչ է անում անդամ պետություններին ընդունել անհրաժեշտ օրենքները այդ հանցագործությունը կանխելու և պատժելու համար:

Հանձնարարում է կազմակերպել միջազգային համագործակցություն պետությունների միջև՝ ցեղասպանություն հանցագործության արագ կանխարգելումն ու պատժումը հնարավոր դարձնելու համար և այդ նպատակով Տնտեսական և սոցիալական խորհրդին կոչ է անում կատարել անհրաժեշտ ուսումնասիրությունները ցեղասպանություն հանցագործության մասին կոնվենցիայի նախագիծ մշակելու համար, որը կներկայացվի Գլխավոր ասամբլեայի հաջորդ հերթական նստաշրջանին» {(191)}:

Գլխավոր ասամբլեայի այս բանաձևը նաև Լեմկինի երկարամյա պայքարի հաղթանակն էր: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի առաջարկով Լեմկինը 1947 թ. գարնանը երկու այլ իրավաբան փորձագետների՝ ֆրանսիացի Դոնադյե դը Վաբրի և ռումինացի Վեպասիան Պելլայի հետ ձեռնամուխ եղավ ցեղասպանությանը վերաբերող կոնվենցիայի նախագծի պատրաստմանը: Աշխատանքը որոշ տարաձայնությունների պատճառով դյուրին չէր ընթանում: Լեմկինի գործընկերները, մասնավորապես, դեմ էին նրա այն պնդմանը, որ «կենսաբանական» (ծնելիության կանխարգելում) և «ֆիզիկական» ցեղասպանություններից հետ կոնվենցիայում ներառվի նաև «մշակութային» ցեղասպանությունը՝ առա-

ջարկելով այդ հարցի մասին որոշման կայացումը թողնել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային: Լեմկինը փորձեց ասամբլեայի ներկայացուցիչների շրջանում քարոզչություն իրականացնել իր տեսակետն անցկացնելու համար, բայց նրանց մեծ մասը դեմ էր դրան, ուստի «մշակութային» ցեղասպանությունը կոնվենցիայի նախագծում տեղ չգտավ:

1947 թ. հունիսի 26-ին նրանք ներկայացրին կոնվենցայի առաջին նախագիծը, որն այնուհետև հանձնվեց ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի՝ այդ նպատակով ստեղծված, պետությունների ներկայացուցիչներից կազմված մի հանձնաժողովի քննարկմանը: 1948 թ. գարնանը նախագծի վերանայման համար կազմվեց մի նոր՝ ընդլայնված հանձնաժողով: Տեղի ունեցած քննարկումներում ի հայտ եկան մասնակից պետությունների հակասությունները՝ սկսված Սառը պատերազմի համատեքստում: Եթե ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները կողմ էին կոնվենցիայում մշակութային ցեղասպանության ներառմանը, ապա արևմտյան ներկայացուցիչները դրան դեմ էին իրենց երկրների գաղութարարական անցյալի պատճառով: ԽՍՀՄ-ն իր հերթին դեմ էր կոնվենցիայում թվարկվող թիրախային խմբերում սոցիալական և քաղաքական խմբերի ներառմանը:

Վերանայված նախագիծը 1948 թ. սեպտեմբերին ներկայացվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի քննարկմանը, որի ընթացքում ևս ի հայտ եկան վերոնշյալ հակասությունները: Արդյունքում կոնվենցիայից հեռացվեց նաև պետությունների պատասխանատվության կետը, և պատասխանատվությունը վերագրվեց միայն անհատներին: «Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիան» այդ և որոշ այլ խմբագրումներից հետո 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից, իսկ 1951 թ. հունվարի 12-ին մտավ ուժի մեջ {(51) *65-69*}:

Թեև վերոնշյալ քննարկումների ընթացքում կոնվենցիայի սկզբնական նախագիծը սկսված Սառը պատերազմի պայմաններ-

ռում զգալիորեն թուլացվեց {(17) *8-14*}, այնուհանդերձ դրա ընդունումն ու ուժի մեջ մտնելը միջազգային իրավունքի կարևորագույն ձեռքբերումներից էին: Լեմկինը հետաղարձ հայացքով արձանագրում էր, որ հայերի ցեղասպանությունը վճռորոշ դեր խաղաց կոնվենցիայի ստեղծման հարցում: «Հայ տղամարդկանց, կանանց և երեխաների տանջանքները,– նշում էր նա,– որոնք խեղդվեցին Եփրատ գետում կամ սպանվեցին Դեր Զորի ճանապարհին, պատրաստեցին ՄԱԿ-ի կողմից Ցեղասպանության կոնվենցիայի ընդունման ճանապարհը {...}: Մեկ միլիոն հայեր մահացան, բայց գրվեց ժողովրդի սպանության դեմ ուղղված օրենք իրենց արյան թանաքով և տառապանքների ոգով» {(51) *78*}:

Կոնվենցիան հետագա փորձառությունների լույսի ներքո

Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիան բաղկացած է 19 հոդվածներից: Երկրորդ հոդվածի համաձայն՝ ցեղասպանություն է համարվում ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի ամբողջովին կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ իրականացված հետևյալ գործողություններից յուրաքանչյուրը.

1. խմբի անդամների սպանությունը,
2. խմբի անդամներին ֆիզիկական կամ հոգեկան ծանր վնասների պատճառումը,
3. խմբի համար դիտավորյալ այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք կարող են հանգեցնել նրա ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը,
4. այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են խմբի ներսում ծնունդների կանխարգելմանը,
5. խմբի երեխաների բռնի փոխանցումը մեկ այլ խմբի:

Կոնվենցիայի երրորդ հոդվածի համաձայն՝ պատժելի են համարվում հետևյալ գործողությունները.

1. ցեղասպանությունը,

2. ցեղասպանության իրականացմանն ուղղված դավադրությունը,
3. ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,
4. ցեղասպանության իրականացման փորձը,
5. ցեղասպանությանը մասնակցությունը:

Ըստ կոնվենցիայի չորրորդ հոդվածի՝ ցեղասպանություն կամ երրորդ հոդվածում թվարկված գործողություններից որևէ մեկը կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից՝ նրանք կառավարության անդամներ, պետական պաշտոնյաներ, թե մասնավոր անձինք են {(189)}:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից կոնվենցիայի ընդունումն, անկասկած, խիստ կարևոր առաջընթաց էր միջազգային իրավունքի ոլորտում: Կոնվենցիան ճանապարհ բացեց նաև նախկինում կատարված ցեղասպանությունները նորովի՝ միջազգային իրավունքի համատեքստում գնահատելու համար: Սկսվեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը ժամանակի ընթացքում մեծապես արգասավորվեց: Միջազգային իրավական լույսի ներքո քննարկումներ ծավալվեցին նաև այլ ժողովուրդների դեմ կատարված ցեղասպանությունների վերաբերյալ:

Քաղաքակիրթ աշխարհը խանդավառությամբ ողջունեց կոնվենցիայի ընդունումը՝ ակնկալելով, որ այդուհետ կկանխարգելվեն և կպատժվեն ցեղասպանությունները: Հաջորդ տասնամյակների փորձառությունը, սակայն, փաստեց, որ կոնվենցիան բավարար չափով չի ծառայում իր նպատակին: Տեղի ունեցան նոր ցեղասպանություններ ու այլ զանգվածային ոճրագործություններ, որոնք չկանխարգելվեցին, իսկ ոճրագործների պատժումը լավագույն դեպքում տեղի ունեցավ միայն մասնակիորեն: Թվարկենք դրանցից մի քանիսը:

Ինդոնեզիայում բանակը և հատուկ այդ նպատակով կազմավորված այլ զինված ստորաբաժանումները 1965-1966 թթ. իրա-

կանացրին կոմունիստների և նրանց համակիրների զանգվածային կոտորածներ, որոնց զոհ դարձավ ավելի քան 500 000, որոշ տվյալներով՝ մինչև 3 միլիոն մարդ:

Արևելյան Պակիստանում՝ ներկայիս Բանգլադեշում, Պակիստանի բանակային ուժերը Բանգլադեշի անկախության շարժումը ճնշելու ընթացքում 1971-1972 թթ. կոտորեցին շուրջ 3 միլիոն քաղաքացիների:

Կամբոջայում «Կարմիր քմերներ» շարժումը 1975-1979 թթ. ոչնչացրեց շուրջ 2 միլիոն քաղաքացիների, որոնք կազմում էին այդ երկրի բնակչության մոտ 15%-ը: Ռուանդայում հութուները 1994 թ. ապրիլ-հուլիս ամիսներին ոչնչացրին թութսի բնակչության մի ստվար հատվածին՝ 800 000 – 1 000 000 մարդու:

Սրեբրենիցայի շրջանում սերբական բանակային և այլ զինված ստորաբաժանումները 1995 թ. հուլիսին սպանեցին շուրջ 8 000 բոսնիակ բնակիչների: Ադրբեջանի կողմից 2022 թ. դեկտեմբերի 12-ից Արցախի շրջափակվեց, ինչը հումանիտար ծանր աղետների հանգեցրեց, իսկ 2023 թ. սեպտեմբերի 19-ին ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ հարձակումը հանգեցրեց Արցախի լիակատար հայաթափմանը:

Վերոնշյալ զանգվածային հանցագործություններից առաջին երեքը, ինչպես նաև քաղաքական, կուսակցական, սոցիալական կամ այլ շարժառիթներով աշխարհում տեղի ունեցած մյուս զանգվածային կոտորածները, որոնց դեպքում կոնվենցիայում մատնանշված խմբերից որևէ մեկի մտադրված թիրախավորումը չի ապացուցվել, չեն կարող բնորոշվել որպես ցեղասպանություն: Ուստի դրանք ցեղասպանագիտության մեջ հաճախ պայմանականորեն կոչվում են «ինքնացեղասպանություններ»:

Ինչ վերաբերում է Ռուանդայի թութսի բնակչության և Սրեբրենիցայի բոսնիակների սպանություններին, ապա դրանք համապատասխանում են կոնվենցիայի չափանիշներին, նաև միջազգային դատարանների ու այլ միջազգային կառույցների կողմից

բնորոշվել են որպես ցեղասպանություններ: Այդ երկու դեպքերում էլ, սակայն, առերեսվում ենք այն փաստի հետ, որ թե՛ Ռուանդայում, թե՛ Սրեբրենիցայում սկզբից ևեթ առկա էին ՄԱԿ-ի խաղաղապահ զորամասեր, որոնք, սակայն, մնացել են դիտորդի դերում և որևէ քայլ չեն ձեռնարկել իրադրությունը վերահսկելու, այդ ցեղասպանությունները կանխելու կամ դադարեցնելու համար: Առնվազն Ռուանդայի պարագայում ՄԱԿ-ը լիովին տեղյակ էր այնտեղ սկսված ցեղասպանությանը: ՄԱԿ-ի իրավասու կառույցները և ազդեցիկ անդամ երկրները, սակայն, Ռուանդայում շուրջ 100 օր շարունակվող զանգվածային սպանդի ընթացքում խուսափում էին այն անվանել ցեղասպանություն, թերևս որպեսզի հարկադրված չլինեն միջամտել: Եղերական իրադարձություններին այդ որակումը տրվեց միայն ցեղասպանության ավարտից հետո: Այն հանցագործությունները, որոնք Ադրբեջանը կատարեց Արցախում, և որոնք եզրափակվեցին ընդհուպ Արցախի հայաթափումով, նույնպես ցեղասպանություն են: Հաջորդիվ դրանց ամփոփ անդրադարձ կկատարվի:

Տասնամյակների փորձառությունն, այսպիսով, փաստում է, որ միջազգային իրավունքի՝ կոնվենցիայով նախանշված գործառույթները չեն իրականացվում կամ միայն մասնակի են իրականացվում, և կոնվենցիան կարիք ունի բարեփոխման ու ամրապնդման: Այդ ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկման հնարավորությունն ամրագրված է անգամ կոնվենցիայում՝ 16-րդ հոդվածում, որտեղ նշված է. «Ցանկացած ժամանակ պայմանավորվող կողմերից մեկը կարող է գրավոր դիմում ներկայացնել Գլխավոր քարտուղարին սույն կոնվենցիայի վերանայման համար:

Գլխավոր ասամբլեան հարկ եղած դեպքում որոշում կընդունի այն քայլերի վերաբերյալ, որոնք կարող են ձեռնարկվել մի այդպիսի դիմումի հիման վրա» {(189)}:

Որքան էլ զարմանալի է, կոնվենցիայի համաստորագրող որևէ կողմ նման նախաձեռնություն դեռևս չի ցուցաբերել: Այդ

հարցում պետք է առանձնապես շահագրգռված լինեն այն ժողովուրդները, որոնք ունեցել են ցեղասպանության փորձառություն, առավել ևս նրանք, որոնք առերեսվում են ժխտողականությանը և դրանից բխող այլ խնդիրների:

Միջազգային իրավունքը ցեղասպանությունների կանխարգելման և պատժման ուղղությամբ, անկասկած, դեռ այնքան է զարգանալու, մինչև կանխարգելումն ու պատժումը կդառնան բացարձակ առաջնահերթություն և չեն ներազդվի աշխարհաքաղաքական ու այլ շահերից: Զուգահեռաբար ակտիվանալու է նաև կոնվենցիայի բարեփոխման շուրջ փորձագիտական և առհասարակ հասարակական շրջաններում ծավալվող դիսկուրսը: Ելնելով դրանից, նաև նկատի առնելով հայաստանյան ու արտերկրի փորձագիտական շրջաններում ի հայտ եկած մտահոգությունները՝ ստորև ներկայացնում ենք մի շարք դրույթներ, որոնք կարող են օգտագործվել կոնվենցիայի բարեփոխմանը վերաբերող միջազգային դիսկուրսում և գործնականում նպաստել դրան:

1) Մտադրության առկայության ապացուցումը չպետք է համարվի պարտադիր պայման՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածում թվարկված կետերին համապատասխանող որևէ գործողություն ցեղասպանություն որակելու համար, եթե տվյալ գործողության զանգվածայնությունը կամ պարբերականությունը կամ այլ հանգամանքներ (հետևանքների վերլուծություն և այլն) անվիճելի են դարձնում մտադրության առկայությունը:

Եթե տեղի է ունենում որևէ անձի սպանություն, սպանության մտադրության ապացուցումն, իհարկե, անհրաժեշտ է, քանի որ սպանությունը կարող է տեղի ունեցած լինել նաև ակամա կամ ինքնապաշտպանության ու այլ շարժառիթներով: Եթե, սակայն, ազգային, էթնիկական, կրոնական կամ ռասայական որևէ խումբ է ամբողջովին կամ մասամբ ոչնչացվում և կամ զոհ դառնում կոնվենցիայի 2-րդ հոդվածի մյուս կետերով ձևակերպված գործողություններից որևէ մեկին, ապա այդ դեպքերում մտադրության առ-

կայությունը չի կարող որևէ կերպ կասկածի ենթակա լինել: Հետևաբար չկա նաև դրա ապացուցման անհրաժեշտությունը:

Ցեղասպան կողմը, որպես կանոն, ջանում է վերացնել այն փաստաթղթային հիմքերը, որոնք կապացուցեն մտադրության առկայությունը: Եթե դա հետևողականորեն է արվում, ապա խիստ դժվար կամ անհնար է դառնում մտադրության ապացուցումը: Այդ պարագայում կոնվենցիայում ամրագրված՝ «մտադրության» ապացուցման պահանջն իրապես ծառայում է ոչ թե արդարադատությանը, այլ ժխտողականությանը՝ դառնալով վերջինիս կարևոր կռվան և կենսունակության գրավական:

Բազմաթիվ են դա հաստատող օրինակները: Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի՝ 2014 թ. ապրիլի 23-ի ելույթը, որում նա թուրքական պետության անունից «1915 թ. իրադարձությունները ընդհանուր ցավ» էր անվանում և իր ցավակցությունն էր հայտնում «քսաներորդ դարասկզբի համատեքստում իրենց կյանքը կորցրած հայերի ժառանգներին» {(169)}, նաև «Օսմանյան պետության անկման շրջանում զոհված օսմանյան հայերի վերաբերյալ» Թուրքիայի վարչապետ Ա. Դավութօղլուի՝ 2015 թ. ապրիլի 21-ի և նախագահ Էրդողանի՝ նույն տարվա ապրիլի 24-ի ելույթները փաստում են, որ թուրքական նախկին բացարձակ ժխտողականությունը սկսել է ճաքեր տալ: Քանի որ վերջին տասնամյակներին հրապարակ եկած մեծաքանակ սկզբնաղբյուրներն այլևս հնարավորություն չեն տալիս փաստերը ժխտել, թուրքական ժխտողականությունը զգուշորեն հակվում է դեպի մտադրության ժխտումը: Այդ առումով հատկապես բնութագրական է Էրդողանի՝ 2019 թ.ապրիլի 24-ին Հայ առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի պատրիարքի փոխանորդ Ա. Աթեշյանին ուղղված նամակը: Դրանում նա, «հարգանքի տուրք» մատուցելով «Առաջին աշխարհամարտի դաժան պայմաններում» մահացած «օսմանյան հայերի» հիշատակին, նշում էր, թե նրանք «մահացել են համաճարակների, գաղթի, թուլացած պետական իշխանության պատ-

ճառով, որի հետևանքով ավազակախմբերը և զինված խմբավորումներն անկարգություններ են կազմակերպել» {(170)}:

Քանի որ Դարֆուրում (արևմտյան Սուդան) վերջին շրջանում տեղի ունեցած դեպքերը բավական հստակ են արտացոլում ինչպես «մտադրության» ապացուցման, այնպես էլ ցեղասպանության պատասխանատուների պատժման հետ կապված՝ ներկայումս ի հայտ եկող խնդիրները, ստորև դրանց հակիրճ անդրադարձ կկատարվի:

Դարֆուրում բնակչության տարբեր էթնիկ խմբերի և կառավարական ուժերի միջև 2003 թ.-ից բռնկված երկարամյա հակամարտությունը որոշ տվյալներով մինչև 2016 թ. խլել է շուրջ 600 000 կյանք, իսկ 2019 թ. դրությամբ 2 500 000-3000 000 մարդիկ, որոնք կազմում են երկրամասի բնակչության մոտ 40 %-ը, արտաքսվել են հայրենիքից: Տեղի են ունեցել նաև խաղաղ բնակչության կոտորածներ, բռնաբարություններ ու տարատեսակ այլ բռնություններ: Երբ ԱՄՆ կոնգրեսը 2004 թ. հուլիսին մի բանաձև ընդունեց, ըստ որի Սուդանի կառավարության և նրա կողմից հովանավորվող՝ «Ջանջավիդ» զինված կազմավորումների գործողությունները կարելի էր բնորոշել որպես ցեղասպանություն, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը 2004 թ. հոկտեմբերին մի քննիչ հանձնաժողով կազմեց՝ պարզելու, թե արդյոք Դարֆյուրում ցեղասպանությո՞ւն է տեղի ունենում:

Հանձնաժողովի ներկայացրած զեկուցագրում արձանագրվում էր, որ Սուդանի կառավարության զորքերը և նրա դաշնակից զինված կազմավորումները կատարել են «անխտրական հարձակումներ, այդ թվում՝ քաղաքացիական անձանց սպանություններ, խոշտանգումներ, մարդկանց անհետացումներ, գյուղերի ավերումներ, բռնաբարություն և այլատեսակ սեքսուալ բռնություններ, կողոպուտ և վտարումներ» {(198)}: Քանի որ, սակայն, ցեղասպանության մտադրությունը չէր ապացուցվում, հանձնաժողովը եզրակացնում էր, որ Սուդանի կառավարությունը ցեղասպանություն չի իրականացնում, և առաջարկում էր կատարված

հանցագործությունները բնորոշել որպես մարդկության դեմ հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ:

Հարցի վերաբերյալ ծավալվող հասարակական դիսկուրսի պայմաններում ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը 2005 թ. մարտին թիվ 1593 բանաձևով ՄՔԴ-ին լիազորեց զբաղվել Դարֆուրում տիրող իրադրությամբ: ՄՔԴ-ն կատարված ուսումնասիրությունների հիման վրա 2007 թ. մայիսին Սուդանի հումանիտար հարցերով պետնախարար Ահմադ Հարունին և Ջանջավիդի առաջնորդներից Ալի Քուշաիբին ձերբակալելու որոշում կայացրեց: Նրանք մեղադրվում էին Ջանջավիդի կատարած հանցագործությունների համար: Սուդանը, որը չի ընդունել ՄՔԴ-ի իրավասությունը, հրաժարվեց արտահանձնել նրանց:

2008 թ. հուլիսին ՄՔԴ-ի դատախազ Լուիս Մորենո Օկամպոն հայտարարեց, որ որոշել է Սուդանի նախագահ Օ. ալ-Բաշիրին ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների իրականացման պատճառով ձերբակալման օրդեր տալ: Դա առաջին դեպքն էր, երբ ՄՔԴ-ի դատախազը ձերբակալման օրդեր էր տալու որևէ երկրի պաշտոնավարող ղեկավարին:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը, Աֆրիկյան միությունը, Արաբական պետությունների լիգան, այդ դատարանի լիազորությունները չընդունած՝ Սուդանի կառավարությունը և որոշ այլ երկրներ առարկեցին դրա դեմ: ՄՔԴ-ն 2009 թ. մարտին կայացրեց ձերբակալման որոշումը, բայց ոչ թե ցեղասպանության, այլ մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների պատճառով: 2010 թ. հուլիսին ՄՔԴ-ն ալ-Բաշիրին ձերբակալելու լրացուցիչ որոշում կայացրեց ցեղասպանության կասկածի հիմքով, ըստ որի նա մտադրություն է ունեցել ոչնչացնելու Ֆուր, Մասալիթ և Զագավա էթնիկ խմբերին՝ նրանց սպանելով, վիրավորելով կամ մատնելով կյանքի համար վտանգավոր պայմանների:

Վերոնշյալ երկրներն ու կազմակերպությունները դարձյալ առարկեցին: 2013 թ. ալ-Բաշիրն անարգել մեկնեց Չինաստան, Իրան, Եթովպիա և Նիգերիա: 2014 թ. դեկտեմբերին ՄՔԴ-ի նոր դատախազ Ֆաթու Բենսուդան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հաղորդեց, որ հաջողության հեռանկարի բացակայության պատճառով ստիպված է դադարեցնել նրա հետախուզումը, քանի որ աֆրիկյան երկրները, ուր ալ-Բաշիրը մեկնել էր իր նկատմամբ հետախուզության հայտարարումից հետո, դրան ընթացք տալու ցանկություն չունեին: 2015 թ. հունիսին Հարավային Աֆրիկայի Գաուտենգի նահանգի բարձրագույն դատարանը վճռեց, որ ալ-Բաշիրը, որն այնտեղ էր մեկնել Աֆրիկյան միության համաժողովին մասնակցելու համար, իրավունք չունի երկրից հեռանալու, մինչև ՄՔԴ-ի՝ կալանավորման միջնորդության վերաբերյալ որոշում կկայացվի: Ալ-Բաշիրը, սակայն, անտեսելով դատարանի վճիռը, այդ երկրի կառավարության աջակցությամբ և ոստիկանական ավտոշարասյան ուղեկցությամբ այնտեղից անարգել մեկնեց Սուդան: Դա սահմանադրական ճգնաժամ առաջացրեց Հարավային Աֆրիկայում, որն ընդունել էր ՄՔԴ-ի կանոնադրությունը:

Դրանից հետո ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը հայտարարեց, որ այն երկրները, որոնք ճանաչել են ՄՔԴ-ի կանոնադրությունը, պարտավոր են նաև իրականացնել վերջինիս ընդունած ձերբակալման որոշումները: Սուդանի մայրաքաղաք Խարթումում ալ-Բաշիրին ընդունեցին ցնծությամբ, իսկ ՄՔԴ-ն դատավորների միաձայն որոշում ընդունեց հարավաֆրիկյան կառավարության գործելակերպը դատապարտելու մասին: 2020 թ. փետրվարի 11-ին, երբ ալ-Բաշիրը պաշտոնանկ էր եղել, Սուդանի անցումային կառավարությունը հայտարարեց նրան ՄՔԴ-ին հանձնելու իր պատրաստակամության մասին: Դա, սակայն, առայսօր տեղի չի ունեցել:

Ձերբակալման օրդեր ստացած՝ հիշյալ Ալի Քուշաիբը 2021 թ. հունիսին Հարավային Աֆրիկայում ինքնակամ հանձնվեց իշխա-

նություններին, որոնք նրան արտահանձնեցին ՄՔԴ-ին, իսկ 2022 թ. ապրիլին սկսվեց նրա դատավարությունը: Փաստորեն, 2003 թ.-ից Սուդանում ծավալվող զանգվածային հանցագործությունների առաջին պատասխանատուի ձերբակալումը կատարվեց միայն 2021 թ., և այն էլ, երբ նա ինքնակամ էր ներկայացել {(198), (233)}:

Կատարված որևէ ցեղասպանական հանցագործություն որպես ցեղասպանություն բնորոշելու համար, այսպիսով, մտադրության առկայության ապացուցման անհրաժեշտությունը չկա, եթե այդ գործողության զանգվածայնությունը, պարբերականությունը, տվյալ խմբի հստակ թիրախավորվածությունը, հետևանքների վերլուծությունը և այլ հանգամանքներ դրանում կասկածի տեղ չեն թողնում: Ուշագրավ է, որ Լեմկինը նույնպես առաջնորդվում էր այդ սկզբունքով՝ հայոց ցեղասպանությունը համարելով անվիճելի և արձանագրելով, որ առկա է եղել «հայ ազգին ոչնչացնելու» մտադրությունը {(51) *71*}:

Ինչ վերաբերում է ցեղասպանության կանխարգելմանը, ապա այս դեպքում մտադրության առկայության ապացուցումը, որպես կանոն, անհրաժեշտ է, չնայած դարձյալ կարող են լինել դեպքեր, երբ այլևայլ իրողություններով փաստարկված լինելու պատճառով դրա անհրաժեշտությունը չլինի:

2) Կոնվենցիայի 4-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ ցեղասպանության և մատնանշված մյուս պատժելի գործողությունների համար պատասխանատվություն են կրում անհատ անձինք, այլ ոչ թե պետությունները կամ դրանց իրավահաջորդները: Այս դրույթը նույնպես պետք է փոխվի, քանի որ ցեղասպանությունները, որպես կանոն, ծրագրվում և գործողության մեջ են դրվում կառավարող վարչակարգերի, այլ ոչ թե առանձին անհատների կողմից: Կոնվենցիայում պետության պատասխանատվության ներառումը ոչ միայն կնպաստի նոր ցեղասպանությունների կանխարգելմանը, այլև իրավական հիմքեր կստեղծի զոհերին և/կամ նրանց ժառանգներին հատուցում տրամադրելու համար:

3) Ցանկացած ցեղասպանություն հանգեցնում է, ի թիվս այլ վնասների, նաև հսկայական նյութական կորուստների: Կոնվենցիայում պետք է ներառվի զոհերին և/կամ նրանց ժառանգներին հատուցում տրամադրելու և դրա իրականացումը պարտադրելու դրույթը:

4) Ցեղասպանությունների բնորոշ հետևանքներից է հայրենազրկումը: Կոնվենցիայում պետք է ներառվեն ցեղասպանության հայրենազրկված վերապրողների՝ հայրենիք վերադառնալու իրավունքի և դրա համար միջազգային երաշխիքների ապահովման դրույթներ:

5) Ցեղասպանության ընթացքում և դրանից հետո ցեղասպանները, որպես կանոն, ոչնչացնում են նաև տվյալ երկրում կամ տարածաշրջանում զոհերի խմբի ներկայությունը փաստող մշակութային արժեքները: Իսկ եթե վերջինս, բնաջնջվելով իր բնօրրանում կամ վաղ բնատարածքում, այնտեղ ունի ավելի խոր և ընդգրկուն պատմամշակութային հիշողություն, քան ցեղասպան խումբը, ապա տեղի է ունենում նաև ցեղասպանված խմբի մշակույթի յուրացում: Ոչնչացման և յուրացման մեթոդներով կատարվող մշակութային ցեղասպանության առավել ընդգրկուն քաղաքականությունն ի հայտ է եկել Թուրքիայի Հանրապետությունում, Նախիջևանում և Արցախում, երբ այն հայաթափվեց: «Մշակութային կորուստները Թուրքիայում՝ հայ ժողովրդի ցեղասպանության միջոցով, ապշեցուցիչ էին,– գրում էր Լեմկինը:– Հայերը, որպես Թուրքիայի ինտելեկտուալ միջուկ, տիրապետում էին արժեքավոր անձնական գրադարանների, արխիվների և պատմական ձեռագրերի, որոնք անհետացան կամ կորան: Եկեղեցիները, մենաստանները և գեղարվեստական ու պատմական արժեքների հուշարձանները ոչնչացվեցին» {(51) *133*}:

Արցախում ներկայումս համակարգված կերպով իրականացվող՝ հայկական բազմաթիվ եկեղեցիների, պատմաճարտարապետական մյուս կառույցների և մշակութային այլ արժեքների ոչնչացումն ու յուրացումը, որպես մշակութային ցեղասպանու-

թյան արդի օրինակ, պարզորոշ ի ցույց են հանում այդ հանցագործության բոլոր առանցքային բաղկացուցիչները {(168)}:

Մշակութային ցեղասպանությունը, որպես կանոն, հանգեցնում է նաև պատմության նենգափոխման: Այդպիսով տեղի է ունենում ինչպես մշակույթի, այնպես էլ պատմության սպանություն, ինչը մեծ մարտահրավեր է նաև համաշխարհային քաղաքակրթության ու պատմության համար: Հետևաբար կոնվենցիայում պետք է սահմանվի նաև «մշակութային ցեղասպանությունը»՝ այդ հանցագործության կանխարգելման և պատժման դրույթներով հանդերձ:

6) Այն հարցը՝ արդյոք կոնվենցիան հետադարձ կիրառելիություն ունի՞, թե՞ ոչ, վաղուց առկա է միջազգային հասարակական դիսկուրսում, և դրա գլխավոր պատճառն այն է, որ կոնվենցիայում այդ մասին որևէ սահմանում չկա: Նախ հարկ է նշել, որ եթե այն հետադարձ կիրառելիություն չունի, ապա չի կարող վերաբերել նաև Հոլոքոստին, որը տեղի է ունեցել ՄԱԿ-ի կողմից կոնվենցիայի ընդունումից առաջ:

Պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների, այդ թվում՝ ցեղասպանության նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառման հարցն արդեն առնվազն երկու անգամ ստացել է որոշակի միջազգային կարգավորումներ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1968 թ. նոյեմբերի 26-ին ընդունեց «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների հանդեպ վաղեմության ժամկետի չկիրառման մասին կոնվենցիան», որը 1970 թ. նոյեմբերի 11-ին մտավ ուժի մեջ {(219)}:

Այդ կոնվենցիան, ըստ որի՝ մարդկության դեմ կատարված հանցագործությունների շարքին է պատկանում նաև ցեղասպանությունը, մինչև այժմ վավերացրել են ՄԱԿ-ի անդամ 55 պետություններ և Պաղեստինը: Կոնվենցիան գործում է և ուժի մեջ է միայն այն վավերացրած պետությունների համար: Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) 1974 թ. հունվարի 25-ին Ստրասբուրգում հանդես եկավ «Մարդկության դեմ հանցագործությունների և պատե-

ռազմական հանցագործությունների հանդեպ վաղեմության ժամկետի չկիրառման մասին եվրոպական կոնվենցիայի» ընդունման նախաձեռնությամբ {(220)}:

Այս կոնվենցիան, որը ևս ուժի մեջ է միայն այն վավերացրած պետությունների համար, մինչ այժմ վավերացրել են 8 պետություններ {(276)}: Ուշագրավ է, որ, օրինակ, Գերմանիան, որը պատկանում է վերոնշյալ երկու կոնվենցիաները չվավերացրած երկրների շարքին, լիովին չի բացառում ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառելիությունը: Հերերոների և նամաների հետնորդների դիմումների հիման վրա վերջին շրջանում Գերմանիայում բարձր մակարդակով քննարկումներ տեղի ունեցան նաև 20-րդ դարասկզբին այդ ժողովուրդների նկատմամբ կայսերական Գերմանիայի կատարած հանցագործությունների վերաբերյալ, որոնց արդյունքում 2015-2016 թթ. Գերմանիան պաշտոնապես դրանք ճանաչեց որպես ցեղասպանություն: Այդ քննարկումների առանցքային հարցերից էր կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հարցը: Ըստ Գերմանիայի Բունդեսթագի «Գիտական ծառայություններ» ստորաբաժանման՝ 2021 թ. հուլիսի 22-ին հրապարակած «Ցեղասպանությունը որպես «միջժամանակային» միջազգային քրեական իրավունք. Ցեղասպանության կոնվենցիայի չափանիշներով պատմական իրողությունների գնահատման շուրջ» (թիվ WD 2 - 3000 - 053/21) արձանագրության՝ ցեղասպանության կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած հանցագործությունները, որոնք համապատասխանում են կոնվենցիայի չափանիշներին, կարող են քաղաքական և բարոյական տեսանկյուններից բնորոշվել որպես ցեղասպանություններ, բայց իրավական տեսանկյունից՝ ոչ: Այսինքն՝ այդ ցեղասպանությունների նկատմամբ չեն կարող կոնվենցիայով սահմանված իրավական պարտավորություններ ի հայտ գալ այն պատճառով, քանի որ տվյալ հանցագործությունների «միջազգային իրավական գնահատումը» կարող է կատարվել՝ ըստ տվյալ ժամանակահատվածում գործող միջազգային իրավունքի:

Ուշագրավ է նաև, որ, չնայած դրան, ինչպես նշված է նույն արձանագրությունում, «առանձնապես միջազգային իրավական պայմանագրի դեպքում պայմանագրի դրույթների հետադարձ կիրառելիությունը անշուշտ թույլատրելի է, բայց կարող է միայն այն ժամանակ հաստատվել, եթե պայմանագրային կողմերը հստակ համաձայնության գան հետադարձ կիրառելիության հարցում»: Ընդսմին վկայակոչվում է նաև այն հանգամանքը, որ «Ցեղասպանության կոնվենցիայում չկա հստակ համաձայնություն հետադարձ կիրառելիության վերաբերյալ» {(227)}:

Ինչպես տեսնում ենք, 1968 թ. և 1974 թ. վերոնշյալ երկու կոնվենցիաները, ունենալով չափազանց մեծ կարևորություն, դեռևս նշանակալից արդյունք չեն գրանցել, քանի որ բացակայել են դրանց գործադրումը պարտադիր դարձնող միջազգային օրենսդրական կամ այլ իրավական գործիքները: Կասկածից դուրս է, որ վերոնշյալ հանցագործությունների, այդ թվում ցեղասպանության նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառման հարցը շարունակելու է զբաղեցնել միջազգային հանրությանը, մինչև կստանա իր լուծումը համապատասխան օրենսդրական կամ այլ գործիքների ստեղծմամբ: Ցեղասպանություն հանցագործության դեպքում այդ հարցը լավագույնս կլուծվի, եթե վաղեմության ժամկետի չկիրառումն ամրագրվի Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայում: Իսկ այն հարցի պատասխանը, թե հետադարձ կիրառելիությունը որ ցեղասպանություններին կարող է վերաբերել կամ ինչպիսի ժամանակային ընդգրկում պետք է ունենա, կարող է տալ կոնվենցիայի ընդունմանը հաջորդող ժամանակաշրջանի փորձառությունը:

Կոնվենցիային նախորդող ցեղասպանություններից արդի աշխարհակարգում միջազգային մասնագիտական և հասարակական շրջաններին զբաղեցրել են, մասնավորապես, հայերի, մասամբ նաև հերերոների և նամաների, հույների ու ասորիների ցեղասպանությունները: Կարելի է ասել, որ կոնվենցիան վերա-

կենդանացրեց հենց այդ ցեղասպանությունների վերաբերյալ հասարակական դիսկուրսը՝ բևեռացնելով դրանց ճանաչման ու հատուցման հետ կապված հարցերը: Ուրեմն կոնվենցիան առնվազն այդ ցեղասպանությունների դեպքում պետք է ունենա հետադարձ կիրառելիություն:

7) Կարող են ի հայտ գալ նաև կոնվենցիայի բարեփոխման այլ առաջարկներ: Օրինակ, զանազան փորձագետների և այլ շահագրգիռ անձանց կողմից արտահայտվել է այն տեսակետը, որ կոնվենցիայում թվարկվող մարդկային խմբերում պետք է ընդգրկել նաև քաղաքական ու սոցիալական խմբերին: Այն հարցը՝ արդյոք դա համատեղելի՞ է «ցեղասպանություն» եզրույթի հետ, թերևս կարիք ունի մասնագիտական լայն քննարկման, բայց կասկածից դուրս է, որ միջազգային իրավունքի համար հրատապ խնդիրներ են նաև այդ խմբերի դեմ կատարվող զանգվածային հանցագործությունների կանխարգելումն ու պատժումը:

Կարելի է կռահել, որ եթե ցեղասպանության կոնվենցիայի համաստորագրող կողմերից մեկը, օրինակ, Հայաստանը, միայնակ կամ այլ շահագրգիռ կողմերի հետ միասին կոնվենցիայի 16-րդ հոդվածի հիման վրա դիմում ներկայացնի ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ սույն առաջարկների տեսանկյունից կոնվենցիան վերանայելու համար, և հարցը ներկայացվի Գլխավոր ասամբլեայի քննարկմանը, ապա կոնվենցիայի վերանայմանը դեմ կլինեն միայն ժխտողականության դիրքերից հանդես եկող ցեղասպան պետությունները կամ նրանց իրավահաջորդները, իսկ նրանք, անկասկած, փոքրամասնություն են կազմելու: Անշուշտ, Ասամբլեան կարող է ոչ բոլոր առաջարկներն ընդունել, բայց եթե նույնիսկ դրանցից մեկն ընդունվի, ապա դա նշանակալից առաջընթաց կլինի ցեղասպանությունների կանխարգելման և պատժման հարցում միջազգային իրավունքի ամրապնդման ճանապարհին:

Միջազգային քրեական դատարանը

Նախապատմություն

ՄՔԴ-ի ստեղծման պահանջը վաղուց էր հասունացել: Դեռևս 1872 թ. շվեյցարացի Գուստավ Մոյեն 1870-71 թթ. ֆրանս-պրուսական պատերազմում իրականացված վայրագությունների տպավորության ներքո առաջին պաշտոնական առաջարկն էր կատարել միջազգային քրեական դատարան հիմնելու վերաբերյալ: Այդ առաջարկը, սակայն, ընդունելություն չգտավ, քանի որ պետությունների ինքնիշխանության անձեռնմխելիության և ազգային պետության գաղափարները երկար ժամանակ շարունակում էին տիրապետող մնալ: Այդ հարցում որևէ տեղաշարժ ի հայտ չեկավ նաև Հայոց ցեղասպանությունից հետո, չնայած Անտանտի դաշնակիցներ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի՝ 1915 թ. մայիսի 24-ին հրապարակած վերոնշյալ համատեղ հայտարարությանը:

ՄՔԴ-ի ստեղծման գաղափարը վերածնվեց միայն ՄԱԿ-ի հիմնադրումից հետո՝ Նյուրնբերգի միջազգային ռազմական տրիբունալի աշխատանքի տպավորության ներքո: Թեև այն ժամանակ այդ ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկվեցին, այնուհանդերձ դատարանի ստեղծումը չհաջողվեց: 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան Միջազգային իրավունքի հանձնաժողովին հանձնարարեց կազմել միջազգային քրեական օրենսգրքի նախագիծ և պատրաստել առաջարկներ Միջազգային քրեական դատարանի ստեղծման համար: Հանձնաժողովը 1950 թ. հուլիսի 29-ին ներկայացրեց «Նյուրնբերգյան սկզբունքների» իր ձևակերպումը, որոնք այդուհետ համարվում են միջազգային իրավունքի պարտադիր սկզբունքներ: Դրանք հետևյալն են.

1. Յուրաքանչյուր անձ, որը միջազգային իրավունքը ոտնահարող հանցագործություն է կատարում, դրա համար կրում է քրեական պատասխանատվություն:

2. Նաև այն դեպքում, եթե ազգային օրենսդրությունը որևէ պատիժ չի սահմանում միջազգային իրավունքը ոտնահարող

հանցագործության համար, հանցագործը պատասխանատվություն է կրում միջազգային իրավունքի համաձայն:

3. Պետության ղեկավարները և կառավարության անդամները նույնպես պատասխանատվություն են կրում միջազգային իրավունքը ոտնահարող՝ իրենց կատարած հանցագործությունների համար՝ համաձայն միջազգային իրավունքի:

4. Ավելի բարձր հրամանով գործելը չի ազատում միջազգային իրավունքի համաձայն պատասխանատվություն կրելուց, եթե հանցագործը կարող էր այլ կերպ վարվել:

5. Յուրաքանչյուրը, ով մեղադրվել է միջազգային իրավունքը ոտնահարող հանցագործության համար, ունի պատշաճ դատական ընթացակարգի իրավունք:

6. Որպես միջազգային իրավունքը ոտնահարող հանցագործություններ՝ պատժելի են հետևյալ հանցագործությունները.

ա) հանցագործություն խաղաղության դեմ,

բ) պատերազմական հանցագործություն,

գ) հանցագործություն մարդկության դեմ:

7. Վերոնշյալ հանցագործություններին հանցակից լինելը նույնպես միջազգային իրավունքը ոտնահարող հանցագործություն է {(196)}:

Թեև Ցեղասպանության կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է, որ այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված մյուս գործողություններից որևէ մեկը կատարելու մեջ, կարող են դատվել նաև «Միջազգային քրեական դատարանի կողմից, որն իրավասու է նրա իրավազորությունը ճանաչած՝ պայմանագրի պայմանավորվող կողմերի համար» {(189)}, այնուհանդերձ, ինչպես տեսնում ենք, ցեղասպանություն հանցագործությունը Նյուրնբերգյան սկզբունքների 6-րդ կետում ներառված չէ: Դա կարելի է բացատրել թերևս այն հանգամանքով, որ կոնվենցիան ուժի մեջ մտավ փոքր-ինչ ավելի ուշ՝ 1951 թ. հունվարի 12-ին:

Միջազգային իրավունքի հանձնաժողովը 1950 թ. ներկայացրեց նաև «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ հանցագործությունների» միջազգային քրեական օրենսգրքի նախագիծ՝ միաժամանակ առաջարկելով այդ հանցագործությունների հետաքննության և պատժման համար ստեղծել Միջազգային քրեական դատարան: 1954 թ. հանձնաժողովը Գլխավոր ասամբլեային ներկայացրեց միջազգային քրեական օրենսգրքի մի վերամշակված նախագիծ ևս, որում դարձյալ ներառված էին Նյուրնբերգյան սկզբունքները: Սկսված Սառը պատերազմի պայմաններում, սակայն, ասամբլեան անկարող եղավ ընդունել օրենսգիրքը և հիմնել միջազգային դատարան: Այդ իսկ պատճառով Նյուրնբերգյան սկզբունքները մնացին անիրագործելի մինչև 1990-ական թթ.:

1990 թվականին՝ առաջին ձեռնարկումներից ավելի քան 40 տարի անց, Գլխավոր ասամբլեան թարմացրեց ՄՔԴ-ի ստեղծման հարցով զբաղվելու՝ Միջազգային իրավունքի հանձնաժողովին տված իր մանդատը: 1991 թ. այդ հանձնաժողովի ներկայացրած նոր նախագիծը, սակայն, նույնպես ձախողվեց: Այդ ուղղությամբ նոր կարևոր քայլեր ձեռնարկվեցին միայն Ռուանդայում և Սրեբրենիցայում տեղի ունեցած ցեղասպանություններից հետո: Դրանք դրդեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ հոդվածի, ստեղծել նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի հարցերով երկու ժամանակավոր միջազգային քրեական դատարաններ, որոնք ճանապարհ բացեցին մեկ մշտական միջազգային քրեական դատարանի ստեղծման համար:

ՄՔԴ-ի ստեղծումը և գործունեության հիմնարար սկզբունքները

1997 թ. դեկտեմբերի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր թիվ՝ 52/160 բանաձևով որոշեց 1998 թ. հունիսի 15-ից հուլիսի 17-ը

Հռոմում գումարել համաժողով Միջազգային քրեական դատարան ստեղծելու վերաբերյալ: Համաժողովին հանձնարարված էր քննարկել և հաստատել դատարանի կանոնադրության նախագիծը: Դա տեղի ունեցավ 1998 թ. հուլիսի 17-ին՝ Հռոմի կանոնադրության (ստատուտի) ընդունմամբ, որը վավերացվեց 120 պետությունների կողմից: 2002 թ. հուլիսի 1-ին այդ կանոնադրությունը մտավ ուժի մեջ, և դրա հիման վրա Հաագայում ստեղծվեց Միջազգային քրեական դատարանը:

ՄՔԴ-ի գործունեության հիմնարար սկզբունքները հետևյալն են.

Դատարանը կարող է քրեական հետապնդում իրականացնել միայն այն դեպքում, եթե տվյալ պետությունները չեն ցանկանում կամ ի վիճակի չեն՝ որոշակի ծանր հանցագործություն լրջորեն հետաքննելու: Դատարանի իրավազորությունը կարող է իրականացվել, եթե այն պետությունը, որի տարածքում տեղի է ունեցել հանցագործությունը, կամ այն պետությունը, որի քաղաքացի է ենթադրյալ հանցագործը, վավերացրել է Հռոմի կանոնադրությունը կամ ընդունել է ՄՔԴ-ի իրավասությունը: Դատարանը գործում է կանոնադրությունը վավերացրած պետության կողմից դատարանին որոշակի իրադրության վերաբերյալ հաղորդում ներկայացնելու կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից տրված ցուցումի և կամ էլ (ՄՔԴ) դատախազի սեփական նախաձեռնությամբ:

ՄՔԴ-ն կարող է մեղադրանք հարուցել միայն առանձին անձանց, այլ ոչ թե պետությունների դեմ: Դատարանի իրավազորությունը սահմանափակվում է չորս առանձնապես ծանր հանցագործություններով, որոնք վերաբերում են միջազգային հանրությանը: Դրանք են՝ ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություն, պատերազմական հանցագործություն և ագրեսիայի հանցագործություն: Ագրեսիայի հանցագործությունն, ի դեպ, դատարանի իրավազորության ոլորտում ներառվել է 2018 թ. հուլիսի

17-ից: Ագրեսիա են համարվում մեկ այլ պետություն ներխուժելը և գրավելը, նավահանգիստների և ափային տարածքների շրջափակումը, ինչպես նաև զինված խմբավորումների տեղակայումը:

ՄՔԴ-ի իրավազորությունը վերաբերում է միայն այն հանցագործություններին, որոնք կատարվել են Հռոմի կանոնադրության ուժի մեջ մտնելուց (01.07.2002) հետո, իսկ եթե տվյալ պետությունը կանոնադրությունն ավելի ուշ է վավերացրել, ապա կանոնադրությունն այդ պետության համար ուժի մեջ է մտնում՝ վերջինիս կողմից վավերացվելու պահից:

ՄՔԴ-ն ազգային դատարաններին փոխարինող կամ վերջին ատյանի վերաքննիչ դատարան չէ, որը կկարողանա վերանայել ազգային դատարանների վարույթները: Այն ավելի շուտ լրացնում է ներպետական դատարանների իրավազորությունը միջազգային իրավունքը ոտնահարող լուրջ հանցագործությունների հետապնդման հարցում: Այն չի նույնանում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի (այսուհետ՝ ԱՄԴ) հետ, որը պատասխանատու է միջպետական վեճերի լուծման համար: Կարևոր է, որ ՄՔԴ-ն չի պատկանում ՄԱԿ-ին, այլ միջազգային իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անկախ կազմակերպություն է, ինչը կարելի է համար միջազգային իրավունքի նշանակալից ձեռքբերում: Դատարանի աշխատանքի հիմքում ընկած է Հռոմի կանոնադրությունը, որը միջազգային պայմանագիր է, կողավորում է միջազգային քրեական իրավունքը և կոչված է ամրապնդելու օրենքի գերակայությունը միջազգային հարաբերություններում:

ՄՔԴ-ում ընդգրկված են 18 դատավորներ տարբեր երկրներից: Նրանք բաշխված են նախաքննական, դատական և վերաքննիչ պալատների միջև: Դատավորներից վեցի դեպքում կանոնավոր պարբերականությամբ տեղի է ունենում վերընտրություն: ՄՔԴ-ն առաջին դատավճիռը կայացրել է 2012 թ. հուլիսի 10-ին Թոմաս Լուբանգայի՝ Կոնգոյի ռազմական ուժերի առաջ-

նորդի դեմ՝ մեղադրելով նրան երեխաներին զորակոչելու և որպես զինվորներ օգտագործելու համար: Նա դատապարտվեց 14 տարվա բանտարկության: 2014 թ. դեկտեմբերի 1-ին այդ դատավճիռը հաստատվեց վերաքննիչ պալատի կողմից {(232)}:

2025 թ. սկզբի դրությամբ Հռոմի կանոնադրությունը վավերացրել են և, ըստ այդմ, ՄՔԴ-ի իրավասությունը ներկայումս ճանաչում են 125 պետություններ, ներառյալ Եվրամիության բոլոր երկրները: 25 այլ պետություններ, այդ թվում՝ Իրանը, Սիրիան, Ուզբեկստանը, Ղրղզստանը, Արաբական միացյալ էմիրությունները, չնայած ստորագրել են Հռոմի կանոնադրությունը, բայց այն դեռ չեն վավերացրել: Չորս պետություններ՝ Իսրայելը, Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Սուդանը, չեղյալ են համարել իրենց ստորագրությունները և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ որպես կանոնադրության երաշխավորի, տեղեկացրել են, որ այն վավերացնելու մտադրություն չունեն:

Հայաստանը Հռոմի կանոնադրությունը ստորագրել էր դեռ 1998 թ, բայց չէր վավերացրել այն: ՀՀ Ազգային ժողովն այն վավերացրեց 2023 թ. հոկտեմբերին, իսկ 2024 թ. փետրվարի 1-ից կանոնադրությունը Հայաստանի համար մտավ ուժի մեջ:

Չնայած ՄՔԴ-ի ստեղծումը կարևոր քայլ էր միջազգային դատական համակարգի բարելավման ճանապարհին, այնուհանդերձ, ինչպես նշվեց, ցեղասպանության կանխարգելումն ու պատժումը բացարձակ առաջնահերթություն դարձնելու համար պետք է բարելավվի նաև համապատասխան օրենսդրական գործիքակազմը: Դրա հրատապությունը փաստում են, ի թիվս այլ նորագույն փորձառությունների, Ադրբեջանի՝ 2022-2023 թթ. Արցախում իրականացրած Ցեղասպանությունը, ինչպես նաև ալիևյան վարչակարգի կողմից հայաթափված Արցախում ներկայումս մեծ տեմպով շարունակվող՝ հայ մշակույթի ոչնչացումն ու յուրացումը:

Արցախահայության ցեղասպանությունը

2022 թ. դեկտեմբերի 12-ին Արցախը Հայաստանի Հանրապետության և արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, Շուշիի մերձակայքում շրջափակվեց ադրբեջանցի, այսպես կոչված, «բնապահպանների» կողմից՝ Արցախի երկու հանքերի շահագործման դեմ բողոքի պատրվակով: Այդ գործողությունը 2020 թ. նոյեմբերի 10-ին կնքված հրադադարի պայմանների ակնհայտ խախտում էր: Բաքվի վարչակազմն «արդարանում» էր այն պատճառաբանությամբ, թե որևէ ազդեցություն չունի բնապահպանների վրա, որոնց շարքերում իրականում Ադրբեջանի զինվորականներ, պաշտոնյաներ և կառավարությանը մոտ կանգնած կազմակերպությունների անդամներ էին: Հաջորդիվ հաճախակիացան Արցախի գազամատակարարման խափանումները: Ադրբեջանի ՆԳ նախարարության և ոստիկանության ջոկատներ ուղարկվեցին շրջափակման վայրը՝ «բնապահպան ակտիվիստների» անվտանգությունն ապահովելու համար: Արգելափակվեց ապրանքների, այդ թվում՝ դեղամիջոցների ներկրումն Արցախ, ինչի հետևանքներն արագ ի հայտ եկան: Դեկտեմբերի 16-ին Ստեփանակերտում տասնյակ հազարավոր մարդիկ փողոց դուրս եկան՝ բողոքելու շրջափակման դեմ:

Արցախում մանկապարտեզներն ու դպրոցական տարրական դասարանները դադարեցին գործել: Միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և (ռուս խաղաղապահների ուղեկցությամբ) առանձին ուղևորափոխադրող ավտոմեքենաների երթևեկումն էր թույլատրվում՝ նախապես համաձայնություն ձեռք բերելու դեպքում:

Եթե նախքան շրջափակումը ամսական միջին հաշվով 12.000 տոննա ապրանք էր ներկրվում Արցախ, ապա այնուհետև դրանք աննշան չափի էին և չէին բավարարում բնակչության պահանջարկը: Կենսամթերքների և վառելանյութի ձեռքբերումը դրանց սղության պատճառով հարաճուն սահմանափակումների

էր ենթարկվում: Առօրեական դարձան հերթերը խանութների առջև: Սկսվեց հումանիտար ճգնաժամ: 2023 թ. հունվարի 10-ին «վնասվեց» Արցախ մտնող բարձր լարման էլեկտրահաղորդման գիծն ադրբեջանական վերահսկողության ներքո գտնվող հատվածում, և ադրբեջանական իշխանությունները չթույլատրեցին այն նորոգել:

Սկսվեց նաև էներգետիկ սուր ճգնաժամ: Պաշտոնական տվյալներով 690 փոքր և միջին ձեռնարկություններ դադարեցին գործել, ինչի հետևանքով 3200 մարդիկ դարձան գործազուրկ:

2023 թ. օգոստոսի 11-ին Հայաստանը պահանջեց գումարել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ՝ պարտավորեցնելու Ադրբեջանին, որ անհապաղ վերացնի Լաչինի միջանցքի շրջափակումը {(179)}: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հրաժարվեց շրջափակումը դատապարտել, քանի որ, ըստ որոշ փորձագետների, խորհրդի անդամներից ոմանք գտնվում էին ադրբեջանական պրոպագանդայի ազդեցության ներքո {(83) *338-339*}:

ԵԽ-ն, որը դեռ 2021 թ. մայիսի 20-ին մի բանաձև էր ընդունել «Հայաստանի և Ադրբեջանի միջև վերջին հակամարտության հետևանքով ռազմագերիների մասին» {(184)}, իսկ 2022 թ. մարտի 10-ին ընդունել էր «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» բանաձևը {(185)}, 2023 թ. հունվարի 19-ին ընդունեց մի նոր բանաձև, որում դատապարտում էր շրջափակումն՝ այն անվանելով հումանիտար ճգնաժամ և 2020 թ. հրադադարի հայտարարության խախտում: Միաժամանակ Ադրբեջանին կոչ էր արվում «պաշտպանել Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի իրավունքները և հրաժարվել իր խառնակիչ հռետորաբանությունից, որը հայերի նկատմամբ խտրականության կոչ է անում և պահանջում է հայերից հեռանալ Լեռնային Ղարաբաղից» {(187)}:

2023 թ. փետրվարի 22-ին ԱՄԴ-ն Հայաստանի՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի (7 մարտի 1966 թ.) խախտման պատճառով

Ադրբեջանի դեմ հարուցած վարույթում, որն ընթանում էր 2021 թ. ի վեր, բավարարելով ժամանակավոր միջոցներ կիրառելու և Ադրբեջանին Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման դադարեցումը պարտավորեցնելու՝ Հայաստանի կողմից կատարված միջնորդությունը, Ադրբեջանին պարտավորեցրեց երաշխավորել Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը {(181)}:

Եվրոպական կուսակցությունների և կառավարությունների շատ ներկայացուցիչներ նույնպես կոչ էին անում Ադրբեջանին՝ դադարեցնել շրջափակումը: Ֆրանսիայի Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի նախագահ Լորան Վոքիեն մի ֆրանսիական պատվիրակության կազմում այցելեց Լաչինի միջանցք և այն տեսակետն արտահայտեց, որ շրջափակումը նշանակում է պանթուրքիզմի վերադարձ 21-րդ դար: Այդ ամենով հանդերձ՝ ադրբեջանցիները 2023 թ. մարտի 5-ին, դարձյալ խախտելով հրադադարի հայտարարությունը, նոր դիրքեր գրավեցին Արցախում և արգելափակեցին միակ այլընտրանքային գրունտային ճանապարհը, որն առանձին հայերի կողմից օգտագործվում էր Շուշիի շրջափակումը շրջանցելու համար: Ադրբեջանն անտեսեց նախկին դիրքերը վերադառնալու՝ ռուսական խաղաղապահ զորամասերի պահանջը: Մի քանի օր անց ադրբեջանցիները Տեղ և Կոռնիձոր գյուղերի մերձակայքում Լաչինի միջանցքի ելքին հարող մի նոր տարածք գրավեցին Հայաստանի Հանրապետությունից {(83) *341*}:

Ադրբեջանական ագրեսիան դրսևորվում էր նաև արտերկրում: 2023 թ. ապրիլին Գլենդելում լուսասյուների վրա հայտնվեցին թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում «ավարտին հասցնել» հայերի ցեղասպանությունը: 2023 թ. սկզբին Գլենդելից ոչ շատ հեռու գտնվող Բևեռլի Հիլզում թռուցիկներ տարածվեցին Հայաստանն ավերելու կոչերով: Այդ գործողությունները համահունչ էին Ադրբեջանի կողմից տասնամյակներ ի վեր զարգացվող հակահայ ատելության քարոզչությանը և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի

այն պնդումներին, թե Հայաստանն Ադրբեջանի պատմական տարածք է, այլ կերպ ասած՝ «Արևմտյան Ադրբեջան»:

2023 թ. ապրիլի 23-ին ադրբեջանցիները Լաչինի միջանցքի վրա՝ ՀՀ-ին սահմանակից Հաքարի գետի կամրջի մոտ տեղակայեցին ռազմական անցակետ: Մի շարք արևմտյան կառավարություններ, նաև Ռուսաստանը բողոքեցին դրա դեմ, բայց ռուսական խաղաղապահները չմիջամտեցին: Այդ հարցում թերևս իր դերը խաղաց 2022 թ. փետրվարի 22-ին ստորագրված ռուս-ադրբեջանական «Դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագիրը {(173)}: Անցակետի տեղադրումից մի քանի օր անց ադրբեջանական, այսպես կոչված, «բնապահպան-ակտիվիստները» կառավարության կոչով իրենց «բողոքը» դադարեցրին:

Թեև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի շուտափույթ կնքման համատեքստում 2023 թ. մայիսի 22-ի իր մամուլի ասուլիսում նշեց և մայիսի 24-ին ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ վերահաստատեց, որ Հայաստանը պատրաստ է՝ ճանաչելու Ադրբեջանի 86.600 կմ^2 տարածքային ամբողջականությունը (ներառյալ Լեռնային Ղարաբաղը)՝ միաժամանակ ընդգծելով Ադրբեջանի կողմից Հայաստանի 29.800 կմ^2 տարածքի ճանաչման, նաև՝ Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների և անվտանգության ապահովման շուրջ Բաքվի և Ստեփանակերտի միջև երկխոսության կայացման ու դրա երաշխավորման միջազգային մեխանիզմների ապահովման անհրաժեշտությունը {(174), (180)}, այնուհանդերձ Ադրբեջանը շարունակում էր Արցախի հայաթափմանն ուղղված գործողությունները:

Ադրբեջանցիները 2023 թ. հունիսի 15-ին փորձեցին անցնել Հաքարիի կամուրջը և ադրբեջանական դրոշը բարձրացնել հայկական կողմում, բայց, հանդիպելով հայ սահմանապահների կրակոցներին, նահանջեցին: Դա Ադրբեջանի կողմից կատարված նոր պրովոկացիա էր՝ միջանցքը լիակատար շրջափակման

ենթարկելու համար, ինչը կատարվեց հունիսի 23-ին: Նույնիսկ Միջազգային կարմիր խաչի և ռուսական խաղաղապահների ավտոշարասյուներն այլևս չէին կարողանում մուտք գործել միջանցք: Դա չթույլատրվեց նաև ՀՀ կառավարության կողմից 2023 թ. հունիսի 26-ին Արցախ ուղարկված 19 բեռնատար ավտոմեքենաներին, որոնք բեռնված էին 400 տոննա կենսական նշանակության ապրանքներով: Ադրբեջանցիները դա անվանեցին հայկական կողմի «պրովոկացիա» {(83) *343*}:

Շրջափակումն այլևս համապարփակ բնույթ ստացավ: Միայն առանձին դեպքերում թույլատրվում էր հիվանդների տեղափոխումը ՀՀ տարածք: Կենսական անհրաժեշտության ապրանքների՝ սննդամթերքի, դեղորայքի, էլեկտրականության, գազի, բենզինի և ջրային ռեսուրսների անբավարարությունը հանգեցրեց խոր հումանիտար աղետի, որի հետևանքով եղան մահեր: Դպրոցներն ու հասարակական տրանսպորտը դադարեցին գործել: Կտրուկ աճեց գործազրկությունը:

Թեև Ադրբեջանն առաջարկեց Աղդամից հումանիտար օգնություն ուղարկել, բայց դա իրականում աչքակապության նպատակ ուներ, քանի որ, երբ արցախցիներն ի վերջո ընդունեցին այդ առաջարկը՝ պայմանով, որ բացվի նաև Լաչինի ճանապարհը, Ադրբեջանը մերժեց դա անել: Ադրբեջանի գործելակերպը պարզորոշ վկայում էր Արցախի հայաթափման՝ նրա մտադրությունը: Այն արտերկրում ևս մարդու իրավունքների կազմակերպությունների, ցեղասպանագետների և քաղաքական ու այլ ոլորտների գործիչների կողմից բազմիցս բնորոշվեց որպես հիբրիդային պատերազմ և ցեղասպանություն: Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը, որ դեռ շրջափակման սկզբից պարբերաբար ահազանգում էր Բաքվի վարչակազմի ցեղասպանական մտադրությունների մասին, 2023 թ. ԵԽ-ին ուղղված մի ուղերձում արձանագրում էր, որ վերջինս «աշխարհաքաղաքական և ռեսուրսային դրդապատճառներով փակում է իր աչքերը

ադրբեջանական դիկտատուրայի առջև», և որ Ադրբեջանի «մտադրությունները պարզ են. այդ տարածաշրջանում վերացնել հայերի գոյության բոլոր հետքերը և հայկական ներկայությունը: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը շարունակ հայտարարել է, որ մտադիր է ոչնչացնել Արցախում ապրող հայերին» {(83) *345*}: Փոքր-ինչ ավելի ուշ Լեմկինի ինստիտուտն արձանագրում էր «Արցախի Հանրապետությունում (Լեռնային Ղարաբաղում)» իրականացված ցեղասպանությունը և դրանում արևմտյան տերությունների մեղսակցությունը {(221)}:

Շրջափակման միջոցով արցախահայությանը հոգեկան և ֆիզիկական երկարատև տառապանքների մատնելուց հետո Ադրբեջանը, հերթական անգամ ոտնահարելով հրադադարի համաձայնությունը, 2023 թ. սեպտեմբերի 19-ին անցավ ռազմական հարձակման: Ստեփանակերտն ու բազմաթիվ այլ բնակավայրեր դարձան հրետանային կրակի և անօդաչու թռչող սարքերի հարձակման թիրախ: Ադրբեջանի այն պնդումը, թե միայն ռազմական հենակետեր է թիրախավորել, կեղծիք է, քանի որ ռազմական գործողությունների հետևանքով զանգվածային ավերման ենթարկվեցին Արցախի քաղաքացիական ենթակառուցվածքները, այդ թվում դպրոցներ:

Մեկօրյա մարտերից հետո Արցախի կառավարությունը ընդունեց ռուս խաղաղապահների առաջարկած հրադադարը: Չնայած այն սեպտեմբերի 20-ին ժամը 13:00-ին ուժի մեջ մտավ, ռուս խաղաղապահներն այնուհետև Ադրբեջանի կողմից հրադադարի բազմաթիվ խախտումներ արձանագրեցին:

Հայաստանի դիմումի հիման վրա ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 2023 թ. սեպտեմբերի 22-ին «արտակարգ նիստ» հրավիրեց: Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական գործողությունը սուր քննադատության ենթարկվեց անդամների մեծագույն մասի կողմից, բայց Անվտանգության խորհուրդն Ադրբեջանին պաշտոնապես դատապարտող բանաձև չընդունեց {(25) *14*}:

Ըստ ՀՀ արտգործնախարարության 2023 թ. հոկտեմբերի 30-ին հաղորդած տեղեկության, Ադրբեջանի՝ սեպտեմբերի 19-ի լայնածավալ ռազմական հարձակման հետևանքով 200-ից ավելի մարդ է սպանվել, այդ թվում՝ 9 քաղաքացիական անձ և 3 երեխա: Վիրավորվել են ավելի քան 300 մարդիկ, այդ թվում՝ 231 զինծառայող և 80 խաղաղ բնակիչ, իսկ 14 մարդ ենթարկվել է խոշտանգումների {(175)}:

Շուրջ 2000 հայեր, այդ թվում՝ 1000 երեխաներ ժամանակավորապես ապաստանեցին Ստեփանակերտի մոտ գտնվող՝ ռուս խաղաղապահների կայանում, որոնք փորձում էին նրանց բուժօգնություն ցույց տալ, նաև՝ առանձնապես վտանգված տարածքներից հայերին տեղափոխել համեմատաբար անվտանգ վայրեր: Ըստ Երևանում ռուսական դեսպանության տվյալների՝ այդ ժամանակ վտանգավոր վայրերից փոխադրվել և ռուս խաղաղապահների պաշտպանության տակ են վերցվել 8000 հայեր: Շատ մարդիկ առայսօր անհետ կորած են համարվում:

ԱՄՆ կոնգրեսի 40 անդամներ Ամերիկայի հայ ազգային կոմիտեի հետ միասին պահանջեցին ՄԱԿ-ի մանդատով օժտված խաղաղարար առաքելություն ուղարկել Արցախ: «Մենք ունենք այն ամուր համոզումը,– նշում էին նրանք իրենց ուղերձում,– որ Միացյալ Նահանգները և միջազգային հանրությունը գործելու և հայերի երկրորդ ցեղասպանությունը կասեցնելու պատասխանատվություն են կրում, որը ներկայումս տեղի է ունենում մեր աչքերի առաջ: Այս պահը կարող է վերջին հնարավորությունը լինել՝ այդ ժողովրդին փրկելու» {(83) *348*}: ՀՀ արտգործնախարար Ա. Միրզոյանը նույնպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված իր կոչում ահազանգ էր հնչեցնում՝ ասելով. «այլևս չկա հակամարտություն, չկան հակամարտության կողմեր, կան ոճրագործներ և զոհեր» {(176)}:

Արցախահայության աղետալի դրության մասին ահազանգերով ու կոչերով էին հանդես էին գալիս բազմաթիվ կազմակերպու-

թյուններ, մշակութային, քաղաքական (այդ թվում բարձրաստիճան) և այլ գործիչներ: Այդ ամենը, սակայն, Ադրբեջանին չխանգարեց՝ ավարտին հասցնելու արցախահայության լիակատար հայաթափման իր մտադրությունը: Սեպտեմբերի 24-ին սկսվեց արցախահայերի զանգվածային տեղահանությունը: ՀՀ կառավարությունը նրանց ցուցաբերեց աջակցություն՝ տրամադրելով տասնյակ փոխադրամիջոցներ, անհրաժեշտության դեպքում՝ նաև կացարաններ: Հոկտեմբերի 1-ի կեսօրին Հայաստանում արդեն արձանագրվել էին 100 483 տեղահանված արցախցիներ: Ընդհանուր առմամբ՝ 100 625 բռնի տեղահանված արցախցիներ են փոխադրվել Հայաստանի Հանրապետություն, որտեղ նրանց համար կառավարության կողմից տարատեսակ աջակցության ծրագրեր են իրականացվում {(171)}:

Բազմաթիվ են 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի իրականացրած ռազմական հանցագործությունների, նաև գերված հայ զինվորների ու քաղաքացիական անձանց, այդ թվում՝ կանանց անօրինակ խոշտանգումների փաստերը, որոնք 1949 թ. ժնևյան միջազգային կոնվենցիաների և 2020 թ. հրադադարի համաձայնագրի կոպտագույն խախտումներ են:

Արցախի շրջափակման և 2023 թ. սեպտեմբերյան հարձակման ժամանակ Ադրբեջանը շարունակում էր գործադրել ահաբեկման, խոշտանգումների և ռազմական հանցագործությունների պրակտիկան: 2023 թ. հունվարի 18-ին ադրբեջանցիները կանգնեցրեցին ռուս խաղաղապահների ուղեկցությամբ Հայաստանից Արցախ վերադարձող ավտոմեքենան, որը մի խումբ երեխաների էր ետ բերում: Բռնի բացելով դուռը և նկարահանելով այդ գործողությունը՝ նրանք ահաբեկեցին երեխաներին, որոնցից մեկն ուշագնաց եղավ: 2023 թ. հուլիսի 29-ին ադրբեջանցիներն առևանգեցին Միջազգային կարմիր խաչի ավտոմեքենաներով ՀՀ փոխադրվող 15 հիվանդներից մեկին՝ 68-ամյա Վագիֆ Խաչատրյանին, և 2023 թ. նոյեմբերին դատապարտեցին 15 տարվա ազա-

տազրկման իբրև թե 1991 թ. կատարած «հանցագործությունների» համար: Կեղծ դատավարություններ հարուցվեցին նաև սահմանն անգիտակցաբար խախտած Ռաշիդ Բեգլարյանի և այլ քաղաքացիական ու զինվորական անձանց նկատմամբ: Ադրբեջանն Արցախի ութ ռազմաքաղաքական ղեկավարների ևս թույլ չտվեց փոխադրվել Հայաստան: Սեպտեմբերի 27-ին ձերբակալվեց Արցախի նախկին պետնախարար, մեծ բարերար Ռուբեն Վարդանյանը: Գերեվարվեցին նաև Արցախի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը և Արայիկ Հարությունյանը, պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լևոն Մնացականյանը, պաշտպանության բանակի հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը և Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը: Նրանց նույնպես Բաքվում բազմաթիվ կեղծ մեղադրանքներ առաջադրվեցին:

2024 թ. կատարվեցին հրապարակումներ Ռ. Վարդանյանի խոշտանգումների մասին {(186)}, որոնց անշուշտ ենթարկվել են նաև Արցախի ռազմաքաղաքական մյուս ղեկավարները:

ՀՀ-ն Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի պատճառով 2023 թ. սեպտեմբերի 29-ին նոր հայց ներկայացրեց ԱՄԴ՝ ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում քննվող «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով ժամանակավոր միջոցներ կիրառելու մասին խնդրանքով: Հայաստանը խնդրում էր դատարանին կիրառել մի շարք միջանկյալ միջոցներ և հաստատել Ադրբեջանի պարտավորությունները՝ համաձայն այդ գործով կայացրած (մասնավորապես՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ի և 2023 թվականի փետրվարի 22-ի) վճիռների: Ի թիվս այլ միջանկյալ միջոցների, Հայաստանը խնդրում էր Ադրբեջանին պարտավորեցնել՝ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված կլինեին Լեռնային Ղարաբաղում մնացած հայերին դուրս

մղելուն կամ կուսենային նրանց համար հետևանքներ: Ադրբեջանը չպետք է խոչընդոտեր վերջին ռազմական հարձակման ժամանակ տեղահանված անձանց անվտանգ և արագ վերադարձը իրենց տները՝ միաժամանակ թույլ տալով նրանց, ովքեր ցանկանում են լքել Լեռնային Ղարաբաղը, դա անել անարգել: Ադրբեջանը պետք է նաև զերծ մնար Լեռնային Ղարաբաղի ներկա կամ նախկին քաղաքական ներկայացուցիչների կամ զինծառայողների նկատմամբ պատժիչ միջոցներ ձեռնարկելուց և այլն {(172)}:

Դատարանը նոյեմբերի 17-ին կայացրեց որոշում՝ բավարարելով Հայաստանի պահանջները {(177)}: Դա, սակայն, ոչնչով չփոխեց Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը և արցախահայության ու գերեվարված անձանց աղետալի դրությունը, չնայած միջազգային բազմաթիվ կազմակերպությունների և հեղինակավոր գործիչների կողմից նրանց հանդեպ դրսևորվող համերաշխության ցույցերին:

Արցախահայության դեմ ադրբեջանական ռազմական գործողությունների դատապարտման՝ ԵՄ բոլոր անդամ պետությունների համատեղ հայտարարությունը չկայացավ, քանի որ Հունգարիան արգելափակեց այն {(182)}:

Եվրախորհրդարանը 2023 թ. հոկտեմբերի 5-ին ընդունեց բանաձև «Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի հարձակումից հետո ստեղծված իրավիճակի և Հայաստանի դեմ շարունակվող սպառնալիքների մասին»: Բանաձևում, հղում կատարելով Արցախի վերաբերյալ իր ընդունած նախորդ բանաձևերին ու այլ միջազգային իրավական փաստաթղթերի, Եվրախորհրդարանն, ի թիվս այլ պահանջների, կոչ էր անում ԵՄ-ին և իր անդամ պետություններին «նպատակաուղղված պատժամիջոցներ» սահմանել «Ադրբեջանի կառավարության այն անձանց նկատմամբ, որոնք պատասխանատու են Լեռնային Ղարաբաղում հրադադարի բազմաթիվ խախտումների և մարդու իրավունքների խախտումների համար», նաև հետաքննել «ադրբեջանական ուժերի կողմից կատարված

չարաշահումները, որոնք կարող են ռազմական հանցագործություն լինել», ուժեղացնել Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության մանդատը, Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի անվտանգության ու բարեկեցության համար ապահովել միջազգային երաշխիքներ: Միաժամանակ ափսոսանք էր հայտնվում այն մասին, որ Հունգարիան արգելափակել է ԵՄ անդամների համատեղ հայտարարությունը:

Եվրախորհրդարանը բանաձևով նաև Ադրբեջանից պահանջում էր անհապաղ վերացնել Լաչինի միջանցքի շրջափակումը, պայմաններ ստեղծել հայերի բնակությունն Արցախում վերականգնելու համար, պահպանել տեղահանված հայերի ունեցվածքը, համաներում կիրառել բոլոր գերիների նկատմամբ, ինչպես նաև զերծ մնալ Արցախի մշակութային արժեքների հետագա ոչնչացումից կամ «փոփոխումից», դուրս բերել զորքերը «Հայաստանի ամբողջ ինքնիշխան տարածքից» և այլն {(271)}:

Այդ ծավալուն և ազդու բանաձևը փաստում է Ադրբեջանի կողմից արցախահայության դեմ իրականացված հանցագործությունների վերաբերյալ Եվրախորհրդարանի բավականաչափ տեղեկացվածությունը և անշուշտ կունենար նշանակալից հետևանքներ, եթե լիներ բանաձևի իրականացումը պարտադրող արդյունավետ գործիքակազմ: Եվրախորհրդարանը ԵՄ-ի օրենսդիր մարմինն է, իսկ Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ի քաղաքականապես անկախ գործադիր մարմինն է: Վերջինս ունի բացառիկ իրավունք՝ առաջարկելու եվրոպական նոր իրավական ակտեր և իրականացնում է Եվրախորհրդարանի ու ԵԽ-ի որոշումները, որը կազմված է ԵՄ-ին անդամակցող բոլոր 27 պետությունների ղեկավարներից: Համատեղ արտաքին և անվտանգային քաղաքականությանը վերաբերող որոշումների ընդունման համար ԵՄ-ում գործում է միաձայնության սկզբունքը, այսինքն՝ Եվրախորհրդարանի ընդունած որևէ որոշում իրականացնելու համար դրան պետք է կողմ լինեն ԵՄ բոլոր պետությունները: Մինչ այժմ ԵՄ-ն Ադրբեջանի վերաբերյալ Եվրախորհրդարանի ընդունած պատ-

ժամիջոցներից ոչ մեկը չի իրականացրել՝ այն հիմնավորմամբ, որ անդամ պետությունների միաձայնությունը չի ապահովվել: Փաստորեն ԵՄ 27 անդամներից մեկը կարող է արգելել Եվրախորհրդարանի ընդունած որևէ բանաձևի կամ որոշման իրականացումը, եթե նույնիսկ մյուս 26 պետությունները դրան կողմ են: Դրա ցայտուն օրինակներից մեկը Հունգարիայի կողմից հիշյալ բանաձևի արգելափակումն էր:

Անշուշտ կարող էր ավելի ճիշտ և արդարացի համարվել, եթե ԵՄ-ն այդ հարցում առաջնորդվեր ոչ թե անդամ պետությունների միաձայնության, այլ մեծամասնության համաձայնության սկզբունքով: Այնուհանդերձ, Եվրախորհրդարանի որոշումների այդօրինակ արգելափակման դեպքում էլ այլընտրանք կա, քանի որ ԵՄ անդամ պետությունները կարող են նաև ինքնուրույն գործել: Այդ այլընտրանքը գործնականում դրսևորվեց, օրինակ, 2024 դեկտեմբերի սկզբին, երբ Էստոնիան, Լատվիան և Լիտվան ազգային պատժամիջոցներ կիրառեցին Վրաստանի իշխանությունների դեմ: Այն, ինչ Վրաստանի դեպքում եղավ, կարող է տեղի ունենալ նաև Ադրբեջանի դեպքում, եթե դիվանագիտական ոլորտում դրա համար անհրաժեշտ նախապատրաստությունը կատարվի:

Ինքնին հասկանալի է, որ Եվրախորհրդարանի՝ 2023 թ. հոկտեմբերի 5-ի բանաձևը վերոնշյալ պատճառներով Բաքվի վարչակազմի վրա որևէ ազդեցություն չգործեց: 10 օր անց՝ 2023 թ. հոկտեմբերի 15-ին, Ի. Ալիևի ներկայությամբ Ստեփանակերտի նախկին նախագահական շենքի վրա բարձրացվեց ադրբեջանական դրոշ {(83) *359*}:

Հազարամյակներ շարունակ օտար զավթիչներին դիմակայած արցախահայությունը, որն առաջին և երկրորդ արցախյան պատերազմներում ևս փառքով պսակեց իր գոյության ու ազատության պայքարը, միջազգային հանրության աչքերի առաջ դատապարտվեց երկարատև համընդհանուր շրջափակման և Ադրբեջանի ագրեսիվ ռազմական գործողությունների արդյունքում հարկադրված եղավ տեղահանվել:

«Էթնիկ զտում» ձևակերպումը, որով հաճախ բնորոշվում է Արցախում կատարվածը, անտեղի է: Այն չունի ոճրագործների պատասխանատվության և պատժման միջազգային իրավական հիմքեր: Այն, ինչ կատարվեց Արցախում, լիովին համապատասխանում է կոնվենցիայում որպես ցեղասպանություն բնորոշվող հինգ գործողություններից երկուսին՝ 2-րդ և 3-րդ կետերում նշված գործողություններին: Հետևապես Արցախում կատարված իրադարձությունները պետք է անվանել ցեղասպանություն, ինչպես դա արդեն իսկ արել են մարդու և միջազգային իրավունքով զբաղվող բազմաթիվ մասնագետներ ու հասարակական կազմակերպություններ: Միջազգային քրեական դատարանի առաջին գլխավոր մեղադրող Լ. Մ. Օկամպոն նույնպես 2023 թ. օգոստոսի 7-ի իր փորձագիտական եզրակացությունում մատնանշել է, որ հենց միայն Արցախի բնակչության «կենսատու երակի»՝ Լաչինի միջանցքի փակման որոշումն ընդունելը հիմք է տալիս Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի դեմ ՄՔԴ-ում ցեղասպանության մեղադրանք հարուցելու: Միաժամանակ վկայակոչելով ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ դրույթը և ուշագրավ զուգահեռ անցկացնելով 1915 թ. իրադարձությունների հետ՝ նա ընդգծում էր, որ Արցախում տեղի է ունենում էթնիկ հայերի ցեղասպանություն: «Չկան դիակիզարաններ և մաշետներով հարձակումներ,– գրում էր նա:– Սովը ցեղասպանության անտեսանելի զենքն է: Եթե անմիջապես արմատական փոփոխություններ չլինեն, ապա այդ խումբը մի քանի շաբաթում բնաջնջված կլինի: Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի սովամահությունը շատ առումներով ներկայացնում է ցեղասպանության արխետիպը այնպիսի կենսապայմանների պարտադրման միջոցով, որոնք նպատակաուղղված են խմբի ոչնչացմանը» {(214)}:

Իր մեկ այլ՝ 2023 թ. դեկտեմբերի 20-ի տեղեկագրում Օկամպոն դարձյալ անդրադառնում է Արցախում կատարված ցեղասպանությանը և այն հակասություններին, որոնք առկա են միջազգային իրավունքի և տարբեր պետությունների աշխարհաքաղաքական շահերի միջև: «Լաչինի միջանցքի շրջափակումից ի վեր

ցեղասպանության կոնվենցիայի համաստորագրող պետություն-ները,– նշում է նա,– որոնք ներգրավված են Ադրբեջանի հետ բա-նակցություններում, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Գերմանի-ան, Միացյալ Թագավորությունը, Իսրայելը և Ռուսաստանը, տարբեր պատճառներով անտեսել են Լեռնային Ղարաբաղի էթ-նիկ խմբի ցեղասպանության լուրջ վտանգի մասին ճշգրիտ և մատչելի տեղեկությունները: Դրա փոխարեն մեծամասնությունը ցանկանում է դյուրացնել Հայաստանի և Ադրբեջանի միջև համա-ձայնագրի կնքումը՝ նոր թշնամական գործողություններից խուսա-փելու և տնտեսական ու աշխարհաքաղաքական, ազգային որո-շակի շահերի իրականացմանը հասնելու համար: Իսրայելը, օրի-նակ, օգտվում է Ադրբեջանին մեծաքանակ զենքի վաճառքից: Կոնվենցիայի մասնակից պետությունները չպետք է օգտվեն ցե-ղասպանությունից: Ցեղասպանության կանխարգելման նրանց հանձնառությունը պահանջում է, որ նրանք գնահատեն Հայաս-տանի վրա հարձակվելու՝ Ալիևի ցեղասպանական մտադրությու-նը և փոխհատուցում տրամադրեն նրանց, ովքեր կորցրել են Լեռ-նային Ղարաբաղում իրենց կյանքը և ունեցվածքը, երաշխավո-րեն էթնիկ խմբի՝ ապահով իր բնօրրանը վերադառնալու իրա-վունքները և «հայ գերիների» ազատումը:

Դա ցեղասպանության կանխարգելման ամենահրատապ ասպեկտն է՝ ցեղասպանության շուրջ քսան զոհերի, այդ թվում՝ Ադրբեջանի կողմից զնդանված՝ Արցախի երեք նախկին նախա-գահների և հինգ այլ ղեկավար հասարակական գործիչների «ծանր ֆիզիկական և հոգեկան վնասների» (Ցեղասպանության կոնվենցիայի II բ հոդված) վտանգը վերացնելու համար: Նրանց բանտարկությունը ցեղասպանության մաս է և իրենց հանրու-թյանն ուղղված ուղերձ. եթե դուք վերադառնաք Լեռնային Ղարա-բաղ, սովամահ կարվեք, կբանտարկվեք կամ կսպանվեք: Նրանք դարձել են պատանդներ» {(211)}:

Ադրբեջանն այդ ցեղասպանությունն իրականացրեց, երբ մի-ջազգային իրավունքի տեսանկյունից Արցախի հանդեպ որևէ հա-վակնություն չէր կարող ունենալ:

Ադրբեջանական կեղծիքը և իրականությունը

Ադրբեջանական պրոպագանդան տասնամյակների ընթացքում կարողացել է միջազգային հանրության շրջանում ձևավորել այն կեղծ պատկերացումը, թե Արցախը միջազգային իրավունքի տեսանկյունից պատկանում է Ադրբեջանին: Միջազգային հանրության կողմից արցախահայության հանդեպ Ադրբեջանի կատարած հանցագործությունների հանդուրժումը թերևս պայմանավորված է նաև այդ հանգամանքով: Իրականում դա կեղծիք է, ինչը փաստել են նաև արցախյան խնդրով զբաղվող միջազգային բարձրակարգ փորձագետները: Դա պարզաբանելու համար ստորև ամփոփ անդրադարձ կկատարվի թեմային վերաբերող որոշ հանգուցային հարցերի:

1921 թ. Արցախի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին ոչ լեգիտիմ գործողություն էր

Ադրբեջանի ներկայիս վարչակարգի այն պնդումը, թե Ղարաբաղը 1918-1920 թթ. եղել է անկախ ադրբեջանական հանրապետության կազմում, կեղծիք է: Ավելին, այդ հանրապետության սահմանները երբևէ չեն ճանաչվել Ազգերի լիգայի կամ այլ միջազգային կառուցների կողմից:

1918 թ., երբ հռչակվեցին այսրկովկասյան երեք հանրապետությունները, Ադրբեջանը թուրքական զորքերի աջակցությամբ փորձում էր տիրանալ պատմականորեն հայկական և հայաբնակ Նախիջևանի, Ղարաբաղի և Զանգեզուրի գավառներին: Ղարաբաղի և Զանգեզուրի բնակչությունը համառ և արյունահեղ պայքար ծավալեց զավթիչների դեմ: 1920 թ. մարտի 23-ին թուրք-մուսավաթական հրոսակներն իրականացրեցին Շուշիի հայերի կոտորած, որին զոհ դարձավ ավելի քան 30 000 մարդ, իսկ քաղաքի հայաբնակ հատվածը հրկիզվեց {(35) *307*}: Արցախը զավթելու նրանց ջանքերը, սակայն ձախողվեցին արցախահայության միահամուռ և հերոսական պայքարի շնորհիվ:

1920 թ. նոյեմբերի 30-ին, երբ հայհեղկոմն Իջևանում հռչակել էր Հայաստանի խորհրդայնացումը, Ադրբեջանի հեղկոմի կողմից նախագահ Նարիմանովի և արտգործժողկոմ Հուսեյնովի ստորագրությամբ հայհեղկոմին ուղարկվեց հեռագիր, որով տեղեկացվում էր, որ Ադրբեջանի հեղկոմը «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը» ճանաչում է որպես «Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասեր»: Այդ հեռագիրը՝ որպես հռչակագիր, ընթերցվել է նաև 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքվում կայացած՝ Հեղկոմի նիստում:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը 1921 թ. հունիսի 19-ին տարածեց հայտարարություն, ըստ որի՝ այդ հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մաս էր հռչակվում {(178)}:

Ադրբեջանը, սակայն, կարճ ժամանակում փոխեց իր դիրքորոշումը՝ դարձյալ ջանալով ամբողջությամբ տիրանալ Արցախին: Այսրկովկասյան երեք հանրապետությունների միջև տարածքային վեճերը կարգավորելու համար 1921 թ. հուլիսին Թիֆլիսում գումարվեց ՌԿ(բ)Կ կովկասյան նստաշրջան: Հուլիսի 4-ին կայացած քվեարկության արդյունքներով վճռվեց Լեռնային Ղարաբաղը ներառել Հայաստանի կազմում: Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը բողոքեց դրա դեմ՝ պահանջելով վերանայել որոշումը: Հուլիսի 5-ին Ազգությունների ժողկոմ Ի. Ստալինի ճնշմամբ վճռվեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ նրան տալով մարզային ինքնավարություն: Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունը, որի 95%-ը հայեր էին, լիովին անտեսվեց: 1923 թ. հուլիսի 7-ին Լեռնային Ղարաբաղը ստացավ Ադրբեջանի կազմում ինքնավար մարզի կարգավիճակ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն (ԼՂԻՄ) ուներ 4.400 կմ^2 տարածք, որը կազմում էր պատմական Արցախի տարածքի (12.000 կմ^2) մոտ մեկ երրորդը: Մարզին հյուսիսից սահմանակցող Խանլարի, Դաշքեսանի և Շահումյանի շրջաններն ինքնավարություն չստացան, թեև դրանք նույնպես մեծամասամբ

հայերով էին բնակեցված: 1921 թ. ԼՂԻՄ-ի բնակչության շուրջ 95 տոկոսը հայեր էին: Խորհրդային շրջանում՝ մինչև 1989 թ. մարզում հայերի հանդեպ Ադրբեջանի վարած սոցիալ-տնտեսական և այլ բռնաճնշումների հետևանքով մարզի հայ բնակչության կազմը նվազեց՝ կազմելով մոտ 77 տոկոս: Այդուհանդերձ հայերը շարունակում էին կազմել բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ ի տարբերություն ինքնավար հանրապետության կարգավիճակով նմանապես Ադրբեջանի կազմում ներառված Նախիջևանի: Այստեղ նույնպես 1914 թ. դրությամբ հայերը մեծամասնություն էին՝ բնակչության 52%-ը: 1918 և 1920 թթ. թուրքական հարձակումների ժամանակ բնակչության մի զգալի մասը տեղափոխվեց Արարարատյան դաշտավայր և այլ վայրեր: 1921 թ., երբ Նախիջևանը ինքնավար հանրապետության կարգավիճակով ներառվեց Ադրբեջանի կազմում, Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը ոչ միայն արգելեց նրանց վերադառնալ հայրենի բնակավայրերը, այլև տարբեր բռնաճնշումներով արտաքսեց նաև Նախիջևանում մնացած հայերին: Վերջին 1000-2000 հայերը Նախիջևանից վտարվեցին 1988 թ.{(83) *186, 271-273*}:

Ինչպես այլ փորձագետներ, պրոֆ. Օտտո Լուխտերհանդտը ևս հիմնավորապես փաստել է, որ Ստալինի ճնշման ներքո 1921 թ. Արցախի բռնակցումը Ադրբեջանին, եթե նույնիսկ այն մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը չի վերանայվել, «որևէ լեգիտիմության հավակնություն ունենալ չի կարող»: Նախ, ինչպես նշում է պրոֆեսորը, այդ վճիռը կայացվել է կուսակցական մի մարմնի կողմից, որը ոչ մի «դեմոկրատական լեգիտիմացիա» չուներ, այլ կարողանում էր հենվել սոսկ Կովկասի հաղթական կարմիր բանակի իշխանության վրա: Երկրորդ, Լեռնային Ղարաբաղի ժողովրդին այդ մասին չեն հարցրել: Երրորդ, դա ազգային ինքնորոշման իրավունքին հակասող կամայական վճիռ էր, քանի որ Ադրբեջանը որևէ իրավունք չուներ պահանջելու, «որ գրեթե բացառապես հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղն անջատվեր սահմանակից Հայաստանի Խորհրդային Հանրապետությունից»: Ավելին, այդ

վճիռը հակասում էր նաև Հոկտեմբերյան հեղափոխության հիմնարար սկզբունքներին և ԽՍՀՄ սահմանադրության՝ ինքնորոշման իրավունքին {(129) *35-36*}: Քանի որ, ինչպես իրավացիորեն նշում են նաև դր. Վինֆրիդ Դալմանը և պրոֆ. Թեսսա Հոֆմանը, Ադրբեջանն այդ «միջազգային իրավունքով» է խաբում աշխարհին և արդարացնում Արցախի դեմ իր հարձակումներն ու պատերազմական գործողությունները {(83) *276*}, ուստի շատ կարևոր է, որ միջազգային հանրությունը ստուգապես տեղեկացվի ճշմարտության մասին:

Արցախի ինքնորոշումը միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական է

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990 թ. ապրիլի 3-ին ընդունած՝ «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության անջատման հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի 3-րդ հոդվածը ինքնորոշման ճանապարհ էր բացում նաև ինքնավարությունների համար: Ինչպես ամրագրված էր այդ հոդվածում, «Միութենական հանրապետությունում, որն իր կազմում ունի ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և/կամ ինքնավար շրջաններ, հանրաքվեն իրականացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում առանձին կերպով: Ինքնավար հանրապետություններն ու ինքնավար կազմավորումներն իրավունք ունեն ինքնուրույն կերպով վճռելու՝ ԽՍՀՄ-ում կամ անջատված միութենական հանրապետությունում մնալու հարցը, ինչպես նաև սեփական պետահրավական կարգավիճակի կարգավորման խնդիրը» {(215)}:

Արցախահայությունն իր ինքնորոշումն իրականացրեց՝ համապատասխան այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը: Ինչ վերաբերում է Խորհրդային Ադրբեջանին, ապա այն անկախացավ ԽՍՀՄ գործող օրենքի ոտնահարումով՝ առանց հանրաքվե իրականացնելու, իր Գերագույն խորհրդի՝ 1991 թ. օգոստոսի 30-ի նիստում ընդունված որոշման հիման վրա: Ադրբեջանը, բա-

ցի այդ, հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդ լինելուց՝ իրեն հռչակելով 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդ: Այդ ամենը թերևս պայմանավորված էր երկու հանգամանքով. նախ՝ խորհրդային գործող օրենքի հիման վրա անկախանալու դեպքում Ադրբեջանը պետք է ճանաչեր նաև նույն օրենքին համապատասխանող՝ Արցախի անջատումը: Երկրորդ՝ իրեն համարելով 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդ՝ ադրբեջանական վարչակարգը հույս ուներ իրավական հիմք ստեղծել Արցախի՝ Ադրբեջանին պատկանելու վերաբերյալ, որն, իբրև թե եղել է այդ հանրապետության կազմում: Այս դեպքում ևս, սակայն, Ադրբեջանն իրեն փակուղի էր տանում, քանի որ, ինչպես նշվեց, Արցախը չի եղել այդ հանրապետության կազմում, և վերջինիս սահմաններն էլ երբևէ միջազգային ճանաչում չեն ստացել: «Ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը,– արձանագրում են դր. Յուրգեն Գիսպերտը և դր. Խրիստիան Կոլտերն իրենց համատեղ վերլուծականում,– որն իր վերականգնված ինքնիշխան պետականությունը հենակցում է 1918-1920 թթ. Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությանը, ո՛չ իրավական, ո՛չ պատմական (քաղաքական, ժողովրդագրական և այլն) առումով չի կարող համոզիչ փաստարկներ ներկայացնել այնպիսի տարածքային ամբողջականության պահանջի համար, որը կներառի Լեռնային Ղարաբաղը» {(199)}:

Ի թիվս այլ միջազգային փորձագետների, պրոֆ. Պետեր Օրեբեկը նույնպես փաստում է, որ Արցախը, ինքնորոշումից զատ, այլ ընտրանք չուներ, և որ նրա ինքնորոշումը միանգամայն համահունչ է միջազգային իրավունքին: «Լեռնային Ղարաբաղում տնական հուզումներն ու զանգվածային բռնությունները,– նշում էր նա,– երբ բանակցային լուծումն անհնար է եղել, տարածքը հասցրել են այնպիսի իրավիճակի, որը միայն «բուժիչ անջատումով» կարող է կարգավորվել: Պետք է հետևել ժողովրդի կամքին, եթե աշխարհն ուզում է հասնել ՄԱԿ-ի՝ վեճերը խաղաղ միջոցներով լուծելու նպատակին» {(83)}:

Արցախի ինքնորոշումը, այսպիսով, միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն օրինական է, իսկ դրա մերժումը օրենքի ոտնահարումով անկախացած Ադրբեջանի կողմից չի կարող որևէ կերպ հիմնավորվել և, Օ. Լուխտերհանդտի բնորոշմամբ, այլ բան չէ, քան «անպատկառություն» ու «ցինիզմ» {(129) *46*}:

Արցախի և ՀՀ-ի վրա ռազմական հարձակումները՝ որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ

Ինչպես արձանագրել են միջազգային փորձագետները, թե՛ 1994 թ. մայիսի 12-ի և թե՛ 2020 թ. նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագրերն անվիճելիորեն վավեր են, և դրանց խախտումները հակասում են ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված՝ ուժի կիրառման ընդհանուր արգելքին (հոդված 2, կետ 4): Բացի այդ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970 թ. հոկտեմբերի 24-ի թիվ 2625 բանաձևով ընդունված՝ «ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրում արձանագրված է. «Յուրաքանչյուր պետություն պարտավոր է նաև զերծ մնալ ցանկացած ուժի սպառնալիքից կամ դրա կիրառումից, որոնք հետապնդում են միջազգային սահմանազատման գծերը խախտելու նպատակ, ինչպիսիք են հրադադարի գծերը, որոնք հաստատվել են միջազգային համաձայնագրով կամ այնպիսի համաձայնագրի հիման վրա, որի պայմանավորվող կողմը ինքն է» {(216)}:

Օ. Լուխտերհանդտն իրավամբ նշում է, որ Լեռնային Ղարաբաղը ոչ միայն հրադադարի երկու համաձայնագրերում, ըստ միջազգային իրավունքի, ամրագրված՝ ուժի կիրառման հիշյալ արգելքով և ՄԱԿ-ի կանոնադրության վերոնշյալ հոդվածով էր պաշտպանված ռազմական հարձակումներից, այլև այն հանգամանքով, որ միջազգային սովորութային իրավունքի վրա հիմնված՝ բռնության արգելքը վերաբերում է նաև կայուն «փաստացի

պետություններին», իսկ Արցախի Հանրապետությունը տասնամյակներ շարունակ կատարել է փաստացի կայուն պետության բոլոր գործառույթները: Այդ ամենը նշանակում է, որ «Ադրբեջանը, միջազգային իրավունքի համաձայն պարտավորված լինելով պահպանել ուժի կիրառման արգելքը, իրավունք չուներ ռազմական ուժի կիրառմամբ հարձակվելու Արցախի Հանրապետության վրա ո՛չ 2016 թ. ապրիլին, ո՛չ 2020 թ. սեպտեմբերին և ո՛չ էլ 2023 թ. սեպտեմբերին: Հետևաբար Ադրբեջանը չի կարող արդարացնել իր պատերազմները՝ ասելով, թե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի մաս է և «գտնվում է ադրբեջանական պետության տարածքում», քանի որ Արցախի Հանրապետությանը և Ղարաբաղի հայերին պաշտպանող՝ միջազգային իրավունքով ամրագրված ուժի կիրառման արգելքն առաջնահերթություն ունի Ադրբեջանի ինքնիշխանության հավակնության նկատմամբ» {(130) *58*}:

ՄԱԿ-ի 2625 բանաձևով ընդունված վերոնշյալ հռչակագրում նաև նշվում է, որ «հարձակողական պատերազմը խաղաղության դեմ հանցագործություն է», որի համար, միջազգային իրավունքի համաձայն, գոյություն ունի պատասխանատվություն: Բացի այդ՝ արձանագրվում է, որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է զերծ մնալ ուժի ցանկացած կիրառումից, որը ժողովուրդներից, որոնց վերաբերում է իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքի մեկնությունը, խլում է նրանց ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունքը» {(216)}:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանը բազմակիորեն խախտել է միջազգային իրավունքը՝ ոտնահարելով նաև ՄԱԿ-ի կանոնադրության կարևորագույն սկզբունքները: Միջազգային հանրությունը, սակայն, անտեսել է դա: Այդ հանդուրժումը քաջալերել է Ադրբեջանին՝ զավթիչ գործողություններ իրականացնելու ոչ միայն Արցախի, այլև ՀՀ պետական տարածքի դեմ: 2021 թ. մայիսի 12-ին ադրբեջանական զորամասերը ներխուժեցին Սյունիքի մարզում գտնվող Սև լճի տարածքը, որը ներկայումս էլ շարունակում է

նրանց կողմից գրավված մնալ: 2021 թ. օգոստոսի 27-ին Ադրբեջանը շրջափակեց նաև Գորիսից-Կապան մայրուղին՝ ընդհատելով Հայաստանի Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող բեռնաշրջանառությունն Իրանի հետ: Հայկական կողմը դրանից հետո ստիպված եղավ փոխարինող ճանապարհ կառուցել Տանձավերով և Տաթևով: Ադրբեջանը կատարեց նաև բազմաթիվ այլ ագրեսիվ ոտնձգություններ Գեղարքունիքի մարզում, Ներքին Հանդ գյուղի տարածքում և այլ վայրերում, իսկ 2022 թ. սեպտեմբերի 12-14-ին ադրբեջանական զորամասերը անօդաչու թռչող սարքերով, հրետանիով ու ականանետային զինատեսակներով ձեռնարկեցին այդ շարքի ամենալայնածավալ հարձակումը Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի արևելյան հատվածներում: Գնդակոծելով նույնիսկ սահմանից 40 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրեր ու ենթակառուցվածքներ՝ նրանք զավթեցին շուրջ 140 կմ^2 նոր տարածքներ: Թիրախավորվեցին մասնավորապես Վարդենիսը, Գորիսը, Ջերմուկը և Սոթք գյուղը: Ադրբեջանի կողմից 2020 թ.-ից զավթված ՀՀ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է առնվազն 215 կմ^2՝ չհաշված էքսկլավ Արծվաշենի տարածքը, որն Ադրբեջանի վերահսկողության տակ է գտնվում Արցախյան առաջին պատերազմից ի վեր {(83) *327-330*}: Հայաստանի Հանրապետության պետական տարածքի այդ զավթումները նույնպես առայսօր մնացել են անպատիժ, թեև դրանք վերաբերում են նաև ՀԱՊԿ-ի արտաքին սահմանին, որի անդամ է Հայաստանը {(130) *64*}:

Արցախահայության տեղահանումը՝ որպես ահազանգ և հրամայական

Արցախյան նորագույն աղետալի իրադարձությունները և արցախահայության ցեղասպանությունը վերստին փաստում են, որ միջազգային իրավունքը դեռևս բավարար անկախություն ու գործիքակազմ չունի՝ նման աղետների կանխումն ու պատժումը

պարտադրելու համար: Ավելին, ինչպես ցույց է տալիս միջազգային հանրության մի զգալի հատվածի կողմից Կոսովոյի անկախության ճանաչումը, այդ իրավունքը կարող է գործադրվել նաև ընտրովիության սկզբունքով՝ թելադրված պետությունների աշխարհաքաղաքական շահերով: «Նորագույն անցյալում կա մի ակնառու օրինակ այն բանի, որ միջազգային իրավունքը միջազգային քաղաքականության մեջ մեկնաբանվում է՝ ըստ քաղաքական փառասիրությունների. Կոսովոն,– նշում են Թ. Հոֆմանը և Վ. Կ. Դալմանը:– Ըստ այն նույն չափանիշների, թե Արցախն ադրբեջանական տարածք է, Կոսովոն պետք է սերբական տարածք լիներ, սակայն հարավսլավական դաշնության լուծարումից հետո սկսված էթնիկ անկարգությունները և սերբերի կողմից ալբանական մեծամասնության ուժգին ճնշումը շատերի աչքում ժողովրդի ինքնորոշման իրավունքը վերադասեցին Սերբիայի տարածքային ամբողջականությանը: Մինչ այսօր ՄԱԿ-ի անդամ պետությունների կեսից ավելին ճանաչել են Կոսովոյի անկախությունը: Արցախի համար, բացի Հայաստանից, համանման հակամարտության համապատասխան կարգավորումը երբեք օրակարգում չի եղել: Մի՞թե 1988 թ.-ից ի վեր երկու կողմերում 30 000 սպանվածները և մեկ միլիոնից ավելի արտաքսվածները բավական չէին՝ Արցախին ինքնորոշման նման գործընթաց տրամադրելու համար: Կամ արդյո՞ք այն հանգամանքն է դեր խաղում, որ Կոսովոյի անկախությունը աշխարհաքաղաքական պատճառներով հետաքրքրում էր կոլեկտիվ Արևմուտքին, մինչդեռ Արցախինը՝ ոչ» {(83) *266*}:

Անշուշտ այդ հարցում իր դերն է խաղացել նաև որոշում կայացնողներին «գնելու»՝ Ադրբեջանի քաղաքականությունը: Եվրոպական կայունության նախաձեռնությունը (ESI, թարգմանաբար՝ ԵԿՆ) 2012 թ. իր՝ «Ինչպես Ադրբեջանը լռեցրեց Եվրախորհրդին» վերնագիրն ունեցող զեկույցում բացահայտել է, որ Եվրախորհրդին Ադրբեջանի անդամակցելու պահից ամեն տարի 30-40 պատ-

գամավորներ հրավիրվում են Ադրբեջան և «ողողվում» նվերներով՝ այդ թվում՝ թանկարժեք խավիարով (որի կիլոգրամն արժե 1400 եվրո), արժեքավոր մետաքսե գորգերով, ոսկով և արծաթով, ինչպես և դրամական գումարներով {(247)}:

Հետաքննությունները բացահայտեցին իտալացի պատգամավոր Լուկա Վոլոնտեի շուրջ ձևավորված մի լոբբիստական ցանց, որի միջոցով Ադրբեջանը «գնել» է ԵԽ-ի խորհրդարանականներին {(248)}: Գերմանական Բունդեսթագի բազմաթիվ պատգամավորներ նույնպես ֆինանսավորվել են դեպի Բաքու թանկարժեք ու շքեղ այցեր կատարելու համար և դրա դիմաց հանդես են եկել որպես լոբբիստներ՝ առաջ մղելով Ադրբեջանի կառավարության շահերը: Ի թիվս այլ կազմակերպությունների, «Transparency International» կազմակերպությունը նույնպես խստորեն քննադատել է Ադրբեջանի գործելակերպը՝ այն անվանելով «խավիարային դիվանագիտություն» {(249), (250), (251), (252)}:

Գերմանիայում Ադրբեջանի «խավիարային» քաղաքականության վերաբերյալ հրապարակումները հատկապես ակտիվացան 2017 թ., երբ բացահայտվեցին ԵԽ-ում գերմանական Քրիստոնյա-սոցիալական միության (ՔՍՄ) ներկայացուցիչ Էդուարդ Լինտներին Ադրբեջանի կատարած ֆինանսական վճարումները: Նա Եվրախորհրդում աչքի էր ընկնում Բաքվի վարչակարգի շահերը պաշտպանող քարոզչությամբ: Բանկային փաստաթղթերով ապացուցվել է, որ Լինտները ադրբեջանական փողերի «լվացման» և լոբբիստական ծրագրի շրջանակում Էստոնիայի «Danske Bank»-ի մի մասնաճյուղի միջոցով բազմիցս գումարներ է ստացել {(253)}: Լինտների հետ մեկտեղ Եվրախորհրդում Ադրբեջանի շահերի պաշտպանության հարցում կարևոր դեր է խաղացել նաև Եվրախորհրդի՝ գերմանական Քրիստոնյա-դեմոկրատական միության (ՔԴՄ) պատգամավոր Կարին Շտրենցը՝ նմանապես ալիևյան փողերի ազդեցությամբ: 2010 թ. Լինտներն ու Շտրենցը միասին մեկնել են Բաքու {(254)}: Ինչպես հաղորդվում է ԵԿՆ-ի

զեկուցագրերում, Լինտները 2013 թ. կազմել է դիտորդական մի պատվիրակություն՝ դիտարկելու Ադրբեջանում նախագահական ընտրությունները: Ընտրություններից հետո նա դրանք դրական և «գերմանական չափանիշներին համապատասխան» է որակել, թեև անկախ դիտորդները մեծածավալ կեղծիքներ են արձանագրել: Դեպի Բաքու այդ ուղևորության ժամանակ նրան ուղեկցել էր ՔԴՄ պատգամավոր Էգոն Յութները: Երկու շաբաթ անց Լինտներն Ադրբեջանից ստացել է 61.000 եվրո, իսկ նրա կազմակերպությունը 2012-2014 թթ. ստացել է ընդհանուր առմամբ 819.000 եվրո {(255), (256), (257)}:

Ադրբեջանի՝ 2015 թ. պառլամենտական ընտրություններում Կ. Շտրենցը Եվրախորհրդի պաշտոնական դիտորդն էր և ընտրությունները, ի տարբերություն ԵԱՀԿ-ի, բնորոշեց որպես «կանոնավոր և արդար»: Ադրբեջանում քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջի վերաբերյալ ԵԽ խորհրդարանական վեհաժողովում 2015 թ. կատարված քվեարկության ժամանակ նա միակ գերմանացի պատգամավորն էր, որը դեմ է քվեարկել {(254), (258), (259)}:

2017 թ. «Süddeutsche Zeitung»-ը և «Report Mainz»-ը տեղեկացրին Կ. Շտրենցի՝ ալիևյան վարչակարգին ցուցաբերած «զանգվածային աջակցության» և Ադրբեջանի՝ նրան կատարած ֆինանսական նվիրատվությունների մասին, ընդ որում Է. Լինտների կողմից ղեկավարվող «Line M-Trade» ֆիրման ծառայել է որպես հօգուտ Ադրբեջանի լոբբիստական աշխատանքների կատարման ֆինանսավորող {(260), (261)}:

Մայնի Ֆրանկֆուրտում դատախազությունը հետաքննություն սկսեց Լինտների և Շտրենցի դեմ՝ կոռուպցիայի, ընտրված պաշտոնյաների կաշառակերության և փողերի լվացման կասկածանքով: Լինտներին պատմագավորի կարգավիճակից զրկելուց հետո խուզարկվեցին նրա պատգամավորական գրասենյակը, առաձնատունը, ինչպես և 16 այլ գույքեր Գերմանիայում ու Բելգիայում: Այն հանգամանքը, որ Կ. Շտրենցը կարողացավ մնալ գեր-

մանական Բունդեսթագի՝ ՔԴՄ/ՔՍՄ խորհրդարանական խմբակցությունում, քննադատվեց որպես անհամարժեք վերաբերմունք: 2018 թ. Լինտները և Շտրենցը ԵՄ-ի նախաձեռնած հետաքննության արդյունքում ցմահ զրկվեցին ԵԽ-ին և նրա խորհրդարանական վեհաժողովին անդամակցելու իրավունքից: 2021 թ. մարտին Կուբայից Գերմանիա թռչելիս Շտրենցն ինքնաթիռում մահացավ, իսկ Լինտների դեմ հետաքննությունը շարունակվեց: 2024 թ. հունվարին Մյունխենի դատախազությունը Լինտներին և Աքսել Ֆիշերին մեղադրանք առաջադրեց կոռուպցիայի և ընտրված պաշտոնյաների կաշառակերության համար {(262), (263), (264), (265), (266), (267), (268), (269), (270)}:

Բացահայտվել են Ադրբեջանի կողմից կաշառված ազդեցիկ պաշտոնյաների և պատգամավորների բազում այլ անուններ ևս: Այնուհանդերձ, կարելի է կռահել, որ այդ ամենը «այսբերգի» միայն երևացող հատվածն է:

Ներկայումս, ի թիվս այլ հարցերի, օրակարգային են՝

- Արցախցիների՝ Արցախ վերադառնալու խնդիրը,
- Բաքվում ապօրինի պահվող՝ արցախահայության քաղաքական առաջնորդների և մյուս հայ բանտարկյալների ազատ արձակումը,
- Արցախում Ադրբեջանի իրականացրած հանցագործությունների հանդեպ միջազգային համարժեք արձագանքի ապահովումը,
- Միջազգային ճնշման գործադրումը՝ հիշատակված առաջին երկու կետերի իրականացման և Արցախում տեղի ունեցող մշակութային ցեղասպանությունը կասեցնելու համար:

Միջազգային մասնագիտական շրջաններում առկա է այն տեսակետը, որ, քանի դեռ արցախահայերը չեն կարող վերադառնալ Արցախ, անհրաժեշտ է հոգ տանել, որ նրանք՝ որպես միասնական համայնք, չկազմալուծվեն: Ինչ խոսք, դա լիովին հիմնա-

վորված է: «Քանի որ Ղարաբաղի հայերը դարերի ընթացքում աճած և զգալի մեծության համայնք են՝ լեզվի, մտածելակերպի, ավանդույթների և կենցաղային սովորույթների բազմաթիվ առանձնահատկություններով,– նշում է պրոֆ. Լուխտերհանդտը,– նրանց էթնիկ և սոցիալ-մշակութային առանձնահատկությունները պահպանելու և Արցախի արժեքավոր պատմական ժառանգությունը հնարավորինս անեղծ պահելու և փրկելու համար ազգային-քաղաքական կարևոր խնդիր է լինելու միջնաժամկետ հեռանկարում փախստականների՝ որոշակի շրջաններում և հատկապես հարմար վայրերում հնարավորինս հոծ բնակեցումը» {(26) *65*}:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական հարցի միջազգայնացումը

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը, Հայոց ազգային ժողովը, հայ հասարակական-քաղաքական շրջանները գործուն աշխատանք էին տանում, որպեսզի Արևմտյան Հայաստանը Լիբանանի օրինակով ինքնավարություն ստանա կամ միացվի Ռուսաստանին: Այդ նպատակով դիմումներ էին ուղարկվում ռուսական արքունիքին, տեղի էին ունենում հանդիպումներ խաղաղության բանակցություններում ռուսական պատվիրակության ղեկավար Ն. Իգնատևի և ռուս հեղինակավոր այլ գործիչների հետ:

Բանակցությունների ժամանակ, որոնք սկսվեցին Կ. Պոլսին մերձակա Սան Ստեֆանո վայրում՝ Առաքել Տատյան անունով մի հայի տանը, ռուսական պատվիրակությունը պահանջում էր բալկանյան ժողովուրդների նման Արևմտյան Հայաստանին նույնպես ինքնավարություն տալ: Թուրքական կողմը համառորեն մերժում էր դա: 1878 թ. փետրվարի 19-ին ստորագրվեց ռուս-թուրքական նախնական հաշտության պայմանագիրը: Այն նախնական անվանվեց, քանի որ ռուսական կառավարությունը ենթադրում էր, որ Եվրոպային վերաբերող կետերը պետք է վավերացվեին «համաեվրոպական կոնֆերանսում»:

Սան Ստեֆանոյի պայմանագրով Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան անկախ էին ճանաչվում, Բոսնիան և Հերցեգովինան ստանում էին ինքնավարություն Օսմանյան պետության կազմում, Բուլղարիան հռչակվում էր ինքնավար իշխանություն: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Ռուսաստանին էին անցնում Կարսի շրջանը, Ալաշկերտը և Բայազետը, իսկ Արևմտյան Հայաստա-

նում ռուսների գրաված մյուս տարածքները, ներառյալ Բասենն ու Էրզրումը, վերադարձվում էին թուրքերին:

Ռուսական կողմի ճնշմամբ պայմանագրում մտցվեց 16-րդ հոդվածը, որում նշված էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից» {(5) *47*}:

Այս հոդվածով թուրքական կառավարությունը ստիպված եղավ ընդունել Օսմանյան պետության կազմում «Հայաստանի» մի մասի գոյությունը: Պայմանագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ Ասիական Թուրքիայից ռուսական զորքերի դուրսբերումը կատարվելու էր վերջնական հաշտություն կնքելու օրից վեց ամսվա ընթացքում: Այդպիսով ռուսական բանակը փաստացիորեն դառնում էր բարենորոգումների իրականացման երաշխավորը:

Եվրոպական մեծ տերությունները, հատկապես Անգլիան և Ավստրո-Հունգարիան անհանգստացած էին Ռուսաստանի ազդեցության գոտիների ընդլայնումից: Նրանք պահանջեցին վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Ռուսաստանը համաձայնեց դա անել միայն Եվրոպային վերաբերող հոդվածների դեպքում, բայց Անգլիան պահանջում էր վերանայել բոլոր հոդվածները՝ սպառնալով այլապես պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ:

Մինչ պայմանագրի քննարկմանը նվիրված վեհաժողովի բացումը Անգլիան գաղտնի բանակցությունների մեջ մտավ Ռուսաստանի հետ: Մայիսի 18/30-ին Լոնդոնում կնքվեց անգլո-ռուսական գաղտնի համաձայնագիր, որով Ռուսաստանն, ի թիվս, այլ զի-

ջումների, հանձն առավ թուրքերին վերադարձնել Ալաշկերտի հովիտն ու Բայազետը: Ռուսաստանը նաև համաձայնում էր, որ հայկական բարենորոգումների վերաբերյալ խոստումները տրվեն «ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլև Անգլիայի անունից»: Համաձայնագրում նաև նշվում էր, որ ռուսական սահմանների ընդլայնման հետևանքով Ասիայում «թուրք բնակչության անդորրությանը սպառնացող» լուրջ վտանգի դեպքում Օսմանյան պետությանն «այդ վտանգից պահպանելու պարտականությունը» «այսուհետ կընկնի հատկապես Անգլիայի վրա»: Բացի այդ՝ Ռուսաստանը հանձն էր առնում ապագայում իր սահմանը չընդլայնել «Ասիական Թուրքիայի կողմից» {(5) *54-55*}:

Անգլիան այնուհետև գաղտնի գործարքի մեջ մտավ օսմանյան կառավարության հետ՝ մայիսի 24-ին նրա հետ կնքելով երկկողմ «պաշտպանողական դաշնակցության» համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի՝ «եթե Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկնումեկը, այդուհետ երբևէ փորձեր «Ասիայում» խաղաղության վերջնական պայմանագրով Օսմանյան պետությանը հատկացվող «երկրներից» գրավումներ կատարել, ապա Անգլիան պարտավորվում էր սուլթանի հետ միասին զենքի ուժով պաշտպանել դրանք: Փոխարենը սուլթանն Անգլիային խոստանում էր խնդրո առարկա երկրներում իրականացնել բարենորոգումներ քրիստոնյաների և Բ. Դռան մյուս հպատակների «բարվոք կառավարումը և պաշտպանությունը» ապահովելու համար: Բարենորոգումները պետք է հետագայում մանրամասն համաձայնեցվեին երկու պետությունների միջև: Բացի այդ՝ սուլթանը Անգլիային էր զիջում Կիպրոսը» {(5) *57-58*}:

Այդպիսով, Անգլիան Կիպրոսը ձեռք բերելու հետ մեկտեղ հիմքեր էր ստեղծում Ռուսաստանի հետագա «ասիական» նվաճումները կանխելու համար՝ նրանից խլելով նաև բարենորոգումների վերահսկման գործառույթը: Անգլիան շտապեց մինչև վեհա-

ժողովի բացումը վերոնշյալից բխող համաձայնությունների գալ նաև Ավստրո-Հունգարիայի հետ:

Հայկական կողմը խորապես հիասթափված էր Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայումից: Այնուհանդերձ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ կազմվեց մի պատվիրակություն և ուղարկվեց Եվրոպա՝ հայ ժողովրդի շահերը ներկայացնելու համար: Պատվիրակությունը, որի կազմում ընդգրկվեցին Մ. Չերազը, Խ. Նար-Պեյը և Ստ. Փափազյանը, նախ ուղևորվեց Իտալիա, Ֆրանսիա և Անգլիա: Այդ երկրների արտգործնախարարներ Կորտին, Վադդինգտոնը, Սոլսբերին և մյուս գործիչները, որոնց հետ նրանք հանդիպումներ ունեցան, որոշակի խոստումներ նրանց չտվեցին: Այնուհետև պատվիրակները մեկնեցին Բեռլին, որտեղ, սակայն, նրանց չթույլատրվեց նույնիսկ ներկա գտնվել վեհաժողովի նիստերին:

Վեհաժողովն Օ. ֆոն Բիսմարկի նախագահությամբ իր աշխատանքը սկսեց 1878 թ. հունիսի 1/13-ին և տևեց մեկ ամիս: Տերությունները Ռուսաստանին հարկադրեցին, ի թիվս այլ զիջումների, Ալաշկերտն ու Բայազետը վերադարձնել Օսմանյան պետությանը և իր զորքերն անհապաղ դուրս բերել այնտեղից: Ինչ վերաբերում է բարենորոգումներին, ապա 16-րդ հոդվածի փոխարեն պայմանագրում մտցվեց 61-րդ հոդվածը՝ հետևյալ բովանդակությամբ. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը» {(246)}:

Ի տարբերություն Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում «Հայաստան» անունը բացակայում էր, և խոսքը վերաբերում էր միայն «հայաբ-

նակ մարզերին»: Բացի այդ՝ Ռուսաստանին հարկադրելով իր զորքը դուրս բերել Օսմանյան պետությունից, տերություններն էին ստանձնում բարենորոգումները վերահսկելու գործառույթը: Նրանցից ոչ ոք, սակայն, իրապես շահագրգռված չէր բարենորոգումներով: Նրանց համար կարևոր էր այն, որ 61-րդ հոդվածով հնարավորություն էին ստանում՝ միջամտելու սուլթանի ներքին գործերին: Պատահական չէ, որ այդ հոդվածով չէին որոշակիացվում բարենորոգումների բովանդակությունը, աշխարհագրական ընդգրկումը և իրականացման ժամանակահատվածը:

Հետագայում տերությունները սուլթանին երբեմն հիշեցնում էին բարենորոգումների անհրաժեշտության մասին՝ առանց դրանց իրագործման համար որևէ լուրջ քայլ անելու: 1880 թ. հունիսի 11-ին 6 տերությունների դեսպանների կողմից Բ. Դռանը ուղարկվեց մի համատեղ նոտա, որով նրանք սուլթանից պահանջում էին պարզաբանում տալ բարենորոգումների ընթացքի մասին: Վերջինս հուլիսի 5-ի պատասխան նոտայում, տեղեկացնելով իբրև թե ձեռնարկված քայլերի մասին, նաև նշում էր, որ բազմաթիվ հատուկ պաշտոնյաների հանձնարարել է ժանդարմերիայի և ոստիկանության բարեփոխման առաջարկներ ներկայացնել:

1880 թ. սեպտեմբերի 7-ին Հացֆելդտի, Նովիկովի, Գոշենի, Կորտիի, Տիսոտի և Կալիցի ստորագրությամբ Բ. Դռանը ուղարկվեց նոր կոլեկտիվ նոտա: Դրանում հաղորդվում էր, որ սուլթանի պատասխանը «ամենաչնչին իսկ չափով» չէր բավարարում հունիսի 11-ի նոտայում ձևակերպված բողոքներին, և որ կատարված պարզաբանումները «ո՛չ ոգով, ո՛չ էլ տառով» չէին համապատասխանում 61-րդ հոդվածին: Ընդգծվում էր, որ արդարադատության բնագավառում որևէ բարելավում չի կատարվել: «Ինչ վերաբերում է քաղաքացիական և քրեական դատարանների անկախությանը,– նշված էր նոտայում,– ներկայիս դրությունը նույն կերպ չգոհացնող է, եթե ոչ ավելի վատ, քան նախկինում: {…} Նույնիսկ

այն արտահայտությունները, որոնցով Բարձր դուռն անդրադառնում է հայաբնակ նահանգներում կատարված կամ հաղորդված հանցագործություններին, ապացուցում են, որ նա խուսափում է ընդունել անարխիայի իրավիճակը, որն իշխում է այդ նահանգներում, մի իրադրության լրջությունը, որի շարունակականությունն ամենայն հավանականությամբ կհանգեցնի երկրի այդ ընդարձակ հատվածներում քրիստոնյա բնակչության բնաջնջմանը: Հուլիսի 5-ի նոտան ոչ մի լուրջ առաջարկ չի ձևակերպում, որն ուղղված կլիներ չերքեզների և քրդերի անկարգություններին վերջ դնելուն: […] Ստորագրող կողմերը մեկ անգամ ևս Դռան ուշադրությունը հրավիրում են այն փաստի վրա, որ բարենորոգումները, որոնք պետք է իրականացնել հայաբնակ նահանգներում, համապատասխան տեղական պահանջներին և տերությունների հսկողության ներքո, պետք է իրագործվեն՝ ըստ այն պարտավորությունների բառի և տառի, որոնք նա ստանձնել է միջազգային գործընթացով» {(125) *46-47*}:

Դա Բեռլինի վեհաժողովից հետո բարենորոգումների առնչությամբ տերությունների ձեռնարկած միակ՝ քիչ թե շատ լուրջ քայլն էր: Երբ Անգլիայի արտգործնախարար Է. Գրանվիլը 1881 թ. հունվարի 12-ին մյուս հինգ տերություններին մի շրջաբերական նոտա ուղարկեց՝ կոչ անելով Բ. Դռան մոտ հանդես գալ նոր առարկություններով, ստացավ խուսափողական պատասխան: Անգլիայի համար դա նպաստավոր առիթ էր՝ իրեն ևս բարենորոգումների պատասխանատվությունից զերծ համարելու համար: Դեռ նախքան շրջաբերականի ուղարկումը Կ. Պոլսում անգլիական դեսպան Գոշենը Գրանվիլին հետևյալն էր գրել. «Եթե նրանք (տերությունները) մերժեն կամ միայն թույլ աջակցություն ցուցաբերեն, նորին մեծության կառավարությունն այլևս ոչ մի պատասխանատվություն չի կրի» {(125) *47*}:

Նման նոտաները, իհարկե, չէին կարող որևէ դրական հետևանք ունենալ հայերի համար, իսկ դրանց բացասական հե-

տևանքներն ակնբախ էին: Տերություններն այդպիսով սուլթանին հիշեցնում էին միջամտելու իրենց իրավունքը և այն, որ Հայկական հարցը լուծված չէ: Ավելին, նախազգուշացվելով «ընդարձակ հատվածներում քրիստոնյա բնակչության բնաջնջման» վտանգի մասին և տեսնելով, որ տերությունները մտադիր չեն այդ ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկել, սուլթանը պետք է այն հետևությունը կատարեր, որ տերությունները կհանդուրժեն նաև այդօրինակ բնաջնջումը:

Արևմտահայության դրության հարաճուն վատթարացումը

Հայկական հարցի միջազգայնացման մեջ տեսնելով հեռահար վտանգներ՝ Աբդուլ Համիդը ձեռնամուխ եղավ երկրում հայերի թվաքանակն արմատապես կրճատելու միջոցով այդ հարցն օրակարգից դուրս բերելու քաղաքականությանը: Նոր թափով շարունակվեցին հայերի հալածանքները: 1891-1892 թթ. քրդական ցեղերից կազմակերպվեց «համիդեական» հեծելազորը, որի գլխավոր խնդիրը հայ ժողովրդին հյուծելն ու ոչնչացնելն էր: Հայերի շարունակական հետապնդումները, հարկերի կամայական բարձրացումը նպաստեցին արտագաղթի զգալի աճին: Միաժամանակ Ռուսաստանից մեծ թվով մահմեդականներ էին տեղափոխվում Օսմանյան պետություն, որոնք բնակեցվում էին հիմնականում երկրի կենտրոնական և արևելյան հայաշատ բնակավայրերում:

Երկրում հայերի դեմ հաստատվել էր տեռորի ռեժիմ: 1892 թ. արգելվեցին այն դպրոցները, որոնք չէին հաստատվել կառավարության կողմից: Մոլեգնում էր գրաքննությունը: Արգելվեց անվանափոխված բնակավայրերի հայերեն անունների օգտագործումը: Արգելված էին այն գրքերը, որոնցում կար «Հայաստան» անվանումը, կամ որոնց մեջ կարելի էր ազատախոհական գաղափարներ գտնել: Դրանց թվին էին պատկանում Բայրոնի, Շեքսպիրի և եվրոպական այլ դասականների ստեղծագործությունները: Ար-

գելված գրականություն հայտնաբերելու դեպքում կատարվում էին ձերբակալություններ: Դրան հակառակ, խրախուսվում էին մահմեդական կրոնը պրոպագանդող և հակաքրիստոնեական ուղղվածություն ունեցող գրականության հրատարակումն ու տարածումը:

Միաժամանակ թուրքական կառավարությունը կեղծ սադրիչ լուրերով բորբոքում էր մահմեդական մոլեռանդությունը հայերի դեմ: 1890 թ. Կարինում հայերի՝ գաղտնի զինանոց պահելու մասին մի կեղծ և անանուն ահազանգի հիման վրա տեղի ունեցան խուզարկություններ, ընդհարումներ ու ձերբակալություններ: Նման սադրանքներ տեղի էին ունենում նաև այլ վայրերում: Սուլթանի հայահալած քաղաքականությունը հայ ազատագրական խմբակներին և նորաստեղծ կուսակցություններին դրդում էր տարերային դիմադրական պայքարի: 1890 թ. հուլիսի 15-ին հնչակյանների կազմակերպած՝ Գում Գափուի ցույցը հանգեցրեց ընդհարման և երկուստեք զոհերի: Ջինված ելույթներ տեղի ունեցան նաև Վանում, Տարոնում և պետության այլ հայաշատ վայրերում:

Սուլթանի հայահալած քաղաքականությունն ավելի էր սաստկանում՝ առանց որևէ ազդու հակադարձում ստանալու 1878 թ. Բեռլինի պայմանագրով հայկական բարենորոգումների «երաշխավոր» դարձած եվրոպական մեծ տերություններից: Ինչպես գրում էր Է. Դիլոնը, «Ռուսաստանի դեմ 1878 թվականին մեր կատարած քայլերի փաստացի հաջողությունը, զուտ մարդկային տեսանկյունից եղել է այն, որ մենք հայկական նահանգներում հավերժացրեցինք սարսափների մի համակարգ, որի համեմատությամբ ամերիկյան հարավային նահանգների սևամորթ ստրուկների տառապանքները թեթև անհարմարություններ էին: Մենք հանդիսավորությամբ փակեցինք քավարանը և թույլ տվեցինք, որ նրա տեղում դժոխք ստեղծվի: Մենք պարտավորվել էինք հոգ տանել, որ չարաշահումները {…} անմիջապես ու վերջնականապես վերացվեն, իսկ հետո մենք ոչ միայն թերացանք կատարել {…} այս ինքնակամ ստանձնած պարտավորությունը, այլև թույլ

տվեցինք, որ մի անարգ կառավարության տեղական անառակ համակարգը հետզհետե վերածվի բնաջնջման դիվային քաղաքականության՝ առանց համարձակվելու զգացնել տալ մեր ուժը կամ ընդունել մեր անզորությունը» {(24) *107-108,* (46) *155*}:

Սասունի 1894 թ. կոտորածը: Բարեփոխումների մայիսյան ծրագիրը

Բիթլիսի նահանգի Սասուն լեռնային գավառը, որն ուներ մոտ 35 000 հայ բնակչություն, 1890-ական թթ. առաջին կեսին դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման կարևոր կենտրոն: Այնտեղ գտնվող Մ. Տամատյանը և այլ հնչակյան գործիչներ բնակչությանը կոչ էին անում հարկեր չվճարել և քարոզում էին ազատագրական գաղափարներ: Սասունի դեմ հրահրելով շրջակա քրդական ցեղերին՝ իշխանությունները 1891-93 թթ. ձեռնարկեցին մի շարք պատժիչ գործողություններ: Դրանք, սակայն, որևէ հաջողություն չունեցան, քանի որ սասունցիները քաջաբար պաշտպանվում էին: Թեև թուրքերը 1893 թ. մայիսին կարողացան ձերբակալել Տամատյանին, բայց դա չթուլացրեց սասունցիների պայքարի ոգին, որը ղեկավարումը ստանձնեցին Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Գևորգ Չաուշը (Գևորգ Ադամյան) և ուրիշներ:

1893 թ. Բիթլիսի նահանգապետ Թահսին փաշան սասունցիներին ներկայացրեց մի շարք պահանջներ, այդ թվում՝ հանձնել շարժման ղեկավարներին ու զենքերը և վճարել վերջին տարիներին չվճարված հարկերը: Մերժում ստանալուց հետո Սասունի հետ հաշվեհարդար տեսնելու համար սուլթանի հրամանով այնտեղ ուղարկվեց 12 000-անոց կանոնավոր զորաբանակ՝ անատոլիական 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշայի գլխավորությամբ: Թուրքական զորքը, համալրվելով նաև Դիարբեքիրից. Հալեպից, Կարինից, Բաղդադից ու այլ վայրերից ուղարկված ուժերով, համիդեական ջոկատների հետ օղակեց Սասունը:

Հուլիսի 28-ից սկսվեցին թեժ մարտեր: Մոտ մեկ շաբաթ թուրքերի առաջին գրոհները հաջողությամբ ետ էին մղվում, բայց ուժերն անհավասար էին: Թշնամին կիրառում էր նաև թնդանոթներ, և հայ ռազմիկները, կատաղի մարտեր մղելով, ստիպված էին նահանջել՝ նախ Շենիկից ու Սեմալից, որոնք առաջին պաշտպանական գծում էին, այնուհետև Գելիգուզանից, Շատախից ու այլ հենակետերից: Թուրքական հրամանատարությունը դիմեց նաև մի նենգ քայլի, խոստացավ ներում շնորհել նրանց, ովքեր անձնատուր կլինեն: Օգոստոսի 15-ին մոտ 200 սասունցիներ, հավատալով այդ խոստմանը, գնացին դեպի թուրքական դիրքերը և նրանց բոլորին տեղ հասնելուն պես սպանեցին:

Անհավասար մարտերը շարունակվեցին մինչև օգոստոսի 24-ը: Հայ մարտիկների մեծ մասը զոհվեց, շատերն էլ գերվեցին: Ճնշելով դիմադրությունը և գրավելով Սասունը՝ թուրքական զորքն ու քրդական հրոսակները, առանց սեռի և տարիքի խտրության, կոտորեցին 10 հազարից ավելի հայերի և ավերեցին ու կողոպտեցին շուրջ 40 գյուղ: Մեծ թվով կանայք ու աղջիկներ առևանգվեցին: Կոտորածը դադարեց միայն սեպտեմբերի սկզբին: Զեքի փաշան իր «սխրագործության» համար սուլթանից շքանշան ստացավ: Կառավարական պարգևներ հանձնվեցին նաև չորս քուրդ ցեղապետերի: «Սասունի կոտորածը Բարձր դռան ներկայացուցիչների լավ կշռադատված գործողություն էր՝ նրանց կողմից խնամքով նախապատրաստված և անխնա կերպով իրականացված»,– նշում էր Է. Դիլոնը {(125) *97*}:

Սասունի դիմադրության կազմակերպիչների ակնկալիքը, որ դա կարող էր համազգային ապստամբության մեկնարկ ծառայել թուրքական լուծը թոթափելու համար, ավելի շուտ քաղաքական ռոմանտիկայի դրսևորում էր և չարդարացավ: Կազմակերպիչներն անկասկած իրենց գործողություններով ցանկանում էին նաև տերությունների ուշադրությունը հրավիրել չլուծված Հայկական հարցի վրա և նրանց դրդել՝ այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու: Այս առումով եղան որոշակի զարգացումներ:

Սասունի կոտորածը կրկին աշխուժացրեց արևմտյան դիվանագիտությանը՝ հիշեցնելով հայ ժողովրդի և մոռացության մատնված բարենորոգումների մասին: Այս շրջանում Հայկական հարցի առնչությամբ առավել նախաձեռնողականություն ցուցաբերեց Մեծ Բրիտանիան, ինչը պայմանավորված էր կառավարող լիբերալների կուսակցության երկու առաջնորդների՝ Վ. Գլադստոնի և Ա. Ռոզեբերիի ազդեցությամբ:

Թեև սուլթանական կառավարությունը փորձում էր կատարվածը նենգափոխել և, հայերի մասին հերյուրանքներ տարածելով՝ կանխել արտաքին որևէ միջամտություն, այնուհանդերձ տերությունների ճնշմամբ հարկադրված եղավ կազմել մի հատուկ հանձնաժողով՝ հետաքննություն վարելու համար: Թուրքական այդ հանձնաժողովին կցվեցին նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները:

Հանձնաժողովը թուրքական կողմի պնդմամբ իր աշխատանքները սկսեց Մուշում, որ գտնվում էր Սասունից մի քանի ժամ հեռավորության վրա: 1895 թ. հունվարի 24-ից մինչև հուլիսի 21-ը այնտեղ տեղի ունեցած 108 նիստերի ընթացքում հարցաքննվում էին միայն թուրք վկաներ, որոնց նախապես հրահանգված էր ցուցմունք տալ հայերի «հանցագործությունների» մասին: Ի վերջո, հրաժարվելով շարունակել այդ ներկայացումը, եվրոպական պատվիրակները նիստերն ընդհատեցին ու գնացին Սասուն, որտեղ անձամբ համոզվեցին կատարված զարհուրելի նախճիրի մասին {(24) *15-16*}:

Անգլիան այնուհետև պատրաստեց բարենորոգումների մի նախագիծ, որին որոշ քննարկումներից ու խմբագրումներից հետո հավանություն տվեցին նաև Ֆրանսիան և Ռուսաստանը: Ուշագրավ է, որ նախագծի սկզբնական տեքստի համաձայն՝ վեց նահանգները պետք է միավորվեին՝ վերածվելով մի նահանգի, որի կառավարիչ պետք է նշանակվեր մի քրիստոնյա նահանգապետ, իսկ նրա գործունեությունը պետք է վերահսկեր մահմեդականնե-

րից և քրիստոնյաներից բաղկացած մի լիազոր հանձնաժողով: Չնայած այդ կարևոր դրույթը քննարկումների արդյունքում հանվեց, այնուհանդերձ երեք տերությունների միջև համաձայնեցված ծրագիրը առաջին անգամ որոշակիություն էր հաղորդում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում խիստ անորոշ ձևակերպված բարենորոգումների հարցին:

13 գլխից և 40 հոդվածներից բաղկացած ծրագիրը, որով նախատեսվում էր վեց նահանգներում իրականացնել վարչակառավարման, հարկային, դատական և այլ բարեփոխումներ, 1895 թ. մայիսի 11-ին ներկայացվեց Բ. Դռանը:

Ըստ այդ ծրագրի՝ վալիները (նահանգապետերը) պետք է նշանակվեին սուլթանի կողմից հինգ տարի ժամկետով: Եթե վալին մուսուլման էր, ապա պետք է ունենար քրիստոնյա օգնական, իսկ եթե քրիստոնյա էր, ապա նրա օգնականը պետք է մուսուլման լիներ: Նշվում էր նաև, որ մյութեսարիֆների (գավառապետերի) և կայմակամների (կազաների՝ գավառակների պետեր) մի մասը պետք է լիներ քրիստոնյա: Այն սանջակներում ու կազաներում, որտեղ քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում, պետք է քրիստոնյա մյութեսարիֆներ և կայմակամներ պաշտոնավարեին: Բոլոր դեպքերում քրիստոնյա մյութեսարիֆների և կայմակամների թիվը չպետք է ընդհանուր թվի մեկ երրորդից պակաս լիներ: Նահանգային ժանդարմերիաները պետք է կազմավորվեին՝ առանց ազգային և կրոնական պատկանելության հարցում խտրականություն ցուցաբերելու: Բանտերում պետք է ապահովվեին առողջապահական նորմերը: Համիդեական զորամասերը կարող էին օգտագործվել միայն կանոնավոր զորքի հետ միասին: Կային կարևոր դրույթներ նաև արդարադատության, ոստիկանության, տնտեսության, հարկային համակարգի և այլ ոլորտները կարգավորելու վերաբերյալ {(33) *524-525*}:

Սուլթանը երկար ժամանակ ձգձգում և խուսափում էր բարենորոգումների ծրագիրը ստորագրել: Ի վերջո, նա այն ստորագ-

րեց 1895 թ. հոկտեմբերի 18-ին՝ հայերի նոր զանգվածային կոտորածների մեկնարկից հետո:

Հայ ժողովրդի պարբերական կոտորածները 1895-1896 թթ.

1895 թ. սեպտեմբերի 30-ին հնչակյանները Կոստանդուպոլսում կազմակերպեցին բողոքի խաղաղ ցույց: Նրանք այդ մասին նախապես տեղյակ էին պահել Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանություններին՝ հույս հայտնելով, որ կառավարությունը ոստիկանությունն ու բանակը չէր օգտագործի խաղաղ ցուցարարների դեմ: Ցուցարարները, որոնց թիվը հասնում էր մոտ չորս հազարի, հայոց մայր եկեղեցու բակից քայլեցին դեպի սուլթանի նստավայրը՝ Բապը Ալի: Նրանք ուզում էին սուլթանին հանձնել մի պահանջագիր, որում ներկայացված էր հայ ժողովրդի ծանր դրությունը, և ընդգծվում էր բարեփոխումներն իրականացնելու հրատապությունը:

Ոստիկանությունը կանգնեցրեց երթը և պահանջեց ցրվել: Երբ հայերը մերժեցին պահանջը և խնդրեցին թույլատրել, որ պահանջագիրը հանձնվի պալատին, տրվեց ցուցի ղեկավարներին ձերբակալելու հրաման: Դրան հետևեց փոխհրաձգություն, որը վերածվեց հայերի կոտորածի: Սպանվեց ավելի քան 2 հազար հայ: Ձերբակալվեց շուրջ 500 մարդ, որոնցից շատերը խոշտանգումներից հետո նույնպես սպանվեցին: Կոտորածի առնչությամբ մեծ տերությունների դեսպանների ներկայացրած համատեղ հայտարարություն-բողոքը, նաև բարեփոխումների վերաբերյալ օսմանյան արտգործնախարարին նրանց ներկայացրած լրացուցիչ առաջարկները որևէ ընթացք չստացան: Ավելին, ողջ երկրով մեկ իրականացվեցին հայ ժողովրդի աննախադեպ զանգվածային կոտորածներ, որոնք սուլթանի իրական պատասխանն էին հայկական բարեփոխումների՝ մեծ տերությունների պահանջին: Վերջիններս շուրջ երկու տարի շարունակվող կոտորածների ընթացքում մնացին դիտորդի դերում:

1895 թ. հոկտեմբերի 3-ին սրի քաշվեց և կողոպուտի ենթարկվեց Ագիսարի հայ բնակչությունը: Զանգվածային սպանդը և թալանը ողջ թափով շարունակվեցին՝ հոկտեմբերի 4-ին՝ Տրապիզոնում, 6-ին՝ Էրզրումում, 14-ին՝ Քղիում, 16-ին՝ Հաճընում, 20-ին՝ Չորում և Մարաշում, 21-ին՝ Երզնկայում, 25-26-ին՝ Գյումուշխանեում, Բիթլիսում և Ալբիստանում, 27-29-ին՝ Բաբերդում, Շապին-Գարահիսարում, Բայասում և Ուրֆայում, 30-ին՝ Էրզրումում, 31-ին՝ Մերսինում և Ադանայում, նոյեմբերի 1-9-ին՝ Մալաթիայում, 2-5-ին՝ Սեերեկում, 3-ին՝ Մարաշում, 1-20-ին՝ Վանի նահանգում, 7-ին՝ Ադիամանում և Ալեքսանդրետում, 8-ին՝ Ակնում, 10-ին՝ Խարբերդում, Տալվորիկում և Բայասում, 12-ին՝ Սեբաստիայում, Կյուրինում և Հավզայում, 13-ին՝ Չորք-Մարզվանում, 14-17-ին՝ Այնթապում, 15-ին՝ Թոքատում, Մուշում և Մարզվանում, 16-ին՝ Ամասիայում, 17-ին՝ Ենիճեկալեում, 18-ին՝ Մարաշում, 19-ին՝ Սերթում, 20-ին՝ Վանում, 27-ին՝ Բասենում և Օվայում, 28-ին՝ Զելայում, 30-ին՝ Կեսարիայում, դեկտեմբերի 3-ին՝ Սեբաստիայում, 7-ին՝ Սասունում, 13-ին՝ Տարսոնում, 14-15-ին՝ Աղջագյունեյում, 24-ին՝ Ակբաշում, 28-29-ին՝ Ուրֆայում, 1896 թ. հունվարի 1-ին՝ Բիրեջիքում {(125) *39*}:

Վերոնշյալը ներկայացնում է միայն կոտորածների առաջին փուլի ժամանակագրությունը, որոնք շարունակվեցին նաև 1896 թ. Նիքսարում, Վանում, Կ. Պոլսում և այլ վայրերում: Որպես կանոն, կոտորածի և բռնի իսլամացման մեքենաները միասին էին գործում: Վեց տերությունների դեսպանները 1896 թ. փետրվարի 4-ին Բ. Դռանը ներկայացրին մի ծավալուն նոտա: Այն հայտնաբերեց և դեռ 1896 թ. հրատարակեց դր. Յոհ. Լեփսիուսը: Ըստ նոտայում զետեղված վիճակագրության՝ մինչ այդ արդեն կոտորածներին զոհ էին դարձել 88 243 հայեր, ավերվել ու թալանվել էին 2493 գյուղեր և 568 եկեղեցիներ, բռնի մահմեդականացվել էին 646 հայկական գյուղեր, իսկ 328 եկեղեցիներ վերածվել էին մզկիթների: Արձանագրված էր նաև 12 բարձրաստիճան հայ հոգևորականնե-

րի և 179 քահանաների ու քարոզիչների սպանությունը, իսկ անօթևանների և հրատապ օգնության կարիք ունեցողների թիվը, համաձայն վիճակագրության, հասնում էր 546 000-ի {(24) *4*}:

Թեև դեսպանների վիճակագրությունը չէր արտացոլում նշված ժամանակահատվածում կատարված եղեռնագործության ամբողջական ծավալն ու հետևանքները, այնուհանդերձ այդ փաստաթուղթը լիովին փաստում էր պարբերական կոտորածների իրողությունը՝ ներկայացնելով նաև դրանց հետ կապված բազմաթիվ մանրամասներ:

Լեփսիուսը դեռ 1896 թ. հիմնավորապես փաստել է, որ բոլոր կոտորածներն իրականացվում էին միևնույն մեթոդով: «Հայ ժողովրդի բնաջնջման հիմքում,– գրում էր նա,– ընկած է *մի միասնական, արդեն տարիներ ի վեր մշակված պլան*, որն անցյալ տարվա վերջին ամիսներին, տերությունների գործողություններով թելադրված, մեծ շտապողականությամբ իրականացվեց: {…} Կոտորածների ամբողջության հիմքում ընկած էր *վայրին, ժամանակին, զոհերի ազգային պատկանելությանը և նույնիսկ սպանդի ու կողոպուտի մեթոդին* վերաբերող մի միասնական պլան» {(125) *38*}:

Կոտորածների սկիզբը և ավարտն ազդարարվում էին շեփորահարումով: Տարբեր վայրերում դրանք տևում էին մի քանի ժամից մինչև մի քանի օր, ինչը պայմանավորված էր տվյալ վայրի հայ բնակչություն թվով, կողոպուտի ծավալով ու այլ գործոններով: Շատ դեպքերում կոտորածի մեկնարկը տրվում էր շուկայի օրերին, որպեսզի հեռու գյուղերից եկածները նույնպես կարողանային մասնակցել դրան:Վայրի տեսանկյունից կոտորածները սկզբնապես սահմանափակված էին բարենորոգումների ենթակա՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Խարբերդի, Սեբաստիայի և Դիարբեքիրի նահանգների տարածքով, սակայն դրանք արագորեն ծավալվեցին Տրապիզոնի, Հալեպի, Ադանայի և Անգորայի նահանգներում: Մահմեդական մոլեռանդությունը բորբոքելու համար, որպես կանոն, նախապես տարածվում էին սադրիչ լուրեր: Հստակ

սահմանված էր նաև զոհերի ազգային պատկանելությունը: Խիստ կարգադրություններ էին արվել այն մասին, որ թիրախը պետք է միայն հայերը լինեին: Կոտորածների շատ վայրերում առկա էր նաև մեծաքանակ հույն բնակչություն, սակայն նրանց հանդեպ թշնամական գործողություններ չձեռնարկվեցին: Կառավարությունը խստագույն հրամաններ էր ուղարկել կոտորածների ընթացքում հույներին պաշտպանելու վերաբերյալ՝ երկյուղելով, որ այդ դեպքում արտաքին միջամտությունն անխուսափելի կլիներ: Եթե, այնուամենայնիվ, որոշ թվով հույներ սպանվեցին, ապա դա պատահականության արդյունք էր: Չնայած միայն հայերին թիրախավորելու իշխանությունների հրահանգներին՝ սպանվեցին նաև շատ ասորիներ, յակոբիտյան ու քաղդեացի քրիստոնյաներ, որոնց պաշտպանելու հատուկ կարգադրություններ չէին իջեցվել:

Կոտորածներն այս կամ բնակավայր էին տեղափոխվում՝ ըստ դրանց նախապատրաստությունների ավարտի, ինչը տարբեր ժամկետներում էր տեղի ունենում: Մահմեդական մոլեռանդությունը բորբոքելու և ամբոխին սադրելու շարժառիթ էին ծառայում ոչ միայն Կ. Պոլսի հիշատակված ցույցի ուռճացված և կեղծ մեկնաբանությունները կամ բարենորոգումների ծրագրի հրապարակումը, այլև հայերի ապստամբական ու հակապետական գործունեության վերաբերյալ ստահոդ լուրերը: Մահմեդական ամբոխներին ամենուրեք քարոզվում էր, որ հայերին սպանելով՝ նրանց իրենց «պարտքն» էին կատարում {(125) *38*}:

Սպանդի և կողոպուտի մեթոդը նույնպես միատեսակ էր և հրահանգված իշխանություններից կողմից: Դրա համաձայն՝ անհրաժեշտ էր նվազագույն ժամկետում առավելագույն թվով հայերի սպանել, ըստ հնարավորին զավթել նրանց ողջ ունեցվածքը, իսկ անշարժ գույքը՝ ոչնչացնել: Այն դեպքերում, երբ ամբոխը վարանում էր հայկական բնակավայրի վրա հարձակվել՝ վստահ չլինելով, որ հաջողություն կունենար, բերվում էին կանոնավոր զորքեր, որոնք առաջնորդում էին ամբոխին: Այլապես ևս հաճախ էր

տեղի ունենում կանոնավոր զորամասերի ներգրավում կոտորածներին՝ թե՛ դրանց ուղղակիորեն մասնակցելու և թե՛ ռազմական զինանոցներից ամբոխին զինելու եղանակով:

Միաժամանակ հատուկ ուշադրություն էր դարձվում այն բանին, որ ազդեցիկ, կրթված և ունևոր տղամարդկանցից ոչ ոք ողջ չմնար: Դա ոչ միայն մտավորականությանը գլխատելու նպատակով էր արվում, այլև այն հաշվարկով, որ բարեփոխումների իրականացման դեպքում նրանք կարող էին կառավարման կամ արդարադատության համակարգի պոտենցիալ կադրեր լինել: Քանի որ ամբոխը և զորամասերը չէին կարող այդ մարդկանց հեշտությամբ զանազանել, նահանգապետերն իրենք էին կազմում նրանց ցուցակները և բաժանում մարդասպաններին:

Քաղաքային առևտրի գերակշիռ մասը տնօրինող հայ վաճառականների ունեցվածքն արագ ու հեշտ խլելու համար մեծ քաղաքներում կոտորածի մեկնարկը տրվում էր առևտրի ժամերին, երբ խանութներն ու կրպակները բաց էին, և դրանց տերերին կարող էին տեղում սպանել: Իսկ այնտեղ, որտեղ վաճառականները, երկյուղից դրդված, փակել էին խանութները, իշխանությունները կոտորածից առաջ նրանց զանազան խոստումներով ու սպառնալիքներով հարկադրում էին վերաբացել դրանք:

Կոտորածները տեղի էին ունենում աներևակայելի բարբարոսությամբ, իսկ 1896 թ. շարունակվում էին նաև 1895 թ. ի հայտ եկած առանձին բացթողումներ լրացնելու նպատակով: Եթե Ակն քաղաքը 1895 թ., վճարելով 1500 թուրքական ֆունտ փրկագին, խնայվել էր, ապա 1896 թ. սեպտեմբերին այնտեղ տեղի ունեցած կոտորածն այդ բացը լրացրեց: Վանի նահանգում, որտեղ 1895 թ. համեմատաբար քիչ մարդիկ էին սպանվել, նույնպես այդ բացթողումը լրացվեց 1896 թ., երբ կոտորածին զոհ դարձավ ավելի քան 20 000 մարդ: Միայն Վանի նահանգում և Բիթլիսի երկու շրջաններում 245 գյուղեր բռնի իսլամացվեցին, 236 եկեղեցիներ և 53 վանքեր կողոպտվեցին և մեծ մասամբ հիմնովին ավերվեցին, իսկ 116 եկեղեցիներ վերածվեցին մզկիթների: Խարբերդի 60 գյուղեր

հրի ճարակ դարձան, իսկ սպանվածների թիվը հոծ հայ բնակչություն ունեցող այդ շրջանում անհաշվելի մեծ էր: Արաբկիրում սպանվեցին 4000 հայեր, և թալանվեցին ու հրկիզվեցին շուրջ 3700 տներ ու 500 խանութներ: Հրկիզումներն ավարտելուց հետո ոստիկանությունը «հետաքննություն» սկսեց, և բոլոր հայ տղամարդիկ, որոնք ողջ էին մնացել, նետվեցին բանտերը {(24) *22-23*}:

Մալաթիա քաղաքում կոտորածը շարունակվեց այնքան, քանի դեռ բոլոր՝ շուրջ 5000 հայ բնակիչները չէին սպանվել, և մոտ 1000 հայապատկան տները հողին չէին հավասարեցվել: Նահանգում զանգվածային սպանդին զուգահեռ ավերվեցին 176 քաղաքներ ու գյուղեր, կողոպտվեցին և ավերվեցին 7542 տներ ու 512 խանութներ:

Դիարբեքիր քաղաքում գյուղերից եկած քրդերը թուրք ամբոխի, ոստիկանների և զինվորների հետ միասին երեք օրում սպանեցին 2000 հայերի: Բացի այդ՝ ևս 1000 քաղաքաբնակ և 1000 գյուղաբնակ հայեր, որոնք աշխատում էին քաղաքում, անհետ կորած են համարվում: Քաղաքում թալանվեց 1701 տուն և հրկիզվեց 2448 խանութ: Նահանգում կատարված սպանդի զոհերի, ավերված և թալանված գյուղերի, եկեղեցիների և վանքերի թիվը չափազանց մեծ էր: Միայն Սեբաստիայի նահանգի գրեթե բոլոր գյուղերն անապատացան, իսկ փրկվածներին հարկադրեցին իսլամ ընդունել: Միայն Կասմա գյուղում հավատափոխների թիվը հասնում էր 655: Կյուրին քաղաքում կոտորածից 14 օր անց դեռ 1200 անթաղ դիակներ փռված էին ճանապարհներին: Շապին-Գարահիսար-Շարքիում սպանվեց բնակչության գրեթե 50 տոկոսը:

Հալեպի նահանգում սպանդի և ավերումի ենթարկված բնակավայրերի շարքում բացառություն էր կազմում միայն Զեյթունը, որը կարողացավ հաջողությամբ դիմադրել: Ըստ եվրոպական հյուպատոսների հաղորդման՝ միայն Ուրֆայում, Բիրեջիքում, Սեբերեկում և Ադիամանում հարկադրաբար իսլամացվել են 5900 մարդիկ:

Ադանայի նահանգում ամերիկյան և ֆրանսիական ռազմանավերի առկայության շնորհիվ Մերսին, Տարսոն և Ադանա քաղաքները զերծ մնացին կոտորածներից: Չնայած այդ քաղաքներում շուտափույթ կոտորածների մասին արդեն երեք անգամ հայտարարություն էր արվել, բայց վալին նավերի ղեկավարների անձնական միջամտությունից հետո չհամարձակվեց այնտեղ կոտորած սկսել: Փոխարենը Ադանայի 20 գյուղերը և Բայասը՝ 16 գյուղերով և 1809 տներով ու ագարակներով հիմնովին ամայացվեցին: Վալին շրջագայում էր այդ նահանգում, և երբ որևէ գյուղից հեռանում էր, այնտեղ տեղի էր ունենում կոտորածն ու թալանը:

Անգորայի նահանգի մի շարք բնակավայրերում, այդ թվում՝ Ագրակ և Մունջուսուն գյուղերում (հապատատասխանաբար 800 և 1000 տներով) սպանվեցին բոլոր բնակիչները: Ըստ Լեփսիուսի հետազոտության արդյունքների՝ կոտորածների ընթացքում ամայացվել են 2500 քաղաքներ ու գյուղեր, ավերվել են 645 եկեղեցիներ ու վանքեր, բռնի իսլամացվել են 559 գյուղեր և հարյուրավոր քաղաքաբնակ ընտանիքներ, 328 եկեղեցիներ վերածվել են մզկիթների, իսկ լիովին անօգնական մարդկանց թիվը կազմում էր 546 000: Ինչ վերաբերում է կոտորածների զոհերի թվին, ապա Լեփսիուսը 100 000-ը համարում էր «չափազանց թերագնահատված» {(125) *8-11*}:

Կոտորածներն ուղեկցվում էին անօրինակ խոշտանգումներով, կանանց և աղջիկների առևանգումներով ու պատվազրկումներով: 1895 թ. դեկտեմբերի 29-ին Ուրֆայի հայ բնակչության մի մասը՝ շուրջ 3000 մարդ, ապաստանել էր տեղի հայ առաքելական «Սուրբ Աստվածածին» եկեղեցում՝ հուսալով, որ մարդասպան ամբոխն այնտեղ չի մտնի: Ինչպես հաղորդում է Յակոբ Կյունցլերը, մի դերվիշ, որը վճռել էր այնտեղ 100 հայ նորածին տղաների զոհաբերման արարողություն կատարել, մի քանի օգնականների հետ մտնում է գերլցված եկեղեցին, իսկ դարպասի մոտ զինվորները պահակ են կանգնում, որպեսզի ոչ ոք չփախչի: Խորանի մոտ աղոթք կատարելուց հետո նա սկսում է գործողությունը, իսկ նո-

ռածիններին պակաս չկար: «Աստծո՝ ամենակարողի և բարեգութի անունից» նա կտրում է յուրաքանչյուր զոհի պարանոցը, որին օգնականները բերում են: Երբ այդ զոհաբերությունն ավարտվում է, ջարդարարները տակառներով նավթ են բերում և շաղ տալիս մարդկանց վրա, իսկ հետո կրակի են մատնում ողջ բազմությանը: Մի դիպվածի շնորհիվ կենդանի մնացին միայն երկու հոգի {(123) *35-36*}:

Բաբերդում 14 կանայք իրենց նորածինների հետ հրկիզվեցին, 100 կանայք կտոր-կտոր արվեցին, իսկ 50 երիտասարդ կանայք ինքնասպան եղան՝ պատվազրկումից խուսափելու համար: Սեբաստիայի գերեզմանատանը թաղված 450 դիերի մեջ բոլոր կանանց որովայնները հատված էին: Լուսոնքի և Քսանքայի 50 կանայք անարգումից խուսափելու համար իրենց նետեցին ջրհորներն ու անդունդը: Ուզուն Օբայից (Խարբերդից 24 մղոն դեպի արևելք) տեղահանված ավելի քան 55 կանայք ու երեխաները նետվեցին Եփրատի մեջ: Բաբերդի ժանդարմերիայի հրամանատարը հոկտեմբերի 26-ին Քսանքա գյուղի կանանցից 500 թուրքական ֆունտի համարժեք գումար ու զարդեր կորզեց՝ խոստանալով խնայել նրանց ամուսիններին: Մի քանի օր անց նա, նույն գյուղի բոլոր կանանց ու երեխաներին հավաքելով մի դաշտում, սրի քաշել տվեց: Հյուսեյնիկ գյուղում (Խարբերդի նահանգ) մոտ 600 զինվորներ ու սպաներ ռազմական զինանոցում հավաքել էին նույնաթիվ՝ 600 հայ կանանց ու երիտասարդ աղջիկների, և «այն բանից հետո, երբ նրանք հրապարակայնորեն բավարարել էին իրենց ստոր ցանկությունները նրանց նկատմամբ, մորթեցին իրենց նողկալի բռնաբարությունների տարաբախտ զոհերին» {(125) *17*}:

Այս ամենը բնութագրական էր պարբերական կոտորածների ողջ ընթացքի համար: «Այնուամենայնիվ,– գրում է Լեփսիուսը,– պատմության տարեգրքերում արժե արձանագրել, որ բոլոր քաղաքներում ու գյուղերում քրիստոնյաների դիերը մերկացված, ամենանողկալի կերպով այլանդակված և անպատկառորեն խեղ-

ված, կույտերով թափված էին ճանապարհներին, աղբակույտերի վրա, ջրհորներում կամ աղբահորերում, մինչև հավաքագրվեցին ավանակներ և հրեաներ՝ դիերը, ինչպես սատկած կենդանիների լեշեր, քաղաքից հեռացնելու համար: Ոչ ոք չէր կարողանում իրար վրա կիտված և խեղված մարդկային մսի զանգվածների մեջ ճանաչել իր հարազատներին: Այնտեղ, որտեղ նախապատվություն չէր տրվում դիերը, որպես շների կեր, փռված թողնելուն կամ հանրաճանաչ կերոսինով խարույկի բաժին դարձնելուն, շուտով փոս էր փորվում, և դիերը կիտվում էին դրա մեջ» {(125) *15*}:

Սպանդին զուգահեռ գործի էր դրվել նաև մահվան սպառնալիքով հարկադիր կրոնափոխման մեքենան ՝ «իսլամ կամ մահ» կարգախոսով, ընդ որում դա նույնպես ամենուրեք միատեսակ մեթոդով էր գործում: Միայն ժամանակահատվածն էր թողնված բռնարարների հայեցողությանը: Մի քանի քաղաքներում և գյուղերում դեռ կոտորածների բռնկումից առաջ ընտրության հնարավորություն էր տրվել՝ իսլամ ընդունելու միջոցով խուսափելու մահից: Այդպես էր Ուրֆայում, որտեղ հայերին կոչ էր արվել կրոնափոխման համաձայնության դեպքում իրենց տանիքներին սպիտակ դրոշներ բարձրացնել: Այլ վայրերում ևս ձեռքը կամ մի մատը բարձրացնելով՝ իսլամանալու ցանկություն հայտնելու դեպքում հնարավոր էր մահից փրկվել: Հաճախ, սակայն, սպանվեցին նաև կրոնափոխման համաձայնություն հայտնած հայերը: Բռնի կրոնափոխությունները տեղի էին ունենում հենց կոտորածների ընթացքում:

Էրզրումի նահանգում իսլամացվեցին շուրջ 15 000 հայեր: Մոտավորապես նույնքան էր նաև Խարբերդի նահանգում բռնի կրոնափոխվածների թիվը: Վանի նահանգում իսլամ ընդունեցին շուրջ 176 գյուղեր: Սեբաստիայի, Բիթլիսի և Դիարբեքիրի նահանգներում ևս կրոնափոխված գյուղերի թիվը հարյուրներով էր հաշվվում: Ընդ որում, ըստ Լեփսիուսի հաշվարկների, միայն Ակնի շրջանում կրոնափոխվել են 40, Բալուի շրջանում՝ 43, Սիլվանի, Բշերիկի, Ջըռկանի և Փարավանի շրջաններում՝ 105, Դիարբեքիրի շրջանում՝ 106, իսկ Բիթլիսի շրջանում՝ 119 գյուղեր {(24) *49*}:

Այնուհանդերձ հայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը գերադասում էր զրկվել կյանքից, բաց չփոխել կրոնը: Արաբկիրում, օրինակ, երբ բոլոր հայ երևելիներին կանչեցին կառավարություն՝ հայտնելով, որ եթե ուզում են ապրել, ապա պետք է իսլամ ընդունեն: Նրանք միաձայն հրաժարվեցին կրոնափոխ լինելուց: Բազմաթիվ էին նման դեպքերը:

Սուլթանական վարչակազմը կոտորածների ընթացքում և դրանցից հետո գործի էր դրել քարոզչության բոլոր միջոցները՝ մի կողմից կատարվածը կոծկելու, մյուս կողմից հայ հեղափոխականների «դավադրությունների» և «ապստամբությունների» մասին առասպելների տարածումով արդարացում ձեռք բերելու համար: Այդ նպատակով բոլոր նահանգներում բազմաթիվ հայերի բանտարկում և խոշտանգում էին՝ նոր կոտորածների և մահվան սպառնալիքով հարկադրելով ստորագրել կեղծ բացատրագրեր ու շնորհակալագրեր: Դրանցում գրված էր, թե իրենք՝ հայերն են հեղափոխական գործողություններով խաթարել խաղաղությունը, որն արդեն վերականգնվել է իշխանությունների ջանքերով:

Լեփսիուսն կոտորածներն իրավամբ անվանում է Բարձր Դռան «վարչական միջոցառում», որի նպատակը մեծ տերությունների հարկադրած հայկական բարենորոգումները հայ ժողովրդի բնաջնջման միջոցով վերջնականապես վիժեցնելն էր: Բնականաբար, այդ պատճառով նա մեղսակից և համապատասխանատու է համարում նաև մեծ տերություններին: «Հայ ժողովրդի սարսափելի բնաջնջումը,– գրում է Լեփսիուսը,– ոչ այլ ոք, քան հենց քրիստոնյա մեծ տերությունների քաղաքականությունն է առաջ բերել: Եթե տերությունների հետաքրքրության կենտրոնում հայտնվեին ոչ թե Փոքր Ասիայի՝ հայերով բնակեցված արևելյան, այլ հույներով բնակեցված արևմտյան նահանգները, ապա վստահաբար կարելի է պնդել, որ դրանք կարժանանային նույն ճակատագրին, ինչ Հայաստանը» {(125) *50*}:

1895-1896 թթ. ինքնապաշտպանական մարտերը

Թեև հայերի պարբերական զանգվածային կոտորածները նախապես ծրագրված էին, և արվել էր ամեն բան՝ զոհերին անակնկալի բերելու համար, այնուհանդերձ որոշ վայրերում ի հայտ եկավ տարերային դիմադրական պայքար: Մալաթիայում հայերը Եղիշե քահանա Խաչատրյանի ղեկավարությամբ մի քանի օր համառ դիմադրություն էին ցույց տալիս թուրքական զորքերին, որը դաժանորեն ճնշվեց: Դորթյոլի հայերը, դիմելով ինքնապաշտպանության, զերծ մնացին կոտորածից: Շուտով հաղթական դիմադրության կենտրոն դարձավ Զեյթունը:

Զեյթունի ինքնապաշտպանությունը

Հարևան գավառներում տեղի ունեցած կոտորածների մասին լուրերից սարսափած՝ Անտիտավրոսի լեռնային գյուղերի բազմաթիվ բնակիչներ ապաստանեցին Զեյթունում, որն ուներ բնական ամրություններ: Զեյթունցիները նրանց միջոցով բավականաչափ տեղյակ էին կատարվող եղեռնագործություններին: 1895 թ. ամռանն այնտեղ էին գտնվում նաև Աղասին (Կարապետ Թուր-Սարգսյան, Գարուն Աղասի) և մի շարք այլ հնչակյան գործիչներ: Նրանք Ս. Կարապետ վանքի վանահայր Բարդուղիմեոս վարդապետի և այլ հեղինակավոր տեղացիների հետ միասին նշանակալից աշխատանք տարան դիմադրության կազմակերպման համար: Քաղաքի մոտ կար մի թուրքական զորանոց՝ մոտ 600-անոց կայազորով: Տեղեկություն ստանալով, որ կայազորը շուտով մեծ համալրում է ունենալու, զեյթունցիների որոշեցին դա կանխել: Նրանք շրջապատեցին զորանոցը և հոկտեմբերի 18-ին կայազորին ստիպեցին անձնատուր լինել, նախքան համալրումը տեղ կհասներ: Նրանք առգրավեցին շուրջ 500 հրացան, երկու գերմանական թնդանոթ և մեծաքանակ այլ ռազմամթերք:

Զեյթունի շրջակայքում գտնվող ավելի քան հարյուր գյուղեր բնակեցված էին բացառապես հայերով, որոնց զգալի մասը նույնպես տեղափոխվեց Զեյթուն:

Երբ թուրքական զորամասերի առաջին գրոհներն անհաջողությամբ պսակվեցին, կառավարությունը նոյեմբերին Զեյթունի դեմ ուղարկեց 40 000-անոց և 8000-անոց երկու զորաբանակներ՝ Ռեմզի փաշայի և Ալի բեկի հրամանատարությամբ: Չնայած թուրքերը գրավեցին զեյթունցիների որոշ եզրային կարևոր հենակետեր, այդ թվում՝ Ֆռնուզը և դաժան հաշվեհարդար տեսան այնտեղ ապաստանած բնակչության հետ, այնուհանդերձ զեյթունցիները կատաղի մարտերով հաջողությամբ կասեցրեցին թշնամու հետագա առաջխաղացումը: Մինչև դեկտեմբերի 13-ը շարունակվող մարտերում մեծ կորուստներ ունենալով և չկարողանալով զեյթունցիների դիմադրությունը հաղթահարել՝ Ռեմզին, որը նույնպես վիրավորվել էր, Կ. Պոլսից լրացուցիչ օգնություն խնդրեց: Սուլթանը նրան պաշտոնանկ արեց և նրա զորքերի հրամանատարությունը հանձնեց Էդհեմ փաշային, որը նույնպես չկարողացավ ճակատում որևէ տեղաշարժ գրանցել:

Այդ իրավիճակում Բ. Դուռը ստիպված եղավ ընդունել հակամարտությունը լուծելու՝ եվրոպական հյուպատոսների միջնորդությունը:

Դեկտեմբերի վերջին այդ միջնորդության գրավոր առաջարկը հանձնվեց նաև զեյթունցիներին: Հունվարի կեսերին Զեյթուն ժամանեցին անգլիական, ռուսական, ֆրանսիական և իտալական հյուպատոսները: 9 օր տևած բանակցություններից հետո՝ հունվարի 30-ին, զեյթունցիների, թուրքական կառավարության ու հյուպատոսների կողմից ստորագրվեց համաձայնագիր: Դրա համաձայն՝ թուրքերը պարտավորվում էին զորքերը Զեյթունից հեռացնել՝ այնտեղ թողնելով միայն մի զորամաս, բոլոր ապստամբներին ներում էր շնորհվում, դրսից եկած հնչակյան և մյուս գործիչները պետք է հեռանային արտերկիր, փախստական գյուղացիներին թույլատրվում էր ավտանգ վերադառնալ իրենց բնակավայրերը, Զեյթունում պետք է նշանակվեր քրիստոնյա կառավարիչ:

Զեյթունցիների պայքարը պսակվեց հաղթանակով: Թուրքերը մարտերի ընթացքում մեծ կորուստներ կրեցին: Զեյթունի

ինքնապաշտպանության ընթացքում թուրքական բանակը միայն համաճարակի և ցրտի հետևանքով կորցրեց շուրջ 20 000 զինվոր: Հայկական կողմի կորուստը կազմում էր 3,5 հազար {(34) *549-557*}:

Այդ հերոսամարտը, անկասկած, նորագույն շրջանի հայ ազատագրական շարժման ուսանելի էջերից մեկն է: Ինչպես նշում է Լեփսիուսը, «զեյթունցի քաջերը» «կարողացան ոչ միայն համաներմամբ ազատվել, այլև մի տեսակ ինքնավարության արտոնություն ստանալ Զեյթունի և շրջակայքի համար» {(24) *84*}:

Վանի ինքնապաշտպանությունը և դրան հաջորդող կոտորածը

1895 թ. նոյեմբերին Վանի նահանգում, չնայած 543 գյուղերի և բազմաթիվ եկեղեցիների կողոպուտին ու ավերմանը, ի տարբերություն մյուս նահանգների, միայն մի քանի հարյուր մարդիկ էին սպանվել: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այնտեղ բնաջնջման գործիք էին ծառայում ոչ թե թուրքերը, այլ տեղացի քրդերը, որոնք, հակառակ իշխանությունների ցանկությանը և ի տարբերություն թուրքերի, միայն կողոպտում էին, չէին սպանում: Սուլթանական վարչակազմը շուտով ձեռնամուխ եղավ այդ թերացումը վերացնելուն:

1895 թ. վերջին, որպես «հատուկ բանագնաց», Վան ուղարկվեց սուլթանի թիկնապահ Ֆերիք Սաադեդդին փաշան: Իր այցելությունը պատճառաբանելով «խաղաղարար» առաքելությամբ՝ նա փորձում էր նահանգի ղեկավարման բոլոր գործառույթները կենտրոնացնել իր ձեռքում: Նահանգապետ Նազիմ փաշային նա մեղադրում էր անվճռականության մեջ՝ պնդելով, թե վերջինս իր անգործությամբ քաջալերում էր հայ «ֆիդայիներին» իրենց «սադրիչ» գործողություններում՝ փոխանակ հետապնդելու նրանց: Այդ նպատակով նա անձամբ Վանում ձեռնարկեց մի շարք խուզարկություններ, որոնք, սակայն, արդյունք չտվեցին:

Ստեղծված լարված իրադրությունում Վանում գործող հայկական կուսակցությունները, միավորվելով, եռանդուն աշխա-

տանք էին կատարում քաղաքի պաշտպանունակությունն ամրապնդելու համար: Արմենականների ղեկավարը Մ. Ավետիսյանն էր, դաշնակցականներինը՝ Պետոն (Ա. Պետրոսյան), իսկ հնչակյաններինը՝ Մարտիկը (Մ. Սարուխանյան): Նրանք կազմեցին պաշտպանական ծրագիր, կատարում էին դրամահավաք, փորձում էին Պարսկաստանից զենք ձեռք բերել և զինել բնակիչներին:

Սաադեդդինը մահմեդականներին հայերի դեմ գրգռելու քայլեր էր ձեռնարկում: 1896 թ. մայիսի կեսերից, երբ ռուսական հյուպատոս Վ. Մանսկին մեկնեց արձակուրդ, գրեթե ամեն օր հայերի վրա մեկուսի հարձակումներ և սպանություններ էին տեղի ունենում: Օրական սպանվում էին 5-6 հայեր: Միայն սադրանքն էր պակասում՝ Վանի վրա հարձակում իրականացնելու համար, և դա չուշացավ: Հունիսի լույս 14-ի գիշերը Վանի Կլոր դար թաղամասում ընդհարում տեղի ունեցավ թուրքական պարեկախմբի և մաքսանենգությամբ զբաղվող քուրդ ավազակների միջև, որի ընթացքում սպանվեց միայն քրդերից մեկի ձին, իսկ ավազակախումբը փախավ: Հաջորդ առավոտ գնդակահարված ձին շուկայի հրապարակում ի ցույց դրվեց բոլորին, և հայտարարվեց, որ ավազակախումբը հայկական է եղել: Դա հարձակման մեկնարկի շարժառիթ դարձավ:

Վանում ոստիկանության վերահսկողությունը, ինչպես և Այգեստան թաղամասում կարգուկանոնի պահպանումը հանձնարարված էին մայոր Հալիմին, որը դեռ Սասունի կոտորածի ժամանակ աչքի էր ընկել իր ոճիրներով: Հունիսի 15-ին նա մի զորամասի հետ գնաց Կլոր դար և հրամայեց կրակ բացել փողոցում գտնվող մարդանց վրա: Դա կոտորածի ազդանշանն էր: Թուրքական թաղամասից այնտեղ շտապեց զինված ամբոխը՝ սպանելով իր ճանապարհին հանդիպող բոլոր հայերին: Նրանք ներխուժեցին նաև տները՝ թալանելով, ավերելով և հրկիզելով դրանք: Սպանդն ու ավերումը շարունակվեցին ողջ օրը: Հայկական Կլոր դար, Արարք, Հայկավանք, Թորման, Փոս-դաղ, Չավուրմե, Սուրբ Հակոբ և Նորաշեն թաղամասերը գրեթե ամբողջությամբ ավերվե-

ցին: Այդ օրը սպանվեց մոտ 800 մարդ՝ մեծ մասամբ տղամարդիկ, իսկ կանայք ու աղջիկները ամենազազրելի ձով պատվազրկվում և մեծ մասամբ տարվում էին հարեմները: Շատ հայեր փախան ազդեցիկ թուրքերի տները՝ հուսալով այդ կերպ փրկել իրենց կյանքը. Նրանցից մոտ 100-ը, որոնք պաշտպանություն էին փնտրել քաղաքապետ Թեմուր-Զաղե Հալիլ փաշայի մոտ, երկու օր անց դուրս բերվեցին և մեկ առ մեկ մորթվեցին:

Հունիսի 16-ի առավոտյան վերսկսվեց մոլեռանդ ամբոխի հարձակումը՝ նախորդ օրն անվնաս մնացած փողոցների ուղղությամբ: Միաժամանակ քաղաքը հետզհետե լցվում էր շրջակա տարածքներից եկած քրդական և թուրքական հրոսակներով: Այս անգամ հարձակվողները, ուժգին դիմադրության հանդիպելով, հետ շպրտվեցին:

Հունիսի 17-ին նոր հարձակում ձեռնարկվեց համիդեական ջոկատների և կանոնավոր զորքերի ուղեկցությամբ: Հայկական դիրքերի վրա գնդակոծություն սկսվեց նաև Այգեստանի մի բարձունքում տեղակայված թնդանոթներից: Թեժ մարտերը շարունակվեցին մինչև հունիսի 18-ի առավոտը: Սաադեդդինը հյուպատոսներին հայտնեց, որ եթե ապստամբներն անհապաղ անձնատուր չլինեն, ապա ինքը միջնաբերդից թնդանոթներով կավերի ամբողջ քաղաքը: Անգլիական հյուպատոս Վիլյամսը ստանձնեց միջնորդի դերը և հայերին առաջարկեց պատվիրակներ ուղարկել՝ բանակցելու: Հայերը հայտնեցին, որ կհամաձայնեն միայն այն դեպքում, եթե բանակցություններին մասնակցեն նաև մյուս հյուպատոսները:

Հունիսի 19-ին և 20-ին տեղի ունեցան մեկական հանդիպումներ, որոնց մասնակցում էին ամերիկյան, պարսկական հյուպատոսները և ռուսական բացակա հյուպատոսին փոխարինող Կարապետ Չիլինգարովը: Հայերի կողմից բանակցում էր Վանի հոգևոր առաջնորդ հայր Սահակը երեք պատվիրակների հետ միասին: Հյուպատոսները հայերից պահանջեցին հանձնել ապստամբության երեք «պարագլուխներին» և 60 այլ գլխավոր մասնակից-

ների՝ վստահեցնելով, որ այդ դեպքում Վանի հայերը կարժանանային «սուլթանի ողորմածությանը»: Հայ պատվիրակները ժամանակ շահելու նպատակով պահանջեցին իրենց 24 ժամ ժամանակ տալ խորհրդակցելու համար, իսկ այդ ընթացքում որևէ նոր հարձակում չպետք է լիներ:Չնայած ձեռք բերված համաձայնությանը՝ հունիսի լույս 21-ի գիշերը՝ հանդիպումից 8 ժամ անց, թուրքերը նոր հարձակում ձեռնարկեցին՝ միաժամանակ Աքերվիքար բարձունքից 6 թնդանոթներով գնդակոծելով ողջ Այգեստանը: Նահանգապետը հյուպատոսներին առաջարկեց իրենց աշխատակիցների հետ փոխադրվել միջնաբերդ՝ անվտանգ լինելու համար: Երբ ռուսական հյուպատոսարանի ղեկավարը դա մերժեց, մյուսները ևս հրաժարվեցին այդ առաջարկից:

Վանի ինքնապաշտպանները, գիտակցելով դիմադրության շարունակման անհեռանկարայնությունը և ամբողջ քաղաքի ավերման վտանգը, նաև բնակչությանը հետագա հետապնդումից զերծ պահելու հույսով վճռեցին թողնել դիրքերն ու հեռանալ: Հունիսի 21-ին շուրջ 1000 մարդ, որոնցից մոտ մեկ քառորդն էր զինված, ճեղքեց պաշարումն ու հեռացավ դեպի Վանից արևելք գտնվող Վարագա վանքը:

Այդ ընթացքում մոտ 8000-անոց զորքը և ամբոխը քաղաքում սկսեցին սպանդը, թալանն ու ավերումը: Այգեստանում գտնվող զորքերի հրամանատար Հալիմ էֆենդին անձամբ էր ոգևորում ամբոխին՝ բղավելով. «Դե՛, զավակներս, նախ սպանե՛ք բոլորին, ապա կարող եք հանգիստ թալանել» {(125) *88-92*}:

Հունիսի 22-ի կեսօրին շեփորի մի ազդանշանով վերջ տրվեց քաղաքում 8 օր շարունակվող սպանդին ու թալանին: Քաղաքում սպանվեց ավելի քան 1000 մարդ, 3000 տներ կողոպտվեցին, իսկ շուրջ 600-ը հրկիզվեցին: Պղծվելով՝ ավերվեցին հինգ եկեղեցիներ ու վեց դպրոցներ: Մոտ 15 000 հայեր, որոնք ապաստանել էին քաղաքում գտնվող հյուպատոսությունների և միսիոներների շենքերում, մեծ մասամբ փրկվեցին կոտորածից:

Քաղաքից հեռացող քրդական հորդաներն ու համիդեական զորամասերը նետվեցին շրջակա գյուղերի վրա: Նահանգի բոլոր հայկական բնակավայրերը մատնվեցին հրի ու սրի: Զանգվածային սպանդին զոհ դարձավ ավելի քան 20 000 մարդ, առևանգվեցին բազմաթիվ կանայք ու աղջիկներ: Նրանցից մոտ 150-ը պարսկական շուկաներում որպես ստրկուհիներ վաճառվեցին 8 գրանով (5 մարկ): Ծաղկուն նահանգը վերածվեց ավերակների:

Սաադեդդինը կազմակերպեց նաև Վանից հեռացած հայ մարտիկների սպանդը: Նրանց մեծ մասը՝ հիմնականում արմենականներ, Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ Վարագա վանքից շարունակեց ճանապարհը դեպի Պարսկաստանի սահմանը: Երբ նրանք հասան Խանասորի դաշտ, այնտեղ դարանակալած թուրք զինվորներն ու քրդերը շրջապատեցին նրանց: Արիաբար կռվելով՝ գրեթե բոլոր հայերը, նաև Մ. Ավետիսյանը զոհվեցին: Միայն մի քանի մարդ կարողացավ ճեղքել օղակը և անցնել Պարսկաստան:

80 դաշնակցական և հնչակյան զինյալներից բաղկացած մյուս խումբը Պետոյի և Մարտիկի ղեկավարությամբ փորձեց Աբաղայի դաշտով հեռանալ Պարսկաստան, բայց նրանք նույնպես ճանապարհին շրջապատվեցին և սպանվեցին համիդեականների կողմից {(54) *561*}:

Օսմանյան բանկի գրավումը և Կ. Պոլսի հայերի նոր կոտորածը

1896 թ. օգոստոսի 26-ի առավոտյան մի խումբ հայ զինյալներ՝ մեծ մասամբ դաշնակցականներ, Բաբկեն Սյունու (Պետրոս Փարյան) ղեկավարությամբ ներխուժեցին Օսմանյան բանկ: Նրանք սպառնում էին պայթեցնել շենքը, եթե չդադարեցվեն հայերի կոտորածները, և քայլեր չձեռնարկվեն բարենորոգումներն իրականացնելու համար: Երբ Սյունին, որը խմբի վերջապահն էր, զոհվեց, ղեկավարումը ստանձնեցին Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) և Հայկ Թիրաքյանը: ՀՅԴ Կ. Պոլսի կենտրոնական կոմիտեն մի շրջաբերականով տերությունների

դեսպանություններին տեղեկացրեց խմբի պահանջների մասին: Դեսպանները, մասնավորապես Ռուսաստանի դեսպան Ն. Մաքսիմովը, բանակցելով սուլթանի և բանկը գրաված հայերի հետ, համոզեց նրանց դուրս գալ և մի նավով տեղափոխվել արտերկիր:

Սուլթանը, նախապես տեղյակ լինելով բանկի գրավման մտադրությանը, ոչ միայն ոչինչ չարեց այն խափանելու համար, այլև դա դարձրեց շարժառիթ հայկական «ապստամբությունների» մասին իր պաշտոնական պրոպագանդան «հիմնավորելու», նաև մայրաքաղաքում նոր արյունահեղություն ձեռնարկելու համար:

Նոր կոտորածը, որը սկսվեց բանկի գրավմանը զուգահեռ, նույնպես նախօրոք ծրագրված էր: Ի տարբերություն նախորդ կոտորածների, այն տեղի ունեցավ բազմաթիվ եվրոպացիների աչքի առաջ: Գալաթայում, Փերայում և մայրաքաղաքի մերձակա շրջաններում քրդերից ու թուրքերից կազմվել էին մահակներով, դանակներով կամ հրազենով զինված ավազակախմբեր: Նախազգուշացվել էր, որ ոչ ոք չսպաներ կամ չթալաներ այն թաղամասում, որտեղ ինքն ապրում էր: Դրա նպատակն այն էր, որ մարդասպաններին չճանաչեին և այնուհետև չկարողանային նրանց դեմ բողոք ներկայացնել դեսպանություններին: Բերվել էին մեծ քանակությամբ սայլեր՝ դիերը հեռացնելու համար: Ոտքի էր հանվել բազմաքանակ զինվորականություն և ոստիկանություն՝ ցանկացած դիմադրություն ճնշելու և անհրաժեշտության դեպքում ամբոխին աջակցելու համար:

Մայրաքաղաքում կոտորածն ամենուրեք միաժամանակ սկսվեց: Դրա ականատես, ավստրիական գեներալ Վլադիմիր Գիզլի հաղորդման համաձայն՝ ոստիկանությունը, ամբոխին զենքեր բաժանելով, տեղեկացնում էր, որ կոտորածի ազդանշանից հետո միայն հայերն էին երկու օր օրենքից դուրս լինելու: Եթե որևէ մեկն այլ մարդու վիրավորեր, կբանտարկվեր 10 տարով, իսկ սպանելու դեպքում մահապատժի կենթարկվեր:

Գերմանիայի ազգային-սոցիալական կուսակցության գործիչ Հ. ֆոն Գերլախը, որն այդ օրերին Կ. Պոլսում էր գտնվում, հաղորդում է հետևյալը. «Կոտորածի նախորդ գիշերը գիշերային պահակները շրջում էին քրիստոնյաների թաղամասում, և այն տներից վրա, որտեղ հայեր էին բնակվում, սպիտակ խաչեր էին գծում: Երբ արևը ծագեց, և 48ժամյա ազատությունը սկսվեց, համալները, հաղթանդամ թուրք բեռնակիրները և նավահանգստի աշխատողները անցնում էին Ստամբուլից Բերա, Գալաթա, Քաղքքյոյ և քրիստոնյաների մյուս թաղամասերը տանող կամրջով: Նրանք մտնում էին նշան արված տները, մահակներով կամ ձողերով սպանում բոլոր չափահաս հայերին: Սպանդն անընդմեջ շարունակվեց հատկացված երկու օրերի ընթացքում: […] Մի քանի համալներ, որոնք ուշացել էին և միայն սպանդի 49-րդ ժամին անցան կամրջով, առանց այլևայլի գնդակահարվեցին այնտեղ տեղակայված ոստիկանների կողմից» {(100) *129*}:

Վեց տերությունների դեսպանները կոտորածը կանգնեցնելու համար բողոքի մի շարք նոտաներ ուղարկեցին Բ. Դռանը, բայց դա արդյունք չտվեց: Սպանվածների թիվը, ըստ պալատին ներկայացված պաշտոնական զեկույցի, կազմում էր 8750՝ չհաշված ծովը նետած մարդկանց:

Կոտորածների հետևանքները

1890-ական թթ. պարբերական կոտորածներնաղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար՝ մարդկային և նյութական ահռելի կորուստներ պատճառելով և ծաղկուն բնակավայրերը վերածելով ավերակների: Նահանգների բնակչության ժողովրդագրական կազմը նույնպես զգալիորեն փոփոխվեց՝ ի վնաս հայերի: Կոտորածներին զոհ դարձան ավելի քան 300 000 մարդիկ, և մոտ այդքանն էլ արտագաղթեցին: Հայաթափված հարյուրավոր բնակավայրերը բնակեցվում էին մահմեդականներով, որոնք տիրանում էին նաև այդ գյուղերի հողատարածքներին ու

արոտավայրերին: Ըստ որոշ տվյալների՝ Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում հայերից խլվել է, ընդհանուր առմամբ, 1 միլիոն 30 հազար օրավար տարածք {(16) *542-543*}:

Դրան զուգահեռ արտերկրի օսմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները ջանում էին ամեն կերպ խոչընդոտել արտագաղթած հայերի վերադարձն իրենց հայրենի բնակավայրեր {(68) *23-24*}: Օսմանյան պետությունում հայ բնակչության թվաքանակն այդ ամենի հետևանքով աղետալի չափերով նվազեց:

Գերմանա-օսմանյան դաշինքի ձևավորումը

Եվրոպական մեծ տերությունների «թղթային բարենորոգումները», կոտորածներ սաղրելուց զատ, այլ նշանակություն չունեցան: Լիովին տեղյակ լինելով երկու տարի շարունակվող նախճիրին՝ նրանք այն կասեցնելու որևէ ազդու միջամտություն չձեռնարկեցին: Սուլթանական վարչակազմի սառնասիրտ գործելակերպը ևս փաստում էր, որ այն, տեղյակ լինելով տերությունների միջև առկա հակասություններին, որևէ միջամտությունից չէր վախենում:

Դեռ նախքան կոտորածները բուռն վերելք էր ապրում նաև գերմանա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը, որը վերածվեց դաշինքի: Կայսր Վիլհելմ II-ը դեռ 1880-ական թթ. վերջերից կտրուկ փոխեց պետության արևելյան քաղաքականությունը, որը մինչ այդ ուղղորդում էր կանցլեր Օ. ֆոն Բիսմարկը: Բիսմարկը մեծ նշանակություն չէր տալիս Արևելքին և մասնավորապես Օսմանյան պետությանը՝ գտնելով, որ այն Ռուսաստանի և այլ պետությունների շահերի ոլորտ է: Բիսմարկի՝ երկու անգամ (1876 թ. և 1887 թ.) հնչեցրած հայտնի տեսակետը, ըստ որի՝ նա իր «մեկ պոմերակային հետևակայինի ոսկորները» չի փոխի ամբողջ Թուրքիայի հետ, դրա դիպուկ բնորոշումն է:

1880-ական թթ. վերջերից, սակայն, Գերմանիան որդեգրեց «արևի տակ իր տեղը» գտնելու և համաշխարհային տերություն

դառնալու գաղափարը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ էր համարվում Արևելքում հասնել տնտեսական և ռազմաքաղաքական գերիշխանության՝ այնտեղից դուրս մղելով մյուս տերությունների կապիտալն ու ազդեցությունը: Այդ նպատակով վիլհելմյան կառավարությունը ձեռնամուխ եղավ Օսմանյան պետության հետ հարաբերությունները շեշտակի սերտացնելու քաղաքականությանը: 1889 թ. կայսրը ձեռնարկեց իր առաջին ճանապարհորդությունը Կ. Պոլիս՝ սուլթանի հետ կնքելով մի շարք պայմանագրեր: Այնտեղ ուղարկվեց նաև գերմանական ռազմական առաքելություն՝ գեներալ (հետագայում ֆելդմարշալ) Կոլմար ֆոն դեր Գոլթի գլխավորությամբ, որի խնդիրն էր զինել ու արդիականացնել օսմանյան բանակը:

Հայերի կոտորածների մասին տեղեկանալով՝ կայսրը դրանք անվանեց «իսկական բարդուղիմեոսյան գիշեր», որը գերազանցում է «նախկինում եղած ամեն բան», իսկ սուլթանին որակեց որպես «նողկալի մարդ», որի պալատի հետ պետք է «թնդանոթային արկերով» խոսել {(96) *41*}: Նա և կառավարությունը, սակայն, ոչ միայն բողոքի որևէ ցույց չարեցին, այլև ջանում էին հասարակությունից գաղտնի պահել կատարվող եղեռնագործությունները: Գերմանական քարոզչամեքենան, տարածելով թուրքական պաշտոնական ապատեղեկատվությունը, կոտորածների մասին լուրերն անվանում էր ռուսական կամ անգլիական կեղծիքներ, որոնց նպատակն էր վիժեցնել գերմանա-թուրքական բարեկամական հարաբերությունները:

Դր. Յոհաննես Լեփսիուսի՝ 1896 թ. հրատարակած «Հայաստանը և Եվրոպան, մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» աշխատությունը, որը լույս տեսավ նաև անգլերեն ու ֆրանսերեն, խորտակեց այդ ապատեղեկատվության պատը՝ ցնցելով ոչ միայն Գերմանիայի, այլև ողջ Եվրոպայի հասարակական կարծիքը: Բ. Դռան հետ հարաբերությունները ամեն գնով սերտացնելու՝ Գերմանիայի պաշտոնական քաղաքականությունը, սակայն, դրանից հետո էլ չփոխվեց:

1898 թ. կայսրը ձեռնարկեց իր երկրորդ ճանապարհորդությունը Օսմանյան պետություն՝ բացարձակ լռություն պահպանելով կոտորածների մասին: Բազմաթիվ նոր երկկողմ պայմանագրեր կնքվեցին: Դամասկոսում նրա ելույթը, որի ժամանակ նա իր հովանավորությունը խոստացավ աշխարհի «300 միլիոն մուսուլմաններին», և որը մեծ վրդովմունքով համակեց Գերմանիայի քրիստոնյա շրջաններին, դարձյալ փաստում էր, թե բարոյական որպիսի սնանկություն էր տիրում կայսերական արտաքին քաղաքականության մեջ:

Գերմանական հարաբերությունները հաջորդ տարիներին ևս շարունակում էին մեծ տեմպով զարգանալ: 1889-1913 թթ. Գերմանիայի արտահանումն Օսմանյան պետություն ավելացավ 145 անգամ, իսկ այնտեղից ներկրումը Գերմանիա՝ 32 անգամ: Թեև այդ ընթացքում Անգլիայի հետ օսմանյան առևտրային շրջանառությունը զգալիորեն նվազեց, այնուհանդերձ աշխարհամարտի նախօրեին Անգլիան շարունակում էր մնալ Օսմանյան պետության առևտրային թիվ մեկ գործընկերը, որին հաջորդում էին Ավստրիան, Ֆրանսիան և ապա միայն Գերմանիան {(96) *83-85, 92-93*}:

Սասունի 1904 թ. ապստամբությունը

1904 թ. Սասունը կրկին դարձավ հայդուկային ազատագրական շարժման կենտրոն: Դրան նպաստեցին թուրքական իշխանությունները, որոնք դարասկզբին փորձեցին Սասունի շուրջ զինվորական հենակետեր ստեղծել: Հայ ազգային կուսակցությունները տարբեր վայրերից 11 զինված խմբեր ուղարկեցին Սասուն, որոնցից միայն Թորգոմի ջոկատը բարեհաջող տեղ հասավ: Մյուսները, մարտեր մղելով, մեծ կորուստներ կրեցին: Այնուհանդերձ 1903 թ. Սասունում էին Անդրանիկը, Հրայրը, Սմբատը, Գևորգ Չաուշը և շատ այլ հայդուկապետեր, որոնք 1903 թ. վերջին Անդրանիկի գլխավորությամբ կազմեցին ինքնապաշտպա-

նության խորհուրդ: Նրանցից ոմանք հակված էին ընդհանուր ապստամբության գաղափարին, որը պետք է սկսվեր Սասունով: Խորհուրդը, նկատի առնելով, որ այդ դեպքում կարող էին նոր կոտորածներ լինել, որոշեց սահմանափակվել Սասունով, ինչը Հրայրն էր առաջարկում:

Սասուն ուղարկվեց 10 000-անոց թուրքական մի զորաբանակ, որը քրդական հրոսակների հետ 1904 թ. ապրլիլի 1-ից լայնածավալ հարձակման անցավ: Նրանց դեմ կռվում էին 200 հայդուկներ և մոտ 1000 գյուղացիներ: Չնայած ուժերի խիստ անհավասարությանը, Շենիկի և Գելիգուզանի ուղղությամբ թշնամու առաջին գրոհները հաջողությամբ հետ մղվեցին: Թշնամին համառորեն շարունակում էր գրոհել Գելիգուզանի ուղղությամբ՝ օգտագործելով նաև թնդանոթներ: Մարտերը շարունակվեցին մինչև մայիսի 1-ը: Այդ ընթացքում Սեբաստացի Մուրադը կարողացավ մոտ 6000 գյուղացիների տեղափոխել Մուշի գյուղերը՝ փրկելով նրանց կոտորածից: Թուրքերը, գրավելով Սասունը, ավերեցին 42 գյուղ և սպանեցին մոտ 8000 մարդու:

Սասունի 1904 թ. ապստամբությունը վերստին փաստեց, որ հատվածային պայքարը չէր կարող հաջողություն բերել: Ապստամբության միջոցով տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու մտայնությունը նույնպես հերթական անգամ չարդարացրեց իրեն {(46) *170-171*}:

Երիտթուրքական հեղաշրջումը և կիլիկիահայերի կոտորածները 1909 թ.

19-րդ դարի վերջերին եվրոպայում ուսանող որոշ թուրքեր հանդես էին բերում քաղաքական ակտիվություն՝ ստեղծելով խմբակներ: Դրանցից մեկը 1889 թ. հիմնված «Իթթիհաթ վե Թերաքքը» («Միություն և առաջադիմություն», հայտնի նաև «Երիտասարդ Թուրքիա» անունով) կոմիտեն էր: Այն իր առաջ նպատակ էր դրել փրկել Օսմանյան պետությունը, ինչը, նրա կարծի-

քով, սուլթան Համիդն անկարող էր անել: «Հավասարություն», «ազատություն» «եղբայրություն» և այլ ազատախոհական կարգախոսներով կոմիտեն ձեռք բերեց հայ, հույն, արաբ, հրեա և օսմանյան լծի տակ գտնվող այլ ազգերի քաղաքական շրջանների աջակցությունը: Նրանց հետ համագործակցելով՝ երիտթուրքերը 1908 թ. հուլիսի 23-ին կազմակերպեցին զինված հեղաշրջում՝ զավթելով իշխանությունը: Սուլթանը ստիպված եղավ վերականգնել 1876 թ. սահմանադրությունը և նշանակել խորհրդարանական ընտրություններ: Երկիրը վերածվեց սահմանադրական միապետության: Հայերը ստացան 12 պատգամավորական մանդատ {(127) *177*}:

Երիտթուրքական «հեղափոխությունն» ամենուր, այդ թվում՝ նաև Կիլիկիայում մեծ ոգևորություն էր առաջացրել հայերի մեջ: Դպրոցներում, հասարակական վայրերում կազմակերպվում էին ներկայացումներ՝ Կիլիկիայի հայկական թագավորությանը վերաբերող թեմաներով: Միաժամանակ բորբոքվում էր մահմեդականների ատելությունը հայերի դեմ, որոնց նրանք մեղավոր էին համարում հեղափոխության և իրենց արտոնություններից զրկվելու համար: Հայերի հանդեպ թշնամանք հրահրելու հարցում մեծ դեր ունեին նահանգապետ Ջևադ բեյը, զորքերի հրամանատար Մ. Ռեմզի փաշան, որը նախկինում զեյթունցիներից պարտություն էր կրել, ինչպես և նրանց ողջ վարչախումբը: Աղանայում տպագրվող «Իթթիհադալ» թերթը նույնպես մեծապես նպաստում էր հայերի դեմ մահմեդականների մոլեռանդությունը հրահրելուն՝ տարածելով լուրեր այն մասին, թե հայերը մտադիր են վերականգնել Կիլիկիայի հայկական պետականությունը: Նահանգի վարչախումբը, նախապատրաստելով կոտորածը, նահանգային զինապահեստից նաև զինվորական հրացաններ էր բաժանել մահմեդականներին: Պակասում էր առիթը՝ կոտորածը սկսելու համար, որը չուշացավ:

1909 թ. ապրիլի 13-ին Աբդուլ Համիդ II-ն իր կողմնակիցների հետ Կ. Պոլսում կազմակերպեց խռովություն՝ կարճ ժամանակ

կրկին տիրանալով իշխանությանը: Նույն օրը սուլթանը, ի թիվս երիտթուրք այլ պաշտոնյաների, պաշտոնազրկեց նաև Ադանայի ղեկավարներին: Վերջիններս դա օգտագործեցին՝ հայերի կոտորածներ սանձազերծելու և մեղքը սուլթանի վրա բարդելու համար: Ապրիլի 14-ին Ադանայում մոտ 20 000-անոց մահմեդական զինված ամբոխը, սպանելով շուկայում գտնվող հայերին ու թալանելով նրանց կրպակները, գրոհեց հայկական թաղամասի վրա: Այնտեղ գտնվող հայերը, որոնք նույնպես զինված էին, դիմադրեցին՝ ետ շպրտելով ամբոխին: Հաջորդ օրը վերջինիս միացան քաղաքի կայազորի կանոնավոր զորամասերը, որոնց անձնակազմը մեծ մասամբ նահանգում էր հավաքագրվել: Հայկական թաղամասի վրա գրոհներն անընդմեջ շարունակվեցին 3 օր, որից հետո միջամտեց նահանգապետը: Բանակցությունների ժամանակ, որոնց մասնակցում էին նաև անգլիական և ֆրանսիական հյուպատոսները, նահանգապետը հայերից պահանջեց հանձնել զենքերը՝ խոստանալով, որ այդ դեպքում թաղամասն այլևս հարձակման չի ենթարկվի: Հայերը հանձնեցին իրենց մոտ գտնվող զենքերի մեծ մասը: Առաջին կոտորածի մեկնարկից 10 օր անց Ադանա եկան Դարդանելի կայազորի երկու գումարտակներ, որոնց այնտեղ էր ուղարկել երիտթուրքական կառավարությունը: Դրանք տեղակայվեցին հայկական թաղամասի մերձակայքում: Կոտորածը վերսկսելու համար սադրանքի նոր սցենար կազմակերպվեց: Ըստ Պ. Ռոհրբախի, որոշ անձինք սողոսկել էին գումարտակների հարևանությամբ գտնվող՝ լքված հայկական տները և այնտեղից կրակեցին գումարտակների վրա: Այդ նույն ժամանակ հայտնվեցին սադրիչներ, որոնք գումարտակներին տեղեկացրին, թե կրակ բացողները հայեր են {(151) *152*}: Անմիջապես սկսվեց հարձակումն անպաշտպան հայկական թաղամասի վրա, որի բնակիչները զանգվածաբար սպանդի ենթարկվեցին, իսկ նրանց տները թալանվեցին ու հրկիզվեցին: Սպանդի հետ մեկտեղ զանգվածային բռնություններ էին իրականացվում կանանց և երեխաների նկատմամբ:

Հայերի մի մասը փախավ ֆրանսիական ճիզվիտների և ամերիկյան առաքելության շենքերը, որոնք սկզբից ևեթ ապաստան էին տվել հազարավոր հայերի: Թուրքական զորամասերը գրոհեցին նաև ճիզվիտների հաստատության վրա, սպանեցին այնտեղ գտնվող հազարավոր մարդկանց և ավերեցին ու հրկիզեցին շենքը: Ամերիկյան առաքելության երկու անդամներ նույնպես գնդակահարվեցին, բայց անգլիական հյուպատոսին (որը ևս վիրավորված էր) հաջողվեց փրկել հաստատությունն ու այնտեղ պատսպարված մի քանի հազար մարդկանց: Հույն գործարանատեր Թրիփանին նույնպես փրկեց բազմաթիվ հայերի՝ իր գործարանում տեղավորելով նրանց: Փրկվեցին նաև նրանք, ովքեր, մագլցելով գերմանա-լևանտական բամբակի ընկերության շրջապարիսպը՝ հայտնվեցին դրա տարածքում:

1909 թ. օգոստոսին կատարվածն ուսումնասիրելու համար Ադանա մեկնած Ռոհրբախը վկայում էր, որ ավերված քաղաքում վերականգնման ոչ մի աշխատանք չէր կատարվել, և նույնիսկ դիերը դեռ դուրս չէին բերվել քաղաքի փլատակների տակից: Եթե Ադանա քաղաքում հիշյալ պատսպարումների շնորհիվ միայն շուրջ 6000 մարդ սպանվեց, այդ թվում մոտ 1000-ը՝ դպրոցի շենքում, ապա գյուղերում կոտորածին զոհ դարձավ բնակչության մեծագույն մասը: «Նախկինում բարեկեցիկ Ադանայում այժմ ավերակներից բացի ոչինչ չկա,– գրում էր Տարսոնի ամերիկյան առաքելության ղեկավար դր. Խրիստիեն, որն այդ օրերին մի ուղևորություն էր կատարել Տարսոնից Մարաշ:– Այն նմանվում է Բոմբեյի պատկերներին» {(151) *156*}: Ըստ նրա հաղորդման՝ Աբդողլու գյուղում սպանվել են բոլոր բնակիչները, բացի 4-5 երեխաներից: Նույնը՝ Ինջիրլիկ գյուղում, որի բնակիչների մեծ մասին կացիններով էին սպանել: Այդ գյուղից մի քանի կանայք ու երեխաներ կարողացել էին փախչել Ադանա և այնտեղ են սպանվել: Մսիսում կենդանի էին մնացել միայն 2 դարբիններ, որոնց կարիքը մահմեդականներն ունեին: Նրանք ստիպված են եղել իսլամ ընդունել: Այդ գյուղում մի խումբ կանայք, որոնց մարդասպանները չէին

սպանել՝ կոտորածն ավարտելուց հետո միմյանց միջև բաժանելու նպատակով, անարգանքից խուսափելու համար նետվել են գետը: Աղանայից 25 մղոն հեռավորության վրա գտնվող հայաշատ Համիդիե գավառակում կոտորածը տևել էր 3 օր, և կենդանի էին մնացել միայն 400 այրիներ ու որբեր:

Օսմանիե քաղաքում, որը գտնվում էր Աղանայից մոտ 55 մղոն հեռավորության վրա, կոտորածը տեղի ունեցավ ապրիլի 2/15-ին: Այնտեղ համատարած կողոպուտից հետո միայն մի հայի տուն զերծ մնաց հրկիզումից, քանի որ մզկիթի մոտ էր գտնվում: Տեղացիների հետ սպանվեցին նաև աշխատանքի համար հարևան լեռնային գյուղերից այնտեղ եկած 304 մարդիկ: Գյուղի 45 ընտանիքներ ապաստանել էին տեղի հայ առաքելական եկեղեցում: Այն կրակի մատնվեց, և նրանց մեծ մասը ողջակիզվեցին, իսկ նրանք, ովքեր կարողացան եկեղեցուց դուրս գալ, սպանվեցին փողոցում: Ալբիստանցի պաշտոնյա Զաբրի էֆենդին 3 օր կարողացավ հարձակումներից զերծ պահել հեռագրատունը, որտեղ պատսպարվել էին 18 հայեր: Ի վերջո, սակայն, մարդասպան ամբոխը ներխուժեց այնտեղ: Նրանք «նախ հանեցին զոհերի աչքերը, իսկ հետո նրանց կտոր-կտոր արեցին» {(151) *157-158*}: Ամբողջ Օսմանիեյում կենդանի մնաց միայն 17 հայ, որոնք, ինչպես Զեբելի՝ ընդհանուր թվով 30 վերապրածները, բռնի իսլամացվեցին: Բաղչե գյուղում, որը գտնվում էր Ամանուսի լեռներում, 850 հայերից կենդանի մնացին 500-ը, այդ թվում՝ միայն 15 տղամարդիկ, որոնց մեծ մասը վիրավոր էր: Թուրքերը գյուղի կանանց հավաքել էին մզկիթում և 3 օր շարունակ արնախառը ջուր էին տվել: Օյքեշ անունով մի թուրք այնտեղ կացնով սպանել էր 45 հայի: Ֆընտրճագում սպանվել էր բնակիչների մեծ մասը, այդ թվում՝ ավելի քան 100 մարաշցիներ, որոնք գնում էին դաշտավայր՝ աշխատանք գտնելու:

Այդպիսին էր պատկերը Աղանայի նահանգի գրեթե բոլոր բնակավայրերում: Չնայած Մարաշը զերծ մնաց հրկիզումից, այնուհանդերձ 600 մարաշցիներ սպանվեցին Աղանայի դաշտավայ-

րում: Կոտորածներ եղան նաև Հալեպի նահանգի որոշ վայրերում, մասնավորապես Անտիոքում ու դրա շրջակայքում:

Հայերը սպանդի չենթարկվեցին միայն այն վայրերում, որտեղ դիմեցին ինքնապաշտպանության: Դորթյոլի բնակիչները, Միհրան Մելքոնյանի ղեկավարությամբ մոտ 2 շաբաթ հերոսաբար դիմադրելով, փրկվեցին: Հաճընը նույնպես 12 օր հաջողությամբ պաշտպանվեց և զերծ մնաց կոտորածից: Դիմադրական գործողություններ եղան նաև այլ վայրերում:

Երիտթուրքերը փորձեցին կոտորածների մեղքը բարդել աբդուլհամիդյան շարժման վրա, որը նրանք ճնշեցին ապրիլի 12-13-ին՝ Համիդին արտաքսելով Կ. Պոլսից և սուլթան հռչակելով նրա եղբորը՝ Մեհմեդ V Ռեշադին: Ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշան, որը հայտնի էր իր հակահայ կեցվածքով, պնդում էր, որ հետաքննության արդյունքում հայերը չպետք է անմեղ ճանաչվեն: Ըստ այդմ՝ ձերբակալվեցին 219 հայեր և 158 մահմեդականներ: Ձերբակալված հայերի մեծ մասը մահապատժի ենթարկվեց, իսկ մահմեդականների մեծ մասն ազատվեց:

Օսմանյան պառլամենտը, որտեղ հարցի քննարկումներ ծավալվեցին, Հակոբ Պապիկյանին և Յուսուֆ Քեմալ բեյին լիազորեց՝ մեկնելու Կիլիկիա և ուսումնասիրելու տեղի ունեցածը: Պապիկյանը, հավաքելով բազում փաստեր, կազմեց մի տեղեկագիր, որում փաստարկվում էր օսմանյան իշխանությունների մեղավորությունը: Կ. Պոլիս վերադառնալուց հետո, սակայն, նախքան տեղեկագիրը պառլամենտին ներկայացնելը նա «հանկարծամահ» եղավ:

Երիտթուրքերը դրանից հետո իրենց «անկողմնակալությունը» ցուցադրելու համար պաշտոնազրկեցին Ֆերիդ փաշային և ներքին գործերի նախարար նշանակեցին Թալեաթ բեյին: 1909 թ. հուլիսի 31-ին/օգոստոսի 12-ին երիտթուրքական կառավարությունը նաև մի պաշտոնական շրջաբերական ուղարկեց բոլոր նահանգապետերին, որում արձանագրվում էր հայերի անմեղությունը: Մասնավորապես դրանում նշվում էր, թե համիդյան «աբսոլյու-

տիզմի» օրերին «հայկական կուսակցությունների կողմից իրենց ժողովրդի անկախացմանն ուղղված հեղափոխական փորձերը» որևէ քննադատության չեն կարող ենթարկվել, քանի որ խոսքը վերաբերում էր «բռնապետական կառավարության անտանելի ճնշումներից իրենց ժողովրդի ազատագրմանը»: Հայերը «եռանդուն կերպով մասնակցել են «Թուրքիայի քաղաքական ազատության համար» մղվող պայքարին և ցուցաբերել են «նվիրվածություն ու հավատարմություն սահմանադրական թուրքական պետության հանդեպ»: Ուստի փաստերից անտեղյակ անձանց «սխալ կարծիքը» «հայերի՝ պետությունը վտանգող քաղաքական ծրագրերի վերաբերյալ լիովին անհիմն է» {(117) *135-136*}:

Այդ ամենով հանդերձ՝ փաստերը հիմնավորապես ապացուցում էին կոտորածների հարցում երիտթուրքերի վճռորոշ դերակատարությունը: Դա անառարկելի էր համարում նաև Ռոհրբախը: «Ադանայի կոտորածներին թուրքական կանոնավոր բանակի էլիտան համարվող եվրոպական զորամասերի մասնակցությունը,– գրում էր նա,– բոլոր դեպքերում ամենասև խարանն է, որ երիտթուրքական բանակը մինչ այժմ դրել է իր վահանի վրա» {(151) *153*}:

Համիդյան հեղաշրջման օրերին Գրիգոր Զոհրաբը, իրեն վտանգելով, 14 օր շարունակ իր տանն էր թաքցրել արտգործնախարար Հալիլ բեյին, մինչև խռովությունը ճնշվեց: Մահմուդ Շևքեթ փաշան, Թալեաթ բեյը, երիտթուրք այլ պարագլուխներ նույնպես թաքնվել էին իրենց հայ ընկերների տներում ու հայկական հաստատություններում, որոնցից էր «Ազատամարտ» թերթի խմբագրատունը {(6) *XX*}: Այդ օգնությունը նրանք փոխադարձեցին Կիլիկիայի հայերի կոտորածներով, որոնց զոհերի թիվը, ըստ Ռոհրբախի, հասնում էր շուրջ 25 000-ի: Այլ ուսումնասիրությունների համադրումով պարզ է դառնում, որ զոհվել են շուրջ 30 000 հայեր:

Հայկական հարցի վերաբացումը Առաջին աշխարհամարտի նախօրեին

1912 թ. Օսմանյան պետության և Բալկանյան երկրների միջև ծագած պատերազմը հայկական շրջաններին հույս ներշնչեց, որ հնարավոր է կյանքի կոչել խոստացված, բայց չիրականացված բարենորոգումները: Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը և հայ քաղաքական կառույցները դիմեցին տերություններին՝ այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկելու խնդրանքով: Եգիպտահայ գործիչ Պողոս Նուբարը կաթողիկոսի կողմից լիազորվեց՝ Եվրոպայում հանդես գալու որպես իր ներկայացուցիչ: Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը նույնպես վճռեց տերությունների ուշադրությունը բևեռել հարցի վրա: Նրա առաջարկով Կ. Պոլսի հայոց պատրիարք Հ. Արշարունին այդ նպատակով հանդիպումներ ունեցավ տերությունների դեսպանների հետ:

Ռուսական կառավարությունը հանդես բերեց նախաձեռնություն՝ Կ. Պոլսի իր դեսպանության թարգմանիչ Ա. Մանդելշտամին հանձնարարելով 61-րդ հոդվածի և պատրիարքարանի ներկայացրած նյութերի հիման վրա կազմել բարենորոգումների նախագիծ: Ըստ Մանդեշտամի նախագծի, որը նա 1913 թ. հունիսի 8-ին ներկայացրեց իր կառավարությանը, հայկական վեց նահանգները (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի) վերակազմվելու էին մեկ նահանգի: Նահանգապետը պետք է լիներ օսմանահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը տերությունների առաջարկով: Նա իր ձեռքում էր կենտրոնացնելու նահանգի գործադիր իշխանությունը և վերահսկելու էր ոստիկանությանն ու զորքին: Նահանգի ներկայացուցչական ժողովը պետք է բաղկանար հավասար թվով քրիստոնյաներից ու մահմեդականներից: Այդ համաչափությունը պետք է գործեր նաև վարչական, դատական և ուժային մարմիններում: Նահանգում պաշտոնական լեզուներ էին լինելու թուրքերենը, հայերենը և քրդերենը: Ազգություններից յուրաքանչյուրը

կարող էր իր միջոցներով հիմնել դպրոցներ: Համիդեական հեծելազորը պետք է լուծարվեր: Զինապարտները խաղաղ պայմաններում իրենց ծառայությունն անցկացնելու էին նահանգի տարածքում: Այնտեղ արգելվում էր Բալկաններից ներգաղթած մահմեդականների բնակեցումը, իսկ հայերից խլված հողերը վերադարձվելու էին նրանց, կամ դրանց դիմաց տրվելու էր փոխհատուցում {(38) *140*}:

Ռուսական նախագծի քննարկման համար կազմվեց մի հանձնաժողով՝ բաղկացած տերությունների դեսպանությունների մեկական ներկայացուցիչներից: Բարենորոգումների հարցում տերություններից ամենաշահագրգիռը Ռուսաստանն էր: Չնայած Գերմանիան դեմ էր բարենորոգումներին, բայց վճռեց ակտիվ մասնակցել դրանց քննարկմանը՝ պաշտպանելով թուրքական կառավարության շահերը: Գերմանիայի քաղաքական շրջաններում միաժամանակ կշռադատում էին Օսմանյան պետության մասնատման դեպքում դաշնակից թուրքերին հայերով փոխարինելու հարցը: Ինչպես Մանդելշտամն էր գրում, «Մի կողմից Գերմանիան կամենում էր հանդես գալ՝ որպես Թուրքիայի անշահախնդիր բարեկամ, մյուս կողմից նա նախազգում էր Օսմանյան պետության մոտակա փլուզումը և ուզում էր շահել հայերի համակրանքը» {(132) *143*}:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմը, որն ամենևին հայանպաստ գործիչ չէր, 1913 թ. փետրվարի 24-ին իր կառավարությանն ուղարկած հեռագրում նշում էր, որ Օսմանյան պետության տրոհման դեպքում հայերին մեծ ապագա էր սպասվում, և առաջարկում էր Գերմանիայի մամուլին դրդել՝ հայանպաստ հասարակական կարծիք ձևավորելու: «Գերմանական մամուլը,– գրում էր նա,– պետք է հրաժարվի հայկական ամեն բանի հանդեպ իր մինչայժմյան ժխտողական դիրքորոշումից և չափավոր ու լրջմիտ կեցվածքով իր շահագրգռվածությունը ցուցաբերի հայերի ցանկությունների հանդեպ» {(30) *201*}: Ուշագրավ է,

որ դրանից կարճ ժամանակ անց Գերմանիայի պաշտոնական մամուլը լցվեց հայ ժողովրդի մասին գովեստներով, որոնցում չէին թերանում նաև ավանդաբար պրոթուրքական և հակահայ կողմնորոշում ունեցած շատ գործիչներ: Նրանցից Է. Յեկը, օրինակ, կոչ էր անում մերձենալ հայերին, քանի որ նրանք Արևելքում ունեին խիստ կարևոր տնտեսական դերակատարություն: Ա. Դիրրը և շատ այլ հեղինակներ նույնպես հայերին գովանաբանում էին՝ որպես «Մերձավոր Արևելքի ամենատաղանդավոր, աշխատասեր և մշակութապես զարգացած ժողովրդին» {(96) *152*}: Դեսպանաժողովն իր աշխատանքը սկսեց հուլիսի 3-ին Կ. Պոլսի Ենիքյոյ արվարձանում: Բանակցություններում գլխավոր հակամարտ կողմերը Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը և Վանգենհայմն էին: Վերջինս, հայկական «այլընտրանքն» աչքի առաջ ունենալով հանդերձ, ջանում էր թուլացնել ռուսական նախագիծը: Բանակցությունների առաջին փուլն ավարտվեց հուլիսի 24-ին՝ առանց համաձայնության գալու: Դրանք ընդհատումներով շարունակվեցին նաև հաջորդիվ: 1913 թ. օգոստոսի 1-ին, երբ Լեփսիուսն Ուրֆայից վերադառնալիս ժամանեց Կ. Պոլիս, երկու դեսպանների տարակարծություններն այն աստիճան էին սրվել, որ հայկական կողմը մտահոգված էր, թե բանակցությունները կձախողվեն: Նա միջամտեց և կարողացավ փոխըմբռնում ձևավորել: Սեպտեմբերին, երբ հայտնի դարձավ, որ Վանգենհայմը դարձյալ կարծրացրել է իր դիրքորոշումը, Լեփսիուսի աջակցությամբ Պ. Նուբարը Բեռլինում հանդիպեց Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Ա. Ցիմերմանին: Նա կարողացավ համոզիչ փաստարկներով Ցիմերմանին դրդել՝ ազդելու Վանգենհայմի վրա, որպեսզի վերջինս Ռուսաստանի հետ փոխզիջման գնա: Գերմանիայի կառավարությունը հույս ուներ այդ փոխզիջմամբ նաև մեղմել Ռուսաստանի վրդովմունքը, որ առաջացել էր գերմանական նոր ռազմական առաքելություն Օսմանյան պետություն ուղարկելու առնչությամբ:

Ի վերջո դեսպանները եկան համաձայնության: Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանության հավատարմատար Կ. Գուլկևիչը և մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) ստորագրեցին բարենորոգումների ծրագիրը, որը զգալիորեն տարբերվում էր Մանդելշտամի ծրագրից: Ի թիվս այլ փոփոխությունների, մեկի փոխարեն կազմվելու էին երկու նահանգներ: Դրանցից մեկը, որի կենտրոնը լինելու էր Վանը, ներառելու էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Էրզրումի, Սեբաստիայի և Տրապիզոնի նահանգները՝ Էրզրում կենտրոնով: Երկու նահանգները կառավարվելու էին եվրոպացի վերատեսուչների կողմից, որոնց նշանակելու էր Բ. Դուռը: Նրանք կարող էին զորք ստանալ միայն «անհրաժեշտության դեպքում»: «Համիդիե» գնդերը չէին լուծարվելու, այլ վերածվելու էին պահեստային հեծելազորի:

Վերատեսուչներ նշանակվեցին նորվեգացի Ն. Հոֆը և հոլանդացի Լ. Վեստենենկը, սակայն ծրագիրը չգործադրվեց: Օսմանյան կառավարությունը, օգտագործելով Առաջին աշխարհամարտի բռնկումը, այն ոչ միայն դե ֆակտո չեղյալ համարեց, այլև ձեռնամուխ եղավ Հայկական հարցը հայ ժողովրդի բնաջնջման միջոցով լուծելու հրեշավոր ծրագրի իրականացմանը {(46) *176*}:

Ցեղասպանության գագաթնափուլը՝ Մեծ եղեռնը

Հայերի պարբերական հետապնդումներն աշխարհամարտի առաջին ամիսներին

«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը դեռևս 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում կայացած ժողովում ընդունեց մի շարք ծրագրային որոշումներ, որոնցով պանիսլամիզմը և պանթուրքիզմը դառնում էին կուսակցության պաշտոնական ուղենիշ: Ժողովում վճռվեց աջակցել Կովկասից և Թուրքեստանից մուսուլմանների ներգաղթին և նրանց բնակության համար նախատեսել տարածքներ, իսկ քրիստոնյաներին թույլ չտալ սեփա-

կանություն ձեռք բերել: Արձանագրվում էր Թուրքիայի բոլոր հպատակների թուրքացման անհրաժեշտությունը, ինչը կարող էր միայն «զենքի օգնությամբ» տեղի ունենալ: Պետությունը պետք է լիներ մահմեդական, ցանկացած այլ կրոնական պրոպագանդա պետք է ճնշվեր:

Ժողովը նաև հաստատեց, որ թուրքերենի տարածումը մահմեդական գերիշխանությունն ապահովելու և մյուս տարրերին ձուլելու գլխավոր միջոցներից մեկն է: Ընդգծելով, որ պետության գոյությունը կախված էր երիտթուրքական կուսակցության ուժեղ լինելուց և «անտագոնիստական գաղափարների» ճնշումից, ժողովը միաժամանակ ընդգծում էր բոլոր կարևոր պաշտոնները բացառապես մահմեդականների ձեռքում պահելու անհրաժեշտությունը: Այլ ազգերին չպետք է ինքնակազմակերպման իրավունք տրվեր, քանի որ «ապակենտրոնացումը և ինքնավարությունը թուրքական պետության հանդեպ դավաճանություն» էին {(6) *XVII*}: Այս որոշումներում արտացոլված էին այն «գաղափարական» հիմքերը, որոնցով երիտթուրքական վարչակազմը պետք է ձեռնամուխ լիներ հայ ժողովրդի պարբերական զանգվածային հետապնդումներին, իրավազրկմանը և բնաջնջմանը: Դրա պատեհ առիթն ընձեռեց Առաջին աշխարհամարտը:

Դեռ նախքան Օսմանյան պետության՝ Եռյակ դաշինքի կողմում պատերազմի մեջ մտնելը այնտեղ ընդհանուր զորահավաք հայտարարվեց: Զորակոչվեցին նաև 18-ից 45 տարեկան հայ տղամարդիկ: Հայ քաղաքական ամենաազդեցիկ ուժը՝ ՀՅԴ-ն, 1914 թ. հուլիսի կեսերին Էրզրումում տեղի ունեցած ութերորդ ընդհանուր ժողովում որոշեց, որ պատերազմի դեպքում յուրաքանչյուր պետության քաղաքացի պետք է կատարի իր պարտականություններն այդ պետության նկատմամբ: Էրզրում էին մեկնել նաև երիտթուրք պարագլուխներ Բ. Ճաքիր և Նաճի բեյերը, որոնք փորձում էին դաշնակցությանը համոզել՝ ռուսական տիրապետության տակ գտնվող իրենց հայրենակիցներին դրդելու ապստամ-

բության: Նրանց առաջարկը ժողովում ընդունված որոշման հիման վրա մերժվեց:

Օսմանյան պետության՝ պատերազմի մեջ մտնելու սկզբից եթ ռազմական գործողությունների գոտում սկսվեցին հայ բնակչության հետապնդումները: Կովկասյան ճակատում հարձակման անցած թուրքական զորքերը համիդեական ջոկատների և տեղի մահմեդականների հետ կողոպուտ ու կոտորածներ էին իրականացնում հայկական գրավված բնակավայրերում: Կարսի մարզի Բերդուս և Չուրուք գյուղերում նրանք սպանեցին 1276 հայերի և առևանգեցին 250 կանանց ու աղջիկների: Արդվինում, Արդանուշում և Ճորոխի հովտի այլ բնակավայրերում, որտեղ կոտորածներին մասնակցում էին նաև թուրքերին միացած աջարները, սպանվեցին շուրջ 7000 հայեր: 1915 թ. սկզբներին թուրքերն ու քրդերը կողոպտեցին և ավերեցին Ալաշկերտը, Դիադինն ու շրջակա բնակավայրերը: Կոտորածներ տեղի ունեցան նաև Բայազետում, Ղարաքիլիսայում ու շրջակա գյուղերում: Ալաշկերտ քաղաքի 300 հայ ընտանիքներից փրկվեց միայն 30-ը: Մյուս ընտանիքների տղամարդիկ սպանվեցին, իսկ կանայք ու աղջիկներն առևանգվեցին: Նույնը կատարվում էր նաև գյուղերում: Աբաղայի դաշտի գյուղերում սպանվեցին 2060 հայեր և շուրջ 300 ասորիներ: Այդ ամենի հետևանքով սկսվեց զանգվածային արտագաղթ դեպի ռուսական վերահսկողության տակ գտնվող տարածքներ: 1915 թ. առաջին ամիսներին Արաքսի հովտում կուտակվել էին պատուհասված տարածքների շուրջ 60 000 փախստականներ: Նրանցից շատերն ապրիլին, երբ ռուսական բանակն անցավ հակահարձակման, վերադարձան իրենց բնակավայրերը, իսկ հետո, երբ ռուսները դարձյալ նահանջեցին, կրկին գաղթեցին:

Պատերազմի սկզբում Էնվերի հորեղբայր Խալիլ բեյի հրամանատարությամբ Պարսկաստան ներխուժած թուրքական 20 000-անոց կանոնավոր զորքն ու նրան միացած 10 000 քրդերը կողոպտեցին և ավերեցին Սալմաստի, Ուրմիայի ու շրջակա տա-

ռածքների քրիստոնյաների բնակավայրերը: Մեծ թվով հայեր և ասորիներ սպանվեցին: Այդ գործողություններին մասնակցում էր նաև Վանի նահանգապետ Զևդեթ բեյը, որն Էնվերի փեսան էր:

Երբ կովկասյան ճակատում թուրքական բանակը ծանր դրության մեջ էր, տեղի էին ունենում նաև դասալքություններ, ընդ որում՝ թուրք դասալիքների թիվը շուրջ հինգ անգամ ավելի էր, քան հայերինը: Իշխանությունները առանձնահատուկ հետևողականությամբ փնտրում էին հայ դասալիքներին, և եթե չէին գտնում նրանց, հրկիզում էին նրանց տները և բռնագրավում վարելահողերը: Շուրջկալների ժամանակ տեղի էին ունենում սպանություններ, խոշտանգումներ և բռնաբարություններ: Կատարվում էին տնային խուզարկություններ զենք հայտնաբերելու նպատակով:

Հայերի՝ կամայական և տարերային բնույթ կրող հետապնդումներին շուտով հաջորդեց Օսմանյան ողջ պետությունում հայ ժողովրդի համակարգված բնաջնջումը {(127) *77-81*}:

Բռնագրավումներ

1915 թ. սկզբներին երկրում գրեթե ամենուրեք հայ բնակչությունը մատնված էր ժանդարմերիայի և այլ հրոսակախմբերի կողոպուտին, որը կատարվում էր «ռազմական կարիքների բավարարման» պատրվակով: Զուգահեռաբար տեղի էին ունենում զենքի բռնագրավումներ, որոնք հատկապես սաստկացան մարտին: Ամենուրեք կատարվում էին խուզարկություններ: Կ. Պոլսում զենքի բռնագրավումը տեղի ունեցավ ապրիլի 29-ից մայիսի 9-ը ընկած ժամանակամիջոցում: Այնտեղ իշխանությունները մարդկանց նույնիսկ ստացականներ տվեցին: Մյուս, հատկապես գյուղական բնակավայրերում զենքի բռնագրավումն ուղեկցվում էր անօրինակ կամայականություններով ու դաժանություններով: Շատ դեպքերում զենքի հանձնման վերաբերյալ ո՛չ իշխանությունների կողմից պաշտոնական հայտարարություն էր արվում, ո՛չ էլ ժամանակ էր տրվում, որ դա կամավոր կատարվեր: Ժան-

դարմները գնում էին գյուղերը և պահանջում էին որոշակի քանակությամբ զենքեր: Այդ քանակությունը չապահովելու դեպքում գյուղերի ավագներին և հեղինակավոր հայերին զենք պահելու մեղադրանքով ձերբակալում էին և ենթարկում կտտանքների, որոնք շատ դեպքերում հասցնում էին մահվան: Ժանդարմները նաև հրկիզում էին իրենց զոհերի տներն ու թալանում ունեցվածքը, պատվազրկում էին կանանց ու աղջիկներին: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ անելանելի դրության մեջ հայտնված գյուղացիները հարևան քրդերից զենքեր են գնել, որպեսզի դրանք հանձնեն, և պահանջված քանակությունն ապահովվի: Բիթլիսի նահանգում հայերի պարբերական հետապնդումները սկսվել էին դեռ 1914 թ. աշնանը: Ինչպես այլ վայրերում, այստեղ ևս ժանդարմները ռազմական բռնագրավումների անվան տակ կողոպտում էին ժողովրդին՝ խլելով գրեթե ամբողջ պարենը: Թուրքերը, բացի բանակ զորակոչված հայերից, կատարում էին նաև 20-45 տարեկան տղամարդկանց հավաքագրումներ՝ ճանապարհաշինության և բեռնակրության մեջ ներգրավելու պատճառաբանությամբ: Բեռնակիրները ստիպված էին ձյունածածկ լեռներով ավելի քան 30 կգ քաշով բեռներ տեղափոխել կովկասյան ճակատ: Նրանց մոտ կեսը ճանապարհին զոհ էր դառնում անասելի ծանր պայմաններին և քրդերի հարձակումներին: Հաճախ վերադառնում էր նրանց միայն մեկ քառորդը:

Հայերի զենքերի բռնագրավմանը զուգահեռ տեղի էր ունենում թուրք բնակչության զինումը: Երիտթուրք քարոզիչները միաժամանակ, հայերի ծրագրած «ապստամբության» և նման կեղծ լուրեր տարածելով, մուսուլման բնակչությանը սադրում էին հայերի դեմ {(127) *23-26, 113*}:

Հայ զինվորականության զինաթափումն ու սպանդը

Օսմանյան բանակի հայ զինվորականությունը արիաբար էր մարտնչում ինչպես Դարդանելում, այնպես էլ կովկասյան ճակատում: Դա վկայել է անձամբ ռազմական նախարար Էնվերը: 1915

թ. փետրվարին կովկասյան ձախողված արշավանքից Կ. Պոլիս վերադառնալուց հետո նա Կոնիայի հայ հոգևոր առաջնորդին ուղարկեց մի շնորհակալագիր, որը տպագրվեց «Osmanischer Lloyd» օրաթերթի 1915 թ. փետրվարի 26-ի համարում: « {…} Ես դրա համար Ձեզ հայտնում եմ իմ շնորհակալությունը,– գրում էր նա,– և օգտագործում եմ առիթը՝ Ձեզ հավաստելու, որ օսմանյան բանակի հայ զինվորները պատերազմի դաշտում իրենց պարտականությունները կատարում են բարեխղճորեն, ինչը ես կարող եմ վկայել իմ սեփական փորձառությամբ: Ես խնդրում եմ՝ հայ ազգին, որը հայտնի է կայսերական օսմանյան կառավարության հանդեպ իր լիակատար նվիրվածությամբ, փոխանցել իմ գոհունակությունն ու երախտագիտությունը»:

Էնվերը հայոց պատրիարքին նույնպես հավաստեց իր առանձնահատուկ գոհունակությունը հայ զինվորների արիությունից՝ հաղորդելով, թե ինչպես է Հովհաննես Ջաուշ անունով մի հայ (իսկական անունը՝ Հովհաննես Ակինյան – Ա. Հ.) իր շտաբն ազատել ծայրահեղ ծանր դրությունից: Միաժամանակ, սակայն, նա ավելացնում էր, որ ինքը «հայերի արևելյան կենտրոններում ամենաչնչին իսկ միջադեպի դեպքում դաժան միջոցառումների» կդիմի {(6) *XVI-XVII*}:

Էնվերը և երիտթուրքական վարչակարգը, սակայն, կարիք չունեին որևէ միջադեպի՝ հայ ժողովրդի ցեղասպանությանը ձեռնամուխ լինելու համար: Այն տեսակետը, թե դրա համար շարժառիթ ծառայեց Վանի հայերի ինքնապաշտպանությունը, անհիմն է, քանի որ ցեղասպանության համակարգված գործողությունը ավելի վաղ էր սկսվել, և կառավարող «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի՝ դրան վերաբերող որոշումն էլ 1915 թ. փետրվարին արդեն կայացված էր: Դա փաստում են, օրինակ, կոմիտեի Հալեպի պատվիրակ Ջեմալ բեյին կենտրոնից 1915 թ. փետրվարի 18-ին և մարտի 25-ին ուղարկված երկու նամակները, որոնցից առաջինում նշված է. «Եթե անցյալի բոլոր պատմական հանգամանքները մանրազնին

կերպով քննենք, պիտի տեսնենք, որ Կոմիտեի հայրենասիրական ջանքերի ճանապարհի վրա հայտնված բոլոր փոթորիկները հայերի ցանած խռովության սերմերի արդյունքն են: {…} Կոմիտեն հայրենիքը այս անիծյալ ցեղի ցանկությունից փրկելու և այս մասին օսմանյան պատմությանը քսվելիք արատի պատասխանատվությունը իր հայրենասեր ուսերի վրա առնելու որոշում է կայացրել: Վրեժի շարքերով լեցուն անցյալի նվաստությունն ու դառնությունները մոռանալու անկարող Կոմիտեն, իր ապագայի մասին հուսալից լինելով, որոշել է Թուրքիայում ապրող բոլոր հայերին, առանց մի անհատի ողջ թողնելու, ոչնչացնել և այս մասին կառավարությանը ընդարձակ իրավասություններ է տվել: Ջարդի կարգադրության մասին կառավարությունը պիտի նահանգապետերին և բանակի հրամանատարությանը պետք եղած բացատրությունները տա: Իթթիհաթ և Թերաքքըի բոլոր պատվիրակներն իրենց գտնված տեղերում պետք է այս խնդրի հետապնդմամբ զբաղվեն: Չպիտի թույլատրվի, որ որևէ հայ օգնության և պաշտպանության արժանանա» {(10) *129-133*}:

Երկրորդ՝ մարտի 25-ին ուղարկված նամակում կրկնվում էր վերոնշյալը, և միաժամանակ պարզ է դառնում, որ Կոմիտեն մտադիր էր հայերին բնաջնջելուց հետո զբաղվել նաև «մյուսներով» (անշուշտ, նկատի են առնվում հույները և ասորիներ, թերևս նաև արաբները – Ա. Հ.): «Ծանոթ անձնավորությունների (հայերի) մասին եղած ձեռնարկները մինչև չարդյունավորվեն, մյուսներով զբաղվելի ճիշտ չէ»,– նշված էր դրանում {(10) *135*}:

1915 թ. փետրվարի 27-ին Էնվերը բանակային հրամանատարությանն ուղարկեց մի ծածկագիր, որում նա, ի գիտություն հաղորդելով հայ ժողովրդի բնաջնջման վերաբերյալ կայացված վճիռը, տեղեկացնում էր նաև հայ զինվորականության նկատմամբ կատարվելիք գործողությունների մասին: «Ներկա կացության բերումով, կայսերական հրամանով որոշված է հայ ցեղի ամբողջական ոչնչացումը: Նրանց վերաբերյալ պետք է կատարվեն հետևյալ գործողությունները. 1. Մինչև հինգ տարեկան երե-

խաներից բացի, օսմանյան հպատակ եղող և երկրի մեջ գտնվող՝ բոլոր բաշիբոզուկները (ոչ զինվորականները), քաղաքից դուրս հանվելով, պետք է սպանվեն: 2. Կայսերական բանակների մեջ ծառայող բոլոր հայ անհատները, առանց որևէ դեպքի տեղի տալու, իրենց զորաբաժիններից զատվելով, բոլորի աչքից հետո ծածուկ վայրերում պետք է գնդակահարվեն: 3. Բանակում գտնվող հայ սպաներն էլ իրենց պատկանած զորախմբերի բանակատեղիում պիտի բանտարկվեն, մինչև նրանց մասին նոր հրահանգի ի հայտ գալը» {(10) *232*}:

Փետրվարի վերջից սկսվեց օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականների զինաթափումը, որն ավարտվեց մարտի կեսին: Նրանք ընդգրկվեցին ճանապարհաշինական և բեռնակիր գումարտակներում, իսկ այնուհետև, աշխատանքի պատրվակով մաս-մաս ուղարկվելով ամայի վայրեր, զանգվածաբար սպանվեցին: Բազմաթիվ են վկայությունները Ուրֆայի մերձակայքում (Կարաքյոփրյուում և Քուդեմայում), Էրզրում-Երզնկա, Դիարբեքիր-Խարբերդ հատվածներում և այլ վայրերում աշխատանքային գումարտակների ոչնչացման մասին:

Օսմանյան բանակում ծառայող, այնուհետև զինաթափված և սպանված հայ զինվորականների թվի վերաբերյալ կարծիքները տարբերվում են միմյանցից: Ըստ պատմաբան Լ. Չորմիսյանի՝ աշխարհամարտի ժամանակ օսմանյան բանակում «ո՛չ թե պատերազմական ճակատին վրա […], այլ թիկունքին ամէնէ թապուրներուն մէջ» սպանվել են շուրջ հայ 250 000 հայ զինվորականներ {(50) *360*}:

Հայ մտավորականության սպանդը

Թուրքական կառավարությունը հայերի զանգվածային տեղահանությունը սկսելուց առաջ հայ զինվորականության ոչնչացմանը զուգահեռ ձեռնամուխ եղավ նաև ժողովրդին գլխատելու գործին: 1915 թ. ապրիլի 11/24-ին Կ. Պոլսում ձերբակալվեցին 600

հայ մտավորականներ՝ գրողներ, արվեստագետներ, հասարակական-քաղաքական գործիչներ, իրավաբաններ, բժիշկներ, ուսուցիչներ և այլք: Ձերբակալվածները, որոնց թվում էին Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Խաչատուր Մալումյանը (Էդվարդ Ակնունի), Ռուբեն Սևակը, Երուխանը և այլք, ուղարկվեցին դեպի Չանկրի, Չորում և Այաշ, և գրեթե բոլորը սպանվեցին: Հայ երևելի գործիչների ոչնչացման գործողությունը չէր սահմանափակվում Կ. Պոլսով: Այն սկսվել էր դեռևս ապրիլի 21-ին և անընդմեջ շարունակվեց մինչև մայիսի 19-ը՝ ընդգրկելով երկրի գրեթե բոլոր հայաշատ բնակավայրերը: Իզմիրում, օրինակ, ձերբակալվեցին 100, Պարտիզակում՝ 80, Բրուսայում՝ 40, Պանդերմայում՝ 40, Բալըքեսիրում՝ 30, Ադափազարում՝ 80, Մարզվանում՝ 20, Էրզրումում՝ 600, Սեբաստիայում՝ 500, Շապին-Գարահիսարում՝ 50, Խնուսում՝ 25, Դիարբեքիրում՝ 800, Կեսարիայում՝ 200 երևելիներ, որոնք, տարբեր ուղղություններով վտարվելով, սպանվեցին: Նույնը տեղի ունեցավ Բաբերդում, Յոզգաթում, Մարաշում, Ուրֆայում և այլ վայրերում {(127) *21*}:

Ինչպես իրավամբ նշում է Լեփսիուսը, այդ ընդհանուր գործողության նպատակն էր հայ ժողովրդին զրկել իր առաջնորդներից և խոսնակներից, որպեսզի աքսորումը լռելյայն և առանց առարկության իրականանա: Դա նաև նպաստելու էր այն բանին, որ միջազգային հանրությունը չիրազեկվի տեղի ունեցողի մասին: Արտաքսված մտավորականներից միայն փոքրաթիվ անձինք կարողացան գոյատևել: Մեծն երգահան Կոմիտասը, չկարողանալով տանել հայ ժողովրդի հանդեպ իրականացվող եղեռնագործությունները, խելագարվեց:

1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսում կախաղան բարձրացվեցին հնչակյան կուսակցության 20 հայտնի գործիչներ, այդ թվում՝ Փարամազը (Մատթեոս Սարգսյան): Պառլամենտականներ Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան) և Գ. Ջոհրաբը, որոնք սերտ հարաբերություններ ունեին Թալեաթի ու այլ երիտթուրք պարագլուխների հետ, սկզբում դեռ ազատության մեջ էին և փորձում էին

այդ կապերն օգտագործել՝ ձերբակալություններն ու նախճիրը կասեցնելու համար: Մայիսի 12-ին, երբ Վարդգեսն այցելեց Թալեաթին նրա բնակարանում, վերջինս նրան ասաց. «Մեր թուլության օրերին դուք նստել էիք մեր կոկորդում և հայկական բարեկորոգումների հարցն էիք բարձրացնում: Ուստի մենք մեր այժմյան նպաստավոր դրությունը կօգտագործենք՝ այնպես ցրիվ տալու ձեր ժողովրդին, որ դուք հիսուն տարի ձեր գլխից հանեք բարեկորոգումները»: Վարդգեսի հարցին՝ «Ուրեմն դուք մտադիր եք շարունակե՞լ Աբդուլ Համիդի գործը», Թալեաթը պատասխանում է՝ «այո» {(127) *21, 195-196*}:Մայիսի 21-ին, երբ Վարդգեսն այցելեց Կ. Պոլսի ոստիկանության պետ Բեդրի բեյին՝ «Ազատամարտ» թերթի խմբագրությունից թալանված դրամը վերադարձնելու համար, նրա բացակայության ընթացքում ոստիկանները խուզարկում էին նրա տունը: Նույն օրը Վարդգեսն ու Զոհրաբը ձերբակալվեցին և գիշերն ուղարկվեցին Կոնիա, այնտեղից Ադանա, ապա Հալեպ, իսկ այնուհետև սպանվեցին ուղեկցող սպայի կողմից Ուրֆայի մերձակայքում: Սպանության վայր ուղարկվեց Ուրֆայի քաղաքային բժիշկը և կազմեց տեղեկանք՝ իբր նրանք մահացել են տիֆից {(28) *27*}:

Հատուկ կազմակերպությունը (Թեշքիլաթը մահսուսե)

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունն ու կոտորածներն իրականացնելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն ստեղծեց «Երեքի գործադիր կոմիտե», որի մեջ ընդգրկվեցին դր. Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը և Միդհաթ Շյուքրին (լուսավորության նախարար) {(35) *305*}: Նրանց հանձնարարվեց կազմել տեղահանությունների ժամանակացույցը և կազմակերպել աքսորի վերջնակետ հանդիսացող համակենտրոնացման ճամբարները: Տեղահանման և բնաջնջման գլխավոր գործիքը դարձավ Կ. Պոլսում ստեղծված «Թեշքիլաթը մահսուսե» կազմակերպությունը, որն ուղիղ ենթարկվում էր երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեին: Այդ կազմակերպության վարչական մարմնում ընդգրկվեցին

«Միություն և առաջադիմության» կենտրոնական կոմիտեի անդամներ՝ դր. Նազըմը, Բ. Շաքիրը, Աքըֆը, Ռիզա և Ազիզ բեյերը: Թեշքիլաթը մահուսեի՝ արևելյան նահանգների պատասխանատուն Բ. Շաքիրն էր, որն իր գործունեության կենտրոն դարձրեց Կարինը: Ռիզա բեյը ուղարկվեց Տրապիզոն, իսկ Ազիզ, Աքըֆ և Նազըմ բեյերն իրենց գործունեությունը սկսեցին Կ. Պոլսում: Էնվերի աներորդի Ջևադ բեյը լիազորվեց՝ հաստատելու և գործադրելու վարչական մարմնի որոշումները: Նա, ընդսմին, մեծաքանակ գումարներ, ավտոմեքենաներ և այլ նյութական միջոցներ էր հատկացնում Բ. Շաքիրին և կազմակերպության այլ ղեկավար անդամներին՝ նրանց անելիքները դյուրացնելու համար {(10) *278*}:

Թեշքիլաթը մահուսեն բանտերից ազատված հանցագործներից, քրդերից, չերքեզներից և այլ ավազակաբարո տարրերից կազմեց զինված հրոսակախմբեր, որոնք պետք է իրականացնեին տեղահանված հայերի կոտորածները և, որպես կանոն, վայելում էին նաև նրանց թալանելու, խոշտանգելու, պատվազրկելու և առևանգելու ազատություն:

Տեղահանության մասին օրենքը

Հայ ժողովրդի՝ արդեն իսկ սկսված զանգվածային տեղահանությունն «օրինականացնելու» նպատակով 1915 թ. մայիսի 26-ին ներքին գործերի նախարար Թալեաթը դիմեց կառավարությանը՝ պահանջելով, որ ընդունվի օրենք հայերի տեղահանման մասին: Մայիսի 27-ին ընդունվեց «Պատերազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդես եկողների նկատմամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր օրենքը», որը հրատարակվեց և գործողության մեջ դրվեց հունիսի 1-ին:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն, պատերազմի ժամանակ բանակների, բանակային կերպուսների և դիվիզիաների հրամանատարները, նրանց տեղակալներն ու առանձին դիրքերի հրա-

մանատարները «բնակչության կողմից կառավարության հրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի ապահովման հետ կապված գործողությունների և միջոցառումների դեմ ընդդիմության, զենքով հարձակման և դիմադրության որևիցե դրսևորում տեսնելու դեպքում լիազորված ու պարտավոր» էին «զենքի ուժով անհապաղ ամենախիստ ձևով պատժամիջոցներ կիրառել և հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին վերացնել»:

2-րդ հոդվածով բանակների և բանակային կորպուսների ու դիվիզիաների հրամանատարները, «լրտեսություն կամ դավաճանություն» կանխազգալու դեպքում կարող էին, «ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով», «գյուղերի և գյուղաքաղաքների բնակչությանն առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել ու բնակեցնել»:

3-րդ հոդվածով օրենքը գործողության մեջ էր դրվում հրապարակման օրից, իսկ 4-րդ հոդվածով օրենքի գործադրման պատասխանատվությունը դրվում էր ռազմական նախարար Էնվերի վրա: Օրենքը ստորագրել են սուլթան Մեհմեդ Ռեշադ V-ը, նախարարների խորհրդի նախագահ Մեհմեդ Սաիդ Հալիմը և գլխավոր հրամանատարի տեղակալ ու ռազմական նախարար Էնվերը {(56) *79-80*}:

1915 թ. հունիսին օսմանյան բանակի հրամանատարությունը տեղական իշխանություններին խստիվ նախազգուշացրեց, որ նրանք պատասխանատվություն են կրում օրենքի գործադրման համար: Եթե մահմեդականներն իրենց տներում ապաստան տան հայերին, «ապա նրանք պետք Է կախաղան հանվեն իրենց տների առջև, իսկ տները՝ հրդեհվեն»: Հրամանատարությունը տեղական իշխանություններից պահանջում էր նաև հետևել, որ «ոչ մի հայ զերծ չմնա արտաքսումից»: Նախազգուշացվում էր. որ այն մահմեդականները. որոնք կփորձեն պաշտպանել հայերին, «եթե զինծառայող են, կզրկվեն զինվորական կոչումից և անհապաղ կկանգնեն դատարանի առջև, իսկ եթե քաղաքացիական ծա-

ռայողներ են, ապա անհապաղ կազատվեն ծառայությունից և կկանգնեն զինվորական դատարանի առջև» {(35) *465*}:

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանությունը

Հայ ժողովրդի զանգվածային տեղահանումը դեպի Սիրիայի և Միջագետքի անապատներ իրականացվեց՝ ըստ երեք տարածաշրջանների, որոնք միասին կազմում էին պետության ողջ տարածքը: Դրանցից մեկը Կիլիկիան էր՝ Հյուսիսային Սիրիայի հետ միասին, մյուսն ընդգրկում էր երկրի արևելյան նահանգները, այն է՝ Արևմտյան Հայաստանը, իսկ երրորդը՝ արևմտյան նահանգները: Մինչև 1915 թ. հոկտեմբեր պետության գրեթե բոլոր բնակավայրերը հայաթափված էին: Չտեղահանվեցին միայն Կ. Պոլսի հայերը, քանի որ այնտեղ մեծ թվով օտարերկրյա դիվանագիտական հաստատություններ կային, և Զմյուռնիայի հայերը, որոնց տեղահանումն արգելեց Օսմանյան պետությունում Գերմանական ռազմական առաքելության ղեկավար, գեներալ Լ. ֆոն Սանդերսը: Չնայած Տեղահանության մասին ժամանակավոր օրենքն ընդունվեց մայիսի 27-ին, այնուհանդերձ տեղահանման գործընթացը շատ ավելի վաղ էր սկսվել:

ա) Կիլիկիայում և Հյուսիսային Սիրիայում

Կիլիկիայի հայերի տեղահանումը սկսվեց 1915 թ. մարտի վերջին և շարունակվեց ապրիլին ու մայիսին: Այդ հարցում ճակատագրական եղավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ս. Խապայանի՝ ժողովրդին ուղղված կոչը կառավարության պահանջներին հնազանդվելու վերաբերյալ: Տեղահանման մեկնարկը տրվեց Զեյթունում, որը երկու անգամ (1862 թ. և 1895 թ.) պարտության էր մատնել օսմանյան բանակներին: 1914 թ. հոկտեմբերին Մարաշում Զեյթունի ղեկավար Նազարեթ Չաուշին նենգորեն սպանելուց հետո դեկտեմբերին իշխանությունները զեյթունցիներին հրամայեցին հանձնել բոլոր զենքերը: Զեյթունցիները ենթարկվեցին

հրամանին: 1915 թ. մարտի սկզբին 4000-անոց մի թուրքական զորախումբ շարժվեց Զեյթուն՝ այնտեղ գտնվող դասալիքներին ոչնչացնելու պատրվակով: Մոտ 150 զեյթունցիներ ամրացան Պերզնկա լեռան մոտ գտնվող վանքում: Մարտի 25-ին զորքը գրոհեց վանքի վրա, մարտերը շարունակվեցին ողջ օրը: Գիշերը հայերը, վանքից դուրս գալով, հեռացան: Նրանց մի մասը տեղափոխվեց Ֆընտըճագ հայկական գյուղը:

Հաջորդ առավոտ զինվորական պարետն իր մոտ կանչեց Զեյթունի 300 հեղինակավոր հայերի, որոնց թույլ չտրվեց վերադառնալ: Նրանք արտաքսվեցին անհայտ ուղղությամբ: Այնուհետև սկսվեց քաղաքի և շրջակայքի՝ թվով ավելի քան 20 000 հայերի տեղահանությունը: Մոտ 8000 մարդ արտաքսվեց Կոնիայի նահանգի՝ Քարաբունարի և Սուլեյմանիի ճահճային շրջանները, իսկ 15-16 000-ը՝ Դեր Զոր: Մայիսի 2-րդ կեսին Զեյթունը լիովին հայաթափված էր: Չվտարվեցին միայն 6 արհեստավորներ, որոնց աշխատանքը մեծ պահանջարկ ուներ: Մայիսի 14-ին Քարաբունարից ուղարկված մի տեղեկագրում նշվում էր, որ այնտեղ մալարիայից և սովից օրական մեռնում էին 150-200 մարդիկ:

Հայերի մեջ սարսափ առաջացնելու համար Դորթյոլի հայերից հինգին Ադանայում հրապարակայնորեն կախաղան հանելուց հետո թուրքերը Դորթյոլի բոլոր տղամարդկանց ուղարկեցին Հաճըն՝ իբրև թե ճանապարհաշինությամբ զբաղվելու համար և բոլորին սպանեցին, իսկ կանայք ու երեխաները քշվեցին Դեր Զոր: Դորթյոլը դատարկելուց հետո ապրիլից, մեկը մյուսի ետևից տեղահանվեցին Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի բոլոր հայկական բնակավայրերը: Մայիսի 24-ին տեղահանվեցին Մարաշի ավելի քան 2000 հայ բնակիչները, իսկ հուլիսի վերջին՝ մաս առ մաս Այնթապի բնակչությունը: Մարդկանց վախեցնելու համար Ադանայում, Հալեպում և Մարաշում նախապես հրապարակայնորեն կախեցին շուրջ 30 հայերի: Գյուղերում, որպես կանոն, երեկոյան էր հայտարարվում, որ հաջորդ առավոտ բնակչությունը պետք է

տեղահանվի: Շատ դեպքերում նա, ով համաձայնում էր իսլամ ընդունել, կարող էր մնալ: Շեհր գյուղի բնակիչները նոր էին գյուղից դուրս եկել, երբ տեսան, թե ինչպես է մոլլան, գյուղի եկեղեցու տանիք բարձրացած, հավատացյալներին աղոթքի կանչում: Եկեղեցին վերածվեց մզկիթի:

Օգոստոսի 7-ին տեղահանվեց Մերսինի հայ բնակչությունը: Ուրֆայի հայ բնակչության տեղահանությունը կատարվեց 1915 թ. հոկտեմբերին՝ երկշաբաթյա հերոսամարտի տապալումից հետո: Աքսորյալների շարասյուները գնում էին Դեր Զոր և Կոնիա, Ռակկա (Եփրատի մոտ), այնուհետև Բաղդադի երկաթուղու երկայնքով՝ Ուրֆայով և Վերանշեհիրով միջագետքյան անապատ՝ մինչև Բաղդադի մերձակա շրջանները: Այնթապի և Քիլիսի հայերը Դամասկոսով քշվեցին Հավրան: Ընդհանուր առմամբ, Կիլիկիայում տեղահանվածների մեծ մասն աքսորվեց Դեր Զոր {(127) *6-20*}:

բ) Արևմտյան Հայաստանում

Արևմտյան Հայաստանի հայության զանգվածային տեղահանումը սկսվեց մայիս-հունիս ամիսներին: Աշխատանքից ազատվեցին պետական համակարգի բոլոր հայ պաշտոնյաները, ինչպես և օսմանյան զինվորական հիվանդանոցներում աշխատող հայ բժիշկները, որոնք բանտարկվելով սպանվեցին կամ զոհ դարձան խոշտանգումներին: Նախքան տեղահանությունը, իշխանությունները բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում զորակոչի անվան տակ հավաքագրեցին 16-70 տարեկան հայ տղամարդկանց, այդ թվում նաև նրանց, ովքեր, օրենքով նախատեսված տուրքը վճարելով կամ զինվորական ծառայության համար անպիտան համարվելով, ազատվել էին բանակ զորակոչվելուց: Հավաքագրվածները, ուղարկվելով լեռնային ամայի վայրեր, սպանվեցին:

Երբ տեղահանությունները սկսվեցին, հայ բնակչության արական հատվածը մեծ մասամբ արդեն ոչնչացված էր: Այն

տղամարդիկ, որոնք դեռ մնացել էին իրենց բնակավայրերում, կա՛մ տեղահանման սկզբում էին առանձնացվում իրենց ընտանիքներից, քշվում այլ ուղղությամբ և սպանվում, կա՛մ դա տեղի էր ունենում աքսորի ճանապարհին:

Ճանապարհ ընկնելու համար մարդկանց տրվում էր մեկ ժամից մինչև մի քանի օր ժամանակ: Տրապիզոնում հուլիսի 1-ին տեղահանվելու վերաբերյալ հրամանը հրապարակվեց հունիսի 26-ին: Քաղաքի և շրջակայքի շուրջ 10 000 բնակիչների մի մասը քշվեց Էրզրումի ուղղությամբ, մյուսներին, Սամսուն ուղարկելու պատրվակով, բեռնելով նավերը, տարան բաց ծով և ջրասույզ արեցին: Հուլիսի 6-ին քաղաքը լիովին հայաթափված էր: Քաղաքի որբանոցների երեխաներին բաժանեցին մահմեդական ընտանիքներին, իսկ ավագ աղջիկներից ամենագեղեցիկները առևանգվեցին տեղահանությունը կազմակերպելու համար քաղաք եկած երիտթուրքերի կողմից: Ինչպես վկայում էր Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսը, նրանցից մեկը քաղաքի կենտրոնում գտնվող մի տան մեջ պահում էր 10 աղջիկների՝ իր և իր ընկերների կրքերը բավարարելու համար {(127) *27-32,* (126) *32*}:

Մայիսին սկսվեց Էրզրումի դաշտավայրի և Դերջանի ու Մամախաթունի հայերի տեղահանությունը: Որևէ դիմադրություն կանխելու համար դրանից կարճ ժամանակ առաջ Էրզրումում և մերձակայքում կրկին 15 000 հայ տղամարդիկ «զորակոչվեցին»: Հունիսի կեսին սկսվեց Էրզրում քաղաքի հայերի տեղահանությունը: Հունիսի 18-ին Էրզրումի գերմանական հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը դեսպանին հաղորդում էր, որ Էրզրումի դաշտավայրից տեղահանված հայերը Երզնկայով Խարբերդ տանող ճանապարհին ոչնչացվել են: Կոտորածը տեղի էր ունեցել հունիսի 10-14-ին, և դրան, քրդերից զատ, մասնակցել էին կառավարական 86-րդ հեծելազորային բրիգադի զորամասերը {(6) *XXIV*}:

Գերմանացի ավագ լեյտենանտ Շտանգեն 1915 թ. օգոստոսի 23-ին Գերմանական ռազմական առաքելությանն ուղարկած իր զեկուցագրում հաղորդում էր որ «հուսահատ մայրերն իրենց նո-

բածիններին նետել են Եփրատը, քանի որ նրանց կերակրելու որևէ հնարավորություն չունեին»: Նա նաև տեղեկացնում էր Մամախաթունում տեղի ունեցած՝ հայերի զանգվածային կոտորածի մասին, որից ոչ ոք չէր փրկվել, և որին մասնակցել էր նաև զինվորականությունը {(8) *268*}:

Երզնկայում մի գիշեր 2000 հայեր ձերբակալվեցին, նախ բանտ նետվեցին, այնուհետև դուրս բերվելով՝ քաղաքի մերձակայքում սպանվեցին: Դրանից հետո քաղաքի հայերին հայտարարվեց, որ մի քանի օրից մեկնելու են: Նրանց թույլատրվում էր իրեր վաճառել, բայց մեկնելուց առաջ պարտավոր էին իրենց տների բանալիները հանձնել իշխանություններին: Աքսորյալների առաջին շարասյունը, որը բաղկացած էր մեծ մասամբ ունոր հայերից, քաղաքից դուրս եկավ հունիսի 7-ին: Մինչև հունիսի 10-ը արտաքսվեց ողջ բնակչությունը՝ շուրջ 25 000 մարդ: Գրեթե բացառապես կանանցից ու երեխաներից բաղկացած քարավանները հունիսի 10-14-ը ամայի վայրերում ենթարկվեցին ուղեկցող թուրք զինվորների և քուրդ հրոսակների հարձակումներին: Նրանց սկզբում զոհերին կողոպտում, պատվազրկում էին, իսկ այնուհետև սպանելով՝ դիերը նետում էին Եփրատ գետը: Ամենասոսկալի կոտորածները տեղի ունեցան Քեմախի կիրճում: Հունիսի 11-ին թուրքական 80-րդ հեծելազորային բրիգադի ջոկատներն ուղարկվեցին Քեմախ՝ իբրև թե քրդերին պատժելու համար, և սպանեցին դեռ կենդանի մնացած կանանց ու երեխաներին: Նրանք իրենց հետ եզներ ու սայլեր էին տարել, որպեսզի դիերը գետը լցնեն: Բազմաթիվ հուսալքված կանայք իրենք էին իրենց երեխաների հետ գետը նետվում՝ պատվազրկումից խուսափելու համար:

Հաջորդ օրերին նույն ճանապարհով անցնում էին Բաբերդի հայ բնակիչները, որոնց իշխանությունները հրաժեշտի ժամանակ «բարի ճանապարհ» էին մաղթել: Տեղահանումից երեք օր առաջ Բաբերդում կախաղան հանվեցին քաղաքի ութ հայ երևելիներ, այդ թվում՝ Անանիա ծայրագույն վարդապետ Հազարապետյանը:

Բանտերում և իրենց տներում սպանվեցին ևս մի քանի տասնյակ հեղինակավոր հայեր: Բաբերդի հայերն արտաքսվեցին երեք մեծ շարասյուներով: Նրանք նույնպես թուրք և քուրդ հրոսակների կողմից ենթարկվեցին հարձակումների և կոտորածի: Երիտասարդ կանայք և աղջիկները առևանգվեցին, փոքրիկ երեխաները բաժանվեցին մոտակա թուրքական գյուղերին, իսկ մյուսները սպանվեցին: Գերմանացի ականատեսը վկայում էր, որ նախքան Քեմախ հասնելը «ստրուկների իսկական շուկա» էր գործում՝ «այն տարբերությամբ, որ ոչինչ չէր վճարվում: Մայրերը կարծես ինքնակամ էին երեխաներին հանձնում, և դիմադրությունն էլ ոչ մի արդյունք չէր ունենա» {(127) *44-54*}:

Ինչպես մյուս նահանգներում, Սեբաստիայում ևս նախքան տեղահանությունը կատարվեցին զենքի պարբերական բռնագրավումներ, իսկ երևելի հայերը ձերբակալվեցին ու սպանվեցին: Նախապես բնակչությունից կորզում էին նաև մեծ գումարներ՝ նրանց տեղահանությունը կանխելու կեղծ խոստումներով: Միայն Թոքատի հայերից այդ նպատակով կորզվեց 1600 թուրքական ֆունտ: Սեբաստիա քաղաքի՝ մինչև հունիսի վերջը լիովին տեղահանված հայ բնակչությունը գրեթե ամբողջությամբ սպանդի ենթարկվեց:

Մարզվանում, որի բնակչության մոտ կեսը հայեր էին, կառավարության խոսնակը հայտարարեց, որ 15-ից 70 տարեկան բոլոր տղամարդիկ պետք է հավաքվեն զորանոցներում: Հունիսի 26-ին ժանդարմները շրջում էին քաղաքում, նաև ներխուժում էին հայերի տները և, հավաքելով տղամարդկանց, արգելափակում էին զորանոցներում: Հաջորդ օրերին նրանց բոլորին 30-ից 150 հոգանոց խմբերով «աքսորեցին», և բոլորը սպանվեցին: Հուլիսի 4-ին հայտարարվեց, որ երեխաներն ու կանայք պետք է պատրաստ լինեն՝ երեք օր անց ճանապարհ ընկնելու: Խոստացվում էր, որ յուրաքանչյուր ընտանիքի մի եզնասայլ է հատկացվելու, և որ նրանք կարող են իրենց հետ մեկ օրվա սնունդ, որոշ գումար և մի կապոց վերցնել: Քաղաքի հայերն իրենց ունեցվածքը վաճառեցին չնչին գներով: Բռնի տեղահանությունը սկսվեց հայտարարված ժամկե-

տից մեկ օր առաջ: Շատերին անկողնից հանելով՝ լցնում էին սայլերը: Նրանց մեջ կային նաև տղամարդիկ, որոնք խուսափել էին հունիսի 26-ի հավաքագրումից: Համատարած խուճապի պայմաններում այնուհետև հայտարարվեց, որ նրանք, ովքեր իսլամ կընդունեն, չեն աքսորվի: Չնայած եղան որոշ թվով համաձայնողներ, բայց ի վերջո նրանց մեծ մասն էլ աքսորվեց: Քաղաքից մի քանի ժամվա հեռավորության վրա տղամարդիկ առանձնացվեցին երեխաներից ու կանանցից, շղթայվեցին և, այլ ուղղությամբ տարվելով, սպանվեցին:

Ամասիայում թուրքերը հայերին տեղահանելուց հետո հրկիզեցին հայկական թաղամասը, հայկական և հունական եկեղեցիները: Գեմերեկում բոլոր հայերն աքսորվեցին Սեբաստիա քաղաքի ուղղությամբ, որն 80 կմ հեռավորության վրա էր, բայց ոչ ոք այնտեղ չհասավ: Տղամարդիկ սպանվեցին, իսկ կանանց ու երեխաներին բաժանեցին թուրք սպաներին ու պաշտոնյաներին: Զելայում, որի հայ բնակիչների թիվը հասնում էր 5000-ի, թուրքերը տղամարդկանց, միմյանց շղթայելով, տարան մոտակա լեռները, որտեղ բոլորին սպանեցին, իսկ կանանց ու երեխաներին մի քանի օր առանց սննդի կուտակեցին բաց դաշտում՝ կարծելով, որ այդ զրկանքից հետո նրանք կհամաձայնեն իսլամ ընդունել: Երբ կանայք հրաժարվեցին իսլամանալ, երեխաների աչքի առաջ բոլոր մայրերին սվիններով սպանեցին, իսկ երեխաներին վաճառեցին մուսուլմաններին:

Հուլիսի առաջին կեսին Խարբերդ քաղաքի և Մեզիրեի, նաև շրջակա գյուղերի հայ տղամարդկանց ձերբակալելով՝ մաս-մաս ոչնչացրեցին ամայի վայրերում, իսկ հուլիսի 13-ից սկսվեց կանանց ու երեխաների տեղահանությունը:

Մալաթիայում ևս հուլիսի առաջին կեսին իրականացվեց արական սեռի հայ բնակչության կոտորած, որից հետո՝ օգոստոսի կեսերին, սկսվեց կանանց ու երեխաների տեղահանությունը:

Դիարբեքիրում նախքան տեղահանությունը՝ 1915 թ. սկզբներին կազմվեց մի երիտթուրքական «հանձնաժողով» (Մեքթուբջի

Բեդրի բեյի ղեկավարությամբ), որը 30 օր շարունակ հայ երևելիների ձերբակալություններ կատարեց: Ձերբակալվածներին բանտում սպանելից հետո թուրքերը երկու հայ բժիշկների ստիպեցին տեղեկանք տալ, որ նրանք տիֆից են մահացել: Մայիսի 10-30-ը նահանգում ձերբակալվեցին ևս 1200 հեղինակավոր հայեր: Նրանցից 674-ին Մոսուլ ուղարկելու պատրվակով «բեռնեցին» 13 լաստերի վրա: Նրանց ուղեկցում էր նահանգապետի համարզը 50 ժանդարմների հետ, որոնցից 25-ը լաստերի վրա էին, իսկ 25-ը ձիավարում էին ափի երկայնքով: Ճանապարհ ընկնելուց հետո նրանք հայերից խլեցին 6000 թուրքական ֆունտ և նրանց հագուստները, որից հետո բոլորին նետեցին գետը: Ափին գտնվող ժանդարմների առաջադրանքն էր սպանել նրանց, ովքեր կարող էին լողալ: Այդ նույն ժամանակ Դիարբեքիրում 16-20 տարեկան՝ շուրջ 700 հայ երիտասարդներ «զորակոչվեցին»: Նրանք ուղարկվեցին՝ աշխատելու Կարաբաղչե-Հաբեշ ճանապարհի վրա և աշխատանքի ժամանակ սպանվեցին հսկիչ ժանդարմների կողմից:

Երբ սկսվեց Դիրաբեքիրի հայերի զանգվածային տեղահանությունը, նրանցից ոչ մեկը նախանշված նպատակակետ՝ Մոսուլ, չհասավ: Մոսուլի գերմանական փոխհյուպատոս Վ. Հոլշթայնը, վկայակոչելով Մոսուլի նահանգապետի՝ իրեն հաղորդած տեղեկությունները, 1915 թ. դեկտեմբերի 31-ի իր զեկուցագրում հաղորդում էր, որ Դիարբեքիրից տեղահանված հայերից «ոչ ոք կենդանի չի մնացել» {(8) *403-404*}:

Բիթլիսի նահանգում տեղահանումից առաջ՝ Վանի հերոսամարտի օրերին, հայերի հալածանքները նոր թափ ստացան: Ճանապարհաշինության ուղարկված հայ տղամարդիկ մաս-մաս ոչնչացվեցին: 1915 թ. ապրիլին Բիթլիս քաղաքի և շրջակա գյուղերի հայերի մի զգալի մասը, տեղահանվելով, քշվեց Դիարբեքիրի ուղղությամբ: Թուրքերը ճանապարհին բոլոր տղամարդկանց սպանեցին, իսկ կանանց և երեխաներին նետեցին Տիգրիս գետը:

Հուլիսի 3-ին սկսվեց Մուշի հայերի կոտորածը: Նրանց միայն մի փոքր մասը կարողացավ ճեղքել շրջափակումը և հեռանալ Սասնա լեռները {(127) *54-76, 112-118*}:

գ) Արևմտյան նահանգներում

Երկրի արևմտյան նահանգներում՝ հետագայում «Արևմտյան Անատոլիա» անվանված հատվածում, հայերի տեղահանումը սկսվեց հուլիսի վերջին և շարունակվեց հաջորդ երկու ամիսների ընթացքում: Իզմիթի գավառում և Բրուսայի նահանգում տեղահանման նախապատրաստումը սկսվեց հուլիսի երկրորդ կեսին: Իբրահիմ բեյ անունով մի երիտթուրք, որը Կ. Պոլսում բանտի վերահսկիչ էր, ուղարկվեց Իզմիթ, Ադաբազար, Պարտիզակ ու այլ հայաշատ վայրեր՝ ձերբակալություններ կատարելու և զենք բռնագրավելու համար: Երբ զենքի կամավոր հանձնումն ավարտվեց, երևելի հայերը բանտարկվեցին՝ ենթարկվելով խոշտանգումների: Շատ դեպքերում խոշտանգում էին նաև կանանց: Մուսուլմաններին հայերի դեմ գրգռելու համար բազմաթիվ ստեր էին տարածվում, օրինակ, որ հայ կանայք 10 000 ածելիներ էին թաքցրել՝ «թուրքերի վիզը կտրելու համար»:

Հուլիսի 30-ին նախ տեղահանվեցին Պարտիզակի, Օվաջիկի և Դյոնգելի շուրջ 20 000 հայերը, այնուհետև մյուս բնակավայրերի հայ բնակչությունը: Ադաբազարում բարեկեցիկ ընտանիքների կանանց ու աղջիկներին հավաքեցին տեղի հայ եկեղեցում և թաքցված զենքի մասին հարցաքննություններ իրականացրեցին: Երբ դրանք արդյունք չտվեցին, նրանց խոշտանգեցին ու պատվազրկեցին: Արևմտյան նահանգներում ևս տեղահանություններից առաջ կեղծ խոստումներով մարդկանցից գումարներ էին կորզում: Թիրիլյեում բնակչությունից պահանջեցին 1000 թուրքական ֆունտ՝ խոստանալով չտեղահանել: Գումարը ստանալուց անմիջապես հետո տեղահանումը սկսվեց: Մարմարաջիկում սպանեցին 60 հայի, բռնաբարեցին 11 տարեկանից մեծ աղջիկներին:

Օգոստոսի սկզբին տեղահանվեցին Իզմիթի գավառի շուրջ 25 000 հայերը: Հայտարարվեց, որ նրանք, ովքեր կարող էին փոխադրամիջոցի համար վճարել, երկաթուղով փոխադրվելու էին Կոնիա, իսկ այնտեղից սայլերով՝ Մոսուլ: Մյուսները պետք է ոտքով գնային: Այդ դեպքում ճանապարհը շաբաթներ ու ամիսներ էր

տնելու: Փոխադրումը կատարվում էր բեռնատար վագոններով: Շատերը, որոնք գումար ունեին կամ կարողացան, չնչին գներով իրենց ունեցվածքը վաճառելով, այդ գումարը հայթայթել, ստիպված էին առաջին գնացքների մեկնումից հետո օրերով սպասել կայարանում, մինչև իրենց հերթը կհասներ:

Իզմիթի և Բրուսայի վճարունակ հայերին տեղափոխեցին մի քանի կայարան, այնուհետև նրանց «բեռնաթափեցին» բաց դաշտում: Օգոստոսին Իզմիթի և Էսքիշեհիրի միջև ընկած տարածքում 40-50 հազար մարդկանց մի բազմություն էր կուտակվել: Այնուհետև տղամարդկանց բաժանեցին կանանցից և նրանց ուղարկեցին տարբեր ուղղություններով: Հուսահատության մեջ ընկած շատ մայրեր իրենց երեխաներին հանձնեցին մահմեդական ընտանիքներին: Անգորա քաղաքում, որտեղ մեծ թիվ էին կազմում նաև կաթոլիկ հայերը, նախ «աքսորվեցին» Հայ առաքելական եկեղեցու համայնքին պատկանող արական սեռի 15-70 տարեկան հայերը՝ շուրջ 500 մարդ: Նրանք քաղաքից ոչ հեռու օղակվեցին թուրքական հրոսակների կողմից, որոնք նրանց սպանեցին՝ նախապես կտրելով շատերի ականջներն ու քթերը և հանելով աչքերը: Երկու շաբաթ անց ձերբակալվեցին կաթոլիկ հայ տղամարդիկ, որոնք 800-անոց և 700-անոց խմբերով իրար ետևից արտաքսվեցին Կեսարիայի ուղղությամբ: Նրանց մասին այլևս որևէ տեղեկություն ի հայտ չեկավ:

Տղամարդկանց վերացնելուց հետո Անգորայի հայ կանանց ու երեխաներին հայտարարվեց, որ երկու ժամում պետք է լինեն երկաթուղային կայարանում: Նրանք հասցրին իրենց հետ միայն չնչին քանակի իրեր վերցնել: Կայարանի մոտ նրանց լցրեցին հացահատիկի մի պահեստի մեջ, որտեղ նրանք քաղցած մնացին մոտ 5 օր: Այնուհետև կարծելով, թե նրանք արդեն հոգեբանորեն կոտրվել են, նրանց տեղեկացրին, որ ովքեր իսլամ ընդունեն, չեն արտաքսվի: Մոտ 100 ընտանիքներ համաձայնեցին: Նրանց ստիպեցին հավաստագրեր տալ այն մասին, որ կամավոր են կրո-

նափոխվում, և բաժանեցին մահմեդական ընտանիքներին: Մյուսները երկաթուղով փոխադրվեցին Էսքիշեհիր, իսկ այնտեղից՝ Կոնիա, որտեղ սպանդի ենթարկվեցին: Թուրքերը երկաթուղում աշխատող հայերին նույնպես ստիպեցին իսլամ ընդունել: Շատերը համաձայնեցին. իսկ նրանք, ովքեր հրաժարվեցին դա անել, սպանվեցին:

Կեսարիայում հայերին տեղահանվելու համար տրվեց մի քանի ժամ ժամանակ: Յոզգաթում հայտարարվեց, որ հայերը երկու ժամում պետք է քաղաքից հեռանային: Ճանապարհին զինվորները տղամարդկանց զատեցին, ուռենու ճիպոտներով հնգական հոգով կապեցին միմյանց, նրանց պառկեցրին՝ գլուխները հենելով հատված ծառերի բներին, և մահակներով սպանեցին:

Քանի որ Էվերեկի կայմակամը հայերի հանդեպ բարյացակամորեն էր տրամադրված, Կեսարիայի մյութեսարիֆը նրան պաշտոնանկ արեց: Նրան փոխարինած չերքեզ Զեքի բեյը, նախքան տեղահանությունը, ժանդարմների հետ քաղաքում շրջելով, բազմաթիվ ձերբակալություններ կատարեց: Հայերը, որոնցով լցվել էին բանտերը, ենթարկվում էին անօրինակ խոշտանգումների: Շատերի ոտքերին նաև ծծմբաթթու էին լցնում, իսկ մարմինները՝ խարանում շիկացած երկաթով: Բանտարկյալների մեծ մասը մահացավ խոշտանգումներից: Խոշտանգումները վերապրածները նույնպես սպանվեցին {(127) *124-133,* (8) *327-329*}:

Հրամանները

Քաղաքացիական իշխանություններին հայերի տեղահանման և բնաջնջման հրահանգավորումը կատարում էր Թալեաթը, իսկ անհրաժեշտության դեպքում բանակային զորամասերի աջակցությունն ապահովում էր Էնվերը: Թալեաթի հրամանները, որպես կանոն, ուղարկվում էին նահանգապետերին, որոնք դրանք փոխանցում էին մյութեսարիֆներին ու կայմակամներին:

Ինչպես փաստում են թուրք նախկին պաշտոնյա Նաիմ բեյի՝ Արամ Անտոնյանին հանձնած և վերջինիս կողմից (նաև լուսա-

պատճեններով) հրապարակված՝ Թալեաթի բազմաթիվ հրամանները, դրանք, որպես կանոն, պարտադրում էին նաև օպերատիվ հետադարձ կապ և ունեին վերահսկողական բնույթ: Դրանցից շատերում հայ ժողովրդի բնաջնջումը ներկայացվում էր որպես հայրենասիրական առաքելություն և արձանագրվում էր, որ դա իրականացնողները պատասխանատվության չեն ենթարկվելու: «Հայերի համար Թուրքիայի հողում ապրելու, աշխատելու և այլ իրավունքները ամբողջովին վերացված են,– նշվում էր, օրինակ, Թալեաթի՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ին Հալեպի նահանգապետին ուղարկված հրամանագրում,– և կառավարությունը, ստանձնելով այդ հարցում ողջ պատասխանատվությունը, հրամայել է նույնիսկ օրորոցի երեխաներին բացառություն չանել: Մի քանի նահանգներում այս հրամանի գործադրման արդյունքները հայտնի են դարձել: Սրանով հանդերձ, մեզ անհայտ պատճառներով մի շարք մարդկանց հանդեպ բացառություն է ցուցաբերվում, և այդ մարդիկ, ուղղակի տարագրության վայրերը չուղարկվելով, թողնվում են Հալեպում, որով կառավարությունը մի երկրորդ դժվարության է մատնվում: Առանց նրանց պատճառաբանություններն ընդունելու, ինչ էլ որ լինեն, կին թե երեխա, նույնիսկ շարժվելու անկարողներին հանե՛ք այնտեղից և թույլ մի՛ տվեք, որ նրանց պաշտպանի ժողովուրդը, որը տգիտության բերումով նյութական շահերն իր հայրենասիրական զգացումներից բարձր է դասում և չի կարողանում գնահատել այս հարցում կառավարության հետապնդած մեծ քաղաքականությունը: Քանի որ ուրիշ տեղերում անուղղակի կերպով կատարվող բնաջնջման գործողությունները – խստություն, արագություն (տարագրության ընթացքի), ճանապարհի զրկանքներ, թշվառություն – այդտեղ ուղղակիորեն կարող են ապահովվել, հետևաբար, առանց ժամանակ կորցնելու, ոգին բռի մեջ աշխատեք: Պատերազմական նախարարությունից բանակի հրամանատարություններին ընդհանուր կերպով հաղորդված է, որ զինվորական կայանների հրամանատարները գաղթականների ուղարկման գործին չպետք է միջամտեն: Դրան

հատկացվելիք պաշտոնյաներին հաղորդեք, որ, պատասխանատվությունից չվախենալով, պետք է աշխատեն իրականացնել բուն նպատակը: Ձեր գործունեության արդյունքները գրանցեք՝ ամեն շաբաթ ծածկագրով հաղորդելու համար» {(10) *35-37*}:

Երիտթուրքական վարչակարգի հրամաններով ենթակաների մեջ ներարկվում էր ոչ միայն ոճրագործությունների պատասխանատվությունից զերծ լինելու գաղափարը, այլև այն մտայնությունը, որ դրանց կատարումը նրանց «հայրենասիրական» պարտքն էր: Երբ, օրինակ, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը Յոզգաթի հայության կոտորածի պատասխանատուներից հարյուրապետ Շյուքրիին հարցնում է՝ արդյոք նա չի՞ զղջում իր արարքների համար, վերջինս նրան բացասական պատասխան է տալիս՝ ասելով, որ ինքն իր «նվիրական ու սրբազան» պարտականությունն է կատարել «Աստծո», մարգարեի և խալիֆի առաջ, քանի որ պատերազմում ջիհադ (անմնացորդ նվիրումով պայքար հանուն մահմեդական հավատի և հաղթության, սրբազան պատերազմ) էր հայտարարված {(50) *217*}:

Թալեաթի կամ ներքին գործերի նախարարության կողմից նահանգապետերին ուղարկված հրամաններից շատերում փորձ էր արվում նաև հրահանգավորումը կատարել գաղտնագրի սկզբունքով. հայերն անվանվում էին «ծանոթ անձնավորություններ», շատ դեպքերում ակնարկների միջոցով էին մատնանշվում նաև իրականացվելիք ոճրագործությունները: Այդ ամենը, սակայն, բնավ չի ստվերում տվյալ հրամանների իրական բովանդակությունն ու դրա որոշակիությունը: «Ծանոթ անձնավորություններին ուղարկելու նպատակը,– նշված էր 1915 թ. նոյեմբերին ներքին գործերի նախարարությունից ուղարկված մի հրամանում,– հայրենիքի ապագա բարօրության ապահովությունն է, որովհետև դրանք, որտեղ էլ որ բնակեցվեն, դարձյալ չպետք է ետ կանգնեն իրենց անիծյալ գաղափարներից: Պետք է աշխատել, որ հնարավորին չափով նվազի նրանց թիվը» {(10) *23*}:

Այն պաշտոնյաները, որոնք ընդդիմանում էին՝ կատարելու տեղահանության և կոտորածի հրամանները, հեռացվում էին պաշտոններից կամ ուղարկվում էին այլ վայրեր: Հալեպի նահանգապետ Զելալ բեյը, որն որ իր նահանգում թույլ չէր տալիս կոտորածներ իրականացնել, փոխադրվեց Կոնիա, և շուտով նույն պատճառով այնտեղից էլ հեռացվեց: Անկարայի նահանգապետ Մահզար բեյը պաշտոնանկ արվեց, քանի որ հրաժարվում էր կատարել տեղահանման ու բնաջնջման հրամանները: Դեր Զորի կառավարիչ Ալի Սուադ բեյը, որը փորձում էր մեղմել աքսորյալների դրությունը, հեռացվեց, և նրա փոխարեն նշանակվեց չերքեզ Զեքի բեյը, որը կազմակերպեց համակենտրոնացման ճամբարների դատարկումը և սովահար մարդկանց կոտորածները: Ռաս ուլ-Այնի կայմակամ Յուսուֆ Զիա բեյը պաշտոնազրկվեց, քանի որ չէր ուզում ընթացք տալ Ռաս ուլ-Այնում կուտակված հայերին տեղահանելու և ոչնչացնելու հրամանին: Միդիաթի կայմակամը, որը հրաժարվում էր իր շրջանի հայերին կոտորել, Դիարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյի հրամանով սպանվեց:

Մալաթիայի մյութեսարիֆ Ռաբի բեյը 1915 թ. մայիսին պաշտոնանկ արվեց, քանի որ կառավարությունը վստահ չէր, թե բարեխղճորեն կկատարի հայերի վերաբերյալ իրենց հրամանները {(10) *53-54*, (127) *15, 156*, (6) *LIV*}:

Մահերթը և աքսորյալների ճակատագիրը

Թուրք ցեղասպանների համար կարևոր առաջնահերթություն էր տղամարդկանց ոչնչացումը: Դա մասամբ տեղի էր ունենում մինչև ընդհանուր տեղահանությունը, երբ տղամարդկանց, նախապես ձերբակալելով, բնակավայրերից դուրս էին ուղարկում և ոչնչացնում կամ, նոր տեղական «զորակոչերով» հավաքագրելով, ճանապարհաշինության, բեռնակրության և այլ պատրվակներով ուղարկում էին զանազան վայրեր ու այնտեղ էին սպանում: Ընդ որում՝ նման «զորակոչերը» պարտադիր էին նաև այն տղամարդ-

կանց համար, որոնք, օրինական տուրքը վճարելով, զերծ էին մնացել ընդհանուր զորակոչերից:

Այն տղամարդիկ, որոնք այդ ամենից հետո դեռ կենդանի էին մնացել, մեծ մասամբ սպանվում էին զանգվածային տեղահանման հենց սկզբում: Տղամարդկանցից «ով պաշտպանվում էր, սպանվում էր հենց ճանապարհի վրա,– գրում է ցեղասպանության ականատես Արմին Թ. Վեգները,– բայց մի ավելի լավ միջոց կար: Տղամարդկանց, բաժանելով իրենց կանանցից, կեղծ պատրվակներով տանում էին քաղաքից դուրս և լեռները՝ այնուհետև նրանց, ձեռքերից միմյանց հետ կապելով, շարքերով գնդակահարելու համար: […] Շատ ավելի զվարճալի էր զոհերին, վերջույթներով իրար հետ կապված, լեռներից վայր գլորելը, որոնց ստորոտին քուրդ կանայք դանակներով կանգնած էին ու դանակահարում էին կապվածներին, մինչև նրանք իրենց արյան մեջ կմեռնեին» {(163) *31-32*}:

Ճանապարհը շարունակում էին միայն անպաշտպան կանայք և երեխաները: Երիտասարդ կանանցից և աղջիկներից շատերը ճանապարհին առևանգվում էին, մյուսները շատ դեպքերում նույնպես պարբերական կոտորածների էին ենթարկվում կամ զոհ էին դառնում զրկանքներին ու բռնություններին:

Դիերը թողնվում էին սպանդի վայրերում, կամ, եթե առկա էին գետեր, ձորեր և այլ նպաստավոր վայրեր, դրանց մեջ էին լցվում: Հալեպի գերմանական հյուպատոս Վ. Ռոսլերը կանցլերին ուղղված իր՝ հուլիսի 27-ի տեղեկագրում հաղորդում էր, որ մինչև հուլիսի 17-ը Եփրատը 25 օր շարունակ տղամարդկանց դիեր էր փոխադրում: Ընդ որում՝ դրանք նույն ձևով՝ երկուական հոգով մեջքմեջքի կապված էին միմյանց, ինչը, ըստ հյուպատոսի, վկայում էր, որ դա զինվորականության ձեռքի գործն է եղել: Այնուհետև, մի քանի օրվա ընդմիջումից հետո Եփրատը տևականորեն ծածկվել էր ավելի ստվարաթիվ դիերով, բայց արդեն «մեծ մասամբ՝ կանանց ու երեխաների» {(6) *120*}:

Մ. Նիպագեն գերմանական ռայխսթագին ուղարկած իր տեղեկագրում, ի թիվս այլ զազրելի փաստերի, հաղորդում էր այն

մասին, թե ինչպես էին թուրք զինվորները հարյուրավոր կանանց ստիպում մերկանալ: «Զինվորները,– այնուհետև հաղորդվում էր տեղեկագրում,– զվարճանում էին՝ նրանց օրեր շարունակ 40 աստիճան շոգի պայմաններում անապատով մերկ վիճակում քշելով, մինչև նրանց մաշկը լիովին կայրվեր» {(49) *16-18*}:

Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսը վկայում էր, որ այն աքսորյալները, որոնք, ուժահատ լինելով, չէին կարողանում ճանապարհը շարունակել, սպանվում էին ուղեկցող ժանդարմների կողմից: «Եթե նրանք ուժասպառման հետևանքով ստիպված էին լինում ետ մնալ,– հաղորդում էր նա,– խոցվում էին սվիններով և նետվում գետը: Նրանց դիերը Տրապիզոնի մոտով քշվում էին ծով կամ ծանծաղ ջրում կառչած էին մնում ժայռերից, որտեղ 10-12 օր մնալով, քայքայվում էին՝ սարսափեցնելով այդ ճանապարհով անցնողներին: Ես զրուցել եմ ականատեսների հետ, որոնք հաստատում էին, որ տեղի ունեցածից 15 օր հետո գետում կոճղերին դեմ առած շատ մերկ դիեր են տեսել, և որ դրանց հոտը սարսափելի է եղել» {(126) *30*}:

«Հայ կանայք ու աղջիկները, որպես կանոն, շատ գեղեցիկ են,– նշում էր Ա. Վեգները:– Թուրք զինվորականությունը՝ սպաները, զինվորներն ու ժանդարմները վայրի գազանի պես հարձակվում էին այդ ցանկալի ավարի վրա: Բոլոր հանցագործությունները, որոնք երբևէ կանանց հանդեպ կատարվել են, այստեղ տեղի էին ունենում: Կտրում էին նրանց կրծքերը, խեղում էին նրանց մարմնի անդամները, և նրանց դիերը դաշտերում խառնիխուռն ընկած էին մերկ ու պղծված կամ շոգից սևացած: […] Այո, պատահում էր, որ ժանդարմները նստում էին նրանց գլխի և ոտքերի վրա և այնքան էին մտրակում հղիների որովայնները, մինչև նրանք կանշնչանային: […] Շատերը՝ հուսահատության մեջ, իրենք էին իրենց կյանքին վերջ տալիս» {(163) *36-37, 73*}:

Մահերթի նպատակը մահն էր, և ոչ ոք բացառություն չէր կազմում: Մարաշի և Այնթապի միջև ընկած մի թուրքական գյուղի բնակիչներն ուզում էին ջուր և հաց տալ գյուղի մոտով անցնող

100 աքսորյալ հայ ընտանիքների, բայց դա նրանց արգելվեց: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ աքսորյալներին ուղեկցող ժանդարմները նրանց թույլ չեն տվել նույնիսկ մոտենալ մոտերքով հոսող առուներին: Ըստ գերմանացի ականատեսի վկայության, հղի կանանց անգամ ծննդաբարելու ժամանակ չէր տրվում: Նա հաղորդում էր, որ միայն Մարաշի և Այնթապի միջև ընկած տարածքում շուրջ 300 ծննդաբերություններ են եղել, և որ ծննդաբերելուց անմիջապես հետո ծնողկաններին ստիպում էին շարունակել ճանապարհը: Այդ դեպքում, իհարկե, մահը չէր ուշանում {(127) *142-143*}:

Ինչպես հաղորդվում էր Պոլսում գերմանական գլխավոր հյուպատոս Յ. Հ. Մորդտմանի՝ 1915 թ. օգոստոսի 19-ին դեսպանությանն ուղարկված տեղեկագրում, «Շատ մայրեր իրենց երեխաներին նետում են գետերը, նրանց տառապանքները երկար չտեսնելու համար: Ուրիշ մայրեր վաճառում են իրենց փոքրիկներին՝ մի կտոր հաց գնել կարողանալու, նաև նրանց անխուսափելի մահից փրկելու համար: Մինչև 6 տարեկան երեխաներին վաճառում են 5 պիաստրով, այսինքն՝ մեկ մարկից էլ պակաս գնով, իսկ 15-20 տարեկան օրիորդներին՝ 20 պիաստրով: Հատկապես գիշերները կանանց ու աղջիկների նկատմամբ կատարվում են ամեն տեսակ ամոթալի բռնություններ» {(8) *249*}: Թալեաթի՝ 1915 թ. սեպտեմբերի 3-ին Հալեպի նահանգապետին ուղարկված թիվ 502 հեռագրում հրահանգում էր «ծանոթ անձնավորությունների տղամարդկանց նկատմամբ գործադրվելիք՝ նախապես ուղարկված հրամաններն իրականացնել նաև կանանց ու երեխաների նկատմամբ և դրա համար կարգել վստահելի պաշտոնյաներ» {(10) *151*}: Մեկ այլ հրամանում Թալեաթը հաղորդում էր, որ «աքսորի նպատակակետը ոչինչն է» {(103) *89*}: Սեպտեմբերի 13-ին Հալեպ ուղարկված իր հեռագրում Թալեաթը պարզորոշ հետևյալն էր գրում. «Նախապես հաղորդված էր, որ կառավարությունը ջեմիյեթի (իթթիհաթի կոմիտեի) հրամանով որոշել էր ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող ընդհանուր հայությանը: Այս

հրամանին և որոշմանը հակառակվողները չեն կարող մնալ պետության պաշտոնական կազմում: Կին, տղա, անկար նկատի չառնելով, ոչնչացման միջոցները որքան էլ եղերական լինեն, խղճի զգացումներին ականջ չդնելով, նրանց գոյությանը պետք է վերջ տրվի {(10) *208-210*}:

Ուշագրավ է, որ ոճրագործները երեխաների սպանությունը կարևորում էին նաև այն պատճառով, քանի որ այլապես նրանք, կրելով ցեղասպանության հիշողությունը, կարող էին դառնալ վրիժառուներ: Դեր Զորի կառավարիչ Զեքի բեյն իր գործակիցների՝ սպանելու «եռանդը» վառ պահելու համար «հաճախ ձիու վրայից թեքվում էր, փոքրիկ տղաներին առնում թևերի մեջ, մեկ-երկու անգամ պտտում էր և գետնին հարվածելով՝ ջախջախելով սպանում ու ասում էր իր արբանյակներին. «մի՛ կարծեք, թե անմեղի սպանեցի. Սրանց (հայերի) նույնիսկ նորածինները հանցավոր են, որովհետև վրեժի սերմը պիտի կրեն իրենց մեջ: Ուզո՞ւմ եք վաղվա համար ապահով լինել, մի՛ խնայեք նաև փոքրիկներին»» {(10) *111*}:

Նախապես կառավարությունը վճռել էր ողջ թողնել մինչև 15 տարեկան երեխաներին՝ նրանց թրքացնելու համար: Այնուհետև տարիքային շեմը հասցվեց 7-ի, քանի որ ավելի ավագները կրելու էին իրենց ծնողների սարսափների հիշողությունը: Թալեաթի՝ 1915 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 830 հեռագրում նշված էր. «Հավաքեք և կերակրեք միայն այն որբերին, որոնք չեն կարողանա հիշել զուլումը, որին ենթարկվեցին իրենց ծնողները: Մյուսներին, քարավաններին միացնելով, ուղարկեք» {(10) *187*}: Ամենուրեք երեխաները կոտորվեցին ամենադաժան կերպով: Երզնկայի երեսփոխան Հալեթ բեյը հարյուրավոր երեխաների լցրեց գետը: Նույնը եղավ Խարբերդում:

Մոսուլի գերմանական հյուպատոս Հոլշտայնը հաղորդում էր, որ Մոսուլից Հալեպ տանող ճանապարհի որոշ հատվածներում երեխաների՝ այնքան շատ անդամահատված ձեռքեր է տեսել, որ կարելի էր դրանցով ծածկել մի ամբողջ փողոց {(49) *16-17*}: Երեխաների սպանդի առավել տարածված ձևը հրկիզումն էր: Բիթլի-

սում նահանգապետ Մուստաֆա Աբդյուլհալիգ բեյը, հավաքելով մոտ հազար երեխաների, նրանց տարավ Թաշխոտ կոչված վայրը և թուրք երևելիների ու ստվարաթիվ ամբոխի ներկայությամբ հրկիզեց նրանց: Նա այնտեղ նաև մի ճառ ասաց՝ շեշտելով, որ «Թուրքիայի ապագա գոյության համար հայկական գավառների մեջ հայ անունը պետք է իսպառ բնաջինջ անել» {(10) *177*}:

Բազմաքանակ ու հսկայածավալ են տեղահանված հայ ժողովրդի զանգվածային սպանդի և խոշտանգումների մասին օտարերկրյա ժամանակակիցների վկայությունները, զեկուցագրերն ու այլ սկզբնաղբյուրները: Էրզրումի գերմանական հյուպատոս Մ. Է. ֆոն Շոյբներ-Ռիխտերը 1915 թ. հուլիսի 28-ի իր զեկուցագրում, վկայակոչելով բարձրաստիճան թուրք բարձրաստիճան պաշտոնյաների իրեն տրված տեղեկությունները, արձանագրում էր, որ թուրքական կառավարության նպատակը Թուրքիայում հայերի «ամբողջական ոչնչացումն» է {(6) *123*}:

Իրենց պաշտոնական հաղորդագրություններում դա վկայում էին նաև Կ. Պոլսում Գերմանիայի՝ միմյանց հաջորդած երկու դեսպանները՝ Հ. ֆոն Վանգենհայմը և Պ. Վ. Մետեռնիխը {(7) *156,* (8) *454, 475*}, Հալեպի գերմանացի հյուպատոս Վ. Ռոսլերը {(8) *213-214*}, Աղանայի գերմանացի հյուպատոս Է. Բյուգեն {(8) *303-304*}, Կ. Պոլսում գերմանական գլխավոր հյուպատոս Յ. Հ. Մորդտմանը {(8) *402*}, փոխհյուպատոսներ Ա. Կուկհոֆը {(7) *158*}, Վ. Հոլշբայնը {(8) *404*}, բազմաթիվ այլ գերմանացի, ավստրոհունգարացի, ամերիկացի, շվեյցարացի, դանիացի ու այլազգի դիվանագետներ, պաշտոնյաներ, ծառայողներ, միսիոներներ և այլք: Նրանցից շատերն իրենց զեկուցագրերով ջանում էին նաև իրենց կառավարություններին դրդել՝ բնաջնջվող հայերին փրկելու նպատակով կոշտ միջամտություն կատարելու, ինչը, սակայն, տեղի չունեցավ:

Պրոֆ.Ա. Ֆորելը (Ցյուրիխ) 1916 թ. օգոստոսի 10-ին Գերմանիայի արտգործնախարարությանը, այնուհետև նաև կանցլերին ուղարկած իր զեկուցագրում հայերի հետ կատարվածն անվանում

էր «մի ամբողջ ժողովրդի գազանաբարո ոչնչացում», որը «գիշատիչ կենդանիների դաժանությունն իր հետևում՝ շատ հեռու է թողնում» {(7) *376*}:

Երիտթուրքական ցեղասպան վարչակարգը խստիվ արգելում էր կոտորածների կամ դիերի լուսանկարումը: Թալեաթը դեկտեմբերի 11-ին թվագրված իր հեռագրով հրահանգում էր այդպիսի փորձեր կատարողներին, եթե նրանք տեղացիներ էին, ձերբակալել ու սպանել: Քանի որ, սակայն, դաշնակից երկրների սպաների կողմից ևս լուսանկարման դեպքեր էին ի հայտ գալիս, նա 1915 թ. դեկտեմբերի 29-ին Հալեպի նահանգապետությանն ուղղված իր հեռագրում հրամայում էր անհապաղ թաղել դիերը {(10) *146, 148*}: Չնայած այդ և նման հրամաններին, անհաշիվ դիերի թաղումը դյուրին չէր: Դրանք մեծ մասամբ մնում էին բաց երկնքի տակ՝ դառնալով կեր գիշատիչների համար և հարուցելով համաճարակներ:

Արևելյան նահանգներից՝ Արևմտյան Հայաստանից, տեղահանվածների առավելագույնը մեկ երրորդը, շատ դեպքերում՝ մոտ 10%-ն էր հասնում մահերթի վերջնակետեր՝ Մոսուլի մերձակայք, Ռաս ուլ-Այն, Ռակկա, Դեր Զոր, Մեսքենե, Հավրան, Դառաա, Կերակ և այլն: Արևմտյան նահանգներից տեղահանվածների փոքր-ինչ ավելի մեծ մասն էր հասնում անապատ, քանի որ գործընթացն արագացնելու համար նրանց մի մասը ճանապարհի որոշ հատվածներում ուղարկվում էր բեռնատար երկաթուղային վագոններով:

Ինչպես արձանագրում է Լեփսիուսը, ընդհանուր առմամբ, «աքսորավայրն» ընդգրկում էր Եփրատի մոտ գտնվող Դեր Զորի և Տիգրիսի մոտ գտնվող Մոսուլի միջև ընկած ամայի ու անապատային տարածքները: Շատ դեպքերում քարավաններից միայն փոքրիկ բեկորներ էին հասնում այնտեղ: Անմիջաբար դեպի անապատ տանող ճանապարհներն անցնում էին Հալեպով՝ դեպի Դեր Զոր, Ուրֆայով, Վերանշեհիրով և Նիսիբինով՝ դեպի արաբական անապատի հյուսիսային եզերք, Ջեզիրեով՝ դեպի Մոսուլ և Դա-

մասկոսով դեպի Հավրան: «Քարավանները,– գրում է Լեփսիուսը,– որոնք հյուսիսից ճանապարհ էին ընկնում, երբ հասնում էին հարավ, մեծ մասամբ բաղկացած էին մինչև 10 տարեկան երեխաներից և տարիքոտ կանանցից, հիվանդներից ու ծերերից: Տղամարդիկ և պատանիները սպանվել էին, աղջիկները, երիտասարդ կանայք և անթիվ երեխաներ՝ առևանգվել: Մնացորդը անօգնական, թշվառությանը մատնված մուրացիկների բազմություն է, որը Միջագետքի անապատներում և ճահճային տարածքներում զոհ է դառնում սովին ու հիվանդությանը» {(127) *25-26*}:

Թալեաթը դեռ 1915 թ. օգոստոսի 31-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանի տեղապահ Հոհենլոհե-Լանգենբուրգին հաղորդում էր, որ «Հայկական հարց այլևս գոյություն չունի» {(6) *XXVI*}:

Անապատ՝ աքսորի վերջնակետ հասած հայերի ճակատագիրը

Տեղահանման հետևանքով արևակեզ անապատները՝ Դեր Զորից մինչև Ջերաբլուս, Ռաս ուլ-Այն և Մոսուլ լցվեցին աքսորյալ հայերով: Մահերթը վերապրած աքսորյալներից շատերը անապատ հասնելուց հետո զոհ էին դառնում սովին ու համաճարակներին, կամ նրանց շարունակում էին այս ու այն կողմ քշել, մինչև վերջնականապես ուժահատ կլինեին: Ա. Անտոնյանը վկայում է, որ իր՝ Մեսքենեում գտնված ժամանակ սովից ու հիվանդություններից օրական մեռնում էին 300-500 մարդիկ {(10) *19*}: 1915-1916 թթ. ձմռանը Ռաս ուլ-Այնում, Բաբում և որոշ այլ համակենտրոնացման ճամբարներում օրական մահացությունների միջին թվաքանակն ավելի մեծ էր:

Գերմանացի դիվանագետ և սպա Վիլհելմ Լիտտենը, 1916 թ. հունվարի վերջին Բաղդադից մեկնելով Հալեպ և անցնելով այդ ճանապարհի վրա գտնվող՝ հայ տարագիրների բոլոր, ընդհանուր թվով 19 միջանկյալ կայաններով, 1916 թ. փետրվարի 6-ին Ռոսլերին ուղարկած իր զեկուցագրում տեղեկացնում էր ճանապարհին թափված բազում դիերի մասին, որոնցից շատերն անօրինակ խոշտանգումների հետքեր էին կրում: «Մի փոքրիկ բարձրության

վրա,– գրում էր նա,– այդպիսով փողոցով անցնողների աչքերին տեսանելի դիրքում, մոտ երկու տարեկան իգական սեռի մի երեխա՝ հագին միայն մի կարմիր շապիկ, որը մարմնից հանված է, արյունահոսող ամոթույքը մերկացված և ուղղված դեպի փողոցը»:

Կարևոր են նաև Լիտտենի տեղեկություններն այդ վայրերում դեռ կենդանի մնացած հայերի զարհուրելի դրության մասին, որոնց շարունակում էին քշել դեպի անապատի խորքը: Համամում ժանդարմները դա մեծ շտապողականությամբ էին անում, որպեսզի դեռ այնտեղ գտնվող 5000 սովահար հայերի «դիերն առնվազն այնտեղ թափված չլինեն»: Ժանդարմերիայի պարետները վկայում էին, որ հայերի սպանդը տեղի էր ունենում կառավարության «հրամանով»: Գրեթե նույն ժամանակ ոտքի էին հանվել նաև Համամից Աբու Հուրեիրե ճանապարհին գտնվող շուրջ 600 վրաններրի շուրջ 6000 բնակիչները՝ դարձյալ քշվելու համար: «Երեխաներ,– գրում էր նա,– կանայք, մեռածներ, համատարած քաոս, այդ ամենի մեջ մեծ աղտոտվածություն: Չկա ոչ մի զուգարան: Մի քանի տղամարդիկ շրջում են, ոտքով հրում են գետնին պառկած յուրաքանչյուրին տեսնելու համար՝ մեռած է, թե՞ ոչ […]»:

Դիեր չկային միայն Մեսքենեի և Հալեպի միջև ընկած հատվածում, քանի որ աքսորյալների մեծ մասն անապատի խորքն էր քշվում Բաբի ուղղությամբ՝ շրջանցելով Հալեպը: Ինչ վերաբերում էր Դեր Զորից Հալեպ ընկած ճանապարհահատվածին, ապա Լիտտենն այն անվանում էր «դիերի զարհուրելի շքերթ»: «Ես ճանապարհին տեսնում էի սովյալների,– նշում էր նա,– ծարավից պապակվածների, մահացողների, հենց նոր մահացածների, թարմ դիերի մոտ սգացողների, իսկ նա, ով չէր կարողանում արագ բաժանվել հարազատի դիակից, իր կյանքն էր խաղադրույքի վրա դնում, քանի որ հաջորդ կայանը կամ օազիսը հետիոտնի համար գտնվում է երեք օրվա հեռավորության վրա: Սովից, հիվանդությունից, ցավից ուժասպառ՝ նրանք շարունակում են երերալով գնալ, վայր են ընկնում, մնում են պառկած» {(7) *300-313*}:

Լիտտենի բազմաթիվ արժեքավոր տեղեկությունները բնութագրական էին բոլոր կայանների համար, որտեղից հայ տարագիրները շարունակում էին քշվել դեպի անապատի խորքերը:

Այդ ամենով հանդերձ, 1916 թ. գարնանը դեռ բազմահազար հայեր շարունակում էին գոյատևել անապատներում: Նրանց բնաջնջելու համար իրականացվեցին նոր պարբերական կոտորածներ: Ռաս ուլ-Այնի շրջանում կուտակված հայերի զանգվածային սպանդը հրահանգեց և կազմակերպեց Վանի նահանգապետ, Էնվերի քեռայր Ջևդեթ բեյը: Ռաս ուլ-Այնում միայն 1916 թ. ապրիլի 6-ին մորթվեց 12 000 մարդ: Կոտորածի ընթացքում, որ շարունակվեց մինչև հունիս, քաղաքում և շրջակայքում սպանվեցին շուրջ 70 000 հայեր: Վերանշեհիրում մորթվեց 13 000 մարդ: Սպանվեցին նաև Ինթիլլիում կուտակված 50 000 հայերը: Այս կոտորածներից առաջ ևս ամենաանմարդկային միջոցներով շարունակվում էր զոհերի կողոպուտը: «Ռաս ուլ-Այն հասած կանանց,– իր զեկուցագրում հաղորդում էր Հալեպի գերմանական հյուպատոսի վստահորդ Վ. Շպիկերը,– նրանց ուղեկցող ժանդարմները ճանապարհին շատ անգամներ ստիպում էին ամբողջովին մերկանալ: Փողի փնտրտուքով ստուգվում էին նրանց հագուստները, նաև նրանց մազերը և … նրանց ամոթույքը՝ պարզելու՝ արդյոք նրանք փող չէին թաքցրել» {(8) *217*}:

Դեր Զոր քշված մոտ 200 000 հայերին արագ բնաջնջելու համար այդ շրջանի կառավարիչ Զեքի բեյը նրանց Մոսուլ տանելու պատրվակով խմբերով դուրս էր բերում համակենտրոնացման ճամբարներից ուղարկում այլ անապատային վայրեր, որտեղ նրանք արագ զոհ էին դառնում սովին ու կոտորածներին: «Զեքի բեյը,– գրում է Ա. Անտոնյանը,– {…} ստեղծեց արհեստական սով, որի ընթացքում մարդիկ նախ էշերին, շներին, կատուներին կերան, հետո ձիու և ուղտի դիակներ, և ավելի ուշ, երբ ուրիշ բան չմնաց ուտելու, մարդկային դիակներ, առավելապես փոքրիկ տղաների դիակները: Դիվահարների քարավաններ էին այլևս դրանք» {(10) *109*}:

1916 թ. գարնանը Դեր Զորում դեռ կենդանի էր մնացել մոտ 60 000 մարդ, իսկ հունիսի սկզբին այնտեղ հաշվվում էին 20 000 կենդանի մնացած հայեր: Նահանգապետի հրամանով նրանց մի քանի հարյուրանոց խմբերով դուրս բերեցին քաղաքից, սպանեցին և նետեցին Եփրատ գետը: Այդ եղանակով հաշվված շաբաթներում մեկը մյուսի ետևից լուծարվեցին Դեր Զորի և մյուս համակենտրոնացման ճամբարները: Այդ ոտորածների ընթացքում միայն որոշ թվով աղջիկներ ու կանայք փրկվեցին, որոնց (շատերին բազմիցս լկելուց հետո) վաճառելու համար ուղտերով փոխադրեցին դեպի Ռաս ուլ-Այն և Մարդին: Նրանց գինը, եթե լկված չէին, 20 դահեկան էր, իսկ լկվածներինը՝ 5 դահեկան {(10) *111,* (6) *LXIV*}:Վերջին աքսորյալները, որոնք 1916 թ. հունիսին հասան Ուրֆա, Բաղդադի երկաթուղու վրա աշխատող հազարավոր հայ տղամարդիկ էին: Երկաթուղու՝ գերմանացի պաշտոնյաները 1915 թ. կարողացել էին նրանց զերծ պահել աքսորումից, բայց 1916 թ. ստիպված եղան տեղի տալ: «Նրանք այլևս հեռու չէին գնալու,– գրում էր Յ. Կյունցլերը,– Վերանշեհիրում վրա հասավ նրանց ճակատագիրը, նույնը, որ դրանից առաջ բաժին էր ընկել իրենց հարյուր հազարավոր եղբայրներին: Նրանք բոլորը դանակներով սպանվեցին» {(122) *99*}:

Բռնի իսլամացումը

Դեռ զանգվածային տեղահանման սկզբում շատ վայրերում տեղական իշխանությունները մարդկանց առաջարկում էին իսլամանալ՝ խոստանալով, որ այդ դեպքում չեն վտարվի: Տրապիզոնում, Օրդուում, Սամսունում և այլ վայրերում հարյուրավոր ընտանիքներ իսլամ ընդունեցին ու չարտաքսվեցին: Ընդ որում շատ դեպքերում առանձին անհատների համաձայնությունը հաշվի չէր առնվում, և պահանջվում էր, որ նվազագույնը 100 մարդ միաժամանակ իսլամանա՝ տեղահանումից զերծ մնալու համար: Մարդկանց ստիպում էին նաև ստորագրել հավաստագրեր այն մասին,

թե իրենք կամովին էին կրոնափոխվում: Սամսունում մյութեսարիֆը տեղահանությունից առաջ քաղաքի երևելի հայերին հրավիրեց ճաշի և պահանջեց, որ իսլամանան: Տեղահանման հրամանի հրապարակման օրը Սամսունում քրիստոնյաների և մահմեդականների թաղամասերի միջև մի սահմանալար տեղադրվեց և մունետիկի միջոցով տեղեկացվեց, որ ով իսլամ ընդունի և անցնի այդ սահմանագծով, կարող է մնալ: Նրանք, ովքեր հատեցին այդ գիծը, իսլամացան և չտեղահանվեցին, մյուսները բռնեցին աքսորի ճանապարհը: Մարզվանում նույնպես նրանք, ովքեր համաձայնեցին իսլամանալ, չաքսորվեցին:

Զելայում իսլամացումից հրաժարվող մայրերին խողխողեցին երեխաների աչքի առաջ: Գեմերեկում 30 ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին հավաքեցին և ասացին, որ եթե իսլամ չընդունեն, կմեռնեն: Նրանց գերադասեցին մահը: Սեբաստիայի վալին, որին այդ մասին հեռագրով տեղեկացրեցին, հրամայեց նրանց բռնի բաժանել մահմեդական ընտանիքներին: Կրոնափոխվածներին տալիս էին մահմեդական անուններ, իսկ արական սեռին պատկանողներին անմիջապես թլպատում էին: Տրապիզոն քաղաքում իսլամացան 200, Կերասունում՝ 160, Օրդուում՝ 200, Սամսունում՝ 150 ընտանիքներ: Կրոնափոխվածների թիվը համեմատաբար մեծ էր Խարբերդի նահանգում: Լինում էին դեպքեր, երբ տեղական իշխանությունները սեփական հայեցողությամբ աքսորում էին նաև կրոնափոխված կամ կրոնափոխման համաձայնություն հայտնած մարդկանց:

Բնականաբար, բռնի իսլամացվում էին նաև մահերթի ճանապարհներին առևանգված և մահմեդական հարեմներ ու տներ տարված երեխաները, կանայք ու աղջիկները, որոնց ընդհանուր թիվը, ըստ Լեփսիուսի, առնվազն մեկ քառորդ միլիոն էր կազմում: Հյուսիսից հարավ քշվող քարավանների «10 տարեկանից մեծ երեխաները,– գրում էր Լեփսիուսը,– բոլոր երիտասարդ աղջիկները ճանապարհին անհետանում էին, և առևանգվում էր նաև երի-

տասարդ կանանց մեծ մասը: Քաղաքներում, որտեղով նրանք անցնում էին, մահմեդական բնակչությանը հնարավորություն էին տալիս իր համար ընտրել ամենագեղեցիկ աղջիկներին, նույնիսկ նախապես նրանց պիտանելիությունը ստուգել բժիշկների միջոցով: Երեխաները մասամբ վաճառվում էին ժանդարմների կողմից, մասամբ մայրերն էին նրանց մահմեդականներին տալիս՝ նրանց կյանքը փրկելու համար: Աքսորյալների քարավանները շրջիկ ստրկական շուկաներ էին: Բազմաթիվ կանայք ու աղջիկներ անպատվությունից խուսափում էին ինքնասպանության միջոցով» {(126) *256-257*}:

Տեղահանության ժամանակ անօրինակ խոշտանգումների և նվաստացումների էին ենթարկվում նաև հայ հոգևորականները: Սեբաստիայում նահանգապետը կարգադրեց հայերի հոգևոր առաջնորդին պայտել՝ ասելով, թե «եպիսկոպոսին չի կարելի թողնել, որ բոբիկ գնա» {(127) *64*}: Դիարբեքիրում 5 հայ քահանաների, մերկացնելով և թաթախելով ձյութի մեջ, ստիպեցին շրջել քաղաքի փողոցներով: Թերմեռում (Տրապիզոնի նահանգ) եկեղեցին մզկիթ դարձնելուց հետո քահանային տուրբան հագցրեցին՝ ստիպելով նամազ անել և մահմեդական կրոնական արարողություն կատարել: Տեղահանությունից հետո եկեղեցիները, եթե չէին ավերվում, ապա վերածվում էին մզկիթների կամ այլ նպատակների համար էին օգտագործվում: Երզնկայի եկեղեցին, օրինակ, վերածվեց հանրային զուգարանի {(127) *258*}:

Եթե սկզբնական շրջանում իսլամացումը, որպես տեղահանման այլընտրանք, կարող էր նահանգային իշխանությունների հայեցողությամբ խրախուսվել, պարտադրվել կամ թույլատրվել, ապա ավելի ուշ, մինչև մահերթի ավարտն այն դադարեց այլընտրանք լինելուց: Այդ հարցում կարևոր դեր ունեցավ Թալեաթի՝ 1915 թ. դեկտեմբերի 17-ին Հալեպի նահանգապետությանը (անշուշտ նաև մյուս նահանգապետություններին) ուղարկված՝ թիվ 762 հրամանը, որում նշվում էր. «Ընդհանուր առաքումներից փրկվելու մտածումով իսլամն ընդունել ուզող հայերին հաղորդեք,

որ անհրաժեշտաբար պետք է իրենց տարագրության վայրերում իսլամանան» {(10) *212*}:

Թեև կրոնափոխությունն այդուհետ այլևս չէր փրկում տեղահանումից, այնուհանդերձ մահերթի ավարտից հետո այն վերապրածների նկատմամբ իսլամացումը գործադրվեց որպես կենտրոնաձիգ քաղաքականություն: 1916-1917 թթ., երբ քարավաններից ետ ընկած կամ մերձակա վայրերում թաքստոց գտած կանայք ու երեխաները սկսեցին վերադառնալ մոտակա քաղաքները, գործի դրվեց նրանց զանգվածային կրոնափոխման մեքենան: Կառավարության՝ տեղական իշխանություններին ուղարկված մի գաղտնի հրամանով հանձնարարվում էր վերապրած հայերին հարկադրել՝ ստորագրել գրավոր դիմումներ, որոնցում նրանք հայցում են «արտոնություն՝ իսլամի սուրբ կրոնն ընդունելու իրավունք ունենալու համար»: Հրաժարվողները պետք է կրկին արտաքսվեին, այն է՝ դառնային մահվան բաժին {(127) *257-258*}:

Կոնիայում, Հալեպում, Շապին-Գարահիսարում, Սեբաստիայում, Կեսարիայում, Ուրֆայում և բազմաթիվ այլ վայրերում հավաքված՝ վերապրած կանանց ու երեխաներին հարկադրեցին «կամավոր» կերպով ընդունել իսլամ: Անկարայում, Կեսարիայում, Բեյրութում և այլ վայրերում հիմնվեցին նաև թուրքական որբանոցներ, որտեղ տեղավորեցին վերապրած փոքրիկ որբերին՝ նրանց տալով թուրքական անուններ և ուսուցանելով իսլամ: Այդ որբանոցներում պայմաններն այնքան վատ էին, որ շատերը մահանում էին թերասնումից և հիվանդություններից: Ուրֆայում, օրինակ, մի թուրքական որբանոցում հավաքել էին 1000 հայ երեխաների, որոնցից շուրջ 800-ը կես տարում մահացան: Տեղի էին ունենում նաև նաև որբանոցներում հավաքագրված երեխաների զանգվածային սպանություններ: Հալեպի թուրքական որբանոցի տեսուչը, որի անունը Նազմի էր, պարբերաբար սպանել էր որբանոց տարված 3000 տղաներին՝ թողնելով միայն 50-ին, և դա էլ այն հաշվարկով, որպեսզի որբանոցը չափակվեր, և ինքը չզրկվեր իր աշխատատեղից {(28) *66-67*, (10) *185*}:

1916 թ. օգոստոսի 1-ին Բ. Դուռը հրապարակեց նաև մի օրենք հայ կաթողիկոսության և պատրիարքարանի վերաբերյալ, որով վերացվեցին հայ ազգի (հայկական միլլեթ) քաղաքական և եկեղեցական իրավունքները, լուծարվեցին Հայոց ազգային ժողովը, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: Պատերազմում Օսմանյան պետության պարտությունից հետո միայն այդ օրենքը չեղյալ համարվեց {(127) *300*}:

Հայապատկան ունեցվածքի կողոպուտը

ա) «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը: Լուծարման հանձնաժողովները

Որոշ տեղերում (Մարզվանում, Կիլիկիայի մի շարք շրջաններում և այլն) տեղահանման հրամանը հրապարակելուց հետո մինչև դրա մեկնարկումը հայերը հնարավորություն ունեին անհշան գներով վաճառել իրենց ունեցվածքը, իսկ այլ վայրերում դա նրանց արգելվում էր: Տրապիզոնում, օրինակ, տեղահանման հրամանը հրապարակելուց անմիջապես հետո հայերին արգելվեց իրենց ունեցվածքից ինչ-որ բան վաճառել: Այդ քաղաքի ավելի քան 1000 հայապատկան տների արժեքավոր գույքը կուտակվեց որոշակի մեծ տներում, իսկ մնացյալը դարձավ ամբոխի թալանի առարկա: Որպես կանոն, իշխանությունները հայերին հայտնում էին, թե իրենց ունեցվածքը ապահով կպահվի և կվերադարձվի իրենց, կամ խոստանում էին, որ այն կգնահատվի, և կկատարվի հատուցում:

Տեղահանումից անմիջապես հետո, սակայն, սկսվում էր թալանը: «Կանանց և երեխաների մի բազմություն,– հաղորդվում էր Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսության՝ 1915 թ. հուլիսի 28-ի տեղեկագրում,– ինչպես անգղերի երամ, կրնկակոխ հետևում է ոստիկանության պաշտոնյաներին և հափշտակում է այն ամենն, ինչ իր ձեռքն է ընկնում: Եթե արժեքավոր իրերը ոստիկանության

կողմից դուրս են տարվում, ոհմակը ներս է խուժում ու տանում, ինչ մնացել է: Ես այդ ամենը տեսնում եմ ամեն օր սեփական աչքերովս» {(126) *33*}:

Տեղահանության մասին օրենքի հրապարակումից հետո քայլեր ձեռնարկվեցին նաև հայ ժողովրդի ունեցվածքի կողոպուտն «օրինականացնելու» համար: 1915 թվականի հունիսի 10-ին հրապարարկվեց «Այլ վայրեր տեղափոխված հայերին պատկանող անշարժ գույքերի և հողատարածքների կառավարման ձևի մասին» կանոնադրությունը, որտեղ ցուցումներ էին տրվում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ գույքի» հետ վարվելու վերաբերյալ: Հայ ժողովրդի ունեցվածքի դեռ ամիսներ առաջ սկսված կողոպուտի և վաճառքի ընթացքում՝ 1915 թվականի սեպտեմբերի 26-ին, ընդունվեց «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը, որով հրահանգվում էր կատարել հայերի լքյալ գույքերի ցուցակագրումն և կազմակերպել դրանց ապահովությունը {(12) *394-395*}:

Այդ նպատակով ստեղծված լուծարման հանձնաժողովները չէին զլանում առիթն օգտագործել հարստություն դիզելու համար: Ուրֆայում, օրինակ, «լքյալ գույքը» բռնագրավելու համար 1915 թ. դեկտեմբերից տարբեր հանձնաժողովներ հաջորդեցին միմյանց: «Երբ մի հանձնաժողովն արդեն հայերի ունեցվածքով բավականաչափ հարստացել էր,– հաղորդում էր Կյունցլերը,– այն փոխարինվում էր այլ պաշտոնյաներով, որոնք շարունակում էին նախորդների գործը՝ սպանվածների և աքսորյալների ունեցվածքի նկատմամբ նույն ընչաքաղցությամբ» {(122) *92*}:

Հայ ժողովրդի ունեցվածքի պետական կողոպուտի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել աշխարհամարտի տարիներին Էրզրումի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած Թահսին բեյը՝ նպատակ ունենալով այդ կերպ խուսափել գողության մեղադրանքից: Այդ տեղեկագրում, որը տպագրվել է «Cumhuriyet» թերթի 1924 թ. դեկտեմբերի 19-ի համարում, նա

հետևյալն էր հաղորդում. «Մինչև տեղահանման հրամանը Էրզրումի հայերն իրենց թանկարժեք քարերը և ոսկին անդորրագրերի դիմաց ավանդ էին տվել օտոմանյան բանկին: Տեղահանումից հետո ֆինանսների նախարարությունը օտոմանյան բանկից ետ պահանջեց այդ ավանդադրված ունեցվածքը՝ վկայակոչելով «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը: Երբ բանկը հրաժարվեց, սկսվեցին երկարատև բանակցություններ բանկի ղեկավարության և ֆինանսների նախարարության միջև, ի վերջո նյութական երաշխիքների հիման վրա, որոնք ֆինանսների նախարարությունը տվեց, վճռվեց, որ հայերի՝ Էրզրումի օտոմանյան բանկում ավանդադրված ողջ ունեցվածքը փոխանցվի ֆինանսների նախարարությանը: Դրա հետևանքով փաթեթները Ջեմալ բեյի՝ իրավասու գեներալի, միստր Բալադյուրի՝ Էրզրումի բանկային բաժանմունքի ղեկավարի և Ջելալ բեյի կողմից հատուկ կնիքով կնքվեցին, և Ջեմալ բեյը դրանք բերեց Կ. Պոլիս ու հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի ստացական, որը դեռ գտնվում է ինձ մոտ, և մի լուսանկար, որը ես պատրաստ եմ հրապարակել» {(30) *377-378*}:

բ) Հինգ միլիոն ֆունտը

Երիտթուրքական կառավարությունն Աշխարհամարտի ժամանակ Բեռլինի պետական բանկում ավանդադրել էր 5 միլիոն թուրքական ֆունտ (ոսկով), որը զինադադարից հետո տեղափոխվեց Անգլիա: 1923 թ. նոյեմբերի 23-ին Փարիզում ստորագրված մի համաձայնագրով վճռվեց այն օգտագործել Օսմանյան պետությունում դաշնակիցների քաղաքացիների՝ պատերազմի ընթացում կրած կորուստների հատուցման նպատակով: Այդ գումարն անկասկած գոյացել էր հայերի ունեցվածքի վաճառքից: Բրիտանացի բարձրաստիճան քաղաքական գործիչներ Հ. Ասքվիթը (1908-1916 թթ. Մեծ Բրիտանիայի վարչապետ) և Ս. Բոլդուինը (երեք անգամ զբաղեցրել է Մեծ Բրիտանիայի վար-

չապետի պաշտոնը, երկրորդ անգամ՝ 1924 թ. նոյեմբերից մինչև 1929 թ. հունիս) 1924 թ. սեպտեմբերի 26-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ռ. Մաքդոնալդին ուղղված իրենց հուշագրում նույնպես այն համոզումն էին արտահայտում, որ այդ գումարը մեծ մասամբ գոյացել է տեղահանված հայերի ունեցվածքի կողոպուտից {(84) *69*}:

1925 թ. հունվարին, երբ այդ կորուստների հաշվառման նպատակով Փարիզում մի հանձնաժողով կազմվեց, Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն հանդես եկավ հանձնաժողովին ուղղված ուղերձով, որում, մատնանշելով այդ դրամագլխի բուն պատկանելությունը, կոմիտեն հանձնաժողովին կոչ էր անում դրա գեթ մի մասը վերադարձնել վերապրած հայերին և շուրջ 100 000-ի հասնող հայ որբերին:

Հարցին անդրադարձան նաև հայ ժողովրդի գերմանացի բարեկամները: «Լավագույն աղբյուրներից տեղեկանում ենք,– նշվում էր «Դր. Լեփսիուսի գերմանական արևելյան առաքելություն»կազմակերպության՝ 1927 թ. հրատարակած «Հայկական հարյուրավոր միլիոնների բանկային ունեցվածքը և Անգլիան» վերնագրով հրապարակման մեջ,– որ հայերի (ժամանակավորապես կալանքի տակ դրված) նախկին բանկային ունեցվածքը՝ հավասարազոր 5 միլիոն անգլիական ֆունտի կամ 100 միլիոն մարկի, Անտանտի կողմից բռնագրավված է և անգլիացիներին խոստացվել է որպես հատուցում Թուրքիայում կորած անգլիական ունեցվածքի դիմաց: Մենք չգիտենք՝ դա ստույգ տեղեկություն է, թե ոչ, և այդ պարզելու ակնկալիքով այն հանձնում ենք հանրությանը» {(87) *113*}:

Առժամանակ անց կազմակերպությունը հայտարարում էր, որ այդ տեղեկությունը «ճիշտ է դուրս գալիս: Ոչ մի կողմից որևէ հերքում կամ ուղղում չի ստացվել: Թվում է, թե իրականում քաղաքականությունը և էթիկան ոչ մի առնչություն չունեն իրար հետ, եթե դա այսօրինակ տարրական իրավիճակում խափանվում է՝ հայերի միլիոնները թողնելով անգլիացիների ձեռքում» {(87) *132*}:

Այդ դրամագլխի մասին հետագայում նոր տեղեկություններ չեն հաղորդվել: Հավանական է համարվում, որ այն մնացել է Անգլիայում, իսկ այն հարցը՝ արդյոք հնարավո՞ր է, միջազգային իրավունքի գործիքակազմն օգտագործելով, այդ գումարը վերադարձնել հայ ժողովրդին, թերևս կարող են պարզել իրավաբանները:

Մեծ եղեռնի հետևանքները

Ահռելի են Մեծ եղեռնի հետևանքով հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստները: 1916 թ. հոկտեմբերի 4-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանությունից կանցլերին ուղարկված տեղեկագրի համաձայն՝ Օսմանյան պետությունում հայերի թիվը նախքան տեղահանությունը կազմում էր շուրջ 2,5 միլիոն {(190)}: Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի՝ 1882 թ. ամբողջացված առաջին համընդհանուր վիճակագրության, Օսմանյան պետությունում բնակվում էին 2 միլիոն 660 հազար հայեր {(15) *451*}: Եթե նկատի առնվեն 1894-1896 թթ. ողջ երկրով մեկ, նաև հետագայում Սասունում (1904 թ.) և Կիլիկիայում (1909 թ.) տեղի ունեցած կոտորածներն ու դրանց հետևանքները, ապա դեսպանության արձանագրած վերոնշյալ թիվը կարող է միանգամայն հավաստի համարվել:

Մեծ եղեռնի զոհերի թիվը գնահատվում է 1,5 միլիոն, ընդ որում՝ դա չի վերաբերում բռնի իսլամացված հայերին, որոնց թվաքանակը, ըստ Լեփսիուսի գնահատումների, կազմում էր շուրջ մեկ քառորդ միլիոն:

Հայ ժողովրդի՝ ցեղասպանությունը վերապրած մնացորդների մեծագույն մասը հայրենազրկվեց և հարկադրվեց դիմել տարագրության՝ ստվարացնելով արտերկրի հայկական համայնքները կամ ձևավորելով նոր համայնքներ:

Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակության՝ 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացրած հուշագրի համաձայն՝ հայերի նյութական կորուստները կազմում են 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000-ը

արևմտահայության, իսկ 4.532.472.000-ը Հայաստանի Հանրապետության կրած կորուստներն էին: Այդ տվյալները, սակայն, չեն կարող համարվել սպառիչ, և հարցը հանգամանալից ուսումնասիրման կարիք ունի:

Ըստ 1912-1913 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից կազմված և թուրքական կառավարությանը ներկայացված պաշտոնական տեղեկությունների՝ Օսմանյան պետության ողջ տարածքում հայկական եկեղեցիների ու վանքերի թիվն անցնում էր 2000-ից (այդ թվում՝ IV-V դդ. վաղ քրիստոնեական շրջանի եզակի հուշարձաններ): Դրանց մեծագույն մասը ցեղասպանության ժամանակ կողոպտվեց, հրկիզվեց, ավերվեց կամ յուրացվեց՝ վերածվելով մզկիթների: Նույն ճակատագիրն ունեցան նաև հայկական մեծաքանակ այլ ճարտարապետական հուշարձաններ:

Հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ երիտթուրքերի որդեգրած՝ ոչնչացման քաղաքականությունը շարունակվեց հանրապետական Թուրքիայում: 1920-ական թվականներից այնտեղ սկսվեց նաև Արևմտյան Հայաստանի տեղանունների փոփոխման գործընթաց: Ներկայումս Արևմտյան Հայաստանի տեղանունների ավելի քան 90%-ը թրքացվել են: Հայկական աշխարհագրական տեղանունները փոխարինվել են թուրքականով {(188)}:

Օսմանյան պետությունում գործադրված մշակութային եղեռնը հաստատվում է նաև 1914 թ. թուրքական պաշտոնական տեղեկատվությամբ, որի համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունեն {(45) *8-9, 12*}:

Անկասկած, նույնն է պատկերը նաև հայկական առաջնորդարանների, վարժարանների և այլ ազգային շինությունների դեպքում:

Հայկական մշակութային արժեքների ոչնչացումը չի սահմանափակվում վերոնշյալով: Ոչնչացվել են նաև հազարավոր հայկական ձեռագրեր, անհաշիվ խաչքարեր, մշակույթի և արվեստի տարատեսակ կոթողներ, իսկ այն, թե ինչ հետևանքներ է ունեցել հայկական մշակութային արժեքների յուրացման քաղաքականությունը, որը թուրքական իշխանությունների կողմից գործադրվել է հետցեղասպանական տասնամյակներին, կարող է որոշակիանալ միայն համապատասխան հիմնարար ուսումնասիրության դեպքում:

Ինքնապաշտպանական մարտերը 1915 թ.

1915 թ. որոշ վայրերում հայերը հրաժարվեցին ենթարկվել թուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականությանը և դիմեցին ինքնապաշտպանության:

Վանի ինքնապաշտպանությունը

Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը, 1915 թ. փետրվարին վերադառնալով Սալմաստից, թուրք երևելիների հետ մի հանդիպման ժամանակ հայտարարեց. «Մենք վերջ ենք տվել Ադրբեջանի (նկատի ունի հյուսիսային Պարսկաստանը) հայերին ու ասորիներին, պետք է նույնը անենք Վանի հայերի հետ» {(127) *81*}: Նա սկզբում հայերին հաճոյանալու քաղաքականություն էր վարում՝ միաժամանակ Էրզրումից բերելով ռազմական համալրումներ և փորձելով ոչնչացնել Վանի հայերի ղեկավարներին: Երբ նրան հաջողվեց նենգորեն սպանել տալ Իշխանին (Ն. Պողոսյան), Քոթոթին (Պ. Մարտիրոսյան), Ա. Վռամյանին և մի քանի այլ գործիչների, սկսվեցին նաև հարձակումներ Առեն, Անգղ, Քերծ, Խառակոնիս ու մի շարք այլ բնակավայրերի վրա: Ստեղծված իրա-

վիճակում գյուղերի բազմաթիվ բնակիչներ տեղափոխվեցին քաղաք: Թուրքերը դա չէին խոչընդոտում՝ հուսալով, որ այդպիսով քաղաքում սով կսկսվեր:

Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց Զինվորական մարմին, որի կազմում ընդգրկվեցին Արմենակ Եկարյանը, Արամ Մանուկյանը, Փանոս Թերլեմեզյանը և այլ գործիչներ: Այգեստանում, որտեղ 20 000 հայեր էին ապրում, Քաղաքամեջում և այլ վայրերում ստեղծվեցին պաշտպանական գոտիներ: Բնակչությունը բերվեց բարձր կազմակերպվածության մակարդակի: Սկսվեց զենքի և զինամթերքի արտադրություն: Բուլղարացի Գրիգորը նույնիսկ մի թնդանոթ պատրաստեց: Ապրիլի 7-ին թուրքերը 12 000-անոց զորքով գրոհեցին քաղաքի վրա, բայց ետ մղվեցին: Էրզրումից ստանալով 7 000-անոց նոր համալրում՝ նրանք շարունակեցին հարձակումները: Մեծ կորուստներ կրելով և չկարողանալով գրավել Վանը՝ թուրքերը մայիսի 3-ին փախան դեպի Բիթլիս: Մայիսի 5-ին և 6-ին Վան հասավ «Արարատյան գունդը», որը կազմված էր կամավորական ջոկատներից: Ռուսական հրամանատարությունն Արամ Մանուկյանին նշանակեց Վանի նահանգապետ:

Հուլիսի 2-ին, սակայն, երբ ռուսական զորքերը հանկարծակի նահանջեցին Վանից, բնակչությունը մատնվեց խուճապի, և մոտ 200 000 մարդ գաղթեց Արևելյան Հայաստան: Թուրքերն այնուհետև ներխուժեցին Վան՝ սրի քաշելով այնտեղ մնացած հայերին: Հուլիսի 23-ին, երբ ռուսական զորքը վերագրավեց ավերված քաղաքը, այն լիովին ամայացած էր {(46) *179, 183*}:

Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը

Հունիսի 3-ին սկսվեց Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը, որը ղեկավարելու համար ստեղծվեց Զինվորական խորհուրդ Ղուկաս Տեովլաթյանի գլխավորությամբ: Այն դիմադրական գլխավոր կենտրոնը դարձրեց քաղաքի միջնաբերդը, որի տարածքում ստեղծվեցին պաշտպանական գոտիներ:

Հունիսի 5-ին բերդը, որտեղ ամրացել էր շուրջ 5000 մարդ, պաշարվեց 2500-անոց թուրքական զորքի կողմից: Թուրքերի ամենասաստիկ գրոհը տեղի ունեցավ հունիսի 20-ին, բայց նրանք դարձյալ չկարողացան գրավել բերդը: Երբ բերդում պարենը գրեթե սպառված էր, խորհուրդը որոշեց հակառակորդի պաշարումը ճեղքել և դուրս գալ: Հունիսի 29-ի գիշերը մոտ 1000 մարդ մի քանի ուղղություններով գրոհեց թուրքական դիրքերի վրա: Նրանցից միայն 870-ին հաջողվեց ճեղքել շրջափակումը:

Գրավելով բերդը՝ թուրքերը դաժան հաշվեհարդար տեսան այնտեղ գտնվող կանանց ու երեխաների հետ, որոնք անարգվեցին և սպանվեցին, իսկ շատերն էլ առևանգվեցին {(53) *504-505*}:

Մուշ-Սասունի ինքնապաշտպանությունը

Մուշ-Սասունում գտնվող հայ գործիչները չկարողացան արդյունավետ ինքնապաշտպանություն կազմակերպել: Ռ. Տեր-Մինասյանը, կարծելով, թե թուրքերն առաջինը գրոհելու էին Սասունի վրա, պնդում էր, որ պետք է Մուշը թողնել և ինքնապաշտպանությունը կազմակերպել Սասունում: Այդպիսով Մուշը մնաց անպաշտպան, բայց Սասունում էլ դիմադրության նախապատրաստման արդյունավետ աշխատանքներ չկատարվեցին:

Երբ հայերը 2 ժամում տեղահանվելու՝ Մուշի կառավարիչ Սերվեթի պահանջը մերժեցին, թուրքերն օղակեցին Մուշը: Հուլիսի 3-ին սկսվեց ուժգին հրետակոծություն քաղաքի թաղերի վրա: Հարձակվող թուրքերն ու քրդերը, հրդեհելով քաղաքի թաղերը, սկսեցին նաև բնակչության կոտորած: Նրանք նախապես զորակոչի ենթարկված Մուշ քաղաքի և Դուրանի 2000 հայ տղամարդկանց կապված վիճակում փակեցին Խաս գյուղի մարագում և ողջակիզեցին:

Հուսահատ դիմադրությունից հետո շատ հայեր ինքնասպան եղան: Տիգրան Սիմոնյանը հավաքեց իր ընտանիքի բոլոր անդամներին՝ թվով 70 հոգու, և նրանց թույն բաժանեց: Երբ նրանք, թույնն ընդունելով, մահացել էին, նա հրկիզեց տունը և ինքնաս-

պանություն գործեց: Թաղերի բնակիչների մի մասը կարողացավ տեղափոխվել դեռ կանգուն մնացած վերջին՝ Ձորի թաղամասը, որտեղ կուտակվեցին 10-12 000 մարդիկ: Նրանք այնտեղ Հ. Կոտոյանի ղեկավարությամբ թուրքական զորամասերին ու քրդական հորդաներին ցուցաբերեցին ուժգին դիմադրություն, որից հետո՝ հուլիսի լույս 5-ի գիշերը, փորձեցին ճեղքել պաշարումն ու հեռանալ լեռները: Դա հաջողվեց միայն մոտ 6 000 հոգու: Այնուհետև սկսվեց քաղաքում մնացած հայերի սպանդն ու կանանց անարգումը:

Թուրքերը մարտի սկզբին Սասունի գյուղերում ևս հավաքագրել էին 3000 տղամարդկանց՝ ճանապարհաշինության մեջ ներգրավելու պատրվակով, և գրեթե բոլորը սպանվեցին Խարբերդի ու Բալուի միջև ընկած ճանապարհահատվածում: Ռ. Տեր-Մինասյանը և Սասունում գտնվող խմբապետները դեռ փետրվարին Շենիկի ժողովում որոշել էին կազմակերպել Սասունի ինքնապաշտպանությունը՝ քաղաքը բաժանելով պաշտպանական շրջանների: Այնուհանդերձ այդ ուղղությամբ արդյունավետ աշխատանք չկատարվեց:

Իշխանությունները Սասունում շատ զգույշ էին գործում: Նրանք նախ հաշվեհարդար տեսան սահմանային գյուղերի հետ, իսկ հուլիսի 19-ին անցան լայնածավալ հարձակման: Մարտերը շարունակվեցին մինչև օգոստոսի 3-ը, որից հետո բնակչության մեծ մասը սրի քաշվեց: Անդոկ լեռան մոտ հավաքված հազարավոր մարդիկ իրենց ընտանիքների հետ փորձեցին դժվարանցանելի արահետներով դուրս գալ օղակից և տարբեր խմբերով շարժվեցին դեպի Տալվորիկի լեռները, Ծովասար ու այլ ուղղություններով: Նրանց միայն մի մասը կարողացավ այդ կերպ դուրս գալ շրջափակումից և հեռանալ {(127) *117-123*, (53) *501-503*}:

Մուսալեռցիների ինքնապաշտպանությունը

1915 թ. հուլիսի վերջին Միջերկրական ծովի մոտ գտնվող Սուետիա գավառակի վեց հայկական գյուղերի բնակչության մեծ

մասը՝ մոտ 4200 մարդ, չենթարկվելով տեղահանման հրամանին, բարձրացավ մոտակա Մուսա լեռը: Այնտեղ նրանք Տիգրան Անդրեասյանի, Եսայի Յաղուբյանի և Պետրոս Տմլաքյանի ղեկավարությամբ նախապատրաստվեցին ինքնապաշտպանության: Նրանց դեմ ուղարկվեց թուրքական մի զորաբանակ՝ Ֆահրի փաշայի գլխավորությամբ, որն օգոստոսի 19-ից սկսեց գրոհել հայերի դիրքերի վրա: Չնայած թուրքերի հարձակումները հաջողությամբ ետ էին մղվում, այնուհանդերձ հայերի դրությունը շարունակ ավելի էր դժվարանում պարենի սպառման հետևանքով:

Հույս ունենալով, որ մոտերքով կարող են դաշնակիցների նավեր անցնել, հայերը լեռան ծովահայաց լանջին տեղադրեցին երկու դրոշներ, որոնցից մեկի վրա խաչ էր պատկերված, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր՝ «Քրիստոնյաները վտանգի մեջ են»: Սեպտեմբերի 5-ին ծովում երևաց ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը, որը հրետակոծեց Քաբուսիեում գտնվող օսմանյան հենակետերը և ռազմական պահեստը: Նավի հրամանատարությունը, կապ հաստատելով Մուսա լեռան հայերի հետ, տեղեկացավ նրանց դրության մասին: Ֆրանսիական նավի հայտնվելուց մտահոգված՝ թուրքերը սեպտեմբերի 7-ին մի նոր ուժգին հարձակում ձեռնարկեցին մուսալեռցիների դեմ, բայց դարձյալ ետ շպրտվեցին:

Սեպտեմբերի 10-ին ծովափին մոտեցան դաշնակիցների ռազմանավերը, որոնք կրկին գնդակոծեցին հակառակորդի դիրքերը: Փոծխովակալ Լ. Դ. դյու Ֆուրնեն, որի առաջարկը՝ մուսալեռցիներին Կիպրոս տեղափոխելու վերաբերյալ, անգլիացիները մերժեցին, չունենալով նաև նրանց տարհանելու հարցում իր կառավարության համաձայնությունը, կազմակերպեց նրանց փոխադրումը Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաքը:

Այսպիսով, 4058 սուետիահայեր, որոնք դիմեցին ինքնապաշտպանության, փրկվեցին, մինչդեռ գավառակի գյուղերի մյուս՝ շուրջ 3000 բնակիչները, որոնք ենթարկվեցին տեղահան-

ման հրամանին, սպանվեցին օսմանյան զորքերի կողմից {(53) *506-509*}:

Ուրֆայի ինքնապաշտպանությունը

Ուրֆան գտնվում էր Սեբաստիայի, Էրզրումի և Խարբերդի բնակավայրերից տեղահանված հայերի տարագրության ճանապարհին և 1915 թ. հունիսի վերջից ողողված էր անապատ քշվող մարդկանց բազմություններով: Քաղաքի բարձրադիր հայկական թաղամասն ուներ մոտ 20 000 բնակիչներ:

1915 թ. ապրիլ-մայիսին բանտարկվեցին հայ ուսուցիչներն ու բազմաթիվ այլ երևելիներ: Օգոստոսի 10-ին Ուրֆայում հայտնվեցին երիտթուրքական կոմիտեի անդամներ Ահմեդ և Խալիլ բեյերը, որոնք անմիջապես կազմակերպեցին բանտարկվածների արտաքսումն ու սպանությունը՝ նախապես որպես փրկագին նրանցից վերցնելով 60.000 ֆրանկի չափով գումար: Օգոստոսի 19-ին նրանք քաղաքում կազմակերպեցին նաև հայերի կոտորած, որին զոհ դարձավ մոտ 200 մարդ:

Ուրֆայի հայերը վճռեցին տեղահանման հրամանի դեպքում չենթարկվել դրան: Դիմադրության կազմակերպումն ու ղեկավարումը ստանձնեց Մկրտիչ Յոթնեղբայրյանը: Նա զենք ձեռք բերելու համար դիմեց մի հանդուգն քայլի. համայնքից հանգանակեց մեծ գումար, և, ինչպես վկայում է Կյունցլերը, ծպտված թուրք սպայի հագուստով, մի քանի ընկերների հետ, որոնք թուրք զինվորի հագուստ էին հագել, մեկնեց Հալեպ: Այնտեղ նրանք գնեցին մեծ քանակությամբ զենք ու զինամթերք և, դրանք բարձելով սայլերի վրա, կրկին ճանապարհ ընկան դեպի Ուրֆա: Քանի որ այդ ժամանակ ամենուր նման ռազմական փոխադրումներ էին տեղի ունենում, քարավանը ոչ մի կասկած չհարուցեց: Երեկոյան, երբ մահմեդականները տներում էին, քարավանը մտավ քաղաք և հանգիստ բարձրացավ հայկական թաղամաս {(122) *63*}: Այդպիսով ուրֆացիներն ունեին նաև զենք ու զինամթերք՝ թուրքերին դիմադրելու համար:

Կազմվեց զինվորական խորհուրդ՝ Մկրտիչի գլխավորությամբ: Քաղաքում ստեղծվեցին պաշտպանական գոտիներ, պատրաստվեցին խրամատներ ու բարիկադներ: Զինագործները պատրաստում էին նռնակներ: Կանանցից ու երեխաներից կազմվեցին սանիտարական և պարենավորման խմբեր:

Սեպտեմբերի 29-ին սկսվեց առճակատումը: Ուրֆահայերի դեմ ուղարկվեց 10 000-անոց բանակ Ֆահրի փաշայի ղեկավարությամբ, որին ուղեկցում էր գերմանացի մայոր Վ. ֆոն Ռայխենբերգը: Ֆահրին մինչ այդ ղեկավարել էր Մուսա լեռան հայերի դեմ ռազմական գործողությունները: Ուրֆա բերվեցին նաև հրանոթներ: Շարունակ գրոհելով՝ թուրքերը մեծ կորուստներով ետ էին շպրտվում: Նրանք կորցրեցին շուրջ 1000 զինվոր: Մարտերի 15-րդ օրը, երբ դիմադրության ոգին՝ Մկրտիչը, զոհվեց, ուրֆացիների մեծ մասը հակվեց դիմադրությունը դադարեցնելու մտքին՝ հավատալով իրենց անվտանգության մասին Ֆահրիի խոստումներին: Հոկտեմբերի 16-ին, սպիտակ դրոշ բարձրացնելով, նրանք անձնատուր եղան: Թուրքերը կանանց ու երեխաներին նախ լցրին քաղաքի մեծ քարավանատան մեջ և ապա ձեռնամուխ եղան տղամարդկանց սպանդին, որը տևեց 2 օր: Այնուհետև կանայք ու երեխաները քշվեցին անապատ:

Հերոսամարտի տապալման գլխավոր պատճառը Մկրտիչի մահից հետո ի հայտ եկած բարոյալքումն էր: Այլապես, ինչպես վկայում դեպքերի ականատես Կյունցլերը, հայերը կարող էին դեռ ամիսներ շարունակ պաշտպանվել {(122) *70*}: Այնուամենայնիվ թուրքերի համար շաբաթներ պահանջվեցին, մինչև նրանք կարողացան տիրել հայկական թաղամասին, քանի որ թաքստոցներում գտնվող շատ հայեր շարունակում էին կռվել:

1915 թ. ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև Մարաշի մոտ, Ամանոսի լեռներում գտնվող Ֆընտրճագ գյուղում և այլ վայրերում: Հայերը, որպես կանոն, փրկվեցին կամ համեմատաբար նվազ կորուստներ ունեցան միայն այն դեպքերում, երբ

հրաժարվեցին ենթարկվել տեղահանման հրամաններին ու դիմադրեցին:

Հայերի կոտորածները 1918 թ.

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ռուսական բանակը գրավել էր ողջ Արևմտյան Հայաստանը, շուրջ 140 000 հայ գաղթականներ վերադարձան իրենց բնակավայրերը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակը հեռացավ Արևմտյան Հայաստանից: Դրանից օգտվելով՝ թուրքական զորքերը Վեհիբ փաշայի ղեկավարությամբ ներխուժեցին այնտեղ և շարունակեցին առաջանալ դեպի Հայաստանի խորքը: Նրանք այդ արշավանքի ժամանակ շրջակա բնակավայրերի մահմեդականների հետ շարունակում էին իրագործել ցեղասպանության ծրագիրը՝ ոչնչացնելով իրենց ձեռքն ընկած հայերին: 1918 թ. մարտի 22-ին Գերմանիայի արտգործնախարարությունը Բուխարեստում գտնվող պետքարտուղարին տեղեկացնում էր, որ թուրքերի կողմից Տրապիզոնը գրավելուց հետո «….Հայերը աննկարագրելի չարչարանքների են ենթարկվում: Երեխաներին լցնում են պարկերը և նետում ծովը: Ծեր տղամարդկանց և կանանց խաչում ու խեղում են, բոլոր երիտասարդ աղջիկներն ու երիտասարդ կանայք տրվել են թուրքերի ձեռքը» {(6) *377*}: Թուրքական արշավանքի ժամանակ Հայաստանի՝ գրավված տարածքներում սպանվեց շուրջ 10 000 հայ: Չնայած հայ ժողովուրդը 1918 թ. մայիսյան հերոսամարտերով թուրքական կառավարությանը հարկադրեց ճանաչել Հայաստանի փոքրիկ Հանրապետությունը, այնուհանդերձ երիտթուրքական վարչակարգը դրանից հետո ևս իր վերահսկողության տակ հայտնված շրջաններում շարունակում էր հայերի բնաջնջման քաղաքականությունը: Դա տեղի էր ունենում և՛ սպանդի, և՛ մարդկանց սովամահության մատնելու ճանապարհով: Մինչև 1918 թ. հուլիսը միայն Ղարաքիլիսայում սպանվեցին շուրջ 2000 տղամարդիկ, կանայք ու երեխաներ, իսկ

հանրապետությունում սովից ու հիվանդություններից մահացածների թիվը մինչև տարեվերջ հասավ 180 000-ի:

1918 թ. սեպտեմբերի 15-17-ը, երբ թուրքական զորքը Էնվերի խորթ եղբայր Նուրի փաշայի ղեկավարությամբ գրավեց Բաքուն, նրա թելադրանքով ու աջակցությամբ Բաքվի թաթարները սպանդի ենթարկեցին քաղաքի շուրջ 30 000 հայ բնակիչների: Հայերի կոտորածներ տեղի ունեցան նաև Նուխիում, Արեշում և նորաստեղծ Ադրբեջանի հանրապետության այլ վայրերում {(105) *144-150*}:

Մեղքը և մեղսակցությունը

Երիտթուրքական կառավարությունը հայերի տեղահանումը պատճառաբանում էր պատերազմական գոտուց նրանց ժամանակավորապես հեռացնելու անհրաժեշտությամբ: Զուգահեռաբար գործի էր դրվել պետական քարոզչական մեքենան՝ կեղծ լուրերով հայերից դավադիր թշնամու կերպար ստեղծելու համար: Դրա նպատակն էր՝ մի կողմից դաշնակիցների մոտ հիմնավորել տեղահանման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ բնակչության լայն շրջաններում ձևավորել հակահայ տրամադրություններ կամ արմատականացնել դրանք: Տեղահանմանը, որպես կանոն, նախորդում էին հայերի տների համատարած խուզարկություններ՝ թաքցված զենք կամ ապստամբական ծրագրերի մասին գրավոր փաստեր հայտնաբերելու համար: Թեև ոչինչ չգտնվեց, Սեբաստիայում, օրինակ, իշխանությունները լուրեր տարածեցին այն մասին, թե հայերի մոտ հարյուրավոր ռումբեր և հազարավոր հրացաններ են հայտնաբերվել, և որ դաշնակցականները մտադիր էին պայթեցնել վառոդի պահեստը: Այդօրինակ քարոզչություն էր կատարվում նաև այլ նահանգներում: Եղել են բազմաթիվ դեպքեր, երբ մարդկանց խոշտանգելով հարկադրում էին ստորագրել գրություն այն մասին, որ իրենք ռումբեր և զենքեր են պահել, իսկ այնուհետև դա դարձվում էր քարոզչության նյութ:

Իրականությունը, սակայն, երկար թաքցնել հնարավոր չէր: 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի դաշնակիցներ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան հրապարակեցին համատեղ հայտարարություն, որում «օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ» սանձազերծված՝ հայերի «զանգվածային սպանությունները» բնորոշվում էին որպես «Թուրքիայի նոր հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ»: Դաշնակիցները միաժամանակ Բ. Դռանը ծանուցում էին, որ անձնապես պատասխանատվության են ենթարկելու «թուրքական կառավարության բոլոր անդամներին և նրանց այն լիազոր ներկայացուցիչներին, որոնք մասնակցել են նման զանգվածային սպանություններին» {(127) *200*}:

Օսմանյան կառավարությունն, ի պատասխան այդ հայտարարության, հաջորդաբար (հունիսի 4-ին, 17-ին, 29-ին, հուլիսի 12-ին և 16-ին) հրապարակեց հինգ պաշտոնական հաղորդագրություններ, որոնցում փորձում էր հերքել իրեն ուղղված մեղադրանքները և կոծկել ու նենգափոխել իրողությունները:

Թեև թուրքական ժխտողականությունը այդուհետ և առայսօր ջանում է ժխտել ցեղասպանությունը, այնուհանդերձ ժամանակի ընթացքում հրապարակված մեծաքանակ սկզբնաղբյուրները և այլ փաստական նյութերը թույլ չեն տալիս նույնիսկ վիճարկել այն: Թուրքական հանրապետության կողմից ցեղասպանության ճանաչումը լոկ ժամանակի խնդիր է:

2016 թ. հունիսի 2-ին ընդունված բանաձևով Գերմանիայի Բունդեսթագը ճանաչեց ոչ միայն «Հայերի և Օսմանյան պետության մյուս քրիստոնյա փոքրամասնությունների» ցեղասպանությունը, այլև դրանում կայսերական Գերմանիայի մեղսակցությունը {(202)}: Դա ինքնին ուժգին հարված էր թուրքական ժխտողականությանը, քանի որ, եթե մեղսակցությունը ճանաչվում է, ինչպե՞ս կարող է ժխտվել կամ վիճարկվել մեղքը:

Օսմանյան պետության մյուս դաշնակցի՝ Ավստրո-Հունգարիայի իրավահաջորդ Ավստրիայի պառլամենտական կուսակցու-

թյունների խմբակցությունների նախագահները նույնպես 2015 թ. հանդես եկան մի հայտարարությամբ, որում նշված էր. «Պատմական պատասխանատվության հիման վրա (Ավստրո-Հունգարական միապետությունը Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան պետության դաշնակիցն էր) մեր պարտքն է սարսափելի իրադարձությունները ճանաչել և դատապարտել որպես ցեղասպանություն: Նմանապես Թուրքիայի պարտքն է ազնվորեն վերանայել իր անցյալի մութ ու ցավալի էջերը և Օսմանյան պետությունում հայերի հանդեպ իրականացված հանցագործությունները ճանաչել որպես ցեղասպանություն» {(119) *184*}:

Օսմանյան պետության դաշնակիցների և առաջին հերթին Գերմանիայի մեղսակցությունը Հայոց ցեղասպանության հարցում կայանում է թե՛ այն հանդուրժելու և թե՛ դրան աջակցելու մեջ: Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը ինչպես իր դեսպանության, այնպես էլ Տրապիզոնում, Էրզրումում, Աղանայում, Հալեպում, Մոսուլում և Բաղդադում գտնվող իր հյուպատոսությունների միջոցով լիովին իրազեկված էր հայ ժողովրդի բնաջնջման մասին, սակայն սկզբից ևեթ որդեգրել էր հանդուրժողական քաղաքականություն և միայն մի քանի ամուլ առարկություններ ուղարկեց Բ. Դռանը: Դրանք, սակայն, թելադրված էին ոչ այնքան հայերին օգնելու, որքան՝ Գերմանիային հետագայում մեղսակցության մեղադրանքներից խուսափելու հիմքեր ստեղծելու նպատակով:

Գերմանական կառավարությունը դեռ 1915 թ.-ից իր հանդուրժողականությունը փորձում էր պատճառաբանել նրանով, որ կոշտ միջամտության դեպքում Օսմանյան պետության հետ դաշինքը կխզվեր, ինչը Գերմանիան չէր կարող իրեն թույլ տալ պատերազմական իրադրությունում: Դա կեղծ պատրվակ էր, որը հերքվում է առկա փաստաթղթերով: Այն, որ Գերմանիան կարող էր արգելել կամ կասեցնել հայ ժողովրդի տեղահանությունը՝ առանց դաշինքը վտանգելու, հիմնավորապես փաստարկել է դեռևս Վանգենհայմի մահից հետո՝ 1915 թ. նոյեմբերի կեսից նրան փոխարինած դեսպան Պ. Վ. Մետերնիխը՝ փորձելով իր

կառավարությանը դրդել հայանպաստ միջամտության: Դա գործնականում ապացուցել է նաև Օսմանյան պետությունում Գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Լ. ֆոն Սանդերսը, որը 1916 թ. սեպտեմբերին, ընդհուպ զենքի գործադրման սպառնալիքով, արգելեց թուրքական կառավարությանը տեղահանել Զմյուռնիայի հայերին: Դա փաստեց նաև ֆելդմարշալ Կ. ֆոն դեր Գոլթցը՝ 1915 թ. դեկտեմբերին հաջողությամբ արգելելով Մոսուլի և այնտեղ բերված Բաղդադի հայերի արտաքսումը անապատ (քանի որ նա 1916 թ. ապրիլին մահացավ, այդ արգելքը սոսկ ժամանակավոր բնույթ կրեց) {(30) *260-264*}:

Եթե միայն այդ երկու զինվորականները սեփական հայեցողությամբ հաջողությամբ չեղարկեցին հիշյալ երկու շրջանների հայերի տեղահանությունը, ապա որքան մեծ արդյունք կունենար պաշտոնական Գերմանիայի միջամտությունը:

Այն, որ օսմանյան կառավարությունը հայերի տեղահանումը պատճառաբանում էր պատերազմական դրդապատճառներով, է՛լ ավելի էր դյուրացնում ռազմական տեսանկյունից վնասակար այդ գործողության արգելումը: Պատահական չէ, որ Սանդերսը և Գոլթցը իրենց հարուցած վերոնշյալ արգելքները հիմնավորում էին հենց պատերազմական շարժառիթներով: Պատերազմական գոտուց հայերին հեռացնելու պատրվակը չէր կարող կենսունակ լինել նաև այն պատճառով, քանի որ տեղահանվեց բոլոր նահանգների հայ բնակչությունը, որոնց մեծ մասը պատերազմական գոտու հետ ոչ մի կապ չուներ: Պաշտոնական Գերմանիան, սակայն, կատարում էր միայն ամուլ առարկություններ՝ հետագայում մեղսակցության մեղադրանքներից խուսափելու նպատակով: Իրականում այն առաջնորդվում էր բացարձակ հանդուրժողականության սկզբունքով, որի հստակ ձևակերպումը տվել է կանցլեր Բ. Հոլվեգը՝ գրելով. «Մեր միակ նպատակը Թուրքիան մինչև պատերազմի վերջը մեր կողքին պահելն է, անկախ այն բանից՝ հայերը կոչնչանան, թե ոչ» {(106) *14*}:

Աշխարհամարտի տարիներին օսմանյան բանակը փաստացիորեն գտնվում էր Գերմանացի բարձրաստիճան զինվորականների ձեռքերում: Օսմանյան ռազմական գլխավոր շտաբի պետը գերմանացի գեներալ Բ. ֆոն Շելլենդորֆն էր, որին 1917 թ. փոխարինեց գեներալ Հ. ֆոն Զեկտը: Տեղահանմանը վերաբերող Էնվերի հրամանները, անկասկած, վավերացվում էին նաև Շելլենդորֆի կողմից: Ֆելդմարշալ Գոլթցը օսմանյան 1-ին, այնուհետև 6-րդ բանակի և Աֆղանստանում ու Պարսկաստանում տեղակայված գերմանական զինված ուժերի հրամանատարն էր, միաժամանակ նաև ռազմական նախարար Էնվերի խորհրդականը: Օսմանյան 5-րդ բանակի հրամանատարը Սանդերսն էր: Օսմանյան և, երբ Բուլղարիան պատերազմի մեջ մտավ, նաև բուլղարական ռազմական նավատորմի հրամանատարը գերմանացի ծովակալ Վ. Սուշոնն էր:

Նրանք բոլորը, բացառությամբ վերոնշյալ երկու դեպքերի, ոչ միայն չէին ընդդիմանում հայերի տեղահանման հրամաններին, այլև ի պաշտոնե, ոմանք նույնիսկ անձնապես աջակցում էին դրան: Դա միաժամանակ փաստում էր, թե բարոյական ինչպիսի սնանկություն էր տիրում գերմանական բարձրաստիճան զինվորականության շրջանում: Չնայած գերմանացի զինվորականները մեղսակցության մեղադրանքներից զերծ մնալու համար անմիջաբար չէին մասնակցում տեղահանման և սպանդի գործողություններին, այնուհանդերձ նրանցից առնվազն մեկը նաև անձամբ է դրանց մասնակցել: Դա մայոր Վ. ֆոն Ռայխենբերգն էր, որը մասնակցել է 1915 թ. ուրֆահայերի ինքնապաշտպանության ճնշմանը՝ ղեկավարելով նրանց դեմ իրականացված ռազմական գործողությունները:

Ապրիլի 24-ը նշվում է որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, քանի որ 1915 թ. այդ օրը սկսվեցին հայ մտավորականների ձերբակալությունները Կ. Պոլսում:

Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում. Սևրի պայմանագիրը

Աշխարհամարտի ավարտից հետո հայ ժողովուրդը լիահույս էր, որ Հայկական հարցը վերջապես լուծում կստանա: Փարիզի խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի շահերը ներկայացնելու համար այնտեղ մեկնեցին Հայաստանի առաջին Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի և Հայոց ազգային պատվիրակությունը՝ Պ. Նուբարի ղեկավարությամբ: 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում հրավիրված կոնֆերանսում, որը վեհաժողովի մաս էր կազմում, դաշնակիցները հաստատեցին, որ Հայկական հարցը պետք է լուծվի Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների միավորման ճանապարհով: Վճռվեց Հայաստանի մանդատը (հովանավորությունը) հանձնել ԱՄՆ-ին, որի նախագահ Վ. Վիլսոնն աչքի էր ընկնում հայանպաստ դիրքորոշումով: Այդ երկրի սենատը, սակայն, 1920 թ. հունիսի 1-ին կատարված քվեարկության ժամանակ ձայների մեծամասնությամբ մերժեց ընդունել ավերված ու ամայացած Հայաստանի մանդատը:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում վերջապես ստորագրվեց հաշտության պայմանագիրը Օսմանյան պետության և Անտանտի դաշնակիցների միջև: Հայաստանի կողմից այն ստորագրեց Ա. Ահարոնյանը: Պայմանագրի վեց հոդվածներ (88-93-րդը) վերաբերում էին Հայաստանին: Օսմանյան կառավարությունը Հայաստանը ճանաչում էր որպես անկախ պետություն: Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեր Վանի, Էրզրումի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգների տարածքի մեծ մասը: Հայաստանը ստանում էր նաև ելք դեպի Սև ծով՝ Տրապիզոն նավահանգստով: Կիլիկիան մնալու էր Ֆրանսիայի վերահսկողության ներքո: Հայաստանի և Օսմանյան պետության սահմանագծումը վերապահվում էր Վիլսոնին: Այդպիսով Հայաստանի տարածքը կազմելու էր ավելի քան 160.000 կմ^2: Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև վիճելի տարածքային խնդիրները պետք

է կարգավորվեին մի հատուկ հանձնաժողովի միջոցով, իսկ եթե վերջինս չկարողանար դա անել, ապա այդ հարցերի լուծումը վերապահվում էր Անտանտի տերություններին:

Սևրի պայմանագրով օսմանյան լծից ազատագրվում էր ոչ միայն հայոց բնօրրան-հայրենիքի մեծ մասը, այլև արաբական մի շարք երկրներ (Սիրիան, Իրաքը, Պաղեստինը և այլն), իսկ քրդերը ձեռք էին բերում ինքնավարություն:

Թեև Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին կատարեց Օսմանյան պետության հետ Հայաստանի սահմանագծումը, որը Վաշինգտոնում հրապարակվեց 1921 թ. հունվարի 2-ին, այնուհանդերձ պայմանագիրը չիրագործվեց, և Հայկական հարցի լուծումը ձախողվեց մի շարք պատճառներով: Նախ՝ այն ստորագրվեց մեծ ուշացումով, երբ Օսմանյան պետությունում քեմալականներն էին դարձել իշխանության փաստացի տերը: Նրանք չճանաչեցին Սևրի պայմանագիրը և պայքար ծավալեցին երկիրը մասնատումից փրկելու համար, իսկ դաշնակիցներից ոչ ոք շահագրգռված չէր՝ նրանց դեմ վճռական միջոցներ ձեռնարկելու: Բացի այդ՝ պայմանագիրը չվավերացվեց այն ստորագրած պետությունների, նաև քեմալական հարձակման ընթացքում ծանր վիճակում հայտնված Հայաստանի խորհրդարանի կողմից {(46) *206-208*}:

Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում

Մերձավորարևելյան հարցի շուրջ տարաձայնությունները քննարկելու և Մոսկվայում կայանալիք ռուս-թուրքական խորհրդաժողովին հակակշռելու համար Անտանտի դաշնակիցները 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 17-ը Լոնդոնում գումարեցին խորհրդաժողով, որին հրավիրված էին նաև Օսմանյան պետության և Գերմանիայի ներկայացուցիչները: Լոնդոն էին մեկնել Կ. Պոլսի օրինական և քեմալական կառավարությունները ներկայացնող երկու պատվիրակություններ, որոնցից առաջին խորհրդաժողովի բացումից անմիջապես հետո իր լիազորությունները փոխանցեց քեմալական պատվիրակությանը: Վերջինիս ղեկա-

վար Բ. Սամի բեյը պահանջում էր ընդունել քեմալական «Ազգային ուխտի» բոլոր սկզբունքները՝ ճանաչելով նաև Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանը:

Լոնդոնի խորհրդաժողովում Հայաստանին վերաբերող հարցերի քննարկմանը թույլատրվել էր մասնակցել նաև Փարիզի վեհաժողովի երկու հայկական պատվիրակությունների ղեկավարներին՝ Ա. Ահարոնյանին և Պ. Նուբարին: Նրանց ունկնդրելու համար փետրվարի 26-ին Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնի առանձնասենյակում հրավիրվեց մի նիստ, որին ներկա էին դաշնակիցների ներկայացուցիչները: Ըստ Քերզոնի՝ նիստը հրավիրվել էր հայկական տեսակետը լսելու և այն խորհրդաժողովի Գերագույն խորհրդին փոխանցելու համար:

Նիստի ժամանակ, որը տևեց մեկ ժամ տասը րոպե, հայ պատվիրակները, ներկայացնելով կոտորածները վերապրած հայության ծանր դրությունը, կոչ էին անում իրականացնել Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները: Նրանց պնդումները հաջողություն չունեցան:

Լոնդոնի խորհրդաժողովում դաշնակիցները, անտեսելով Սևրի պայմանագիրը և Հայաստանի համար Վիլսոնի գծած սահմանները, առաջարկեցին Թուրքիայի շրջաններում ստեղծել մի, այսպես կոչված, «Հայկական ազգային օջախ» (Armenian National Home), որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգան: Դա, սակայն նույնպես որևէ արդյունք չունեցավ:

Խորհրդաժողովում դաշնակիցները ճանաչեցին Քեմալի կառավարությունը և այլևս չպահանջեցին իրականացնել Սևրի պայմանագիրը: Դա թուրքական կողմի հաղթանակն էր, որը, միաժամանակ բանակցելով միմյանց թշնամի Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի հետ, այդ հանգամանքը հմտորեն օգտագործեց երկու կողմերից առավելագույն զիջումներ ստանալու համար:

Անտանտի տերությունների և քեմալական Թուրքիայի մերձեցումը առավել ցայտուն դարձավ հունա-թուրքական պատերազմում հույների պարտությունից և 1922 թ. հոկտեմբերի 11-ին ստո-

բագրված Մուդանիայի զինադադարից հետո: Թուրքիայի, Հունաստանի և դաշնակից տերությունների միջև վերջնական հաշտության պայմանագիր կնքելու համար Լոզանում գումարվեց խորհրդաժողով, որն իր աշխատանքները սկսեց 1922 թ. նոյեմբերի 20-ին: Հայոց ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանը և Ա. Ահարոնյանը, հուսալով հասնել Հայկական հարցի լուծմանը, դիմեցին Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի կառավարություններին՝ խորհրդաժողովին մասնակցելու իրավունք ստանալու համար: Նրանք ստացան մերժում այն պատճառաբանությամբ, որ խորհրդաժողովում Հայկական հարցը չի քննարկվելու, և որ այն ներառված է ազգային փոքրամասնությունների հարցի մեջ, ուստի հարկ եղած դեպքում հայկական պատվիրակությանը հրավեր կուղարկվի: Հայ պատվիրակները՝ Գ. Նորատունկյանը և Գ. Սինապյանը (Հայոց ազգային պատվիրակության կողմից), ինչպես նաև Ա. Ահարոնյանն ու Ա. Խատիսյանը (ՀՀ պատվիրակության կողմից), այնուհանդերձ, մեկնեցին Լոզան՝ վճռելով հանդես գալ որպես միասնական պատվիրակություն: 1922 թ. նոյեմբերին նրանք հայկական պահանջների վերաբերյալ մի հուշագիր ներկայացրին խորհրդաժողովին:

Հուշագրում նրանք պարզաբանում էին հայերի կրած տառապանքները, կորուստները, ներկա ծանր դրությունը և կոչ էին անում ստեղծել խոստացված Ազգային օջախը՝ դրա համար առաջարկելով երեք տարբերակ. Ազգային օջախի ստեղծում վիլսոնյան սահմաններով՝ ելքով դեպի Սև ծով, հայկական նահանգների միավորում Հայաստանի Հանրապետությանը կամ ծայրահեղ դեպքում Օջախի ստեղծում Կիլիկիայում:

Խորհրդաժողովը Հայկական հարցին անդրադարձավ դեկտեմբերի 12-ին: Ինչպես Քերզոնը, այնպես էլ Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներն իրենց ելույթներում մի կողմից հանդես էին գալիս որպես հայերի ցանկությունների համակիր, մյուս կողմից փորձում էին հաճոյանալ թուրքական պատվիրա-

կությանը: Երբ վերջինիս ղեկավար Իսմեթ փաշան կտրուկ մերժեց Թուրքիայում հայերի համար Ազգային օջախի ստեղծման գաղափարը, տերությունները որևէ ազդու առարկություն չցուցաբերեցին: Ազգային փոքրամասնությունների հարցի քննարկման համար ստեղծվեց մի ենթահանձնաժողով իտալացի Մոնտանյայի գլխավորությամբ, որը պետք է զբաղվեր նաև Հայկական Ազգային օջախի խնդրով: Դեկտեմբերի 16-ին հայկական պատվիրակությունը դիմեց խորհրդաժողովին՝ խնդրելով գոնե լսել իրեն: Թուրքերը կտրուկ բողոք հայտնեցին դրա դեմ: Հայ պատվիրակներին ունկնդրելու համար դեկտեմբերի 26-ին հրավիրվեց նշված ենթահանձնաժողովի դռնփակ նիստ, որը տևեց ավելի քան մեկ ժամ: Նիստում որևէ որոշում չընդունվեց:

Ենթահանձնաժողովի՝ 1923 թ. հունվարի 6-ին և 9-ին կայացած նիստերում Ազգային օջախի փոխարեն, որը թուրքական կողմը համառորեն մերժում էր, քննարկվեց սոսկ Թուրքիայի մի անկյունում տարագիր հայերի հավաքման խնդիրը: Երբ թուրքերը դա էլ մերժեցին, Մոնտանյան հունվարի 10-ին հայ պատվիրակներին տեղեկացրեց, որ խորհրդաժողովում Ազգային օջախի հարցն այլևս սպառված է, և հույս չկա, թե այն տեղ կգտնի պայմանագրում:1924 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրով դաշնակիցները ճանաչեցին Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, վերացվեցին կապիտուլյացիաները, իսկ Հայկական հարցն այլևս չէր հիշատակվում {(27) *121-134*}:

Ցեղասպան քաղաքականության շարունակումը քեմալականների կողմից 1920-1923 թթ.

Քեմալական վարչակարգը շարունակեց հայերի բնաջնջման՝ երիտթուրքական կառավարության քաղաքականությունը: 1919 թ. մայիսին Կարսի մարզը Հայաստանի Հանրապետությանը միացնելուց հետո մարզի՝ իրենց բնակավայրերն էին վերադարձել մոտ 150 000 հայեր: 1920 թ., երբ քեմալականները հարձակվեցին Հա-

յաստանի Հանրապետության վրա, Սարիղամշի, Կաղզվանի, Արդահանի և թուրքերի գրաված մյուս վայրերի հայ բնակիչները դարձյալ մազապուրծ փախուստի դիմեցին: Նրանցից շատերն ապաստանեցին Կարսում: Հոկտեմբերի 30-ին Կարսի անկումից հետո քաղաքում կուտակված հայերի զգալի մասը, չհասցնելով հեռանալ, սպանվեց: Տեղի ունեցան բազմաթիվ խոշտանգումներ ու բռնաբարություններ: Որոշ տվյալներով Կարսի նահանգում ընդհանուր առմամբ սպանդի ենթարկվեցին շուրջ 12 000 հայեր:

Ալեքսանդրապոլի անկումից հետո (1920 թ. նոյեմբերի 7) թուրքերը խաղաղ բնակչության կոտորածներ իրականացրին նաև Շիրակի նահանգում: 1920 թ. թուրքական արշավանքի ընթացքում Ալեքսանդրապոլի գավառում և Ախալքալաքի շրջանում սրի քաշվեց մոտ 30 գյուղերի բնակչությունը: Թուրք զավթիչների վայրագություններին զոհ դարձան տասնյակ հազարավոր հայեր: Իր հունձն էր կատարում նաև սովը: Ալեքսանդրապոլի փողոցներում ամեն օր սայլերով սովամահ եղած մի քանի տասնյակ մարդկանց դիեր էին հավաքում: Թուրքերը բանվորական ուժ ձեռք բերելու պատրվակով Շիրակի նահանգում հավաքագրեցին նաև հազարավոր հայ տղամարդկանց՝ նրանց բռնի ուղարկելով Թուրքիա: Հետագայում նրանցից միայն 230-ը վերադարձավ, իսկ մյուսները զոհ էին դարձել ցրտին, սովին կամ ուղղակի սպանվել էին {(35) *307,* (26) *341*}:

Ֆրանսիան 1921 թ. հոկտեմբերի 20-ին «Անգորայի համաձայնագրով» Կիլիկիայի վերահսկողությունը զիջեց քեմալականներին՝ առանց քրիստոնյաների պաշտպանությանը կամ դրա երաշխիքներին վերաբերող պայմանների: Դրա հետևանքով Աշխարհամարտից հետո հայրենիք վերադարձած՝ շուրջ 130 000 կիլիկիահայերը դարձյալ ենթարկվեցին հետապնդումների ու բռնագաղթի: Մարաշում զոհվեց 11 հայ: Հաճընի հայերը յոթ ամիս դիմադրեցին թուրքական զորքերին, բայց 1920 թ. հոկտեմբերին թշնամին կարողացավ գրավել քաղաքը: 1920 թ. ապրիլի 1-ին քե-

մալական զորքերը պաշարեցին Այնթապը, որի հայ բնակիչները 15-օրյա պաշտպանության շնորհիվ փրկվեցին կոտորածից, բայց երբ ֆրանսիական զորքերը հեռացան Կիլիկիայից, այնթապցիները և Կիլիկիայի մյուս շրջաններում մնացած հայերը նույնպես հարկադրված եղան հեռանալ՝ բնակություն հաստատելով Հունաստանում, Սիրիայում և Լիբանանում: Շարունակելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը՝ քեմալականները 1920 թ. ավարտին հասցրին Կիլիկիայի հայության կոտորածն ու արտաքսումը {(35) *307-308*}:

1922 թ. սեպտեմբերի 9-ին, երբ քեմալական զորքերը ներխուժեցին Զմյուռնիա, նավահանգստում կայանած անգլիական, ֆրանսիական և իտալական ռազմանավերի աչքի առաջ սկսվեց քաղաքի հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածը: Դա սաղրելու համար լուր էր տարածվել, թե հայերը նռնակներ են նետել թուրքերի վրա: Սպանդն անարգել շարունակվեց երեք օր ու գիշեր՝ ուղեկցվելով բիրտ խոշտանգումներով, բռնաբարություններով և կողոպուտով: Այն եզրափակվեց սեպտեմբերի 13-ին Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերի հրկիզումով: Ինչպես ԱՄՆ դիվանագետ Զ. Հորթոնն էր գրում 1922 թ. սեպտեմբերի 27-ի իր պաշտոնական զեկույցում, Զմյուռնիայում զանգվածային կողոպուտը, բռնաբարությունը և կոտորածը սկսվեցին թուրքական զորքերի՝ քաղաք մտնելուց անմիջապես հետո, և նրանց առաջին թիրախը քաղաքի հայ բնակչությունն էր: Դիվանագետը նաև ընդգծում էր, որ հայերի որսը և սպանդն իրականացնում էին այդ նույն կանոնավոր զորամասերը «ամենանողկալի միջոցներով՝ դաշունահարությամբ, մահացու հարվածներով կամ հրապարակավ կոկորդները կտրելով: Հայերին կանոնավոր կերպով հետապնդում էին ամբողջ քաղաքում, թալանում էին տները և սպանում նրանց» {(41) *189*}:

Զմյուռնիայի՝ կոտորածից խուսափած փոքրաթիվ հույներն ու հայերը փրկվեցին՝ տեղափոխվելով Հունաստան: 1922-1923 թթ.

շարունակվում էր նաև այլ վայրերում գտնվող՝ ցեղասպանությունը վերապրած հայերի արտաքսումը երկրից:

Ցեղասպանության պատասխանատուների դատավարություններն օսմանյան ռազմական դատարաններում

Աշխարհամարտի ավարտից հետո օսմանյան նոր կառավարությունը 1919 թ. հունվարից մի շարք վայրերում հիմնեց ռազմական դատարաններ՝ պատերազմական հանցագործներին, այդ թվում նաև հայ ժողովրդի տեղահանության և կոտորածների պատասխանատուներին պատժելու համար: Դրանցում շուրջ 60 վարույթներ հարուցվեցին նախկին կառավարության անդամների, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների, Թեշքիլաթը մահուսեի պատասխանատուների և հայերի տեղահանությունների ու կոտորածների տարածաշրջանային պատասխանատուների դեմ: Առաջին դատավարության ժամանակ, որը տեղի ունեցավ 1919 թ. փետրվար-ապրիլ ժամանակամիջոցում, գլխավոր մեղադրյալը Յոզգաթի կառավարիչ Մ. Քեմալն էր: Դատարանը նրան կոտորածների և կողոպուտի համար դատապարտեց մահապատժի, որն ի կատար ածվեց ապրիլի 10-ին: Ցեղասպանության մի շարք տարածաշրջանային պատասխանատուների, այդ թվում՝ նաև փախուստի մեջ գտնվող Ջ. Ազմիի և Բ. Շաքիրի դեմ իրականացված վարույթները նույնպես ավարտվեցին մահապատժի դատավճիռներով:

1919 թ. ապրիլի 28-ին Կ. Պոլսում սկսվեց գլխավոր դատավարությունը, որի շրջանակում մեղադրանքներ առաջադրվեցին նախկին նախարարների ու այլ բարձրաստիճան գործիչների դեմ: Դատարանը հուլիսի 5-ին Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և Նազիմին, որոնք նույնպես գտնվում էին փախուստի մեջ, հեռակա կարգով դատապարտեց մահապատժի: Այլ մեղադրյալներ ստացան ազատազրկման դատավճիռներ:

1920 թ. օգոստոսի 11-ին՝ Սևրի խաղաղության պայմանագրի ստորագրումից մեկ օր անց, քեմալական կառավարությունը որո-

շեց լուծարել տեղահանություններով ու կոտորածներով զբաղվող ռազմական դատարանները: Թեև դա կարող էր տեղի ունենալ Քեմալի կողմից Կ. Պոլիսը գրավելուց հետո միայն, այնուհանդերձ քեմալական հակակառավարության դիրքերի ամրապնդմանը զուգահեռ թուլանում էր օսմանյան իշխանությունների հետաքրքրությունն այդ դատավարությունների հանդեպ: Բնութագրական է, որ Կ. Պոլսի ռազմական դատարանի նախկին նախագահ Ն. Մուստաֆան 1920 թ. նոյեմբերին կալանավորվեց, իսկ նոր նախագահը կազմակերպեց բազմաթիվ մեղադրյալների ազատումը:

Չնայած Մեծ Բրիտանիան Մալթայում շարունակում էր որպես ռազմագերիներ կալանքի տակ պահել 77 բանտարկյալների, որոնք պետք է կանգնեցվեին դատարանի առաջ, բայց նրանք ի վերջո շանտաժի հիման վրա ազատ արձակվեցին: Քեմալը բրիտանական բարձր կոմիսարիատին տեղեկացրեց, որ եթե օսմանյան ռազմական դատարանները նոր մահապատիժներ իրականացնեն, ապա ինքը մահապատժի կենթարկի իր մոտ գտնվող անգլիացի գերիներին: Բանակցություններից հետո 1921 թ. տեղի ունեցավ Մալթայում պահվող բանտարկյալների և անգլիացի 22 գերիների փոխանակումը {(119) *78*}:

Վերոնշյալ դատավարությունների և կայացված դատավճիռների միջոցով օսմանյան կառավարությունը պաշտոնապես ընդունում էր հայ ժողովրդի ծրագրված տեղահանությունների և կոտորածների փաստը: Բնականաբար անգնահատելի արժեք ունեն նաև դատավարությունների ժամանակ ներկայացված նյութերն ու տրված ցուցմունքները, որոնց վավերականությունը ճանաչվել է այդ դատարանների կողմից:

Ինչ վերաբերում է հեռակա դատապարտված և փախուստի մեջ գտնվող՝ ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին, ապա նրանց մահապատիժն իրականացրեց ՀՅԴ-ն՝ կյանքի կոչելով Նեմեսիս գաղտնի գործողությունը:

Նեմեսիս գործողությունը

1919 թ. սեպտեմբերի 27-ից Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում ընդունվեց որոշում փախուստի դիմած՝ ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին հայտնաբերելու և պատժելու մասին: Ժողովի տրամադրության տակ կար 59 էջից և 23 բաժիններից բաղկացած՝ «Հայերի կոտորածների և տեղահանումների պատասխանատուների» մի ցուցակ, որի առանցքը կազմում էր 100 անուններից բաղկացած առաջին բաժինը՝ «Թուրքիայում հայերի բնաջնջման կազմակերպիչների ցուցակ» վերտառությամբ {(119) *34*}:

Այդ նպատակի իրագործման համար կյանքի կոչվեց Նեմեսիս գաղտնի գործողությունը, որում ընդգրկվեցին ընդհատակյա պայքարի և մարտական փորձառություն ունեցող անհատներ: Ձևավորվեց հետախույզների, մարտիկների և օգնականների մի գերազանց թիմ՝ ձեռնամուխ լինելով իր առաջադրանքների կատարմանը: Գործողության գլխավոր ռազմավարներից մեկն ԱՄՆ-ում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արմեն Գարոն էր: Նրա վստահորդ Շահան Նաթալին համակարգում էր եվրոպական տարբեր մայրաքաղաքներում թաքնված երիտթուրք հանցագործների բացահայտման և ահաբեկման աշխատանքները: Ահարոն Սաչակլյանը ղեկավարում էր ֆինանսական միջոցների հավաքագրումն ու բաշխումը: Այդ գործում նրան օգնում էին Համո Բարաղամյանը և Զավեն Նալբանդյանը:

Նեմեսիսի առանցքային դերակատարներից էր Հրաչ Փափազյանը, որը «Մեհմեդ Ալի» ծածկանվամբ մուտք էր գործել Բեռլինի վտարանդի երիտթուրքերի շրջանը և այնտեղից կարևոր տեղեկություններ էր հաղորդում ընկերներին: Մեկ այլ գործիչ՝ Գրիգոր Մերջանովը, հետախուզական աշխատանքին զուգահեռ պետք է աջակցեր զինյալներին տեղեկությունների փոխանցման հարցում և հոգ տաներ, որ վրիժառուների ցանցը գաղտնի մնա:

Քանի որ երիտթուրք պարագլուխների ահաբեկումները մեծ ուշադրություն էին գրավելու, Նեմեսիսի կազմակերպիչները նպատակ ունեին նաև դրանց միջոցով միջազգային հանրությանը տեղեկացնել հայերի հետ կատարված հրեշավոր հանցագործությունների, ազատության մեջ գտնվող՝ դրանց գլխավոր պատասխանատուների և այն մասին, որ զոհերի համար արդարադատություն տեղի չէր ունենում: Այդ ամենն ընդսմին պետք է կատարվեր՝ առանց բացահայտելու վրիժառու կազմակերպության գոյությունը: Նեմեսիսի մարտիկներն իրենց հանձնառությունն իրականացրին բարձր մակարդակով: Պատժվեցին ոչ միայն Օսմանյան պետությունում հայերի ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից շատերը, այլև Շուշիի և Բաքվի կոտորածների պատասխանատուները, ինչպես և մի շարք հայ դավաճաններ:

1920 թ. հունիսի 19-ին Արամ Երկանյանն ու Միսաք Թորլաքյանը Թիֆլիսում գնդակահարեցին Ադրբեջանի առաջին վարչապետ Ֆաթալի խան Խոյսկուն, որը 1918 թ. Բաքվի հայերի կոտորածի գլխավոր պատասխանատուներից մեկն էր: 1920 թ. հուլիսի 19-ին Երկանյանը սպանեց նաև Շուշիի ու Բաքվի հայերի կոտորածների մեկ այլ գլխավոր պատասխանատուի՝ Ադրբեջանի խորհրդարանի խոսնակի օգնական՝ Հասան Բեկ Աղաևին:

1921 թ. մարտի 15-ին Սողոմոն Թեհլիրյանը Բեռլինի Հարդենբերգ փողոցում գնդակահարեց 100-ի ցուցակում առաջին տեղը զբաղեցնող՝ օսմանյան նախկին ՆԳ նախարար և Մեծ վեզիր Թալեաթին: Վերջինս դրանից շաբաթներ առաջ՝ փետրվարին, Լոնդոնում բրիտանական դիվանագետ Ա. Հերբերտի հետ ունեցած զրույցի ժամանակ պնդել էր, թե հայերն իրենք են պատասխանատու «աքսորումների» համար, քանի որ «թիկունքից հարվածել են» իր երկրին {(119) *89*}:

Թեհլիրյանը ձերբակալվեց: Աղմկահարույց գործով դատավարությունը տեղի ունեցավ 1921 թ. հունիսի 2-3-ին: Վկաների ցուցմունքների, որպես փորձագետ հրավիրված Լեփսիուսի ելույթի, հրապարակայնացված այլ նյութերի միջոցով դատավարու-

թյունը դարձավ հարթակ միջազգային լրատվամիջոցների և հանրության ուշադրությունը երիտթուրքական վարչակարգի հանցագործությունների վրա բևեռելու համար: Երդվյալների վճռով Թեհլիրյանն ազատ արձակվեց: Չնայած քրեական օրենսգիրքը, որի շրջանակում տեղի ունեցավ դատավարությունը, նման գործի համար արդարացման հոդված չուներ, և Թեհլիրյանն ազատ արձակվեց հանցագիտակցության բացակայության հոդվածով, այնուհանդերձ դա փաստացի արդարացում էր: «Հայ Թեհլիրյանի դատավարությունը, որն ավարտվեց մեղադրյալի արդարացումով, պատերազմական հանցագործների առաջին իսկական դատավարությունն էր՝ միայն այն տարբերությամբ, որ ոչ թե պատերազմական հանցագործը, այլ վրիժառուն էր մեղադրանքի ներքո գտնվում: Իրականում, սակայն, այդ երկու օրերին մեղադրյալի աթոռին նստած էր Թալեաթ փաշայի արյունոտ ստվերը»,– մեկնաբանում էր «Vorwärts» պարբերականը {(119) *109*}:

1921 թ. հուլիսի 18-ին Միսաք Թորլաքյանը Կ. Պոլսում գնդակահարեց Բաքվի հայերի կոտորածի մեկ այլ գլխավոր պատասխանատուի՝ Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբութ Ջևանշիրին: Ինչպես Թեհլիրյանի դեպքում էր, բրիտանական զինվորական դատարանում տեղի ունեցած՝ Թորլաքյանի դատավարության ընթացքում ևս հրապարակայնացվեցին Ջևանշիրի և մուսավաթի մյուս պարագլուխների հանցագործությունները, նաև երիտթուրքերի հետ նրանց առնչությունները: Այդ ամենը որոշ արձագանք գտավ նաև միջազգային մամուլում: Թորլաքյանը նույնպես ազատ արձակվեց անմեղսագիտության հոդվածով, ինչն իրականում արդարացում էր:

Թեհլիրյանից և Թորլաքյանից զատ, Նեմեսիսի որևէ այլ վրիժառու երբևէ չբռնվեց: 1921 թ. դեկտեմբերի 5-ին Արշավիր Շիրակյանը Հռոմում գնդակահարեց օսմանյան պառլամենտի նախկին նախագահ և մեծ վեզիր Սաիդ Հալիմին, որը 100-ի ցուցակում 2-րդն էր: Նա, 1913-1917 թթ. զբաղեցնելով կառավարության ղեկավարի պաշտոնը, ի թիվս հայերի «աքսորմանը» վերաբերող այլ

փաստաթղթերի, ստորագրել էր նաև Տեղահանության մասին օրենքը, որը պետք է «օրինական» տեսք հաղորդեր տեղահանմանը:1922 թ. ապրիլի 17-ին Արամ Երկանյանն ու Արշավիր Շիրակյանը Բեռլինում գնդակահարեցին «Իթթիհաթ վե Թերաքքը»-ի կենտրոնական կոմիտեի նախկին անդամներ և Թեշքիլաթը մահսուսեի պատասխանատուներ Բեհաէդդին Շաքիրին և Ջեմալ Ազմիին, որոնք 100-ի ցուցակում համապատասխանաբար 15-րդ և 40-րդ համարներն էին զբաղեցնում: Շաքիրը «Հատուկ կազմակերպության» բնաջնջման գործողությունների համակարգողն էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում: Օսմանյան ռազմական դատարանում, որը նրան 1920 թ. հունվարին հեռակա մահվան էր դատապարտել, ի թիվս այլ փաստերի, ներկայացվել էր նրա հետևյալ հեռագիրը՝ ուղղված Խարբերդի նահանգապետին. «Արտաքսված հայերը ոչնչացվու՞մ են: Իսկ այն վտանգավոր անձինք, որոնց մասին դու ինձ տեղեկացրել ես, վերացվե՞լ, թե՞ միայն աքսորվել են: Եղբայրս, ինձ ստույգ տեղեկություն տուր»: Նա հրամայել էր նաև որբանոցներում թունավորել բոլոր հայ երեխաներին, որոնք բավականաչափ մեծ էին՝ իրենց ծնողներին հիշելու համար:

Ինչ վերաբերում է Ազմիին, ապա նա Տրապիզոնի նախկին նահանգապետն էր և Շաքիրի հետ միասին համարվում էր նահանգի հայերի գլխավոր դահիճը: Տրապիզոնցի հազարավոր կանանց և երեխաների խեղդամահ անելով ծովում՝ նա հետագայում նաև հպարտացել էր դրանով՝ ասելով, թե «ձկներն այդ տարի խժռելու շատ բան ունեին» {(119) *142*}: Հրաչ Փափազյանը, որը Բեռլինում թուրք ուսանողի իր դերի շրջանակում բարեկամացել էր Ազմիի որդու հետ, վկայում էր, թե ինչպես էին հայր ու որդի պարծենում այն ամենով, ինչ արել են հայերի հետ: Ազմիի որդին, օրինակ, պատմում էր, թե ինչպես էր հայրը նրա համար աքսորյալների շարասյուներից հայ աղջիկների ընտրում, և այնուհետև, երբ տղան նրանց լլկել էր, ջրախեղդ անում նրանց:

1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում՝ քեմալական հյուպատոսարանի մոտ և Չեկայի կենտրոնականի մերձակայքում, գնդակահարվեցին 100-ի ցուցակում 4-րդ համարը զբաղեցնող օսմանյան նախկին ծովային նախարար, Սիրիայի գլխավոր նահանգապետ և զինվորական հրամանատար Ահմեդ Ջեմալը, նրա համհարզ Սուրսիա բեյն ու քարտուղար Նուսրետ բեյը: Հրաձիգներն էին Արտաշես Գևորգյանը և Պետրոս Տեր-Պողոսյանը, իսկ Ստեփան Զատիկյանը ղեկավարում էր գործողության կազմակերպումն ու հսկողությունը:

Չնայած դա նեմեսիսյան վերջին գործողությունն էր, իր արժանի պատիժը ստացավ նաև 100-ի ցուցակում 3-րդ տեղը զբաղեցնող՝ օսմանյան նախկին ռազմական նախարար Էնվերը: 1922 թ., երբ նա փորձում էր բասմաչների ապստամբությունը ուղղորդել ու ծառայեցնել իր պանթուրքական ծրագրերին, Ուզբեկստանում ձերբակալվեց արցախահայ Հակոբ Մելքումյանի ղեկավարած բոլշևիկյան հեծելազորային դիվիզիայի մարտիկների կողմից և օգոստոսին սպանվեց փախուստի փորձ կատարելիս: 1926 թ. օգոստոսի 26-ին Քեմալի հրամանով մահապատժի ենթարկվեց 100-ի ցուցակում 14-րդ տեղը զբաղեցնող Մեհմեդ Նազըմը: Դա տեղի ունեցավ ոչ թե հայ ժողովրդի հանդեպ նրա կատարած հանցագործությունների, այլ Քեմալի դեմ դավադրություն նյութելու մեղադրանքով:

Նեմեսիսի գործիչները մահապատժի ենթարկեցին նաև մի շարք հայ դավաճանների: 1919 թ. մարտին Թեհլիրյանը գնդակահարեց Հարություն Մկրտչյանին: Վերջինս թուրքական գաղտնի ոստիկանության համար կազմել էր հայ մտավորականների և բարձրաստիճան հոգևորականների մի ցուցակ, որոնք 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալվեցին և աքսորվելով սպանվեցին: 1920 թ. Արշակ Եզդանյանը սպանեց երկու այլ մատնիչների՝ Հմայակ Արամյանցին (Կ. Պոլսում) և Արշավիր (Արթուր) Յասյանին (Սիրիայում): Նրանք մատնել էին, ի թիվս այլոց, վերոնշալ 20 հնչա-

կյան գործիչներին, որոնք Թալեաթի դեմ մահափորձ կազմակերպելու մեղադրանքով ձերբակալվեցին և 1915 թ հունիսի 15-ին Կ. Պոլսում կախաղան հանվեցին: 1920 թ. մարտի 27-ին Շիրակյանը Կ. Պոլսում գնդակահարեց Վահե Իհսանին (Եսայան), որը ծառայում էր թուրքական գաղտնի ոստիկանությունում, հայերի տներում կատարել էր խուզարկություններ և օգնել էր թուրքերին հայերի տեղահանման հարցում {(119) *199*}:

Նեմեսիսի բազմաթիվ այլ մասնակիցներ ու աջակիցներ նույնպես կարևոր ներդրում ունեցան գաղտնի գործողության իրականացման հարցում: Նրանց շարքում էին Հակոբ Զորյանը, Արա Սարգսյանը, Սիմոն Հակոբյանը Լիպարիտ Նազարյանցը, Սեդրակ (Սեթո) Ջալալյանը, Վահան Զաքարյանցը, Միքայել Վարանդյանը, Երվանդ Աբելյանը, Աբրահամ Գյուլխանդյանը, Հայկ Տեր-Օհանյանը, Հարություն Հարությունյանը, Երվանդ Ֆունդուկյանը, Կորյուն Ղազարյանը, Տիգրան Ավետիսյանը, Աշոտ Խաչ-Մանուկյանը և այլք:

1922 թ., երբ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի վտարանդի կառավարությունները ստորագրեցին բոլշևիզմի դեմ համատեղ պայքարի «Պրոմեթևս» նախագիծը, ՀՅԴ Բյուրոն որոշեց դադարեցնել «Նեմեսիս» գործողությունը: Նաթալին, Մերջանովը և Նեմեսիսի մի շարք այլ գործիչներ, սխալ համարելով այդ որոշումը, հեռացան կուսակցությունից: Հայկական վրիժառու արդարադատությունը, այնուհանդերձ, կատարեց իր առաքելությունը: Պատժելով ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին՝ այն օգնեց հայ ժողովրդին՝ թոթափելու զոհի և հավաքական անօգնականության հոգեբանական բարդույթը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը

Ցեղասպանության կոնվենցիան ճանապարհ բացեց նաև հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատա-

պարտման համար: Առաջին պետությունը, որը 1965 թ. պաշտոնապես ճանաչեց ցեղասպանությունը, Ուրուգվայն էր: Ճանաչման գործընթացն այդուհետ շարունակեց զարգանալ և արդյունավորվել: Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը գլխավորապես հայկական սփյուռքն էր սատարում այդ գործընթացին, ապա 1990-ական թվականներից այդ հարցը դարձավ նաև Հայաստանի երրորդ Հանրապետության քաղաքական առաջնահերթություններից մեկը:

Ցեղասպանությունն առայսօր ճանաչել են շուրջ 35 պետություններ և բազմաթիվ միջազգային կառույցներ, այդ թվում՝ Եվրոպայի խորհուրդը, Եվրախորհրդարանը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Ժողովուրդների մշտական ատյանը, ՄԱԿ-ի մի շարք հանձնաժողովներ և այլն: Կարևոր է, որ ցեղասպանությունը ճանաչվել է նաև Օսմանյան պետության դաշնակիցների՝ կայսերական Գերմանիայի իրավահաջորդ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Ավստրո-Հունգարիայի իրավահաջորդ Ավստրիայի Հանրապետության խորհրդարանների կողմից, առաջին դեպքում՝ բանաձևի ընդունման (2016 թ.), իսկ երկրորդ դեպքում՝ խմբակցությունների նախագահների համատեղ հռչակագրի (2015 թ) եղանակով:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ունի խիստ կարևոր քաղաքական նշանակություն: Յուրաքանչյուր նոր ճանաչում մի նոր ուղերձ է Թուրքիայի Հանրապետության հասարակությանը՝ առերեսվելու սեփական պատմությանը: Բացի այդ՝ այն (առնվազն տվյալ երկրում) էապես թուլացնում է թուրքական ժխտողականության դիրքերը և միաժամանակ նպաստավոր միջավայր է ստեղծում հիշողության և հիշատակի խնամքի համար: Չափազանց կարևոր է նաև, որ որոշ երկրներում (Ֆրանսիայում, Կիպրոսում, Շվեյցարիայում, Հունաստանում և այլն) արդեն ի հայտ են եկել նաև ցեղասպանության ժխտման քրեականացման նախաձեռնություններ, և պետք է սատարել այդ գործընթացին:

Միաժամանակ, անշուշտ, անհրաժեշտ է քննական մոտեցում ցուցաբերել ընդունված բանաձևերի, օրենքների և հռչակագրերի հանդեպ, որոնցում երբեմն ի հայտ են գալիս թերություններ, ոչ լիարժեք կամ խոցելի ձևակերպումներ {(45) *21-25*}: Հայկական կողմը պետք է հետամուտ լինի ոչ միայն ճանաչման ու դատապարտման գործընթացի զարգացմանը, այլև, ըստ հնարավորին, վերոնշյալ թերությունների սրբագրմանը: «Այսօր Գերմանիայում դպրոցական, համալսարանական և քաղաքագիտական կրթության առաջադրանքն է,– արձանագրված է, օրինակ, Գերմանիայի Բունդեսթագի՝ 2016 թ. հունիսի 2-ին ընդունած բանաձևում,– հայերի տեղահանումն ու բնաջնջումը, որպես 20-րդ դարի էթնիկական կոնֆլիկտների պատմության մաս, ներառել իրենց ուսումնական ծրագրերում և նյութերում ու փոխանցել ապագա սերունդներին: Ընդսմին, առանձնապես երկրամասերը պետք է կարևոր դերակատարություն ունենան այդ հարցում» {(202)}:

Առանց թերագնահատելու այդ բանաձևի կարևոր նշանակությունն ինչպես ցեղասպանության, այնպես էլ Գերմանիայի մեղսակցության ճանաչման հարցում, պետք է արձանագրել, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե էթնիկական կոնֆլիկտի, այլ երիտթուրքական կառավարության քաղաքական որոշման հետևանք էր: Դասագրքերում և այլ ուսումնական նյութերում նման սխալի սպրդումը կանխելու համար անհրաժեշտ է, որ Բունդեսթագը շտկի այդ վրիպումը: Մյուս կողմից՝ այն, որ բանաձևով հանձնարարվում է ցեղասպանությունը դասավանդման նյութ դարձնել, չափազանց կարևոր է, և հայկական կողմը պետք է ջանա, որ այլ երկրների ընդունած բանաձևերում կամ հռչակագրերում նույնպես դա արձանագրվի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԵՐԵՐՈՆԵՐԻ ԵՎ ՆԱՄԱՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական համառոտ ակնարկ

Խնդրո առարկա իրադարձությունները տեղի են ունեցել ներկայիս Նամիբիայի տարածքում: 1830 թ. երաշտից հետո նամաները հայտնվեցին նոր արոտավայրեր որոնող, գլխավորապես անասնապահությամբ զբաղվող հերերոների ճնշման ներքո և ենթարկվեցին բռնությունների: Արդիական զենքերով զինված օրլամ-աֆրիկացիների (17-18-րդ դարերում նիդերլանդական հարավաֆրիկյան Քեյփ գաղութում բուրերից և նրանց մոտ աշխատող նամա կանանցից առաջացած համայնք – Ա. Հ.) և նրանց առաջնորդ Յոնկեր Աֆրիկացու աջակցությամբ նամաները կարողացան իրենց ցեղային տարածքները պահպանել և տարածվել դեպի հյուսիս: Այնուհետև նամաների և հերերոների միջև տասնամյակներ շարունակ ընդհարումներ էին տեղի ունենում: Յոնկերը և իր օրլամ-աֆրիկացիներն առաջացան մինչև հերերոների ցեղային տարածքի կենտրոնը՝ Օկահանջայի մերձակայքը, և 1850 թ. սպանեցին բազմաթիվ հերերոների: Օրլամ-աֆրիկացիների և նամաների առաջխաղացումը կասեցվեց 1863 և 1864 թթ. տեղի ունեցած երեք ճակատամարտերի միջոցով, որոնցում նրանք պարտություն կրեցին: Հերերոներին հաջողվեց այդ ճակատամարտերում հաղթել մի շվեդացու՝ Կարլ Յոհան Անդերսոնի ցուցաբերած օգնության շնորհիվ, որը հերերո ռազմիկներից ձևավորեց բանակ և այն զինեց ժամանակակից հրազենով ու երկու թնդանոթներով:

Դրան հաջորդած մոտ տասնամյա խաղաղությունից հետո նամաներն իրենց առաջնորդ Հենդրիկ Վիտբոյի ղեկավարությամբ վերսկսեցին հերերոների վրա հարձակումներն ու կողոպուտը: Այդ ընթացքում այնտեղ տեղակայված գերմանական գաղութարար փոքրաթիվ ջոկատին, որը պայմանագրային պարտավո-

թություն էր ստանձնել ապահովելու գաղութի անվտանգությունը, չհաջողվեց պաշտպանել հերերոներին: Որպես դրա դեմ բողոքի արտահայտություն՝ հերերոները խզեցին գերմանացիների հետ իրենց կնքած պայմանագրերը: Միայն 1894 թ., երբ գերմանական զորամասը զգալիորեն ուժեղացվել էր, գաղութի ռազմական և վարչական ղեկավար, գնդապետ Թեոդոր ֆոն Լոյթվայնին հաջողվեց հնազանդեցնել նամաներին: Դրա արդյունքում գերմանացիների կողմից հերերոների հրամանատար նշանակված Սամուել Մահարերոյի և Լոյթվայնի միջև ձևավորվեցին բարեկամական հարաբերություններ:

Հերերոների 1904 թ. ապստամբության դրդապատճառները

Հերերոների ապստամբությունը երկու հիմնական դրդապատճառներ ուներ. մի կողմից՝ գերմանացի գաղութարարները շարունակ ավելի մեծ տարածքներ էին սեփականացնում, մյուս կողմից՝ հերերոներն ու նամաները մեծապես տառապում էին գաղութարարների և գաղութի վարչակարգի ռասիստական քաղաքականությունից:

Հերերոներն իրենց ապրուստը ավանդաբար հայթաթում էին անասնապահությամբ: 1897 թ. բռնկվեց մի համաճարակ կենդանիների մեջ, որի հետևանքով հերերոների նախիրները մեծ մասամբ ոչնչացան: Դրան զուգահեռ, հերերոներին զգալի կորուստներ էին պատճառում գաղութարարների կողմից շարունակ ավելի մեծ տարածքների, հատկապես կարևոր արոտավայրերի յուրացումն ու տարատեսակ խաբեությունները, որոնք միջոցով նրանք ուզում էին սեփականացնել նաև բնիկների անասունները: Այդ ամենի հետևանքով բազմաթիվ աղքատացած հերերոներ հարկադրված էին վարձու աշխատանքի անցնել գերմանացի ագարակատերերի մոտ:

Այն հերերոները, որոնք դեռ անասուններ ունեին, շարունակ ավելի մեծ կոնֆլիկտներ էին ունենում գաղութարարների հետ,

երբ իրենց անասուններն արածեցնում էին այն տարածքներում, որոնց հանդեպ հավակնություն ունեին գաղութարարները: Վերջիններս նման դեպքերում բռնի ուժով ստիպում էին հերերոներին անասունները դուրս բերել այդ տարածքներից:

Ռայխսթագը 1893-1894 թթ. զբաղվեց գերմանական գաղութի գոտում հերերոների և նամաների հողատարածքների խնդրով: «Հռենոսյան առաքելության» միջնորդությամբ 1897 թ. պայմանագրային կարգով նամաներին վերապահվեց 120.000 հեկտար կազմող մի տարածք, մինչդեռ հերերոների համար այդօրինակ ոչինչ չարվեց:

Հերերոները, իրենց ապրուստի համար կարևորագույն նշանակություն ունեցող արոտավայրերը կորցնելուց զատ, մատնված էին նաև գաղութարարների տարատեսակ ռասիստական ճնշումներին ու կամայականություններին, որոնք նույնպես խթան դարձան նրանց ապստամբության համար: Երկար տարիներ հերերոների դժգոհությունն էր հարուցում նաև գերմանացի առևտրականների կողմից իրականացվող վարկավորումը, որի համաձայն՝ հերերոների առաջնորդները պետք է վճարեին իրենց ցեղի անդամների պարտքերը: Այդ գործելակերպն արգելվեց միայն 1902 թ.:

Այն, թե գաղութում որչափ արմատավորված էր բնիկների խոշտանգումների պրակտիկան, փաստում է Վինձուկ քաղաքի 75 գաղութաբնակների կողմից 1900 թ. Գերմանիայի արտգործնախարարության գաղութային վարչությանն ուղարկված՝ մարմնական պատժամիջոցներն ուժի մեջ թողնելու խնդրագիրը, որում մասնավորապես հետևյալն էր գրված. «Տեղաբնիկը երկարաժամկետ հեռանկարում չունի ըմբռնում ներողամտության և հանդուրժողականության նկատմամբ. նա դրանց մեջ միայն թուլություն է տեսնում և դրանց հետևանքով դառնում է ամբարտավան ու լկտի սպիտակամորթի դեմ, որին նա դեռ պետք է հնազանդվել սովորի, քանի որ հոգեպես ու բարոյապես նրան շատ է զիջում» {(162)}:

Գաղութում տարածված պատժաձևերից էր զոհին՝ հաճախ մերկ վիճակում, գարեջրի տակառի վրա կապելը և շերտավոր ձո-

ղերով ու ռնգեղջյուրի կամ գետաձիու կաշվից պատրաստված մտրակներով նրան այնքան հարվածելը, մինչև նա լուրջ վնասվածքներ կստանար: Գաղութի պաշտոնյա Վիլհելմ Վալենտինն այդ պատժաձևից իր տպավորությունը հետևյալ կերպ է ձևակերպել. «Հում, թակած բիֆստեյքը դրա համեմատ ոչինչ է» {(200)}:

Գաղութարարների կողմից կատարվում էին նաև հերերոների բռնաբարություններ և սպանություններ: Այն հանգամանքը, որ այդ դեպքերում հանցագործություն կատարողները չէին պատժվում կամ մեղմ պատիժ էին կրում, էլ ավելի էր մեծացնում լարվածությունը:

Ապստամբության սկիզբը

Գաղութի գերմանական զորակազմը կարևոր առաջնահերթություն էր համարում տեղաբնիկ ցեղերի սպառազինության աճի կանխարգելումը և նրանց մարտունակության թուլացումը: Վերջիններս, սակայն, վճռականորեն դիմադրում էին այդ քաղաքականության դեմ: 1903 թ. հոկտեմբերին, երբ գաղութի կառավարչությունը փորձում էր գաղութի հարավում՝ Վարմբադում, բոնդեսլվարթ-նամաների (նամաների էթնոխմբին պատկանող ցեղ – Ա. Հ.) զենքերի հաշվառում կատարել, դա հանգեցրեց ուժգին հակամարտության, որը ձգվեց ամիսներ և դադարեց միայն 1904 թ. հունվարի 27-ին, երբ գերմանացիները հյուսիսից օգնության ուղարկված զորամասերի հետ միասին կարողացան ճնշել ապստամբությունը:

Այդ զորամասերը հարավ ուղարկելու հետևանքով, սակայն, գաղութի կենտրոնում վերահսկողություն ապահովելու համար բավականաչափ ռազմական ուժեր չէին մնացել, ուստի Վինձուկում գտնվող գաղութի կառավարչությունը սկզբնապես չկարողացավ դիմակայել 1904 թ. հունվարին Օկահանջայից դեպի երկրի խորքը ծավալվող՝ հերերոների ապստամբությանը: Ապստամբության նախօրեին հերերոները հավաքվում էին Վաթերբերգի շրջա-

նում՝ պաշտոնապես դա հիմնավորելով Վաթերբերգի հերերոների առաջնորդի մահից հետո նրա ժառանգության շուրջ ի հայտ եկած տնական վեճերով, ընդ որում գերմանացիները նկատում էին, որ հերերոներն ապստամբությանը նախորդող շաբաթներին համեմատաբար մեծ քանակությամբ պարենի և այլ գնումներ էին կատարում: Հերերո ժողովրդի թվաքանակը մինչ ապստամբությունը հասնում էր 60 000-80 000-ի:

1904 թ. հունվարի 11-ին հերերոների առաջնորդ Սամուել Մահարերոն արձակեց ապստամբության հրամանը, որին կցված էր հետևյալ հայտարարությունը. «Իմ երկրի բոլոր մեծավորներին. ես Սամուել Մահարերոն եմ՝ հերերոների գլխավոր առաջնորդը: Ես հրամայում եմ իմ բոլոր մարդկանց՝ ձեռք չտալ ներքոհիշյալներին՝ անգլիացիներին, բաստերին, դամարաներին (աֆրիկյան էթնոխումբ – Ա. Հ.), նամաներին, բուրերին: Մենք այդ բոլորին չենք դիպչում: Դա մի՛ արեք: Ես երդվել եմ, որ այս որոշումը չպետք է հայտնի դառնա ուրիշներին, նաև միսիոներներին» {(101) *141-142*}:

Ըստ հերերոների ղեկավարներից մեկի՝ Դանիել Կարիկոյի՝ երդման ներքո տրված վկայության՝ հերերոների մեծավորները նաև պայմանավորվել են խնայել գերմանացի բոլոր կանանց և երեխաներին, ինչպես նաև միսիոներներին ու նրանց ընտանիքներին: Մահարերոյի և հերերոների մյուս ղեկավարների՝ վերոնշյալ անձանց խնայելու վերաբերյալ հրամանները, չնչին բացառություններով իրականացվել են, և հարձակման ենթարկված հաստատություններում ու վայրերում գտնվող գերմանացի կանայք ու երեխաները հարձակվողների կողմից ուղարկվել են գերմանացիների բնակավայրերը: Այնտեղ նրանք դառնում էին տեղեկատվության միակ ճշգրիտ, հետևաբար և կարևորագույն աղբյուրը գերմանական շտաբի համար: Գերմանացի տղամարդիկ, սակայն, առանց խտրության սպանվում էին հերերոների կողմից:

Ապստամբության սկզբում հերերո ռազմիկները (8000) քառապատիկ անգամ գերազանցում էին գաղութում տեղակայված գեր-

մանական զորամասերի անձնակազմին (2000): Ապստամբները, սակայն, հաշվի չէին առել կայսերական Գերմանիայի՝ կարճ ժամանակում մեծ թվով զորախմբեր Աֆրիկա փոխադրելու կարողությունը: Հերերոների ապստամբությունը ճնշելու համար 1904 թ. հունվարի 17-ին Գերմանիայում հրապարակվեց ծովային էքսպեդիցիոն կորպուսի կազմավորման հրամանը: Դրա մեջ ընդրկվեցին մի ծովային հետևակային գումարտակ, չորս վաշտ, մի գնդացրային ջոկատ, մի բժշկական արշավախումբ և պարենի ու այլ պիտույքների մի դեպո: Կորպուսը, որում ներառված էին, ընդհանուր առմամբ, 30 սպաներ, 648 ենթասպաներ և զինվորներ, ինչպես և 25 ձիեր, նավով ուղևորվեց Աֆրիկա: Բացի այդ՝ կազմակերպվեց և արագ այնտեղ ուղարկվեց նաև մի զորախումբ՝ բաղկացած 22 սպաներից և 516 ենթասպաներից ու զինվորներից: Ի տարբերություն կորպուսի՝ այս զորախումբը կազմավորվեց գերմանական ողջ բանակից կամավոր Աֆրիկա մեկնելու ցանկություն հայտնած զինվորականներից, որոնք ունակ էին ծառայելու արևադարձային գոտիներում: Կամավորության այդ սկզբունքով էին կազմավորվում նաև ավելի ուշ Աֆրիկա ուղարկվող զորամասերը:

Գաղութի զորակազմն ուժեղացվեց նաև 1141 մարդուց բաղկացած պահեստազորի միջոցով, որը կազմավորվեց գաղութում բնակվող տղամարդկանցից: Բացի այդ՝ գերմանացիներին հաջողվեց ձեռք բերել տեղաբնիկ բաստերի, վիտբոյների (նամաների էթնոխմբին պատկանող ցեղ) և բեթանիացի նամաների աջակցությունը: Գերմանացիների համար վճռորոշ նշանակություն ուներ իրենց մեծ կայանների, զորօրինակ Օկահանջայի և Օմարուրուի պաշտպանությունը: Գաղութի կառավարիչ Թ. Լոյթվայնը, որը մինչև 1904 թ. հուլիսին գեներալ լեյտենանտ Լոթար ֆոն Թրոտային գաղութի զինված ուժերի հրամանատար նշանակելը նաև այդ պաշտոնն էր զբաղեցնում, գիտակցում էր գերմանական զորակազմի առջև ծառացած դժվարությունները և վայրի տարածքներում նրա հնարավորությունների սահմանափակվածությունը:

Նա նախատեսում էր հակամարտությանը քաղաքական լուծում տալ {(80) *690*}:

Ապստամբության ընթացքը և առաջին ռազմական գործողությունները

Հերերոները 1904 թ. հունվարի 12-ին շրջապատեցին Օկահանջան, կտրեցին Սվակոպմունդ-Վինձուկ երկաթուղային կապը՝ ավերելով Օսոնայի մոտ գտնվող երկաթուղային կամուրջը և շարքից հանելով նաև դեպի Վինձուկ հեռագրային կապը: Հաջորդ օրերին Մահարերոն փորձեց պայքարի մեջ ներգավել Հերմանուս վան Վիկի ղեկավարման ներքո գտնվող բաստերին և նամանեերին, որոնց առաջնորդը Հենդրիկ Վիտբոյն էր: Այդ նպատակով նա Վիտբոյին ուղարկեց երկու նամակներ, որոնք, սակայն, նրան չհասան, իսկ վան Վիկը հրաժարվեց Մահարերոյին աջակցելուց, ավելին՝ նա Հ. Վիտբոյին հասցեագրված նամակները հանձնեց գերմանացիներին: Հարավ-արևմտյան Աֆրիայի ողջ հյուսիսային հատվածում բնակվող Օվամբո ցեղախումբը, որը ներկայիս Նամիբիայի բնակչության ամենամեծ խումբն է, նույնպես, հակառակ հերերոների առաջնորդների կոչերին, գրեթե չմասնակցեց ապստամբությանը: Այդ խմբին պատկանող միայն մի ցեղ շուրջ 500 լավ զինված ռազմիկներով հունվարի 28-ին հարձակվեց մի բարձունքի վրա գտնվող գերմանական ոստիկանական ու ռազմական մի հենակետի վրա: Քանի որ այնտեղ գտնվող զորախումբը տեղափոխվել էր հարավ՝ հերերոների դեմ կռվելու համար, տեղում մնացել էր միայն յոթ հոգիանոց անձնակազմ: Շրջապատման մեջ ընկած գերմանացիները, սակայն, կարողացան հաջողությամբ պաշտպանվել, և հարձակվողները, կորցնելով 60 հոգու, նահանջեցին:

Հերերոները շրջապատեցին նաև Վինձուկը, Օմարուրուն և այլ բնակավայրեր՝ փորձելով գրավել: Պատերազմի առաջին զոհերը գերմանացի գաղութաբնակներ էին: Հերերոները հրկիզում

էին նրանց ագարակները և սպանում հիմնականում տղամարդկանց: Ապստամբներին օգնում էր այն հանգամանքը, որ գերմանական զորակազմի մեծ մասը և գաղութի կառավարիչ Լոյթվայնը գտնվում էին հարավում՝ Բոնդելցվարթ-նամաների ապստամբությունը ճնշելու համար: Այդ պատճառով միայն փոքրաթիվ գերմանական ուժեր էին գտնվում հերերոների գործողությունների տարածքում: Գերմանացիների ագարակների հետ մեկտեղ նրանց հարձակման թիրախն էին դառնում դեպոները, երկաթուղագծերը և առևտրային կայանները: Հունվարի 14-ին ավերվեցին նաև Վալդաուի և Վաթերբերգի փոստատները: Վաթերբերգի ռազմական հենակետը նույնպես գրավվեց հերերոների կողմից: Նրանք հունվարի 16-ին պաշարեցին նաև Գոբաբիսը (բնակավայր Նամիբիայի արևելքում՝ Օմահեկեի տարածաշրջանում):

Չնայած հերերոների թվական գերազանցությանը՝ գերմանացիներին, որոնք ապստամբության տարածքում միայն երկու պահեստային վաշտեր ունեին, հաջողվեց պաշտպանել քաղաքները և ի վերջո ապահովել նաև հեռագրակապը:

Պատերազմի առաջին փուլում գերմանացիների համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցավ դեռևս հունվարի 12-ին Սվակոպմունդից (ներկայիս Նամիբիայի արևմուտքում գտնվող բնակավայր) մի ինքնաշեն զրահագնացքի ուղարկումը, որի պաշտպանության ներքո գերմանացիները շատ տեղերում հերերոների կողմից անօգտագործելի դարձված՝ Օկահանջա տանող երկաթուղագծերը կարողացան նորոգել, ինչը կարևոր էր Օկահանջայի շրջապատումը ճեղքելու համար: Հենց այդ գնացքի միջոցով հնարավոր դարձավ նաև արագ կերպով զորախմբեր փոխադրել Օկահանջան պաշտպանելու համար: Հունվարի 13-ին գնացքը հասավ Օկահանջայից 22 կմ հեռավորության վրա գտնվող Վալդաու վայրը, որտեղ գիշերը տեղի ունեցան առաջին մարտական գործողությունները:

Գերմանական զորամասին որոշակի օգնություն ցուցաբերեց նաև Կապշտադտում (ծովափնյա քաղաք հարավային Աֆրիկա-

յում) կայանված մի փոքրիկ գերմանական հածանավ, որը Բեռլինից եկած հրամանի հիման վրա հունվարի 14-ին ուղարկվեց Սվակոպմունդ և այնտեղ հասավ 4 օր հետո: Այնուհետև նավի անձնակազմը տարատեսակ օգնություն ուղարկեց հերերոների կողմից վտանգված Կարիբիբ բնակավայրում գտնվող գերմանացիներին՝ դրա պաշտպանությունն ապահովելու համար:

Հարավից վերադառնալով՝ Լոյթվայնը փետրվարի 12-ին դարձյալ ստանձնեց գաղութի զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը, որը նրա բացակայության ընթացքում ժամանակավորապես ուրիշներն էին վարում: Նա փորձեց բանակցությունների մեջ մտնել Մահարերոյի հետ, ինչը, սակայն, Բեռլինի կողմից դիտվեց որպես թուլություն:

Գաղութում գտնվող գերմանական զինված ուժերը հետագա մարտական գործողությունները վարելու համար բաժանվեցին երեք հիմնական մասերի, որոնցից մեկը՝ արևմտյան զորախումբը՝ մայոր Լուդվիգ Վան Էստորֆի ղեկավարությամբ, պետք է պաշտպաներ Օմարուրուի շրջանը: Երկրորդ՝ գլխավոր զորախումբը Լոյթվայնի ղեկավարությամբ, մինչև նոր օգնական ուժերի տեղ հասնելը, պետք է պաշտպաներ Օկահանջան և տագնապ ու անորոշություն ստեղծեր հերերոների մեջ և այնուհետև օգնական ուժերի ժամանումից, այն է՝ զինված ուժերի վերակազմավորումից հետո պետք է հետախուզական և հարձակողական գործողությունների դիմեր, իսկ երրորդ՝ արևելյան զորախումբը՝ մայոր Ֆրանց Գեորգ ֆոն Գլազենապի ղեկավարությամբ, պետք է պաշտպաներ Գոբաբիսի շրջանը և փակեր արևելյան սահմանը՝ հերերոների փախուստը խոչընդոտելու համար:

Հաջորդիվ ռազմական գործողությունները փոփոխակի հաջողություններով շարունակվում էին: Առանձնապես ուժեղ ճակատամարտեր տեղի ունեցան ապրիլին: Հերերոների հարձակումներին զոհ դարձան 140 գերմանացիներ և 7 բուրեր, այլ տվյալներով՝ 123 գերմանացիներ {(213), (231)}: Գրեթե բոլոր վայրերում գերմանացի կանայք և երեխաները հերերոների ուղեկցությամբ փո-

խաղրվում էին հարձակումներից զերծ մնացած մոտակա գերմանական կայանները:

Լոյթվայնը, հակառակ զորամասերի սպաների բողոքի, հեռացվեց գաղութի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնից, և նրան թողնվեցին միայն վարչական ղեկավարի գործառույթները, իսկ մայիսի 3-ին գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Ադրիան Դիտրիխ Լոթար ֆոն Տրոթան՝ ստանալով հերերոների ապստամբությունը ճնշելու հանձնարարություն: Վերջինս նախկինում՝ 1896 թ., Աֆրիկայի արևելյան գերմանական գաղութում դաժանորեն ճնշել էր բնիկների ապստամբությունը {(217)}:

Վաթերբերգի ճակատամարտը և ցեղասպանության մեկնարկը

Օգոստոսի 11-12-ին տեղի ունեցավ Վաթերբերգի վճռորոշ ճակատամարտը, որի ժամանակ Տրոթան փորձեց շրջապատել և ոչնչացնել հերերոներին: Դա նրան չհաջողվեց, և հերերոները, ծանր կորուստներ կրելով, իրենց ընտանիքների ու անասունների հետ փախան դեպի արևելք՝ Օմահեկեի անապատը: Հերերոների հանդեպ վարվող քաղաքականության հարցում Լոյթվայնի և Տրոթայի դիրքորոշումներն արմատապես տարբերվում էին: Լոյթվայնը ցանկանում էր հերերոներին խնայել և որպես աշխատուժ օգտագործել երկրի հետագա գաղութացման համար, իսկ Տրոթան, ընդհակառակը, ուզում էր ոչնչացնել նրանց: Այդ կոնֆլիկտում հաղթեց Տրոթան:

Օմահեկեի երկայնքով հետապնդման առաջին գործողության ժամանակ, որը տեղի ունեցավ Տրոթայի՝ 1904 թ. օգոստոսի 13-ի հրամանի հիման վրա, գերմանացիներն իրենց ձեռքն ընկած բոլոր տղամարդկանց անմիջապես գնդակահարեցին: Եղան նաև կանանց ու երեխաների բազմաթիվ գնդակահարություններ: Թեև հերերոները քաջատեղյակ էին Օմահեկեում ջրատեղերի մոտով անցնող ճանապարհներին, բայց հապճեպ փախուստի ժամանակ դրանք չէին բավարում մարդկանց և կենդանիների կուտակումնե-

րի պատճառով: Գերմանացիները նույնպես տեղաշարժվում էին ցամաքած ջրատեղերի և առվակների հուների ուղղությամբ և փախչողներին ներքաշում էին մարտի մեջ: Չնայած գերմանական զորամասերն աշխարհագրական ու կլիմայական այդ պայմաններում չկարողացան արդյունավետ հետապնդում իրականացնել, սակայն Տրոթան արագորեն ըմբռնեց, որ բավական էր հերերոներին քշել անապատի խորքը՝ նրանց ծարավի և զրկանքների միջոցով ոչնչացնելու համար: Նա, ըստ այդմ, շրջափակեց անապատի՝ գերմանական գաղութում գտնվող հատվածը՝ այնտեղից հերերոների վերադարձը խոչընդոտելու համար և մայոր Լյուդվիգ ֆոն Էստորֆին հրահանգեց իր զորամասերով հետապնդել փախստականներին, թույլ չտալ նրանց մոտենալ մերձակա ջրատեղերին:

Ինչպես հետագայում գրում էր Էստորֆը, «Հերերոները մեր առջևից շարունակում էին փախչել դեպի անապատի խորքը: Շարունակ կրկնվում էր սարսափելի տեսարանը: Տենդագին շտապողականությամբ տղամարդիկ ջանում էին հորեր փորել, բայց ջուրը շարունակ ավելի էր սակավանում, իսկ ջրատեղերն ավելի հազվադեպ էին դառնում: Նրանք մեկից դեպի մյուսն էին փախչում և կորցրին գրեթե բոլոր անասուններն ու բազմաթիվ մարդկանց: Ժողովրդից մնացին միայն չնչին մնացորդները» {(93) *116*}: 1904 թ. օգոստոսի վերջին գերմանացիները նոր հետապնդում ձեռնարկեցին հերերոների դեմ՝ նրանց անապատի եզրին գտնվող ջրատեղերից հեռացնելու համար: Տրոթան մերժեց բանակցություններ սկսելու վերաբերյալ հերերոների ղեկավարների առաջարկները: Տասնմեկ երևելի հերերոներ, որոնք ցանկանում էին բանակցել գերմանական զորամասերի ներկայացուցիչների հետ, վերջիններիս կողմից 1904 թ. նոյեմբերի 2-ին Օմբակալայում գնդակահարվեցին: Այդ միջադեպն էր թերևս այն գլխավոր պատճառը, որ կենդանի մնացած հերերոներն այլևս չէին ուզում գերմանացիների հետ բանակցել, այլ ձգտում էին հասնել բրիտանական տարածք:

Հերերոների բնաջնջման հրամանը

1904 թ. հոկտեմբերի 2-ին գեներալ ֆոն Տրոթան հրապարակեց հերերո ժողովրդին ուղղված հետևյալ հրովարտակը, որը հետագայում հայտնի դարձավ ու բնորոշվեց որպես բնաջնջման հրաման: «Ես՝ գերմանացի զինվորների մեծ գեներալս, ուղարկում եմ այս նամակը հերերոների ժողովրդին: Հերերոներն այլևս Գերմանիայի հպատակներ չեն: Նրանք սպանել և գողացել են, կտրել են վիրավոր զինվորների ականջներն ու քթերը և մարմնի այլ մասեր և այժմ վախկոտության պատճառով այլևս չեն ուզում կռվել: Ես ասում եմ ժողովրդին. նա, ով հրամանատարներից մեկին, որպես գերի, կբերի իմ կայաններից մեկը, կստանա 1000 մարկ: Ով կբերի Սամուել Մահարերոյին, կստանա 5000 մարկ: Հերերոների ժողովուրդը, այնուհանդերձ, պետք է հեռանա երկրից: Եթե ժողովուրդը դա չանի, ապա ես նրան հրազենով կհարկադրեմ դա անել: Գերմանական սահմանի ներսում յուրաքանչյուր հերերո՝ զինված թե առանց զենքի, անասունների հետ թե առանց անասունների, կգնդակահարվի: Ես այլևս չեմ ընդունելու կանանց ու երեխաների, նրանց ետ կքշեմ իրենց ժողովրդի մոտ կամ կհրամայեմ կրակել նրանց վրա: Սրանք իմ խոսքերն են՝ ուղղված հերերո ժողովրդին: Հզոր գերմանական կայսեր մեծ գեներալ»:

Հրովարտակին կցվեց հետևյալ լրացուցիչ տեղեկությունը, որը հասցեագրված էր միայն սեփական զորամասերին. «Այս հրովարտակը հաղորդել զորամասերին շարակարգի ժամանակ՝ հավելելով, որ համապատասխան վարձրատրությունը կտրվի նաև այն զորամասին, որը հրամանատարներից մեկին կբռնի, իսկ կանանց և երեխաների վրա կրակելը պետք է այնպես հասկանալ, որ կրակ արձակվի նրանց գլխավերևում՝ նրանց փախուստի մատնելու համար: Ես հաստատապես այն կարծիքին եմ, որ այս հրովարտակի հիման վրա տղամարդիկ գերի չեն վերցվի, սակայն այն չպետք է հանգեցնի կանանց և երեխաների հանդեպ դաժանությունների: Նրանք արդեն իսկ փախուստի կդիմեն, եթե նրանց

գլխավերևում կրակեն: Զորքը գիտակից է մնալու գերմանացի զինվորի բարի համբավին» {(133) *195*}:

Այդ հրովարտակից կարելի է այն հետևությունն անել, որ Տրոթան ուզում էր հերերոներին վտարել, իսկ գաղութի տարածքում հանդիպող հերերոներին սպանել: Վաթերբերգի ճակատամարտից հետո ստեղծված իրադրությունում, սակայն, վտարումը և բնաջնջումը լիովին նույնանում էին: Ավելին, Տրոթան նույնպես 1904 թ. հոկտեմբերի 4-ին գլխավոր շտաբին ուղարկված իր զեկուցագրում փաստում էր հերերոներին լիովին բնաջնջելու իր մտադրությունը: «Ինձ համար հարցն այժմ վերաբերում է միայն նրան, թե ինչպես պետք է ավարտել հերերոների դեմ պատերազմը,– գրում էր նա այդ զեկուցագրում:– Այդ մասին մի կողմից՝ վարչական ղեկավարի և մի քանի «հնաբնակ աֆրիկացիների», մյուս կողմից՝ իմ տեսակետները լիովին տարբերվում են միմյանցից: Առաջիններն արդեն վաղուց ուզում են բանակցել և հերերո ազգը համարում են անհրաժեշտ աշխատուժ՝ ապագայում նոր տարածքներ օգտագործելի դարձնելու համար: Ես միանգամայն այլ տեսակետ ունեմ: Ես կարծում եմ, որ ազգը, որպես այդպիսին, պետք է ոչնչացվի կամ, եթե դա մարտավարական հարվածներով հնարավոր չէր, օպերատիվ կերպով և այլ մանրակրկիտ գործողությունների միջոցով արտաքսվի երկրից:

Հնարավոր կլինի ժողովրդի՝ արևելքից ետ հոսող փոքրիկ հատվածներին Գրոթֆոնտայնից մինչև Գոբաբիս ջրատեղերի գրավման և արագ զորաշարժերի միջոցով գտնել և նրանց հետզհետե բնաջնջել: Անապատ (Օմահեկե) մտնելով՝ ազգի հիմնական զանգվածներին՝ հրամանատարներով հանդերձ, հետապնդելը, բռնելը և ոչնչացնելն այս պահին հնարավոր չեն: […] Ես երեկ՝ իմ մեկնումից առաջ, վերջին օրերին բռնված ռազմիկներին, ռազմական դատարանով մահապատժի դատապարտելով, հրամայեցի կախել, իսկ ետ եկած կանանց ու երեխաներին քշեցի անապատ՝ իրենց ժողովրդի մոտ՝ նրանց տալով իրենց լեզվով շարադրված

հրովարտակը: {…} Մյուս կողմից՝ կանանց ու երեխաներին ընդունելը, որոնց մեծ մասը հիվանդ է, զորքի համար խիստ մեծ վտանգ կներկայացնի, իսկ նրանց կերակրելը անհնար է: Այդ պատճառով ես ավելի ճիշտ եմ համարում, որ ազգը ոչնչանա և մեր զինվորներին էլ չվարակի և ջրի ու պարենի խնդիրներ չստեղծի: Բացի այդ՝ իմ կողմից ցանկացած մեղմություն հերերոների կողմից միայն որպես թուլություն կընկալվի: Նրանք պետք է այժմ անապատում կործանվեն կամ ջանան հասնել Բեչուանայի (բրիտանական պրոտեկտորատ – Ա. Հ.) սահմանը: Այդ ապստամբությունը է և կմնա մի ռասայական պայքարի սկիզբը, որի մասին Արևելյան Աֆրիկայի առնչությամբ ես կանխատեսել եմ դեռևս 1897 թ. կանցլերին ուղարկված իմ զեկուցագրում» {(89) *86-87*}:

Վերապրած հերերոների դրությունը

Անապատում դեռ կենդանի մնացած հերերոների մեծ մասը, մեկընդմեջ մարտեր մղելով, շարունակեց հեռանալ դեպի արևելք: Մոտ 1500 հերերոներ Մահարերոյի հետ կարողացան կտրել-անցնել Օմահեկեն և հասնել բրիտանական պրոտեկտորատ՝ Բեչուանա երկիրը (ներկայիս Բոտսվանա), որտեղ էլ նրանք հանգրվանեցին: Որոշ թվով հերերոներ, շարժվելով դեպի հյուսիս, հասան Օվամբո ցեղի բնակության տարածք և բարեկամական ընդունելություն գտան նրա կողմից: Մի քանի հարյուր հերերոներ հասան բրիտանական Վալֆիս Բայ անկլավը, որտեղ նրանց որոշ ժամանակ արգելափակեցին, իսկ այնուհետև աքսորեցին Կապշտադտ:

Հերերոների բնաջնջման՝ Տրոթայի քաղաքականությանը սուր քննադատության ենթարկվեց գերմանական հասարակական շրջանների կողմից և միաժամանակ հանգեցրեց գաղութի վարչական ղեկավար Թ. Լոյթվայնի հրաժարականին: Վերջինս, հակառակվելով Տրոթայի քաղաքականությանը, Բեռլինի իր վերադասներին նույնպես բազմիցս իր անհամաձայնությունն էր հայտնում այդ քաղաքականության հանդեպ: «Բայց դա չպետք է դառնա

բնաջնջման քաղաքականություն,– գրում էր Լոյթվայնը արտգործնախարարության՝ գաղութների վարչությանն ուղղված մի նամակում,– և ես դա պնդում եմ՝ ոչ թե բնիկների հանդեպ, այլ մեր գործի հանդեպ սիրուց դրդված, քանի որ ես բնիկների, հատկապես հերերոների պես կենսունակ ցեղի ոչնչացումը տնտեսապես վնասակար և ռազմական առումով անիրագործելի եմ համարում» {(213)}:

Տրոթայի 1904 թ. հոկտեմբերի 2-ի հրովարտակի՝ Բեռլին հասնելուց մի քանի օր անց (այն ժամանակ աֆրիկյան գաղութից պաշտոնական փոստը վեց շաբաթում էր հասնում Բեռլին) դրա դեմ Գերմանիայի հասարակական շրջաններում սկսված սուր քննադատությունը կառավարությանը դրդեց չեղարկել այդ հրովարտակը: Այնուհանդերձ, մոտ երկու ամիս տևեց, մինչև բոլոր իրավասու ծառայություններն ու իշխանական կառույցները կատարեցին այդ որոշմանն ընթացք տալու հետ կապված իրենց պարտականությունները:

Բեռլինում բանակի գլխավոր շտաբը նույնպես նոյեմբերի 23-ին հանգեց այն համոզման, որ Տրոթայի ծրագիրը չպետք է իրագործվի, և շտաբի պետն այդ մասին տեղեկացրեց կանցլեր Բյուլովին: Հաջորդ օրը կայսրը կանցլերից ստացավ մի նամակ առ այն, որ Տրոթայի կողմից հրամայված միջոցառումները հակասում են քրիստոնեական և մարդկային սկզբունքներին, և «հերերոների լիակատար ու ծրագրված ոչնչացումը արդարադատության և Գերմանիայի հեղինակության վերականգնման պահանջներին համապատասխանող բոլոր չափերն անցնում է»: Բացի այդ՝ ըստ կանցլերի, հրովարտակը նպաստելու էր քաղաքակիրթ ազգերի շրջանում Գերմանիայի հեղինակության անկմանը {(213)}:

1904 թ. դեկտեմբերի 8-ին հրապարակվեց կայսր Վիլհելմ II-ի հրամանն առ այն, որ այն հերերոներին, որոնք պատերազմին և սպանություններին չեն մասնակցել, ներում կշնորհվի: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 9-ին, Տրոթային իր հրովարտակը չեղյալ հայ-

տարարելու հրահանգ ուղարկվեց նաև Բեռլինից՝ բանակի գլխավոր շտաբից: Նրան հանձնարարվեց, բացի պարագլուխներից, հերերոների կյանքը խնայել և ավետարանական միսիոներների միջնորդական գործունեությունը չխոչընդոտել: Տրոթան ստիպված եղավ դեկտեմբերի 12-ին չեղյալ հայտարարել հոկտեմբերի 2-ի իր հրովարտակը: Մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 11-ին, սակայն, նա հեռագրով ձեռք էր բերել կանցլեր Բեռնհարդ ֆոն Բյուլովի հավանությունն ու աջակցությունը՝ հերերոներին հարկադիր աշխատանքի լծելու և այդ նպատակով համակենտրոնացման ճամբարներ ստեղծելու հարցում: Այդ ծրագիրն այնուհետև գործադրվեց:

Չնայած այդ ամենին, այն փոքրաթիվ հերերոները, որոնք վերադարձան կամ, անապատում հայտնաբերվելով, ետ բերվեցին գերմանացիների կողմից, ենթարկվում էին կամայական վերաբերմունքի: Նրանց, ովքեր մեղադրվում էին գերմանացիների դեմ կռվելու համար, գնդակահարվում էին: Տեղի էին ունենում նաև հրապարակային մահապատիժներ կախաղանի միջոցով: Այդ իսկ պատճառով այն հերերոները, որոնք կարողացել էին գերմանացիներից աննկատ մնալ, գերադասում էին ճամբարներ չգնալ, այլ գոյություն քարշ տալ վայրի բնության մեջ՝ վախենալով, որ իրենց կսպանեն:

Ի վերջո, համակենտրոնացման ճամբարներում հավաքվեցին 11 000 հերերոներ: Նրանք բազմապատիկ ավելի զոհեր ունեցած ժողովրդի վերջին մնացորդներից էին: 1905 թ. նոյեմբերի 15-ին մի գերմանացի զինվորականի՝ մամուլում հրապարակված վկայության համաձայն՝ «անապատի՝ երկաթյա խստությամբ ամիսներ շարունակվող շրջափակումը ավարտեց ոչնչացման գործը: Երբ, սակայն, անձրևային սեզոնը սկսվեց, երբ թատերաբեմը հետզհետե լուսավորվեց և մեր պարեկները գնացին մինչև Բեչուանա երկրի սահմանը, նրանց աչքի առաջ բացվեց ծարավից մեռած բազմությունների սարսափելի պատկերը: Մեռնողների խռխռոցը և բարկության խելագար ճիչերը {…} անէանում էին անսահմանության վեհ անդորրի մեջ» {(135) *475*}:

Նամաների ապստամբությունը

Նամաների ապստամբությունը սկսվեց 1904 թ. հուլիսին, երբ Յակոբ Մորենգան 11 համակիրների հետ սկսեց հարձակումներ գործել գերմանացի գաղութարարների վրա և զինաթափել նրանց: 1904 թ. օգոստոսի 30-ին նրանք առաջին անգամ մարտի բռնվեցին գերմանական զորակազմի մի ջոկատի հետ, որի ժամանակ գերմանական կողմից սպանվեցին մեկ լեյտենանտ և երկու զինվոր, իսկ մյուսները փախուստի դիմեցին: Դրանից հետո ապստամբությունը լայն ծավալում ստացավ: Այն, սակայն, գերմանացիների համար լուրջ վտանգ դարձավ միայն այն ժամանակ, երբ նամաների ցեղախմբի վիտբոյ ցեղի առաջնորդ Հենդրիկ Վիտբոյը գերմանական կայսրության հետ իր կնքած պայմանագիրը խզեց և համընդհանուր ապստամբության կոչ արեց: Դա տեղի ունեցավ 1904 թ. հոկտեմբերի 3-ին՝ Տրոթայի վերոնշյալ տխրահռչակ հրովարտակի հրապարակումից անմիջապես հետո: Գաղութի կառավարիչ Լոյթվայնին ավելի ուշ ուղարկված մի նամակում Հ. Վիտբոյն իր որոշումը հիմնավորում էր գերմանացի գաղութարարների կողմից աֆրիկացիների բազմաթիվ սպանություններով ու խոշտանգումներով:

Պայմանագրի խզումից և ապստամբության կոչից անմիջապես հետո գերմանացիները 80 վիտբոյների, որոնք Վաթերբերգի ճակատամարտում իրենց օգնել էին, զինաթափեցին, արգելափակեցին, իսկ ավելի ուշ աքսորեցին Կամերուն և Տոգո:

Հ. Վիտբոյին և Մորենգային միացան, բացի նրանց մարդկանցից, նամա ցեղախմբի այլ ցեղեր ևս իրենց առաջնորդների հետ միասին: Եղան նաև ցեղեր, որոնք հրաժարվեցին մասնակցել ապստամբությանը: Երկու ցեղեր էլ, նախքան կկարողանային ապստամբությանը միանալ, գերմանացիների կողմից զինաթափվեցին և արգելափակվեցին, իսկ նրանց առաջնորդները չպարզաբանված հանգամանքներում մահացան գերության մեջ:

Նամաների ռազմավարությունը հիմնովին տարբերվում էր հերերոներից: Եթե վերջիններս, որպես կանոն, բաց դաշտում էին մարտեր մղում, ապա նամաները նախընտրեցին պարտիզանական պայքարի և դարանակալման ռազմավարությունը: Նրանց հարձակումներին զոհ դարձան մոտ քառասուն գերմանացի գաղութարարներ: Նամաները ևս գաղութարարների կանանց ու երեխաներին խնայում էին, հաճախ նույնիսկ օգնում՝ հասնելու գերմանական մոտակա կայանները:

Փոփոխակի հաջողություններով ընթացող մի շարք մարտերից հետո՝ 1905 թ. ապրիլի 22-ին, գեներալ Տրոթան հրապարակեց «հոտտենտոտների» ժողովրդին ուղղված հրովարտակը, որով նամաներին անձնատուր լինելու կոչ էր անում՝ նրանց սպառնալով հերերոներին վիճակված ճակատագրով: Հրովարտակում, որն ամբողջացնում էր Տրոթայի ցեղասպան քաղաքականությունը, մասնավորապես, գրված էր հետևյալը. «Ապստամբ հոտտենտոտներին. հզոր, մեծ գերմանական կայսրը կամենում է հոտտենտոտների ժողովրդին ողորմածություն ցուցաբերել և նրանց, որոնք կամավոր անձնատուր կլինեն, կյանք նվիրել: Միայն նրանք, որոնք ապստամբության սկզբում սպիտակամորթների են սպանել կամ հրամայել են սպանել, ըստ օրենքի, զրկվելու են իրենց կյանքից: Ես դա հայտարարում եմ ձեզ և նաև ասում, որ այն քչերի հետ, որոնք չեն հպատակվի, կլինի նույնը, ինչ եղել է հերերոների ժողովրդի հետ, որը, կուրացած, կարծում էր, թե կարող է հաջողությամբ պատերազմ մղել հզոր գերմանական կայսեր և գերմանական մեծ ժողովրդի դեմ: Ես հարցնում եմ ձեզ՝ որտե՞ղ է այսօր հերերոների ժողովուրդը, որտե՞ղ են այսօր նրանց առաջնորդները: Սամուել Մահարերոն, որը նախկինում հազարավոր խոշոր եղջերավոր անասուններ իր սեփականն էր համարում, ինչպես վայրի կենդանի հետապնդվելով, փախել է անգլիական սահմանից այն կողմ: Նա այնպես աղքատ է դարձել, ինչպես դաշտաբնակ հերերոներից ամենաաղքատը և այլևս ոչինչ չունի: Նույ-

նը տեղի է ունեցել հերերոների մյուս մեծամեծների հետ, որոնց մեծ մասը զրկվել է կյանքից, և հերերոների ողջ ժողովրդի հետ, որը մասամբ անապատում ոչնչացել է քաղցից ու ծարավից, մասամբ սպանվել է գերմանացի հեծյալների, մասամբ էլ օվամբոնների կողմից: Այլ կերպ չի լինի հոտտենտոտների ժողովրդի հետ, եթե նա կամավոր անձնատուր չլինի և իր զենքերը չհանձնի: Դուք պետք է գաք՝ մի ձողի վրա սպիտակ կտոր փակցրած՝ ձեր բոլոր զենքերով, և ձեզ հետ ոչինչ չի պատահի: Դուք կստանաք աշխատանք և կերակուր, մինչև պատերազմի ավարտից հետո գերմանական մեծ կայսրը տարածքի իրադրությունը կվերկարգավորի: Ով այսուհետ կարծում է, որ գթությունը իր հանդեպ չի կիրառվելու, նա պետք է արտագաղթի, քանի որ գերմանական տարածքում որտեղ էլ նա երևա, նրա վրա կկրակեն, մինչև բոլորը ոչնչացված կլինեն: Սպանությունների մեղավորներին՝ մեռած թե կենդանի, հանձնելու համար ես հետևյալ վարձատրությունն եմ նշանակում. Հենդրիկ Վիտբոյի համար՝ 5000 մարկ, Կոռնելիուսի համար՝ 3000 մարկ, մյուս առաջնորդների համար՝ 1000-ական մարկ» {(144) *186*}:

Մարտերը երկար ժամանակ շարունակվում էին փոփոխական հաջողություններով: 1905 թ. հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած մի ճակատամարտում Հ. Վիտբոյը զոհվեց: Վիտբոյներին իրենց առաջնորդի մահն այնպես ընկճեց, որ նրանք բոլորը 1906 թ. սկզբին անձնատուր եղան: Այդպիսով ապստամբական ամենամեծ խումբը դադարեց մասնակցել պատերազմին:

1905 թ. նոյեմբերի 2-ին կայսրը վավերացրեց գեներալ ֆոն Տրոթայի հրաժարականը, և նոյեմբերի 19-ին նա հեռացավ գաղութից՝ իր տեղը զիջելով գնդապետ Բերթհոլդ ֆոն Դայմլինգին: Տրոթայի մեկնումից հետո գաղութի կառավարիչ նշանակվեց Ֆրիդրիխ ֆոն Լինդեքուիստը, որն այդ պաշտոնը ստանձնեց միայն այն պայմանով, եթե զորակազմը նույնպես դրվի իր ենթակայության ներքո: Այդպիսով կենտրոնական կառավարման վարչությունը վերստացավ տեղաբնիկների հանդեպ վարվող քաղաքա-

կանությունը վճռելու և որոշումներ կայացնելու լիազորությունը՝ բացառությամբ զուտ ռազմական նշանակության խնդիրների:

1906 թ. մարտին Կոռնելիուս Ֆրեդերիկսը, մի ճակատամարտում ծանր պարտություն կրելով, կորցրեց իր գրեթե բոլոր զինակիցներին: Տարվա երկրորդ կեսին նամաները նոր ծանր պարտություններ կրեցին, և դրանց հետևանքով գաղութի ողջ հարավային հատվածը դարձյալ հպատակվեց գերմանացիներին, չնայած այն բանին, որ նամաների մեկ այլ առաջնորդ՝ Սիմոն Քոպերը, մինչև 1908 թ. սկիզբը շարունակում էր բրիտանական տարածքից կռիվներ մղել:

1907 թ. մարտի 31-ին Գերմանիայում պաշտոնապես հայտարարվեց գաղութում պատերազմական դրության ավարտի մասին, չնայած Մորենգան շարունակեց պարտիզանական կռիվները մինչև 1907 թ. սեպտեմբերի 19-ը: Այդ օրը նա սպանվեց բրիտանական ոստիկանության կողմից:

Սիմոն Քոպերը, ինչպես նշվեց, տեղափոխվել էր բրիտանական գոտի, որտեղից հարձակումներ էր գործում մոտակա գերմանական տարածքների վրա: 1908 թ. սկզբին նրա դեմ ձեռնարկվեց վճռական արշավանք՝ ուղտերով կազմավորված մի հեծյալ զորամասով՝ կապիտան Ֆրիդրիխ ֆոն Էրքերտի գլխավորությամբ: 1908 թ. մարտի 16-ին գերմանացիները կարողացան բրիտանական պրոտեկտորատ հանդիսացող Բեչուանա երկրում շրջապատել Քոպերի և նրա զինակիցների ճամբարը և, ճակատամարտում հաղթելով, կենդանի մնացածներին գերել; Էրքերտն այդ մարտում զոհվեց, իսկ Քոպերը նախորդ օրը փախել էր: Երկար բանակցություններից հետո Քոպերտն, ի վերջո, ստանալով ազատության մեջ մնալու և մի փոքրիկ թոշակ ունենալու հավաստիացումներ, 1909 թ. փետրվարին հանձնվեց բրիտանական իշխանություններին:

Ապստամբների մեկ այլ խումբ Մորենգայի զինակից Աբրահամ Ռոլֆսի ղեկավարությամբ 1908 թ. դեկտեմբերին մի շարք հարձակումներ գործեց գերմանացի գաղութաբնակների վրա,

որից հետո՝ 1909 թ. սկզբին տեղափոխվեց բրիտանական տարածք: Բրիտանական ոստիկանությունը մի քանի ամիս անց նրանց հանձնեց գերմանացիներին: Ռոլֆսը և նրա մարդկանցից հինգը կախաղանի դատապարտվեցին, մյուսները մտրակվեցին ու բանտարկվեցին:

Որպես շնորհակալություն իրենց ցուցաբերած աջակցության համար՝ Բեչուանայի բրիտանական ոստիկանները և այլ քաղաքացիներ պարգևատրում ստացան գերմանացիներից {(134)}:

Հասարակական արձագանքները Գերմանիայում

Ռայխսթագում հերերոների բնաջնջման՝ Տրոթայի քաղաքականության վերաբերյալ ծավալվեցին թեժ քննարկումներ, և, ի թիվս այլոց, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Ավգուստ Բեբելը խստորեն դատապարտեց Տրոթայի գործելակերպը. «Այդպիսի պատերազմ կարող է վարել ցանկացած մսագործի ծառա,– հայտարարեց նա,– դրա համար անհրաժեշտ չէ լինել գեներալ կամ բարձրաստիճան սպա» {(230)}:

Տրոթան փորձում էր արդարանալ և «Deutsche Zeitung» թերթում այն մտահոգությունն էր արտահայտում, որ այդ ռազմավարությունը չկիրառելու դեպքում կարող էր այնպես լինել, ինչպես եղել է Նապոլեոնի հետ 1812 թ. Մոսկվայից նահանջելիս (նկատի ուներ Բերեզինայի ճակատամարտը): «Աֆրիկյան ցեղերը միմյանց հետ այնքան երկար են պատերազմում, մինչև մի կողմը ջախջախված կկործանվի,– գրում էր նա:– Դա պետք է տեղի ունենար նաև այստեղ: Այն, որ Աֆրիկայում որևէ պատերազմ ժնևյան կոնվենցիայի օրենքներով տեղի չի ունենում, ինքնին հասկանալի է: Կալահարիի ջրատեղից կանանց ետ քշելը ինձ համար դժվար էր: Ես, սակայն, կանգնած էի իմ զորքին սպառնացող աղետի առաջ: Եթե ես կանանց մատչելի դարձնեի առկա փոքրիկ ջրատեղերը, ապա պետք է ակնկալեի, որ Աֆրիկայում Բերեզինա էի ապրելու» {(145) *83*}:

Չնայած Տրոթայի արդարանալու ջանքերին՝ հերերոների հանդեպ նրա քաղաքականության վերաբերյալ հասարակական վրդովմունքը (որում զգալի դեր ունեին եկեղեցական միսիոներական կազմակերպությունները) Գերմանիայում չէր հանդարտվում: Նրա՝ բնաջնջման քաղաքականությունը քննադատվեց Պաուլ Ռոհրբախի և այլ հայտնի հրապարակախոսների ու հասարակական-քաղաքական գործիչների կողմից:

Չնայած այն բանին, որ հասարակական ուժգին ճնշման հետևանքով կայսրը, բանակի գլխավոր շտաբը, ավելի ուշ նաև Գերմանիայի կառավարությունը պաշտոնապես սահմանազատվեցին Տրոթայի որդեգրած քաղաքականությունից և նրան հարկադրեցին չեղյալ համարել իր՝ հոկտեմբերի 2-ի հրովարտակը, այնուհանդերձ նա, որպես հերերեոների ապստամբության ճնշման հարցում իր կատարած ծառայության պարգև, 1904 թ. դեկտեմբերի 14-ին ստացավ թագավորական 1-ին աստիճանի շքանշան՝ սրերի մի խրձակի հետ միասին:

Գաղութում տեղի ունեցող իրադարձությունները 1906 թ. վերջերին Բեռլինում հանգեցրին նաև կառավարական ճգնաժամի: Ռայխսթագի շատ պատգամավորներ սկզբից եթ տարբեր պատճառներով դեմ էին գաղութում բնիկների դեմ պատերազմ մղելուն: 1906 թ. դեկտեմբերին, երբ պատգամավորների մեծամասնությունը հրաժարվեց լրացուցիչ միջոցներ հատկացնել՝ գաղութում պատերազմը շարունակելու համար, կանցլեր Բյուլովը կայսեր հրամանով ցրեց ռայխսթագը: 1907 թ. հունվարի 25-ին տեղի ունեցած՝ ռայխսթագի նոր ընտրությունները այդ պատճառով հայտնի դարձան «Հոտտենտոտների ընտրություններ» անվանումով {(218)}:

Համակենտրոնացման ճամբարներում

Գերմանացիները գերված հերերոներին ու նամաներին ուղարկեցին համակենտրոնացման ճամբարներ, որոնք ստեղծվել էին հենց այդ նպատակով՝ բրիտանական ճամբարների օրինա-

կով: Սկզբում ճամբարներ էին հիմնվել Օկահանջայում, Վինձուկում և Սվակոպմունդում, իսկ հետո դրանց թիվն ավելացավ:

Գերբնակեցվածության, կլիմայական վատ պայմանների, վատորակ ջրի և միօրինակ կերակրի հետևանքով ճամբարներում արագորեն տարածվեցին զանազան հիվանդություններ, ինչպես օրինակ՝ կարմրախտը, տիֆը, դիզենտերիան և այլն, որոնց զոհ դարձան հազարավոր մարդիկ: Գաղութարարներն առողջ բանտարկյալներին հարկադրում էին կատարել ճանապարհների և երկաթուղու շինարարության աշխատանքներ, ընդ որում պայմաններն այն աստիճան վատ, և զրկանքներն այնքան շատ էին, որ բանտարկյալների նույնիսկ կեսը չկարողացավ դրանք հաղթահարել:

Գերմանական զինվորական շտաբի բժիշկ Հուգո Բոֆինգերը, փորձելով կարմրախտի դեմ բուժման միջոց գտնել, բանտարկյալներին ներարկում էր տարբեր նյութեր, այդ թվում՝ կիտրոնի հյութ, մկնդեղ ու ափիոն, և այնուհետև տվյալ մարդկանց մահից հետո դիահերձման միջոցով հետազոտում էր այդ նյութերի ազդեցությունը:

Ցեղասպանությանը զոհ դարձած հերերոների թիվն այդ էթնիկ խմբի ողջ թվաքանակի հետ հարաբերակցությամբ դիտարկելիս չափազանց մեծ էր: Եթե 1904 թ. ապստամբությունից առաջ հերերոների ընդհանուր թիվը հասնում էր 60 000-80 000-ի, ապա 1911 թ. դրությամբ այն չէր գերազանցում 20 000-ը: Ցեղասպանությանը զոհ դարձան 40 000-60 000 հերերոներ և շուրջ 10 000 նամաներ {(92) *225*}:

Գերմանիայի քաղաքական դիրքորոշումը: Հաշտության նախաձեռնություններ և ցեղասպանության ճանաչումը

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլեր Հելմուտ Քոլը այդ պաշտոնում առաջինն էր, որը 1904 թ.-ից հետո այցելեց Նամիբիա (1995 թ.): Նա հրաժարվեց հանդիպել հերերոնե-

րի ներկայացուցիչների հետ: Գերմանիայի այն ժամանակվա կառավարությունը «ցավում» էր կայսերական Գերմանիայի ժամանակ կատարվածի համար, սակայն չէր ուզում պատասխանատվություն ստանձնել և հրաժարվեց այն ցեղասպանություն որակել՝ պատրվակելով, թե ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիան հետադարձ ուժ չունի:

Միաժամանակ մատնանշվում էր այն իրողությունը, որ Գերմանիայի կողմից 1990 թ.-ից ի վեր Նամիբիայի զարգացման համար մեծաքանակ օգնություն էր հատկացվում (2014 թ. դրությամբ՝ 800 միլիոն եվրո): Այդ օգնությունը, սակայն, տնօրինում էր օվամբոների՝ միայնակ կառավարող «Հարավ-արևմտյան Աֆրիկայի ժողովրդական կազմակերպություն» կուսակցությունը, և այն գրեթե չէր հասնում հերերոներին, որոնք Գերմանիայից նյութական փոխհատուցում էին պահանջում հենց իրենց էթնիկ խմբի համար: Հերերոների ներկայացուցիչները նաև այն փաստարկն էին ներկայացնում, որ Հաագայում 1899 թ. ընդունված չորրորդ կոնվենցիայի համաձայն՝ պարտված կողմի քաղաքացիական բնակչության հանդեպ հետապնդումներն այն ժամանակ արդեն արգելված էին:

2009 թ. Բրեմենի «Հակագաղութային հուշարձանի» մերձակայքում բացվեց 1904-1908 թթ. Նամիբիայում տեղի ունեցած ցեղասպանության զոհերի հիշատակին և Վաթերբերգի ճակատամարտին նվիրված մի հուշարձան, որը բաղկացած էր Օմահեկեի անապատից բերված քարերից:

2002 թ. Հերերոների փոխհատուցման միության հանձնարարությամբ, որում ընդգրկված էին հերերոների առաջնորդ Կուահիմա Ռիրուակոն և 199 այլ հերերոներ, ամերիկացի փաստաբանների կողմից ԱՄՆ մի դատարանում հայց հարուցվեց՝ երկու միլիարդ ԱՄՆ դոլարի վճարման պահանջով: Երբ դիմումի ոչ լիարժեք հիմնավորման պատճառով այն հաջողություն չունեցավ, նոր դատական հայցեր նախաձեռնվեցին: Հարուցված դատական վարույթները, սակայն, կասեցվեցին, երբ Գերմանիան 2004 թ.

ծանուցեց հաշտության նախաձեռնությամբ հանդես գալու մասին:

2004 թ. օգոստոսի 14-ին Գերմանիայի՝ զարգացման աջակցության դաշնային նախարար Հ. Վիեցորեկ-Զեուլը մասնակցեց Վաթերբերգի ճակատամարտի հարյուրամյա տարելիցին նվիրված հիշատակի միջոցառմանը, որը կազմակերպվել էր Վաթերբերգին մերձակա Օկահարարա վայրում, և որի ժամանակ ցուցադրվեցին 1904 թ. ապստամբության բեմականացված սցենարներ: Նախարարը գերմանական կառավարության առաջին պաշտոնական ներկայացուցիչն էր, որը մասնակցեց տվյալ իրադարձություններին վերաբերող հիշատակի միջոցառման: Իր ելույթում նա ընդունեց Գերմանիայի քաղաքական և բարոյական պատասխանատվությունն այն ժամանակվա գերմանական զորակազմի գործողությունների համար: «Այն ժամանակվա վայրագություններն այն էին, ինչն այսօր կանվանվեր ցեղասպանություն,– հայտարարեց նա:– […] Մենք՝ գերմանացիներս, ընդունում ենք պատմա-քաղաքական, բարոյա-էթիկական պատասխանատվությունը և մեղքը, որոնք այն ժամանակ գերմանացիներն իրենց վրա են բեռնել: Ես ձեզ խնդրում եմ մեր մեղքը ներել՝ միասին «Հայր մեր» աղոթքն ասելով»» {(203)}:

Նա, սակայն, բացառեց փոխհատուցման վճարումը՝ ավելացնելով, որ Գերմանիայի կառավարությունը շարունակելու է Նամիբիայի զարգացման համար տարեկան 11,5 միլիոն եվրո հատկացնել:

2004 թ. նոյեմբերին Տրոթայի ընտանիքի անդամները Գինսհայմում (Հռենոսի մոտ) հանդիպեցին Սամուել Մահարերոյի շառավիղ, Նամիբիայում հերերոների առաջնորդ Օմբարա Ալֆոնս Մահարերոյին՝ ներում խնդրելու համար: Նրան հանձնվեց մի գրավոր ծանուցում, որում ընտանիքի անդամները «որպես այսօրվա Գերմանիայի քաղաքացիներ և որպես քրիստոնյաներ Ձեզ, Նամիբիայից եկած մեր հյուրերի հետ Տիրոջից «Հայր մեր»-ով ներում» էր հայցում {(212)}:

2007 թ. հոկտեմբերին Տրոթայի ընտանիքի 11 անդամներ հերերոների առաջնորդի հրավերով մեկնեցին Օմարուրու՝ գեներալ Տրոթայի արարքների պատճառով հրապարակայնորեն ներում հայցելու համար: «Մենք ամաչում ենք այն սարսափելի իրադարձությունների համար,– հայտարարեցին նրանք,– որոնք հարյուր տարի առաջ տեղի են ունեցել Նամիբիայում» {(229)}:

2011 թ. Նամիբիայից մի բարձրաստիճան պատվիրակություն մեկնեց Գերմանիա և Բեռլինի համալսարանական բժշկական կենտրոնում պահվող՝ 20 մեռած հերերոների գանգերը փոխադրեց Նամիբիա: Այդ գանգերն ընդհանուր հաշվով՝ մոտ 3000 գանգերի շարքում ժամանակին տարվել էին Գերմանիա և չէին հանձնվել հողին: 2014 թ. հերերոների՝ Ֆրայբուրգի համալսարանում պահվող ևս 14 գանգեր փոխադրվեցին Նամիբիայի Հանրապետություն:

2015 թ. հուլիսին հերերոների մի խումբ ղեկավարներ մեկնեցին Բեռլին՝ Գերմանիայի նախագահին գերմանացի հեղինակավոր քաղաքական գործիչների կողմից համաստորագրված մի ուղերձ ներկայացնելու համար, որը կրում էր՝ «Ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի» անվանումը: Թեև նախագահն անձամբ չընդունեց պատվիրակությանը, սակայն ուղերձը հանձնվեց նրա աշխատակազմի մի պաշտոնյայի: Ուղերձում կոչ էր արվում Գերմանիայի նախագահին, Բունդեսթագին և կառավարությանը ճանաչել հերերոների և նամաների ցեղասպանությունը, ցեղասպանության զոհերից պաշտոնապես ներողություն խնդրել, հոգ տանել Նամիբիայից և այլ նախկին գաղութներից Գերմանիա փոխադրված՝ բոլոր մարդկանց ոսկորները նույնականացնելու և վերադարձնելու համար, պատրաստակամություն հայտնել անվերապահ և բաց երկխոսություն վարելու ցեղասպանության զոհերի ժառանգների և Նամիբիայի կառավարության հետ՝ հաշտության միջոցառումների վերաբերյալ: Վերոնշյալ պահանջները, ըստ ուղերձի, պետք է կատարվեին մինչև 2015 թ. հոկտեմբերի 2-ը՝ այն

օրը, երբ կբոլորեր Տրոթայի հայտնի հրովարտակի 111-ամյակը {(197)}:

Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամմերտը 2015 թ. հուլիսի 9-ին մամուլում հրապարակած մի հոդվածում գաղութում կատարված հանցագործություններն անվանեց ցեղասպանություն: Ըստ նրա՝ ով խոսում է 1915 թ. Օսմանյան պետությունում հայերի ցեղասպանության մասին, նա պարտավոր է այդպես անվանել նաև նախկին գերմանական գաղութում՝ Հարավ-արևմտյան Աֆրիկայում գերմանական զորակազմի կողմից տեղական բնակչության դեմ կատարված հանցագործությունները {(86)}:

Այդ համեմատությունը երկու ցեղասպանությունների անհամատեղելի ծավալները զուգադրելու դեպքում կարող է առաջին հայացքից վիճահարույց թվալ: Եթե, սակայն, նկատի առնվի, որ բնաջնջվել է հերերո ժողովրդի շուրջ երեք քառորդը, ապա համեմատությունը տեղին է դառնում:

2015 թ. հոկտեմբերի սկզբին Նամիբիա կատարած իր այցելության ժամանակ Լամմերտը վերահաստատեց այդ դիրքորոշումը, սակայն նաև հասկացրեց, որ դա գերմանական կառավարության անունից կատարված պաշտոնական հայտարարություն չէ: Նույն ամսին Գերմանիայի արտգործնախարարությունը մի պաշտոնական փաստաթղթով հերերոների և նամաների կոտորածները բնորոշեց որպես ցեղասպանություն {(193)}:

2015 թ. վերջին Գերմանիայի կողմից Ռուպրեխտ Պոլենցը և Նամիբիայի կողմից Զեդեկիա Նկավիրուեն լիազորվեցին զբաղվելու խնդրո առարկա պատմական իրողությունների քննությամբ: Մինչև 2016 թ. վերջը պետք է նաև հաշտության համատեղ հայտարություն մշակվեր և երկու երկրների պառլամենտների կողմից հաստատվեր:2016 թ. հուլիսի սկզբին Պոլենցին հանձնվեց Նամիբիայի կառավարության դիրքորոշումը ներկայացնող փաստաթուղթը: Միաժամանակ Պոլենցը Նամիբիայի նախագահին հանձնեց Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկի մի գրություն, որի

հիման վրա Նամիբիայում Գերմանիայի դեսպանը հայտարարեց, որ ֆինանսական ուղիղ փոխհատուցումը բացառվում է, բայց և Գերմանիան ցանկանում է զարգացման ծրագրերի շրջանակում օգնություն ցուցաբերել Նամիբիայի էթնիկ խմբերին:

2016 թ. հուլիսին գերմանական կառավարությունը մի պաշտոնական փաստաթղթով հերերոների և նամաների կոտորածը ճանաչեց որպես ցեղասպանություն՝ հավելելով, սակայն, որ ՄԱԿ-ի՝ Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիան հետադարձ կիրառում չունի, և որ կառավարությունն այն կարծիքին է, որ «ցեղասպանություն» եզրույթի պատմաքաղաքական կիրառումից իրավական հետևանքներ չեն ածանցվում {(228)}:

Դա չբավարարեց հերերոներին ու նամաներին, որոնք Գերմանիայից փոխհատուցում, նաև Գերմանիայի կառավարության հետ ուղիղ կերպով բանակցություններ վարելու հնարավորություն էին պահանջում: 2016 թ. նոյեմբերին հերերոների և նամաների ներկայացուցիչները հանդիպեցին Պոլենցի և դեսպանի հետ՝ առաջադրելով այդ պահանջները: Մերժում ստանալուց հետո հերերոների և նամաների ներկայացուցիչները 2017 թ. հունվարին Նյու Յորքում կոլեկտիվ հայց ներկայացրին Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեմ՝ պահանջելով փոխհատուցում, ինչպես նաև Գերմանիայի կառավարության հետ բանակցություններում ներգրավվելու հնարավորություն: 2019 թ. մարտին հայցը մերժվեց: Թեև մերժումը մի քանի օր անց բողոքարկվեց, սակայն դա ևս արդյունք չտվեց, իսկ 2021 թ. հունիսին ԱՄՆ-ի Գերագույն դատարանը հրաժարվեց լսումներ անցկացնել Գերմանիայի դեմ դատական գործի հնարավոր բացման վերաբերյալ:

Մի շարք նոր երկխոսություններից հետո Գերմանիայի և Նամիբիայի միջև 2021 թ. մայիսի վերջին ստորագրվեց մի համաձայնագիր (այն չի հրապարակվել), ըստ որի՝ Գերմանիայի նախագահ Ֆրանկ Վալտեր-Շթայնմայերը Նամիբիայի ազգային ժողովի առջև պետք է ներողություն խնդրեր, իսկ հատուցումը տեղի էր

ունենալու հերերոների և նամաների պատմական բնակավայրերում սոցիալական ծրագրերի իրականացման միջոցով: Դա հաստատեց նաև Գերմանիայի արտգործնախարար Հայկո Մաասը 2021 թ. մայիսի 28-ին՝ նշելով, որ «որպես զոհերին պատճառված անսահման տառապանքի ճանաչման ժեստ»՝ Նամիբիային և զոհերի հետնորդներին 30 տարի ժամկետով կտրամադրվի վերակառուցման և զարգացման աջակցություն 1,1 միլիարդ գումարի չափով {(222)}:

Ըստ այդ համաձայնության՝ գումարը ծառայելու է ոչ միայն գյուղական ենթակառուցվածքների ու գյուղատնտեսության զարգացմանը, այլև հերերոների ու նամաների բնակավայրերում մասնագիտական ուսուցման խթանմանը: Չնայած հատուցման ուղղությամբ կատարված այդ նշանակալից առաջընթացին՝ համաձայնագիրը հերերո և նամա խմբերի շրջանում խստորեն քննադատվեց: Զոհերի ներկայացուցիչները 2022 թ. հունվարին կրկին դիմեցին Գերմանիայի կառավարությանը՝ պահանջելով վերսկսել երկխոսությունը՝ դրան մասնակից դարձնելով զոհերի խմբերի անդամների: 2023 թ. հունվարին հերերոների և նամաների ներկայացուցիչները Վինձուկի գերագույն դատարանում հայց ներկայացրեցին Նամիբիայի կառավարության դեմ՝ պահանջելով Գերմանիայի և Նամիբիայի կողմից ստորագրված համաձայնագիրը ճանաչվի հակասահմանադրական:

Նրանց հետևողական պայքարը թերևս շարունակում է արդյունավորվել: 2024 թ. նոյեմբերին Գերմանիայի հետ բանակցող Նամիբիայի պաշտոնական պատվիրակության ղեկավար Չ. Էյսեբը հայտարարեց, որ երկու կողմերի միջև բոլոր հարցերի շուրջ արդեն ի հայտ է եկել փոխհամաձայնություն, և այդ մասին համատեղ հայտարարությունն ու համապատասխան համաձայնագիրը շուտով կստորագրվեն {(224)}: Չնայած այդ հայտարարությունը նույնպես թերահավատորեն ընդունվեց և իսկույնևեթ մերժվեց ցեղասպանված խմբերի որոշ ներկայացուցիչների կողմից,

որոնք պահանջում են իրենց ևս պատշաճ կերպով ներգրավել պաշտոնական բանակցություններում, այնուհանդերձ այն հուշում է, որ բանակցություններում նշանակալից առաջընթաց է արձանագրվել:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Գերմանիայի կողմից ցեղասպանության ճանաչման և հատուցման համար ցեղասպանված հերերոների և նամաների հետնորդների գործադրած ջանքերը որոշակիորեն արդյունավորվել են: Ցեղասպանության ճանաչումն արդեն կատարված իրողություն է: Հատուցման համար նրանց մղած պայքարը, որը դեռ ավարտված չէ, նույնպես զգալի արդյունք է տվել:

2024 թվականի մայիսի 28-ին Նամիբիայում այդ օրը պաշտոնապես ճանաչվեց որպես ցեղասպանության հիշատակի օր, որն իբրև այդպիսին ուժի մեջ մտավ 2025 թ. մայիսի 28-ից: Մայիսի 28-ը խորհրդանշում է 1908 թ. այդ օրը Հարավ-արևմտյան Աֆրիկայում գերմանական բոլոր համակենտրոնացման ճամբարների փակումը:

Մայիսի 28-ի հռչակումը որպես հիշատակի օր դժգոհություն է հարուցել հերերոների և նամաների որոշ շրջաններում, որոնք պահանջում են ցեղասպանության հիշատակի օր հռչակել հոկտեմբերի 2-ը՝ գեներալ Տրոթայի՝ բնաջնջման հրովարտակի հրապարակման օրը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՈԼՈՔՈՍՏԸ

Վայմարյան Հանրապետության հիմնադրումը

Գերմանական կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունը 1918 թ. գարնանը դեռևս հույս ուներ հաղթել պատերազմում: Այդ հույսը ներշնչում էր մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Գերմանիան Խորհրդային Ռուսաստանին հարկադրեց ոչ միայն Օսմանյան պետությանը զիջել ռուսական բանակի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը, Կարսի մարզը, Արդահանն ու Բաթումը (վերջին երեքը 1878 թ.-ից Ռուսաստանի կազմում էին), այլև հրաժարվել բալթյան երկրներից, Լեհաստանից, Ֆինլանդիայից և Ուկրաինայից: Այդպիսով Գերմանիայի համար Արևելքում առաջանում էր հսկայական գրավյալ տարածք՝ իր անսպառ ռեսուրսներով հանդերձ: Գերմանիան հույս ուներ մասնավորապես Ուկրաինայի հացահատիկի միջոցով ապահովել իր բնակչության պարենավորումը, որը բրիտանական նավատորմի կողմից Հյուսիսային ծովում կազմակերպված բլոկադայի հետևանքով սովահարության էր մատնվել:

Բրեստյան հաջողությունից ոգևորված՝ գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը և գլխավոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆն արևմտյան ռազմաճակատում մարտի 21-ին 70 դիվիզիաներով ձեռնարկեցին մի վերջին վճռական հարձակում, որը պետք է որոշեր պատերազմի ելքը: Սկզբնական որոշ հաջողություններից հետո հարձակումը կասեցվեց: Հուլիսին դաշնակիցներն անցան հակահարձակման, և երբ օգոստոսի 18-ին նրանք ճեղքեցին ճակատը, գերմանական բանակի հրամանատարության համար այլևս պարզ էր, որ պատերազմը տանուլ է տվել:

Այդ իրավիճակում գերմանական բանակի մարտունակությունը երկարաձգելու և այդ կերպ տանելի պայմաններով զինադա-

դար ու խաղաղություն հաստատելու միակ նախադրյալն այն էր, որ բանակն անմիջապես ետ քաշվեր և պաշտպանության համար նպաստավոր վայրերում դիրքեր զբաղեցներ: Հինդենբուրգն ու Լուդենդորֆը, սակայն, դա չարեցին: Գերմանական բանակը, մարտեր մղելով, դանդաղ նահանջում էր, ինչն անխուսափելիորեն պետք է հանգեցներ Գերմանիայի կապիտուլյացիային:

Դա գերմանական ռազմաքաղաքական ղեկավարության համար լիովին պարզ դարձավ սեպտեմբերի վերջին, երբ Ավստրո-Հունգարիայի՝ միակողմանիորեն պատերազմից դուրս գալու, բուլղարական բանակի փլուզման և Օսմանյան պետության ծայրաստիճան թուլության պայմաններում Գերմանիան փաստացիորեն մնացել էր առանց դաշնակիցների:

1918 թ. ամռանը և աշնանը մոտ չորս տարի տևող պատերազմից հոգնած գերմանական ճակատային զորամասերում և թիկունքում արդեն սկսվել էին զանգվածային դասալքումներ և ուղղակի ու անուղղակի ըմբոստության տարատեսակ այլ գործողություններ, որոնք ընդգրկեցին արևմտյան ճակատում տեղակայված չորս միլիոնանոց գերմանական բանակի շուրջ մեկ քառորդին: Արևմտյան ճակատում վերոնշյալ հարձակման ձախողումից հետո (չնայած ռազմական գրաքննության ջանքերին, չհաջողվեց դա գաղտնի պահել) Գերմանիայի հասարակության մեջ ևս սկսվեցին քաոս ու զանգվածային բարոյալքում: Այդ իրադրությունը նպաստավոր էր ձախ և աջ արմատական հոսանքների համար, որոնց անդամների թիվը շեշտակի աճում էր:

Ստեղծված ճգնաժամային իրադրությունը քննարկելու համար Լուդենդորֆի նախաձեռնությամբ սեպտեմբերի 29-ին Շպաում (Բելգիա) գտնվող՝ գերմանական բանակի գլխավոր հրամանատարության շտաբում տեղի ունեցավ ռազմաքաղաքական խորհրդի մի հավաք, որին մասնակցում էին կայսր Վիլհելմ II-ը, Հինդենբուրգը, Լուդենդորֆը, կանցլեր Հերտլինգը և արտգործնախարար ծովակալ Պաուլ ֆոն Հինցեն: Խորհուրդը, հենվե-

լով Լուդենդորֆի և Հինցեի այն պնդման վրա, որ ռազմաճակատը կարող է 24 ժամում փլուզվել, վճռեց «ցեխաջրից չոր դուրս գալու», նաև՝ ձախ արմատականների՝ Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխության օրինակով ներքևից սպառնացող հեղափոխությունը կանխելու համար արագ կերպով իրականացնել «հեղափոխություն» վերևից: Ի՞նչ էր դա նշանակում: Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (այսուհետ նաև՝ ԳՍԴԿ), ձախ լիբերալ՝ Առաջադիմական ժողովրդական կուսակցությունը և կաթոլիկական «Կենտրոն» կուսակցությունը ռայխսթագում կազմում էին ընդդիմադիր մեծամասնություն: Նրանք տարիներ ի վեր պահանջում էին երկիրը ժողովրդավարացնել, մասնավորապես ձևավորել պառլամենտին հաշվետու կառավարություն, իսկ 1917 թ.-ից ջանում էին հասնել արժանապատիվ խաղաղության՝ առանց տարածքային կորուստների և հատուցումների:

Խորհուրդն այժմ որոշեց իշխանությունը հանձնել այդ կուսակցություններին: Այդպիսով նա արտաքուստ ընդառաջում էր այդ կուսակցությունների ներկայացրած վերոնշյալ պահանջներին, բայց դա իրականում արվում էր զինադադարի և հաշտության կնքման անհետաձգելի և ծանր պատասխանատվությունը նրանց փոխանցելու նպատակով: Այդ ետհաշվարկը փաստարկվեց Լուդենդորֆի՝ հոկտեմբերի 1-ին իր շտաբի սպաների առջև ունեցած ելույթում: Նա նրանց հայտնեց Գերմանիայի պարտության մասին՝ միաժամանակ տեղեկացնելով, որ այժմ այն շրջանակներն են գալու իշխանության, որոնց մեղքով է Գերմանիան «այդքան հեռու գնացել»: Ըստ Լուդենդորֆի՝ նրանք պետք է այժմ հաշտություն կնքեն, որն անխուսափելի է, և «ուտեն այն ապուրը, որ իրենք եփել են մեզ համար» {(76) *4*}: Անկասկած ճիշտ կլիներ, եթե Լուդենդորֆն ասեր՝ «պետք է ուտեն այն ապուրը, որ մենք ենք եփել իրենց համար»:Նոր պառլամենտական կառավարության ձևավորման՝ սեպտեմբերի 30-ի կայսերական հրամանը ընդդիմադիր կուսակցությունների կողմից ողջունվեց, առավել ևս,

որ նրանք երկու օր առաջ դարձյալ պահանջել էին «պառլամենտի վստահությունը վայելող» կառավարություն ստեղծել: Այժմ իրականանում էր նրանց ցանկությունը: Այն, որ պետությունը կանգնած էր տոտալ պարտության առաջ, այդ ժամանակ հայտնի էր միայն հիշատակված խորհրդի անդամներին: Նոր կանցլեր պետք է դառնար Մաքս ֆոն Բադենը, որը կայսեր զարմիկն էր, սակայն իր լիբերալ հայացքներով ընդդիմադիրների շրջանում զգալի հեղինակություն ուներ:

Մաքսը հոկտեմբերի 1-ին ցնցված էր, երբ տեղեկացավ, որ ինքը ոչ միայն նոր կառավարություն պետք է կազմեր, այլև անմիջապես զինադադար հաստատեր: Հաջորդ օրը, երբ սարսափով այդ մասին տեղեկացան նաև ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդները, կառավարության ձևավորման շուրջ քննարկումները սկզբում փակուղի մտան: Ռայխսթագում ԳՍԴԿ-ի խմբակցության ղեկավար Ֆիլիպ Շայդեմանը, արտահայտելով շատերի կարծիքը, նոր կառավարություն կազմելուց հրաժարվելու ցանկություն արտահայտեց՝ դա անվանելով «բանկրոտային» նախաձեռնություն: Կուսակցության ղեկավար Ֆրիդրիխ Էբերտը, սակայն, կոչ անելով գիտակցել ազգի հանդեպ պատասխանատվությունը, կարողացավ տարաձայնություններին վերջ տալ:

Հոկտեմբերի 3-ին Մաքսը դիմեց ԱՄՆ նախագահ Վիլսոնին՝ խնդրելով նրան միջնորդել պատերազմող պետություններին զինադադարի և հաշտության բանակցությունների հրավիրելու համար: Վիլսոնը ներկայացրեց մի շարք ծանր նախապայմաններ, որոնց կատարումը պարտադիր էր: Հոկտեմբերի 23-ի նոտայում ԱՄՆ նախագահը նաև անուղղակի հասկացնում էր, որ կայսրը պետք է հրաժարական տար:

Վիլսոնին ուղարկված դիմումը շոկի ազդեցություն գործեց Գերմանիայի հասարակական շրջաններում, որոնք նոր էին տեղեկանում փաստացի պարտության մասին: Մոտ չորս տարի շարունակ թափված արյունը, ժողովրդի զոհաբերություններն ու

զրկանքներն այդպիսով լիովին իմաստազրկվում էին: Պատերազմից հոգնած և հուսախաբված զանգվածներին այժմ համակում էր անհապաղ խաղաղություն հաստատելու ցանկությունը:

Հոկտեմբերի վերջին պառլամենտական կուսակցություններից ոչ մեկը դեռևս չէր հարում միապետությունը վերացնելու գաղափարին: Բացառություն էր կազմում միայն ԳՍԴԿ-ից անջատված, նախկինում նրա ձախ թևը ներկայացնող Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳԱՍԴԿ), որը կամենում էր Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխության օրինակով երկրում սոցիալիստական կարգեր հաստատել: Հոկտեմբերի 28-ին ռայխսթագի ընդունած սահմանադրական բարեփոխումներով կայսրությունը վերածվեց պառլամենտական-դեմոկրատական միապետության: Այդ փոփոխությունը, սակայն, բավական չէր ամենուր ծավալվող հասարակական դժգոհությունը հանդարտեցնելու համար:

Շուտով տեղի ունեցավ ևս մի իրադարձություն, որը երկիրը մտցրեց իսկական հեղափոխական քաոսի մեջ: Գերմանիայի ռազմածովային հրամանատարությունը հոկտեմբերի երկրորդ կեսին, առանց կառավարության իմացության, ծրագրեց հոկտեմբերի 29-ին մի հարձակում իրականացնել Սուեզի ջրանցքում գտնվող բրիտանական նավատորմի վրա: Այդ նախաձեռնությունը, ռազմական տեսանկյունից լիովին անհույս լինելով, ռազմածովային ղեկավարության կողմից հիմնավորվում էր բարոյական տեսանկյունից՝ որպես կենաց ու մահու վերջին կռիվը տալու պատվո խնդիր: Նավաստիներն իսկույն հասկացան, որ իրենց պատերազմի ավարտի նախօրեին մահվան են տանում: Նրանք Վիլհելմսհավենում կայանած ռազմանավերից շատերի հնոցների կրակը հանգցրին և ջարդեցին խարիսխների լուսարձակները, որպեսզի նավերը չկարողանան տեղաշարժվել:

Հարձակման ծրագիրը ձախողվեց: Ձերբակալվեցին և բանտարկվեցին ավելի քան 1000 նավաստիներ, որոնց մահապատիժ

էր սպառնում: Նրանց ազատելու համար նավատորմի բազմահազար այլ ծառայողներ զանգվածային ցույցեր ու հանրավաքներ սկսեցին, և հեղափոխական ալիքը տարածվեց բազմաթիվ քաղաքներում՝ սպառնալով նաև Բեռլինին: Կազմվեցին զինվորական և բանվորական խորհուրդներ, որոնք տեղերում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: ԳՍԴԿ-ն և ԳԱՍԴԿ-ն շարժումը վերահսկելի դարձնելու համար ստանձնեցին դրա առաջնորդությունը՝ մասնակցելով խորհուրդների կազմավորմանը {(76) *4-6*}:

Վիլսոնի՝ հոկտեմբերի 23-ի նոտայից հետո Գերմանիայի քաղաքական շրջաններում այն համոզումն էր տիրում, որ միայն կայսեր և թագաժառանգի հրաժարականից հետո կարող էր հնարավոր լինել դաշնակիցների հետ տանելի խաղաղություն կնքել և փրկել միապետությունը: Հեղափոխական ամբոխներին ևս այն մտայնությունն էր համակել, որ Վիլհելմ II-ի՝ գահին մնալը խանգարում է տանելի խաղաղության հաստատմանը: Վերջինս, սակայն, մտադիր չէր հրաժարվել գահից:

ԳՍԴԿ-ն նոյեմբերի 7-ին, երբ հեղափոխական շարժումը բուռն ծավալման ընթացքում էր, հանդես եկավ կայսեր և թագաժառանգի անհապաղ հրաժարականի պահանջով: Այդ օրերին ԳԱՍԴԿ-ն և մասնավորապես նրա ձախ թևը ներկայացնող Սպարտակյան միությունը, որը ղեկավարում էին Ռոզա Լուքսեմբուրգը և Կարլ Լիբկնեխտը, փորձում էին երկրում նաև սոցիալիստական հեղափոխություն իրականացնել: Նոյեմբերի 7-ին հեղափոխական ուժերը ԳԱՍԴԿ-ի ներկայացուցիչ Կուրտ Այսների գլխավորությամբ Բավարիայում տապալեցին գործող միապետական վարչակարգը և երկրամասը հռչակեցին Բավարիայի ազատ պետություն {(223)}: Նոյեմբերի 9-ին հեղափոխական ալիքը ներխուժեց նաև Բեռլին, որտեղ խոշոր արտադրական ձեռնարկությունների համընդհանուր գործադուլ սկսվեց: ԳՍԴԿ-ն, երկյուղելով, որ կարող է կորցնել իր ազդեցությունը հեղափոխական շարժման վրա, հայտարարեց կառավարությունից դուրս գալու մասին:

Այդ ընթացքում Մաքսը ջանում էր փրկել միապետությունը և հեռախոսով ու հեռագրերով զուր կերպով հորդորում էր Շպաում գտնվող կայսրին գահը հանձնել մի ռեգենտի (պետության ժամանակավոր խնամակալ), որը Ֆ. Էբերտին կնշանակեր կանցլեր և սահմանադիր Ազգային ժողով կհրավիրեր: Նոյեմբերի 9-ի ժամը մոտ 11-ին Մաքսը, այլ ելք չտեսնելով, սեփական նախաձեռնությամբ հայտարարեց կայսրի և թագաժառագի՝ գահից հրաժարվելու մասին: Մոտ մեկ ժամ անց, երբ հեղափոխական ալիքը Բեռլինում իր բարձրակետին էր հասել, Մաքսի մոտ եկավ Էբերտը մի քանի կուսակցական ընկերների հետ և նրանից պահանջեց իրեն հանձնել կառավարումը՝ տեղեկացնելով, որ ինքը հետևելու է սահմանադրությանը, բայց չի կարող երաշխավորել միապետության պահպանումը: Կանցլերն իր պաշտոնը փոխանցեց Էբերտին:

Էբերտն անմիջապես հանդես եկավ ժողովրդին ուղղված կոչերով՝ խոստանալով կազմել «ժողովրդական կառավարություն» և լուծել մարդկանց պարենավորման ու այլ սոցիալական խնդիրները: Միաժամանակ նա խոստացավ հրավիրել սահմանադիր ազգային ժողով, որի ընտրություններին (առաջին անգամ) պետք է նաև կանայք մասնակցեին, կոչ արեց փողոց դուրս եկած զանգվածներին հեռանալ իրենց տները, պահպանել կարգ ու կանոն և զերծ մնալ կամայականություններից: Էբերտը միաժամանակ հավաստիացնում էր, որ ընտրվելու է Սահմանադիր ազգային ժողով կանանց մասնակցությամբ:

Հեղափոխականորեն տրամադրված զանգվածներին, սակայն, դա չէր բավարարում: Նրանք ուզում էին լսել հստակ ձևակերպված նոր քաղաքական կուրսի մասին: Նոյեմբերի 9-ի մոտավորապես ժամը 14:00-ին ռայխսթագում ԳՍԴԿ-ի խմբակցության ղեկավար Ֆ. Շայդեմանը, ռայխսթագի մոտ հավաքված բազմահազար ամբոխին զսպելու այլ միջոց չտեսնելով, մոտեցավ պատուհանին, ինքնագլուխ կերպով ազդարարեց կայսրության վերջը և հռչակեց Գերմանիայի Հանրապետության ստեղծումը: Նա ամբոխին հավաստիացրեց, որ կանցլեր Էբերտը նոր կառավարու-

թյուն է կազմելու բոլոր սոցիալիստական կուսակցություններից: Այժմ տիրելու էին հանգստություն, անվտանգություն և կարգ ու կանոն:

Ամբոխը դրանից ոգևորված էր և ցրվեց, իսկ Էբերտը սարսափած էր, քանի որ Շայդեմանն իրավունք չուներ հանրապետություն հռչակելու, այլ դա կարող էր անել միայն սահմանադիր Ազգային ժողովը:

Երկու ժամ անց՝ ժամը մոտ 16.00-ին, սպարտակյանների առաջնորդ Լիբկնեխտը Բեռլինի քաղաքային պալատի պատուհանից ազդարարեց Գերմանիայի Ազատ Սոցիալիստական Հանրապետության հռչակումը: Ըստ նրա՝ կապիտալիզմի տիրապետությունն ավարտված էր, և դրան հաջորդելու էր պրոլետարիատի իշխանությունը՝ որպես վերջնանպատակ ունենալով համաշխարհային հեղափոխությունը {(76) *7-8*}:

Շայդեմանի և Լիբկնեխտի՝ միմյանց հակասող հայտարարությունները կարող էին հասարակական նոր բախումների պատճառ դառնալ, ուստի անհրաժեշտ էր շտապել: Էբերտը կարողացավ, ԳԱՍԴԿ-ին մի շարք զիջումներ կատարելով, ապահովել նրա հետ համագործակցությունը: Վճռվեց, որ հիմնարար որոշումների կայացումը կվերապահվի բանվորական և զինվորական խորհուրդների լիագումար ժողովին, իսկ սահմանադիր Ազգային ժողովի հրավիրումը ժամանակավորապես հետաձգվեց: Հաջորդ առավոտյան երկու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հավասարազոր մասնակցությամբ կազմվեց մի նոր կառավարություն, որին նախկին նախարարները ենթարկվեցին «օգնականի» կարգավիճակով: Նոր կառավարությունը ստացավ «Ժողովրդական լիազորների խորհուրդ» անվանումը և բանվորական ու զինվորական խորհուրդների կողմից ընդունվեց որպես օրինական կառավարություն: Չնայած հավասարազորության սկզբունքին՝ ԳՍԴԿ-ն կարողացավ կառավարությունում կարևորագույն վարչական կառույցները, մասնավորապես ներքին գործերի և ռազմական գործերի պորտֆելները պահել իր վերահսկողության ներքո:

Նոյեմբերի 10-ի առավոտյան Վիլհելմ II-ը Շպաում ռազմական գերագույն հրամանատարությունը փոխանցեց Հինդենբուրգին և մեկնեց Հոլանդիա: Լուդենդորֆը, կեղծ փաստաթղթերով և ծպտված, փախավ Շվեդիա: Իսկ Մաքսի կողմից զինադադար կնքելու համար Ֆրանսիա ուղարկված գերմանական պատվիրակությունը, որ գլխավորում էր պետքարտուղար Մատթիաս Էրցբերգերը, ստիպված եղավ ընդունել դաշնակիցների առաջադրած ծանր պայմանները, և նոյեմբերի 11-ին ստորագրվեց զինադադարը:

Դեկտեմբերի 16-21-ը Բեռլինում գումարվեց «Գերմանիայի բանվորական և զինվորական խորհուրդների առաջին ընդհանուր կոնգրեսը», որը մերժեց ԳԱՍԴԿ-ի առաջարկը «խորհուրդների համակարգը՝ որպես սոցիալիստական հանրապետության սահմանադրության հիմք» պահպանելու վերաբերյալ և ընդունեց ԳՍԴԿ-ի առաջարկը՝ մինչև սահմանադիր Ազգային ժողովի ընտրությունները օրենսդիր և գործադիր իշխանությունը Ժողովրդական լիազորների խորհրդին փոխանցելու վերաբերյալ: Կոնգրեսը որոշեց, որ սահմանադիր Ազգային ժողովի ընտրությունների ամենավաղ ժամկետը լինելու էր 1919 թ. հունվարի 19-ը:

Այդ կոնգրեսից հետո դարձյալ սրվեցին ինչպես ԳՍԴԿ-ի և ԳԱՍԴԿ-ի, այնպես էլ վերջինիս տարբեր թևերի միջև առկա հակասությունները: Սպարտակյան միությունը 1919 թ. հունվարի 1-ին հիմնադրեց Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը (ԳԿԿ), որի ղեկավարներն էին Ռոզա Լուքսեմբուրգը և Կարլ Լիբկնեխտը: ԳԿԿ-ն իր հիմնադիր նիստում վճռեց բոյկոտել Ազգային ժողովի ընտրությունները, որը նրա կարծիքով բուրժուազիայի օրգան էր լինելու, և այդ որոշումով իրեն փաստորեն դուրս դրեց քաղաքական գործընթացներից:

Մի կողմից ԳՍԴԿ-ի, մյուս կողմից ԳԱՍԴԿ-ի և նրա թևերի միջև շարունակ սրվող հակամարտության պայմաններում ԳԱՍԴԿ-ն և ԳԿԿ-ն 1919 թ. հունվարի սկզբին սկսեցին զինված

ապստամբություն՝ գործող կառավարությունը տապալելու և իշխանությունը գրավելու նպատակով: Ապստամբները հույս ունեին նաև խոչընդոտել Ազգային ժողովի ընտրությունները և իրենց «հեղափոխությունը» տարածել ողջ երկրում: Հունվարի 11-12-ին, երբ ապստամբների հետ բանակցությունները ձախողվել էին, ապստամբությունը ճնշվեց զենքի ուժով: Շատերի հետ միասին զոհվեցին նաև Ռ. Լուքսեմբուրգն ու Կարլ Լիբկնեխտը {(76) *13-14*}:

1919 թ. հունվարի 19-ին տեղի ունեցան սահմանադիր Ազգային ժողովի ընտրությունները, որը փետրվարի 6-ից իր լիագումար նիստերն անցկացրեց ոչ թե ռայխսթագում, այլ Վայմարի ազգային թատրոնի շենքում՝ մի կողմից հունվարյան ապստամբությունից դեռ չխաղաղված Բեռլինից հեռու անարգել աշխատելու, մյուս կողմից հանրապետական Գերմանիան խորհրդանշաբար գերմանական մշակույթի հումանիստական, լուսավորական և դասական ավանդույթներին կապելու նպատակով: Հունվարի 11-ին պատգամավորներն Էբերտին ընտրեցին հանրապետության նախագահ, որն էլ Շայդեմանին հանձնարարեց կազմել կառավարություն: Նորընտիր կառավարության նախարարները ներկայացնում էին Ազգային ժողովի ընտրություններում առավելագույն քվեներ ստացած ԳՍԴԿ-ն, Գերմանիայի դեմոկրատական կուսակցությունը (ԳԴԿ) և կաթոլիկական «Կենտրոն» կուսակցությունը, որոնք հանդես էին գալիս որպես վայմարյան կոալիցիա (1920-ական թթ. վերջից այդ կոալիցիայի մաս կազմեցին նաև Բավարիայի ժողովրդական կուսակցությունը և Գերմանիայի ժողովրդական կուսակցությունը):

1919 թ. հուլիսի 31-ին Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ ընդունեց Վայմարյան սահմանադրությունը, որը, նախագահի կողմից վավերացվելով, օգոստոսի 14-ին ուժի մեջ մտավ: Սահմանադրությունը, ապահովելով ժողովրդավարությունը, ուներ նաև երկու հիմնական թերություններ, որոնք հետագայում ճակատագրական նշանակություն ունեցան հանրապետու-

թյան համար: Նախ՝ երկրի նախագահին խիստ մեծ լիազորություններ էին տրվում: Նա կարող էր արտակարգ իրավիճակների կարգավորման հիմքով կառավարել նաև միայնակ, առանց պառլամենտի: Բացի այդ՝ համամասնական ընտրական իրավունքով ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրելու հնարավորություն էր տրվում բոլոր, այդ թվում՝ նույնիսկ ամենափոքրիկ կուսակցություններին՝ առանց որևէ սահմանափակման {(65) *20*}:

Հանրապետության առաջին տարիների ծանր դրությունը

Իր գոյության առաջին տարիներին Վայմարյան Հանրապետությունը պետք է ծանր փորձություններ հաղթահարեր: Կառավարությունից մեծ ջանքեր պահանջվեցին աջ և ձախ արմատականների միջև բախումները դադարեցնելու և երկրում տիրող անարխիան վերացնելու համար: Այսպես կոչված՝ Բավարիայի ազատ պետությունը, որը 1919 թ. ապրիլի 7-ին վերակազմվել էր Բավարիայի Խորհրդային Հանրապետության, նույն տարվա մայիսի սկզբին լուծարվեց թեժ մարտերից հետո:

Չափազանց ծանր էր նաև Վայմարյան Հանրապետության արտաքին դրությունը: Վերսալյան պայմանագրով Գերմանիայից խլվեցին ոչ միայն գաղութները, այլև նրա տարածքի 13 %-ը և բնակչության 10 %-ը: Այդպիսով Գերմանիան զրկվեց նաև երկաթի հանքաքարերի 50 %-ից, քարածխի պաշարների 25, կարտոֆիլի ցանքատարածությունների 17 և հացահատիկի ցանքատարածությունների 13 %-ից:

Կորսված տարածքներից, որոնց գերակշիռ մասը բաժին ընկավ Լեհաստանին, մեծ քանակությամբ փախստական գերմանացիներ փոխադրվում էին Գերմանիա, ինչն ավելի էր խորացնում պարենի անբավարարությունը, հիվանդությունների տարածումը և համատարած գործազրկությունը: Դրությունն ավելի ծանրացավ, երբ սկսվեց հատուցումների վճարումը: Դաշնակիցները 1921 թ. հունվարի 21-ին Փարիզում, առանց Գերմանիայի մաս-

նակցության, վճռեցին դրանց ծավալը, տևողությունը և վճարման կարգը: Ըստ այդմ՝ Վայմարյան Հանրապետությունը պետք է 1921 թ. մայիսի 1-ից 226 միլիարդ ոսկե մարկ վճարեր 42 տարվա ընթացքում՝ տարեկան գործակցով սկզբում երկու, իսկ հետագայում՝ 6 միլիարդ մարկ: Բացի այդ՝ հանրապետությունը նույն ժամանակահատվածում ամեն տարի իր արտահանումներից ստացված եկամտի 12 %-ը (մեկից երկու միլիարդ ոսկե մարկ) պետք է հանձներ դաշնակիցներին {(76) *19, 25-26*} Ստեղծված ճգնաժամային դրությունը նպաստում էր հասարակական շրջաններում արմատական տրամադրությունների խորացմանը: Թե՛ աջ և թե՛ ձախ արմատական կազմակերպություններն ու նրանց համակիրները չէին ընդունում վայմարյան ժողովրդավար հանրապետությունը՝ նրա ղեկավարներին մեղադրելով ստեղծված իրադրության համար: Ձախերի կողմից երկրում իշխանությանը տիրանալու մի շարք փորձեր ճնշվեցին զենքի ուժով: Քաղաքական սպանությունները, աջերի և ձախերի միջև արյունահեղ բախումները դարձել էին առօրեական:

Աջ արմատական ագիտացիայի կողմից հանրապետությունը վարկաբեկելու համար լայնորեն օգտագործվում էր հատկապես «դաշունահարված թիկունքից» լեգենդը: Այն ստեղծել էին պատերազմում Գերմանիայի պարտության պատասխանատուները՝ պարտության մեղքը հանիրավի հանրապետության ղեկավարների վրա բարդելու համար: Ըստ այդ լեգենդի՝ «նոյեմբերյան հանցագործները», կնքելով նվաստացուցիչ զինադադարը, դաշույնի հարված են հասցրել գերմանական բանակի թիկունքին, որը կարող էր հաղթականորեն շարունակել պատերազմը: Նույն կերպ հանրապետության առաջնորդները մեղադրվում էին Վերսալում հաշտության՝ դաշնակիցների առաջադրած ծանր պայմաններն ընդունելու համար {(65) *21*}:

Այն հանգամանքը, որ վերջիններս դաշնակիցների հետ բանակցություններում իրենց դիրքերն առավել չխարխլելու համար

ոչ միայն չէին բարձրաձայնում բանակի անմխիթար դրության մասին, այլև ջանում էին դաշնակիցների մոտ այն պատկերացումը ստեղծել, թե բանակը շարունակում էր մնալ մարտունակ և կռվի պատրաստ, նույնպես նպաստում էր այդ առասպելի տարածմանը: Աջերի կողմից որպես «անկարող», իսկ ձախերի կողմից «հեղափոխության դավաճան» հորջորջվող Վայմարյան Հանրապետությունն առաջին տարիներին մեծ դժվարությամբ էր կարողանում ինքնահաստատվել:

Ադոլֆ Հիտլերը և Գերմանական բանվորական կուսակցությունը: Հիտլերյան հեղաշրջման փորձը 1923 թ. նոյեմբերին

Ադոլֆ Հիտլերը ծնվել է 1889 թ. ապրիլի 20-ին Ավստրիայի Բրաունա ավանում՝ մաքսատան ծառայող Ալոիզ Հիտլերի և Կլարայի ընտանիքում: Նա հաճախում է Շտեյրի ռեալական դպրոցը: 1903 թ. մահանում է նրա հայրը, իսկ 1905 թ. նա թողնում է դպրոցը՝ առանց ավարտական քննությունը հանձնելու: Այնուհետև Հիտլերը նվիրվում է ազգայնական գաղափարներ քարոզող գրականության ընթերցմանը: Այդ շրջանում նրա վրա առանձնապես մեծ տպավորություն է գործում Գեորգ ֆոն Շյոներերի պանգերմանիզմը:

1907 թ., երբ մայրը մահանում է, Հիտլերը տեղափոխվում է Վիեննա, որտեղ երկու անգամ զուր կերպով փորձում է ընդունվել Արվեստի ակադեմիա: Որոշ ժամանակ ծնողների թողած ժառանգությամբ ապրելուց հետո նա սկսում է թափառական կյանք վարել՝ դառնալով անօթևան և գոյատևելով պատահական աշխատանքներով: Հակասեմիտական թերթերի և գրքերի ընթերցումը ձևավորում է Հիտլերի աշխարհայացքը, որը բնութագրվում էր հրեաների հանդեպ ռասիստական հիմք ունեցող ատելությամբ և մարքսիզմի ու լիբերալիզմի հանդեպ խոր թշնամանքով:

1913 թ. մայիսին նա ավստրո-հունգարական բանակում ծառայելուց խուսափելու համար տեղափոխվում է Մյունխեն, իսկ

1914 թ. օգոստոսին որպես կամավոր անդամագրվում է բավարարական մի հետևակային գնդի: Նույն տարվա դեկտեմբերին նա պարգևատրվում է II աստիճանի մարտական խաչով: 1916 թ. հոկտեմբերին Հիտլերն արևմտյան ռազմաճակատում ոտքի ծանր վիրավորում է ստանում: Ապաքինվելով՝ նա 1917 թ. մարտին վերադառնում է իր զորամասը: 1918 թ. օգոստոսին նա պարգևատրվում է I աստիճանի մարտական խաչով: Հոկտեմբերին հակառակորդի մի գազային հարձակման ժամանակ ծանր թունավորվելով՝ նա ժամանակավորապես կուրանում է: Այդ դեպքը նրա մեջ հասունացնում է քաղաքական գործիչ դառնալու որոշումը:

Հիտլերը դեռ հիվանդանոցում էր գտնվում, երբ պատերազմն ավարտվում է: Ապաքինվելով՝ նա վերադառնում է Մյունխենի 2-րդ հետևակային գունդը, որտեղ ծառայում է որպես կապավոր և հետախուզության պրոպագանդիստ: 1919 թ. հունիսին զորամասի հրամանատարությունը նրան ուղարկում է Մյունխենի համալսարան՝ պրոպագանդիստների հռետորական որակավորման մի դասընթացի մասնակցելու համար, և այնտեղ նա աչքի է ընկնում որպես տաղանդավոր հռետոր: Նույն տարվա օգոստոսին իր կատարած առաջին քաղաքական գրառումներում նա «հրեաների հեռացումը» համարում է առաջնահերթ խնդիր:

1919 թ. սեպտեմբերի 12-ին Հիտլերն առաջին անգամ այցելեց Գերմանական բանվորական կուսակցության մի ժողովի և մի քանի օր անց անդամակցեց այդ կուսակցությանը որպես նրա 555-րդ անդամը: Իրականում, սակայն, կուսակցությունն իր անդամների գրանցումը սկսել էր 501-րդ համարով, որպեսզի մեծ կուսակցության տպավորություն ստեղծի, և Հիտլերը 55-րդն էր:

Այդ կուսակցությունը՝ հիմնադրված Անտոն Դրեքսլերի կողմից 1919 թ. հունվարի 5-ին, զինադադարից հետո Գերմանիայում սունկի պես աճած աջ արմատական բազմաթիվ փոքրիկ կազմակերպություններից մեկն էր և սկզբնական շրջանում մյուսներից ոչնչով չէր տարբերվում: 1920 թ. փետրվարի 24-ին կուսակցությու-

նը վերանվանվեց «Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցություն» (ՆՍԳԲԿ): Նույն օրը Հիտլերը հրապարակեց կուսակցության ծրագիրը, որը բաղկացած էր 25 կետից: Ըստ ծրագրի՝ կուսակցության գլխավոր նպատակներն էին մեծ գերմանական կայսրության ստեղծումը, Վերսալյան պայմանագրի որոշումների չեղարկումը, հրեաներին Գերմանիայի քաղաքացիությունից զրկումը և ավտորիտար պետության ստեղծումը, որտեղ մամուլն ու գրականությունը պետք է քաղաքականապես ուղղորդվեին: Հրեաների առնչությամբ ծրագրում մասնավորապես հետևյալն էր արձանագրված. «Պետության քաղաքացի կարող է լինել միայն նա, ով ժողովրդակից է: Ժողովրդակից կարող է լինել միայն նա, ով գերմանական արյուն է կրում՝ անկախ նրանից, թե ինչ դավանանքի է պատկանում: Ոչ մի հրեա չի կարող ժողովրդակից լինել» {(65) *44*}:

Պետք է նկատի առնել, որ «ժողովուրդ» եզրույթը գերմանական նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության մեջ առանձնահատուկ նշանակություն և բովանդակություն ուներ: Այն նշանակում էր ոչ միայն արյան կապի, այլև ընդհանուր ճակատագրի և միասնական «քաղաքական հավատի» վրա հիմնված համայնք, որին խորթ էին դասակարգային և դասային տարբերությունները: Այդ գաղափարը համակրանքով էր ընդունվում Գերմանիայի հասարակական լայն շրջաններում և կարևոր դեր ունեցավ հետագայում՝ ռայխսթագի ընտրություններում հիտլերյան կուսակցության հաջողությունների համար:

1920 թ. դեկտեմբերի 17-ին հիմնադրվեց նաև կուսակցության՝ «Völkischer Beobachter» (Ժողովրդական դիտորդ) պարբերականը:

1921 թ. հուլիսի 29-ին Հիտլերը, որն այդ ընթացքում որպես անփոխարինելի ագիտատոր հայտնի էր դարձել նաև Մյունխենի սահմաններից դուրս, ՆՍԳԲԿ-ի արտահերթ ընդհանուր ժողովում ընտրվեց կուսակցության առաջին նախագահ՝ ստանալով նաև դիկտատորի լիազորություններ: Այդպիսով նա լիովին իր ձեռքը

վերցրեց կուսակցության ղեկավարումը: 1921 թ. օգոստոսին կազմավորվեց կուսակցության սեփական մարտական միավորումը, որը կոչվում էր «Sturmabteilung» (թարգմանաբար՝ գրոհային զորամաս, իսկ հապավված ձևով՝ SA, այսուհետ տեքստում կնշվի որպես ԷսԱ):

1923 թվականին հիտլերյան կուսակցության անդամների թիվն արագորեն աճեց՝ 15 000-ից հասնելով 55 000-ի, և այն դարձավ Բավարիայում ամենաակտիվ աջ արմատական ուժը: Դրան նպաստեցին մի կողմից՝ երկրում տիրող ծանր սոցիալ-տնտեսական դրությունը, մյուս կողմից՝ Մյունխենի այլ աջ ուժերի, նաև աջ արմատական գաղափարներին համակրող՝ Բավարիայի երկրամասի ղեկավարության հետ Հիտլերի ստեղծած սերտ հարաբերությունները:

Երկու այլ աջ արմատական կազմակերպությունների հետ ստեղծելով «Գերմանիայի մարտական միություն» կառույցը, Հիտլերը, որը Բավարիայում արդեն ուներ «գերմանացի Մուսոլինիի» համարում, որոշեց 1923 թ. նոյեմբերի 9-ին Մուսոլինիի օրինակով հեղաշրջում իրականացնել և իր ձեռքը վերցնել իշխանությունը: Նա փորձեց Բավարիայի բարձրագույն գործադիր իշխանությունը ներկայացնող՝ գլխավոր պետական կոմիսար Գուստավ Ռիտտեր ֆոն Կահրին և երկու այլ անձանց պարտադրել՝ աջակցել իր «ազգային հեղափոխությանը»՝ խոստանալով նրանց ընդգրկել նոր կառավարության կազմում: Վերջիններս, անելանելի դրության մեջ հայտնվելով, առերես համաձայնեցին, սակայն հասցրին կենտրոնական կառավարությանը տեղյակ պահել այդ մասին:

«Բեռլինի վրա մարշը» սկսվեց լուսաբացին Մյունխենում, սակայն խռովարարները շրջապատվեցին ոստիկանական ուժերով: Տեղի ունեցավ փոխհրաձգություն, որի ընթացքում սպանվեցին 14 ցուցարարներ ու 3 ոստիկաններ: Չնայած Հիտլերը, գեներալ Էրիխ Լուդենդորֆը (Առաջին աշխարհամարտի ժամանակ

գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ) և խռովության մյուս կազմակերպիչները դիմեցին փախուստի, բայց հայտնաբերվեցին ու ձերբակալվեցին: ՆՍԳԲԿ-ն և խռովությանը մասնակից մյուս աջ արմատական կազմակերպություններն արգելվեցին:

1924 թ. փետրվարին Մյունխենի ժողովրդական դատարանում տեղի ունեցավ Հիտլերի, Լուդենդորֆի, Էռնստ Ռյոհմի և այլոց դատավարությունը, որոնց ներկայացվել էր պետական դավաճանության մեղադրանք: Դատավարության ընթացքում Հիտլերի և մյուսների հակահանրապետական ելույթները, որոնք դատավորների կարծիքով բխում էին «զուտ հայրենասիրական ոգուց» և «անձնուրաց, ազնիվ կամքից», դատարանի դահլիճում համակրանքով էին ընդունվում: Հիտլերը և երեք այլ մեղադրյալներ 1924 թ. ապրիլի 1-ին դատապարտվեցին հինգ տարվա ազատազրկման՝ ունենալով նաև վեց ամիս անց ներման ենթարկվելու իրավունք: Մյուսներն ավելի մեղմ պատիժներ ստացան, իսկ Լուդենդորֆը պարզապես ազատ արձակվեց:

1924 թ. դեկտեմբերի 20-ին Հիտլերը, որը կալանավորված էր Լանդսբերգի բանտում, վաղաժամկետ ազատ արձակվեց: Շուտով ՆՍԳԲԿ-ի արգելքը վերացվեց, և Հիտլերը 1925 թ. փետրվարի 27-ին վերագրանցեց իր կուսակցությունը: Նա 1925 թ. ապրիլի 4-ին հիմնեց նաև իր թիկնազորը՝ «Schutzstaffel»-ը (թարգմանաբար՝ պաշտպանական ջոկատ, իսկ հապավված ձևով՝ SS: Այսուհետ տեքստում կնշվի որպես ԷսԷս), որն առժամանակ գործում էր որպես ԷսԱ-ին ենթակա ստորաբաժանում: Բանտում Հիտլերը սկսել էր գրել իր «Իմ պայքարը» (Mein Kampf) գիրքը, որի առաջին հատորը լույս տեսավ 1925 թ., իսկ երկրորդը՝ 1927 թ. {(77) *19*, (65) *26-27*}:

Հիտլերյան խռովության ճնշումից հետո երկրում հաստատվեց ներքաղաքական խաղաղություն և սկսվեց հանրապետության վերելքի ու ծաղկման շրջանը:

Վայմարյան Հանրապետության «ոսկեդարը»

Վայմարյան Հանրապետությունն իր գոյության առաջին հինգ տարիներին մշտապես ստիպված էր դիմակայել աջ և ձախ արմատականներին, որոնց համակիրները շարունակ բազմանում էին երկրի սոցիալ-տնտեսական ծանր դրության հետևանքով: 1924 թվականն այդ առումով եղավ շրջադարձային: Վերսալյան պայմանագրի առանձին կետերի հանդեպ Անտանտի տերությունների դիրքորոշման փոփոխումը հանրապետությանը հնարավորություն ընձեռեց դուրս գալ արտաքին քաղաքական մեկուսացումից: 1924 թ. կեսին Գերմանիայի փոխհատուցումների նոր կարգավորում կատարվեց՝ համաձայն Չարլզ Դավեսի ներկայացրած ծրագրի (Դավեսի պլան), որով ֆինանսապես թուլացած Գերմանիայի վճարունակությունը պահպանելու նպատակով նրան ռազմատուգանքների վճարման համար հավելաժամանակ էր տրվում, բայց միաժամանակ դաշնակիցները հնարավորություն ունեին միջամտելու Գերմանիայի պետական ինքնիշխանությանը:

Հետագա տարիներին արտգործնախարար Գուստավ Շտրեզեմանին հաջողվեց հիմնովին բարելավել արևմտյան տերությունների հետ Գերմանիայի հարաբերությունները: 1925 թ. Լոկարնոյի պայմանագրով Գերմանիան Վերսալյան պայմանագրում գծված իր արևմտյան սահմանը ճանաչեց որպես վերջնական սահման, իսկ 1926 թ. կարողացավ անդամակցել Ազգերի լիգային:

1923 թ. վերջին հաջողվեց կասեցնել դրամի արժեզրկումը, և սկսվեց զարգացման կայուն շրջան: Տնտեսությունը արդիականացվեց և բարելավեց իր մրցունակությունն արևմտյան շուկայում: Համատարած ճանաչում ստացավ ութժամյա աշխատանքային օրը:

1927 թ. ներդրվեց գործազուրկների ապահովագրության համակարգը: Բյուջեի միջին եկամուտները հետզհետե աճում էին, իսկ 1920-ական թթ. վերջին մարդկանց կենսամակարդակը հա-

սավ նախապատերազմյանի մակարդակին: Զուգահեռաբար ծաղկում ապրեցին գրականությունը, մշակույթն ու արվեստը: Բեռլինը դարձավ եվրոպական մշակույթի կենտրոններից մեկը:

Տեխնիկայի բնագավառում առանձնապես երկու նվաճումներ զգալիորեն նպաստեցին տնտեսական և հասարակական կյանքի նորացմանը՝ ներքին այրման շարժիչի արտադրության մեկնարկը (1923-24 թթ.) և ռադիոյի գործարկումը (1923 թ. աշնան վերջին), որը որոշակի լսարանի համար նախատեսված չէր, այլ ծառայում էր որպես ժամանցային ու տեղեկատվական միջոց լայն հանրության համար: Այդ նորարարությունները, հանգեցնելով ավտոմոբիլային երթևեկության շեշտակի աճի և դյուրացնելով տեղեկատվության փոխանակումն ու փոխադարձ կապը, նոր հնարավորություններ էին բացում նաև կուսակցական-քաղաքական աշխատանքի և պրոպագանդայի զարգացման համար: Դա ժամանակին գիտակցեցին և իրենց նպատակներին ծառայեցրին ՆՍԳԲԿ-ն և արմատական քաղաքական այլ ուժերը:

1925 թ. փետրվարին մահացավ հանրապետության առաջին նախագահ Ֆ. Էբերտը: Նախագահական նոր ընտրությունների առաջին փուլով յոթ թեկնածուներից ոչ ոք բավարար ձայներ չհավաքեց: Պահպանողական Գերմանական ազգային ժողովրդական կուսակցությունն (ԳԱԺԿ) ու լիբերալներն ընտրությունների երկրորդ փուլում առաջադրեցին ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգի (Առաջին աշխարհամարտում գերմանական բանակի գլխավոր հրամանատար) թեկնածությունը, որը և ընտրվեց նախագահ: Հինդենբուրգի ընտրությունը չէր բխում Վայմարյան Հանրապետության շահերից, քանի որ նա իր համոզմունքներով ոչ թե ժողովրդավար, այլ միապետական գործիչ էր: Ուստի զարմանալի չէ, որ Գերմանիայի աջ արմատականությունը ոգևորված էր նրա ընտրությամբ:

Դավեսի պլանում ռազմատուգանքների վճարման ամբողջական ծավալը և ժամանակահատվածը հստակ ամրագրված չէին:

Որոշ ժամանակ անց այդ հարցերի շուրջ քննարկումների արդյունքում կազմվեց վճարման մի նոր պայմանագրի նախագիծ, որը դրա հեղինակի՝ Օուեն Յունգի անունով կոչվեց Յունգի պլան: Այն Գերմանիայի համար նախատեսում էր մեծաքանակ վճարումներ մինչև 1988 թվականը, բայց միաժամանակ վերադարձնում էր Գերմանիային իր ինքնիշխանությունը:

Այդ ծրագրի ընդունման դեմ Գերմանիայում ձևավորվեց ուժեղ ընդդիմություն՝ ԳԱԺԿ-ի նախագահ Ալֆրեդ Հուգենբերգի ղեկավարությամբ: Նրան միացավ նաև Հիտլերն իր կուսակցության հետ: Չնայած 1929 թ. դեկտեմբերի 22-ին հանրաքվեի միջոցով Յունգի պլանը տապալելու նրանց փորձը ձախողվեց, այնուհանդերձ այդ պայքարի ընթացքում Հիտլերն ու իր կուսակցությունը զգալի ժողովրդականություն և մեծ թվով նոր համակիրներ ձեռք բերեցին՝ ներքաղաքական դաշտում ստվերից դուրս գալով և դառնալով առանցքային խաղացողներ {(65) *27-30*}:

Հիտլերյան կուսակցության քաղաքական վերելքը

Հանրապետությունը սոցիալ-տնտեսական ճգնաժամը հաղթահարելու և վերսալյան պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելու համար ստիպված էր շարունակ վարկեր վերցնել ԱՄՆ-ից, և քանի որ դրանց զգալի մասը կարճաժամկետ էր, երկիրը ուժգին կախման մեջ ընկավ ԱՄՆ տնտեսությունից: 1929 թ. վերջին, երբ սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով ԱՄՆ-ի տնտեսությունը դժվարին դրության մեջ հայտնվեց, դա իր ուղղակի ազդեցությունն ունեցավ նաև Վայմարյան Հանրապետության վրա: Վերջինիս տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Շեշտակի մեծացավ գործազուրկների քանակը: Եթե 1929 թ. սեպտեմբերին երկրում կային 1,3 միլիոն գործազուրկներ, ապա մեկ տարում նրանց թիվը հասավ 3 միլիոնի: 1932 թ. սեպտեմբերին կային 5 միլիոն, իսկ 1933 թ. սկզբին՝ ավելի քան 6 միլիոն գործազուրկներ: Այդպիսով գոր-

ծազուրկ էր չափահաս աշխատունակ մարդկանց շուրջ մեկ երրորդը:

Կառավարությունը բյուջետային միջոցների խիստ նվազման պայմաններում ստիպված էր շարունակ ավելի մեծ հատկացումներ կատարել գործազրկության ապահովագրման և աշխատատեղերի պահպանման նպատակով: Այդ լարված իրադրությունում 1930 թ. մարտին ռայխսթագում տեղի ունեցավ թեժ բանավեճ սոցիալական ապահովագրության վճարումների բարձրացման վերաբերյալ, ինչն էլ մարտի 27-ին հանգեցրեց կառավարող կոալիցիայի փլուզման:

Նախագահը «Կենտրոն» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Հայնրիխ Բրյունինգին նշանակեց կանցլեր և հանձնարարեց ձևավորել նոր կառավարություն: Գործող ռայխսթագի հետ միասին հրատապ տնտեսական խնդիրները հաղթահարելու՝ Բրյունինգի փորձերը ձախողվեցին, և դեռ ամռանը նախագահը նրա առաջարկով ցրեց պառլամենտը: 1930 թ. սեպտեմբերին տեղի ունեցած նոր ընտրությունների արդյունքում ՆՍԳԲԿ-ն, որը նախորդ՝ 1928 թ. մայիսին կատարված ընտրությունների ժամանակ 12 պատգամավորական մանդատ էր ձեռք բերել, ստացավ 107 մանդատ՝ դառնալով ծանրակշիռ քաղաքական ուժ:

1932 թ. գարնանը տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Առաջին փուլում նախագահի՝ առաջադրված հինգ թեկնածուներից ամենալուրջ հավակնորդները Հինդենբուրգը, Հիտլերը և Էռնստ Թելմանն էին, որոնցից ոչ ոք վայմարյան ժողովրդավարական հանրապետության համոզված կողմնակից չէր: Մարտի 13-ին տեղի ունեցած առաջին ընտրական փուլում նրանցից ոչ ոք բավարար ձայներ չհավաքեց: Հինդենբուրգը ստացավ ձայների՝ շուրջ 49,6 %-ը, Հիտլերը՝ 30,1 %-ը, իսկ Թելմանը՝ 13,2 %-ը: Ապրիլի 10-ին տեղի ունեցած երկրորդ փուլում, ստանալով ձայների 53 %-ը, Հինդենբուրգը կրկին ընտրվեց նախագահ {(136) *137-152*}:

Բրյունինգը փորձում էր տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած բյուջեի դեֆիցիտը վերացնել դեֆլյացիայի, այն է՝ աշխատավարձերի կրճատման, պետական ծախսերի սահմանափակման և հարկերի բարձրացման ճանապարհով, որը, նրա կարծիքով, հնարավորություն կտար գործազուրկներին արդյունավետ օգնություն ցուցաբերել: Այդ հույսերը, սակայն, չարդարացան: Միջազգային վճարումների պարտավորությունները ժամանակավորապես հետաձգելու՝ 1931 թ. կեսերին ԱՄՆ նախագահ Հուվերի կողմից արված առաջարկի հիման վրա թեև Գերմանիան ազատվեց ռազմատուգանքների վճարումների բեռից (ընդսմին՝ առմիշտ), բայց դա էլ չօգնեց՝ կասեցնելու հանրապետությունում խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը:

Բրյունինգը, որի քաղաքականությունը որևէ էական հաջողություն չունեցավ, զրկվելով նախագահի վստահությունից, 1932 մայիսի 30-ին իր կառավարության հետ հրաժարական տվեց: Նախագահը կանցլեր նշանակեց մինչ այդ «Կենտրոն» կուսակցությանն անդամակցող Ֆրանց ֆոն Պապենին, որը խոստանում էր նացիոնալ-սոցիալիստական շարժման դինամիկան օգտագործել այլ նպատակների համար և այդ կերպ թուլացնել այն: Նա դրդեց նախագահին ռայխսթագը ցրել և նշանակել նոր ընտրություններ: Ընտրություններում, որոնք տեղի ունեցան 1932 թ. հուլիսի վերջին, ՆՍԳԲԿ-ն ստացավ 230 մանդատ (ձայների ավելի քան 37 %-ը)՝ ռայխսթագում դառնալով ամենազորեղ քաղաքական ուժը: Նոր պառլամենտը չարդարացրեց Պապենի ակնկալիքները, առավել ևս, որ ՆՍԳԲԿ-ի մասնակցությամբ կոալիցիոն կառավարություն կազմելու վերաբերյալ՝ նրա բանակցությունները Հիտլերի հետ ձախողվեցին:

Ստեղծված իրավիճակում, երբ կառավարությունը վայելում էր միայն պառլամենտական փոքրամասնության վստահությունը, կանցլերը Հինդենբուրգին դրդեց այն դարձյալ ցրել, և նոր պառլամենտը, դեռ իր առաջին նիստը չգումարած, լուծարվեց: Հիտլերի

հրաժարումը կառավարությանն անդամակցելուց նրա կուսակցության շարքերում առաջ բերեց որոշակի հուսախաբություն և դժգոհություն, ինչի պատճառով բազմաթիվ մարդիկ հեռացան կուսակցությունից: Նվազեցին նաև կուսակցության գանձարկղ հոսող ֆինանսական նվիրատվությունները: Չնայած այդ ամենի հետևանքով ռայխսթագի նոր ընտրություններում (1932 թ. նոյեմբերին) ՆՍԳԲԿ-ին տրված ձայները որոշ չափով պակասեցին՝ կազմելով 33,1 տոկոս, այնուհանդերձ այդ կուսակցությունն այլ ուժերի համեմատ կրկին ամենաշատ թվով ձայները հավաքեց: Երբ Հիտլերը դարձյալ հրաժարվեց մասնակցել կոալիցիոն կառավարության ձևավորմանը, Պապենը փորձեց նախագահին դրդել փոփոխել սահմանադրությունը և վերացնել պառլամենտի ինստիտուտը: Նախագահը, սակայն, այդ գաղափարի համակիր չէր, որը նաև հակաօրինական քայլ կլիներ: 1932 թ. նոյեմբերի 17-ին նա Պապենին հեռացրեց կառավարության ղեկավարի պաշտոնից և դեկտեմբերի 2-ին կանցլեր նշանակեց գեներալ Կուրտ ֆոն Շլայխերին, որը խոստանում էր հաղթահարել ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամը:

Հիտլերը և իր վստահորդներ Հերման Գյորինգն ու Հայնրիխ Հիմլերը սերտ կապեր էին ստեղծել Գերմանիայի մի շարք խոշոր արդյունաբերողների հետ, որոնք այժմ փորձում էին Հինդենբուրգին համոզել՝ Հիտլերին տալու կանցլերի պաշտոնը: Քանի որ նրանք նախագահի հետ ուղիղ կապ չունեին, նրանց «կապավորը» դարձավ Պապենը, որը նախկինի պես շարունակում էր վայելել Հինդենբուրգի վստահությունը: Պապենն իր հրաժարականից հետո դարձավ Հիտլերի «դաշնակիցը»՝ հույս ունենալով նրա կանցլերության դեպքում կրկին կառավարություն մտնել: Հիտլերին հաջողվեց իր կողմը գրավել նաև Հուգենբերգին:

1933 թ. հունվարի 4-ին Պապենն ու Հիտլերը հանդիպեցին բանկիր Կուրտ ֆոն Շրյոդերի տանը՝ անելիքները քննարկելու համար: Որոշ պատմաբաններ այդ հանդիպումը համարում են «Եր-

որդ կայսրության ծնունդի ժամը»: Հիտլերն ու Պապենը համաձայնության եկան Հիտլեր-Պապեն-Հուգենբերգ առանցքի շուրջ նոր կառավարություն ձևավորելու մասին, որը պետք է հնարավորինս շուտ փոխարիներ Շլայխերի կառավարությանը: Հիտլերը խոստացավ նաև կանցլեր դառնալու դեպքում Պապենին տալ փոխկանցլերի պաշտոնը:

Հիտլերին կանցլեր նշանակելու հարցում նախագահի դիմադրությունը հաղթահարելու համար ձեռք բերվեցին այլ ազդեցիկ «բարեխոսներ» ևս, որոնց շարքում էին նախագահի որդին՝ Օսկար ֆոն Հինդենբուրգը, Վիլհելմ II կայսեր որդին՝ նախկին թագաժառանգ Ֆ. Վ. Վ. Ավգուստ Էռնստը, և այլք:

Երբ ճգնաժամի հաղթահարման՝ Շլայխերի ջանքերն արդյունք չտվեցին, նա փորձեց համոզել նախագահին, երկրի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը պատրվակելով, ցրել ռայխսթագը և, հակառակ սահմանադրությանը, անորոշ ժամանակով հետաձգել նոր ընտրությունները: Հինդենբուրգը, մերժելով նրա առաջարկը, 1933 թ. հունվարի 28-ին հեռացրեց նրան կանցլերի պաշտոնից:

Երկու հանգամանքներ նախագահին հարկադրեցին նոր կանցլերի նշանակումը հնարավորինս շուտ կատարել: Հունվարի 29-ին լուրեր պտտվեցին, թե Շլայխերն իր կողմնակիցների հետ զինված հեղաշրջում էր նախապատրաստում՝ նախագահին ձերբակալելու և նոր կառավարության կազմումը ձախողելու համար: Մյուս կողմից, այդ ժամանակ հասունացել էր մի սկանդալ, որի զարգացումը կարող էր անվանարկել Հինդենբուրգին: «Կենտրոն» կուսակցության նախաձեռնությամբ ռայխսթագի բյուջետային հանձնաժողովը 1933 թ. հունվարի 19-ից ուսումնասիրում էր Արևելյան Էլբայի գյուղատնտեսության մեջ պետական գումարների բաշխումների հարցը: Պարզվել էր, որ նախագահի ընկերներից մեկին ավելի շատ փող էր հատկացվել, քան թույլատրվում էր: Նաև հայտնի էր դարձել, որ նախագահը 1927 թ. հապճեպ կեր-

պով մի անշարժ գույք էր գրանցել իր որդու անունով՝ նրան ժառանգության հարկի վճարումից զերծ պահելու համար: Թեև դա անօրինական արարք չէր, այնուհանդերձ, հաստատման դեպքում, որպես վճարումից խուսափելու «հնարք», կվարկաբեկեր նախագահին: Ըստ նախագահի, վերոնշյալ առանցքով կոալիցիոն կառավարություն ձևավորելու և «Կենտրոն»-ը կառավարության մեջ ընդգրկելու, ծայրահեղ դեպքում նաև ռայխսթագը ցրելու միջոցով, ինչը համապատասխանում էր Հիտլերի ցանկություններին, այդ սկանդալին վերջ կտրվեր: Հինդենբուրգը «Կենտրոնը» կառավարության մեջ ներգրավելու հավաստիացում ստացավ նաև Պապենից: Երբ Հիտլերը նույնպես, հրաժարվելով իր նախկին մերժողական դիրքորոշումից, համաձայնեց կազմելու կոալիցիոն կառավարություն, Հինդենբուրգը 1933 թ. հունվարի 30-ին նրան նշանակեց կանցլեր {(76) *55-64*}:

Իշխանության բռնազավթումը Հիտլերի և նրա կուսակցության կողմից

Հիտլերն ու իր կուսակցությունը սկզբից եթ վայմարյան ժողովրդավարության վերացման և իշխանության բռնազավթման նպատակ էին հետապնդում: Հիտլերը դա անուղղակի նշում էր դեռ 1930 թ. սեպտեմբերի 26-ին ունեցած իր ելույթում. «Եթե մենք այսօր, ի թիվս բազմաթիվ զենքերի, նաև պառլամենտարիզմի զենքն ենք օգտագործում, ապա դա չի նշանակում, որ պառլամենտական կուսակցություններն այստեղ միայն պառլամենտական նպատակների համար են: […] Մենք պառլամենտական տեղերի համար պայքարում ենք ոչ թե հանուն պառլամենտական տեղերի, այլ մի օր գերմանացի ժողովրդին ազատագրելու համար» {(61) *157*}:

Կանցլեր նշանակվելով՝ Հիտլերը դեռ բացարձակ իշխանություն ունենալու իր նպատակին չէր հասել: Նա կոալիցիա կազմելու պարտավորություն էր ստանձնել, և Հինդենբուրգն ու իր

խորհրդականները հույս ունեին, որ նախարարների ոչ նացիոնալ-սոցիալիստական մեծամասնությունը «կսանձեր» նրան: Պապենը նույնպես իր համոզմունքն էր արտահայտում այդ հարցում՝ ասելով. «Մենք կքշենք նրան անկյուն, մինչև նա կոռնա» {(65) *51*}: Նրանք, սակայն, թերագնահատել էին Հիտլերի կարողությունները:

Հիտլերը դիտավորյալ ձախողեց կառավարությանը մասնակցելու վերաբերյալ «Կենտրոն» կուսակցության հետ վարվող բանակցությունները, որպեսզի դա պատրվակ դարձնի՝ նախագահին ասելու, թե ինքը՝ որպես կանցլեր, չունի պառլամենտական բավարար մեծամասնություն: Հինդենբուրգը 1933 թ. փետրվարի 1-ին ցրեց պառլամենտը և նոր ընտրությունները նշանակեց մարտի 5-ին:

Հիտլերն ընտրապայքարում իր քարոզարշավը վարում էր զգույշ ու հաշվենկատ կերպով և ազգային պահպանողական կողմնորոշում ունեցող ընտրողներին գրավելու համար հանդես էր գալիս որպես քրիստոնեական արժեքների, բարոյականության և ազգային ավանդույթների պաշտպան: Պառլամենտը ցրելու օրը գերմանացի ժողովրդին ուղղված իր կոչում, օրինակ, նա հետևյալն էր ասում. «Թո՛ղ ամենակարող Աստված ողորմա մեր աշխատանքին, մեր կամքը ճիշտ կերպավորի, օրհնի մեր խորաթափանցությունը և մեզ երջանկացնի մեր ժողովրդի վստահությամբ» {(65) *51*}: Միաժամանակ Հիտլերն իր իշխանության լծակներն օգտագործում էր՝ կոմունիստներին որպես պետության թշնամիներ ներկայացնելու համար: Նա համոզեց նախագահին դեռ փետրվարի 4-ին մի հրամանագրով սահմանափակել մամուլի, հավաքների և այլ ազատությունները:

Փետրվարի 27-ի երեկոյան ռայխսթագի շենքը հրդեհվեց, և հրշեջները չկարողացան կրակի տարածումը կասեցնել: Մոտակայքում ձերբակալվեց մի երիտասարդ հոլանդացի, որը խոստովանեց, որ ինքը միայնակ է շենքը հրդեհել: Հիտլերականները, սակայն, քավության նոխազ դարձրին կոմունիստներին և նույն

գիշեր ձերբակալեցին մի քանի հազար կոմունիստ գործիչների, այդ թվում՝ պատգամավորների, որոնք բանտարկվեցին Դախաուում կառուցված առաջին համակենտրոնացման ճամբարում:

Հրդեհի հետևանքով նախագահը փետրվարի 28-ին երկու նոր հրամանագրեր հրապարակեց, որոնցով քաղաքացիական բոլոր հիմնարար իրավունքները կորցրին իրենց ուժը և հաստատվեց մշտական արտակարգ դրություն: ՆՍԳԲԿ-ն դա օգտագործեց իր քաղաքական հակառակորդների դեմ հետապնդումների նոր ալիք սկսելու և ընտրություններում բացարձակ հաղթանակ ձեռք բերելու համար:

Թեև հիտլերյան կուսակցության հույսերը չարդարացան, քանի որ ընտրություններում, հավաքելով 43,9 % ձայներ, այն բացարձակ հաղթանակ չգրանցեց, այնուհանդերձ դա Հիտլերին ու իր կուսակիցներին չէր մտահոգում: Ընտրություններից հետո Յոզեֆ Գյոբելսն իր օրագրում հետևյալն էր գրում. «Ի՞նչ նշանակություն ունեն այժմ թվերը: {…} Չէ՞ որ մենք ունենք իշխանություն՝ այն օգտագործելու համար» {(65) *54*}: Հիտլերը պատրաստեց մի օրենքի նախագիծ, որն իրեն լիազորում էր առանց ռայխսթագի օրենքներ հրապարակել: Նա վստահ էր, որ կկարողանար համոզել ռայխսթագին՝ ընդունելու այդ նախագիծը և այդպիսով կամովին իր լիազորությունները փոխանցելու կանցլերին: Դա իրագործելի դարձնելու համար նա նախ պետք է ձեռք բերեր ազգային պահպանողական կուսակցությունների համաձայնությունը, իսկ դրա համար անհրաժեշտ էր շահել նրանց վստահությունը:

1933 թ. մարտի 21-ին նոր ռայխսթագի բացման արարողության ժամանակ, որին ներկա էին Հինդենբուրգը և պատգամավորների մեծ մասը, Հիտլերը հանդիսավորապես խոստացավ Աստծո հանդեպ հավատով լի շարունակել պրուսական ավանդույթները, և նրա ելույթը մեծ խանդավառությամբ ընդունվեց: Նույն օրը եթ սկսվեցին հիտերականների բանակցությունները ռայխսթագի տարբեր խմբակցությունների հետ վերոնշյալ օրենքն

ընդունելու համար: Վերջիններիս մեծ մասը համաձայնեց դա անել՝ պայմանով, որ նախագահի՝ քաղաքացիական իրավունքները սահմանափակող փետրվարի 28-ի հրամանագրերը չեղյալ համարվեին, և, բացի այդ, երաշխավորվեին եկեղեցու պաշտպանությունը, ինչպես և կրոնի դասավանդումը դպրոցներում: Հիտլերը ոչ միայն համաձայնեց, այլև խոստացավ հետագայում երկու եկեղեցիների հետ ավելի սերտ համագործակցել: «Ազգային կառավարությունը երկու քրիստոնեական դավանանքների մեջ տեսնում է մեր ժողովրդի արժեքների պահպանման կարևորագույն գործոնները,– հայտարարեց նա մարտի 23-ին ունեցած իր ելույթում:– Նրանց իրավունքները պետք է անձեռնմխելի լինեն: Կառավարությունը, սակայն, ակնկալում է և հույս ունի, որ մեր ժողովրդի ազգային և բարոյական նորացումը, ինչը նա դարձրել է իր առաջադրանքը, հետադարձ կերպով նույն արժեքորումը կստանա» {(64) *267*}:

Դա ունեցավ Հիտլերի համար ցանկալի ազդեցությունը: 1933 թ. մարտի 23-ին ռայխսթագը ձայների մեծամասնությամբ ընդունեց օրենքը: Միայն ԳՍԴԿ-ն հրաժարվեց դա անել: Այդ օրենքի ընդունմամբ ռայխսթագն ինքնակամ իր լիազորությունները փոխանցեց Հիտլերին, և վերջինիս այլևս ոչինչ չէր խոչընդոտում՝ երկրում միակուսակցական վարչակարգ և բռնապետություն հաստատելու համար:

Հիտլերը, 1933 թ. մարտին և ապրիլին երկու օրենքներ հրապարակելով, երկրամասերը բռնակցեց պետությանը՝ վերացնելով երկրամասային կառավարման համակարգը: Մայիսի 1-ին արգելվեցին նաև ազատ արհմիությունները, որոնք վերածվեցին պետության կողմից ղեկավարվող «Գերմանական աշխատանքային ճակատի»: Միաժամանակ մայիսի 1-ը հռչակվեց որպես «Ազգային աշխատանքի տոնի օր»: Զուգահեռաբար Հիտլերը ձեռնամուխ եղավ երկրում միակուսակցական վարչակարգի ստեղծմանը: Առաջին հարվածը նա հասցրեց կոմկուսին, որին նա համարում

էր «պետության թիվ 1 թշնամին», և որը, չնայած ռայխսթագի հրդեհից հետո ուժգին հետապնդումների էր ենթարկվում, մարտի 5-ի ընտրություններում ստացել էր 81 մանդատ: Մարտի 7-ին այդ կուսակցության գրասենյակը փակվեց, և նույն ամսի վերջին այն պաշտոնապես արգելվեց: Մինչև 1933 թ. հուլիսի սկզբներն արգելվեցին նաև մյուս կուսակցությունները, այդ թվում՝ ՆՍԳԲԿ-ի գաղափարակից Գերմանական ազգային ժողովրդական կուսակցությունը: Իսկ հուլիսի 14-ին «Նոր կուսակցությունների ստեղծման դեմ» օրենքի հրապարակմամբ օրինականացվեց միակուսակցական համակարգը:

Իր բացարձակ իշխանությունն ապահովելու համար Հիտլերը պետք է ևս երկու խոչընդոտներ հաղթահարեր. նա պետք է ապահովեր բանակի անվերապահ հնազանդությունը, նաև վերացներ իր կուսակցության ներսում առկա քաղաքական ընդդիմախոսներին, որոնց շարքում ամենավտանգավորը նա համարում էր ԷսԱ-ի շտաբի պետ Էռնստ Ռյոհմին: Վերջինս կամենում էր ԷսԱ-ն և բանակը միավորելու միջոցով մեկ ազգային բանակ ստեղծել՝ դառնալով դրա ղեկավարը և, բացի այդ, իրականացնել մի «երկրորդ հեղափոխություն» բուրժուազիային իշխանազրկելու համար՝ հարկ եղած դեպքում նույնիսկ Հիտլերի դեմ ապստամբելու գնով:

Հիտլերի համար Ռյոհմի գաղափարներն անընդունելի էին, քանի որ դրանք կթուլացնեին իր դիրքերը, բացի այդ՝ նա իր ներքին ու արտաքին քաղաքական ծրագրերի իրականացման համար բուրժուազիայի աջակցության կարիքն ուներ: Չնայած Ռյոհմը Հիտլերին բազմիցս հավաստիացրել էր իր հավատարմության մասին, այնուհանդերձ այն պատճառաբանությամբ, թե նա իր ԷսԱ-ով 1934 թ. հունիսի 30-ին Հիտլերի դեմ հեղաշրջում է ծրագրել, այդ օրվա լուսադեմին Մյունխենի մերձակայքում ԷսԷս-ի կողմից Ռյոհմն ու թիկնապահները ձերբակալվեցին ու տեղում սպանվեցին: Գեստապոն (Geheimsstaatspolizei, թարգմանաբար՝ «գաղտնի պետական ոստիկանություն») և ԷսԷս-ը հաջորդ երեք

օրերին երկրի տարբեր վայրերում սպանեցին ևս 200 մարդկանց, որոնք ընդդիմադիրներ էին համարվում, իսկ հուլիսի 3-ին մի օրենքով այդ արյունահեղությունն օրինականացվեց՝ որպես «պետության ինքնապաշտպանություն»: Այդ օրենքը ռայխստագին ներկայացնելիս Գյորինգը հայտարարեց, որ իրավունքը կառավարության ցանկությունն է {(65) *56-61, 65-78*}: Դյուրին լուծում ստացավ նաև բանակի հնազանդությունն ապահովելու հարցը: Պաշտպանության նախարար Վ. ֆոն Բլոմբերգը, որ նախկինում էլ հայտարարել էր ՆՍԳԲԿ-ի քաղաքական կուրսին իր համերաշխության մասին, 1934 թ. օգոստոսի 1-ին նախարարների խորհրդակցության ժամանակ հայտնեց, որ մտադիր է մահամերձ նախագահի մահից անմիջապես հետո ողջ բանակը երդվեցնել Ֆյուրերի՝ Հիտլերի անունով: Հինդենբուրգը մահացավ օգոստոսի 2-ի առավոտյան, և անմիջապես հետո Բլոմբերգի հրամանով բոլոր զորամասերում սպաները, ենթասպաներն ու զինվորները հանդիսավոր կերպով Հիտլերին հավատարմության երդում տվեցին: Երդման տեքստը հետևյալ ձևակերպումն ուներ. «Ես Աստծո առաջ սուրբ երդում եմ տալիս, որ գերմանական պետության և ժողովրդի առաջնորդին՝ Ադոլֆ Հիտլերին՝ վերմախտի գլխավոր հրամանատարին, անվերապահ հնազանդություն եմ ցուցաբերելու և, որպես քաջարի զինվոր, պատրաստ եմ լինելու ցանկացած ժամանակ իմ կյանքը տալ այս երդման համար» {(60) *168*}:

Հիտլերյան կուսակցության բռնապետական համակարգն այդպիսով լիովին հաստատված էր: Օգոստոսի 2-ին մի օրենքով նախագահի և կանցլերի պաշտոնները միացվեցին իրար: Հիտլերը ԷսԷս-ը, որպես նրա հավատարմության գնահատում ու հատուցում, մեծացրեց՝ ընդլայնելով նաև նրա կառուցվածքը և այն դարձրեց ՆՍԳԲԿ-ին ենթակա ինքնաբավ կազմակերպություն: ԷսԷս-ի կառույցում ստեղծվեց Անվտանգության ծառայությունը, կազմավորվեցին նաև ԷսԷս-ի պահնորդական ջոկատները, ԷսԷս-ին ենթակա ռազմական զորամիավորումները (որոնք պատերազ-

մի ժամանակ կոչվում էին Վաֆֆեն-Էսէս), ինչպես և, այսպես կոչված, «Մեռած գլուխների» ջոկատները, որոնց հանձնարարվեց համակենտրոնացման ճամբարների վերահսկողությունը: «Մեռած գլուխների» վերահսկողական համակարգի ստեղծման հարցում Հիմլերի կարևորագույն օգնականը Թեոդոր Այկեն էր, որին Հիմլերը 1933 թ. Վյուրցբուրգի համալսարանի կլինիկայում ենթարկել էր հետազոտման՝ նրա հոգեկան առողջությունը ստուգելու համար: Այկեն էր հեղինակել «Մեռած գլուխների» բոլոր ստորաբաժանումների համար պարտադիր կարգապահական և պատժիչ կանոնակարգը, որը խարսխված էր գութը և կարեկցանքը իսպառ բացառելու սկզբունքի վրա:

Էսէս-ի նշված բոլոր ռազմական ուժերը դրվեցին ոչ թե ՆՍԳԲԿ-ի, այլ անձամբ Հիտլերի ենթակայության ներքո:

Տոտալիտար համակարգի ձևավորման հարցում կարևոր նշանակություն ունեցավ նաև Էսէս-ի սերտաճումը ոստիկանությանը: Էսէս-ի առաջնորդ Հայնրիխ Հիմլերը, որին ենթարկվում էր նաև քաղաքական ոստիկանությունը, 1936 թ. դարձավ ամբողջ ոստիկանության պետը, ընդ որում որպես ոստիկանապետ ի պաշտոնե ենթարկվելով ՆԳ նախարարին, որպես Էսէս ղեկավար՝ նա ենթարկվում էր անձամբ Հիտլերին: Դրա հետևանքով ոստիկանությունը Էսէս-ի հետ միասին փաստացիորեն դարձավ Հիտլերի կամակատարը:

Միաժամանակ քայլեր էին կատարվում անվտանգության պետական և կուսակցական մարմինները միաձուլելու համար: Այդ գործընթացն ավարտվեց 1939 թ. սեպտեմբերի 27-ին Էսէս-ի կազմում Պետական անվտանգության գլխավոր վարչության (ՊԱԳՎ) ստեղծումով: ՊԱԳՎ-ն, որն Էսէս-ի 12 գլխավոր վարչություններից մեկն էր, ղեկավարում էր Ռայնհարդ Հայդրիխը: Նրա մահից հետո՝ 1942 թ. հունիսից մինչև 1943 թ. հունվարի 30-ը, այն ղեկավարեց անձամբ Հիմլերը, որից հետո վերջինս այդ պաշտոնը փոխանցեց Էռնստ Կալտենբրուններին: Հիմնադրման ժամանակ

ՊԱԳՎ-ն բաղկացած էր վեց բաժանմունքներից, որոնք հռոմեական թվանշերով էին անվանվում: Դրանք իրենց հերթին բաղկացած էին տարբեր ենթաբաժիններից: Հրեաներին վերաբերող հարցերով զբաղվում էր թիվ IV բաժանմունքի 4-րդ ենթաբաժինը, որը ղեկավարում էր Ադոլֆ Այխմանը {(78) *12-13*}:

1933 հոկտեմբերի 14-ին Գերմանիան դուրս եկավ Ազգերի լիգայից: Այդ կերպ հիտլերյան վարչակարգը հրաժարվեց նաև 1932 թ. սպառազինությունների կրճատման՝ Ժնևի համաժողովում ընդունված որոշումներից և տենդագին կերպով սկսեց զարգացնել ռազմական արդյունաբերությունը:

Հիտլերի անձի պաշտամունքը

Հիտլերը երկրում միակուսակցական բռնապետական համակարգը ստեղծելուն զուգահեռ, ինչպես արդեն նշվեց, իր ելույթներում հասարակայնությանը ներկայանում էր որպես ազգային, քրիստոնեական և բարոյական արժեհամակարգի կրող բարեպաշտ գործիչ: Դրա վառ օրինակներից էր մայիսի 1-ին՝ ազատ արհմիությունների ոչնչացման օրը, նրա հետևյալ հրապարակային ելույթը. «Մենք ուզում ենք ազնվորեն՝ մեր ջանասիրությամբ, մեր համառությամբ, մեր անսասան կամքով վաստակել մեր ազգի վերահառնումը: Մենք չենք խնդրում Ամենակարողին. «Տե՛ր, մեզ ազատ դարձրու»: Մենք ուզում ենք գործել, աշխատել, միմյանց վերաբերվել եղբայրաբար, միասին գոտեմարտել, մինչև կգա այն ժամը, երբ կկարողանանք Տիրոջ առջև կանգնել և նրան խնդրել. «Տե՛ր, տեսնում ես՝ մենք փոխվել ենք: Գերմանացի ժողովուրդն այլև անպատվության, խայտառակության, ինքնածվատման, փոքրոգության և թերահավատության ժողովուրդը չէ: Ո՛չ, Տե՛ր, գերմանացի ժողովուրդը կրկին ուժեղ է իր կամքի մեջ, ուժեղ է իր համառության մեջ, ուժեղ է բոլոր զոհողություններին դիմանալու մեջ: Տե՛ր, մենք չենք հեռանա Քեզնից: Օրհնի՛ր հիմա մեր ազատության համար մեր պայքարը և այդպիսով մեր գերմանացի ժողովրդին ու մեր հայրենիքը»» {(88) *264*}:

Պոպուլիզմով և դեմագոգիայով թաթախված իր հռետորաբանությամբ Հիտլերը կարողացավ հանրությանը ներկայանալ որպես գերմանացի ժողովրդին հետպատերազմյան ծանր դրությունից ազատագրող այն «փրկիչը», որի սպասումը վաղուց առկա էր շատերի մեջ: «Վերսալի անունը,– նշում էր, օրինակ, Գրայֆսվալդի համալսարանի պրոֆեսոր, աստվածաբան Օ. Պրոկշը դեռ 1924 թ. ռեկտորատում ունեցած իր ելույթում,– որի վրա նախկինում կայսերական թագն էր սավառնում, այսօր արյուն է ծորեցնում, քանի որ մենք Վերսալից միայն ծաղրածուի գլխարկն ենք տուն բերել: Եվ մենք այսօր բանակ չունենք, անպաշտպան ենք, անպատվված ենք: {…} Եթե գերմանական տեսակը և քրիստոնեական հավատը միավորվեն, ապա մենք փրկված կլինենք, մենք կուզենանք մեր ձեռքերով աշխատել և սպասել այն օրվան, երբ կգա գերմանացի հերոսը: Նա կգա՝ որպես մարգարե կամ արքա» {(128) *13*}:

Հիտլերյան կուսակցությունը ամենուրեք նույնացվում էր նրա անձի հետ: Հիտլերը հանդես էր գալիս որպես դիկտատոր և իր կուսակցական ընկերներին համարում էր իր շքախումբը: Եթե որևէ մեկն ընդդիմանար իր կարծիքին, ապա նրան դաժան դատաստան էր սպասվում, ինչպես դա 1934 թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ Ռյոհմի ու նրա բախտակիցների հետ:

Պրոպագանդայի, դաստիարակության և տեռորի բոլոր միջոցներով ամենուրեք ապահովվում էր Հիտլերի ներկայությունը: Կրթական և վարչական հաստատությունների բոլոր սենյակներում տեղադրված էր նրա նկարը: Նրա անվամբ էին անվանակոչվել բազմաթիվ փողոցներ ու հրապարակներ: Նրա անունով էր կատարվում առօրյա բարևումը՝ «Հայլ Հիտլեր»: «Ֆյուրերը» փառաբանվում էր երգերում, բանաստեղծություններում ու արձակ գործերում: Գերմանացի յուրաքանչյուր տղա և աղջիկ 10-18 տարեկան հասակում պատկանում էին «հիտլերյան երիտասարդությանը»: 1934 թ.-ից բոլոր զինվորները «սուրբ» երդումով պարտա-

վորվում էին նրան անվերապահ հնազանդություն ցուցաբերել: Հիտլերի փառաբանումը ձեռք էր բերել աղոթանման դրսևորումներ, որոնցում Հիտլերին նույն կարգավիճակն էր տրվում, ինչ Քրիստոսին:Բեռլինում Ֆրանսիայի դեսպան Ֆրանսուա-Պոնսեն հետևյալ կերպ էր ներկայացնում իր տպավորությունը Նյուրնբերգում ՆՍԳԲԿ-ի ամենամյա համաժողովի առթիվ կազմակերպված հանրահավաքներից. «Ապշեցուցիչ ու աննկարագրելի է համընդհանուր ոգևորության մթնոլորտը, որի մեջ սուզվել է հին քաղաքը, տարօրինակ արբեցումը, որը համակել է հարյուր հազարավոր տղամարդկանց ու կանանց, ռոմանտիկ հուզմունքը, առեղծվածային էքստազը, մի տեսակ սրբազան խելագարություն, որի մեջ նրանք ընկել են: Նյուրնբերգն ութ օրվա ընթացքում մի քաղաք է, որտեղ իշխում է հրճվանքը, քաղաք, որը գտնվում է կախարդանքի ներքո, այո, գրեթե այլաշխարհայինների քաղաք: {…} Այստեղ նա (նկատի ունի Հիտլերին – Ա. Հ.) իր ելույթներն է ունենում: Կրքի ալիքը, որ դուրս է գալիս նրանից, իրեն ևս ողողելով, մոլեգին սուրում է մինչև հրապարակի եզրը, որտեղից բղավոցների ու ծափերի փոթորկի մեջ ետ է հորդում դեպի նա» {(65) *104*}:

Հասարակության բոլոր շերտերում արմատավորված՝ Հիտլերի անձի պաշտամունքը, բնականաբար, կարևոր նախադրյալ էր նաև նրա վարչակարգի հանցավոր գործողությունների, այդ թվում՝ հրեաների բնաջնջման դեպքում հանրային որևէ դիմադրություն բացառելու համար:

Հակասեմիտականությունը Գերմանիայում: Հիտլերի գաղափարական «հայրերը»

Հակահրեականությունը Գերմանիայում և Եվրոպայում դարերի պատմություն ունի: Դրա համար հիմք են հանդիսացել մի կողմից՝ Հիսուս Քրիստոսի խաչելությունը, որի համար մեղադրվել են հրեաները, սակայն անտեսվել է հռոմեացիների պատասխա-

նատվությունը, մյուս կողմից՝ հրեա վաշխառուների հանդեպ միջնադարից ի վեր առկա ատելությունը՝ պայմանավորված այն տարածված համոզումով, թե նրանք ջանում էին իրենց քրիստոնյա պարտապաններին բարձր վաշխառուական տոկոսներով սնանկացնել: Այս դեպքում էլ, սակայն, անտեսվել է այն հանգամանքը, որ քրիստոնյաներն իրենք են հրեաներին մղել դրամական գործարքների ոլորտը՝ նրանց զրկելով հասարակական գործունեության այլ ոլորտներից, համքարություններին մասնակցելու և այլ իրավունքներից:

Երբ հրեաները 1869 թ. Պրուսիայում և 1871 թ. գերմանական կայսրությունում ստացան քաղաքացիական իրավահավասարություն և աչքի ընկան որպես հաջողակ ձեռնարկատերեր ու գործարարներ, որոնց հետ մրցակցելը դժվար էր, հակահրեականությունը նոր վերելք ապրեց: 1870-ական թթ. սկսված տնտեսական ճգնաժամի հետևանքով շատ բորսաներ և բաժնետիրական ընկերություններ կորցրին իրենց կապիտալը: Ճգնաժամի պատճառների փնտրտուքի ժամանակ մեծ տարածում գտավ այն պարզունակ տեսակետը, թե ճգնաժամը և այդպիսով բազմաթիվ բաժնետիրական ընկերությունների փլուզումը բորսաներում և բանկերում աշխատող հրեաներն են առաջացրել՝ ի վնաս քրիստոնյաների:

19-րդ դարի վերջին քառորդից հակահրեականությունը «գաղափարական» նոր զարգացում ապրեց՝ վերածվելով հակասեմիտականության: Դրա գլխավոր բաղկացուցիչը, սակայն, շարունակում էր մնալ հակահրեականությունը: Հրեաները, ըստ այդմ, բնութագրվում էին բացառապես բացասական հատկանիշներով՝ համարվելով թերարժեք ժողովուրդ: Գերմանիայում և Եվրոպայում կրկին ակտիվացան հրեաների իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու ձգտումները: Բազմանում էին նաև հակահրեական ռասիստական գաղափարներ պրոպագանդող հրապարակումները: Դրանց շարքին էր պատկանում 1919 թ.-ից

տարբեր լեզուներով հրատարակվող «Սիոնի իմաստունների արձանագրությունները» գիրքը, որը ներկայացվում էր որպես հրեաների կողմից կազմակերպված համաշխարհային դավադրության «ապացույց»:

Հիտլերի հակահրեական աշխարհայացքի ձևավորման համար, այսպիսով, կար պարարտ «հող», և նա նոր «հեծանիվ» ստեղծելու կարիք չուներ: Դեռ Վիեննայում ապրելու տարիներին (1907-1914 թթ.) նա կարդում էր մեծ քանակությամբ էժանագին գրականություն, որը ներծծված էր հակասեմիտականությամբ և դարձավ նրա «ժողովրդական աշխարհայացքի» ձևավորման հիմքը: Այդ ժամանակ նրա վրա մեծ ազդեցություն էին գործել հատկապես երկու ավստրիացի հեղինակներ՝ Գեորգ Ռիտտեր ֆոն Շյոներերը և Կարլ Լյուգերը: Նրան մեծապես ներշնչել են նաև գերմանացի հեղինակներ Ադոլֆ Շթյոկերը և Պաուլ դե Լագարդեն իր՝ «Հրեաները և հնդգերմանները» գրքով, որը տպագրվել է Հիտլերի ծնվելուց երկու տարի առաջ (1887 թ.): Այդ գրքում հեղինակն առաջ էր քաշում հրեաներին, որպես «զեռունների», «որդերի» և «բացիլների», ոչնչացնելու գաղափարը: «Պետք է կոկորդիլոսի կաշվի կարծրության սիրտ ունենալ՝ հրեաներին չատելու համար,– գրում էր Գյոթինգենի համալսարանի պրոֆեսոր, արևելագետ Պ. դե Լագարդեն այդ գրքում,– նաև նրանց չատելու և չարհամարհելու համար, ովքեր (մարդասիրությունից ելնելով) խոսում են այդ հրեաների հետ կամ ովքեր չափազանց վախկոտ են՝ այդ զեռուններին կոխկրտելու համար: Մազորդերի (բնագրում՝ «Trachin» - Ա. Հ.) և բացիլների հետ չի կարելի բանակցել, մազորդերը և բացիլները նաև չեն դաստիարակվում, նրանք հնարավորինս արագ և հիմնովին ոչնչացվում են» {(69) *359*}:

Այդ և նման գրվածքները, ինչպես հետագայում Հիտլերն էր գրում, ձևավորեցին այն «գրանիտե հիմքը», որի վրա աճեց նրա ռասիստական աշխարհայացքը: Դեռևս 1923 թ. մի հարցազրույ-

ցում նա հրեաներին համեմատում էր հիվանդության հարուցիչների հետ, որոնք հարձակվել են գերմանական ազգի «մարմնի վրա», ուստի այդ պատճառով նրանց պետք էր վերացնել:

Գերմանացի Հանս Գրիմի լայն տարածում ստացած «Ժողովուրդ՝ առանց տարածքի» գիրքը նույնպես մեծապես ներշնչել է Հիտլերին՝ հիմք դառնալով, մասնավորապես, կենսատարածքի վերաբերյալ նրա քաղաքական ըմբռնումների ձևավորման հարցում: Գրքում հեղինակն արհամարհանքով էր խոսում այլ ազգերի մասին և, գերմանացի ժողովրդին բոլորից վեր դասելով, այն թեզն էր զարգացնում, թե «գերմանացի մարդը բավականաչափ տարածք» չունի, մինչդեռ «անհոգ ապրում են «գողերը, պոռնիկները և միմյանց խժռող զեռունները» {(153) *122*}:

Հիտլերի հակահրեական հայեցակարգի զարգացման հարցում կարևոր նշանակություն են ունեցել նաև մի շարք այլազգի հեղինակների աշխատություններ: Նրանցից էր ֆրանսիացի իշխան Գոբինեաուն, որը 19-րդ դարի կեսերին հրատարակել էր մի եռահատոր աշխատություն՝ «Մարդկային ռասաների անհավասարության մասին» վերնագրով: Դրանում նա «հիմնավորում» էր սպիտակ ռասայի գերազանցությունը մարդկային բոլոր մյուս ռասաների հանդեպ և այդ տեսակետից սպիտակների ռասայի ամենացցուն հակադրությունը համարում էր հրեաներին ու ներգրերին: Մարդու ռասայական պատկանելությունը, ըստ, Գոբինեաուի, որոշիչ նշանակություն ուներ նրա, որպես անհատի, ձևավորման հարցում:

Հիտլերի վրա Գոբինեաուից ավելի վճռորոշ ազդեցություն ունեցավ անգլիացի Հ. Ս. Չեմբերլյանը 1899 թ. հրատարակված իր՝ «19-րդ դարի հիմունքները» աշխատությամբ, որը կարճ ժամանակում մեծ տարածում էր ստացել: Այդ գրքում հեղինակը Եվրոպայի պատմությունը համարում էր ռասաների պայքարի պատմություն: Ըստ նրա՝ ռասայական միախառնումն է եղել ինչպես հունական, այնպես էլ հռոմեական մշակույթների անկման պատ-

ճառը: Նա արիների և նրանց շարքում հատկապես գերմանների առաջադրանքն էր համարում իրենց ռասան թերարժեք արյան միախառնումից պաշտպանելը և այդպիսով իրենց վերադաս մշակույթի և տիրապետության ապահովման հիմք ստեղծելը:

Վերոնշյալ հեղինակների անունները ցույց են տալիս, որ միայն Գերմանիայում չէ, որ ռասան որպես բարձրագույն արժեք էր դիտարկվում: Տարբերությունն այն էր, որ նշված հեղինակներն իրենց երկրներում այնպիսի հեղինակություններ չդարձան, ինչպես Գերմանիայում և Ավստրիայում, որտեղ նրանց գրվածքները շարունակ վերահրատարակվում էին, և որոնց գաղափարները Հիտլերի միջոցով դարձան քաղաքական ուղենիշներ:

Հիտլերի վրա մեծ ազդեցություն է գործել նաև անգլիացի հեղինակ Չ. Դարվինի «Տեսակների առաջացումը գոյության պայքարում բնական ընտրության միջոցով» աշխատությունը (1859 թ.): Չնայած Դարվինի տեսակետները վերաբերում էին բացառապես կենդանական աշխարհին, այնուհանդերձ ձևավորվեց մի շարժում՝ սոցիալ-դարվինիզմը, որը դրանք վերագրեց նաև մարդկային հասարակությանը: Ըստ այդմ՝ ինչպես բնության մեջ, մարդկանց մեջ նույնպես տեղի էր ունենում ընտրություն գոյության պայքարի միջոցով: Կենսունակները, այն է՝ ուժեղները և առողջները գոյատևում էին, իսկ տկարները՝ վերանում, ուստի պետությունը պետք է նպատակաուղղված սելեկցիայի միջոցով հոգ տաներ, որպեսզի առողջներն ու ուժեղները բազմանային, իսկ հիվանդներն ու տկարները՝ ոչ: Սոցիալ-դարվինիզմը ծառայեցվում էր թե՛ ռասիստական գաղափարախոսության և թե՛ առհասարակ բռնապետությունների ամրապնդմանը՝ ստեղծելով այն մտայնությունը, թե ով ուժ ուներ՝ ստրկացնելու այլ ժողովուրդների, ուներ դրա համար նաև «բնական իրավունք»:

Գերմանական նացիոնալ-սոցիալիստները սոցիալ-դարվինիզմն իրականացրին դրա հրեշավոր ողջ էությամբ ու ծավալով: Հաշմանդամների և հոգեկան հիվանդների սպանությունը, որ

հիտլերականների կողմից իրագործվեց 1939-1941 թթ., և որին զոհ դարձավ շուրջ 90 000 մարդ, նաև որոշակի խմբերի (հոմոսեքսուալներ, կրկնակի և ավելի գողություն կատարողներ և այլն) ստերջացումն ու ամորձատումը ներկայացվում էին որպես ծառայություն մարդկության զարգացման համար: Բնականաբար, այդ գաղափարախոսության առաջնային թիրախ պետք է դարձվեին նաև հրեաները:

Գյոբելսը, որը 1930 թ.-ից ՆՍԳԲԿ-ի պրոպագանդայի բաժանմունքի ղեկավարն էր, իսկ 1933 թ. դարձավ Գերմանիայի հանրային լուսավորության և պրոպագանդայի նախարարն ու մշակույթի պալատի նախագահը, դեռ 1929 թ. հրատարակված իր «Michael» գրքում հետևյալն էր գրում. «Հրեան իր էությամբ մեզ հետ հակադրություն է կազմում: Ես նրան բնավ չեմ կարող ատել, այլ միայն՝ արհամարհել: Նա մեր ժողովրդին պղծել է, մեր իդեալներն ապականել է, մեր ազգի ուժը կաթվածահար է արել, բարքերը փտեցրել է և բարոյականությունը՝ փչացրել: Նա թարախի պալար է մեր հիվանդ ազգի մարմնի վրա: {…} Կա՛մ նա կկործանի մեզ, կա՛մ մենք նրան կդարձնենք անվնաս: Ուրիշ տարբերակ հնարավոր չէ պատկերացնել» {(166) *101*}:

Հիտլերը նույնպես իր «Իմ պայքարը» գրքում բազմիցս էր մատնանշում այն «վտանգները», որ ներկայացնում էին հրեաները Գերմանիայի և համաշխարհային քաղաքակրթության համար: Նա կոչ էր անում կույր չլինել դրանց հանդեպ և թույլ չտալ, որ հրեաները շարունակեն «պղծել» գերմանական արյունը, ինչի դեպքում, ըստ Հիտլերի, գերմանացիները դադարելու էին լինել մշակութակիր և առաջադիմող ազգ: «Պետք է աչքի առաջ ունենալ այն ավերածությունը,– գրում էր նա,– որը հրեական արյան միախառնումն ամեն օր պատճառում է մեր ժողովրդին, և մտածել, որ արյան այդ թունավորումը մեր ժողովրդի մարմնից միայն դարեր անց կարող է հեռացվել կամ այլևս չի կարող հեռացվել, և շարունակել մտածել, թե ինչպես է այդ ռասայական քայքայումը ջլատում մեր գերմանացի ժողովրդի վերջին արիական արժեքնե-

ը, այնպես որ մեր՝ որպես մշակութակիր ազգի ուժն ակնհայտորեն ավելի և ավելի է նահանջում, և մենք մատնվում ենք այն վտանգին, որ առնվազն մեր մեծ քաղաքներում կհասնենք այն վիճակին, որում Հարավային Իտալիան այսօր արդեն գտնվում է: Մեր արյան այդ ապականումը, որը մեր ժողովրդից հարյուր հազարավորները կուրորեն անտեսում են, հրեայի կողմից, սակայն, այսօր ծրագրված է իրականացվում: Այդ սև մակաբույծները ծրագրված կերպով պղծում են մեր անփորձ, երիտասարդ, շիկահեր աղջիկներին և դրանով ոչնչացնում մի բան, որն այս աշխարհում այլևս չի կարող փոխարինվել» {(112) *629-630*}:

Հրեաները, ըստ Հիտլերի, ոչ միայն գերմանացի ժողովրդի, այլև քաղաքակիրթ մարդկության «մահացու թշնամին» էին: Հրեաների ոչնչացման «հիմնավորմանն» էր ծառայում նաև հիտլերյան վարչակարգի զարգացրած, այսպես կոչված, «թերմարդու» գաղափարը, որի համաձայն՝ ռասայական պատկանելությամբ պայմանավորված հատկանիշներն ունեին կենսաբանական ծագում և, ըստ այդմ, անփոփոխելի էին: Թե ինչպե՞ս էին վարչակարգի տեսաբանները պատկերացնում «թերմարդուն», պարզ է դառնում Հ. Հիմլերի, Յ. Գյոբելսի և Ա. Ռոզենբերգի թելադրանքով ԷսԷս-ի գլխավոր վարչության կողմից 1942 թ. հրատարակված «Թերմարդը» գրքույկում տրված ձևակերպմամբ: Ըստ այդմ՝ «Թերմարդը՝ կենսաբանորեն առերևույթ մարդուն լիովին նման կերպարանք ունեցող այդ էակը, ձեռքերով, ոտքերով և մի տեսակ ուղեղով, աչքերով ու բերանով, իրականում մի բոլորովին այլ, մի սարսափելի արարած է, միայն մի մարդակերպ վիժվածք է՝ մարդուն նման դիմագծերով, մտավորապես և հոգեպես, սակայն, ցանկացած կենդանուց ավելի ցածր մակարդակի վրա: Այդ մարդու ներսում վայրի, անսանձ կրքերի մի դաժան քաոս է, ավերման անասելի ցանկություն, ամենապարզունակ մոլուցքներ, ամենաանթաքույց չարություն: Թերմարդ և ուրիշ ոչինչ: […] Եվ թերմարդկանց այդ թերաշխարհը գտավ իր առաջնորդին՝ հավերժական հրեային» {(166) *75-76*}:

Հիտլերին և նրա կուսակիցներին հաջողվեց հասարակական շրջաններում տիրող հակասեմիտական տրամադրություններն ու գաղափարները արմատականացնել և հրեաներին դարձնել բոլոր չարիքների քավության նոխազ: Նրանք Առաջին աշխարհամարտում Գերմանիայի պարտության պատճառը համարում էին հրեաներին, իսկ Վայմարյան Հանրապետությունն անվանում էին «հրեաների հանրապետություն»: Գերմանական սոցիալ-դեմոկրատիան, ըստ նրանց, վարակված էր հրեաներից, արևմտյան ժողովրդավարություններին իշխում էին հրեաները, և բոլշևիզմն էլ «հրեական հայտնագործություն» էր: Գերմանական նացիոնալ-սոցիալիստական գաղափարախոսության մեջ հրեա ժողովուրդը զբաղեցնում էր այն տեղը, որն ուներ սատանան քրիստոնեական գաղափարախոսությունում՝ որպես աշխարհում բոլոր չարիքների ստեղծող: Նրա դեմ պայքարը, այն է՝ նրա ոչնչացումը համարվում էր կարևորագույն պարտականություն և նախադրյալ երջանիկ աշխարհի կառուցման համար:

Ռասիզմը, այսպիսով, հիտլերյան գաղափարական հայեցակարգի երեք կարևոր սյուներից մեկն էր՝ որևէ սահմանափակում չունեցող նացիոնալիզմի և միլիտարիզմի հետ միասին:

Հայերը գերմանական նացիոնալ-սոցիալիզմի ռասիստական հայեցակարգում

1933 թ. գերմանական զանգվածային լրատվամիջոցներում ի հայտ եկավ հրեաների և հայերի ռասայական նույնականության կեղծ տեսակետը: Եթե դա պաշտոնականացվեր, ապա ինչպես Գերմանիայում, այնպես էլ նրա գրաված երկրներում հայերն ունենալու էին նույն աղետալի ճակատագիրը, ինչ հրեաները: Ի պաշտպանություն հիշյալ տեսակետի՝ վկայակոչվում էին զանազան «ընդհանուր հատկանիշներ», առաջին հերթին՝ երկու ժողովուրդների անցած պատմական տառապալից ուղին և նրանց ձևավորած մեծ սփյուռքների հանգամանքը:

Չնայած դր. Յոհաննես Լեփսիուսը 1926 թ. մահացել էր, բայց նրա հիմնած կազմակերպությունները՝ Գերմանական արևելյան առաքելությունը և Գերմանա-հայկական ընկերությունը, այդ ժամանակ կային և շարունակում էին գործել: Նրանք ծավալեցին հետևողական հակաքարոզչություն՝ հիմնովին հերքելով վերոնշյալ կեղծ թեզը և պահանջելով հայերին դասել արիական ժողովուրդների շարքում: «Այն պնդումը, թե հայերը հրեաներ են, կեղծիք է,– նշված էր նրանց հրապարակումներից մեկում:– Եթե նման պնդումների հեղինակները բացեին մի հանրագիտարան, կտեսնեին հակառակը, այն, որ {…} հայերը պատմության մեջ հնագույն քրիստոնեական ժողովուրդն են: Նաև ռասայական առումով հայերը ոչ մի կապ չունեն հրեաների հետ, քանի որ նրանք սեմիտներ չեն, այլ հնդգերմաններ: Նրանց լեզուն նույնպես հնդգերմանական ճյուղ է: Մենք խնդրում ենք մեր բարեկամներին ամենուր պայքարել այդ պատմական կեղծիքի դեմ, թե հայերին պետք է դասել սեմիտների շարքում: Հայ ժողովուրդը գերմանացի ժողովրդի հետ դարեր շարունակ ունեցել է ամենաարժեքավոր մշակութային կապերը, իր ազգային եկեղեցու հետ միասին բազմադարյան պայքարի միջոցով պահպանել է իր քրիստոնեությունը: Ով պաշտպանում է այդ թյուր պնդումը, դրսևորում է պատմության անբավարար իմացություն և ստորացնում մի ժողովրդի, որը դեռ համաշխարհային պատմական առաքելություն ունի Արևելքի ապագայի համար» {(30) *463*}:

Երկու կազմակերպությունների պարբերականներում հրատարակվում էին ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմական անցյալի և ազգաբանական, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ, որոնցով հիմնավորվում էր նրա պատկանելությունը արիական ռասային: Զուգահեռաբար վկայակոչվում էին անցյալի նշանավոր գիտնականների՝ Կ. Ֆ. Նոյմանի, Հ. Հյուբշմանի, Յ. Մարքվարտի և այլոց հետազոտություններն ու տեսակետները հայերի մասին:

Ամիսներ շարունակվող այդ գրապայքարը, որում ներգրավվեցին նաև գիտական, կրոնական և քաղաքական այնպիսի մեծ հեղինակություններ, ինչպիսիք էին Կարլ Ֆրիդրիխ Լեհման Հաուպտը, Պաուլ Ռոհրբախը. Յուլիուս Ռիխտերը, Սաքսոնիայի դուքս ֆոն Մաքսը, Յոհան Ֆոն Լերսը և այլք, հասավ իր ցանկալի նպատակին: Գերմանական լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնականությունը պնդող քարոզարշավը դադարեց: 1933 թ. հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարար Վիլհելմ Ֆրիկի հրապարակած դեկրետով հայերը, «մասնագիտական ծառայության վերականգնման օրենքին համապատասխան», դասվեցին արիական ժողովուրդների շարքում՝ այդպիսով ապահովագրվելով ոչ միայն բնաջնջման սպառնալիքից, այլև պաշտոնավարման ու այլ իրավունքների սահմանափակման օրենքներից {(154) *51*}:

Այդ հաղթանակը մշտապես ամրակայելու և հետագայում նոր շահարկումների հնարավորությունը բացառելու նպատակով հայ ժողովրդի գերմանացի բարեկամները Արտաշես Աբեղյանի հետ միասին 1934 թ. հրատարակեցին նաև «Armeniertum-Ariertum» (Հայկականություն-արիականություն») գիրքը, որը բաղկացած էր 10 ծավալուն հոդվածներից: Դրանց հեղինակները՝ Հ. Շայդերը, Է. Շթիրը, Պ. Ռոհրբախը, Ռ. Շեֆերը. Յ. Ստրժիգովսկին, Կ. Ռոթը, Յ. ֆոն Լերսը, ֆոն Մաքսը, Ա. Աբեղյանը և Գ. Կլինգեն, օգտագործելով ժամանակի գիտագաղափարական գործիքակազմը, տարբեր տեսանկյուններից հիմնավորում էին հայերի արիական պատկանելությունը {(85)}:

Հիտլերյան վարչակարգի քաղաքականությունը հրեաների հանդեպ մինչև աշխարհամարտի բռնկումը

Նյուրնբերգյան օրենքները

Հիտլերյան վարչակարգը սկզբից նեթ որդեգրեց հրեաներին հասարակական կյանքից մեկուսացնելու և նրանց հանդեպ տա-

ռատեսակ հետապնդումների քաղաքականություն: 1933 թ. փետրվարի վերջից ԷսԱ-ի ջոկատները սկսեցին հակահրեական գործողություններ իրականացնել, որոնց ընթացքում հրեապատկան խանութները կողոպտվում էին, իսկ դրանց տերերը ենթարկվում էին ծեծի ու խոշտանգումների: Արտերկրից այդ գործողությունների դեմ ի հայտ եկող ուժգին քննադատությունն ու բողոքները, որոնք Գերմանիայի պաշտոնական պրոպագանդայի կողմից բնորոշվում էին որպես հրեական սադրիչ գործողություններ, ավելի էին սաստկացնում հիտլերականների՝ հետապնդման մոլուցքը: Գյոբելսը զարգացրեց այն թեզը, թե արտերկրի հրեաներն ավելի զուսպ կդառնան, եթե Գերմանիայի իրենց «ռասայակիցների» «օձիքը» սեղմվի, և նրանք պատանդի կարգավիճակում լինեն: Ըստ այդմ՝ մոլի հակասեմիտական Յուլիուս Շտրայխերի ղեկավարությամբ կազմավորվեց նաև «Հրեական վայրագությունների և բոյկոտների դեմ պաշտպանության կենտրոնական կոմիտե»՝ տարատեսակ հակահրեական գործողությունները համակարգելու համար: 1933 թ. ապրիլի 1-ին հրեաների խանութների մոտ տեղակայվեցին ԷսԱ-ի պահակակետեր, որոնք հաճախորդներին սպառնալիքներով արգելում էին մտնել այնտեղ: Հիտլերն այդ գործողությունները կառավարությունում արդարացնում էր՝ դրանք անվանելով «պաշտպանական ակցիաներ»: «Այդ պաշտպանությունը պետք է կազմակերպվեր,– ասում էր նա,– քանի որ այլապես պաշտպանությունը ինքնաբերաբար ժողովրդի միջից էր ծավալվելու և հեշտությամբ անցանկալի դրսևորումներ կունենար» {(77) *53*}: Հրեաների դեմ բոյկոտի այդօրինակ գործողությունները, սակայն, երկար չշարունակվեցին այն պատճառով, քանի որ բնակչությունը դրանց մասնակցելու ցանկություն չէր ցուցաբերում:

1933 թ. ապրիլի 7-ին՝ «Պաշտոնեության վերականգնման օրենքի» հրապարակումից հետո, սկսվեցին նաև պետական և հասարակական կյանքից հրեաների ու անցանկալի քաղաքական

գործիչների զտումները, որոնք այդ օրենքով «օրինականացվում» էին: 1933 թ. ապրիլին և մայիսի սկզբին հրապարակվեցին գեղարվեստական, գիտական և այլ գրքերի հեղինակների «սև» ցուցակներ, որոնց շարքում էին Ա. Էնշտեյնը, Զ. Ֆրոյդը, Ֆ. Վերֆելը, Բ. Բրեխտը, Ա. Բեբելը, Է. Բեռնշտայնը, Ս. Ցվայգը, Է. Մ. Ռեմարկը և ուրիշներ: 1933 թ. մայիսի 10-ին Նացիոնալ-սոցիալիստական ուսանողական միության կազմակերպած՝ «Ոչ գերմանական ոգու դեմ» ակցիայի շրջանակում նրանց գրքերը ցուցադրաբար հրկիզվեցին երկրի բոլոր գլխավոր և համալսարանական քաղաքների հրապարակներում:

1933 թ. ապրիլին աշխատանքից հեռացվեցին պետական համակարգի «ոչ արիական» պաշտոնյաները, իսկ սեպտեմբերին մշակութային կյանքից մեկուսացվեցին հրեա արվեստագետներն ու մշակույթի գործիչները: 1935 թ. մայիսին հրեաները հեռացվեցին նաև զինված ուժերից: Այդ ամենն «օրինականացվում» էր համապատասխան օրենքների ընդունումով: Դրանց շարքում, սակայն, հիմնարար և ուղենշային դեր ունեցան, մասնավորապես, հիտլերյան կուսակցության՝ Նյուրնբերգում տեղի ունեցող ամենամյա համագումարի ժամանակ՝ 1935 թ. սեպտեմբերի 15-ին, ռայխսթագի ընդունած երկու օրենքներ, որոնք հետագայում ստացան «Նյուրնբերգյան օրենքներ» անվանումը: Դրանցից մեկի՝ «Ռայխի քաղաքացիության մասին» օրենքի համաձայն՝ հրեաները հայտարարվեցին երկրորդ կարգի քաղաքացիներ, իսկ լիարժեք քաղաքացիներ էին համարվում միայն գերմանական և գերմանականին ցեղակից արյուն ունեցողները: Այդպիսով ոտնահարվում էր օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, և միաժամանակ հիմք էր ստեղծվում «երկրորդ կարգի քաղաքացիների» իրավունքների սահմանափակման, ընդհուպ երկրից նրանց վտարման համար:

Երկրորդ՝ «Գերմանական արյան և գերմանական պատվի պաշտպանության օրենքով» արգելվում էին գերմանական և գեր-

մանականին ցեղակից արյուն ունեցողների ու հրեաների ամուսնությունները: Հակառակ պարագայում դրանք հայտարարվում էին անվավեր, նաև՝ եթե դրանք օրենքը շրջանցելու համար արտերկրում կատարվեին: Ավելին, արգելվում էին նաև արտաամուսնական սեռական հարաբերությունները նշված խմբերի միջև:

Պետության կողմից նման դաժան կերպով մարդկանց անձնական հարաբերություններ ներխուժելը պետք է որ մեծ ընդդիմության հանդիպեր հասարակության և եկեղեցիների կողմից: Այն, որ դա տեղի չունեցավ, փաստում էր, որ նացիոնալ-սոցիալիստական պրոպագանդան երկու տարում կարողացել էր մամուլի և ռադիոյի միջոցով իշխել հասարակական կարծիքի վրա և, մյուս կողմից, բավականաչափ բորբոքել ու բևեռացնել հասարակության մեջ առկա հակահրեական տրամադրությունները:

Ռայխսթագի նախագահ Գյորինգն այդ օրենքներն անվանում էր «դարակազմիկ», իսկ Հիտլերին՝ «գերմանական ազգի փրկիչ»՝ հավելելով, որ գերմանական ազգն իրեն «այժմ ուժեղ և երջանիկ է զգում» {(66) *136*}: Համաշխարհային մամուլում, սակայն, այդ օրենքները խիստ բացասական արձագանք ստացան:

Հրեաների մեկուսացումը հասարակական կյանքից

Նյուրնբերգյան օրենքների ընդունումից հետո էլ ավելի ուժգնացան հրեաների հետապնդումները: 1938 թ. սեպտեմբերին աշխատանքից զրկվեցին հրեա բժիշկներն ու փաստաբանները: 1936 թ. ուստարում ուսուցչական կազմի և դպրոցականների «ռասայական համապատասխանությունն» ապահովելու և երեխաների նացիոնալ-սոցիալիստական դաստիարակությունն անխոչընդոտ իրականացնելու համար դպրոցներում մեկուսացվեցին նաև հրեա դպրոցականները՝ զրկվելով «լիարժեք» քաղաքացիություն ունեցող ընտանիքների երեխաների հետ ուսանելու իրավունքից: 1938 թ. դեկտեմբերին նույնը տեղի ունեցավ նաև մանկապարտեզների երեխաների և բուհերի հրեա ուսանողների հետ:

1933-1939 թթ. մոտ 250 օրենսդրական և այլ կանոնակարգումներով հրեաները մեկուսացվել էին մասնագիտական գործունեության գրեթե բոլոր բնագավառներից: Նրանց համար ժամանակավորապես «բաց» թողնվեցին միայն տնտեսության, առևտրի և արհեստագործության ոլորտները, չնայած դրանցում էլ էին նրանք գեստապոյի կողմից կամայական հետապնդումների ենթարկվում: 1938 թ. հոկտեմբերին հրեաների անձնագրերում ամրագրվեց «J» տառը՝ որպես նրանց ազգային պատկանելության վկայություն: Նույն տարվա դեկտեմբերին հրեաներից խլվեցին նրանց վարորդական իրավունքի փաստաթղթերը: Էապես սահմանափակվեց նաև հասարակական վայրերից, այդ թվում՝ բաղնիքներից օգտվելու նրանց իրավունքը: Ժամանցային վայրերի, զբոսայգիների, հյուրանոցների և հասարակական այլ վայրերի ու հաստատությունների մուտքերի մոտ տեղադրվում էին հրեաների մուտքն արգելող ցուցանակներ:

Այդ ամենին զուգահեռ ուժգնանում էր նաև հրեաների արտագաղթը Գերմանիայից: 1933-1941 թթ. երկրից հեռացան մոտ 300 000 հրեաներ: Նրանց թվում էին տարբեր բնագավառներում համաշխարհային համբավ վայելող մարդիկ, զորօրինակ՝ ֆիզիկոս, նոբելյան մրցանակի դափնեկիր Ա. Էնշտեյնը, բժիշկ և հոգեթերապևտ, հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրոյդը, բանաստեղծ Ա. Դյոբլինը, դիրիժոր Օ. Կլեմպերերը, աստվածաբանության պրոֆեսոր Մ. Բուբերը և այլք {(66) *138-139*}:

Հրեաների իրավունքները սահմանափակող օրենքներն անհապաղ գործադրության մեջ դրվեցին նաև Ավստրիայում ու մյուս տարածքներում, որոնք բռնակցվեցին Գերմանիային: Նյուրնբերգյան օրենքների հրապարակումից հետո լայն թափ առավ հրեաների հանդեպ հասարակական ատելությունը բևեռացնելուն ուղղված քարոզչությունը, որը տեղի էր ունենում տարբեր եղանակներով: Այդ նպատակով հրատարակվում և հանրային շրջաններում տարածվում էին զանազան գրքեր և այլ տպագիր նյութեր:

Հիմլերը 1936 թ. հրամայեց Գերմանիայում մեծ տպաքանակով լույս ընծայել պատմաբան և էսէական Վ. Լյուկի հեղինակած՝ «Հրեաների ծիսական սպանությունները» գիրքը, որը բաժանվեց Էսէս-ի բոլոր անձնակազմերին: Հակասեմիտական տրամադրությունները Գերմանիայում և արտերկրում առավել արմատականացնելու համար նա նաև հանձնարարեց տեղական լրատվամիջոցներում երեխաների կորչելուն վերաբերող լուրերի հրապարակման ժամանակ հայտարարել, որ հավանաբար բանը վերաբերում է հրեաների կատարած «ծիսական սպանության»:

«Գաղափարական» քարոզչության հետ մեկտեղ օգտագործվում էին նաև հրեաների վարկաբեկման ու նվաստացման տարբեր մեթոդներ: „Stürmer” թերթը, օրինակ, վճարում էր հրեաներին նվաստացնող անեկդոտներ և ասույթներ իրեն տրամադրելու համար: Այդ և այլ պարբերականների էջերում դատապարտիչ հրապարակումներ էին կատարվում նաև այն գերմանացիների վերաբերյալ, որոնք շարունակում էին որևէ հրեայի հետ կապ պահպանել: «Հայլիգբրունցի երիտասարդ ուսուցուհի Մարիա Ծմիդտը,– տեղեկացնում էր, օրինակ, «Stürmer»-ը,– 1939 թ. ապրիլի 13-ին Գյուսինգի մի փողոցում հրապարակայնորեն համբուրեց իր՝ լիովին հրեա քենուն» {(66) *146-147*}:

Նման հրապարակումների, ինչպես և առհասարակ զրպարտությունների հիման վրա տեղի էին ունենում նաև կամայական քրեական հետապնդումներ անմեղ մարդկանց նկատմամբ:

Բյուրեղապակյա գիշերը

1938 թ.աշնանը տեղի ունեցավ մի իրադարձություն, որը հիտլերականների համար դարձավ պատրվակ հրեաների հետապնդումներն առավել համակարգված և դաժան կերպով շարունակելու համար: Նախկինում Լեհաստանից ներգաղթած և Հանովերում բնակվող՝ ընդհանուր թվով 484 հրեաները 1938 թ. հոկտեմբերի 27-ին իրենց բնակարաններից դուրս բերվեցին և տարվեցին քաղա-

քապետարան, որտեղ նրանց ծանուցվեց անհապաղ արտաքսման հրամանը: Այդ մարդկանց թվում էր Փարիզում գտնվող մի պատանու՝ Հերշել Գրինցշպանի ընտանիքը: Նրանց բոլորին նույն օրը տարան լեհական սահմանի մոտ, և քանի որ Լեհաստանի իշխանությունները սկզբում հրաժարվեցին նրանց ընդունել, այդ մարդիկ ողջ ցուրտ գիշերը լուսացրին քաղցած՝ բաց երկնքի տակ, իսկ առավոտյան էսէսականները նրանց, ինչպես անասունների, քշեցին սահմանից այն կողմ:

Հերշելի քույրը՝ Բերտա Գրինցշպանը, մի նամակ է ուղարկում եղբորը՝ պատմելով կատարվածի և ընտանիքի ծանր դրության մասին: «Մեզ չթույլատրեցին վերադառնալ տուն,– գրում էր նա:– Ես աղաչեցի, որ գոնե թույլ տան՝ մի քանի իրեր բերեմ: Այնուհետև ես մի ոստիկանի ուղեկցությամբ գնացի տուն և ամենաանհրաժեշտ հագուստները փաթեթավորեցի մի ճամպրուկի մեջ: Դա այն ամենն է, ինչ ես փրկել եմ: Մենք ոչ մի պֆեննիգ չունենք» {(108) *103-104*}: Ստանալով այդ նամակը՝ Հերշելը, որը Փարիզում հորեղբոր մոտ էր ապրում, նրանից դրամ է վերցնում, ձեռք է բերում մի ատրճանակ և գնում է Փարիզի գերմանական դեսպանատուն: Այնտեղ նրան ընդունում է դեսպանության քարտուղար Էռնստ ֆոն Ռաթը, որին նա «Գերմանիայում հետապնդվող հրեաների անունից» տեղում գնդակահարում է:

Այդ դեպքը մոլեգին զայրույթով ընդունվեց հիտլերյան վարչակարգի կողմից, և գործադրվեցին պրոպագանդայի բոլոր միջոցներն այն ուռճացնելու և որպես Գերմանիայի դեմ հրեական դավադրության փորձ ներկայացնելու համար: Լրատվամիջոցները հեղեղված էին «Համաշխարհային հրեականությունը պատերազմ է հայտարարում Գերմանիային», «Մեր համբերությունը սպառված է», «Անմեղ դիվանագետի սպանությունը» և նման այլ խորագրեր ունեցող հրապարակումներով:

Միաժամանակ հիտլերյան կուսակցությունը և էսէս-ը ծրագրում էին պատժիչ գործողություններ, որոնք տեղի ունեցան 1938 թ. նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը:

Գեստապոյի ղեկավար Մյուլլերը նոյեմբերի 9-ին մի հեռագիր ուղարկեց բոլոր ոստիկանական բաժանմունքներին՝ նրանց տեղեկացնելով հրեաների ու հրեական սինագոգների դեմ ծրագրված ակցիաների մասին, որոնք չպետք է խոչընդոտվեին: Միաժամանակ ծանուցվում էր, որ այդ ընթացքում պետք է ձերբակալվեին 20 000 – 30 000 հրեաներ՝ նախապատվություն տալով ունևորներին, իսկ եթե ակցիաների ժամանակ զինված հրեաներ հանդիպեին, ապա ոստիկանությունը կարող էր նրանց դեմ ամենակտրուկ միջոցներն իրականացնել:

«Ակցիաները», որոնք կուսակցության, ԷսԱ-ի ու ԷսԷս-ի հրահանգներով նույն գիշեր ծավալվեցին Գերմանիայի բոլոր քաղաքներում ու համեմատաբար մեծ համայնքներում, պաշտոնապես ներկայացվում էին որպես Է. ֆոն Ռաթի սպանության պատճառով գերմանացի ժողովրդին համակած զայրույթի տարերային դրսևորում: Կողոպտվեցին, պղծվեցին և հրկիզվեցին Գերմանիայում գտնվող գրեթե բոլոր սինագոգներն ու այլ աղոթատները՝ թվով 267: Թալանվեցին և ավերվեցին նաև հրեապատկան հազարավոր հանրախանութներ, կրպակներ, արհեստանոցներ ու այլ հաստատություններ: «Ժողովրդական արդարադատություն» հորջորջված լինչի դատաստանին զոհ դարձավ 91 մարդ: Բացի այդ՝ ձերբակալվեցին և բանտեր ու համակենտրոնացման ճամբարներ ուղարկվեցին 26 000 հրեաներ: Պղծվեցին նաև հրեական բազմաթիվ գերեզմանատներ: «Ձերբակալությունները կատարվում էին՝ առանց տարիքը հաշվի առնելու,– գրում էր ժամանակակիցը:– Տասը տարեկան տղաների կողքին կային 70-80 տարեկան ծերեր: Դեռ Վայմարի կայարանից Բուխենվալդ ընկած ճանապարհին բոլոր ետ մնացողները գնդակահարվեցին: Վերապրողները ստիպված էին հաճախ արյունաթաթախ դիերն իրենց հետ տանել ճամբար: Դարպասի մոտ {…} կանգնած էին պարետները և երկաթե մտրակներով, ճիպոտներով ու մահակներով հարվածում էին մարդկանց, այնպես որ տառացիորեն յուրաքանչյուր նորեկ

հրեա վերքեր ուներ: Ինչ այդ ժամանակ ճամբարում կատարվեց, հնարավոր չէ մի քանի բառով նկարագրել: Միայն հիշատակենք, որ հենց առաջին գիշերը 68 հրեաներ խելագարվեցին, և (Էսէս-ի ղեկավար) Զոմմերի կողմից, ինչպես խելառ շներ, շարունակ (չորսական հոգով) ծեծվելով, սպանվեցին» {(120) *162-163*}:

«Բյուրեղապակյա գիշերից» հետո, որն այդպես կոչվեց ամենուր թափված՝ փշրված ապակիների պատճառով, ավելի լայն ընթացք ստացավ հրեաների արտագաղթը Գերմանիայից: 1939 թ.-ից մինչև 1941 թ. հոկտեմբերի 23-ը, երբ հրեաներին արգելվեց երկրից հեռանալ, Գերմանիայից արտագաղթեցին ևս 170 000 հրեաներ՝ մատնվելով ծանր զրկանքների: Իսկ 1933 թ. իշխանության զավթումից հետո մինչև նշված օրը արտագաղթած հրեաների թիվը հասնում էր 537 000-ի:

Արտագաղթողների թվի աճին զուգահեռ նվազում էր նրանց ընդունելու ցանկությունը այլ երկրներում, այնպես որ շատերի համար մեծ դժվարություն էր գտնել մի երկիր, ուր կարող էին գնալ:

Գերմանական կառավարությունը ստիպեց հրեաներին 1 միլիարդ մարկ վճարել պետական գանձարան որպես հատուցում ֆոն Ռաթի սպանության համար: Բացի այդ՝ նրանց պարտադրվեց հատուցել «բյուրեղապակյա» գիշերվա ընթացքում ավերված և վնասված՝ հասարակական նշանակություն ունեցող շինությունների վերականգնման ծախսերը: Կատարելագործվեցին նաև հրեաների «օրինական» կողոպտման մեթոդները: 1938 թ.-ից Գերմանիայից արտագաղթող հրեաները պարտավոր էին իրենց անշարժ ունեցվածքի կեսը հանձնել պետությանը, իսկ 1939 թ. հունվարի 17-ին հրեապատկան ձեռնարկություններն ու հաստատությունները հարկադրաբար «արիականացվեցին», այսինքն՝ հրեա գործարարները, արհեստագործները, բժիշկները, փաստաբանները, ֆերմերները և այլք սեփականազրկվեցին: Նրանց սեփականության վրա նախ արգելանք դրվեց, իսկ հետո այն բռնագրավվեց որպես «պետական ունեցվածք» {(66) *145*}:

Համակենտրոնացման ճամբարներում

Դեռ 1933 թ. փետրվարի 28-ին նախագահ Հինդենբուրգի վերոնշյալ երկու հրամանագրերով երկրում հաստատվել էր արտակարգ դրություն, որը շարունակվեց մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը: Դա նացիոնալ-սոցիալիստներն օգտագործում էին իրենց հանցագործությունները «լեգիտիմացնելու» համար: Փետրվարի 28-ին կազմվեցին նաև վարչակարգի փաստացի ու ենթադրյալ հակառակորդների «սև ցուցակներ», որոնք միայն կասկածի հիման վրա, առանց դատական գործընթացի, դուրս հանվեցին բնակարաններից և ուղարկվեցին բանտերը: Մի քանի օրում բանտերն արդեն լեփ-լեցուն էին կալանավորներով: Նրանց հարազատներին տեղեկացվում էր, որ դա ժամանակավոր «դաստիարակիչ» կալանք էր, իսկ մարտի 20-ին Հիմլերը, արձագանքելով կալանքի պատճառների վերաբերյալ բանտարկյալների մերձավորների կողմից ոստիկանությանն ուղարկվող բազմաթիվ հարցումներին, հայտարարեց, որ յուրաքանչյուր հարցում մեկ օրով ավելի է երկարեցնում տվյալ անձի կալանքի ժամկետը {(66) *153*}: Հիմլերի այդ ցինիկ հայտարարությունը, ինչպես և բողոքելու դեպքում կալանավորվելու մտավախությունը կաշկանդում էին հրապարակային քննադատության և բողոքի գործողությունների հայտ գալը:

Նացիոնալ-սոցիալիստները ռայխսթագի՝ 1933 թ. հրդեհից անմիջապես հետո ձեռնամուխ եղան համակենտրոնացման ճամբարների ստեղծմանը, որոնք դիտարկվում էին հակառակորդներին մեկուսացնելու, նաև ոչնչացնելու արդյունավետ գործիք: Նախ, այսպես կոչված, «վայրի» ճամբարներ ստեղծվեցին ֆաբրիկաների դատարկ տարածքներում, սպորտային դահլիճներում, ապաստարաններում և այլ՝ նման վայրերում: Դրանք 1933 թ. գարնանը և ամռանը փոխարինվեցին Բուխենվալդում, Զաքսենհաուսում, Ռավենսբրյուկում, Բերգեն-Բելզենում, Օրանիենբուրգում, Գրոս-Ռոզենում, Նոյենգամմեում և այլ վայրերում կառուց-

ված «պատշաճ» համակենտրոնացման ճամբարներով, որոնց առաջնեկը 1933 թ. մարտին Դախաուի մոտ ստեղծված ճամբարն էր:

1933 թ. հուլիսին այդ ճամբարներում էին գտնվում շուրջ 26 000 մարդիկ, որոնց թիվը շարունակ ավելանում էր:

Եթե այդ ճամբարների բնակիչների առաջին «սերունդը» գլխավորապես բաղկացած էր կոմունիստներից, շուտով նրանց միացան սոցիալ-դեմոկրատները և մյուս արգելված կուսակցությունների գործիչները, մտավորականության, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչները, Եհովայի վկաները, միասեռականները, գնչուները, քրեական հանցագործները և, իհարկե, հրեաները:

Ճամբարների կալանավորներն իրենց հագուստի կրծքամասում տարբեր գույներով եռանկյուն նշաններ էին կրում, որոնք հուշում էին, թե տվյալ անձը վերոնշյալ խմբերից որին է պատկանում: Առկա էին շուրջ 20 գույներով այդպիսի տարբերակումներ: Այդ եռանկյուն նշանները փակցվում էին սրտի հատվածում, որպեսզի հարկ եղած դեպքում ծառայեին որպես թիրախ գնդակահարելու համար:

Էսէսականների միջոցով ապահովվում էր Ճամբարների շուրջօրյա վերահսկողությունը: Դրանք շրջափակված էին բետոնե բարձր պարիսպներով, շատ դեպքերում՝ նաև էլեկտրական բարձր լարում ունեցող փշալարերով, որպեսզի բացառվեր կալանավորների փախուստը: Քիչ չէին դեպքերը, երբ կալանավորները գերադասում էին ինքնասպանություն գործել՝ դիպչելով այդ փշալարերին:

Ճամբարների ճակատահատվածում, որպես կանոն, տեղադրված էր «Աշխատանքն ազատություն է բերում» գրությունը, իսկ ճամբարաբնակները լծվում էին տաժանակիր աշխատանքի՝ անբավարար սննդի, հագուստի և աշխատանքային միջոցների պայմաններում: Ճամբարներում առօրեական էին տարատեսակ

նվաստացումները, խոշտանգումներն ու կտտանքները, որոնք հաճախ հասցնում էին մահվան կամ պատճառ էին դառնում ինքնասպանության: Ահա մի վկայություն. «Բերվելուց անմիջապես հետո սկսվում են առաջին խոշտանգումները: Բանտարկյալը գրեթե յուրաքանչյուրից քացիներ ու հարվածներ է ստանում: Այդ ամենը՝ նախքան առհասարակ որևէ հարցաքննություն տեղի կունենար: {…} Այնուհետև նրան տանում են ետնամասում գտնվող սենյակը: Այնտեղ տեղի է ունենում առաջին հարցաքննությունը: Սենյակի պատերին կախված են ամենատարբեր գրություններ, օրինակ՝ «խնդրում ենք՝ հանդարտություն պահպանել», «խնդրում ենք՝ սիրալիր լինել», «այստեղ կարգուկանոն է տիրում» և այլն: Հարցաքննությունը սկսվում է նրանով, որ ԷսԱ-ի մի անդամ սենյակ տանող ճանապարհին, նրա նստատեղին քացիներ տեղալով, կատարում է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը: Սենյակում նա իսկույն ևեթ հարվածներով է ընդունվում բազմաթիվ երիտասարդների կողմից: Եթե հարցաքննությունը ցանկալի արդյունք չի ունենում, ապա այն շարունակվում է ԷսԱ-ականների կողմից «կտտանքների սենյակ» անվանվող խցում» {(66) *152*}:

Խոշտանգումների ամենատարածված եղանակներից էր «ծառակախումը», երբ կալանավորի ձեռքերը թիկունքում պարանով կապում էին իրար և նրան այդ պարանի միջոցով կես ժամից մինչև չորս ժամ տևողությամբ կախում էին որևէ ծառի կամ այլ փայտանյութի վրա ամրացված մեխից: Այդ դեպքում մարմնի ողջ ծանրությունն ընկնում էր ուսահոդերի վրա՝ տեղահանելով դրանք և պատճառելով անասելի ցավեր: Հաճախ այդ կերպ կախվածին միաժամանակ կտտանքի էին ենթարկում՝ ոտքերի, դեմքի և սեռական օրգանների վրա մտրակներով ու մահակներով հարվածներ տեղալով, իսկ երբ զոհերը այդ ամենի հետևանքով ուշագնաց էին լինում, նրանց բերում էին գիտակցության՝ սառը ջուր նրանց վրա լցնելով: Այդ խոշտանգումները շատերին հասցնում էին մահվան,

իսկ նրանք, որոնք վերապրում էին, հետագայում ցմահ պետք է կրեին դրանց հետևանքները:

Ճամբարական առօրյայի բաղկացուցիչն էին նաև տարատեսակ այլ պատիժները, այդ թվում՝ մահապատիժը կախելու կամ գնդակահարելու միջոցով: Հիմլերը, Հայդրիխն ու նրանց օգնականները, այդպիսով, զարգացրին մի համակարգ, որի համար միանգամայն բնութագրական էր Գյորինգի՝ դեռևս 1933 թ. մարտի 3-ին կատարած հետևյալ հրապարակային հայտարարությունը. «Ժողովրդակիցնե՛ր, իմ միջոցառումները ինչ-որ իրավաբանական նկատառումներով չեն թուլանա: Իմ միջոցառումները չեն թուլանա ինչ-որ վարչարարության պատճառով: Ես արդարադատության համար չէ, որ այստեղ եմ, այլ ոչնչացնելու և բնաջնջելու համար: Ուրիշ ոչինչ» {(77) *34*, (239)}:

Հրեաների դրությունը Գերմանիայում և «հրեական հարցը» 1939-1941 թթ.

1939 թ. հունվարի 30-ին ռայխսթագի առջև իր ելույթում Հիտլերը հայտարարեց պատերազմի բռնկման դեպքում «հրեական ռասային» ոչնչացնելու իր մտադրության մասին: Զանգվածային ոչնչացման՝ հիտլերյան վարչակարգի ծրագրերը միայն ռասիստական «հիմքեր» չունեին, որոնցով պատճառաբանվում էր հրեաների, գնչուների և սեամորթների վերացման անհրաժեշտությունը: Ոչնչացման մեքենան կարող էր գործել նաև ռազմական դրդապատճառներով, հատկապես եթե խոսքը վերաբերում էր Գերմանիայի նոր «կենսատարածքի» ձեռքբերմանը:

Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբերգում բարձրաստիճան սպայակույտի առջև ունեցած իր ճառում, հավաստելով այդ հարցում իր վճռականությունը, նաև այն համոզումն էր հայտնում, որ «հակառակորդի ֆիզիկական ոչնչացումը» միջազգային հանրության շրջանում արագ մոռացության կմատնվի: Նա, ընդսմին, փորձում էր դա հիմնավորել՝ վկայակոչելով հայերի

հետ կատարվածը. «Այսպիսով ես,– հայտարարեց նա,– առայժմ միայն արևելքում, իմ՝ Մեռած գլուխների զորամասերին պատրաստության վիճակի եմ բերել՝ լեհական ծագման և լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին անողոք և անխնա կերպով մահվան ուղարկելու հրամանով: Մենք միայն այդպես կարող ենք ձեռք բերել կենսատարածքը, որի կարիքն ունենք: Ո՞վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին» {(119) *185*}:

1939 թ. սեպտեմբերի 1-ին՝ Աշխարհամարտի բռնկման օրը, Գերմանիայի կառավարությունը հրեաներին արգելեց ժամը 20-ից հետո փողոցներում մնալ: 1939 թ. հոկտեմբերի վերջին հրեաներին խստորեն պարտադրվեց իրենց հագուստների վրա պարզ տեսանելի կերպով կրել հրեական դեղին աստղի նշանը: 1940 թ. հուլիսից հրեաները կարող էին առևտուր անել միայն մեկ ժամ՝ 16.00-17.00-ը: Նրանք պարտավորվեցին նաև իշխանություններին հանձնել իրենց ռադիոսարքավորումները, ձայնարկիչները, ձայնապնակները, էլեկտրական սարքերը, գրամեքենաները, հեծանիվները, հաշվիչները, օպտիկական սարքերը, ֆոտոապարատները, հեռադիտակները, ջեռուցվող բարձերը, փոշեկուլները, արդուկները և այլն: Հրեաները զրկվեցին նաև հեռախոսներ օգտագործելու, ոչ հրեա վարսավիրների ծառայություններից օգտվելու և այլ իրավունքներից:

Հիտլերյան կառավարությունն ինչպես Աշխարհամարտից առաջ, այնպես էլ դրա բռնկումից հետո դեռ որոշ ժամանակ չուներ «հրեական հարցի» լուծման հստակ ծրագիր: 1940 թ. գարնանը ՊԱԳՎ-ն և ԱԳՆ-ն քննարկում էին, այսպես կոչված, «Մադագասկարի պլանը»: 1940 թ. հունիսի 24-ին արտգործնախարար Յոախիմ ֆոն Ռիբենտրոպին ուղարկված գրությամբ Ռ. Հայդրիխն առաջարկում էր Գերմանիայի իշխանության տակ գտնվող բոլոր հրեաներին տեղափոխել Մադագասկար կղզի, որն այն ժամանակ Ֆրանսիայի գաղութն էր: Ընդ որում՝ այդ գաղափարը նրանը չէր և դեռ 19-րդ դարից քննարկվում էր հակասեմիտական

գրականության մեջ: Մադագասկարի պլանն այլ բան չէր նշանակում, քան այդ կղզին վերածել մի մեծ գետոյի, որն այնուհետև կդառնար իր հրեա բնակիչների գերեզմանոցը:

Հայդրիխն այդ ծրագրի մանրամասների մշակումը հանձնարարեց ՊԱԳՎ-ի Հրեական բաժանմունքի ղեկավար Ադոլֆ Այխմանին: 1940 թ. օգոստոսի կեսին արտգործնախարարությունը ՊԱԳՎ-ից ստացավ այդ ծրագրի ամբողջական նկարագրությունը: Ինչպես նշված էր դրանում, քանի որ «գաղթեցման միջոցով հրեական հարցի լուծումը» Եվրոպայի ներսում հնարավոր չէր, «այլ ժողովուրդների տեսական շփումը հրեաների հետ կանխելու համար պետք է անվերապահ գերադասություն տրվեր «կղզիական բնույթի անդրծովյան լուծմանը» {(240)}: Քանի որ, սակայն, Մադագասկարի պլանի իրականացման կարևոր նախադրյալ էր Մեծ Բրիտանիային հաղթելը, իսկ վերջինիս նավատորմն այդ ժամանակ շատ ուժեղ էր, այն համարվեց ոչ իրագործելի: 1940 թ. սեպտեմբերին այդ ծրագրի վերաբերյալ աշխատանքները դադարեցվեցին:

Լեհաստանի գրավումից հետո հիտլերյան կառավարությունն այդ երկրի հյուսիսային և արևելյան շրջանները բռնակցեց Գերմանիային: Մյուս շրջաններում 1939 թ. հոկտեմբերի 26-ին հիմնվեց «Գրավյալ լեհական տարածքների գլխավոր նահանգապետությունը», որը 1940 թ. հուլիսի 31-ին վերանվանվեց «Գլխավոր նահանգապետություն»: Սկզբնապես այն ընդգրկում էր 96.000 կմ^2 տարածք և բաժանված էր չորս վարչական շրջանների՝ Վարշավայի, Ռադոմի, Լուբլինի և Կրակովի: ԽՍՀՄ-ի վրա հարձակումից հետո դրանց ավելացավ ևս մեկը՝ Գալիցիայի շրջանը, իսկ տարածքը կազմեց 145.000 կմ^2: Գլխավոր նահանգապետության մայրաքաղաքն էր Կրակովը, որը նաև գլխավոր նահանգապետ Հանս Ֆրանկի նստավայրն էր:

Գլխավոր նահանգապետությունը դարձավ հրեաների և գնչուների բնաջնջման գլխավոր ենթակառուցվածքը՝ այդ հար-

ցում ունենալով առանցքային դերակատարություն: Հիտլերյան կառավարության կողմից պատերազմի բռնկումից դեռ ամիսներ առաջ՝ 1939 թ. հուլիսի 4-ին, կայացվել էր որոշում հրեական ռասային պատկանող բոլոր անձանց համակենտրոնացնելու մասին: Դա տեղի էր ունենում գետոների ստեղծման միջոցով, որոնց փորձառությունը կար դեռ միջնադարյան Եվրոպայում՝ որպես հրեաներին հասարակական կյանքից մեկուսացնելու միջոց: 1939 թ. սեպտեմբերի 21-ին Էսէս-ի ՊԱԳՎ-ի պետ Հայդրիխը վավերացրեց Լեհաստանի հրեաներին գետոացնելու որոշումը, որի գործադրումը սկսվեց 1940 թ. ապրիլից: Գետոները ցանկապատերով կամ պարիսպներով արտաքին աշխարհից լիովին մեկուսացված թաղամասեր էին, որոնցում կենտրոնացվում էր հրեա բնակչությունը:

Առաջին գետոն, որը հիմնվեց Լոձ քաղաքում, ուներ շուրջ 160 000 բնակչություն: Գետոներ ստեղծվեցին նաև Կրակովում, Լուբլինում, Կիլցեում, Վարշավայում, Չենստոխայում, Ռադոմում, Ռիգայում, Մինսկում և այլ վայրերում: Դրանց շարքում ամենամեծը 1940 թ. հոկտեմբերի 16-ից գործող՝ Վարշավայի գետոն էր:

Հիտլերականները հրեաներին գետոյավորելու ճանապարհով լուծում էին երկու գլխավոր խնդիր. նախ՝ վերջիններս լիովին իշխանությունների վերահսկողության տակ էին հայտնվում, և երկրորդ, այդ կերպ դյուրանում էր նրանց ավելի ուշ «վերաբնակեցնելու», այսինքն՝ զանգվածային ոչնչացման ճամբարներ փոխադրելու գործը:

Գետոները ծառայում էին ոչ միայն Լեհաստանի (ԽՍՀՄ-ից հետո Լեհաստանը հրեա բնակչության մեծամասնությամբ աշխարհում երկրորդ երկիրն էր) և Խորհրդային Միության գրավյալ շրջանների, այլև Գլխավոր նահանգապետություն «էվակուացվող» եվրոպաբնակ հրեաների ժամանակավոր մեկուսացման համար: Նացիստական իշխանությունները յուրաքանչյուր գետոյի բնակչության վրա իրենց վերահսկողությունն ապահովում էին

դրա ներկայացուցիչներից կազմված, այսպես կոչված, «հրեական խորհուրդի» միջոցով: Վերջինիս անդամները, պատասխանատվություն կրելով իշխանությունների հրահանգները գետոյի բնակիչներին փոխանցելու և դրանց կատարումը հսկելու համար, նույնիսկ չնչին զանցառության կամ թերացման դեպքում խիստ պատիժների էին ենթարկվում: Եթե նկատի առնվի, որ այդ խորհուրդներն իրենց գործառույթների բերումով հարուցում էին նաև գետոյի բնակչության թշնամանքն ու անվստահությունը, ապա պարզ կլինի, թե որքան դժվարին էր նրանց դրությունը:

Հրեաներն իրավունք չունեին դուրս գալու գետոներից: Դա տեղի էր ունենում միայն այն ժամանակ, երբ նրանց տանում էին հարկադիր աշխատանքի: Լեհ, գերմանացի կամ այլազգի քաղաքացիական անձինք իրավունք չունեին մտնելու գետոներ: Դրանց բնակչության դրությունը չափազանց ծանր էր՝ մի կողմից հսկիչ ոստիկանների բռնությունների և կամայականությունների, մյուս կողմից տիրող պայմանների հետևանքով: Հսկիչները մեծ մասամբ էսէսականներ էին:

Գետոները, որպես կանոն, գերբնակեցված էին, և դրանց տարածքը բնակչության համեմատ չափազանց փոքր էր: Վարշավայի գետոն, օրինակ, ուներ մոտ չորս քառակուսի կիլոմետր տարածք, մինչդեռ դրա բնակչության թվաքանակը 1940 թ. նոյեմբերից հասնում էր շուրջ կես միլիոնի: Թերսնման, անբավարար հիգիենիկ պայմանների, սաստիկ ցրտի, հիվանդությունների և համաճարակների հետևանքով մահացությունը մեծ չափերի էր հասնում: Անասելի թշվառությունը և դրության անհուսալիությունը նաև բարոյալքում էին մարդկանց, հարկադրում զբաղվել գողությամբ, խաբեություններով և մուրացկանությամբ: Ամեն օր գետոների փողոցներից հավաքվում և սայլերով դուրս էին տարվում մեծ քանակությամբ դիեր, իսկ նրանք, ովքեր կարողանում էին դիմակայել գետոներում տիրող զրկանքներին, ավելի ուշ պետք է ոչնչանային մահվան ճամբարներում {(67) *214-216*}:

Նահանգապետության տարածքում՝ Բելժեցում, Աուշվից-Բիրկենաուում, Սոբիբորում, Թրիբլանկայում, Մայդանեկում և Խելմնոյում, հիմնվեցին նաև համակենտրոնացման ճամբարներ, որոնք շուտով պետք է ծառայեին որպես ոչնչացման գլխավոր վայրեր:

Դեռ 1939 թ.-ից տեղի էին ունենում դեպի Լեհաստան եվրոպաբնակ հրեաների վտարման գործողություններ, որոնք սկզբնապես տարերային բնույթ էին կրում: 1939 թ. հոկտեմբերի 12-ին սկսվեց Ավստրիայի որոշ շրջաններում, նաև Բոհեմիայի և Մորավիայի պրոտեկտորատում բնակվող հրեաների աքսորումը Լեհաստան, որտեղ նրանք արգելափակվում էին գետոներում և համակենտրոնացման ճամբարներում: 1940 թ. փետրվարին Մայդանեկի համակենտրոնացման ճամբար աքսորվեցին Գերմանիայի՝ Պոմմերնի տարածաշրջանում բնակվող հրեաները: Այդ վտարումները, սակայն, խնդրահարույց էին համարվում, քանի որ որոշ հրեաներ կարողանում էին տեղափոխվել այլ երկրներ, ուստի դրանք դադարեցվեցին:

Հիմլերի հրամանով 1941 թ. հոկտեմբերի 23-ից Գերմանիայի և նրա վերահսկողության տակ գտնվող երկրների հրեաներին արգելվեց մեկնել արտերկիր: Նույն օրը ՊԱԳՎ-ի 4-րդ բաժանմունքի ղեկավար Հ. Մյուլլերը գեստապոյի ծառայություններին տեղեկացրեց այդ մասին՝ հրահանգելով հետևել դրա կատարմանը: Հրեաների իրավազարկումն իր գագաթնակետին հասավ 1941 թ. նոյեմբերի 25-ին «Ռայխի քաղաքացիության մասին» օրենքի նոր փոփոխությամբ, որով Գերմանիայի քաղաքացիություն ունեցող հրեաները, այդ թվում նաև արտերկրում բնակվողները, զրկվեցին քաղաքացիությունից, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվեց պետության կողմից {(78) *56-59*, (192)}:

Հոլոքոստը՝ գործողության մեջ

Հրեաների զանգվածային ոչնչացման մեկնարկումը: Վանզեի խորհրդաժողովում ընդունված ծրագիրը

Հրեաների զանգվածային բնաջնջման բուն գործընթացը սկսվեց ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումով: Հիմլերի հրահանգով հարձակվող բանակի թիկունքից առաջանում էին չորս հատուկ ստորաբաժանումներ, որոնք իրականացնում էին գրավված տարածքների հրեա և գնչու բնակիչների սպանդը: Ա ստորաբաժանումն, օրինակ, 1941 թ. հոկտեմբերի կեսին զեկուցում էր, որ արդեն գնդակահարել է 125 000 հրեաների {(67) *211*}:

Այդ մեթոդը, սակայն, արդյունավետ չէր համարվում, քանի որ սպանությունները հաճախ տեղի էին ունենում կռվող զորամասերի տեսադաշտում: Մյուս կողմից, քանի որ անխտիր գնդակահարվում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք ու երեխաները, սպանդի այդ մեթոդը հոգեպես «ծանրաբեռնում» էր մարդասպաններին: Ուստի ոչնչացման մեկ այլ՝ մարդասպանների համար ավելի տանելի մեթոդի կարիք զգացվեց: Գործողության մեջ դրվեց բեռնատար ավտոմեքենաների փակ թափքերում դիզելային շարժիչի արտանետած գազի միջոցով մարդկանց խեղդամահ անելու մեթոդը: Այդ նպատակին ծառայող ավտոմեքենայի դիզելային շարժիչի գազի արտանետման խողովակի համար անկատ մուտք էր բացվել դեպի թափքը: Մարդկանց աշխատանքի տանելու, ախտահանման և այլ պատրվակներով լցնում էին «դուշեգուբկա» կոչվող այդ ավտոմեքենաների թափքերը և խեղդում էին շարժիչից արտանետվող գազով: Այդ մեթոդը գործադրվեց հատկապես Մինսկի և Ռիգայի գետոների բնակչությանը ոչնչացնելու համար: Այն, սակայն, նույնպես արդյունավետ չէր համարվում:

1941 թ. հուլիսի 31-ին Գյորինգը Էսէս-ի պետական անվտանգության գլխավոր վարչության պետ Ռ. Հայդրիխին հանձնարարեց հրեական հարցի վերջնական լուծման համար

մշակել և իրեն ներկայացնել մի նախագիծ: Հայդրիխի ներկայացրած նախագիծը քննարկվեց և հաստատվեց 1942 թ. հունվարի 20-ին Վանզե լճի մոտ գտնվող մի դղյակում 13 այլ պաշտոնյաների մասնակցությամբ գումարված խորհրդաժողովում: Չնայած նախագիծը շարադրված էր գաղտնալեզվի սկզբունքով, և սպանության փոխարեն օգտագործվում էին «էվակուացիա», «վերաբնակեցում» և այլ եզրույթներ, այնուհանդերձ համատեքստը միանգամայն պարզ էր:

Ծրագրի համաձայն՝ հրեաների տարերային վտարումների փոխարեն, որոնք, խնդրահարույց համարվելով, արգելվել էին, պետք է սկսվեր մեծ շարասյուներով նրանց կազմակերպված «էվակուացիան» դեպի արևելք: Այնտեղ հասնելով՝ անաշխատունակ հրեաները ոչնչացվելու էին, իսկ աշխատունակները, ըստ սեռերի միմյանցից տարանջատված, պետք է ներգրավվեին ճանապարհաշինության մեջ: Ընդսմին նշվում էր, որ նրանց թվաքանակը, «անկասկած», բնական ճանապարհով զգալիորեն կրճատվելու էր, իսկ ի վերջո դեռ գոյատևող «մնացորդի» հետ, որը լինելու էր նրանց «ամենադիմադրունակ» շերտը, անհրաժեշտ էր «համապատասխանորեն» վարվել: Դա նշանակում էր, որ այդ մնացորդը նույնպես պիտի ոչնչացվեր, քանի որ այն, իրենից «բնական ընտրութուն» ներկայացնելով, ինչպես «պատմական փորձառությունն էր ցույց տալիս», ազատության մեջ հայտնվելու դեպքում կարող էր դառնալ հրեա ժողովրդի վերակագնման «սաղմնաբջիջ»:

Էվակուացիայի միջոցով Եվրոպան արևմուտքից արևելք «սանրվելու» և զտվելու էր բոլոր հրեաներից, որոնց ընդհանուր թվաքանակը կազմում էր 11 միլիոն: Նրանք, ինչպես արձանագրվել է խորհրդաժողովում, առանձին երկրներում բնակվում էին հետևալ թվաքանակներով.

Հին Ռայխ՝ 131 800	Բուլղարիա՝ 48 000
Ավստրիա՝ 43 700	Անգլիա՝ 330 000
Արևելյան տարածքներ՝ 420 000	Ֆինլանդիա՝ 2300
Գլխավոր նահանգապետություն՝ 2 284 000	Իռլանդիա՝ 4000
Բելոստոկ՝ 400 000	Իտալիա (ներառյալ Սարդինիան)՝ 58 000
Բոհեմ. և Մորավ. պրոտեկտորատ՝ 74 200	Ալբանիա՝ 200
Էստոնիա հրեաներից զերծ	Խորվաթիա՝ 40 000
Լատվիա՝ 3 500	Պորտուգալիա՝ 3000
Լիտվա՝ 34 000	Ռումինիա (ներառ. Բեսարաբիան)՝ 342 000
Բելգիա՝ 43 000	Շվեդիա՝ 8000
Դանիա՝ 5 600	Շվեյցարիա՝ 18 000
Ֆրանսիա (օկուպ. տարածք)՝ 165 000	Սերբիա՝ 10 000
Ֆրանսիա (չօկուպ. տարածք)՝ 700 000	Սլովակիա՝ 88 000
Հունաստան՝ 69 000	Իսպանիա՝ 6000
Նիդերլանդներ՝ 160 800	Թուրքիա (եվրոպ. մասը)՝ 55 500
Նորվեգիա՝ 1300	Հունգարիա՝ 742 800
ԽՍՀՄ՝ 5 000 000	այդ թվում՝ Ուկրաինա՝ 2 994 684, Բեառուս (առանց Բելոստոկի)՝ 446 484
Ընդհանուր թվաքանակը՝	11 000 000

Ըստ խորհրդաժողովում ընդունված ծրագրի՝ «էվակուացիայի» ենթակա հրեաները գնացքներով պետք է նախ տարվեին, այսպես կոչված, որպես միջանկյալ հանգրվան ծառայող գետոներ, որտեղից շարունակվելու էր նրանց փոխադրումը դեպի արևելք: Նախատեսված էր 65 տարեկանը լրացած հրեաներին «չէվակուացնել», այլ նրանց փոխանցել տարիքային ցենզ ունեցող մի գետոյի, որը պետք է հիմնվեր Թերեզիենշտադտում: Այնտեղ կարող էին ուղարկվել նաև Առաջին աշխարհամարտի ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած, բացի այդ՝ առաջին կարգի մարտական խաչով պարգևատրված հրեաները: Նկատի էր առնվում, որ այդ գետոյի հիմնումով «մի հարվածով» կբացառվեին արտերկրից անցանկալի «միջամտությունները»:

Այդ գետոն, ի դեպ, որն ուներ համեմատաբար լավ պայմաններ, հիտլերականներն օգտագործում էին օտարերկրա լրագրողներին «ապացուցելու» համար, որ էվակուացված հրեաները լավ վիճակում էին:

Հայդրիխի նախագծում կանոնակարգվում էին նաև խառնածին հրեաների ռասայական պատկանելության որոշման սկզբունքները: Ըստ այդմ՝ 1-ին կարգի խառնածինները, որոնց մի ծնողը «գերմանական արյուն» ուներ, իսկ մեկը հրեա էր, համարվում էին հրեաներ, և «հրեական հարցի վերջնական լուծման առումով» նրանց հետ անհրաժեշտ էր վարվել, ինչպես հրեաների հետ, այսինքն՝ «էվակուացնել»: Այդ խմբից կարող էին բացառություն կազմել՝

ա) 1-ին կարգի այն խառնածինները, որոնք ամուսնացած էին գերմանական արյուն ունեցողների հետ, և այդ ամուսնությունից ծնվել էին երեխաներ, այսինքն՝ 2-րդ կարգի խառնածիններ, որոնք համարվում էին գերմանացիներ:

բ) 1-ին կարգի այն խառնածինները, որոնք կուսակցական և պետական բարձրագույն ատյաններից որևէ բնագավառում որևէ նշանակալից ծառայության համար էվակուացիայից (տարհա-

նում) զերծ մնալու թույլտվություն էին ստացել: Այդպիսի յուրաքանչյուր դեպք պետք է վերաքննության ենթարկվեր, ընդ որում՝ բացառված չէր, որ վերաքննությունից հետո նախկին թույլտվությունը չեղյալ համարվեր:

Վերոնշալ երկու դեպքերում էլ խնդրո առարկա՝ 1-ին կարգի խառնածին ծնողները կարող էին էվակուացումից խուսափել միայն այն պայմանով, եթե կամավոր դիմում ներկայացնեին իրենց ստերիլիզացնելու համար: Դա համարվում էր պարտադիր՝ նրանց հետագա սերնդատվությունը բացառելու և միաժամանակ խառնածինների «պրոբեմը» վերացնելու համար: Այդ դեպքում նրանք կազատվեին նաև այն բոլոր սահմանափակումներից, որոնց մինչ այդ ենթարկվել էին:

Այն դեպքերում, սակայն, եթե 1-ին կարգի խառնածինների և գերմանական արյուն ունեցողների ամուսնությունից երեխաներ չէին ծնվել, այդ խառնածինները ենթակա էին էվակուացման կամ, առանձին դեպքերում, նկատի առնելով այդ միջոցառման ազդեցությունը գերմանական արյուն ունեցող՝ նրանց ազգականների վրա, կարող էր նրանց տարիքային ցենզ ունեցող գետո ուղարկելու որոշում կայացվել: Առանձին դեպքերում, նույն հիմքերով, այդպիսի գետո ուղարկելու որոշում կարող էր կայացվել նաև լիովին հրեա այն անձանց վերաբերյալ, որոնք ամուսնացել էին գերմանական արյուն ունեցողների հետ:

Ինչ վերաբերում էր 2-րդ կարգի խառնածիններին, ապա նրանք, որպես կանոն, համարվում էին գերմանացիներ:

Բացառություն էին կազմում հետևյալ դեպքերը.

ա) եթե 2-րդ կարգի խառնածինի երկու ծնողներն էլ խառնածիններ էին,

բ) եթե 2-րդ կարգի խառնածինը ռասայական առումով առանձնապես աննպաստ արտաքին տեսք ուներ, այսինքն՝ ավելի նման էր հրեայի,

գ) եթե 2-րդ կարգի խառնածինին առանձնապես վատ բնութագիր է տրվել ոստիկանական կամ քաղաքական ատյանների

կողմից, ինչը ցույց էր տալիս, որ նա իրեն զգում էր որպես հրեա և ցուցաբերում էր հրեային բնորոշ վարքագիծ:

Վերոնշյալ երեք դեպքերում էլ 2-րդ կարգի խառնածիններն իրենց 1-ին կարգի խառնածին ծնողի հետ պետք է էվակուացվեին կամ, առանձին դեպքերում, ըստ կայացված համապատասխան որոշման, ուղարկվեին տարիքային ցենզ ունեցող գետո:

Այն դեպքերում, երբ ամուսիններից մեկը 1-ին, իսկ մյուսը 2-րդ կարգի խառնածին էր, ապա, անկախ այն բանից՝ նրանք երեխաներ ունեին, թե ոչ, համարվում էին հրեաներ, և նրանց հետ անհրաժեշտ էր վարվել այնպես, ինչպես հրեաների հետ: Եթե առկա էին երեխաներ, ապա վերջիններս նույնպես պետք է նույն ճակատագիրն ունենային, քանի որ, «որպես կանոն, հրեական արյան ավելի մեծ ազդեցություն» էին «ի հայտ բերում», քան 2-րդ կարգի խառնածինները {(67) *216-239*}:

Եթե նույնիսկ վերոնշյալ սկզբունքներով խառնածինների և նրանց ռասայական պատկանելության ստուգումը Գերմանիայի վերահսկողության տակ անցած ոչ բոլոր երկրներում (համապատասխան փաստաթղթերի բացակայության կամ Ռումինիայում և որոշ այլ երկրներում գումարով կեղծ փաստաթղթեր ձեռք բերելու հնարավորության հետևանքով) կարող էր ճշգրտորեն իրականացվել, այնուհանդերձ դրանք հրեական հարցի վերջնական լուծման ռազմավարության կարևոր բաղկացուցիչն էին և գործադրվեցին հնարավոր ողջ ծավալով:

Վանզեի խորհրդաժողովում քննարկվեց և համաձայնեցվեց նաև Պետական անվտանգության գլխավոր վարչության հետ իշխանության տարբեր օղակների համագործակցությունը ծրագրի իրականացման հարցում:

Մահվան ճամբարները: Հրեաների կազմակերպված գետոյավորումը և «էվակուացիան»

Գլխավոր նահանգապետությունում՝ Բելժեցում, Աուշվիցում, Բիրկենաուում, Սոբիբորում, Թրիբլանկայում, Մայդանեկում, ինչ-

պես և Գերմանիային բռնակցված լեհական տարածքի Խելմնո բնակավայրում հիմնվեցին մարդկանց զանգվածային ոչնչացման գլխավոր ճամբարները, որոնք հայտնի են նաև «մահվան ճամբարներ» անունով: Դրանցում, բացառությամբ Խելմնոյի ճամբարի, կառուցվեցին գազախցեր, որոնք փոխարինեցին «դուշեգուբկաներին»: Միայն Խելմնոյի ճամբարում էր շարունակում գործել փոխադրամիջոցների վրա տեղակայված շարժական գազախցերի պրակտիկան:

Ոչնչացման ամենամեծ՝ Աուշվից-Բիրկենաուի ճամբարում կային վերգետնյա և ստորգետնյա յոթ գազախցեր և հինգ դիակիզարաններ, որոնցից յուրաքանչյուրն ուներ առավելագույնը հինգ վառարան, իսկ վառարաններից յուրաքանչյուրը՝ հրկիզման 3-4 խցեր: Առաջին դիակիզարանը կառուցվել է ճամբարի գլխավոր՝ Աուշվիցի հատվածում և գործել է 1942 թ. սկզբից մինչև 1943 թ. գարունը: Դրա օգտագործումը դադարեցվեց, երբ գործարկվեցին ճամբարի՝ Բիրկենաուի հատվածում կառուցված չորս դիակիզարանները {(67) *248*}:

Սոբիբորի, Թրիբլանկայի, Բելժեցի և Մայդանեկի ճամբարներում սկզբնական շրջանում դիերը թաղվում էին զանգվածային գերեզմանափոսերում: Հետագայում տեղի էր ունենում դիերի հրկիզում, ընդ որում՝ Մայդանեկում դա իրականացվում էր 1943 թ.-ից այնտեղ գործող դիակիզարանի միջոցով, իսկ վերոնշյալ մյուս ճամբարներում, որտեղ «դասական» դիակիզարաններ չկային, հրկիզումը կատարվում էր խոր փոսերում կամ փոսերի վերևում (մեծ մասամբ երկաթուղային ռելսերով) կառուցված ցանցահարթակների վրա: Ինչ վերաբերում է Խելմնոյի ճամբարին, ապա այնտեղ դիերը մասամբ հրկիզվում էին գազախեղդման վայրում, մասամբ թաղվում էին զանգվածային գերեզմանափոսերում:

Ուշագրավ է, որ պատերազմի վերջին շրջանում կատարվում էր նաև թաղված դիերի արտաշիրիմում ու հրկիզում՝ զանգվածային սպանությունների հետքերը վերացնելու նպատակով:

Քանի որ նախատեսված էր հարկադիր աշխատանքի միջոցով օգտագործել աշխատունակ հրեաների աշխատուժը, առավել ևս, որ պատերազմի երկարացման պարագայում շարունակ ավելի էր մեծանում լրացուցիչ աշխատուժի կարիքը, ուստի ոչնչացման ճամբարները մեծապես ընդարձակվեցին՝ համապատասխանեցվելով նաև աշխատանքային ճամբարի գործառույթներին: Առաջին ոչնչացման ճամբարին կից, օրինակ, կառուցվել էին 40 աշխատանքային ճամբարներ:

Վանզեի խորհրդաժողովում Հայդրիխի ծրագրի ընդունումից հետո Գերմանիայի և նրա գրաված երկրների հրեա բնակչության գետոյավորումը և ապա գետոներից նրանց պարբերական տեղափոխումը դեպի մահվան ճամբարներ լիովին կազմակերպված ընթացք ստացավ:

Գետոներից մարդկանց տարհանումը կատարվում էր՝ համաձայն գետոների հրեական խորհուրդներին գերմանական կողմի ներկայացրած հրահանգների: Ըստ այդմ՝ տվյալ ժամին տվյալ թվաքանակով մարդիկ պետք է ներկայանային փոխադրման հրապարակ՝ այնտեղից դեպի երկաթուղային կայարան, իսկ այնուհետև նահանգապետություն ուղարկվելու համար: Այդ մարդկանց ընտրում էին հրեական խորհուրդները, որոնք նաև պատասխանատվություն էին կրում նշված հրահանգների ճշգրիտ կատարման համար: Եվ քանի որ համատարած ընկճվածության ու երկյուղի պայմաններում գետոների բնակիչները հաճախ չէին ուզում ինքնակամ ներկայանալ փոխադրման հրապարակ, այդ խնդիրը լուծելու համար գործադրվում էին խոստումների և խաբեության զանազան միջոցներ: Օրինակ, խոստանում էին կամավոր փոխադրման հրապարակ եկող ընտանիքների անդամներին չբաժանել միմյանցից, նաև նրանց լրացուցիչ սնունդ հատկացնել և այլն: Իսկ եթե լինում էին մարդիկ, որոնք այդ դեպքում էլ էին հրաժարվում կամովին ներկայանալ, նրանց բերման էին ենթարկում:

Որպես միջանկյալ ժամանակավոր հանգրվան ծառայող գետոնների բնակչության կազմը, բնականաբար, շարունակ փոփոխվում էր, քանի որ դրանք պարպվում և դարձյալ լցվում էին մարդկանցով: Տարագիրներն իրավունք ունեին իրենց հետ վերցնելու միայն խիստ սահմանափակ, առավելագույնը 25 կգ քաշ ունեցող ունեցվածք: Մարդկանց փոխադրումը դեպի երկաթուղային կայարաններ կատարվում էր բեռնատար ավտեմեքենաներով: Այնուհետև նրանց հնարավորինս խիտ կերպով լցնում էին երկաթուղային վագոններ, որոնք զուրկ էին տարրական պայմաններից, այն դեպքում, երբ մեկնումը հաճախ օրեր էր տևում: Այդ առումով բնութագրական է, օրինակ, մի վերապրողի հետևյալ վկայությունը. ««Ավելի՛ արագ, ավելի՛ արագ, հրեա խոզեր»: Վագոնը դանդաղ լցվեց: Կլինեին հիսուն, վաթսուն կամ յոթանասուն մարդիկ: Վերջապես այն լիովին բեռնված էր: Սահող մեծ դուռը դրսից կողպվեց և հավանաբար նաև լավ շղթայվեց, որպեսզի մենք ներսից չկարողանայինք այդ դուռը բացել: Աչքը դանդաղ վարժվեց կիսախավարին: Վագոնում երկու դույլեր կային: Դրանցից մեկը լցված էր ջրով, երկրորդը պետք է մեզ ծառայեր որպես զուգարան: Վագոնում գտնվում էին ծերեր, հիվանդներ, երեխաներ և մենք՝ ավելի երիտասարդներս: […] Նույնիսկ մի կերպ նստելու տեղ չկար, ուր մնաց՝ պառկելու: Վագոնում երեխաները լալիս էին, հիվանդները տնքում էին, և ջրով դույլը մի ակնթարթում դատարկվեց, ու ծարավը սկսեց մեզ տանջել: Գիշերվա համար մենք մեզ կազմակերպեցինք, ինչպես կարողացանք: Մեր մի կեսը փորձում էր քնել, մինչդեռ երկրորդ կեսը կանգնած՝ հրմշտուք էր անում: Դեկտեմբերյան այդ գիշերը սարսափելի ցուրտ էր, զրոյից մի քանի աստիճան ցածր, և այդ հրմշտոցը մեզ առնվազն օգնում էր, մարմիններն իրար շփելով, տաքանալու»» {(91) *131*}:

Հրեաներին տեղեկացվում էր, որ նրանք Լեհաստան են տարվում աշխատելու համար: Շարունակաբար այնտեղ փոխադրվող մարդկանց մեծ թվաքանակի հետևանքով տեղ հասնելուց հետո նրանց ժամանակավորապես կուտակում էին գետոներում, որտե-

ղից այնուհետև ուղարկում էին ոչնչացման ճամբարներ: Գետոներում էսէսականները մարդկանց ենթարկում էին սելեկցիայի՝ աշխատունակներին զատելով անաշխատունակներից: Աշխատունակներին լծում էին տաժանակիր աշխատանքների, մինչև նրանց լիակատար հյուծումն ու անաշխատունակ դառնալը, իսկ անաշխատունակները, որոնց շարքին նաև երեխաներն էին դասվում, տարվում էին գազախեղդման: Ըստ այդմ՝ մարդկանց սելեկցիան ամենօրյա իրողություն էր: Շատ դեպքերում մարդկանց սելեկցիայի էին ենթարկում նաև վագոններից նրանց «բեռնաթափելուց» անմիջապես հետո, և այդպիսով զոհերը կրկնակի սելեկցիայի էին ենթարկվում:

Վարչակարգի ոչնչացման մեքենան գործում էր նվազագույն ծախսերի և առավելագույն շահույթ ստանալու սկզբունքով: Կատարված էին նաև համապատասխան հաշվարկներ: Օրինակ, հաշվարկված էր, որ յուրաքանչյուր աշխատունակ հրեայի աշխատունակության միջին տևողությունը կազմելու էր 9 ամիս, իսկ յուրաքանչյուրից ստացվող զուտ եկամուտը՝ հանած հրկիզման ծախսը և ներառյալ ոսկե ատամների, մազերի, հագուստի, գրպաններում եղած դրամի, իրերի և դիակի հրկիզումից գոյացած մոխրի արժեքը, կազմելու էր 1631 մարկ {(67) *226*}:

Հոլոքոստի ծավալմանը զուգահեռ՝ շարունակում էր աճել նացիոնալ-սոցիալիստական հակահրեական քարոզչությունը: Գյոբելսի հրամանով արտասահմանյան երկրներ հեռարձակվող ռադիոհաղորդումներում հակահրեական հրապարակումների ծավալը 1943 թ. հասցվեց 80%-ի՝ նախկին 70%-ի փոխարեն {(40) *141*}:

Աշխատունակ հրեաների աշխատանքային պայմանները

Ճամբարներում բացակայում էին նույնիսկ նվազագույն աշխատանքային պայմանները: Առաջին շրջանում հաճախադեպ էր լիովին աննպատակ աշխատանքի միջոցով մարդկանց հյուծելու պրակտիկան, որը տեղի էր ունենում, օրինակ, քարերի կույտը

կամ աղբակույտը մի տեղից մեկ այլ տեղ, իսկ հետո դարձյալ նույն տեղը փոխադրելու միջոցով: Ավելի ուշ, երբ գերմանական տնտեսության և ռազմական արդյունաբերության ընդլայնման համար լրացուցիչ աշխատուժի կարիք ի հայտ եկավ, նպատակաուղղվեց նաև հրեաների աշխատուժի օգտագործումը: Դրանով, սակայն, չէր նսեմանում կամ փոփոխվում հրեաների զանգվածային ոչնչացման՝ հիտլերյան վարչակարգի հետապնդած «գլոբալ» նպատակը:

Ճամբարներում, նաև դրանց մեծության պատճառով, մեծ կարևորություն էր տրվում կարգապահական կանոնների պահպանմանը: Դրանց նույնիսկ աննշան խախտումների դեպքում բնակիչները ենթարկվում էին ծեծի, խոշտանգումների և նվաստացման: Տարատեսակ պատիժներն ու մահապատիժները ճամբարական առօրյայի մշտական բաղկացուցիչն էին, ընդ որում՝ մահապատիժները հաճախ կատարվում էին ցուցադրաբար՝ մյուսներին վախեցնելու նպատակով:

Մարդիկ հարկադիր աշխատանքի էին լծվում եղանակային բոլոր պայմաններում: Չստանալով բավարար սնունդ և սառնամանիքի ժամանակ չունենալով համապատասխան հագուստ՝ նրանք առողջական ծանր վնասներ էին կրում, սակայն պարտավոր էին օրական 14 ժամ աշխատել՝ անաշխատունակ չհամարվելու համար: Հաճախ բացակայում էին կամ չէին բավարարում աշխատանքային տարրական գործիքները կամ փոխադրամիջոցները: Նման դեպքերում նրանք ստիպված էին լինում իրենց արտահագուստները հակառակ կերպով հագնել (որպեսզի դրանց աղտոտման պատճառով չպատժվեն), իսկ այնուհետև դրանց փեշերն օգտագործել աղբի կամ շինանյութի փոխադրման համար:

Հաճախ էին նաև դեպքերը, երբ նրանք միմյանց հետ կռվի էին բռնվում աշխատանքային գործիքի համար, քանի որ նա, ով բահ կամ լինգ չէր ստանում, էսէականների կողմից համարվում էր աշխատանքից խուսափող և ենթարկվում էր մտրակման: Այդ

ամենով հանդերձ՝ ռազմական նշանակության ձեռնարկություններում աշխատող հրեաները պետք է նույն արտադրական քվոտան ապահովեին, ինչպես աշխատավարձ ստացող բանվորները {(67) *226-227*}:

Մարդկանց վրա կատարվող փորձարկումները

Ոչնչացման ճամբարներում հրեաների վրա, նախքան նրանց սպանդը, կատարվում էին նաև զանազան փորձարկումներ՝ ռազմական արտադրության զարգացման, հետազոտական ու այլ նպատակներով: Աուշվիցում, օրինակ, փորձարկումների միջոցով ուզում էին ռենտգենյան ճառագայթների և այլ միջոցներով տղամարդկանց և կանանց ստերլիզացնելու նոր մեթոդներ զարգացնել: Փորձարկումների ենթարկվող մարդկանց, բնականաբար չէր տեղեկացվում, թե ինչ են անում նրանց հետ: Նրանցից շատերը զոհ էին դառնում այդ փորձարկումներին:

Հետազոտական նպատակներով միանգամայն առողջ մարդկանց նաև վարակում էին դեղնախտի, մալարիայի, տիֆի, բծավոր տիֆի և այլ հիվանդությունների հարուցիչներով: Ռազմական օդագնացության զարգացման համար փորձարկվում էր ցածր ճնշման դեպքում մարդկանց կենդանի մնալու հավանականությունը:

Զոհերի վրա փորձարկվում էին նաև փորձաքննություն չանցած դեղամիջոցներ, շիճուկներ, պատվաստանյութեր և այլն, ինչի հետևանքով մեռնում էին հազարավոր մարդիկ: Փորձարկումները որևէ սահմանափակում չունեին: Աուշվիցի ճամբարի բժիշկ Մենդելեն, օրինակ, հետազոտում էր միաբջիջ երկվորյակներին, առանձնապես երեխաներին: Նա, սակայն, չէր բավարարվում միայն կենդանի մարդկանց վրա փորձարկումներ կատարելով, այլ նաև ֆենոլի սրսկումով սպանում էր երեխաներին, որից հետո կատարում էր նրանց ներքին օրգանների բժշկական համեմատական հետազոտություններ {(67) *227-228*}:

Ոչնչացումը՝ «ստացիոնար» եղանակով

Խելմնոյի համակենտրոնացման ճամբարում զանգվածային ոչնչացումը սկսվել էր դեռ 1941 թ. դեկտեմբերի վերջին: 1942 թ. մարտի սկզբին եվրոպաբնակ հրեաների առաջին շարասյուները բերվեցին Աուշվից-Բիրկենաու, որտեղ սկսվեց նրանց զանգվածային գազախեղդումը: Ոչնչացման մյուս ճամբարները նույնպես բուռն գործադրության մեջ դրվեցին՝ նվազագույն ժամանակում և ծախսերով առավելագույն «արդյունք» ապահովելու սկզբունքով:

Գազախցերում մարդկանց ոչնչացման համար լայն կիրառում ստացավ ցիկլոն Բ գազը, որը, բլոկադայի ենթարկելով շնչուղիները, արագ մահ էր պատճառում: Այդ գազը, որը նախկինում օգտագործվում էր վնասատու միջատների դեմ, 1941 թ. սեպտեմբերին «հաջողությամբ» փորձարկվեց 900 խորհրդային ռազմագերիների վրա և տվեց «ցանկալի արդյունք»: Աշխարհամարտի ընթացքում գազախցերում հաճախ կիրառվում էր նաև դիզելային շարժիչից արտամղվող գազը:

Որպես կանոն գործադրվում էին խաբեության բազմաթիվ միջոցներ, որպեսզի զոհերը չգիտակցեն, թե ինչ է իրենց սպասվում: Նրանց հայտնում էին, որ աշխատանքի ուղարկվելուց առաջ նրանք պետք է ախտահանվեն: Գազախցերի դռների վրա գրված էր «ցնցուղախուց», ուր նրանք հագուստները հանելուց հետո պետք է մտնեին:

Մահվան ճամբարների վրա, որպես կանոն, մեծատառերով և ցուցադրաբար փակցված էր «Աշխատանքն ազատություն է պարգևում» գրությունը: Մայդանեկի ճամբարի՝ դեպի գազախցեր տանող նախասրահում կար նաև տոմսավաճառի մի խցիկ, և մարդկանց տեղեկացնում էին, որ օրինակելի վարքագիծ ցուցաբերելու և լավ աշխատելու դեպքում նրանց այդտեղից տոմսեր կհատկացնեն՝ հայրենիք վերադառնալու և իրենց հարազատնե-

րին տեսակցելու համար: Մարդկանց գազախցեր ուղարկելուց առաջ հորդորում էին հագուստները հանելիս դրանք խնամքով մի տեղ դնել, որպեսզի «ցնցուղ» ընդունելուց հետո դյուրին լինեին գտնելն ու հագնելը:

Սովորաբար զոհերին խաբելու պարտականությունը հանձնարարվում էր հրեական աշխատանքային ջոկատի անդամներին կամ այլ հրեա վարձկանների, քանի որ զոհերն իրենց ազգակիցներին ավելի արագ և հեշտորեն կհավատային: Իսկ եթե լինում էին առանձին մարդիկ, որոնք, գիտակցելով, թե ինչ է սպասվում իրենց, համառորեն չէին ուզում «դեզինֆեկցիա» ընդունել և մտնել «ցնցուղարան», նրանց խնդրում էին դուրս գալ մեկ այլ դռնով, և երբ դուրս էին գալիս, սպանվում էին այնտեղ գտնվող էսէսականների կողմից:

Զոհերի մազերը մինչ գազախուց մտնելը կամ նրանց դիերն այնտեղից դուրս բերելուց հետո կտրում էին, քանի որ դրանք կարող էին օգտագործվել թամբեր պատրաստելու համար, ինչպես և՝ որպես լցոնման նյութ: Ոչնչացման առավելագույն արդյունավետություն ապահովելու համար մարդկանց հնարավորինս մեծ խմբաքանակներ էին լցնում գազախցերը, որից հետո դրանց դռները կողպվում էին, և միացվում էր գազամղիչ շարժիչը: Երբ ներսում գտնվողներն արդեն մեռած էին, աշխատանքային ջոկատը, որը սովորաբար բաղկացած էր հրեաներից, դիերը խցի հետնադռնից դուրս էր բերում: Այնտեղ գտնվող ատամնաբույժները զննում էին դիերի բերանները և ոսկե ատամներ ու ատամնապսակներ հայտնաբերելու դեպքում դրանք պոկում էին ծնոտից: Առուշվից-Բիրկենաուի ճամբարում այդ կերպ երբեմն օրական 12 կգ ոսկի էր հավաքվում {(67) *211-212, 228-231*}:

Այդ ամենից հետո աշխատանքային ջոկատի անդամները մարմինները տանում էին դիակիզարան: Դիակիզումից հետո ոսկորների՝ լիովին չայրված մնացորդները պետք է վերածվեին փշրանքների, և ապա ողջ մոխիրը հեռացվեր այնտեղից՝ ձկնաբուծարաններում շաղ տալու կամ այգիներում ու երկրագործա-

կան նշանակության վայրերում որպես պարարտանյութ օգտագործելու համար:

Դիակիզարանների գերծանրաբեռնվածության կամ դրանց բացակայության դեպքում, ինչպես Բելժեցի ճամբարում էր, դիերը լցվում էին մերձակա բնական կամ այդ նպատակով պատրաստված հսկա փոսերի մեջ՝ ծածկվելով հողով կամ ավազով: Էսէս-ի օբերշտուրմֆյուրեր Կուրտ Գերշտայնի հետևյալ գրառումը, որը նա կատարել է 1945 թ. մայիսի 4-ին Բելժեցի ճամբարում գազախեղդման մի գործողության մասին, բնութագրական է ողջ գործընթացը պատկերացնելու համար. «Լիքը լցնե՛լ. այդպես է հրամայել հաուպտման Վիրթը: Մարդիկ կանգնած են միմյանց ոտքերի վրա: 700-800 մարդիկ 25 քմ, 45 խմ տարածքում: Էսէս-ը նրանց ստիպում է ֆիզիկապես միմյանց սեղմվել, որքան, առհասարակ, հնարավոր է: Դռները փակվում են: Այդ ընթացքում մյուսները դրսում՝ մերկ վիճակում սպասում են: […] Դիզելը, սակայն, չի գործում: Երկու ժամ 49 րոպե անց (վայրկենաչափն ամենը լավ գրանցել է) դիզելը միանում է: Մինչ այդ պահը մարդիկ շարունակում են ապրել այդ 4 խցերում՝ չորս անգամ 750 մարդիկ 4 անգամ 45 խմ տարածքում: Դարձյալ անցնում է 25 րոպե: Ճիշտ է, այժմ շատերը մեռած են: Դա նկատվում է փոքրիկ պատուհանիկից, երբ էլեկտրական լույսը մի ակնթարթ լուսավորում է խցերը: 28 րոպե հետո միայն քչերն են կենդանի: Վերջապես, 32 րոպե հետո բոլորը մեռած են: Մյուս կողմից աշխատանքային ջոկատի անդամները բացում են փայտե դռները: Նրանց (որոնք նույնպես հրեաներ են) իրենց սարսափելի ծառայության դիմաց խոստացել են ազատություն և բոլոր գտնված արժեքավոր իրերի մեկ հազարերորդ մասը:

Ինչպես բազալտե սյուներ, մեռածներն ուղղահայաց, միմյանց սեղմված կանգնած են խցերում: Նույնիսկ տեղ չկար ընկնելու կամ նաև՝ միայն թեքվելու համար: Անգամ մեռած վիճակում դեռ ճանաչելի են ընտանիքի անդամները: Նրանք մահվան ջղաձգության մեջ սեղմել են միմյանց ձեռքերը, այնպես որ ջանքեր է

պահանջում դրանք իրարից պոկելը, որպեսզի խցերն ազատվեն հաջորդ խմբաքանակի համար: Դիերը՝ քրտինքից և մեզից թաց, կղկղանքից կեղտոտված, դաշտանի արյունը ոտքերին, դուրս են նետվում: Երեխաների դիերը թռչում են օդով: Ժամանակ չկա: Ուկրաինացիների մտրակները շառաչում են աշխատանքային ջոկատի վրա: Երկու դյուժին ատամնաբույժներ կեռիկներով բացում են բերանը և ոսկի են փնտրում. ձախ կողմում ոսկի կա, աջ կողմում չկա: Ուրիշ ատամնաբույժներ, աքցաններով և մուրճերով կոտրելով, պոկում են ոսկե ատամներն ու ատամնապսակները ծնոտներից: […] Մերկ դիերը փայտե պատգարակներով տարվեցին և լցվեցին մի քանի մետր հեռավորության վրա գտնվող՝ 100 մ երկարություն, 20 մ լայնություն և 10 մ խորություն ունեցող փոսերը: Մի քանի օրից դիակներն ուռչում էին և կարճ ժամանակ անց, ուժեղ թարշամելով, սեղմվում էին իրար, այնպես որ կարելի էր դրանց վրա մի նոր շերտ ավելացնել: Այնուհետև դրանց վրա տասը սանտիմետր հաստությամբ ավազ էր շաղ տրվում, այնպես, որ միայն առանձին գլուխներ և ձեռքեր էին դուրս ցցված մնում: Ես մի այդպիսի տեղում տեսա փոսերի մեջ հրեաների, որոնք մագլցում էին դիերի վրայով և աշխատում: Ինձ ասացին, որ բերված մի խմբաքանակ մեռածներ նախապես չեն մերկացվել: Դա, իհարկե, պետք է այժմ արվեր մանածագործական կտորների և արժեքավոր իրերի պատճառով, որոնք նրանք այլապես իրենց հետ գերեզման էին տանելու» {(155) *135*}:

Ճամբարներում եվրոպաբնակ հրեաների բնաջնջումը, որը հիտլերյան վարչակազմի պատերազմական նպատակներից մեկն էր, շարունակվում էր այնքան, քանի դեռ դաշնակիցների առաջխաղացման պատճառով դրանց անձնակազմերի էվակուացիան դեպի թիկունք չէր սկսվում:

Հոլոքոստի զոհերի ճշգրիտ թվաքանակը հայտնի չէ, քանի որ բոլոր զոհերի ցուցակագրում չի կատարվել: Համարակալվել և ըստ համարների ցուցակագրվել են միայն աշխատունակ հրեաները, որոնց լծում էին տաժանակիր աշխատանքի: Մյուս զոհերը՝

անաշխատունակները, ճամբար բերվելուց հետո անմիջապես ոչնչացվում էին՝ առանց ցուցակագրման: Ընդհանուր հաշվառումները լավագույն դեպքում կատարվում էին ըստ վագոնների թվաքանակի:

Ճամբարներում մարդկանց ոչնչացման յուրաքանչյուր մեծ գործողությունից հետո այդ մասին տեղեկություն էր ուղարկվում ՊԱԳՎ-ին կամ ԷսԷս-ի տնտեսական և կառավարման գլխավոր վարչությանը: Այնուհետև տվյալ՝ արդեն ավարտված գործողությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը ճամբարում պարտադիր ոչնչացվում էին: Ինչ վերաբերում է ցուցակագրված զոհերի ցուցակներին, ապա դրանք միայն մասամբ են պահպանվել, քանի որ ԷսԷս-ի անձնակազմը 1944 թ. հուլիսից պարբերաբար ոչնչացնում էր Աուշվիցի ճամբար ուղարկվող երկաթուղային շարժակազմերի և այնտեղ կատարված զանգվածային սպանությունների մասին բոլոր փաստաթղթերը: Դա շարունակվեց ընդհուպ մինչև այդ ճամբարի դատարկումը 1945 թ. հունվարին:

Փորձեր են կատարվել զոհերի թիվը գնահատելու՝ ըստ դիակիզարանների կարողությունների: Նման գնահատումները, սակայն, էապես տարբերվում են միմյանցից և մերժվել են հետազոտողների կողմից: Հարցի ուսումնասիրման համար առավել մեծ կարևորություն ունեն, Աուշվիցից զատ, մյուս ոչնչացման ճամբարներում պահպանված առանձին փաստաթղթեր և մասնավորապես զոհերի փոխադրման ելակետային վայրերում կատարված արձանագրումները, որոնցից շատերում կան ճշգրիտ տեղեկություններ փոխադրումների մասին: Այդ տեղեկությունները, սակայն, ամբողջական չլինելով, նույնպես չեն կարող զոհերի թվաքանակի ճշգրտման հիմք ծառայել:

Վերնոշյալ պատճառներով զգալիորեն տարբերվում են նաև զոհերի թվի գնահատումները: Ըստ Դիետեր Պոհլի և Վոլֆգանգ Բենցի հետազոտությունների՝ այդ թիվը կազմում է առնվազն 5 միլիոն 700 հազար, իսկ այլ գնահատումների համաձայն՝ կարող է

կազմել մինչև 6 միլիոն 100 հազար {(201)}: Միայն Աուշվից-Բիրկենաուում ոչնչացվել է շուրջ 1 միլիոն մարդ:

Ուշագրավ է այդ զանգվածային սպանդի առնչությամբ Հիմլերի ներկայացրած հետևյալ «արդարացումը». «Ես խնդրում եմ Ձեզ այն, ինչ ես Ձեզ ասելու եմ այս շրջանակում, իրապես միայն լսել և այդ մասին երբեք չխոսել: Մեր առաջ հայտնվեց այն հարցը՝ ինչպե՞ս պետք է վարվել կանանց ու երեխաների հետ: Ես վճռել եմ այստեղ նույնպես մի միանգամայն պարզ լուծում գտնել: Ես ինձ իրավասու չհամարեցի՝ տղամարդկանց ոչնչացնելու {...}, իսկ երեխաների կերպարանքով վրիժառուներին թույլ տալու, որ մեծանան մեր որդիներից ու թոռներից վրեժ լուծելու համար: Պետք է կայացվեր այդ ժողովրդին երկրի երեսից անետացնելու ծանր որոշումը: Կազմակերպության համար, որն այս առաջադրանքը պետք է կատարեր, դա ամենադժվարն էր այն բոլորից, որոնք մենք մինչ այդ ունեինք: Դա իրականացվել է՝ առանց (ինչպես, կարծում եմ, կարող եմ ասել) մեր տղամարդկանց և մեր ղեկավարներին մտավոր ու հոգեկան վնասներ պատճառելու: Այդ վտանգը շատ մոտ էր: Ճանապարհը այստեղ առկա երկու հնարավորությունների միջև՝ կամ դառնալ բիրտ, դառնալ անսիրտ և այլևս չհարգել մարդկային կյանքը, կամ փափկել և հավասարակշռությունից դուրս գալ՝ հասնելով մինչև նյարդային խանգարումների, ճանապարհը՝ Սկիլլայի և Քարիբդիսի միջև, սարսափելի նեղ է» {(158) *169*}:

Վերոնշյալը, ի դեպ, նաև փաստում է, թե նացիստական և երիտթուրքական ցեղասպանական պրոպագանդայում ինչպես էին նույնանում զոհերի երեխաների՝ որպես ապագա վրիժառուների մասին տեսակետները: Հիտլերը մինչև իսկ 1945 թ. ապրիլի 29-ին՝ մահից կարճ ժամանակ առաջ, իր գրած քաղաքական կտակում հանձնարարում էր շարունակել հրեաների ոչնչացումը՝ նրանց անվանելով «բոլոր ժողովուրդների համաշխարհային թունավորող» {(243)}: Կտակում նա Աշխարհամարտի բռնկման և Գերմա-

նիայի պարտության պատասխանատվությունը նույնպես առաջին հերթին վերագրում էր հրեաներին:

Զոհերի կոլեկտիվ դիմադրության փորձեր

Հոլոքոստի զոհերի կոլեկտիվ ընդվզումների առանձին դեպքերից ամենանշանակալիցը Վարշավայի գետոյում տեղի ունեցած ապստամբությունն էր: 1942 թ. հուլիսից այնտեղից օրական մոտ 5000 մարդ էր ուղարկվում Թրիբլանկայի ոչնչացման ճամբար: Հուլիսի երկրորդ կեսից մինչև հոկտեմբեր այդ գետոյից տարհանվածների թիվը կազմեց շուրջ 300 000: Գետոյի՝ շարունակ նվազող բնակչության մեջ հետզհետե արմատավորվում էր ապստամբելու գաղափարը: Դրա ղեկավարումը ստանձնեց այնտեղ հիմնված «Հրեական մարտական կազմակերպությունը»:

Ապստամբությունը, որը սկսվեց 1943 թ. ապրիլի 19-ին, ի սկզբանե հաջողության որևէ շանս չուներ և գրեթե չորս շաբաթ տևող մարտերից հետո ճնշվեց: Գետոյի՝ ավելի քան 56 000 մարդկանցից բաղկացած բնակչությունը ոչնչացվեց, իսկ հյուղերն ու այլ շինությունները պայթեցվեցին: Ապստամբության ճնշման «ակցիան», որ ղեկավարում էր լիազոր պարետ Յ. Շտրոպը, ավարտվեց 1943 թ. մայիսի 16-ին Վարշավայի սինագոգի պայթեցումով:

1943 թ. օգոստոսին ապստամբության փորձ կատարվեց նաև Սոբիբորի համակենտրոնացման ճամբարում, որն արագ ճնշվեց: Զինված ապստամբության փորձ է կատարել նաև Աուշվից-Բիրկենաուի դիակիզարաններում աշխատող հրեա կալանավորների ջոկատը: Այն նույնպես արագ ճնշվեց, և բոլոր մասնակիցները սպանվեցին {(79) *37*}:

Գնչուների ոչնչացումը

Հրեաների հետ նույնպիսի հետապնդումների ենթարկվեցին և ի վերջո նույն ճակատագրին արժանացան նաև «սինտի» ու «ռոմա» փոքրամասնությունները, այլ խոսքով՝ գնչուները, որոնց Եվրոպայում դարեր ի վեր «ցիգաններ» էին անվանում: Նրանք մոտ

1000 տարի առաջ էին Հնդկաստանից տեղափոխվել Արևմուտք և դարերի ընթացքում իրենց մուգ մաշկի և մազերի գույնի, գլխավորապես, սակայն, իրենց ինքնատիպ մշակույթի պատճառով Եվրոպայում համարվել են «օտար» փոքրամասնություն՝ հասարակական կյանքից մեկուսացվելով և պարբերաբար ենթարկվելով հետապնդումների:

Գերմանիայում Բրանդենբուրգի կուրֆյուրստի հրամանագրով գնչուները հայտարարվել են օրենքից դուրս, և, ըստ այդմ, նրանց հետ կարելի էր ցանկացած կերպ վարվել, ծեծել կամ կողոպտել՝ առանց պատասխանատվություն կրելու: Իսկ Պրուսիայի Ֆրիդրիխ Վիլհելմ I կայսրը 1725 թ. թույլատրեց առանց դատական վարույթի կախել նրանց: Մուգ մաշկը բավական էր դրա համար:

Ի տարբերություն իրավազրկված հրեաների, որոնք, հավաքական գոյություն վարելով գետոներում, համեմատաբար պաշտպանված էին իրենց զգում, գնչուներին չհաջողվեց հաստատուն բնակավայրեր գտնել: Նրանք իրենց առաջին փակ համայնքները ստեղծեցին Հունգարիայում, Սլովակիայում և Ռումինիայում, երբ այդ երկրներն ազատագրվեցին թուրքական լծից: Այդուհետ ևս, սակայն, նրանք շարունակեցին թափառական կյանք վարել՝ որպես երաժիշտներ, առևտրականներ ու արհեստագործներ:

Հրեաների համեմատ մեկ այլ տարբերությունն այն է, որ նրանք Եվրոպայում երբևէ չազատագրվեցին: Մինչև իսկ ֆրանսիական հեղափոխությունից հետո այնտեղ հռչակված մարդու և քաղաքացիական համընդհանուր իրավունքները նրանց վրա չէին տարածվում: Նրանք շարունակում էին դառնալ «քավության նոխազներ» այնտեղ, որտեղ հայտնվում էին և պատասխանատվության էին ենթարկվում գողությունների, հրդեհների, համաճարակների, կախարդությունների համար՝ նախքան դրանց իրական պատճառները կբացահայտվեին:

Չնայած Նյուրնբերգյան օրենքներում որպես թիրախային խումբ միայն հրեաներն էին նշվում, սակայն այդ օրենքների իրա-

կանացմանը վերաբերող հրամանագրերում հրեաների հետ միասին որպես «թերարժեք արյուն ունեցողներ» մատնանշվում էին «ցիգանները», «նեգրերը», ավելի ուշ՝ նաև «լեհերը»:

1936 թ. արդեն 400 գնչուներ կալանավորվել և ուղարկվել էին Դախաուի ճամբարը, որտեղ նրանք իրենց հագուստների վրա իրենց խմբային ինքնությունը փաստող եռանկյուն նշան էին կրում: Նույն տարվա հունվարի 3-ին նախարար Ֆրիկը տեղական իշխանություններին ուղարկեց մի գաղտնի հրաման, ըստ որի՝ գնչուների հետ պետք էր վարվել այնպես, ինչպես հրեաների հետ: Նյուրնբերգյան օրենքների հիման վրա Հիմլերը 1938 թ. ստեղծեց «Ցիգանների դեմ պայքարի պետական վարչություն» և նույն տարվա դեկտեմբերի 8-ին հրապարակեց նաև հրամանագիր «ցիգանական ժանտախտի դեմ» պայքարի վերաբերյալ: Հրեաներից զատ՝ Մագդեբուրգում, Քյոլն-Բիքենդորֆում, Դյուսելդորֆում և այլ վայրերում ստեղծված գետոներում գետոյացվեցին նաև գնչուները:

1942 թ. դեկտեմբերի 16-ին Հիմլերը հրամայեց գնչուներին և գնչու խառնածիններին մի քանի շաբաթում փոխադրել մի համակենտրոնացման ճամբար: Նրանց համար Աուշվից-Բիրկենաուի մահվան ճամբարում առանձնացվեց մի տարածք՝ այսպես կոչված «ցիգանների ճամբարը», որտեղ բերված գնչուների մի մասը թերսնման և հիվանդությունների զոհ դարձավ, իսկ մի մասն էլ ոչնչացվեց գազախցերում: Նրանցից շատերի վրա նույնպես մահից առաջ կատարվում էին բժշկական զանազան փորձարկումներ:

Նացիստական տեռորին զոհ դարձան մոտ 500 000 եվրոպաբնակ գնչուներ, որոնցից շուրջ 40 000-ը բնակվում էր Գերմանիայում {(204), (67) *148-149*}:

Օսկար Շինդլեր

Հոլոքոստի ընթացքում հետապնդվող հրեաներին առանձին գերմանացի անհատների կողմից ցուցաբերված աննկուն և անձ-

նազոի աջակցության առավել նշանակալից օրինակը ցուցաբերել է Օսկար Շինդլերը, որը կարողացել է փրկել 1200 հրեաների կյանքը: Նա պատերազմի ժամանակ Կրակովում գտնվող մի արծնապակու գործարանի տնօրենն էր և, օգտագործելով իր դիրքն ու կապերը, իր գործարանում աշխատանքի էր ընդունել հարկադիր աշխատանքի մատնված բազմաթիվ հրեաների՝ սեփական միջոցներով հոգալով նրանց սնունդը և բուժսպասարկումը: Քանի որ գործարանն արտադրում էր նաև ռազմական նշանակության ապրանքներ և համարվում էր պատերազմի համար կարևոր արտադրական ձեռնարկություն, այնտեղ աշխատող հրեաները «էվակուացումից» զգալիորեն ապահով էին:

1944 թ. Շինդլերը կարողացավ ոչ միայն գործարանը հեռացնել մոտեցող ռազմաճակատից և վերահիմնել Բրյունլիցում, այլև այնտեղ տեղափոխել և այդ կերպ փրկել իր հրեա աշխատողներին: Նա երեք անգամ ձերբակալվել է գեստապոյի կողմից՝ ռասաներին վերաբերող օրենքներն անտեսելու համար, բայց ամեն անգամ կարողացել է ազատվել՝ օգտագործելով իր կապերը և զանազան հնարքներ:

Շինդլերը մահացել է 1974 թ. և իր իսկ ցանկությամբ հուղարկավորվել Երուսաղեմում: Նրա անունով Նյու Յորքում մի փողոց, իսկ Երուսաղեմում մի ինստիտուտ է անվանակոչվել: Նրա մասին հրատարակվել են երկու գրքեր, իսկ հրեական դպրոցների դասագրքերում ուսումնական նյութ կա նրա մասին {(67) *232-233*}:

Նյուրնբերգյան դատավարությունները և դրանց նշանակությունը միջազգային իրավունքի զարգացման հարցում

ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն դեռևս 1943 թ. նոյեմբերի 1-ին հրապարակված Մոսկովյան համատեղ հռչակագրում հաստատել էին Գերմանիայի նացիստ հանցագործներին պատժելու իրենց մտադրությունը: 1945 թ. օգոստոսի 8-ին վավերացված Լոնդոնի համաձայնագրի հիման վրա այդ երկրները, ներ-

գրավելով նաև Ֆրանսիան, հիմնեցին մի միջազգային ռազմական դատարան՝ պատերազմի հանցագործներին դատելու համար: Այդպիսով պատմության մեջ առաջին անգամ մի պետության ղեկավարներին միջազգային իրավունքը ոտնահարելու պատճառով անձնապես պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահվում էր միջազգային դատարանի:

Սկզբնապես նախատեսված էր դատարանի նիստերը գումարել Բեռլինում, որտեղ 1945 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ բացման նիստը: Քանի որ, սակայն, ԱՄՆ-ն պահանջում էր դատավարությունն իրականացնել իր օկուպացիոն գոտում՝ հարավային Գերմանիայում, դատավարությունը փոխադրվեց այնտեղ: Ընտրությունը կանգ առավ Նյուրնբերգի վրա, որի Արդարադատության պալատը գրեթե լիովին անվնաս էր մնացել: Այն ուներ դատական նիստերի 80 սրահներ ու 530 գրասենյակներ, այսինքն՝ բավականաչափ տարածք դատավարության համար: Բացի այդ՝ պալատի կողքին կար նաև անվնաս մնացած մի բանտ:

1945 թ. նոյեմբերի 20-ից 1946 թ. հոկտեմբերի 1-ը այնտեղ տեղի ունեցավ պատերազմի գլխավոր հանցագործ՝ նացիոնալ-սոցիալիստների դատավարությունը, որի ընթացքում մեղադրանք առաջադրվեց հիտլերյան վարչակարգի տարբեր կառույցների պատկանող 24 անձանց: Երեք ամենագլխավոր պատասխանատուները՝ Ադոլֆ Հիտլերը, նախկին պրոպագանդայի նախարար Յոզեֆ Գյոբելսը և Էսէս-ի պետ ու ներքին գործերի նախարար Հայնրիխ Հիմլերը մինչ այդ ինքնասպանություն էին գործել: Հիտլերյան կուսակցական և վարչական ղեկավարությունը մեղադրվում էր հիմնականում միջազգային դատարանի կանոնադրության հետևյալ չորս կետերով.

1. Ընդհանուր դավադրություն կամ դավադրության պլան
2. Խաղաղության դեմ հանցագործություն
3. Պատերազմական հանցագործություն
4. Մարդկության դեմ հանցագործություն

Խորհրդային Միության և Ֆրանսիայի մեղադրողները պահանջում էին բոլոր մեղադրյալներին դատապարտել մահապատժի, բայց բրիտանական ու ամերիկյան կողմերը հանդես եկան տարբեր պատժաչափեր կիրառելու օգտին: Սկզբնապես մեղադրանք առաջադրվեց 24 անձանց, որոնցից դատարանում ներկա էին միայն 21-ը, քանի որ Գերմանական աշխատանքային ճակատի ղեկավար Ռոբերտ Լեյը դատավարությունից կարճ ժամանակ առաջ նույնպես ինքնասպանություն գործեց, հիտլերյան կուսակցության գրասենյակի ղեկավար Մարտին Բորմանը հեռակա կարգով դատապարտվեց կախաղանի, իսկ արդյունաբերող Գուստավ Կրուպ ֆոն Բոհլեն/Հալբախի դատավարությունը կասեցվեց նրա առողջական դրության հետևանքով:

Մահապատժի դատապարտվեցին ներքին գործերի նախարար Վիլհելմ Ֆրիկը, ավիացիայի նախարար Հերման Գյորինգը, վերմախտի հրամկազմի պետ Ալֆրեդ Յոդլը, պետական անվտանգության գլխավոր գրասենյակի ղեկավար Էռնստ Կալտենբրունները, վերմախտի ղեկավար Վիլհելմ Կայտելը, արտգործնախարար Յոախիմ ֆոն Ռիբբենտրոպը, արևելյան գրավյալ տարածքների նախարար Ալֆրեդ Ռոզենբերգը, հարկադիր աշխատանքի գլխավոր լիազոր-պատասխանատու Ֆրից Զաուկելը, Լեհաստանում ստեղծված գլխավոր նահանգապետության ղեկավար Հանս Ֆրանկը, այդ նահանգապետության նախկին փոխնահանգապետ, հետագայում Նիդերլանդներում պետական կոմիսար Արթուր Զեյս-Ինքվարթը և «Der Stürmer» պարբերականի հրատարակիչ Յուլիուս Շտրայխերը:

Ցմահ ազատազրկման դատապարտվեցին տնտեսության նախարար և պետական բանկի նախագահ Վալտեր Ֆունկը, Հիտլերի տեղակալ Ռուդոլֆ Հեսը և ռազմական նավատորմի գլխավոր հրամանատար Էրիխ Ռաեդերը: Ինչ վերաբերում է մյուս մեղադրյալներին, ապա Բոհեմիայի և Մորավիայի ինքնավար մարզի կառավարիչ Կոնստանտին ֆոն Նոյրաթը դատապարտվեց 15, երիտասարդության առաջնորդ Բալդուր ֆոն Շի-

բախը՝ 20, սպառազինության նախարար Ալբերտ Շպեերը՝ 20, իսկ ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատար Կարլ Դյոնիցը՝ 10 տարվա ազատազրկման:

Երեք մեղադրյալներ՝ պրոպագանդայի նախարարության աշխատակից Հանս Ֆրիցշեն, վիցեկանցլեր Ֆրանց ֆոն Պապենը և 1930-ական թթ. տնտեսության նախարար ու պետական բանկի նախագահ եղած Հյալմար Շախտը, արդարացվեցին:

Մահապատիժներն իրականացվեցին 1946 թ. հոկտեմբերի 16-ին՝ դատավճիռների հրապարակումից 2 շաբաթ անց, կախաղանի միջոցով: Մահապատժի դատապարտվածներից միայն Գյորինգը, ինքնասպանություն գործելով, խուսափեց կախաղանից:

Նյուրնբերգյան գլխավոր դատավարությունից հետո ԱՄՆ ռազմական դատարանների կողմից 1946-1949 թթ. իրականացվեցին տասներկու լրացուցիչ դատավարություններ, որոնցում հարուցված մեղադրանքները վերաբերում էին վերոնշյալ չորս կետերից վերջին երեքին: Այդ դատավարությունների իրավական հիմքը կազմում էր դաշնակիցների վերահսկիչ խորհրդի՝ 1945 թ. դեկտեմբերի 20-ին հրապարակած օրենքը, որը համապատասխանեցված էր միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրությանը: Դրանց ընթացքում մեղադրանք հարուցվեց գերմանական նացիստական վարչակարգի ևս 185 գործիչների, այդ թվում՝ 39 բժիշկների և իրավաբանների, ԷսԷս-ի և ոստիկանության 56 անդամների, 42 արդյունաբերողների և մենեջերների, 26 ռազմական առաջնորդների և 22 նախարարների ու կառավարության այլ բարձրաստիճան անդամների դեմ: Մեղադրյալներից 35-ը արդարացվեցին, 24-ը դատապարտվեցին մահապատժի, 20-ը՝ ցմահ բանտարկության, իսկ 98-ը՝ 18 ամսից մինչև 25 տարվա բանտարկության: Մի շարք դատավճիռներ հետագայում բեկանվեցին կամ փոփոխվեցին Գերմանիայի դաշնային կանցլեր Կոնրադ Ադենաուերի կողմից:

Լրացուցիչ դատավարություններում, ի տարբերություն Նյուրնբերգում տեղի ունեցած գլխավոր դատավարության, խաղաղության դեմ հանցագործություն որակվեց նաև Ավստրիայի և Չեխոսլովակիայի բռնակցումը Գերմանիային:

Նյուրնբերգյան միջազգային դատարանի կանոնադրությունը դարձավ ուղենիշ միջազգային քրեական իրավունքի զարգացման համար: Դրա միջոցով պատմության մեջ առաջին անգամ հարձակողական պատերազմը բնորոշվեց որպես հանցագործություն, իսկ դրա գլխավոր պատասխանատուները դատապարտվեցին: Այդպիսով առաջին անգամ ստեղծվեց նաև իրավական հիմք՝ այլ պետության հանցագործներին իրենց հանցավոր պետական գործունեության համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար {(164), (209)}:

2006 թ-ից հունվարի 27-ը նշվում է որպես Հոլոքոստի զոհերի հիշատակի միջազգային օր: Այդ օրն է ընտրվել, քանի որ 1945 թ. հունվարի 27-ին խորհրդային զորամասերը մուտք գործեցին Աուշվից-Բիրկենաու՝ փրկելով այնտեղ գտնվող շուրջ 7000 զոհերի:

Հատուցումների վճարումը

Գերմանիայի նացիստական վարչակարգի գործած անօրինականությունների հատուցման համակարգը գերազանցապես խարսխվում է հետևյալ չորս իրավական հարթությունների վրա. հատուցման գերմանական ազգային օրենքներ, հատուցման շուրջ առանձին պետությունների հետ կնքված միջազգային համաձայնագրեր, նացիոնալ-սոցիալիզմի հրեա զոհերին զանազան հիմնադրամներից կատարվող արտաօրենսդրական հատուցման վճարումներ և «Հիշողություն, պատասխանատվություն և ապագա» հիմնադրամից հատուցման վճարումներ հարկադիր աշխատանք կատարած մարդկանց:

Ուշագրավ է, որ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի զոհերին տրվող հատուցման գործընթացները տարանջատված կերպով են

զարգացել: Եթե Արևմտյան Եվրոպայի պետությունների հետ հատուցման առաջին համաձայնագրերը կնքվել են դեռևս 1959-1964 թթ., ապա Արևելյան Եվրոպայի պետությունների հետ այդպիսի համաձայնագրեր կնքվեցին միայն Սառը պատերազմի ավարտից հետո: Այդ իսկ պատճառով հրեաներին կատարված հատուցման վճարումները միատեսակ չեն, այլ թելադրված են կիրառվող համաձայնագրերով ու կարգավորումներով: «Հրեական պահանջատիրության համաժողովը» 1998 թ. ստեղծեց մի հատուկ հիմնադրամ Արևելյան Եվրոպայի հրեա զոհերի շահերը պաշտպանելու համար:

Ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսների նախարարության տվյալների՝ մինչև 2005 թ. վերջը 63,224 միլիարդ եվրո է վճարվել որպես հատուցում նացիստական հանցագործությունների համար (դրանում ներառված չեն «Հիշողություն, պատասխանատվություն և ապագա» հիմնադրամի՝ հարկադիր աշխատանքի համար կատարված վճարումները), իսկ միայն 2007 թ. ֆինանսական տարում 483,04 միլիոն եվրո է հատկացվել նացիզմի զոհերի համար, որից 29,9 միլիոնը փոխանցվել է հիշյալ հիմնադրամին {(234)}:

Թեև կատարված վճարումները վերաբերում են գերմանական նացիոնալ-սոցիալիզմի կողմից հետապնդված բոլոր խմբերին, և նրանցից յուրաքանչյուրի մասնաբաժնի վերաբերյալ ամբողջական ճշգրիտ վիճակագրություն չկա, այնուհանդերձ, ինչպես պարզ է դառնում մասնակի վիճակագրություններից, այդ վճարումների մեծագույն մասը՝ շուրջ 80 %-ը, ստացել են հրեաները, որոնք գերմանական նացիոնալ-սոցիալիզմի կողմից հետապնդված ամենամեծ խումբն են: Հատուցման գործընթացը շարունակվում է առայսօր:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԹՈՒԹՍԻՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒԱՆԴԱՅՈՒՄ

Թուքսիների և հուքուների հակամարտության նախապատմությունը

Ռուանդայի պետական սահմանները դեռ եվրոպական գաղութարարների հայտնվելուց առաջ էին որոշակիացել: Կիգերի Ռվաբուգիրիի թագավորության շրջանում (1853-1895 թթ.) նրա տիրապետության տակ անցան նաև արևմուտքում ու հյուսիսում գտնվող՝ նախկինում ինքնավար փոքր շրջանները, ինչի արդյունքում կենտրոնաձիգ իշխանությունն էապես ամրապնդվեց: Միաժամանակ երկրում ավելի ուժեղացավ բնակչության տարբեր խմբերի տարբերակումը, ընդ որում գերազանցապես անասնապահությամբ զբաղվողները, որոնց թուքսի էին անվանում, ձեռք բերեցին հարաճուն իշխանություն երկրագործությամբ զբաղվողների հանդեպ, որոնք անվանվում էին հուքուներ: Այդ գործընթացը որևէ կերպ չանդրադարձավ բնակչության երրորդ խմբի՝ տվանների վրա, որոնք թվաքանակով ամենանվազն էին և իրենց ապրուստը հայթայթում էին որսորդության ու հավաքչության միջոցով:

Ռվաբուգիրիի տիրապետության շրջանում «թուքսի» եզրույթը շարունակ ավելի էր վերաիմաստավորվում՝ որպես իշխող խավին պատկանողների անվանում, մինչդեռ հուքու եզրույթն ընկալվում էր որպես հպատակների անվանում:

Ռվաբուգիրին իրականացրեց նաև վարչական բարեփոխումներ, որոնք որոշակի անջրպետ ստեղծեցին հուքու և թուքսի բնակչության միջև: Դրանց շարքին էին պատկանում «ուբուրեթվա»-ն՝ հարկադիր աշխատանքի մի համակարգ, որը հուքուները պետք է կատարեին՝ վերստանալու համար իրենցից բռնագրավված հողը, և «ուբուհակե»-ն, որի համաձայն՝ թուքսի ղեկավարներն անասուններ էին տալիս հուքու կամ թուքսի հաճախորդներին՝

նրանց տնտեսական կամ անձնական ծառայությունների համար {(142) *13*}:

Գերմանացիները, 1899 թ. Ռուանդայում հաստատելով իրենց գաղութային տիրապետությունը, այդ անջրպետված սոցիալական հարաբերություններին տվեցին ռասիստական «հիմնավորում»՝ ըստ Եվրոպայում տարածված, այսպես կոչված, Քամիտյան տեսության: Այդ տեսությունը, որն օգտագործվում էր աֆրիկագիտության տարբեր բնագավառներում, պահանջում էր ընդունել հյուսիսային Աֆրիկայում տեղորոշված «քամիտյան», այսինքն՝ Նոյի որդի Քամից սերող ռասայի գերազանցությունը «նեգրոիդ» ռասայի հանդեպ:

Հետևելով այդ տեսությանը՝ գերմանացիներն այն տեսակետն էին որդեգրել, թե թութսիները հետնորդներն էին դարեր առաջ աֆրիկյան մեծ լճերի շրջանը ներգաղթած նիլոթների, որոնք ազգակցական կապ են ունեցել կովկասյան և այդպիսով նաև եվրոպական ժողովուրդների հետ: Այդ հանգամանքը, ըստ գերմանացի գաղութարարների, հիմնավորում էր թութսիների իշխանությունը կենտրոնական Աֆրիկայի ավելի ցածրակարգ՝ նեգրոիդ ռասային պատկանող էթնիկ խմբերի վրա, որոնց շարքում նրանք դասում էին նաև հութուներին: Գաղութարարները թութսիներին, որպես տեղական իշխանության ներկայացուցիչների, ներառեցին իրենց կառավարման համակարգի մեջ:

Առաջին Աշխարհամարտի ընթացքում բելգիացիները մի շարք մարտերից հետո Ռուանդայում դարձան իշխանության փաստացի տերը: Դա պաշտոնապես ճանաչվեց 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից, իսկ 1923 թ. Ազգերի լիգան Ռուանդան հռչակեց Բելգիայի մանդատային տարածք: Բելգիացիները նույնպես պահպանեցին թութսիների և հութուների միջև իշխանության անհավասար բաշխումը՝ դա պայմանավորելով թութսիների ռասայական գերազանցությամբ:

Բելգիացիները Ռուանդայում գործադրեցին հարկադիր աշխատանքի մի համակարգ, որի օգնությամբ նրանք ուզում էին երկիրը տնտեսապես զարգացնել, և դա գործնականում ավելի խորացրեց թութսիների և հութուների սոցիալական անջրպետը: Այդ առումով էական բացասական հետևանքներ ունեցավ նաև 1933-1934 թթ. հանրաքվեի հիման վրա անձը հաստատող փաստաթղթերի տրամադրումը մարդկանց, որոնցում ամրագրված էր յուրաքանչյուրի էթնիկ պատկանելությունը՝ որպես հութու, թութսի կամ տվա:

Բոլոր ռուանդացիների էթնիկ դասակարգումն այնուհետև ամրագրվեց կենտրոնական և տեղական վարչամատյաններում, և փաստորեն ստացվեց այնպես, որ, սոցիալական կարգավիճակի և տնտեսական զբաղվածության տեսանկյունից մարդկանց միջև առկա տարբերակվածությունը կենսաբանականացվեց՝ վերափոխվելով ռասայական տարբերակվածության:

Կաթոլիկ եկեղեցին երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակամիջոցում Ռուանդայում գտնվող իր միսիոներական դպրոցների միջոցով ավելի հովանավորում էր թութսիներին, քան հութուներին: Դպրոցական այդ կրթությունը, որի շրջանակում նաև ֆրանսերեն էր ուսուցանվում, թութսիների համար էապես դյուրացնում էր երկրի կառավարման համակարգ մուտք գործելը:

Երկրորդ Աշխարհամարտից հետո կաթոլիկ միսիոներների դիրքորոշումը փոխվեց, և նրանք հարաճուն կերպով աջակցում էին հութուներին՝ իրենց պարտքը համարելով օգնել այդ անապահով խմբին և դառնալ նրանց շահերի պաշտպանը: Դպրոցներում արևմտյան տիպի կրթություն ստանալու լայն հնարավորություններ տրվեցին նաև հութուներին: Դրա արդյունքում ձևավորված հութու կղերականությունը դարձավ հութուների էլիտան, որը հարաճուն կերպով թութսիների իշխանության հակակշիռ էր դառնում, պահանջում էր ժողովրդավարություն և ջանում էր մասնակից դառնալ քաղաքական գործընթացներին {(111) *23-35*}:

Հութուների հեղափոխությունը և հութուական վարչակարգը Գրեգորի Կայիբանդայի ղեկավարման շրջանում

1950-ական թթ. Ռուանդայի ապագաղութացման տեսանելի հեռանկարի ֆոնին քաղաքական բանավեճերն արմատապես սրվեցին: «Էթնիկական» սահմանները վերածվեցին քաղաքական կուսակցությունների պայքարի սահմանների: Թութսիական կուսակցություններն իրենց հիմնադիր ժողովների փաստաթղթերում և ծրագրերում պահանջում էին պահպանել թութսիների իշխանությունը, քանի որ դա, ըստ նրանց, պայմանավորված էր թութսիների գերազանցությամբ և համապատասխանում էր Ռուանդայի պատմական ավանդույթին, իսկ հութու ծայրահեղական քաղաքական գործիչներն անընդունելի էին համարում թութսիների հեգեմոնիան՝ նրանց համարելով ոչ բնիկ, օտար ռասայի ներկայացուցիչներ:

Բելգիան 1950-ական թթ. սկսեց հութուներին ներգրավել երկրի վարչակառավարման համակարգում: Դա մի կողմից թութսիներին վախ ներշնչեց, թե շուտով կկորցնեն իրենց իշխանությունը, մյուս կողմից չէր բավարարում նաև հութուների՝ հեռուն գնացող պահանջները, որոնք տենչում էին ձեռք բերել Ռուսանդայում ողջ իշխանությունը կամ առնվազն, դրա մեծ մասը: 1931 թ.-ից Ռուանդայում որպես միապետ հանդես եկող Մութարա III Ռուդահիգվայի մահից մի քանի ամիս անց՝ 1959 թ. նոյեմբերից, մեծապես սրվեց հակամարտությունը հութուների և թութսիների միջև: Նախքան բելգիական կառավարչությունը կվերականգներ կարգուկանոնը, բռնություններին զոհ դարձան մի քանի հարյուր մարդիկ:

Այդ իրադարձություններից հետո բելգիացիները վարչակառավարման համակարգում գտնվող թութսիների կեսին փոխարինեցին հութուներով: Քաղաքագլուխների կարևոր պաշտոնները, սակայն, մեծ մասամբ հատկացվեցին հութուներին: 229 քաղաքագլուխներից 210-ը հութուներ էին: Ավանդական հիերարխիկ կողմնորոշումը, որ նախկինում ապահովում էր բնակչության հա-

վատարմությունը տեղական թութսի էլիտայի հանդեպ, այժմ օգնող գործոն դարձավ տեղական նոր՝ հութու առաջնորդներին համար, որոնք իրենց հերթին հութուներին կոչ էին անում համախմբվել: Այդ փոփոխությունները վճռորոշ դեր ունեցան 1960-1961 թթ. տեղի ունեցած ընտրություններում հութուական «Պարմեհութու» (Parti du Mouvement et de l'Emancipation Bahutu) շարժման հաղթանակի համար, որն իր քարոզարշավի ժամանակ հանդես էր գալիս միապետության վերացման, հանրապետական համակարգի ներմուծման, Բելգիայից Ռուանդայի անկախացման և ամենից առաջ թութսիների տիրապետությանն արագ վերջ տալու պահանջներով: Քաղաքական իրադրության այդ փոփոխությունը Ռուանդայի պատմության մեջ մտավ «հութուական հեղափոխություն» անունով {(99) *63-66*}:

Դեռ Ռուանդայի անկախացումից առաջ, որ տեղի ունեցավ 1962 թ. հուլիսին, տասնյակ հազարավոր թութսիներ փախուստի դիմեցին հարևան երկրներ: Պարմեհութուի առաջնորդ Գրեգորի Կայիբանդան, ստանձնելով երկրի նախագահի պաշտոնը և երկրում ստեղծելով միակուսակցական համակարգ, ամրապնդեց հութուների իշխանությունը:

Փախստական դարձած թութսիները, կազմելով զինված ջոկատներ, ձեռնարկեցին պարտիզանական մի շարք հարձակումներ՝ ընդհուպ մինչև Ռուանդայի խորքը, սակայն դրանք 1967 թ. հաջողությամբ ետ մղվեցին: Միաժամանակ աճում էին պետական մարմինների կողմից հովանավորվող բռնությունները երկրում մնացած թութսիների հանդեպ, որոնք մեղադրվում էին թութսի պարտիզաններին համակրելու և օգնելու մեջ: Այդ բռնությունները, որոնք ուղեկցվում էին կյանքի և ունեցվածքի հանդեպ ոտնձգություններով, երկրի որոշ շրջաններում հանգեցրին թութսիների նոր սպանությունների և արտագաղթի: Մոտ 20 000 թութսիներ զոհ դարձան այդ բռնություններին, մոտ 30 000-ը փախուստի դիմեց հարևան երկրներ: Դեռևս երկրում մնացած բոլոր թութսի

քաղաքական գործիչները սպանվեցին: Հութուական վարչակարգը դրանից հետո թութսի պարտիզաններին էր պատասխանատու համարում երկրի՝ էական նշանակություն ունեցող բոլոր ներքին քաղաքական պրոբլեմների համար: Հութուները միաժամանակ ստեղծեցին «անխիղճ ճնշողների դեմ երկարատև, համարձակ և հաջողակ պայքարի» առասպելը, որը ճգնաժամային իրադրություններում շարունակ ակտիվանում էր {(99) *65*}:

Հութուները և թութսիները մինչև 1980-ական թթ. վերջը

Ռուանդայի հարևան Բուրունդիում տեղի ունեցած՝ հութուների մի կոտորածի պատճառով, որին զոհ դարձան 100 000–150 000 հութուներ, 1972 թ. հոկտեմբերին կրկին զանգվածային բռնություններ սկսվեցին ռուանդաբնակ թութսիների դեմ: Նախագահ Կայիբանդան որոշ ժամանակ վարանում էր միջամտել՝ ծայրահեղական հութուների շրջանում իր վարկանիշը չկորցնելու համար: Նա կարողացավ բռնությունները դադարեցնել միայն 1973 թ. փետրվարին՝ այդպիսով, սակայն, հարուցելով նաև ծայրահեղական հութուների թշնամանքը:

Չափավոր և ծայրահեղական հութուական շրջաններում ծավալվող անհամաձայնության և վեճերի ֆոնին երկրի պաշտպանության նախարար Յուվենալ Հաբիարիմանան 1973 թ. հուլիսի 5-ին իրականացրեց զինված հեղաշրջում՝ իր ձեռք վերցնելով բարձրագույն իշխանությունը: Հաբիարիմանային, որը նույնպես հութու էր և սերում էր Ռուանդայի հյուսիսից, հաջողվեց հութուների և թութսիների միջև հակամարտությունը դադարեցնել: Պահպանելով միակուսակցական համակարգը՝ նա արգելեց Պարմեհութուն և փոխարենը ստեղծեց իր՝ «Հանուն զարգացման ազգային հանրապետական շարժում» (Mouvement rėpublicain national pour le dėveloppement) կուսակցությունը:

Նոր նախագահը և իր կինը՝ Ագաթեն, հենարան ունենալով այդ կուսակցությունը և բանակը, իրենց իշխանությունն առավել

ամրապնդելու համար օգտագործեցին նաև կլանային ու ազգակցական հարաբերությունները: Կարևորագույն պաշտոնները՝ գլխավորապես բանակում, տրվեցին երկրի հյուսիսից սերող անձանց: Այդ ուժային խումբը ստացավ «akazu» (տնակ) անունը: Չնայած հավասար հնարավորությունների պաշտպանության պաշտոնական հավաստիացումներին՝ իշխանությունները սահմանափակում էին թութսիների մուտքը կրթական հաստատություններ, աշխատաշուկա, ինչպես և կառավարման համակարգ {(99) *71*}:

Սկզբնական շրջանում նոր նախագահի տնտեսական քաղաքականությունը զգալի հաջողություններ էր գրանցում: Երկրի տնտեսական բարգավաճումը, սակայն, երկար չտևեց: 1980-ական թթ. կեսերին Ռուանդայում սկսվեց տնտեսական խոր ճգնաժամ: Դա գլխավորապես պայմանավորված էր համաշխարհային շուկայում սուրճի գների կտրուկ անկումով, մինչդեռ Ռուանդայի բոլոր արտահանումների 75 %-ը հիմնված էր սուրճի արտադրության վրա: Ճգնաժամը սրվում էր նաև բնակչության՝ նախորդ շրջանում բարելավված բուժսպասարկման շնորհիվ արագացած աճի և դրա հետ կապված՝ հողային ռեսուրսների հարաճուն սակավության պատճառով: Տնտեսության մեջ արդյունաբերության ցածր տեսակարար կշիռը և այդ ոլորտում աշխատատեղերի սակավությունը (բնակչության ավելի քան 90 %-ը զբաղվում էր երկրագործությամբ ու անասնապահությամբ) նույնպես նպաստում էին ճգնաժամի խորացմանը:

Այդ պայմաններում Ռուանդան հարկադրված էր երկրի սոցիալ-տնտեսական ոլորտում կառուցվածքային փոփոխություններ և խնայողական միջոցառումներ իրականացնել, որոնց արդյունքում դադարեցվեցին նաև անվճար դպրոցական կրթությունն բուժսպասարկումը: Տեղական արժույթի արժեզրկման հետևանքով բարձրացան ներկրվող ապրանքների, այդ թվում՝ սննդամթերքի գները: Մարդկանց, առաջին հերթին գործազուրկ երիտասարդնե-

րի շրջանում շարունակ ավելի էր աճում ստեղծված իրադրությունում հեռանկարի բացակայության զգացումը {(131) *147-149*}:

Քաղաքացիական պատերազմը

Մոլեգնող տնտեսական ճգնաժամը էապես նվազեցրեց Հաբիարիմանայի հեղինակությունը և հանգեցրեց ընդդիմադիր խմբերի կազմավորման, որոնք, վայելելով հիմնականում երկրի հարավային շրջանների բնակչության աջակցությունը, քննադատում էին նախագահի քաղաքականությունը: Նրանք պահանջում էին երկիրը ժողովրդավարացնել և վերջ տալ Հաբիարիմանայի ու հյուսիսային տարածաշրջանից սերող նրա վստահորդների կողմից իշխանության մենաշնորհացմանը:

Ընդդիմադիրների այդ ցանկություններին զգալի աջակցություն էին ցուցաբերում նաև արևմտյան դոնոր երկրները, որոնք, մասնավորապես, սառը պատերազմի ավարտից հետո ավելի եռանդուն էին հանդես գալիս աֆրիկյան երկրների ոչ ժողովրդավարական պայմանները հաղթահարելու պահանջով: Դրա հետ մեկտեղ նրանք ճնշում էին գործադրում Հաբիարիմանայի և նրա շրջապատի վրա՝ արդեն շուրջ 30 տարվա վաղեմություն ունեցող փախստականության խնդիրը լուծելու համար:

Նախագահը սկզբից եթե մերժել էր թութսի փախստականներին դարձյալ Ռուանդայում բնակեցնելու գաղափարը՝ պատճառաբանելով հողատարածքների սակավությունը: Ըստ որոշ գնահատումների՝ 1990-ական թթ. սկզբին արտերկրում կային մոտ 600 000 թութսի փախստականներ:

Ուգանդայում գտնվող թութսի պարտիզանների նոր՝ մոտալուտ ներխուժման մասին տարածված լուրերը նույնպես նպաստում էին Ռուանդայի գործող իշխանության վարկաբեկմանը և հանրության շրջանում նրա հանդեպ վստահության նվազմանը: Հաբիարիմանան այդ իրավիճակում՝ 1990 թ. հուլիսի սկզբին հայտարարեց քաղաքական բարեփոխումներ կատարելու իր մտադ-

րության մասին: Այդ գաղափարի իրականացումը, սակայն, սկզբնապես առկախվեց, քանի որ քաղաքական լարվածությունը վերածվեց ռազմական առճակատման. Ուգանդայում կազմավորված թութսիական ապստամբական բանակը, որը հայտնի էր «Ռուանդայի հայրենասիրական ճակատ» (այսուհետ՝ ՌՀՃ) անունով, Պաուլ Կագամեի ղեկավարությամբ 1990 թ. հոկտեմբերի 1-ին ներխուժեց Ռուանդա: Այդ ներխուժմամբ փաստորեն սկսվեց քաղաքացիական տնական պատերազմ, որը պետք է ավարտվեր միայն 1994 թ. հուլիսին՝ ՌՀՃ-ի հաղթանակով:

ՌՀՃ-ի ներխուժումից հետո Հաբիարիմանան ռազմական աջակցություն խնդրեց Բելգիայից, Ֆրանսիայից և Զաիրիից, որոնք ընդառաջեցին նրան: Այդ երկրների տրամադրած օգնությունը հնարավորություն ընձեռեց Ռուանդայի կառավարական բանակին հաջողությամբ ետ մղելու ՌՀՃ-ի առաջին հարձակումը: Դրանից հետո բելգիական զորամասերը հեռացան այնտեղից: Զաիրիի զորամասերը հարկադրված եղան հեռանալ, քանի որ զբաղվում էին թալանով: Ֆրանսիացի զինվորականները, սակայն, մնացին Ռուանդայում և ամրապնդեցին Ռուանդայի բանակը: Եթե վերջինիս թվակազմը 1990 թ. չէր գերազանցում 5200-ը, ապա ֆրանսիական աջակցության շնորհիվ 1993 թ. այն հասավ շուրջ 35 000-ի: Ֆրանսիացի սպաները նշանակալից դեր ունեցան նաև Ռուանդայի բանակի ծառայողների ռազմական կրթության և պատրաստվածության բարելավման, ինչպես և այն տարբեր, առաջին հերթին թեթև զինատեսակներով սպառազինելու հարցում: Ռուանդան 1992-1994 թթ. դարձավ զենքի երրորդ խոշոր ներմուծողն Աֆրիկայի՝ Սահարայից հարավ ընկած տարածաշրջանում:

Նախագահն ու իր քաղաքական վստահորդները, որոնք ՌՀՃ-ի ներխուժումից առաջ համաձայնել էին երկրում ժողովրդավարություն հաստատել, այդ ներխուժմամբ պայմանավորված արտակարգ իրավիճակն օգտագործեցին՝ գործընթացն արգելա-

փակելու համար: Բարձրագույն իշխանությանը քննադատող լրագրողները ենթարկվեցին հետապնդումների: Նախագահի շրջապատը հովանավորում էր այն ռադիոկայաններին ու թերթերին, որոնք ագրեսիվ սադրիչ քարոզչություն էին վարում քաղաքական ընդդիմության և թութսիների դեմ: Հաբիարիմանայի՝ «Հանուն զարգացման ազգային հանրապետական շարժում» կուսակցությունը միայն 1992 թ. ապրիլին համաձայնեց նոր ձևավորված կուսակցությունների հետ իշխանությունը բաժանել կոալիցիոն կառավարման միջոցով: Վերջիններիս շարքին էր պատկանում նաև «Կոալիցիա հանուն հանրապետության պաշտպանության» կուսակցությունը (ԿՀՊ), որը պատրաստ էր երկրում հութուների իշխանությունը պաշտպանել ամենաարմատական միջոցներով:

Այդ կուսակցությունը, որը հիմնվել էր նախագահի շրջապատին պատկանող անձանց կողմից, հանդես էր գալիս թութսիներին երկրից վտարելու պահանջով և 1992 թ.-ից կազմակերպեց «Նույն նպատակի հետևորդներ» (Impuzamugmbi) անունը կրող ոստիկանությունը, իսկ նախագահի կուսակցությունը նույն տարում հիմնեց «Միասին պայքարողներ» (Interahamwe) ռազմականացված կազմակերպությունը:

1990 թ. հոկտեմբերից մինչև 1994 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում թութսիներն ու ընդդիմադիր հութուները շարունակ ենթարկվում էին բռնությունների և սպանդի, որոնք մեկնաբանվում էին որպես ՌՀԵ-ի ռազմական հաջողությունների պատճառով կատարվող վրեժի ակցիաներ: Իշխանությունները հովանավորում կամ լռելյայն հանդուրժում էին այդ բռնությունները, որոնց կատարողները երբևէ չպատժվեցին: Մարդու իրավունքների այդ խախտումները, որոնց հետևանքով սպանվեցին շուրջ 2000 թութսիներ և մի քանի հութուներ, համարվում են ցեղասպանության նախասկիզբը {(99) *75-78, 119*}:

Չնայած 1990 թ. հոկտեմբերի վերջին ՌՀԵ-ի կրած պարտությանը, այդ զորաբանակը հաջորդ տարիներին շարունակում էր

մնալ որպես ազդեցիկ գործոն Ռուանդայում քաղաքականության ձևավորման հարցում: Պ. Կագամեն մեծացրեց և վերակազմակերպեց իր զորամասերը և նոր, հաջողված հարձակումներով նորանոր տարածքներ գրավեց Ուգանդային սահմանակից ռուանդական երկրամասերից: Այդ արշավանքներն ու գրավումները առաջացրին զանգվածային փախստականության նոր հոսքեր Ռուանդայի ներսում: Եթե 1980-ական թթ. վերջին այնտեղ «ներքին» փախստականների թիվը կազմում էր մոտ 80 000, ապա 1992 թ. այն հասավ շուրջ 350 000-ի, իսկ ՌՀՃ-ի՝ 1993 թ. փետրվարյան հարձակումից հետո՝ մոտ 950 000-ի {(131) *187*}: Այդ ընթացքում զինադադարի շուրջ ձեռք բերված համաձայնություններն անկայուն էին և, որպես կանոն, չէին գործում:

ՌՀՃ-ն 1992 թ. կարողացավ իր վերահսկողության ոլորտը տարածել նաև Ռուանդայի հյուսիսային՝ Բիումբայի պրեֆեկտուրայի վրա, որը համարվում էր երկրի «հացի զամբյուղը»: ՌՀՃ-ի այդ հաջողությունը հարկադրեց Ռուանդայի կառավարությանը 1992 թ. կեսերից Տանզանիայի Արուժա քաղաքում նախաձեռնել խաղաղության հաստատման գործընթաց, որն, անկասկած, համապատասխանում էր երկրի շահերին: Այդ բանակցությունները դանդաղ էին ընթանում և մերթընդմերթ ընդհատվում էին վերսկսվող ռազմական գործողությունների հետևանքով: Բանակցություններում քննարկվող հիմնական հարցերը վերաբերում էին ռուանդացի փախստականների վերադարձին և նրանց նախկին սեփականության վերադարձմանը, նախագահի կուսակցության, Ռուանդայի մյուս կուսակցությունների և ՌՀՃ-ի միջև իշխանության բաժանմանը, բանակային զորքերի դեմոբիլիզացիային և դրանց միավորմամբ մի միասնական ռազմական ապարատի ստեղծմանը, ինչպես և բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնությունների իրականացումը ապահովելու նպատակով Ռուանդայում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի տեղակայմանը: Թեև Արուժայում 1992 թ. օգոստոսից 1993 թ. օգոստոսն ըն-

կած ժամանակահատվածում ընդհանուր առմամբ չորս համաձայնագրեր ստորագրվեցին, իսկ 1993 թ. օգոստոսի 4-ին վերջապես նախաստորագրվեց Արուժայի խաղաղության պայմանագիրը, դրա դեմ ընդվզեցին նախագահի կուսակցության ներկայացուցիչների մեծ մասը և ամբողջ ԿՀՊ-ն:

Հաբիարիմանայի շրջապատին 1993 թ. հաջողվել էր պառակտել կարևորագույն ընդդիմադիր կուսակցությունները: Ծուտով չափավոր հութու գործիչների գլխավոր հակառակորդները դարձան, այսպես կոչված, «Հութուների իշխանություն» շարժման ներկայացուցիչները, որոնք դեմ էին ՌՀՃ-ին որևէ զիջում կատարելուն և Ռուանդայի քաղաքական ու ռազմական իշխանությանը թութսիների մասնակցությանը: Նրանք մտադիր էին իրենց շարժման միջոցով ձախողել հակառակորդ կողմերի միջև փոխըմբռնման և փոխզիջումների կայացումը՝ փոխարենն արմատավորելով վերկուսակցական մի այնպիսի մտայնություն, ըստ որի՝ հութուների գոյությունը վտանգված էր թութսիների կողմից: Նախագահի շրջապատին պատկանող անձինք այդ շարժումը կազմակերպեցին՝ վերջնանպատակ ունենալով մի պետության ստեղծումը, որտեղ չէին լինի թութսիներ, ինչպես և ընդդիմադիր հութուներ: Այդ շարժման գոյությունը և դրա ֆինանսավորման նպատակով սկսված դրամահավաքը ծանուցվեցին 1993 թ. հոկտեմբերի 23-ին Գիտարամայում տեղի ունեցած մի միջկուսակցական ժողովում:

«Հութուների իշխանություն» շարժման ազդեցության շեշտակի աճը պայմանավորվեց երկու իրողություններով. մի կողմից՝ ՌՀՃ-ն 1993 թ. փետրվարին, ներխուժելով մինչև մայրաքաղաք Կիգալիի մերձակայքը, ցույց տվեց իր ռազմական պարզորոշ գերազանցությունը, և միայն ֆրանսիական նոր դեսանտայինների մոբիլիզացումն ու ՌՀՃ-ի վրա իրականացված միջազգային մեծ ճնշումն էին, որ կասեցրին վերջինիս կողմից մայրաքաղաքի գրավումը: ՌՀՃ-ի այդ հարձակումը հութուների շրջանում առաջաց-

րեց թութսիների ռազմական ներուժի գերազանցությամբ պայմանավորված տագնապ ու երկյուղ: Մյուս կողմից՝ Բուրունդիի բանակի թութսի ծառայողները 1993 թ. հոկտեմբերի 21-ին սպանեցին Բուրունդիի նախագահ Մելխիոր Նդադայեին, որը չափավոր հութու էր: Այդ միջադեպի հետևանքով, որը Բուրունդիում քաղաքացիական պատերազմի պատճառ դարձավ, չափավոր հութուների շրջանում նվազեց ՌՀՃ-ի հետ խաղաղ համագործակցության հաստատման հույսը: Կոշտ քաղաքականության կողմնակից հութուները Նդադայեի սպանությունը համարում էին թութսիների կողմից աֆրիկյան մեծ լճերի ամբողջ տարածքում իշխանության տիրանալու անխնա ձգտման դրսևորում: Կուսակցությունների տրոհումը չափավոր և ծայրահեղական թևերի Հաբիարիմանային հնարավորություն տվեց նաև հետաձգել Արուժայի խաղաղության համաձայնագրի իրագործումը, քանի որ տարաձայնություններ ունեցող կուսակցական խմբակցություններին չհաջողվեց համաձայնության գալ նախարարական պորտֆելների բաժանման շուրջ {(99) *173-180*}:

Ցեղասպանության նախապատրաստումը

Ցեղասպանության նախապատրաստման գաղափարական հիմքը շարունակ զարգացվող այն տեսակետն էր, թե թութսիներին անհրաժեշտ էր ոչնչացնել, իսկ նրանց հանդեպ ցանկացած հանդուրժողականություն համարվում էր դավաճանություն հութուներին: Ռուանդայի *Կանգուրա* թերթը 1990 թ.-ից անդադար հանդես էր գալիս նման կոչերով: «Հութուների տասը պատվիրանները» վերնագրով հրապարակումն այդ պարբերականի ռասիստական, ցեղասպանական պրոպագանդայի միանշանակ դրսևորումներից էր: Դրանում նշված տասը պատվիրաններից երկուսն ուղղված էին թութսի կանանց դեմ {(210)}:

Լեոն Մուգեսերան՝ Հաբիարիմանայի կուսակցության առաջնորդներից մեկը, ղեկավար քաղաքական գործիչներից առաջինն

էր, որը (1992 թ. նոյեմբերի 22-ին) հանդես եկավ թութսիների և ընդդիմադիր հութուների ոչնչացման հրապարակային կոչով {(116)}:

Քանի որ Ռուանդայի բնակչության ավելի քան 40 տոկոսն անգրագետ էր, ուստի հասարակական կարծիքի վրա մամուլից ավելի մեծ ազդեցություն էր գործում ռադիոն: Հաբիարիմանայի մերձակա իշխանական օղակները 1993 թ. օգոստոսի 8-ից սկսեցին հեռարձակումներ կատարել «Հազար բլուրներից ազատ» քարոզչական ռադիոկայանից (RTLM): Այդ ռադիոկայանի՝ ընդհանուր հաշվով ութ մոդերատորներից մեկը Ջորջ Ռուջիուն էր՝ մի բելգիացի, որն, ի դեպ, սուր քննադատության էր ենթարկում Բելգիան և բելգիական կապույտ սաղավարտավորների զորակազմը: Ռադիոկայանի հեռարձակումները ոճային բազմազանության, հեռախոսազանգերի և ունկնդիրների հետ հարցազրույցների, ինչպես նաև գրավիչ երաժշտության օգտագործմամբ կարճ ժամանակում մեծ ժողովրդականություն ստացան: Չնայած ռադիոկայանը պետական հեռարձակողի կարգավիճակ չուներ, այնուհանդերձ օգտվում էր նաև նախագահի պալատի ռեսուրսներից: Ունկնդիրների շրջանակն ընդլայնելու համար կառավարությունը տեղական իշխանություններին անվճար ռադիոապարատներ էր հատկացնում:

1990-1994 թթ. զարգացավ մի հակաթութսիական հռետորաբանություն, որի նպատակն էր նախապատրաստել այդ խմբի զանգվածային հետապնդումն ու ոչնչացումը: Այդ հռետորաբանությունը բնութագրվում էր խեղաթյուրման տեխնոլոգիաների կիրառմամբ: Հութուական ծայրահեղական քարոզչությունը թութսիներին մեղադրում էր այն բանում, թե նրանք ծրագրում էին ոչնչացնել հութուներին, ուստի «վտանգված» հութուները պարտավոր էին կանխարգելիչ հարված հասցնել: Այդ գաղափարն ամրապնդելու հարցում կարևոր դեր էին խաղում հութուների հանդեպ թութսիների իրականացրած գազանային բռնությունների մասին հորինված լուրերը:

Այդ հռետորաբանության մեկ այլ բաղկացուցիչը Ռուանդայի հասարակական միջավայրից թութսիների մեկուսացումն էր: Ըստ այդմ՝ իշխանություն ունենալու իրավունք ուներ միայն մեծամասնություն կազմող հութու ժողովուրդը: Իշխանության՝ թութսիների մրցակցային պահանջները հակաժողովրդավարական էին, քանի որ նրանք ձգտում էին դարձյալ ֆեոդալականացնել երկիրը: Հակաթութսիական քարոզչության մեկ այլ բաղկացուցիչը թութսիների ապամարդկայնացումն էր: Նրանց անվանում էին ուտիճներ, օձեր, զեռուններ, մոծակներ, կապիկներ և այլն, որոնց անհրաժեշտ էր սպանել:

Այդ քարոզչության ընթացքում այլաբանական լայն կիրառություն ունեին նաև երկրագործական եզրույթները: Հութուներին կոչ էր արվում կտրել «անպիտան ծառերն» ու «թփերը», ընդ որում՝ ոչ մի դեպքում չէր կարելի խնայել «փոքր ծիլերին» (նկատի էին առնվում երեխաները): Նման քողարկված կոչերը հասցեատերերին հիշեցնում էին այդ ուղղությամբ «համայնքային» և «բարեգործական» աշխատանքներ կատարելու իրենց պարտքի մասին {(75) *291-324*}:

Թութսիների ոչնչացման նախապատրաստական կարևոր միջոցառումներից էին ոստիկանության և «քաղաքացիական ինքնապաշտպանության» ստորաբաժանումների կազմավորման ծրագրերի մշակումն ու գործադրումը: Այդ նպատակով հավաքագրված տղամարդիկ պետք է տեղական ոստիկանների և նախկին զինվորների ղեկավարությամբ մարտի նետվեին «թշնամու» դեմ: Պաշտպանության նախարարության աշխատակից գնդապետ Թեոնեստե Բագոսորան, որը մեծ դեր է խաղացել թութսիների ոչնչացումը ծրագրելու և նախապատրաստելու հարցում, 1992 թ. առաջին ամիսներին արդեն «քաղաքացիական ինքնապաշտպանության» մի համապատասխան նախագիծ էր կազմել: Պատրաստվել էին նաև «ոստիկանության» պոտենցիալ առաջնորդների ցուցակներ: Բացի այդ՝ ծայրահեղական հութուները 1993 և

1994 թթ. կազմել էին մոտ 1500 թուրքերի և ընդդիմադիր հուրուների անվանացուցակներ, որոնց անհրաժեշտ էր առաջնահերթորեն սպանել:

Վերոնշյալ ծրագրերին համապատասխան՝ զինվորականներն ու քաղաքական ղեկավարները 1993 թ. և 1994 թ. սկզբին մեծ քանակությամբ հրազեն բաժանեցին բնակչությանը: Քանի որ դա ծախսատար էր, Հաբիարիմանայի վստահությունը վայելող ծայրահեղականները որոշեցին, հրազենից զատ, գնել նաև մաչետներ: Ցեղասպանությանը նախորդող շաբաթներին Ռուանդա ներկրված այդ գործիքների քանակը բավարարում էր ամբողջ երկրում չափահաս հուրուների մեկ երրորդին դրանցով զինելու համար: Ռուանդայում մաչետները տասնամյակներ ի վեր լայն կիրառություն ունեին որպես երկրագործական գործիքներ, ուստի դրանք մինչ այդ ևս մեծ քանակությամբ առկա էին երկրում {(159) *28*, (99) *131-144*}:

Ցեղասպանությունը

Հետապնդումների և սպանդի մեկնարկը

Բռնությունների և սպանդի մեկնարկը տրվեց 1994 թ. ապրիլի 6-ի ուշ երեկոյան նախագահ Հաբիարիմանայի սպանությամբ, որը Բուրունդիի նախագահ Կիպրիեն Նտարյամիրայի հետ ինքնաթիռով վերադառնում էր Դարեսալամում տեղի ունեցած մի կոնֆերանսից: Ժամը 20:30-ին ինքնաթիռը, որը պատրաստվում էր վայրէջք կատարել Կիգալիի օդանավակայանում, հրթիռակոծվեց: Բոլոր ուղևորները և անձնակազմի անդամները մահացան: Այն հարցը, թե ովքե՞ր էին դրա մեղավորները, առայսօր մնում է չպարզաբանված: Կա վարկած, որ դա արել են ծայրահեղական հուրուները, որոնք անընդունելի էին համարում նախագահի ձեռնարկած բանակցությունները և դրանց արդյունքում ստորագրված՝ Արուժայի խաղաղության համաձայնագիրը: Կա նաև հակառակ տեսակետը, ըստ որի՝ հանցագործները ՌՀՃ-ի առաջնորդ

Պ. Կագամեի շրջապատին պատկանող մարդիկ էին, որոնք չէին ցանկանում հութական կառավարության հետ փոխհամաձայնության գնալ և ուզում էին հակամարտությունը պատերազմի միջոցով լուծել իրենց օգտին {(206)}:

Ինքնաթիռի հրթիռակոծումից մոտ 30 րոպե անց Կիգալիում սկսվեց ընդդիմադիր հութուների, նշանավոր թութսիների և Արուժայի համաձայնագրի կողմնակիցների սպանդը: Դրան լծված էին մեծ մասամբ նախագահի գվարդիայի անդամները, որոնք նախապես պատրաստված ցուցակների հիման վրա ներխուժում էին իրենց զոհերի տները և սպանում նրանց: Նրանց օգնում էին ուրիշ ջոկատներ՝ ծայրահեղական հութու սպաների ղեկավարությամբ, ինչպես նաև ոստիկանության զինված խմբեր: Առաջին զոհերից մեկը երկրի վարչապետ Ագաթե Ուվիլինգիյիմանան էր, որը, սահմանադրության համաձայն, նախագահից հետո երկրորդ բարձր պաշտոնյան էր: ՄԱԱՌ-ի (ՄԱԿ-ի աջակցության առաքելություն Ռուանդայում) գանացի և բելգիացի ներկայացուցիչները, որոնց հանձնարարված էր Ագաթեի պաշտպանությունը, չկարողացան կանխել նրա սպանությունը: Նրանք ձերբակալվեցին, որից հետո տասը բելգիացի զինվորները նույնպես սպանվեցին:

Գնդապետ Բագոսորան դեռ ապրիլի 6-ի լույս 7-ի գիշերը փորձեց լրացնել պետության վերին օղակում առաջացած իշխանության վակուումը: Նա հանդես եկավ որպես ճգնաժամային շտաբի նախագահ, որի անձնակազմը բաղկացած էր բացառապես Ռուանդայի զինվորականության ներկայացուցիչներից: Այդ շտաբի սպաների մեծ մասը, սակայն, մերժեց ողջ իշխանությունը տալ Բագոսորային: Ապրիլի 8-ին վերջինս հավաքեց հութու ծայրահեղական քաղաքական գործիչներին և պահանջեց ստեղծել ժամանակավոր կառավարություն: Երկրի նախագահ ընտրվեց Թեոդոր Սինդիկուբվաբոն, իսկ Ժան Կաբանդան նշանակվեց վարչապետ:

Միջազգային հանրությունը սկսված զանգվածային բռնություններին արձագանքեց՝ օտարերկրացիներին Ռուանդայից

դուրս բերելով: Այդ տարհանումներն իրականացնում էին ֆրանսիացի և բելգիացի զինվորները: ՄԱԱՌ-ի տասը բելգիացի զինվորների սպանությունը դարձավ շարժառիթ նաև Արուժայի համաձայնագրի ստորագրումից հետո Ռուանդայում տեղակայված խաղաղապահ զորակազմի մեծ մասը՝ առաջին հերթին բելգիական անձնակազմը երկրից դուրս բերելու համար: {(99) *223-252*}:

Ցեղասպանության ծավալումը

Ապրիլի 7-ից ցեղասպանական գործողությունները համընդհանուր ծավալում ստացան: Առաջին օրերին համեմատաբար փոքր թվով թութսիներ զոհ դարձան դրանց: Դրա պատճառներից մեկը սկզբնական շրջանում մարդասպանների՝ ոստիկանության և «ինքնապաշտպանության ստորաբաժանումների» սահմանափակ զինվածությունն էր: Բացի այդ՝ բազմաթիվ թութսիներ փախչելով ապաստանում էին դպրոցներում, եկեղեցիներում, հիվանդանոցներում, սպորտային հրապարակներում, խաղադաշտերում՝ հուսալով մեծ զանգվածի մեջ ապահովություն ունենալ: Հաճախ ամբոխը՝ զինված մաչետներով, նիզակներով, ձողերով, կացիններով, բրիչներով և այլ պարագաներով, վարանում էր հարձակվել՝ երկյուղելով կորուստներ ունենալուց: Շատ դեպքերում հարձակվողները փորձում էին օգտագործել պաշարվածներին սովամահ անելու տակտիկան:

Իրադրությունը փոխվեց ապրիլի 13-ից հետո: Ապրիլի 12-ին պետական հեռարձակող «Ռուանդայի ռադիոն» և RTLM-ը միմյանց միջև քաղաքական տարաձայնությունները վերջացնելու և թութսիների դեմ միասնական պայքարի դուրս գալու զանգվածային կոչեր ուղղեցին հութուներին: Տեղերում հայտնվեցին հրաձգային զենքերով, ներառյալ գնդացիրներով ու նռնակներով զինված ստորաբաժանումներ՝ բաղկացած նախագահի գվարդիայի, բանակի, պահեստազորի և ազգային ոստիկանության անձնակազմերից, որոնք պաշարվածների դեմ գործադրեցին այդ զենքե-

ը: Որպես կանոն՝ հարձակողները նախ կարգադրում էին տվյալ վայրերում դիպվածաբար գտնվող կամ խուճապի մեջ թութսիների հետ այնտեղ ապաստանած հութուներին հեռանալ: Այնուհետև նրանք մի քանի նռնակներ էին նետում հավաքված բազմության մեջ: Սկսված իրարանցման ժամանակ փախչողները գնդակահարվում կամ սառը զենքով սպանվում էին, իսկ այնուհետև մարդասպանները ներս էին խուժում և կենդանի մնացածներին սպանում էին կտրող, հարվածող ու այլ զենքերով: Կատարված այդ-օրինակ հանցագործությունների շարքից էր Նիարուբուեի կոտորածը: Ըստ վկաների ցուցմունքների՝ թութսիների հավաքական փախուստի վայրերի մեծ մասը գրավվել և սպանդանոցների էր վերածվել մինչև 1994 թ. ապրիլի 21-ը: Ըստ գնահատումների՝ մինչ այդ ժամանակակետը սպանվել է 250 000 մարդ {(124) *15-16*}:

Թութսիների դեմ իրականացվող զանգվածային բռնությունների տարածաշրջանային ընդգրկումն առանձին դեպքերում որոշ կապ ուներ պատմական և քաղաքական նախընթաց իրողությունների հետ: Ուգանդային սահմանակից Բիումբայի պրեֆեկտուրան ցեղասպանության սկզբում արդեն մասամբ գտնվում էր ՌՀՃ-ի վերահսկողության ներքո: Վերջինս արագորեն գրավեց այդ շրջանի մնացյալ մասը ևս, այնպես որ այնտեղ թութսիների կոտորածներ տեղի չունեցան:

Հաբիարիմանայի վարչակարգի միջնաբերդը հանդիսացող՝ հյուսիս-արևմտյան երկու պրեֆեկտուրաներում՝ Ռուհենգերիում և Գիզենվիում բնակվող թութսիները դեռ ցեղասպանությունից առաջ հեռացել էին այդ շրջաններից՝ այնտեղ նրանց հանդեպ ի հայտ եկած սպառնալիքների և բռնարարքների հետևանքով: Այդ պատճառով նշված տարածքներում կոտորածները համեմատաբար նվազ չափերի էին հասնում:

Գիտարամայի պրեֆեկտուրայի ղեկավարումը սկզբնական շրջանում դեռ հութուական ընդդիմության ձեռքում էր: Միայն ռազմական ստորաբաժանումների և ոստիկանության ջոկատնե-

րի՝ այնտեղ ժամանելուց հետո՝ 1994 թ. ապրիլի 21-ից, այնտեղ սկսվեցին թութսիների զանգվածային կոտորածներ: Ռուանդայի հարավային Բուտարեի շրջանի պրեֆեկտը թութսի էր: Նա դիմադրում էր ոստիկանության ջոկատների ներխուժմանը: Ապրիլի 18-ին նա պաշտոնազրկվեց, որից հետո այնտեղ սկսվեցին զանգվածային սպանությունները {(159) *55-60*}:

Հրամանները

Սպանության հրամանները չորս ուղիներով էին հասնում ստորադաս պաշտոնյաներին և բնակչությանը: Զինվորականության շրջանում գործում էր հրամանի և ենթարկման մեխանիզմը: Ժամանակավոր կառավարությունն օգտագործում էր նաև պրեֆեկտների, ենթապրեֆեկտների, քաղաքագլուխների, համայնքային ավագանիների և գյուղապետերի վարչակառավարման համակարգը, որոնք իրենց հերթին քաղաքացիական բնակչությանը կոչ էին անում մասնակից դառնալ սպանդին: Այդ կոչերում հարցը հաճախ ներկայացվում էր որպես տեղական համայնքային «գործ», ինչի ավանդույթը Ռուանդայում խոր արմատներ ուներ: Եթե այդ անձինք հրաժարվում էին սպանության պլաններն իրականացնելուց, պաշտոնազրկվում, առանձին դեպքերում նաև սպանվում էին: «Հութուների իշխանություն» շարժմանը պատկանող կուսակցությունների առաջնորդներն օգտագործում էին կապի մի երրորդ ճանապարհ՝ կուսակցական կառույցները, տեղերում թութսիների սպանդ հրահրելու համար: Կապի չորրորդ ճանապարհը սկսվում էր «քաղաքացիական ինքնապաշտպանության» հրամանատարական կենտրոնից, որը գտնվում էր Բագոսորայի ենթակայության ներքո և տարածվում էր դեպի այդ կառույցի բոլոր տեղական ստորաբաժանումները: «Քաղաքացիական ինքնապաշտպանության» տեղական հանձնաժողովները և գործող զինված խմբերը սերտորեն համագործակցում էին ոստիկանության ջոկատների հետ, այնպես որ նրանց միջև նույնիսկ հստակ սահմանազատում չկար:

Հրահանգավորման վերոնշյալ ուղիների օգտագործման ժամանակ խստորեն չէին պահպանվում հիերարխիայի կանոնները, և այն դեպքերում, երբ ենթակաները թութսիների դեմ ավելի արմատական գործողությունների կողմնակից էին, քանի իրենց վերադասները, նրանք կարող էին առանց վերջիններիս հրահանգի կամ համաձայնության ձեռնամուխ լինել այդ գործողություններին: Ինչ վերաբերում էր սպանություն իրականացնող միլիցիայի ջոկատներին, ապա դրանց մի մասը ղեկավարվում էր զինվորականների, մյուսները՝ կուսակցական գործիչների կամ վարչական պաշտոնյաների կողմից: Շատ դեպքերում այդ ջոկատները նաև ինքնուրույն էին գործում կամ ճնշում էին գործադրում վարչական ղեկավարների վրա՝ թութսիների սպանության հարցում չվարանելու համար:

Հրահանգավորման նշված ուղիներից զատ, հութուներին սադրելու հարցում մեծ դեր էին խաղում Ռուանդայի ռադիոն և առաջին հերթին RTLM-ը {(99) *301-304, 332-337*}:

Սպանդի ընթացքն ու ծավալը

1994 թ. ապրիլի 6-ից մինչև հուլիսի կեսն անընդմեջ շարունակվող ցեղասպանությանը զոհ դարձան 800 000–1 000 000 թութսիներ, այլ խոսքով՝ այդ ժամանակ Ռուանդայում բնակվող թութսիների շուրջ 75 տոկոսը: Զոհերի թվի նվազագույն գնահատումները սկսվում են 500 000-ից:

Ցեղասպանության առաջին օրերին օրակարգում էր գլխավորապես հեղինակավոր թութսիների և ընդդիմադիր հութուների սպանությունը: Առաջին շաբաթներին դրան զուգակցվեց որոշակի վայրերում մեծ խմբերով ապաստանած թութսիների կոտորածը: Հանցագործները միաժամանակ ողջ երկրում իրականացրին ճանապարհների շրջափակում, որպեսզի կարողանան վերահսկողություն ունենալ փախուստի դիմող մարդկանց վրա: Փախչող թութսիները և այն անձինք, որոնք կասկածվում էին թութսի լինելու

կամ թութսիներին օգնելու մեջ, այդ բարիկադների մոտ առանց այլևայլի սպանվում էին: Ի լրումն դրա, պարեկների և այլ մարդորսորդների կողմից իրականացվում էին նաև որոնումներ այն վայրերում, որտեղ առկա էր մարդկանց խմբերի թաքնվելու հավանականությունը:

Հաճախ սպանության գործողություններին նախորդում էին զանազան բռնարարքներ, ինչպես օրինակ՝ նվաստացումներ, բռնաբարություններ, անդամահատումներ կամ այլ խոշտանգումներ: Թութսիների խոշտանգման տարածված մեթոդներից մեկը ձեռքերի և ոտքերի անդամահատումն էր: Որոշ դեպքերում հանցագործները դանդաղորեն էին հատում իրենց զոհերի մարմնի անդամները՝ նրանց տևական և մեծ ցավեր պատճառելու համար: Հաճախ նրանք զոհերին հրամայում էին սպանել իրենց կողակիցներին կամ երեխաներին: Շատ դեպքերում երեխաներին սպանում էին ծնողների աչքի առաջ: Հանցագործները նաև արյունակից հարազատներին ստիպում էին միմյանց հետ սեռական հարաբերություն ունենալ, մարդկանց ցից էին հանում, հարկադրում էին զբաղվել մարդակերությամբ և այլն:

Հաճախ մարդկանց մեծ բազմություններով հավաքում էին, լցնում առանձին շինությունների մեջ և հրկիզում էին կամ սպանում ձեռքի նռնակներով: Բազմաթիվ դեպքերում զոհերին սպանելուց առաջ ստիպում էին ամբողջովին մերկանալ՝ մի կողմից նրանց նվաստացնելու, մյուս կողմից՝ նրանց հագուստներին տիրանալու նպատակով:Հանցագործները դիերը նետում էին գետերի, լճերի կամ զանգվածային գերեզմանափոսերի մեջ: Հաճախ դիերը կուտակում էին նաև ճանապարհների եզրերին կամ ուղղակի թողնում սպանության վայրերում: Ընդ որում, որպես կանոն, արգելվում էր սպանված թութսիների պատշաճ թաղումը, ինչը հակասում էր մահացածի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունք ցուցաբերելու՝ Ռուանդայում գործող ավանդույթին, և լքված դիերը կեր էին ծառայում կենդանիներին {(73) *25-27*}:

Ցեղասպանության ժամանակ առանձնապես մեծ գործածություն են ունեցել սառը զենքերը և այդ նպատակին ծառայող կտրող ու հարվածող գործիքները: Ըստ Ռուանդայի կառավարության կազմած պաշտոնական վիճակագրության՝ զոհերի 37,9 տոկոսը սպանվել է մաչետներով, որոնք դեռևս 1993 թ. մեծ քանակությամբ ներկրվել էին Ռուանդա, էժան էին և, բացի այդ, դրանց գործածումը հեշտ էր, իսկ զոհերի 16,8 տոկոսը սպանվել է մահակներով: Քիբույեի մարզում մաչետների միջոցով սպանվածների քանակային հարաբերակցությունը շատ ավելի մեծ էր, կազմում էր 52,8 տոկոս {(82) *608*}:

Մարդասպանները

Ցեղասպանությունն իրականացրած մարդասպանների թվաքանակի վերաբերյալ գնահատումներն էապես տարբերվում են միմյանցից: Որոշ ուսումնասիրություններում նշվում է մի քանի տասնյակ հազարի մասին: Այլ հեղինակների գնահատումներում խոսքը վերաբերում է երեք միլիոնի: Գնահատումների նման տարբերությունները շատ դեպքերում պայմանավորված են քաղաքական կամ այլ շահարկումներով: Առավել հավաստի է համարվում այն տեսակետը, որ մեկ կամ ավելի սպանություններ կատարած մարդկանց թիվը կազմում է 175 000–210 000: Դա համապատասխանում է այն ժամանակվա չափահաս հութուների 7-8 տոկոսին և արական սեռի չափահաս հութուների 14-17 տոկոսին (որպես չափահաս՝ այս դեպքում նկատի են առնվել 18-ից 54 տարեկան անձինք):

1997 թ. դրությամբ Ռուանդայում ձերբակալվել էին 140 000 անձինք, որոնք մեղադրվում էին ցեղասպանական հանցագործություններ կատարելու մեջ: 2000 թ. ձերբակալվածների թիվը կազմում էր 110 000, իսկ 2006 թ. կալանքի տակ գտնվում էին 80 000 անձինք: Հանցագործների ճնշող մեծամասնությունը տղամարդիկ էին, նրանց թվում կային նաև զգալի քանակությամբ պատանիներ

ու նույնիսկ անչափահասներ: Կանանց մասնակցությունը կազմում էր մոտ 3%: Պաուլինե Նիրամասուհուկոն՝ ընտանիքի և կանանց նախարարը, նշանակալից մասնակցություն է ունեցել ցեղասպանությանը: Նա Ռուանդայի պետական ռադիոյով սադրիչ ելույթներ էր ունենում, Բուտարեում հութական ոստիկանության ջոկատներին հրահրում էր հարձակվել փախստականների վրա, թութսի կանանց զանգվածային բռնաբարության կոչ էր անում և միաժամանակ անձամբ էր ընտրում զոհերից մի քանիսին: Նա առաջին կինն է, որը դատապարտվել է ցեղասպանության և բռնաբարության՝ որպես մարդկության դեմ իրականացված հանցագործությունների պատճառով:

Հանցագործները սերում էին բնակչության բոլոր շերտերից: Թե՛ տեղական, թե՛ համապետական մակարդակներում ամենավերին շերտը ներկայացնում էին զինվորական, քաղաքական շրջաններում, ինչպես և վարչական համակարգում իշխանություն և մեծ ազդեցություն ունեցող անձինք: Այդ էլիտաները կազմող մարդկանց թվաքանակը, սակայն, ընդհանուր առմամբ, նշանակալից չէր: Մարդասպանների մեծ մասը ռուանդացի հասարակ տղամարդիկ էին, որոնք կրթության, մասնագիտության, տարիքի և իրենց երեխաների թվի առումով, ընդհանուր առմամբ, համապատասխանում էին երկրի միջին բնակչությանը: Հանցագործներին վերաբերող ուսումնասիրությունները փաստել են, որ նրանց շարքում ամենաղաժանները երիտասարդ, միջինից ցածր կրթություն ունեցող տղամարդիկ էին, որոնք երեխաներ չունեին կամ փոքրաթիվ երեխաներ ունեին: Միաժամանակ փաստարկվել է, որ ցեղասպանական գործողությունների տեղական նախաձեռնողները պատկանել են տեղական էլիտային: Մարդկանց այդ խումբը շատ լավ ինտեգրվել էր տեղական համայնքին և ուներ միջինից բարձր կրթություն {(159) *103-121*}:

Հութուներին ցեղասպանական գործողությունների դրդող շարժառիթները տարբեր էին: Ըստ նրանցից քաղված վկայու-

թյունների՝ սպանդին մասնակցելու կարևորագույն շարժառիթներից մեկը վախն է եղել: Շատ հանցագործներ հետագայում խոստովանել են, որ իրենք վախենում էին սպանդին չմասնակցելու դեպքում սոցիալական, նյութական կամ ֆիզիկական հաշվեհարդարի ենթարկվելուց: Բացի այդ՝ որոշակի դեր է խաղացել թութսիների կողմից հետապնդման ենթարկվելու վախը: Թութսիները համարվում էին ՌՀՃ-ի հանցակիցներ, և ՌՀՃ-ի հետ քաղաքացիական պատերազմի ժամանակ այն մտայնությունն էր տիրում, որ հարկավոր է ոչնչացնել թշնամուն անձամբ չսպանվելու համար: Թութսիների հանդեպ բռնություններն ընկալվում էին նաև որպես վրեժխնդրական գործողություններ Հաբիարիմանայի սպանության համար, քանի որ հութուները ՌՀՃ-ին և առհասարակ թութսիներին էին վերագրում նախագահի սպանությունը:

Այդ ամենի հետ մեկտեղ կարևոր դեր էր խաղում այն հանգամանքը, որ իշխանությունները պահանջում ու խրախուսում էին թութսիների հանդեպ բռնությունները: Թութսիներին սպանելը համարվում էր «պարտականություն»:

Կային նաև այլ շարժառիթներ, զորօրինակ՝ թութսիների հանդեպ խոր արմատներ և ռասիստական հիմքեր ունեցող ատելությունը և կամ զոհերի ունեցվածքի կողոպտման միջոցով նյութական եկամուտ ունենալու ցանկությունը {(99) *27-29, 313-315*}:

Վերապրողները

Ցեղասպանությունը վերապրել են այն թութսիները, որոնք կարողացել են փախչել Ռուանդայից կամ երկրի ներսում թաքնվել մարդասպաններից: Այդ նպատակի համար նրանք օգտագործել են դժվարամատչելի տարածքները, զորօրինակ՝ անտառային հատվածները կամ ճահիճները: Խորշերը, նկուղները կամ ձեղնահարկերը նույնպես ծառայում էին որպես թաքստոցներ: Շատ դեպքերում թութսիներին թաքնվելու հարցում օգնել են ծանոթ կամ անծանոթ հութուներ: Հետապնդվողներից շատերը, կյանքից

չզրկվելու համար, հանցագործներին մեծաքանակ գումարներ են վճարել կամ ենթարկվել են սեռական գործողությունների:

Հետապնդվող թուսիների և չափավոր հութուների՝ վերապրելու հնարավորություններն ավելի մեծանում էին այն դեպքերում, եթե նրանք գտնվում էին օտարերկրյա հաստատությունների մերձակայքում: Դա վերաբերում էր, օրինակ, Կիգալիում գտնվող՝ «Հազար բլուրների» հյուրանոցին: Պաուլ Ռուսեսաբագինան՝ այդ հյուրանոցի տնօրենը, օգտագործում էր ռուանդացի քաղաքական և ռազմական գործիչների հետ իր կապերը, մոբիլիզացնում էր բելգիացի հյուրանոցատերերի ազդեցությունը և ֆաքսեր էր ուղարկում արտերկիր՝ բազմիցս հաջողությամբ խոչընդոտելով հյուրանոցի գրոհումը: Այդ կերպ նա փրկեց 1268 պաշարվածների կյանքը:

ՄԱԱՌ-ի կենտրոնակայանը ցեղասպանության օրերին գտնվում էր մայրաքաղաք Կիգալիի մի շինության մեջ, որին կից կար նաև մի մեծ խաղադաշտ: Հազարավոր թութսիներ փախան այնտեղ և կարողացան փրկվել միջազգային ներկայության շնորհիվ: Երկրի հարավ-արևմուտքում՝ Ցիանգուգուի պրեֆեկտում գտնվող Կամարամպակայի խաղադաշտում նույնպես բազմաթիվ փախստականներ էին հավաքվել: Այդտեղ գտնվում էր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակը, որի շնորհիվ նրանք փրկվեցին:

Այս կամ այն վայրում թութսիների փրկության ամենամեծ հնարավորությունն ի հայտ էր գալիս այն ժամանակ, երբ ՌՀՃ-ն այն գրավում էր: Երբ վերջինս իր վերահսկողությունն էր հաստատում որևէ տարածաշրջանում, այնտեղ ցեղասպանական գործողությունները դադարում էին {(124) *16-17*}:

Դիմադրության փորձեր

Բոլոր հութուները չէ, որ մասնակցում էին ցեղասպանությանը: Առանձին հութուներ փորձում էին դրանից խուսափել կամ

ընդդիմանալ: Այդ այլընտրական վարքագիծը դրսևորվում էր մի շարք ձևերով՝ հրամաններին չենթարկվելու և բռնարարքներին մասնակցելու պահանջները չկատարելու համար փախուստի դիմելուց մինչև վտանգված թութսիներին անհատական օգնության ցուցաբերումը և ընդհուպ՝ որոշակի վայրերում ցեղասպանության սկսումը խոչընդոտելը:

Սկզբնական շրջանում Ռուանդայի զինվորականության մեջ բարձրաստիճան զինվորականների մի խումբ գնդապետ Մարցել Գաբսինցիի և գնդապետ Լեոնիդաս Ռուսատիրայի ղեկավարությամբ փորձում էր դադարեցնել ծավալվող բռնությունները՝ տալով համապատասխան հրամաններ: Այդ հրամանները, ինչպես և նրանց կողմից 1994 թ. ապրիլի 13-ին պատրաստված հաղորդագրությունը, բոլոր դեպքերում, արդյունք չունեցան, քանի որ զինված ուժերն արդեն գլխավորապես գտնվում էին ծայրահեղական հութու սպաների ձեռքում: Այն զինվորականները, որոնք փորձում էին ընդդիմանալ ցեղասպանությանը, ենթարկվում էին սպառնալիքների և ահաբեկումների, իսկ նրանց հրամանները շրջանցվում էին: Գաբսինցին և Ռուսատիրան, օրինակ, հապճեպ կերպով զրկվեցին իրենց պաշտոններից, որոնք տրվեցին ծայրահեղական հութու զինվորականների {(82) *339*}:

Վարչական համակարգում նույնպես մի շարք ազդեցիկ անձինք ընդդիմանում էին ցեղասպանության սկսմանը: Գիտարամայի և Բուտարեի պրեֆեկտներին՝ Ֆիդելե Ուվիցեյեին և Ժան-Բապտիստե Հաբիալիմանային, հաջողվեց առաջին օրերին էապես խոչընդոտել թութսիների դեմ բռնությունները՝ վստահելի քաղաքագլուխների և այլ վարչական պաշտոնյաների հետ համագործակցությամբ կանխելով այլ երկրամասերից ոստիկանության ջոկատների ներխուժումը և անմիջապես պատժելով թութսիների դեմ գործադրվող առաջին բռնությունների, մասնավորապես նրանց կողոպտման ու սպանության առանձին փորձերի հեղինակներին: Երբ կառավարությունը ՌՀՃ-ի հարձակման արդյուն-

քում ապրիլի 12-ին Կիգալիից փախավ Գիտարամա, այստեղ ցեղասպանության հանդեպ ընդդիմությունը ճնշվեց կառավարությանն ուղեկցող զինված կազմավորումների, այդ թվում՝ նախագահի գվարդիայի կողմից: Այդ կազմավորումները ճնշում գործադրեցին տեղական ղեկավարության վրա և բնակչությանը հրահրեցին ցեղասպանության՝ ստանձնելով դրա ղեկավարումը:

Երբ ցեղասպանության պատրաստ ուժերը իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել, և դիմադրության փորձերը արդյունք չտվեցին, Ուվիցեյեն փախուստի դիմեց: Ժան-Բապտիստե Հաբիալիմանան՝ միակ թութսի պրեֆեկտը, մինչև ապրիլի կեսը Բուտարեում գործադրում էր իր բոլոր ջանքերը՝ այդ հարավային մարզում թութսիների հանդեպ բռնությունների կիրառումը խափանելու համար: Նա հենվում էր հավատարիմ ոստիկանների և քաղաքագլուխների վրա, որոնք դեմ էին ցեղասպանության կողմնակից զինվորական սպաների, ոստիկանների և Բուրունդիից փախած հութուների աճող իշխանությանը: Ապրիլի 17-ին Հաբիալիմանան պաշտոնազրկվեց, իսկ փոքր-ինչ ավելի ուշ ձերբակալվեց և մահապատժի ենթարկվեց:

Ռուանդայի մի շարք վայրերում տեղի ունեցան ինքնապաշտպանական գործողություններ: Վտանգված թութսիները հարձակումներից պաշտպանվելու կամ զանգվածային փախուստի միջոցով փրկվելու հավանականությունը մեծացնելու համար երբեմն որոշակի գործելակերպեր էին որդեգրում: Դրանցից մեկը կոչվում էր «միաձուլում»: Հարձակման ենթարկվողներն այդ դեպքում պառկում էին գետնին՝ տպավորություն ստեղծելով, թե անձնատուր են լինում: Եվ այն ժամանակ, երբ հարձակվողները նրանց էին մոտենում, վեր էին ցատկում ու հանցագործների հետ ձեռնամարտի բռնվում: Վերջիններս այդ իրադրությունում վախենում էին հրազեն կամ ձեռքի նռնակներ գործածել, քանի որ կարող էին յուրայիններին սպանել:

Որոշ վայրերում հարձակման ենթարկվող թութսիները բաժանվում էին խմբերի և փախչում տարբեր ուղղություններով: Քիբույեի մոտ գտնվող Բիսեսերո վայրում թութսիները պատսպարվել էին մի անտառածածկ և քարքարոտ լեռնաշղթայի վրա և երկար ժամանակ պաշտպանվում էին՝ քարեր նետելով հարձակվողների վրա: Ինքնապաշտպանությունը կազմակերպված բնույթ էր կրում: Այն թութսիները, որոնք չէին ուզում դրան մասնակցել, մյուսների կողմից հարվածներ ստանալով, հարկադրվում էին դա անել: Միայն այն ժամանակ, երբ բանակային ստարաբաժանումներ ուղարկվեցին հարձակվողներին օգնելու համար, դիմադրությունը տապալվեց, և տասնյակ հազարավոր թութսիներ սպանվեցին: Կոտորածից փրկվեցին ընդամենը մոտ 1500 թութսիներ {(99) *317-332, 503-522*}:

Տվաների դերը

Ցեղասպանությանը վերաբերող ուսումնասիրություններում տվաներին գրեթե անդրադարձ չի կատարվում: Դա պայմանավորված է գլխավորապես նրանց փոքր թվաքանակով, որը Ռուանդայի ողջ բնակչության 1%-ից էլ ցածր է: 1994 թ. ապրիլի տվյալներով նրանց թիվը հասնում էր մոտ 30 000-ի: Ըստ կատարված գնահատումների՝ տվաների մոտ մեկ երրորդը ցեղասպանության ժամանակ սպանվել է, և մոտ մեկ երրորդն էլ փախել է երկրից: Տվաները շատ դեպքերում միացել են նաև ոստիկանության ցեղասպան ջոկատներին: Ցեղասպանությանը նրանց մասնակցության չափը, սակայն, հայտնի չէ {(165) *131-138*}:

Քաղաքացիական պատերազմի նոր ծավալումը

Նախագահ Հաբիարիմանային տեղափոխող ինքնաթիռի պայթյունով տրվեց ինչպես ցեղասպանության, այնպես էլ Ռուանդայի կառավարական զորքերի և ՌՀՃ-ի միջև քաղաքացիական պատերազմի նոր ծավալման մեկնարկը: Արուժայի համաձայ-

նագրի համաձայն՝ ՌՀՃ-ի 600 մարդուց բաղկացած մի գումարտակ տեղակայվել էր Կիգալիի Ազգային խորհրդի շենքում: Ապրիլի 6-ից առաջ ՌՀՃ-ն գաղտնի կերպով մեծացրեց այդ գումարտակի անձնակազմը՝ հասցնելով մոտ 1000 մարդու: Հաբիարիմանայի ինքնաթիռի պայթյունին հաջորդող ժամերին գումարտակը կրակի տակ վերցվեց կառավարական ուժերի կողմից, սակայն կարողացավ հաջողությամբ պաշտպանվել, մինչև ՌՀՃ-ի զորամասերը 1994 թ. ապրիլի 11-ին ներխուժեցին Կիգալի:

Կագամեի ղեկավարությամբ ՌՀՃ-ն Ռուանդայի հյուսիսում գտնվող իր կենտրոնակայանից ձեռնարկեց հարձակում և դեռ ապրիլին արագ կերպով գրավեց Բիումբայի և Կիբունգոյի պրեֆեկտուրաները: Նույն ամսին ՌՀՃ-ի զորամասերը հյուսիսային և արևելյան ուղղություններով հարձակվեցին մայրաքաղաք Կիգալիի վրա, որի հետևանքով կառավարությունը ապրիլի 12-ին մայրաքաղաքից փախավ Գիտարամա՝ Կիգալիից արևմուտք ընկած ամենամոտ մեծ քաղաքը: Կառավարության հետ այնտեղ փախան նաև հազարավոր քաղաքացիներ: Կառավարությանը հավատարիմ բանակային ստորաբաժանումները մնացին Կիգալիում, իսկ ՌՀՃ-ն փորձեց շրջապատել քաղաքը: Մայիսին ՌՀՃ-ի զորքերը Կիգալիից և Կիբունգոյի պրեֆեկտուրայից հարձակվեցին Գիտարամայի վրա, իսկ 1994 թ. հունիսի 9-ին ներխուժեցին քաղաք: Այդ հաջողությունից հետո նրանք շարունակեցին հարձակումը դեպի հարավ և մինչև հուլիսի սկիզբը գրավեցին Բուրունդիին սահմանակից Բուտարեի պրեֆեկտուրան: Հուլիսի 4-ին կառավարական զորքերը, որոնց դարձալ հազարավոր քաղաքացիներ էին միացել, Կիգալիից տեղափոխվեցին արևմուտք, իսկ մայրաքաղաքը վերջնականապես գրավվեց ՌՀՃ-ի կողմից:

Դեռ ապրիլին ՌՀՃ-ն փորձել էր առաջանալ դեպի Ռուհենգերի: Առաջխաղացումը, սակայն, դադարեց, քանի որ ՌՀՃ-ի հիմնական ուժերը ներգրավված էին Կիգիալիի համար մղվող մարտերում և երկրի արևելքում ընթացող ռազմական գործողու-

թյուններում: Միայն հուլիսին՝ երկրի կենտրոնում և հարավում ունեցած ռազմական հաջողություններից հետո, ՌՀՃ-ն հյուսիսում հասավ վերջնական հաղթանակի և 1994 թ. հուլիսի 14-ին գրավեց Ռուհենգերին, իսկ երեք օր անց՝ նաև Գիսենյին: ՌՀՃ-ի առաջխաղացումը դեպի երկրի հարավ-արևմուտք կանխվեց ֆրանսիական զորամասերի միջամտությամբ, որոնք երկրի այդ հատվածում ստեղծեցին անվտանգության գոտի:

ՌՀՃ-ի հաղթանակների շնորհիվ էր, որ ցեղասպանությունը դադարեց: Բազմաթիվ հանցագործներ և կառավարության անդամները փախան երկրից: ՌՀՃ-ն կարողացավ հաղթել, չնայած նրա զորամասերը թվաքանակով էապես զիջում էին կառավարության զորքերին: Ապրիլի սկզբին ՌՀՃ-ի զորամասերի անձնակազմի ընդհանուր թիվը կազմում էր 20 000–25 000, մինչդեռ նրանց հակառակորդների՝ կառավարության ստորաբաժանումների, նախագահի գվարդիայի անդամների և ոստիկանության ջոկատների թվաքանակը հասնում էր 55 000–70 000-ի {(124) *40*}: ՌՀՃ-ի մարտիկների նվազ թվաքանակը փոխհատուցվում էր նրանց մարտական բարձր պատրաստվածությամբ և պատերազմելու արդյունավետությամբ: Բացի այդ՝ հութական կառավարությունն այլևս Ֆրանսիայից ռազմական աջակցություն չէր ստանում, որի շնորհիվ այն 1993 թ. սկզբին կրկին կարողացավ ՌՀՃ-ի հարձակումը հաջողությամբ ետ մղել: Արդեն 1993 թ. Տանզանիայի և ֆրանսիական ռազմական գաղտնի ծառայություններն այն եզրակացությանն էին եկել, որ ՌՀՃ-ն պարզորոշ գերազանցություն ունի կառավարության զորքերի նկատմամբ:

ՌՀՃ-ն հետապնդում էր ինչպես թութսիներին փրկելու, այնպես էլ կառավարության զորքերին հաղթելու նպատակ: Կանադական գեներալ Ռոմեո Դալաիրին, մի զեկուցագրում անդրադառնալով ՌՀՃ-ի առաջնայնություններին, բացառված չէր համարում, որ Կագամեն ցեղասպանությունն օգտագործել է իշխանության գալու համար {(82) *538*}:

Միջազգային արձագանքները

Արուժայի համաձայնագրի առանցքային բաղկացուցիչներից մեկը Ռուանդայում ՄԱԿ-ի խաղաղապահ զորամասերի տեղակայումն էր: Գեներալ Ռոմեո Դալաիրին 1993 թ. հոկտեմբերից ստանձնել էր ՄԱԱՌ-ի ղեկավարումը, որը սկզբից ևեթ դժվարին իրավիճակում էր: «Հազար բլուրների ռադիո-հեռուստատեսության» հեռարձակողը ՄԱԱՌ-ի բելգիական խաղաղապահ զորամասին մեղադրում էր ՌՀՃ-ին աջակցելու մեջ (Ռուանդան իր բարձր դիրքի պատճառով ոչ պաշտոնապես անվանվում է նաև «Հազար բլուրների երկիր»): Կապույտ սաղավարտավորները, որոնց թիվը 1994 թ. մարտին հասնում էր 2500-ի, մեծ մասամբ բաղկացած էին գանացի և բանգլադեշցի զինվորներից: Նրանց և, ինչպես հաջորդ ամիսներին պարզ դարձավ, հատկապես բենգալացիների մարտական կարողությունները և ռեսուրսներն անբավարար էին: Խաղաղապահների ֆինանսավորումը ամիսներ շարունակ անկայուն էր:

Խնդրահարույց էր նաև խաղաղապահ զորամասին տրված մանդատը: Այն հիմնվում էր ՄԱԿ-ի կանոնադրության 6-րդ պարագրաֆի վրա, ըստ որի՝ այդ զորամասը կարող էր աջակցել խաղաղության հաստատմանը, հանդես գալ որպես խաղաղարար առաքելություն, բայց հակամարտող կողմերից մեկին կամ բոլորին խաղաղություն պարտադրել չէր կարող: Դրա համար այն պետք է օժտված լիներ վերոնշյալ կանոնադրության 7-րդ պարագրաֆից բխող լիազորություններով:

Հետևաբար զենքի գործադրումը ևս Ռուանդայում գտնվող խաղաղապահ զորամասին թույլատրվում էր միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ ինքնապաշտպանության նպատակով:

Դալաիրին 1994 թ. հունվարին ստացել էր տեղեկություններ գաղտնի զինապահեստների, առաջնահերթորեն սպանդի ենթակա մարդկանց անվանացուցակների, իր խաղաղապահ զորամա-

սի վրա հարձակման պլանների, ինչպես և Արուժայի համաձայնագրի կատարումը միտումնավոր ձախողելու և առաջիկայում զանգվածային սպանությունների իրականացման վերաբերյալ: Նա հունվարի 11-ին այդ ամենի մասին ֆաքսով տեղեկացրել էր ՄԱԿ-ի կենտրոնակայանի իր վերադասներին: Այդ ժամանակ ՄԱԿ-ի արտաքին տեղակայումների պատասխանատուն Քոֆի Անանն էր, որը հետագայում դարձավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար և ստացավ խաղաղության նոբելյան մրցանակ: Ք. Անանի գրասենյակը Դալաիրիին հրահանգում էր գործել VI պարագրաֆով իրեն տրված մանդատի շրջանակներում, չվերացնել զինապահեստները և սերտ կապի մեջ լինել նախագահ Հաբիարիմանայի հետ: Որևէ արդյունք չունեցան նաև խաղաղապահների հրամանատարի հետագա նախազգուշացումները, ինչպես նաև զորակազմի մանդատն ուժեղացնելու և սպառազինությունը բարելավելու նրա խնդրանքները:

Դալաիրին Քոֆի Անանին հետագայում մեղադրում էր ցեղասպանությանը մեղսակից դառնալու մեջ: 1998 թ. հայտնի դարձավ, որ Անանը հարկ չի համարել նույնիսկ Ռուանդայից շարունակաբար իրեն ուղարկվող օգնության կոչերն ու տեղեկագրերը փոխանցելու ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին և դրանց, ըստ էության, որևէ ընթացք չի տվել {(82) *177-187*}:

Զանգվածային բռնությունների մեկնարկից, մասնավորապես տասը բելգիացի խաղաղապահների սպանությունից հետո ՄԱԿ-ը, որքան էլ դա տարօրինակ թվա, Ռուանդայում խաղաղապահների թվաքանակը պաշտոնապես կրճատեց՝ 2500-ից հասցնելով 270-ի: Ըստ Դալաիրիի՝ խաղաղապահ զորակազմի համար մեծ կորուստ էր հատկապես բելգիացի բոլոր զինվորների հեռացումը: Քանի որ, սակայն, կապույտ սաղավարտավորների մի մասը չկարողացավ հեռանալ, Ռուանդայում մնացին 540 զինվորներ: Այն թութսիները, որոնք խաղաղապահների մերձակայքում էին կուտակվել՝ հուսալով այդպիսով պաշտպանված լինել, նրանց հեռա-

նալուց հետո զոհ դարձան մարդասպաններին: Դրա ամենացայտուն օրինակը դրսևորվեց Կիգալիի պետական տեխնիկական դպրոցում, երբ այնտեղ ապաստանած 2000 մարդիկ 90 բելգիացիների հեռանալուց հետո միլիցիոներների ու ռուանդական բանակի զինվորների կողմից ենթարկվեցին կոտորածի: Անկասկած, իրավացի են խաղաղապահների հեռացումը քննադատողները՝ նշելով, որ դրանով մի կողմից ի չիք դարձվեց հետապնդվողների պաշտպանության վերջին հնարավորությունը և, մյուս կողմից, կանաչ լույս վառվեց մարդասպանների առջև՝ ցեղասպանությունը շարունակելու համար {(161) *161*}:

Ֆրանսիան և Բելգիան Իտալիայի և ԱՄՆ-ի աջակցությամբ կազմակերպեցին Ռուանդայից օտարերկրացիների տարհանման գործողությունը: Բելգիական և ֆրանսիական զորամասերը 1994 թ. ապրիլի 8-ից մինչև 14-ը մոտ 4000 օտարերկրացիների տեղափոխեցին ապահով վայրեր: Դա, սակայն, չէր վերաբերում օտարկրյա հաստատություններում աշխատող և արդեն իսկ վտանգված ռուանդացիներին:

Չնայած զանգվածային բռնությունների և սպանդի վերաբերյալ շարունակ աճող տեղեկատվությանը՝ ԱՄՆ-ի ղեկավարությունը խուսափում էր դրանք անվանել ցեղասպանություն: Եթե դրանք բնորոշվեին որպես ցեղասպանություն, ապա միջազգային հանրությունը պարտավորված կլիներ գործել՝ համաձայն Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայի: Դրա փոխարեն ԱՄՆ-ի կառավարության ներկայացուցիչները խոսում էին «քաոսի» կամ հնարավոր «ցեղասպանական գործողությունների» մասին: Եզրույթների ընտրությունը պայմանավորված էր նաև դրանից ընդամենը մի քանի ամիս առաջ «Սոմալիայում Միավորված ազգերի գործողություն II»-ի փորձառությամբ, որը, որպես Սոմալիայում ձեռնարկված զինված մարդասիրական գործողություն, 1993 թ. հոկտեմբերի սկզբին ձախողվել էր: Այն բանից հետո, երբ այդ առաքելությանը մասնակցող՝ ԱՄՆ-ի 18 զինվոր-

ներ սպանվել էին, և նրանց անարգված դիերի լուսանկարները ցուցադրվել էին ողջ աշխարհի լրատվամիջոցներում, ԱՄՆ-ն «Սև Աֆրիկայում» կրկին մարդասիրական առաքելություն իրականացնելու ցանկություն այլևս չուներ: Դա ամրագրվեց 1993 թ. մի նախագահական հրամանագրով: Բացի այդ՝ Ռուանդան համարվում էր ռազմավարական առումով անկարևոր երկիր:

ՄԱԿ-ի այն ժամանակվա գլխավոր քարտուղարը՝ Բուտրոս Բուտրոս-Ղալին, նույնպես անորոշ ձևակերպումներ էր տալիս Ռուանդայում տեղի ունեցող ցեղասպանությանը: 1994 թ. ապրիլի 20-ին նա խոսում էր մի ժողովրդի մասին, որն «աղետալի հանգամանքների մեջ է հայտնվել», մինչդեռ բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպություններ Ռուանդայում ծավալվող իրադարձությունները բնորոշում էին որպես ցեղասպանություն {(99) *738-748*}:

Ռուանդան, ուշագրավ զուգադիպությամբ, ցեղասպանության շաբաթներին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ էր, և այդ երկրի կառավարությունը առաջին ձեռքից տեղեկատվություն էր ստանում այդ կազմակերպությունում առկա տրամադրությունների ու կատարվող քննարկումների մասին: 1994 թ. ապրիլի 16-ին ռուանդական կառավարության ներկայացուցիչները մասնակցեցին Անվտանգության խորհրդի մի նիստի: Մյուս 14 անդամներից միայն մի քանիսը քննադատեցին Ռուանդայի ներկայացուցիչներին այդ երկրում իրականացվող «չափից դուրս» բռնությունների համար: Ցեղասպան կառավարությունը դրանից եզրակացրեց, որ Անվտանգության խորհուրդն այդ մասին հստակ տեղեկություններ չունի, ուստի չի կարողանում պարզորոշ ձևակերպումներով հանդես գալ:

1994 թ. ապրիլի վերջից մինչև մայիսի կեսերը, երբ հեռուստատեսային հաղորդումներում ավելի և ավելի հաճախ էին ցուցադրում զանգվածաբար դեպի Զաիրի (Ռուանդային արևմուտքում սահմանակից) փախչող մարդկանց, տեղի ունեցավ տրա-

մաղրության փոփոխություն: Փախստականների այդ հոսքերը բաղկացած էին հութուներից, որոնք փախչում էին ՌՀՃ-ի առաջխաղացող զորամասերից՝ վախենալով նրանց կողմից վրեժխնդրության ենթարկվելուց: Հութու ոստիկաններն այդ փախստականներին օգտագործում էին որպես պաշտպանիչ կենդանի «վահան»:

Մայիսի 17-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշեց Ռուանդայում տեղակայել ՄԱԱՌ II-ը: Այն պետք է բաղկացած լիներ 5500 մարդուց և նախորդ խաղաղապահ զորակազմի համեմատ օժտված լիներ ավելի ուժեղ մանդատով, որը կթույլատրեր վտանգված քաղաքացիական անձանց զինված օգնություն ցուցաբերել: Չնայած այդ որոշման ընդունմանը՝ պահանջվող զորամասերի ձևավորումը և նրանց անհրաժեշտ զինամթերքի տրամադրումը ձգձգվում էին, այնպես որ, երբ քաղաքացիական պատերազմը հուլիսի կեսին ավարտվեց ՌՀՃ-ի հաղթանակով, Ռուանդայում խաղաղապահների մոտավորապես այն նույն թվաքանակն էր, որը կար ապրիլին նրանց զորակազմի կրճատումից հետո:

Իրադարձությունների այդ ֆոնի վրա Ֆրանսիան հանդես բերեց նախաձեռնություն՝ իրականացնելով «Փիրուզ» գործողությունը: Մարդասիրական այդ միջամտությունը թույլատրված էր ՄԱԿ-ի կանոնադրության VII հոդվածով և հանգեցրեց 1994 թ. հունիսի 24-ին Ռուանդայի հարավ-արևմուտքում անվտանգության գոտու ստեղծմանը: Այդ տարածաշրջանում, որը կազմում էր Ռուանդայի մոտ մեկ հինգերորդը, խռնված էին հութու փախստականների զանգվածները: Գործողության հանրահռչակված նպատակը գոտու սահմաններում քաղաքացիական անձանց պաշտպանությունն էր, ինչպես նաև մարդասիրական կազմակերպությունների միջոցով օգնության բաշխմանն աջակցելը:

Չնայած այդ ձեռնարկը բազմաթիվ քաղաքացիների համար անվտանգ դրություն ապահովեց, այնուհանդերձ սկզբից ևեթ

քննադատությունների ենթարկվեց: ՌՀՃ-ն այդ միջոցառումը համարում էր Ռուանդայի հին կառավարությանը պաշտպանելու և իր հաղթանակը վիժեցնելու՝ Ֆրանսիայի հերթական փորձը: Այդ տեսակետին նպաստում էր այն, որ ծայրահեղական հութուները ֆրանսիացիների մուտքը եռանդագին ողջունում էին և փորձում նրանց դրդել կռվելու ՌՀՃ-ի դեմ:

Անվտանգության գոտում տեղակայված ֆրանսիական զորամասը հութու ոստիկաններին չզինաթափեց և չընդդիմացավ հանցագործների ու կառավարության անդամների՝ արտերկիր փախչելուն, ինչը նույնպես նպաստեց Ֆրանսիայի քաղաքականության քննադատմանը: 1994 թ. օգոստոսի 21-ին ֆրանսիացիներն այդ գոտին հանձնեցին վերջապես Ռուանդա ժամանած՝ ուժեղացված անձնակազմ ունեցող խաղաղապահ զորամասին {(82) *479-521*}:

Փախստականները

Ցեղասպանությունը ապակայունացրեց աֆրիկյան մեծ լճերի ողջ տարածաշրջանը: Հարյուր հազարավոր ռուանդացիներ փախան երկրից: Փախստականների զանգվածների ծանր դրության և աճող համաճարակների պայմաններում նրանց ճամբարներում մահացության աստիճանը շատ բարձր էր: Նրանց օգնելու համար իրականացվեցին միջազգային մարդասիրական մեծածավալ միջոցառումներ: Օգնությունը գլխավորապես ուղարկվում էր արևելյան Զաիրիում՝ Գոմա քաղաքի մոտ գտնվող ճամբարները, որտեղ կուտակված էր փախստականների մեծ մասը: Սահմանամերձ այդ ճամբարներում կարճ ժամանակում ծայրահեղական հութուներն իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Նրանք փորձում էին ճամբարները դարձնել բազաներ Ռուանդան վերագրավելու համար, մինչդեռ այդ չարաշահումը օգնություն իրականացնող կազմակերպությունների կամ ՄԱԿ-ի կառույցների կողմից համարժեք արձագանք չէր ստանում:

Ծայրահեղական քաղաքական գործիչները, նախկին վարչական պաշտոնյաները, զինվորներն ու ոստիկանները ճամբարների փախստական բնակչությանը հարկադրում էին համակերպվել այդ չարաշահումների հետ և աջակցել դրանց: Ճամբարներում առօրեական էին դարձել թութսիների և չափավոր հութուների դեմ քաղաքական սադրանքները, օգնության բեռների վրա վերահսկողության հաստատումը, կրկին Ռուանդա ներխուժելու նպատակով զենքի հայթայթումը, փախստականների շարքերից նոր մարտիկների հավաքագրումը և ուսումնավարժական տարածքների ստեղծումը:

Այն բանից հետո, երբ այդ ճամբարներից մի շարք ահաբեկչական գործողություններ կատարվեցին Ռուանդայում, նաև զանգվածային հետապնդում ձեռնարկվեց բանիամուլենգների դեմ, որոնք վաղուց ի վեր Արևելյան Զաիրիում բնակվող՝ թութսիների հետ սերտ կապեր ունեցող էթնոս էին, ճամբարները 1996 թ. վերջից բանիամուլենգների, ռուանդական նոր բանակի և Ուգանդայի զինվորական ստորաբաժանումների մի համատեղ գործողության միջոցով լուծարվեցին: Մոտ 500 000 փախստականներ վերադարձան Ռուանդա՝ այդպիսով ազատագրվելով ծայրահեղական հութուների ազդեցությունից և ճնշումներից, իսկ հութական ոստիկանության ջոկատները և նրանց հարող փախստականների խմբերը, ընդհանուր հաշվով մոտ 300 000–350 000 մարդ, հեռացան Զաիրիի խորքը: Տանզանիայից նույնպես մոտ 500 000 փախստականներ վերադարձան Ռուանդա {(156) *192-194*}:

Բռնաբարությունների զոհերը

Ռուանդայում ցեղասպանության ժամանակ բռնաբարված կանանց և աղջիկների ճշգրիտ թիվը հայտնի չէ: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների՝ բռնաբարված աղջիկների և կանանց թիվը կազմում է 250 000–500 000: Նրանք շատ դեպքերում

հասարակական արհամարհանքի են ենթարկվում, քանի որ Ռուանդայում նման հանցագործությունները համարվում են զոհերի անձնական խայտառակություն: Բազմաթիվ բռնաբարված կանայք սեռական բռնությունների հետևանքով մայրեր են դարձել: Նրանց թիվը գնահատվում է 2000-5000: Բռնաբարվածների մի զգալի մասը վարակված է ՄԻԱՎ-ով: ՁԻԱՀ-ով տառապող՝ բռնաբարված կանանց բուժումը հաճախ համապատասխան դեղորայքի թանկության պատճառով անարդյունավետ է դառնում: Այն կանայք և աղջիկները, սակայն, որոնք մեկուսացվել են ցեղասպանության հետևանքով վարակվածների համար նախատեսված բուժհաստատություններում, ստանում են պատշաճ բուժում {(159) *52*}:

Եկեղեցին և ցեղասպանությունը

Ռուանդան մինչև 1994 թ. համարվում էր Աֆրիկայում ամենակաթոլիկ երկիրը: 1994 թ. ապրիլից առաջ նրա բնակչության 60%-ը պատկանում էր կաթոլիկ եկեղեցու համայնքին, 18%-ը՝ բողոքական եկեղեցու, իսկ մոտավորապես 1%-ը մուսուլմաններ էին Բացառությամբ Եհովայի վկաների՝ քրիստոնեական բոլոր համայնքներին ցեղասպանությանը մասնակցելու մեղադրանքներ են ուղղվել: Անուղղակի համապատասխանատվություն է վերագրվել առաձնապես կաթոլիկ եկեղեցուն, որը սերտ կապեր ուներ Հաբիարիմանայի՝ իշխող քաղաքական ուժի հետ:

Մեղադրանքները վերաբերում են ցեղասպանական գործողությունների վերաբերյալ հոգևորականության ցուցաբերած լռությանը, ինչպես նաև դրանց աջակցելուն, հանցագործության կոչեր կատարելուն և առանձին դեպքերում՝ անմիջական հանցակցությանը: Կաթոլիկ քահանա Աբանասե Սերոմբան, օրինակ, մեղավոր է ճանաչվել Ռուանդայի միջազգային քրեական դատարանի կողմից ցեղասպանությանն աջակցելու և մարդկության դեմ հանցագործության համար: Նա 2000 մարդկանց հրապուրել և

տարել է իր կողմից ղեկավարվող եկեղեցին և փոխանակ նրանց փախուստի հնարավորություն տալու՝ հեռացրել է կրոնական խորհրդանիշները և եկեղեցին աշխարհիկ շինություն հռչակելով՝ հրամայել է այն բուլդոզերով քանդել: Շենքում հավաքվածներից նրանք, ովքեր այն քանդելուց հետո կենդանի են մնացել, սպանվել են հութու զինվորների կողմից {(138)}:

Եկեղեցիները հաճախ էին դառնում հանցագործությունների վայրեր, եթե նաև եկեղեցականները դրանց չէին մասնակցում: Այնուհանդերձ, Ռուանդայում մինչև 2006 թ. ավելի քան 20 հոգևորականների հանդեպ մեղադրանք հարուցվեց ցեղասպանությանը մասնակցելու համար: Բազմաթիվ դեպքերում հոգևորականները նաև օգնել են հետապնդվողներին և ջանացել չեզոքացնել նրանց սպառնացող վտանգը: Հարյուրավոր հոգևորականներ, որոնք թութսիներ էին կամ կառավարությանը քննադատող անձինք, դարձել են նաև բռնությունների զոհեր:

Ցեղասպանության ընթացքում հոգևորականության ցուցաբերած լռությունը և առանձին եկեղեցականների մասնակցությունը ցեղասպանական գործողություններին խախտեցին վստահությունը Ռուանդայում պաշտոնապես հաստատված քրիստոնյա եկեղեցիների հանդեպ: Այդ իրողությունների առնչությամբ տվյալ եկեղեցիներում հանգամանալից քննարկումներ տեղի չեն ունեցել: Որոշ եկեղեցիներ, սակայն, մասնավորապես Ռուանդայի բողոքական եկեղեցիներն ընդունել են իրենց թերացումը և ներողություն են խնդրել: Հովհաննես Պողոս II պապը 1996 թ. ժխտեց կաթոլիկ եկեղեցու համապատասխանատվությունը ցեղասպանությանը՝ նշելով, որ մեղավորություն ունեցել են միայն հավատացյալների շարքին պատկանող առանձին հանցագործներ {(207)}:

2017 թ., սակայն, Ֆրանցիսկոս պապը ներողություն խնդրեց եկեղեցու և նրա այն ներկայացուցիչների (նաև այլ կրոնավորների) թույլ տված զանցառությունների համար, որոնք «տրվել են ատելությանն ու բռնությանը և դավաճանել են իրենց առաքելությանը» {(205)}:

Ինչ վերաբերում է մուսուլմաններին, ապա նրանք ցեղասպանության ժամանակ թիրախային խումբ չէին համարվում, քանի որ նրանք չէին ընկալվում որպես Ռուանդայի բնակիչներ, այլ համարվում էին խումբ, որի ինքնությունը պայմանավորված էր ոչ թե բնակության աշխարհագրական տարածքով, այլ կրոնով: Այդ հանգամանքը 1994 կեսերից նպաստեց այդ խմբի քանակական զգալի աճին, քանի որ շատ ռուանդացիներ նախընտրում էին դառնալ մուսուլմաններ՝ այդ կերպ իրենց անվտանգությունն ապահովելու հույսով: Դրա հետևանքով մուսուլմանները, որոնք մինչև ցեղասպանությունը երկրի բնակչության մոտ 1%-ն էին, 2006 թ. արդեն կազմում էին շուրջ 8,2%-ը:

Իրավական գործընթացները

Ցեղասպանությունից հետո ձերբակալվածների շարքում կային պատանեկան տարիքի մոտ 5000 անձինք: Նրանց թվում այն պատանիները, որոնց 14 տարին ցեղասպանության ժամանակ դեռ չէր լրացել, մինչև 2001 թ. ազատ արձակվեցին:

Ցեղասպանության հաջորդող իրավական գործընթացները ծավալվեցին երեք հարթություններում. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ ստեղծված Ռուանդայի միջազգային քրեական դատարանը, որը սկսեց գործել 1995 թ. նոյեմբերից Տանզանիայի Արուշա քաղաքում, մեղադրանքներ էր հարուցում ցեղասպանության բարձրաստիճան ծրագրողների և կազմակերպիչների դեմ: Այդ ժամանակավոր դատարանի գործունեությունը բազմիցս քննադատության է ենթարկվել՝ համարվելով ոչ արդյունավետ: Իր գործունեության ողջ ընթացքում՝ մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը, այն մեղադրանք է առաջադրել 93 անձանց, որոնցից 61-ը մեղավոր են ճանաչվել, իսկ 14-ը արդարացվել են: Ինչ վերաբերում է մնացյալ դատական գործերին, ապա դրանց մեծ մասը փոխանցվել է Ռուանդայի ազգային դատարաններին: Եղել են նաև դեպքեր, երբ մեղադրյալները մահացել են դատավարության ավարտից առաջ, կամ մեղադրանքները հանվել են:

Միջազգային հանրության շրջանում դատարանի գործունեությունը քննադատվել է նաև այն պատճառով, որ վերջինս, ըստ իր մանդատի, պարտավոր լինելով զբաղվել ոչ միայն ցեղասպանական, այլև պատերազմական ու մարդկության դեմ հանցագործություններով, հետաքննել է միայն թութսիների ցեղասպանության հետ կապված հանցագործությունները և վարույթներ չի հարուցել ՌՀՃ-ի ներկայացուցիչների դեմ, որոնք նույնպես պատերազմական ու մարդկության դեմ հանցագործություններ են կատարել: Ըստ քննադատների՝ այդ պատճառով այն չի կարողացել նպաստել հութուների և թութսիների հաշտեցմանը և իր գործունեությունն իրականացրել է միակողմանի, չնայած դատարանին հատկացված ֆինանսական միջոցները կազմել են շուրջ 2 միլիարդ ԱՄՆ դոլար {(226)}:

Ցեղասպանության իրավական քննության երկրորդ հարթությունը կազմում են Ռուանդայի ազգային դատարանները, որոնց վիճակվեց հանցագործների մեծ մասի հետաքննությունը: Այդ դատարանները հանցագործությունների և մեղադրյալների մեծ քանակության պատճառով ի վիճակի չէին սահմանափակ ժամանակահատվածում իրականացնել բոլոր դատավարությունները: Բացի այդ՝ միայն փոքրաթիվ դատավորներ էին կարողացել վերապրել ցեղասպանությունը: Չնայած միջազգային աջակցությամբ կազմակերպվող վերապատրաստման ծրագրերին և արդարադատության համակարգի վերակառուցմանն ուղղված աշխատանքներին՝ ազգային դատարանների արդյունավետությունը և անկախությունը շարունակում էին մնալ անբավարար մակարդակի վրա: Մինչև 2004 թվականն այդ դատարանների կողմից հրապարակվել են 10.000 դատավճիռներ, որոնց 20 տոկոսն արդարացման, իսկ 10 տոկոսը մահապատժի դատավճիռներ էին {(107) *107*}:

2005 թ.-ից Ռուանդայի ողջ տարածքում գործողության մեջ դրվեց, այսպես կոչված, գաճաճա-դատարանների համակարգը:

Ցեղասպանության իրավական քննության այդ երրորդ հարթության ստեղծման առանցքային նպատակը ցեղասպանությանը վերաբերող դատավարությունների արագացումն էրև դրանց մեծ քանակության հաղթահարումը: Հասարակական ճանաչում ունեցող և հասարակության կողմից ընտրված ոչ արհեստավարժ դատավորները, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 260 000-ի, դատավարություններն անցկացնում էին և դատավճիռները կայացնում էին հասարակական հավաքների պայմաններում, որոնց կազմակերպումը կատարվում էր օրենքով սահմանված կանոններով, և որոնց ժամանակ պետք է ներկա լինեին նվազագույնը 100 չափահասներ: Ռուանդայում կային մոտավորապես 10.000 այդպիսի դատարաններ: Գաճաճա-դատարաններն իրավական գործառույթներից զատ պետք է իրականացնեին նաև հասարակական նշանակության առաջադրանքներ. հանցագործներն ու զոհերը պետք է տեղի ունեցածը վերահիմաստավորեին, զոհերի տառապանքները պետք է դատավարության ընթացքում հրապարակայնորեն ընկալելի դարձվեին հանրությանը: Հութուներն ու թութսիները, ընդսմին, պետք է հնարավորինս հաշտեցվեին միմյանց հետ:

Այդ դատական համակարգի ներդրմամբ սկզբում ծայր առած համատարած ոգևորությունն ի վերջո վերածվեց հիասթափության: 100 չափահաս ներկաների քվորումը հաճախ չէր ապահովվում, քանի որ բնակչության շրջանում զգալի էր դատավարությունների նկատմամբ անտարբերությունը: Հաճախ թութսիների կրած տառապանքները չէին ընդունվում հութուների կողմից, որոնք ունեին կոլեկտիվ կերպով դատապարտված լինելու զգացում: Շատերը զոհերի փոխհատուցումները չէին կարողանում վճարել: Վկաներին սպառնալիքների ենթարկելը պատշաճ կերպով չէր կանխվում: Բազմաթիվ զոհեր չէին կարողանում ճշգրիտ հիշել հանցագործությունների ընթացքը, ինչը հաճախ անհնար էր դարձնում պարզել բռնություններին առանձին անձանց մասնակ-

ցության և պատասխանատվության չափը: Թերահավատները երկյուղում էին, որ հանցագործության մեջ կասկածվող շատ ձերբակալվածներ կարող էին համաներումների հիման վրա ազատվել պատժից: Այդ ամենին գումարվում էր այն, որ սպասվում էր դատավարությունների թվի բազմապատիկ աճ: Սկզբնապես ենթադրվող 80 000 դատավարությունների փոխարեն դրանց թիվը ենթադրաբար պետք է հասներ մեկ միլիոնի, և դրա պատճառը մեղադրանքների շեմի իջեցումն էր: Հաճախ անանուն բողոքը կամ պարզապես կասկածի առկայությունը կամ նաև մեղադրանքների վերահողումն այլ անձանց, որոնք նախկինում հաշվի չէին առնվել քրեական արդարադատության կողմից, բավական էին նոր դատավարություններ սկսելու համար:

Գաճաճա-դատարանների քննադատները դրա մեջ տեսնում էին հաշտեցման քաղաքականությունը ձախողելու դիտավորություն, եթե ոչ՝ այդ դատարանների միջոցով հութուներին կոլեկտիվ կերպով քրեականացնելու և այդ եղանակով թութսիների իշխանությունն ամրապնդելու՝ Ռուանդայի կառավարության կողմից ուղղորդված քաղաքականություն: Այդ ամենով հանդերձ՝ միջազգային դիտորդները հանդես էին գալիս ոչ թե գաճաճա-դատարանների համակարգը լուծարելու, այլ այն քայլ առ քայլ բարելավելու օգտին: Այդ դատարաններն իրենց գործունեությունը պաշտոնապես դադարեցրին 2012 թ. հուլիսից {(235)}:

Հաշտեցման քաղաքականությունը

Ցեղասպանությունից հետո Ռուանդայի նոր կառավարությունը փորձեց երկրի վերաշինության և հաշտեցման քաղաքականություն իրականացնել: Պաշտոնապես արգելված է նախկինում էթնանուններ համարվող «թութսի», «հութու» կամ «տվա» եզրույթների գործածությունը, և երկրի բոլոր քաղաքացիները անվանվում են ռուանդացի: Նա, ով ներկային հղում կատարելով կփորձի այդ էթնանուններով որևէ փաստարկում կատարել, կա-

րող է մեղադրվել բնակչության մեջ դիտավորյալ պառակտում հրահրելու մեղադրանքով:

Միասնության և հաշտեցման ազգային հանձնաժողովը 1999 թ.-ից ողջ երկրում կազմակերպում է ֆորումներ և զանազան այլ միջոցառումներ հաշտեցման գործընթացին նպաստելու համար: Այդ ամենով հանդերձ, սակայն, հութուների և թութսիների միջև բաժանարար գծերը դեռևս չեն հաղթահարվել, և բնակչության մեծամասնությունը շարունակում է կրել էթնիկ պատկանելությամբ պայմանավորված՝ ինքնության գիտակցությունը: Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության զոհերի միջազգային հիշատակի օրն ապրիլի 7-ն է, քանի որ 1994 թ. այդ օրը ցեղասպանությունը ծավալվեց ողջ երկրում:

ՌՀՃ-ի դերակատարությունը. հակասական մեկնաբանություններ և փոխադարձ մեղադրանքներ

Այն հանգամանքը, որ միջազգային հանրության աչքի առաջ շուրջ 3 ամիս շարունակվող ցեղասպանությունը դադարեցվեց բացառապես ՌՀՃ-ի հաղթական ռազմական գործողությունների շնորհիվ, միանշանակ է և որևէ կասկած չի հարուցում: Միջազգային դիսկուրսում, սակայն, հաճախ է քննարկվել և տարբեր մեկնաբանություններ ստացել ՌՀՃ-ի կողմից մարտերի ընթացքում և դրանցից անմիջապես հետո գրավված տարածքում վերահսկողություն հաստատելու ժամանակ բռնությունների իրականացման հարցը, որոնց զոհ են դարձել հազարավոր մարդիկ: Պատերազմական օրենքներով և կամայականորեն կատարված գնդակահարություններն, ըստ որոշ փորձագետների, այնպիսի չափերի են եղել, որ դրանց մասին ՌՀՃ-ի բարձր ղեկավարության տեղեկացվածությունն ու նրա կողմից դրանց հանդուրժումը, եթե ոչ պլանավորումը, կասկածի տեղիք չեն տալիս:

Միջազգային դիսկուրսում Կագամեի և ՌՀՃ-ի այլ ղեկավարների հասցեին հնչող այն մեղադրանքները, թե նրանք քաղաքա-

ցիական պատերազմի ժամանակ իրականացրել են ծանր հանցագործություններ կամ աջակցել են դրանց, նրանց կողմից հերքվել են: Փոխարենը վերջիններս մեղադրում էին իրենց քննադատներին՝ քաղաքական շահախնդրություններով առաջնորդվելու համար: Այդօրինակ փոխադարձ և հակասական մեղադրանքներն, անկասկած, շատ դեպքերում առաջնորդվում են քաղաքական շահախնդրություններով, մինչդեռ միջազգային հանրությունը գլխավորապես պետք է զբաղվի այն հարցով, թե ինչպես միջազգային կառույցների կողմից չկանխվեց կամ չկասեցվեց ամիսներ շարունակվող ցեղասպանությունը, այն դեպքում, երբ Ռուանդայում սկզբից ևեթ առկա էին նաև ՄԱԿ-ի խաղաղապահ ստորաբաժանումներ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԲՈՍՆԻԱՑԻՆԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԵԲՐԵՆԻՑԱՅՈՒՄ

Նախընթաց իրադարձությունները

1990-ական թթ. բոսնիական պատերազմի ժամանակ Արևելյան Բոսնիայում, որտեղ գտնվում է նաև Սրեբրենիցա քաղաքը, տեղի ունեցան ռազմական բախումներ բոսնիական սերբերի և բոսնիակների զինված կազմավորումների միջև: Բոսնիական սերբերին, որոնց օգնում էին անկանոն զորամասեր, 1992 թ. գարնանը հաջողվեց առաջին անգամ գրավել Սրեբրենիցայի շրջանը: Դրա բնակչության երեք քառորդը և բուն Սրեբրենիցա քաղաքի բնակչության մոտ երկու երրորդը բոսնիակներ էին: Բոսնիական սերբերի տիրապետությունը Սրեբրենիցայում տևեց ընդամենը մի քանի շաբաթ, քանի որ բոսնիական զորամասերը Նազեր Օրիչի գլխավորությամբ 1992 թ. մայիսի սկզբին կրկին տիրացան քաղաքին: Շրջակա տարածքները, սակայն, շարունակեցին մնալ բոսնիական սերբերի ձեռքում, որոնք դարձյալ պաշարեցին Սրեբրենիցան: Բոսնիակների զորամասերը քաղաքից ձեռնարկեցին մի շարք հակագրոհներ և հարձակումներ շրջակա սերբական գյուղերի վրա, որոնք հենակետեր էին ծառայում քաղաքը պաշարողների համար: Բոսնիակներին հաջողվեց մինչև 1993 թ. հունվար ամիսը Սրեբրենիցայի շուրջ իրենց վերահսկողության գոտին ընդլայնել՝ հասցնելով մոտ 900 կմ^2-ի: Պաշարումը, սակայն, նրանք չկարողացան ճեղքել:

Հայտնի է, որ բոսնիացիների այն զորամասերը, որոնք գտնվում էին Ն. Օրիչի անմիջական ղեկավարման ներքո, այդ հարձակումների ժամանակ վայրագություններ են կատարել բոսնիական սերբ բնակչության դեմ, որի զոհերի թվի վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան: Սերբական լրատվամիջոցներում այդ թիվը գնահատվում է 1000-3000: Պատերազմական փաս-

տաթղթղթերի նիդեռլանդական ինստիտուտի տվյալներով սերբական քաղաքացիական բնակչությունից առնվազն 1000 մարդ է սպանվել: Ըստ Սարաևոյի հետազոտական և փաստաթղթային կենտրոնի՝ 424-ից 446 սերբ զինվորներ և 119 սերբ քաղաքացիներ են զոհվել {(237)}:

Բոսնիական սերբերի զինված խմբավորումները 1993 թ. գարնանը վերակազմակերպվեցին Ռադկո Մլադիչի ղեկավարման ներքո: Նրանց հարձակումները վերստին կրճատեցին բոսնիակների վերահսկողության գոտին՝ մինչև 1993 թ. մարտ ամիսը այն հասցնելով մոտ 150 կմ^2: Այդ ռազմական գործողությունների ընթացքում Սրեբրենիցայի շրջակա տարածքների բոսնիակ բնակչությունը փախավ քաղաք, որի բնակչության թիվը դրա հետևանքով հասավ 50 000-60 000-ի. այն դեպքում, երբ 1991 թ. քաղաքն ուներ մոտ 6000 բնակիչներ: Մարդկանց մեծաքանակ կուտակումը քաղաքում հանգեցրեց հումանիտար ճգնաժամի: Կացարանները, սննդի և դեղորայքի պաշարները չէին բավականացնում: Խմելու ջուրը և էլկտրականության մատակարարման ենթակառուցվածքները շարքից դուրս էին եկել:

Գեներալ Ֆիլիպ Մորիլոնը, որը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմամբ 1992 թ. Խորվաթիայում ու Բոսնիա և Հերցեգովինայում տեղակայված՝ ՄԱԿ-ի պաշտպանական ուժերի պարետն էր, 1993 թ. մարտի 11-13-ը այցելեց փախստականներով գերլցված Սրեբրենիցա և այնտեղից հեռանալիս բնակիչներին հրապարակայնորեն խոստացավ, որ Սրեբրենիցան կդրվի ՄԱԿ-ի պաշտպանության ներքո, և որ ՄԱԿ-ը քաղաքն ու նրա բնակչությանը չի թողնելու բախտի քմահաճույքին {(95) *13-15, 175-176*}:

1993 թ. մարտ և ապրիլ ամիսներին ՄԱԿ-ի՝ Փախստականների կոմիսարիատի հսկողության ներքո հազարավոր բոսնակներ տարհանվեցին Սրեբրենիցայից: Սարաևոյում գտնվող բոսնիական կառավարությունը բողոքեց այդ տարհանումների դեմ, քանի

որ նրա կարծիքով այդ միջոցառումները նպաստում էին Արևելյան Բոսնիայում էթնիկ զտումների քաղաքականությանը:

1993 թ. ապրիլի 13-ին բոսնիացի սերբ զինվորականները ՄԱԿ-ի փախստականների կոմիսարիատի ներկայացուցիչներին տեղեկացրին, որ եթե բոսնիակները երկու օրում անձնատուր չլինեն, իրենք կհարձակվեն Սրեբրենիցայի վրա:

Պաշտպանական գոտու ստեղծումը

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, նկատի առնելով ստեղծված վտանգավոր իրադրությունը, 1993 թ. ապրիլի 16-ին ընդունեց թիվ 819 բանաձևը, որով հակամարտության բոլոր կողմերից պահանջում էր Սրեբրենիցան և շրջակա տարածքը դիտարկել որպես պաշտպանական գոտի: Այդպիսով, ըստ բանաձևի, որևէ հարձակում Սրեբրենիցայի վրա և պաշտպանական գոտու հանդեպ ցանկացած այլ թշնամական արարք պետք է բացառվեին: Ապրիլի 18-ին ՄԱԿ-ի պաշտպանական ուժերի առաջին 170 զինվորները՝ մեծ մասամբ կանադացիներ, ժամանեցին Սրեբրենիցա: Անվտանգության խորհուրդը Սրեբրենիցայի՝ որպես անվտանգության գոտու կարգավիճակը սահմանեց 1993 թ. մայիսի 6-ին ընդունված թիվ 824 բանաձևով և 1993 թ. հունիսի 4-ի՝ թիվ 836 բանաձևով, որն, ի դեպ, պաշտպանական ուժերի զինվորներին թույլատրում էր ինքնապաշտպանության նպատակով զենքի գործադրումը:

1994 թ. մարտին Սրեբրենիցայի պաշտպանական գոտի մուտք գործեց նիդերլանդական առաջին գումարտակը, որին նույն տարվա հուլիսին հերթափոխեց մեկ ուրիշը, իսկ վերջինս էլ 1995 թ. հունվարին փոխարինվեց նիդերլանդական նոր գումարտակով:

Կապույտ սաղավարտավորների մանդատը և, ըստ այդմ, նաև սպառազինությունը միանգամայն խնդրահարույց էին մնում: Այն պետությունները, որոնք Բոսնիայի և անվտանգության գոտի-

ների համար ՄԱԿ-ին զորամասեր էին տրամադրում, դեմ էին բոսնիացի սերբերի դեմ ռազմական ուժի կիրառմանը՝ երկյուղելով, որ այդ դեպքում իրենց զինվորները կվտանգվեն: Այն պետությունները, սակայն, որոնք տեղում զորամասեր չունեին, կողմնակից էին մանդատի ընդայնմանը և կարծում էին, որ կարող է դիտարկվել նաև Սրպսկայի ինքնահռչակ հանրապետության դեմ ռազմական ճնշում կիրառելու հնարավորությունը {(244)}:

Տեղակայված պաշտպանական ուժերի մանդատը և թույլ զինվածությունը, ի վերջո, մնացին անփոփոխ: Այդ ուժերը կարող էին գործել միայն խաղաղապահ միջնորդական առաքելության կարգավիճակով՝ չունենալով հակամարտության կողմերին կամ նրանցից որևէ մեկին խաղաղություն պարտադրելու իրավունք:

Սրեբրենիցայի անվտանգության գոտու ստեղծմանը որոշ ժամանակ հաջորդեց հարաբերական կայունություն: Մարտական գործողություններն էապես նվազեցին, այնուհանդերձ լիակատար խաղաղություն չհաստատվեց, և գոտու տարածքում բնակչության լիարժեք պաշտպանության խնդիրը չլուծվեց: Ըստ կապույտ սաղավարտավորների տվյալների՝ գոտու տարածքում հիմնականում իրականացվեց բոսնիակների զինված ջոկատների զինաթափումը, չնայած վերջիններս հրաժարվեցին ամբողջովին զինաթափվել: Նրանք հանձնեցին իրենց ծանր ռազմական սպառազինությունը՝ բացառությամբ մի քանի ուղղաթիռների և փոքրաթիվ ականանետերի, իսկ թեթև զենքերը պահեցին:

Բոսնիացի սերբերի զինված կազմավորումները, սակայն, լիովին հրաժարվեցին զինաթափումից և, շարունակելով մնալ իրենց դիրքերում, փորձում էին ապակայունացնել իրադրությունը գոտու տարածքում: Բոսնիակները կրկին ու կրկին բողոքում էին սերբերի հարձակումներից: Վերջիններիս զորամիավորումները խոչընդոտում և արգելափակում էին նաև Սրեբրենիցայի համար մարդասիրական օգնության տեղափոխող ավտոշարասյուների տեղաշարժը: Անվտանգության գոտու բնակչության դրությունը, չնա-

յած հարաբերական կայունությանը, շարունակում էր մնալ ճգնաժամային:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս Ղալին 1993 թ. հունիսի 14-ին պահանջեց ՄԱԿ-ի 34 000 զինվորների ուղարկել՝ նախկին Հարավսլավիայում ստեղծված՝ ՄԱԿ-ի պաշտպանության գոտիների անվտանգությունն ամրապնդելու համար: Անվտանգության խորհուրդը, սակայն, չորս օր անց համաձայնեց խաղաղապահների թիվը սահմանափակ չափով ավելացնել՝ հասցնելով 7600-ի {(95) *215*}: Դա էլ տեղի ունեցավ միայն 1994 թ. ամռանը: Ավելի մեծ քանակությամբ զինվորական ուժերի տեղակայման ցանկության բացակայությունը պայմանավորված էր մի կողմից՝ խաղաղապահ առաքելության համար կատարվող ծախսերը չընդլայնելու և, մյուս կողմից՝ ՄԱԿ-ի կապույտ սաղավարտավորներին չվտանգելու մտահոգություններով:

1995 թ. գարնանը փախստականների և խաղաղապահների՝ առանց այն էլ ծանր դրությունն ավելի վատթարացավ: Ավելի հաճախակի դարձավ Սրեբրենիցայի համար նախատեսված ավտոշարասյուների արգելափակումը բոսնիացի սերբերի զորամիավորումների կողմից: Դրանից տուժում էին ոչ միայն շրջապատման մեջ գտնվող փախստականները, այլև կապույտ սաղավարտավորները, որոնց պաշարները նույնպես էապես նվազել էին: Երբ վերջիններս հեռանում էին պաշտպանության գոտուց՝ իրենց զորամասերի համար սննդի և այլ նյութական համալրումներ ձեռք բերելու նպատակով, նրանց վերադարձը պարբերաբար խոչընդոտվում էր բոսնիացի սերբերի զորամասերի կողմից: Դրա հետևանքով պաշտպանության գոտում նիդերլանդացի խաղաղապահների թիվը նվազեց՝ 600-ից հասնելով 400-ի {(95) *277*, *280*}:

Այդ իրադրությունում խաղաղապահներ ուղարկող պետությունները ցանկություն չունեին լրացուցիչ զորամասեր տեղակայելու Բոսնիայում և պաշտպանության գոտում: Սրպսկայի Հանրապետության դիրքերի վրա օդային հարձակումների ձեռ-

նարկումը նույնպես ՄԱԿ-ը և զորամասեր տեղակայող պետությունները անպատեհ էին համարում: ՄԱԿ-ի ղեկավարությանը մտահոգում էր այն, որ բոսնիացի սերբերի զորամասերը ՆԱՏՕ-ի օդային հարձակումները կմեկնաբանեին որպես ՄԱԿ-ի կողմից իրականացվող պատերազմական գործողություններ Սրպսկայի Հանրապետության դեմ, իսկ դա համաշխարհային այդ կազմակերպության կարծիքով կարող էր հանգեցնել էսկալացիայի, որի դեպքում ելք գտնելը դյուրին խնդիր չէր: Մտահոգություն էր արտահայտվում նաև առ այն, որ այդպիսի իրավիճակը ճակատագրական էր լինելու ցանկացած խաղաղարար առաքելության համար, և այդ դեպքում անիրագործելի կդառնար քաղաքացիական բնակչությանը մարդասիրական օգնության ցուցաբերումը: ՄԱԿ-ի ղեկավարությանը վախեցնում էր նաև այն հանգամանքը, որ հարձակումներ կիրականացվեն խաղաղապահների վրա, որոնց անվտանգությունը այդ կազմակերպության և ջոկատներ տրամադրած պետությունների համար վճռորոշ նշանակություն ուներ {(244)}:

Սրպսկայի Հանրապետության նախագահ Ռադովան Կարաջիչը 1995 թ. մարտի սկզբին բոսնիացի սերբերի բանակին ուղարկեց «թիվ 7 հրահանգը», որով պահանջում էր լավ ծրագրված և կշռադատված ռազմական գործողություններով Սրեբրենիցայի պաշտպանության գոտում լիակատար անապահովության անտանելի դրություն ստեղծել: Շրջապատման մեջ գտնվող բոսնիացիները պետք է զրկվեին աջակցություն ստանալու, նաև գոյատևելու որևէ հույսից {(140) *10*}:

Օգնության մատակարարման համար միջանցք բացելու՝ վերջիններիս մի շարք կոչերը որևէ արդյունք չունեցան: Հուլիսի սկզբին Սրեբրենիցայի բնակչության շրջանում ի հայտ եկան սովից և հյուծվածությունից մահանալու բազմաթիվ դեպքեր:

Ինչ վերաբերում է կապույտ սաղավարտավորներին, ապա նրանք դեռ 1995 թ. մարտից արձանագրում էին բոսնիացի սերբե-

րի զորամասերի կողմից կատարվող նախապատրաստություններ՝ պաշտպանության գոտու սահմանի վրա գտնվող՝ ՄԱԿ-ի դիտորդական կետերի վրա հարձակվելու համար:

Բոսնիացի սերբերի զորամասերի ներխուժումը պաշտպանական գոտի

Բոսնիացի սերբերի բանակը և անկանոն զորամասերը 1995 թ. հուլիսի 3-ին, առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին գոտու հարավային սահմանին գտնվող կապույտ սաղավարտավորների դիտակետը, իսկ հուլիսի 6-ին հարավից ներխուժեցին պաշտպանական գոտի: Հուլիսի 9-ին նրանք արդեն գտնվում էին Սրեբրենիցայի սահմանից 1 կմ հեռավորության վրա: Նրանց բոսնիակների կամ խաղաղապահների կողմից որևէ դիմադրություն չցուցաբերվեց, և դրանից քաջալերված՝ Կարաջիչը բոսնիացի սերբերի բանակին թույլատրեց գրավել քաղաքը {(140) *227-231*}:

Այդ էսկալացիայի պայմաններում կապույտ սաղավարտավորների հրամանատար Թոմաս Կարեմանսը բազմիցս ՆԱՏՕ-ից օդային աջակցություն պահանջեց, սակայն համալիր աջակցություն չցուցաբերվեց: ՆԱՏՕ-ի երկու նիդերլանդական ինքնաթիռներ ռմբակոծեցին և շարքից հանեցին բոսնիացի սերբերի մի զրահամեքենա, որից անմիջապես հետո սերբերը սպառնացին ՆԱՏՕ-ի օդային հարձակումների շարունակման դեպքում սպանել խաղաղապահներին, որոնց նրանք արդեն որպես պատանդներ արգելափակել էին: Բացի այդ՝ նրանք սպառնում էին կրակ բացել քաղաքում կուտակված փախստականների բազմության վրա: Դրանից հետո որևէ փորձ չձեռնարկվեց օդային հարձակման միջոցով քաղաք ներխուժող զորամասերը կանգնեցնելու համար {(95) *365*}:

Բոսնիակների փախուստը Պոտոկարի

Երբ բոսնիացի սերբերի զորամասերը Սրեբրենիցայում վերահսկողությունն իրենց ձեռքն էին վերցնում, քաղաքի հազարավոր բոսնիակ բնակիչներ փախան Սրեբրենիցայից հյուսիս ընկած Պոտոկարի քաղաքը, որը նույնպես ընդգրկված էր պաշտպանական գոտում: Նրանք հույս ունեին պաշտպանված լինել այնտեղ գտնվող խաղաղապահների տարածքում, որոնք տեղավորվել էին մի նախկին գործարանի շենքում: 1995 թ. հուլիսի 11-ի երեկոյան Պոտոկարիում հավաքվել էին մոտ 25 000 փախստականներ: Նրանցից մի քանի հազարը կուտակվել էր խաղաղապահների տարածքում, իսկ մյուսները տեղաբաշխվել էին մերձակա ֆաբրիկաներում ու դաշտերում {(95) *373, 381*}: Թեև նրանց գերակշիռ մասը կանայք, երեխաներ, հաշմանդամներ և ծերեր էին, այնուհանդերձ խաղաղապահների տարածքում կային նաև մոտ 300, իսկ անմիջական մերձակայքում՝ 600-900 տղամարդիկ:

Պոտոկարիում պայմանները խիստ ծանր էին: Հուլիսի 12-ին այնտեղ անտանելի շոգ էր: Սնունդ և ջուր գրեթե ամենևին չկային: Բոսնիացի սերբերն ահաբեկում էին փախստականներին՝ կրակելով մերձակա շենքերի, նաև զանազան վայրերում խռնված մարդկանց բազմության վրա: Փախստականների բազմությանը տիրել էին սարսափն ու խուճապը: Աղջամուղջին իրադրությունն ավելի սրվեց, քանի որ բոսնիացի սերբ զինվորները սկսեցին հրկիզել դաշտերն ու տարբեր շինություններ:

Հուլիսի 12-ին տեղի ունեցան նաև առանձին սպանություններ: Երեկոյան և գիշերային ժամերին ահաբեկչական գործողություններն ավելի ակտիվացան: Ամենուր կրակոցներ և ճիչեր էին լսվում: Մի շարք կանայք և աղջիկներ բռնաբարվեցին: Բոսնիացի սերբերն առանձին փախստականների դուրս էին բերում բազմության միջից և տանում անհայտ ուղղությամբ: Նրանցից ոմանք այլևս ետ չէին վերադառնում: Որոշ մարդիկ այդ իրադրությունում ինքնասպանություն գործեցին: Հուլիսի լույս 13-ի գիշերը և առա-

վոտյան փախստականների մեջ տարածվեցին լուրեր բռնաբարությունների և սպանությունների մասին {(95) *420-423*}:

Մարդկանց սելեկցիան Պոտոկարիում. կանանց, երեխաների և ծերերի տարհանումը

Հուլիսի 12-ին սկսվեց նաև կանանց, երեխաների ու ծերերի տարհանումը, որն ամբողջ թափով շարունակվեց հաջորդ օրը: Դա տեղի էր ունենում ավտոբուսներով, որոնք բոսնիացի սերբ զինվորների հսկողության ներքո նրանց Պոտոկարիից տանում էին բոսնիակների կողմից վերհսկվող Կլադան քաղաքի մերձակայքը: Թեև տարհանվողներից շատերը տեղյակ չէին, թե ուր են իրենց տանում, այնուհանդերձ ուրախ էին Պոտոկարիում տիրող սարսափելի պայմաններից դուրս գալու համար: Ավտոբուսներից իջնելուց հետո մարդիկ պետք է նաև ոչ ոքի կողմից չվերահսկվող տարածքում մի քանի կիլոմետր ոտքով գնային, մինչև կհասնեին Կլադան:

Նիդերլանդացի կապույտ սաղավարտավորները փորձեցին ուղեկցել ավտոբուսներին, ինչը նրանց հաջողվեց միայն առաջին շարասյան դեպքում: Բոսնիացի սերբերի զորամասերը նրանց արգելեցին ուղեկցել մյուս շարասյուները: Նրանք զենքի գործադրման սպառնալիքով ՄԱԿ-ի խաղաղապահներից խլեցին նաև նրանց պատկանող փոխադրամիջոցները: Հուլիսի 13-ի երեկոյան Պոտոկարիում այլևս ոչ մի բոսնիակ չէր մնացել:

Ինչ վերաբերում է Պոտոկարիում ապաստանած բոսնիակ տղամարդկանց, ապա նրանց արգելված էր մյուսների հետ ավտոբուս բարձրանալ: Հուլիսի 12-ի առավոտյան բոսնիացի սերբերը սկսեցին նրանց փախստականների բազմությունից առանձնացնել և ժամանակավորապես արգելափակել մի ֆաբրիկայի տարածքում և մի շինության մեջ, որը կոչվում էր «Սպիտակ տուն»: Այդ կերպ սելեկցիայի ենթարկված տղամարդկանց թիվը հասնում էր մոտ 2000-ի: Դա նրանց ընտանիքներին ծանր տա-

ռապանք էր պատճառում: Նրանց այնուհետև տեղափոխեցին Բրատունակ և ժամանակավորապես արգելափակեցին այնտեղ: Կանանց, երեխաներին և ծերերին փոխադրող ավտոբուսները, որոնք Կլադան էին ուղևորվում, ճանապարհին կանգնեցվում էին բոսնիացի սերբ զինվորականների կողմից, որոնք խուզարկություն էին կատարում՝ պարզելու՝ դրանցում տղամարդիկ կան, թե ոչ, և եթե դիպվածաբար տղամարդ էր հայտնաբերվում, նրան տանում էին:

Տղամարդ բոսնիակները սելեկցիայի, արգելափակման և փոքր-ինչ ավելի ուշ անհայտ ուղղությամբ փոխադրվելու ժամանակ որևէ պաշտպանություն չէին ստանում ՄԱԿ-ի խաղաղապահներից: Երբ վերջիններս բոսնիացի սերբ զինվորականներին հարցնում էին սելեկցիայի պատճառների մասին, նրանց պատասխանվում էր, որ փնտրում են ռազմական հանցագործություններ կատարած անձանց {(147) *237*}: ՄԱԿ-ի զինվորները հուլիսի 12-ին և 13-ին դարձան նաև մի շարք բոսնիակների սպանության ականատեսը, որ բոսնիացի սերբերն իրականացրին «Սպիտակ տան» ներսում և ետևում:

Փախուստ շարասյունով

Նկատի առնելով Պոտոկարիում ապաստանած փախստականների ծանր դրությունը՝ Սրեբրենիցայում մնացած բոսնիակները վճռեցին միասնաբար փախուստի փորձ ձեռնարկել: Դրա իրականացման համար ֆիզիկապես պիտանի տղամարդիկ պետք է հավաքվեին և Բոսնիա-Հերցեգովինայի Հանրապետության բանակի 28-րդ դիվիզիայի անդամների հետ կազմեին մի շարասյուն: Այն պետք է փորձեր, հիմնականում անտառների միջով ընթանալով, հասնել Սրեբրենիցայից հյուսիս-արևմուտք ընկած Տուզլա քաղաքը, այսինքն՝ բոսնիակների վերահսկողության տակ գտնվող տարածք: Այդ երթուղու երկարությունն ավելի քան 70 կմ էր:

Շարասյունը բաղկացած էր 10 000-15 000 տղամարդկանցից: Չնայած դրա մեկ երրորդը կազմում էին վերոնշյալ դիվիզիայի մարտիկները, այնուհանդերձ վերջիններս միայն մասամբ էին զինված: Դիվիզիայի ոչ միայն սպառազինությունն էր բավականին թույլ, այլև զինվորական պատրաստվածությունն ու կարգապահությունը: Շարասյան առջևից ընթանում էին դիվիզիայի զորամասերը, նրանց հաջորդում էին քաղաքացիական անձինք, որոնց շարքերում ևս զինվորներ կային, իսկ վերջից գնում էր դիվիզայի մի գումարտակ:

Շարասյունը, որի մեջ կային նաև փոքրաթիվ կանայք, երեխաներ ու ծերեր, և որի երկարությունը մոտ 15 կմ էր, ճանապարհ ընկավ հուլիսի լույս 12-ի գիշերը: Երբ այն փորձում էր հատել Նովա Քասաբայի մոտ գտնվող գլխավոր խճուղին, բոսնիացի սերբերի զորամասերը ծանր հրետանիով կրակ բացեցին փախստականների վրա: Դրա հետևանքով շարասյունը մասնատվեց, և մարդկանց միայն մեկ երրորդին հաջողվեց հատել խճուղին, մինչդեռ մյուսներն ընկան շրջափակման մեջ: Բոսնիացի սերբերի զորամասերը, արգելափակված բազմությանը ողջ օրվա ընթացքում և գիշերը պահելով կրակի տակ, ձեռնարկում էին գրոհներ, որոնք վերապրածների կողմից հետագայում բնույթագրվում էին որպես «մարդորսություն»:

Հուլիսի 12-ի կեսօրից հետո և վաղ երեկոյան բոսնիացի սերբերի զորամասերը կարողացան շրջափակման մեջ ընկած մեծ թվով մարդկանց գերի վերցնել: Այդ նպատակով նրանք տարբեր մեթոդներ էին կիրառում. հաճախ ստեղծում էին ծուղակներ, հաճախ հակաօդային և ծանր սպառազինության այլ զենքերով կրակի տակ էին առնում անտառները և բոսնիակներին ստիպում էին անձնատուր լինել: Այլ դեպքերում հեռվից բարձրագոչ կեղծ հավաստիացումներ էին տալիս, որ եթե հանձնվեն, ապա նրանց հետ կվարվեն՝ համապատասխան Ժենևի կոնվենցիաների: Նրանք նաև ցուցադրում էին ՍԱԿ-ի խաղաղապահներից գողացված կամ

խլված փոխադրամիջոցներ, սաղավարտներ, բաճկոններ և այլ իրեր՝ տպավորություն ստեղծելու համար, թե ՄԱԿ-ի զինվորները կամ Կարմիր խաչն այդտեղ են գտնվում՝ գերիների հանդեպ պատշաճ վերաբերմունքը վերահսկելու նպատակով:

Երբ թաքնված մարդիկ, այդ ամենին հավատալով, հանձնվում էին, բոսնիացի սերբ զինվորները տղամարդկանցից ոմանց տեղում սպանում էին, իսկ մյուս տղամարդկանց սկզբում կուտակում էին Նովա Քասաբայի ֆուտբոլի խաղահրապարակում և այլ վայրերում, իսկ այնուհետև տեղափոխում էին Բրատունակ՝ միացնելով այնտեղ արգելափակվածներին: Եթե հանձնվողների մեջ լինում էին նաև կանայք, երեխաներ կամ ծերեր, ապա նրանց տեղափոխում էին դեպի Պոտոկարիից Կլադան մեկնող ավտոբուսները և դրանցով ուղարկում էին Կլադան: Բոսնիացի սերբերի զորամասերը ամենամեծ թվով մարդկանց գերեցին հուլիսի 13-ին:

Շարասյան մոտ մեկ երրորդը կազմող առաջնամասը, որին հաջողվել էր հատել վերոնշյալ մայրուղին, սկզբում որոշ ժամանակ կանգ առավ՝ հուսալով, որ ետևում մնացածներին միգուցե հաջողվի շրջափակումը ճեղքել և միանալ իրեն: Երբ համատարած գնդակոծությունը շարունակվեց մինչև հուլիսի 12-ի գիշերը, այդ հույսը մարեց, և հուլիսի 13-ին այն շարունակեց ճանապարհը հյուսիս-արևմտյան ուղղությամբ: Դա նրա համար դյուրին չէր, քանի որ նա էլ ծուղակների հանդիպեց և մեծ կորուստներ ունեցավ: Հուլիսի 15-ին շարասյան առաջնամասի ձեռնարկած փորձը՝ անցնելու բոսնիակների կողմից վերահսկվող տարածք, ձախողվեց: Դա հաջողվեց միայն հաջորդ օրը և այն էլ Բոսնիայի և Հերցեգովինայի Հանրապետության բանակային զորամասերի օգնությամբ, որոնք Տուզլայից ընդառաջ եկան և միջանցք բացեցին նրա համար {(140) *242*}:

Սպանդը

Բոսնիացի սերբ զինվորականները Պոտոկարիում արգելափակված բոսնիակ տղամարդկանց, ինչպես նշվեց, տեղափոխեցին Բրատունակ՝ նրանց արգելափակելով այնտեղ գտնվող տարբեր շինություններում, զորօրինակ՝ մի լքված հանրախանութում, դպրոցներում, մարզադահլիճներում, մշակույթի տան շենքում, մի պահեստում և այլն: Մարդկանց մի մասն արգելափակվեց նաև այն ավտոբուսներում ու բեռնատար մեքենաների թափքերում, որոնցով նրանց տեղափոխել էին այդտեղ: Բրատունակ տեղափոխվեցին և արգելափակվածների միացվեցին նաև Նովա Քասաբայի շրջանում ձերբակալված՝ փախչող շարասյանը պատկանող անձինք: Գիշերային ժամերին սերբերն առանձին բանտարկյալների դուրս էին կանչում, որից հետո լսվում էին ճիչ ու աղաղակներ և կրակոցներ:

Սերբ զինվորականները կալանավոր բոսնիակներին մեկից երեք օր Բրատունակում պահելուց հետո, երբ բոսնիակ կանանց ու երեխաներին Կլաղան փոխադրող ավտոբուսներն ազատվեցին, տեղափոխեցին տարբեր վայրեր և գրեթե բոլորին սպանեցին: Թեև տեղի ունեցան որոշ կամայական սպանություններ, նրանց մեծ մասը զոհ դարձավ խնամքով ծրագրված և իրականացված զանգվածային կոտորածների, որոնք սկսվել էին դեռ հուլիսի 13-ին, բայց առավել մեծ թափով շարունակվեցին հուլիսի 14-17-ն ընկած ժամանակամիջոցում Բրատունակից հյուսիս ընկած՝ այդ նպատակի համար նախատեսված վայրերում: Սպանդի աշխարհագրական տարածքը կազմում էր 300 կմ^2 {(140) *242*}:

Արգելափակումից սկսած մինչև սպանություն զոհերի հանդեպ, որպես կանոն, նույնական վարքագիծ և գործողություններ էին իրականացվում: Արգելափակման վայրերում նրանց սնունդ և ջուր չէր տրվում: Նրանց ավտոբուսներով կամ բեռնատար ավտոմեքենաներով սպանդի համար նախատեսված մեկուսի վայրերը տեղափոխելու ժամանակ որոշ դեպքերում, հնարավոր դիմադրու-

թյունը բացառելու համար, լրացուցիչ միջոցառումներ էին իրականացվում. օրինակ՝ կապում էին աչքերը կամ ձեռքերը թիկունքում շղթայում էին: Երբ փոխադրամիջոցները հասնում էին սպանդի վայրեր, կալանավորներին շարք էին կանգնեցնում և գնդակահարում: Նրանք, որոնք համազարկերից հետո ողջ էին մնում, սպանվում էին լրացուցիչ կրակոցներով: Գնդակահարություններից անմիջապես հետո, երբեմն նաև դրանց ընթացքում այնտեղ էին բերվում նաև հողափոր մեքենաներ դիերը թաղելու համար: Զանգվածային գերեզմանոցները փորվում էին կա՛մ հենց այնտեղ, որտեղ ընկած էին դիերը, կա՛մ անմիջական մերձակայքում: Չնայած դիերը, որպես կանոն, թաղվում էին տարբեր չափերի զանգվածային գերեզմանոցներում, սակայն լինում էին դեպքեր, երբ դրանք անհատական գերեզմանափոսերում էին հողածածկ արվում: 2009 թ. դրությամբ հայտնաբերվել են 31 անհատական գերեզմաններ:

Մինչև 2001 թ. փորձագետները հայտնաբերեցին և նույնականացրին 21 զանգվածային գերեզմանոցներ: Դրանցից 14-ը այսպես կոչված առաջնային գերեզմանոցներ են, այսինքն՝ դրանցում դիերը թաղվել են սպանդից անմիջապես հետո: Այդ 14-ից 8-ում թաղվածների աճյունները հետագայում տեղափոխվել և այլ՝ ավելի հեռու և մեկուսի վայրերում են վերաթաղվել: Մինչև 2001 թ. հայտնաբերվել են այդ այսպես կոչված երկրորդական գերեզմանոցներից յոթը:

Բեսնիացի սերբերն այդ վերաթաղումները կատարում էին զանգվածային սպանությունները կոծկելու նպատակով: Մինչև 2009 թ. փորագետները հայտնաբերել են ընդհանուր հաշվով 37 երկրորդական զանգվածային գերեզմանոցներ, որոնցում կատարվել է դիերի վերաթաղում {(95) *706*}:

Մինչ այժմ ընդհանուր առմամբ արտաշիրիմվել են մոտ 8000 զոհերի աճյուններ, որոնցից 6838-ի անունները նույնականացվել են: Զոհերը, որպես կանոն, եղել են 13-78 տարեկան արական սեռի անձինք {(241)}:

Քաղաքական և իրավական գործընթացները

Բոսնիացի սերբերի կողմից Սրեբրենիցայի պաշտպանության գոտին գրավելուց մի քանի օր անց Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը պահանջեց վերագրավել այդ գոտին: Այդ պահանջը, սակայն, միջազգային ասպարեզում որակվեց որպես ուշացած վճռականության խորհրդանշական ժեստ, և Ֆրանսիայի նորընտիր նախագահն իր գաղափարի համակիրներ չունեցավ:

Հուլիսի երկրորդ կեսին ի հայտ եկան առաջին լուրերը կոտորածների մասին, որոնք բազմացան, երբ փոքրաթիվ վերապրածները բոսնիակների վերահսկողության տակ գտնվող տարածք հասնելուց հետո սկսեցին ցուցմունքներ տալ: Կարևոր դեր ունեցան նաև նիդերլանդական կապույտ սաղավարտավորների վկայությունները: Օգոստոսի 10-ին ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպան Մադելայն Ալբրիխտը Անվտանգության խորհրդին ներկայացրեց արբանյակային լուսանկարներ, որոնք հիմք էին տալիս պատկերացում կազմելու Սրեբրենիցայի շրջանում բոսնիական սերբերի իրականացրած վայրագությունների մասին:

1995 թ. նոյեմբերին նախկին Հարավսլավիայի հարցերով ՄԱԿ-ի միջազգային քրեական դատարանում Սրեբրենիցայի կոտորածի կապակցությամբ մեղադրանքներ հարուցվեցին մի շարք անձանց դեմ: Ռադիսլավ Կրստիչի, Վիդոյե Բլագովիչի, Դրագան Ժոկիչի և այլ մեղադրյալների դատավճիռները կայացնելիս դատարանը տեղի ունեցածը բնորոշեց որպես ցեղասպանություն:

Ռադովան Կարաջիչը տարիներ շարունակ փախուստի մեջ գտնվելուց հետո 2008 թ. հուլիսի 18-ին ձերբակալվեց և, տեղափոխվեց Հաագա, որտեղ 2016 թ. մարտի 24-ին դատապարտվեց 40 տարվա բանտարկության, իսկ 2019 թ. մարտի 20-ին բողոքարկման արդյունքում՝ ցմահ ազատազրկման: Կոտորածի գլխավոր պատասխանատու համարվող Ռադկո Մլադիչը, որը նույնպես փախուստի մեջ էր գտնվում, ձերբակալվեց 2011 թ. մայիսի 26-ին և 2017 թ. նոյեմբերի 22-ին նույնպես դատապարտվեց ցմահ ազատազարկման:

Բոսնիա-Հերցեգովինայի Գերագույն դատարանի՝ պատերազմական հանցագործությունների ատյանը 2013 թ. նույնպես ստանձնեց հանցագործների դեմ անհատական քրեական հետապնդում իրականացնելու հանձնառություն: Մինչև 2015 թ. 14 դատավարություններ արդեն ավարտվել էին այդ ատյանի կողմից, իսկ ևս վեցը դեռ շարունակվում էին: Որոշ մեղադրյալներ ազատ արձակվեցին, մյուսները դատապարտվեցին մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանության մեղադրանքով: Մեղադրյալներից մի քանիսը կարողացել էին արտագաղթել, բայց արտերկրում ձերբակալվելով՝ հանձնվեցին Բոսնիա-Հերցեգովինային, որպեսզի դատավարությունն այնտեղ տեղի ունենա:

Արդարադատության միջազգային դատարանը (ԱՄԴ), որին Բոսնիա-Հերցեգովինան դեռ 1993 թ. հայց էր ներկայացրել Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (գոյատևել է 1992-2003 թթ.՝ որպես Սերբիայի և Մոնտենեգրոյի միություն) դեմ՝ սերբական մարմիններին մեղադրելով Բոսնիա-Հերցեգովինայում տեղի ունեցած «ցեղասպանության» համար և պահանջելով փոխհատուցում, 1996 թ. հայցը համարեց ընդունելի: 2007 թ. փետրվարի 26-ին դատարանի կայացրած վճիռը վերաբերում էր Սերբիային՝ որպես Հարավսլավիայի իրավահաջորդի: Համաձայն այդ վճռի՝ Սերբիան ուղղակի պատասխանատվություն չէր կրում բոսնիական պատերազմի ժամանակ տեղի ունեցած հանցագործությունների համար: Այդ պատճառով նրան չէր կարող պարտադրվել փոխհատուցումների կատարում: Դատարանն այնուհանդերձ Սրեբրենիցայի կոտորածը բնորոշեց որպես ցեղասպանություն և այդ առումով հաստատեց նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային ժամանակավոր քրեական դատարանի որոշումները: Դատարանի վճռում նաև նշվում էր, որ Սրեբրենիցայի ցեղասպանությունից զատ՝ այլ ցեղասպանություն բոսնիական պատերազմում տեղի չի ունեցել, իսկ Սրեբրենիցայում կատարվածի համար Սերբիան պետք է անուղղակի պատասխանատվու-

թյուն կրի, քանի որ իր բոլոր հնարավորությունները չի օգտագործել ռազմական հանցագործություններն ու ցեղասպանությունն արգելելու համար {(72) *114-120*}:

Այսպիսով, ինչպես նախկին Հարավսլավիայի համար գործող միջազգային ժամանակավոր քրեական դատարանը, այնպես էլ ԱՄԴ-ն Սրեբրենիցայում և տարածաշրջանում կատարվածը բնորոշեցին որպես ցեղասպանություն:

1996 թ. ապրիլին Հաագայի դատարանի մի մեծ քննիչ հանձնաժողով առաջին անգամ տեղում հետաքննություն անցկացրեց կոտորածի վայրերի և զանգվածային գերեզմանոցների վերաբերյալ, որոնցից առաջինը բացվեց 1996 թ. հուլիսին: 1999 թ. նոյեմբերի 15-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը մի զեկույց ներկայացրեց Սրեբրենիցայի անվտանգության գոտու անկման վերաբերյալ, որում քննադատվում էին ՄԱԿ-ի կառույցների ձախողումները: Ռուանդայում տեղի ունեցած ցեղասպանության առնչությամբ ՄԱԿ-ի անգործությանը վերաբերող, նաև ինքնաքննադատական բնույթ ունեցող այդ զեկույցը պետք է նպաստեր ՄԱԿ-ի խաղաղարար առաքելությունների վերակազմակերպմանը:

2004 թ. հունիսին Սրպսկայի Հանրապետության ներկայացուցիչներն առաջին անգամ պաշտոնապես ընդունեցին բոսնիացի սերբերի անվտանգության ուժերի պատասխանատվությունը խնդրո առարկա կոտորածների հարցում: Միաժամանակ նրանք բացահայտեցին նոր զանգվածային գերեզմանոցներ {(149)}: 2004 թ. նոյեմբերին Սրպսկայի Հանրապետության կառավարությունն առաջին անգամ պաշտոնապես ներողություն խնդրեց զոհերի ժառանգներից:

2005 թ. հունիսի 2-ին դատախազը նախկին Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոսևիչի դատավարության ժամանակ ցույց տվեց մի տեսագրություն, որը պատկերում էր Սլոբոդան Մեդիչի ղեկավարման ներքո գտնվող «Կարիճ» հատուկ ստորաբա-

ժանման ներկայացուցիչների կողմից Տրնովոյում 1995 թ. հուլիսի 17-ին տեղի ունեցած՝ չորս պատանիների և երկու երիտասարդների գնդակահարությունը: Երբ անուհետև բազմաթիվ հեռուստահեռարձակողներ ցուցադրեցին այդ տեսագրությունը, Սերբիայում նույնպես կոտորածների վերաբերյալ աննախադեպ քննարկումներ սկսվեցին: Սերբիայի վարչապետ Վոիսլավ Կոշտունիցան տեղի ունեցածն անվանեց «քաղաքացիների հանդեպ իրականացված դաժան, անխնա և ամոթալի հանցագործություն» {(141)}:

Տեսաձայնագրության հեռարձակումից անմիջապես հետո ոստիկանությունը ձերբակալեց հանցագործներից մի քանիսին: 2007 թ. ապրիլին Սերբիայի դատարաններից մեկը նրանցից չորսին դատապարտեց երկարամյա բանտարկության, իսկ մեկն ազատ արձակվեց:

2005 թ. հոկտեմբերի սկզբին Սրպսկայի Հանրապետության կառավարության մի հատուկ աշխատանքային խումբ ՄԱԿ-ի պատժիչ դատարանին ներկայացրեց 19 500 մարդկանց մի ցուցակ, որոնք այս կամ այն կերպ ուղղակի առնչություն են ունեցել կոտորածների հետ {(157)}:

2010 թ. մարտի վերջին Սերբիայի խորհրդարանը ներողություն խնդրեց Սրեբրենիցայի կոտորածի համար, բայց իր ընդունած բանաձևում խուսափեց այն անվանել ցեղասպանություն: 2013 թ. ապրիլին ներողություն խնդրեց նաև Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը, որ նույնպես հրաժարվեց տեղի ունեցածը ցեղասպանություն կոչել: Սերբիայի վարչապետ (հետագայում նախագահ) Ալեքսանդր Վուչիչը, մասնակցելով Սրեբրենիցայում 2015 թ. հուլիսին տեղի ունեցող հիշատակի արարողությանը, կոտորածն անվանեց «հրեշավոր հանցագործություն», բայց նույնպես խուսափեց այն ցեղասպանություն որակելուց {(208)}:

Սրպսկայի Հանրապետությունում և Սերբիայում որոշ պետական գործիչներ նաև ուղղակիորեն են ժխտել ցեղասպանու-

թյունը: Նրանց թվին է պատկանում Միլորադ Դոդիկը (2010-2018 թթ. և 2022 թ.-ից Սրպսկայի Հանրապետության նախագահ), որը դեռ 2010 թ. ապրիլին՝ Սրպսկայի Հանրապետության նախագահ ընտրվելուց առաջ ժխտում էր ցեղասպանությունը և վիճարկում 8000 զոհերի թվաքանակը: 2015 թ., երբ լրանում էր կոտորածի 20-ամյակը, նա պահանջեց, որ Սրեբրենիցան հռչակվի նաև որպես «սերբերի ցեղասպանության» հիշատակի վայր: 2021 թ. նա վերահաստատեց իր այն պնդումը, որ Սրեբրենիցայում ցեղասպանությունը «առասպել» է, և նման բան տեղի չի ունեցել {(194)}: Ցեղասպանության ժխտումն, այնուհանդերձ, Բոսնիա-Հերցեգովինայում 2021 թ. հուլիսի 31-ից պատժելի է:

2015 թ. հուլիսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պատրաստվում էր ընդունել մի բանաձև, որով կոտորածը ցեղասպանություն էր բնորոշվում, նախաձեռնությունը տապալվեց Ռուսաստանի ներկայացրած վետոյի միջոցով {(238)}:

2024 թ. մայիսի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, չնայած բոսնիացի սերբերի և Սերբիայի համառ դիմադրությանը, ձայների ճնշող մեծամասնությամբ հուլիսի 11-ը հռչակեց Սրեբրենիցայի ցեղասպանության զոհերի հիշատակի միջազգային օր:

Խաղաղապահների դերակատարության հարցը

Խաղաղապահների դերակատարության հարցը հանգամանալից քննարկումների է ենթարկվել միջազգային հանրության շրջանում: Սրբրենիցայի իրադարձություններին վերաբերող ՄԱԿ-ի տեղեկագրում նշվել է, որ խաղաղապահների բոլոր դիտորդական կետերը և արգելափակոցային դիրքերն առանց դիմադրության հանձնվել են բոսնիացի սերբերի բանակին: Խաղաղապահներն առաջխաղացող զորամասերի դեմ չեն օգտագործել ո՛չ հրազենային կամ հակատանկային զենքեր և ո՛չ էլ զրահամեքենաներ:

Նիդերլանդներում մինչև այժմ քննարկվում է այն հարցը՝ արդյոք ՄԱԿ-ի զինվորներն այնտեղ գործունեության այլընտ-

բանքներ ունեի՞ն, թե՞ ոչ: Այդ քննարկումը հենվում է անցած ժամանակամիջոցում պաշտպանության գոտու անկման և խաղաղապահ զորամասի առնչությամբ տեղի ունեցած մի շարք հետաքննությունների արդյունքների վրա: Գնահատումները միմյանցից էապես տարբերվում են: Քննադատները կապույտ սաղավարտավորներին մեղադրում են այն բանում, որ նրանք մասամբ տեղյակ են եղել կոտորածներին և, չմիջամտելով, հանդուրժել են դրանք: Այդ համատեքստում խոսվում է նաև ռազմական հանցագործությանը աջակցելու մասին, ընդ որում քննադատները, հաստատելով նիդերլանդական գումարտակի անգործությունը, խոսում են նաև նիդերլանդական զինվորական և քաղաքական գործիչների կողմից դրա քողարկման նպատակաուղղված փորձերի մասին:

Հակառակ դրան՝ այլ դիրքորոշում ունեցողները պնդում են, որ տեղում գտնվող խաղաղապահները տեղյակ չեն եղել ոճրագործությունների մասին, քանի որ բոսնիացի սերբերը պարբերաբար խոչընդոտել են դիտարկումների կատարումը: Բացի այդ՝ ընդգծվում է, որ խաղաղապահները թողնվել են բախտի քմահաճույքին, թեև բազմիցս պահանջել են անկլավի և իրենց անձնական անվտանգության համար օդային պաշտպանություն իրականացնել: Ավելին, խաղաղապահները, ինչպես նրանք շեշտում են, նիդերլանդական և միջազգային մակարդակով ունենալով բոսնիակների պաշտպանության հանձնառությունը, երբևէ ապահովված չեն եղել դրա համար անհրաժեշտ միջոցներով, և նրանց առաջադրանքը եղել է անիրագործելի:

Իրադարձությունները և թերացումները բազմաթիվ դեպքերում արտացոլված են նաև լուսանկարներում ու տեսաժապավեններում: Դրանց շարքին է պատկանում մի լուսանկար, որը ներկայացնում է Ռադկո Մլադիչին և Թոմ Կարեմանսին հուլիսի 12-ի երեկոյան խնջույքում բաժակաճառի ժամանակ {(95) *392, 397*}: Դրանց թվին են պատկանում նաև Զագրեբում՝ Սրեբրենիցայից մեկնելուց անմիջապես հետո խաղաղապահներին տոնական

տրամադրության մեջ և պարի ժամանակ ցուցադրող տեսաերիզ-ները: Նիդերլանդների վարչապետ Վիմ Կոկի և նրա կառավարության հրաժարականը, որ տեղի ունեցավ 2002 թ. ապրիլի 16-ին՝ Պատերազմական փաստաթղթերի նիդերլանդական ինստիտուտի՝ Սրեբրենիցայի դեպքերին վերաբերող ընդգրկուն հետազոտական նյութի հրապարակումից մի քանի օր անց, մեկնաբանվեց որպես այդ դեպքերից յոթ տարի անց քաղաքական պատասխանատվություն ստանձնելու դրսևորում:

Նիդերլանդական կառավարությունը 2006 թ. դեկտեմբերի 4-ին ցուցադրական կերպով պարգևատրեց շուրջ 500 զինվորների, որոնք, ըստ Նիդերլանդների պաշտպանության նախարար Հենկ Կամպի, այն ժամանակ ունեցել են «արտակարգ ծանր առաջադրանք», մինչդեռ 1995 թ.-ից հետո տարիներ շարունակ անհիմն մեղադրանքների են ենթարկվել, որոնք հերքվել են պաշտոնական հետաքննությունների միջոցով: Այդ արարողությունն ուղեկցվեց վերապրողների, կոտորածի զոհերի հարազատների բողոքի ցույցերով, որոնք դա անվանեցին «Ցեղասպանության պարգևատրում»: Բոսնիա-Հերցեգովինան նույնպես դիվանագիտական խողովակներով բողոքեց դրա դեմ {(98)}:

Վերապրածների բողոքները

Կոտորածից փրկված շուրջ 8000 կանայք հիմնադրել են զոհերի իրավունքների պաշտպանության մի կազմակերպություն, որը հայտնի է «Սրեբրենիցայի մայրեր» անունով: Այդ կազմակերպությունը 2007 թ. հունիսի 4-ին Հաագայի շրջանային դատարանին հայց ներկայացրեց Նիդերլանդների և ՄԱԿ-ի դեմ: Ըստ հայցվորների՝ ՄԱԿ-ը բավականաչափ միջոցներ չի ձեռնարկել իր պաշտպանության գոտում գտնվող մարդկանց անվտանգության ապահովման համար: Դատարանը 2008 թ. հուլիսի 10-ին հրապարակած իր վճռում, սակայն, վկայակոչելով միջազգային իրավական մի շարք որոշումներ, ճանաչում էր ՄԱԿ-ի անձեռնմխե-

լիությունը՝ նշելով, որ առանձին պետությունների դատարանները չեն կարող զբաղվել ՄԱԿ-ի դեմ ուղղված հայցերով {(236)}:

Ինչ վերաբերում է նիդերլանդական պետության դեմ ուղղված հայցին, մարզային դատարանը դա նույնպես մերժեց այն հիմնավորումով, որ Նիդերլանդների դեմ չի կարող գործ հարուցվել նիդերլանդացի զինվորների հանցանքների կամ թերացումների պատճառով, քանի որ այդ զինվորները գտնվել են ՄԱԿ-ի ենթակայության ներքո: «Սրեբրենիցայի մայրերն» այդ վճիռը բողոքարկեցին և այնուհետև Նիդերլանդների դեմ հայց ներկայացրին Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ պնդելով, որ նիդերլանդական դատարանների կողմից ՄԱԿ-ին անձեռնմխելիություն վերագրելը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներին: Նրանց այս հայցը, սակայն, նույնպես մերժվեց:

2014 թ. հուլիսի 16-ին Հաագայի շրջանային դատարանը վճռեց, որ նիդերլանդական պետությունը քաղաքացիական իրավունքի հիմքով մեղսակից է Սրեբրենիցայում տեղի ունեցածին: Ըստ այդ վճռի՝ թեև Նիդերլանդները պատասխանատու չէ օդային պաշտպանության բացակայության և պաշտպանության գոտու անկման համար, սակայն ՄԱԿ-ի կայանում ապաստանած 300 զոհերի փոխադրումը չխոչընդոտելու պատճառով կրում է համապատասխանատվություն: Հաագայի վերաքննիչ դատարանը 2017 թ. հունիսի 17-ին հաստատեց 1995 թ. ցեղասպանությանը նիդերլանդական կառավարության մեղսակցությունը՝ վճռելով, որ վերջինս ունի 30 տոկոսանոց մեղսակցություն, քանի որ ոչինչ չի արել՝ վերոնշյալ անձանց վերապրելու՝ 30 տոկոսանոց շանսն իրացնելու համար {(242)}:

Ինչպես Սրեբրենիցայի մայրերը, այնպես էլ նիդերլանդական կառավարությունը բողոքարկեցին այդ վճիռը: 2019 թ. հուլիսի 19-ին Նիդերլանդների Գերագույն դատարանը հաստատեց, որ նիդերլանդական պետությունը մասնակի մեղսակցություն ունի և

համապատասխան փոխհատուցումներ պիտի վճարի, սակայն մեղքի բաժինը ավելի կրճատեց՝ հասցնելով 10 տոկոսի:

2010 թ. հուլիսին վերապրած թարգմանիչ Հասան Նուհանովիչը և սպանված էլեկտրիկ Ռիզո Մուստաֆիչի հարազատները կրկին հայց ներկայացրին Թոմ Կարեմանսի, նրա տեղակալ մայոր Ռոբ Ֆրանկենի և սպա Բերենդ Օստերվենի դեմ «ցեղասպանության և ռազմական հանցագործության» մեղադրանքով: Նշված երկու անձանց ընտանիքի անդամները, այդ թվում՝ Նուհանովիչի հայրը և Մուստաֆիչի եղբայրը բոսնիական պատերազմի ժամանակ աշխատանքի են նշանակվել խաղաղապահ զորամասում, և նիդերլանդացի հրամանատարները, ըստ հայցադիմումի, պատասխանատու են եղել իրենց կառույցի՝ տեղացի մուսուլման աշխատողներին սերբերին հանձնելու հարցում {(62)}:

Հաագայի մի վճռաբեկ դատարան 2011 թ. հուլիսի 5-ին վճռեց, որ Նիդերլանդները պատասխանատվություն է կրում վերոնշյալ երեք տղամարդկանց մահվան համար: Ըստ դատավորների՝ հրամանատարները պետք է գիտակցեին այն վտանգը, որին մատնվելու էին չորս տղամարդիկ ճամբարից դուրս բերվելու դեպքում: Նիդերլանդական կառավարությունը այդ վճիռը նույնպես բողոքարկեց Նիդերլանդների Գերագույն դատարանում այն հիմնավորմամբ, որ Բոսնիայում խաղաղապահների տեղակայման հարցում պատասխանատու է եղել միայն ՄԱԿ-ը: Գերագույն դատարանը 2013 թ. սեպտեմբերի 6-ին վերահաստատեց իր վերոնշյալ վճիռը և այդպիսով նիդերլանդական կառավարությանը պատասխանատու դարձրեց երեք տղամարդկանց սպանության համար: Դատավորներն, ընդսմին, վկայակոչեցին միջազգային իրավունքը, ըստ որի՝ ուղարկող պետությունը նույնպես համապատասխանատվություն է կրում իր զորամասի համար, նույնիսկ, եթե այն գործում է ՄԱԿ-ի մանդատի ներքո {(245)}:

Բոսնիայի՝ մարդու իրավունքների պալատը 2003 թ. վճիռ կայացրեց Սրպսկայի Հանրապետության դեմ ուղղված մի հայցի վե-

բաբերյալ, որում հարցը վերաբերում էր այն բանին՝ արդյոք այդ հանրապետության կառույցները վերապրածներին իրենց ընտանիքի անդամների ճակատագրի մասին իրազեկել են, թե ոչ: Նման իրազեկում չի կատարվել, ինչը, համաձայն վճռի, պետք է համարել նվաստացման և անմարդկայնության արգելքի ոտնահարում: Պալատը սերբական այդ ինքնահռչակ հանրապետության կողմից վնասների փոխհատուցման՝ վերապրողների անհատական պահանջները չէր կարող իրականացնել: Դրա փոխարեն, Սրպսկայի Հանրապետության՝ մարդու իրավունքների պալատը կառավարությանը պարտադրել է 2 միլիոն եվրոյի համարժեք միանվագ փոխհատուցում վճարել Պոտոկարիի հուշահամալիրի համար {(72) *114-120*}:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ցեղասպանագիտությունը ներկայումս աշխարհում ամենաարագ զարգացող գիտաճյուղերից է, և դա պայմանավորված է ոչ միայն մարդկության համար գլոբալ վտանգ ներկայացնող ցեղասպանություն հանցագործության հարաճուն դրսևորումներով, այլև դրան վերաբերող խնդիրների բազմազանությամբ ու հարափոփոխությամբ: Ըստ այդմ՝ միջազգային ցեղասպանագիտական շրջաններում շարունակ ավելի են ակտիվանում գիտական քննարկումներն ու բանավեճերը ցեղասպանությունների նորովի բնութագրման և դասակարգման, այդ հանցագործության արդյունավետ կանխարգելման և պատժման նպատակով միջազգային իրավունքի բարեփոխման ու հարակից այլ հարցերի շուրջ: Այդ համատեքստում շրջանառության մեջ են դրվում նաև զանգվածային սպանության որոշակի կատեգորիաների վերաբերող նոր եզրույթներ, ինչպես օրինակ՝ «Politicide» (պոլիտիցիդ, քաղաքական խմբի սպանություն), «Eliticide« (էլիտիցիդ, մտավորականության սպանություն), «Gendercide» (գենդերցիդ, որոշակի սեռային խմբի սպանություն), «Femicide» (ֆեմիցիդ, իգական սեռի անդամների սպանություն), «Linguicide» (լինգվիցիդ, լեզվի սպանություն), «Democide» (դեմոցիդ, խմբի սպանություն կառավարող վարչակարգի միջոցով), «Ethnocide» (էթնոցիդ, մշակութային ինքնության սպանություն կամ մշակութային ցեղասպանություն) և այլն:

Հայ ցեղասպանագիտությունը միջազգային չափանիշներով առավելագույն մրցունակություն հանդես բերելու, հայ և միջազգային ցեղասպանագիտությունը կամրջելու և արդյունավետ փոխներթափանցում ապահովելու համար պետք է ակտիվորեն ներգրավված լինի այդ քննարկումներում ու զարգացումներում: Ինքնին հասկանալի է, որ դա իր հերթին ոչ միայն կամրապնդի հայ ցեղասպանագիտության միջազգային հեղինակությունը, այլև

հնարավորություն կընձեռի չեզոքացնելու Հայոց ցեղասպանության հետ կապված հակագիտական շահարկումներն ու քաղաքական սպեկուլյացիաները՝ մեծապես թուլացնելով նաև թուրքադրբեջանական ժխտողականության դիրքերը միջազգային ասպարեզում:

Միջազգային ցեղասպանագիտական հարթակներում արդյունավետ կերպով ներգրավվելու հենքային նախադրյալը, բնականաբար, աշխարհում տեղի ունեցած մյուս ցեղասպանությունների վերաբերյալ բավականաչափ իրազեկվածությունն է: Սույն դասագիրքը, որում լուսաբանվում են խնդրո առարկա ցեղասպանությունների նախապատմությունը, ընթացքը և հետևանքները, կարող է իր ներդրումն ունենալ այդ հարցում: Ընդսմին անդրադարձ է կատարվում նաև տվյալ ցեղասպանություններին վերաբերող իրավական գործընթացներին, ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժման ուղղությամբ միջազգային իրավունքի անցած ճանապարհին, ունեցած ձեռքբերումներին և այդ ոլորտում դեռևս առկա բացերին ու թերություններին: Դասագիրքը, իր ուսուցողական-ուսումնական գործառույթից զատ, կարող է նպաստել Հայաստանում համեմատական ցեղասպանագիտության զարգացմանը, ուստի նաև ցեղասպանությունների տարատեսակ պատճառահետևանքային կապերի բացահայտմանը, դրանց ծրագրման, նախապատրաստման և իրականացման մեթոդաբանության ու գործիքակազմի ընդհանրությունների կամ առանձնահատկությունների գնահատմանը:

РЕЗЮМЕ

ИСТОРИЯ ГЕНОЦИДОВ
(УНИВЕРСИТЕТСКИЙ УЧЕБНИК)

Ашот Айруни

В учебнике излагается история массовых убийств и других преступлений, которые произошли по всему миру и были расследованы международными судами, другими международными организациями и государствами (их правопреемниками), совершившими геноцид. В частности, это касается геноцида армян в Османской империи, геноцида гереро и нама, Холокоста, геноцидов тутси в Руанде и боснийского населения региона Сребреницы. В контексте вопросов, рассмотренных во введении, также рассматриваются геноцид армян Арцаха и массовые преступления, совершенные в Дарфуре. Конечно, в рамках данного учебника невозможно подробно осветить все многообразные вопросы, связанные с геноцидами. Однако учебник обеспечивает всестороннее понимание рассматриваемых геноцидов. Соответственно, наряду с образовательной и исследовательской функциями, он может также способствовать развитию сравнительных исследований геноцида.

Современная мировая история доказывает, что такое преступление, как геноцид, продолжает оставаться серьезной угрозой для человечества. В геноцидологии часто встречается точка зрения, что отрицание любого геноцида есть не что иное, как его продолжение. Эта точка зрения верна в том смысле, что наследники геноцидного режима и общества, сознательно отрицающие геноцид, фактически выступают сторонниками и потенциальными исполнителями политики геноцида. Соответственно, борьба с отрицанием геноцида в государстве (его правопреемнике), совершившим его, имеет исключительное значение. Это

продиктовано не только приоритетами, принятыми международным правом в области предупреждения и наказания геноцида, но и является важной предпосылкой обеспечения национальной безопасности народов, подвергшихся геноциду. Отрицание перестает действовать или представлять угрозу для тех народов, геноцид которых был признан государствами (или их преемниками), совершившими данное преступление. Например, эта угроза больше не существует для евреев, гереро и нама, тутси Руанды или боснийских сербов. Однако отрицание Турецкой Республикой, преемницей Османского государства, геноцида армян в Османской империи, геноцида армян Арцаха, осуществленного азербайджанским режимом, и систематическая армянофобская пропаганда, проводимая турецкими и азербайджанскими официальными структурами на протяжении десятилетий, показывают, что вышеупомянутая угроза продолжает нависать над армянским народом.

Процесс международного признания и осуждения Геноцида армян, за который изначально боролась армянская диаспора и который также поддерживался властями Третьей Республики Армения, является одним из важнейших средств нейтрализации этой угрозы. В настоящее время в турецкой и курдской диаспорах есть много турок и курдов, которые узнали о Геноциде армян только после того, как покинули Турцию, и с тех пор последовательно борются за то, чтобы Турция признала геноцид. Их пример доказывает, что общественная осведомленность как в Турции, так и в любом государстве (или его преемнике), совершившим геноцид, является важнейшей предпосылкой для нейтрализации отрицания и, в конечном счете, для признания факта геноцида, совершенного данным режимом. Поэтому следует использовать все средства для повышения осведомленности широких слоев турецкого общества.

Геноцид армян, который полностью доказан и неоспорим (международные круги по исследованию геноцида пришли к

консенусу в этом вопросе), был осуществлен тремя последовательно сменяющими друг друга режимами Османской империи с 1894 по 1923 год. Он происходил в четыре этапа: первый этап включает периодические армянские погромы, организованные и осуществленные режимом султана Абдула Гамида II с 1894 по 1896 год, которые в армянской историографии называются «Покр егерн» («Малый геноцид»). Второй этап включает массовую резню армян в Киликии в апреле 1909 года, за которую ответственность несет как режим Абдула Гамида, так и режим младотурок. Третий этап, который является кульминацией геноцида и который армяне называют «Мец егерн» (Великий геноцид), включает массовую депортацию и резню армянского населения Османской империи режимом младотурок во время Первой мировой войны, а также армянскую резню 1918 года, совершенные турецкими военными подразделениями или при их поддержке во время вторжения на территорию Восточной Армении. На четвертом этапе геноцида кемалисты осуществили погромы и депортацию остатков армянского народа в Турции.

Взаимосвязь геноцидных действий, совершенных на этих четырех этапах, неоспорима. Более того, идеологическая и кадровая преемственность младотурецкого и кемалистского режимов также полностью установлена. Что касается термина «Холокост», то в настоящее время он находится в международном употреблении, характеризуя геноцид евреев и цыган во время Второй мировой войны. Примечательно, что этот термин, как описание массового уничтожения какой-либо группы, впервые появился в англоязычной литературе в начале XX века, имея в виду резню армян в 1890-х годах и в Киликии в 1909 году. В настоящее время в международных общественных кругах широко распространено мнение об «исключительности» Холокоста, закрепленное и в официальных документах. Даже в резолюции, принятой германским Бундестагом 2 июня 2016 года, в которой последний признал геноцид армян и других христиан в Османской империи, гово-

рилось: «Мы немедленно признаем исключительность Холокоста, за который Германия несет вину и ответственность» {(202)}. Эта точка зрения, которая базируется на том, что резня жертв Холокоста была «индустрированна», не имеет никаких оправданий. Более того, она имеет крайне негативные последствия, поскольку таким образом релятивизирует преступление «геноцида», которое четко определено международным правом.

Каждый геноцидный режим использует имеющиеся у него научные и технические инструменты в случае геноцида, и нацистский режим Германии, естественно, имел более развитые инструменты, чем младотурки. Это вовсе не придает Холокосту «исключительности». Напротив, если следовать по этому пути релятивизации геноцидов, то можно обосновать и зафиксировать, что, например, Геноцид армян был «самым геноцидным» геноцидом, поскольку физические и психические пытки жертв, осуществленные в этот период, несопоставимы с тем, что происходило с жертвами Холокоста, и в этом отношении с Геноцидом армян можно сравнить только геноцид тутси в Руанде. Армянские и международные геноцидоведы должны считать своей задачей разоблачение ложности исключительности любого геноцида, которая не только не имеет под собой реальной основы, но и косвенно умаляет память жертв других геноцидов.

В учебнике использованы ценные и неоспоримые подлинные документальные источники, некоторые из которых впервые вводятся в научный оборот. Их подлинность также была обоснована в ходе подготовки учебника путем сравнительного анализа сведений, предоставленных различными очевидцами и авторами по определенным событиям. Например, многочисленные факты (даже второстепенные), представленные в книге Арама Антоняна, пережившего геноцид, подтверждены различными зарубежными авторами. Что касается многочисленных приказов Талаата и других палачей армянского народа, опубликованных в его книге, то их подлинность также не вызывает сомнений. Тща-

тельно изучив вопрос, подлинность этих документов подтвердил также турецкий историк и эксперт по геноциду профессор Танер Акчам.

Учитывая современные тенденции турецкого отрицания, в главе о Геноциде армян в первую очередь использовались зарубежные источники и содержащиеся в них неоспоримые доказательства.

В учебнике также разъясняются достижения международного права на сегодняшний день в области предупреждения и наказания геноцидов, а также вопросы, которые все еще остаются открытыми и решение которых имеет важное и неотложное значение.

SUMMARY

HISTORY OF GENOCIDES (UNIVERSITY TEXTBOOK)

Ashot Hayruni

The textbook presents the mass killings and other atrocities that have occurred worldwide and have been defined as genocide by international tribunals, other international bodies, or the perpetrator state (or its legal successor). It specifically covers the Armenian Genocide; the genocide of the Herero and Nama peoples; the Holocaust; the Rwandan Tutsi Genocide; and the genocide of the Bosniak population in the Srebrenica region. In the introduction, it also addresses the genocide of the Artsakh Armenians and the mass crimes committed in Darfur. Of course, given the scope of this textbook, it is impossible to address in detail every aspect related to genocides. Nonetheless, the book provides a comprehensive understanding of the genocides under consideration. Accordingly, alongside its instructional and educational function, it can also contribute to the development of comparative genocide studies.

Modern world history demonstrates that the crime of genocide continues to grow as a threat against humanity. In genocide studies, one often encounters the view that denying a genocide is nothing other than its continuation. This view is true in the sense that the heirs of a genocidal regime and society, by consciously denying the genocide, actually act as supporters of genocide policy and as potential future perpetrators. Accordingly, combating denial by the genocidal state or its legal successor is of immeasurable importance. This is demanded not only by the priorities adopted in international law regarding genocide prevention and punishment but also as a fundamental prerequisite for ensuring the national security of the peoples who have suffered genocide. Denial ceases to operate or pose a threat for those

peoples whose genocide has been recognized by the genocidal states or their legal successors. For example, that danger no longer exists for the Jews, the Herero and Nama peoples, the Tutsi of Rwanda, or the Bosniaks of Srebrenica. Yet the denialism of the Republic of Turkey, legal successor to the Ottoman State, the genocide of the Artsakh Armenians perpetrated by the Azerbaijani regime, and the decades-long, systematically organized anti-Armenian propaganda by Turkish and Azerbaijani official bodies all demonstrate that this threat continues to hang over the Armenian people.

The process of international recognition and condemnation of the Armenian Genocide, which was initially undertaken by the Armenian diaspora and later supported by the authorities of the Third Republic of Armenia, is one of the most important means of neutralizing this threat. There are currently many Turks in the Turkish diaspora and many Kurds in the Kurdish diaspora who only learned of the Armenian Genocide after leaving Turkey and have since been actively campaigning for Turkey's recognition of the crime. Their example shows that raising awareness within the society of any genocidal state, or its legal successor, is a crucial precondition for neutralizing denialism and, ultimately, for securing that administration's formal acknowledgment of genocide. Therefore, every possible means should be employed to provide broad segments of Turkish society with accurate information.

The Armenian Genocide, which is fully documented and beyond dispute (a consensus also shared by national genocide-studies circles), was carried out by three successive regimes of the Ottoman State between 1894 and 1923 and unfolded in four phases. The first phase comprised the periodic massacres organized and perpetrated by the Hamidian regime in 1894–1896, known in Armenian as the "Pokr Yeghern" ("Small Massacre").

The second phase encompassed the mass killings of Armenians in Cilicia in April 1909, for which both the Hamidian and the Young Turk regimes bear responsibility. The third phase, which represents

the apex of the genocide and is called the “Medz Yeghern” (“Great Massacre”) by Armenians, involved the mass deportation and slaughter of the Ottoman Armenian population by the Young Turk regime during the First World War, as well as the 1918 massacres carried out by Turkish military units—either directly or with their support—during their incursions. In the fourth phase, the Kemalist regime carried out the extermination and expulsions of the remaining Armenian survivors.

The interconnectedness of the genocidal actions across these four phases is indisputable, and the ideological and personnel continuity between the Young Turk and Kemalist regimes has also been conclusively established. Regarding the term “Holocaust,” it is now used internationally to denote the genocide of Jews and of the Roma carried out during the Second World War. Notably, this term, as a designation for the mass extermination of a group, first appeared in English-language literature in the early twentieth century, referring to the periodic massacres of Armenians in the 1890s and the mass slaughter of Cilician Armenians in 1909. At present, the view of the Holocaust’s “exceptionality” is widespread in international public discourse and is enshrined in official documents. Even in the resolution adopted by the German Bundestag on June 2, 2016, by which it recognized the genocide of Armenians and other Christians in the Ottoman Empire, it is stated, “We furthermore recognize the uniqueness of the Holocaust, for which Germany bears guilt and responsibility” {(202)}. That view, that the slaughter of Holocaust victims was “industrialized,” has no foundation. What’s more, it has profoundly negative consequences because it relativizes the crime of genocide, which is clearly defined under international law.

Every genocidal regime employs whatever scientific and technical means are at its disposal, and Germany’s Nazi regime naturally had more advanced tools than the Young Turks. That in no way makes the Holocaust “exceptional.” On the contrary, if we follow that logic of comparing genocides, one could argue, and document,

that, for example, the Armenian Genocide was the “most genocidal” of genocides, since the physical and psychological tortures inflicted on its victims are incomparable to those suffered by Holocaust victims, and in that respect the Armenian Genocide can only be compared to the Rwandan Tutsi Genocide. Armenian and international genocide scholars should consider it their responsibility to expose the falsehood of any genocide’s claimed uniqueness, which not only has no real basis but also indirectly diminishes the memory of victims of other genocides.

The textbook draws on valuable and irrefutable primary sources and literature, some of which are being introduced into scholarly circulation for the first time. Their authenticity was established during the preparation of this book through the comparative analysis of accounts provided by various eyewitnesses and authors concerning specific events. For example, numerous details, some even of marginal significance, cited in the memoir of genocide survivor Aram Antonyan are corroborated by a variety of foreign authors. As for the many orders attributed in his work to Talaat Pasha and other executioners of the Armenian people, their authenticity is beyond doubt. A thorough examination of the matter has also led Turkish historian and genocide scholar Prof. Taner Akçam to confirm the genuineness of these documents.

Given contemporary trends in Turkish denialism, the narrative concerning the Armenian Genocide has, as a priority, employed foreign primary sources and the testimonies contained therein.

The textbook also clarifies the achievements to date in international law regarding the prevention and punishment of genocides, as well as the unresolved issues whose resolution is of significant and urgent importance.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթերի ժողովածուներ

Հայերեն

1) Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան), «Հայաստան» հրատ., Երևան, 1991:

2) Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Հ. Փափազյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988:

3) Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան, Երուսաղեմի հայոց պատրիարքարան, հատոր Ա., արխիվի թվայնացումն ու նախնական ցուցակագրումն իրականացրել են Լուսինե Սահակյանը և Անի Սարգսյանը, աշխատասիրեցին Լուսինե Սահակյանը, Անի Ոսկանյանը, Անի Սարգսյանը, առաջաբանը՝ Լուսինե Սահակյանի, «Լուսակն» հրատ., Երևան, 2024:

4) Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու / Հեղ. և գլխ. խմբագիր՝ Ա. Վիրաբյան, Հատոր 2, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2012:

5) Ճակատագրական պայմանագրեր, ժողովածուն կազմեց Հ. Գ. Ազատյանը, «Ապագա» հրատ., Երևան, 1998:

Օտարալեզու

6) Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Tempelverlag, Potsdam 1919.

7) Die Armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei (1913-1919). Dokumente aus dem politischen Archiv des

deutschen Auswärtigen Amts, Zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004.

8) Gust W. (Hg.), Der Völkermord an den Armeniern 1915/16, Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Klampen Verlag, Springe 2005.

9) Österreich-Ungarn und Armenien 1912-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Artem Ohandjanian, Jerewan 2005.

Ուսումնասիրություններ, հուշեր, մամլո հրապարակումներ

Հայերեն

10) Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. հայկական վերջին կոտորածները եւ Թալէաղ փաշա, Պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ Բազմաթիւ Պատկերներով, տպարան «Պահակ»-ի, Պօսքընն, 1921, լուսապատճենային տպագրություն, «Արևիկ» հրատ., Երևան, 1990:

11) Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Էդիթ Պրինտ, Երևան, 2011:

12) Աստոյան Ա., Հայերի ունեզրկումը Թուրքիայում 1918-1923 թթ., *Բանբեր Մատենադարանի*, թիվ 19, 2012, էջ 393-418:

13) Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2015:

14) Աքչամ Թ., Սպանության հրամաններ. Թալեաթ փաշայի հեռագրերն ու Հայոց ցեղասպանությունը, «Նյու Մեգ» հրատ., Երևան, 2019:

15) Բաղալյան Գ., Սուլթանական կառավարության վարչաժողովրդագրական քաղաքականությունը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք առաջին, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, էջ 448-456:

16) Բաղալյան Գ., Արևմտահայության 1890-ական թթ. կոտորածների ժողովրդագրական և տնտեսական հետևանքները, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք առաջին, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, էջ 539-544:

17) Գասպարյան Ս./Պարոնյան Շ./Չուբարյան Ա./Մուրադյան Գ., Ցեղասպանության կոնվենցիայի Ռաֆայել Լեմկինի նախագիծը և 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան. դիսկուրսի համեմատական քննություն (անգլերեն լեզվով՝ որոշ հայերեն տեքստերի համակցությամբ), ԵՊՀ հրատ., Երևան, 2016:

18) Գզոյան Է./Գալուստյան Ռ./Խաչատրյան Շ./Միրզոյան Է., Հայ երեխաների թուրքացումը Հայոց ցեղասպանության տարիներին, կոլեկտիվ մենագրություն, ՀՑԹԻ, Երևան, 2022:

19) Դաղբյան Վ., Հայոց ցեղասպանությունը ազգային և միջազգային իրավունքի երկակի հիմնախնդիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2012:

20) Զաւեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Մտավորական սպասարկութեանց գրասենեակ, Գահիրէ, 1947:

21) Թաքոյան Ռ., Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին, ՀՑԹԻ, Երևան, 2015:

22) Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, տպագրություն՝ Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1922:

23) Թոփակյան Մ., Ֆրանսիայի Հանրապետության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցում, ԵՊՀ «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», Հումանիտար և հասարակական գիտություններ, 1.3 (33), ԵՊՀ հրատ., Երևան, 2020, էջ 377-392:

24) Լեփսիուս Յ., Հայաստանը և Եվրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային, ԵՊՀ հրատ., Երևան, 2022:

25) Լուխտերհանդտ Օ., Արցախի անկումը. պատմական ողբերգություն և ահազանգ Հայաստանի Հանրապետության հա-

մար, *ՎԷՄ* համահայկական հանդես, թիվ 4(84), հոկտեմբեր-դեկտեմբեր 2023, էջ 8-76:

26) Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Հայկական ուսումնասիրությունների Անի հիմնադրամ, Երևան, 2018:

27) Կարապետյան Մ., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին. ուսումնական ձեռնարկ բուհերի համար, «Զանգակ» հրատ., Երևան, 2007:

28) Կյունցլեր Յ., Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918), ՀՑԹԻ, Երևան, 2011:

29) Կոստանդյան Է., Զանգվածային կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը Կիլիկիայում 1909 թ., Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 125-134:

30) Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Նաիրի հրատ., Երևան, 2002:

31) Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, տպարան Համազգային, Պէյրութ, 1968:

32) Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, Երևան, 1995:

33) Կիրակոսյան Ա., 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք առաջին, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, էջ 524-525:

34) Կոստանդյան Է., Զեյթունի 1895-1896 թվականների ապստամբությունը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք առաջին, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, էջ 549-557:

35) Հայկական հարց հանրագիտարան, խմբագրական հանձնաժողով՝ Կոստանդին Խուդավերդյան (պատասխանատու խմբագիր), Զավադ Թորոսյան, Արման Կիրակոսյան, Ամալյա

Պետրոսյան, Ռուբեն Սահակյան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1996:

36) Ղազարեան, Հ. Գ., Ցեղասպան թուրքը, տպարան Համազգային, Պէյրութ, 1968:

37) Ղամբարյան Ա., Հայկական հարցի վերաբացումը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 125-134:

38) Ղամբարյան Ա., Բարեփոխումների նախագծերը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 137-143:

39) Մանուկյան Ս. Ա./Պողոսյան Ն., Հերերոների ցեղասպանություն. պատմություն և արդիականություն, *Ցեղասպանագիտական հանդես*, 2(12), Երևան, 2024, էջ 82-126:

40) Մաթոսյան Տ., Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ, ՀՀ ԳԱԱ, ՀՑԹԻ, Երևան, 2005:

41) Մարտոյան Թ., Ցեղասպանության քաղաքականության շարունակությունը Զմյուռնիայում, ԵՊՀ հրատ., Երևան, 2024:

42) Մարության Հ. Տ. «Հիշում եմ և պահանջում» կարգախոսը և Հայոց ցեղասպանության հիշողության փոխանցման մարտահրավերները 21-րդ դարում, *Ցեղասպանագիտական հանդես,* 9 (2), 2021, էջ 9-54:

43) Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, «Տիր» հրատ., Երևան, 2014:

44) Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2015:

45) Մելքոնյան Ա./ Պողոսյան Գ./, Աղասյան Ա./Մարուքյան Ա./Քերթմենջյան Դ./Մելիք-Ադամյան Ա./Վարդանյան Վ./Բաղալյան Գ./Հովհաննիսյան Ա., Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթո-

դաբանական հիմքերը, կոլեկտիվ մենագրություն, «Տիր» հրատ, Երևան, 2019:

46) Մելքոնյան Ա., Հայոց պատմություն (դասախոսությունների ձեռնարկ), «Հայագիտակ» հրատ., Երևան, 1998:

47) Մելքոնյան Ռ./Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., Երևան, 2015:

48) Մելքոնյան Ռ., Երիտթուրքեր-քեմալականներ. գաղափարական և կաղրային շարունակականություն, *Արևելագիտության հարցեր*, 2018, XIV, էջ 152-165:

49) Նիպագե Մ., Խոսք՝ ուղղված գերմանացի ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչներին. գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները Թուրքիայից, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:

50) Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ. հտր., տպ. Սեւան, Բեյրութ, 1976:

51) Պողոսյան Ն., Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում, ՀՑԹԻ, Երևան, 2020:

52) Սահակյան Ռ., Հայոց մեծ եղեռնը, հայրենազրկում, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 478-493:

53) Սահակյան Ռ., Հայերի ինքնապաշտպանական մարտերը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 493-513:

54) Սարգսյան Ս., Վանի 1896 թ. հերոսական ինքնապաշտպանությունը, Հայոց պատմություն (ակադեմիական բազմահատորյակ), հատոր III, գիրք առաջին, «Զանգակ» հրատ., Երևան, 2010, էջ 557-562:

55) Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրության ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), «Լուսակն» հրատ., Երևան, 2009:

56) Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը», *Պատմա-բանասիրական հանդես*, համար 2, (2007), էջ 72-81:

57) Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), ԳԱԱ հրատ., Երևան, 2011:

58) Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, երկրորդ համալրված հրատարակություն, «Գիտություն» հրատ., Երևան, 2011:

59) Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:

Օտարալեզու

60) Absolon R., Die Wehrmacht im Dritten Reich, Bd. 1, 30 Januar 1933 bis 2. August 1934, Harald Boldt Verlag, Boppard am Rhein 1969.

61) Alan B., Hitler. Eine Studie über Tyrannei, Droste Verlag, Düsseldorf 1967.

62) Banning C., Aangifte genocide tegen Karremans. In: *NRC Handelsblad*. 6. Juli 2010.

63) *Барсегов Ю. Г.,* Геноцид армян – преступление против человечества: О правомерности термина и юридической квалификации, Айастан, Ереван, 1990.

64) Binder G., Epoche der Entscheidungen. Deutsche Geschichte des 20. Jahrhunderts mit Dokumenten in Text und Bild, Seewald Verlag, Stuttgart 1960.

65) Bayerische Landeszentrale für politische Bildungsarbeit (Hrsg.), Der Nationalsozialismus, Band 1, Machtergreifung und Machtsicherung (1933-1935), mit Beiträgen von Reimund Baumgärtner, Johannes Hampel, Herbert Immenkötter, Carsten Nicolaisen, Ambros Schor, Hans Thieme, Eugenie Trützschler von Falkenstein, 3. Auflage, Süddeutscher Verlag, München 1994.

66) Bayerische Landeszentrale für politische Bildungsarbeit (Hrsg.), Der Nationalsozialismus, Band 2, Friedenspropaganda und Kriegsvorbereitung (1935-39), mit Beiträgen von Elisabeth Fix, Johannes Hampel, Herbert Immenkötter, Carsten Nicolaisen, Ambros Schor, Hans Thieme, Eugenie Trützschler von Falkenstein, 2. Auflage, Süddeutscher Verlag, München 1993.

67) Bayerische Landeszentrale für politische Bildungsarbeit (Hrsg.), Der Nationalsozialismus, Band 3, Das bittere Ende (1939-1945), mit Beiträgen von Wilhelm Bernert, Birgit Fix, Elisabeth Fix, Johannes Hampel, Herbert Immenkötter, Carsten Nicolaisen, Gisela Riescher, Ralf Schabel, Ambros Schor, Hans Thieme, 1. Auflage, Süddeutscher Verlag, München 1993.

68) Beglarian M., Briefe aus Warna, *Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes*, Februar 1898, S. 23-24.

69) Bein A., Der Moderne Antisemitismus und seine Bedeutung für die Judenfrage. In: Vierteljahreshefte der für Zeitgeschichte, Jg., 6, 1958, S. 340-359.

70) Benz W., The Holocaust: A German Historian Examines the Genocide, Columbia University Press, 2000.

71) Benz W., Die Protokolle der Weisen von Zion. Die Legende von der jüdischen Weltverschwörung, C. H. Beck Verlag, München 2007.

72) Birkenkötter H., Wessen Verantwortung, welches Gericht? 20 Jahre nach Srebrenica ist die gerichtliche Aufarbeitung noch lange nicht abgeschlossen. In: Vereinte Nationen: German Review on the United Nations. Band 63 (2015), Nr. 3, Srebrenica und die Folgen, S. 114–120.

73) Bohnert M., Zum Umgang mit belasteter Vergangenheit im postgenozidalen Ruanda. Roderer Verlag, Regensburg 2008.

74) Brandstetter A.-M., Die Rhetorik von Reinheit, Gewalt und Gemeinschaft: Bürgerkrieg und Genozid in Rwanda. In: Sociologus, Zeitschrift für empirische Ethnosoziologie und Ethnopsychologie.

Journal for Empirical Social Anthropology. Jg. 51, Heft 1/2, Duncker & Humblot Verlag, Berlin 2001, S. 148–184.

75) Brandstetter A.-M., Erinnern und Trauern. Über Genozidgedenkstätten in Ruanda. In: Winfried Speitkamp (Hrsg.): Kommunikationsräume - Erinnerungsräume. Beiträge zur transkulturellen Begegnung in Afrika. Marin Meidenbauer Verlagsbuchhandlung, München 2005, S. 291–324.

76) Bundeszentrale für politische Bildung/bpb (Hrsg.), Informationen zur politischen Bildung, 261, Weimarer Republik, Manuskript und Mitarbeit: Elke Diehl, Jürgen Faulenbach, Manfred Funke, Christine Hesse, Jutta Klaeren, Reinhard Sturm, Heinrich August Winkler, überarbeitete Neuauflage, Franzis' print & Media, München 2003.

77) Bundeszentrale für politische Bildung/bpb (Hrsg.), Informationen zur politischen Bildung, 251, Nationalsozialismus I, Von den Anfängen bis zur Festigung der Macht, Manuskript und Mitarbeit: Elke Diehl, Jürgen Faulenbach, Manfred Funke, Hermann Graml, Anne Grote, Helena Sabbagh, Hans-Ulrich Thamer, überarbeitete Neuauflage, Franzis' print & Media, München 2003.

78) Bundeszentrale für politische Bildung/bpb (Hrsg.), Informationen zur politischen Bildung, 266, Nationalsozialismus II, Führerstaat und Vernichtungskrieg, Manuskript und Mitarbeit: Wolfgang Benz, Elke Diehl, Jürgen Faulenbach, Hermann Graml, Christine Hesse, Astrid Irrgang, Hans-Joachim Kraschewski, Hans-Ulrich Thamer, Neudruck, Franzis' print & Media, München 2004.

79) Bundeszentrale für politische Bildung/bpb (Hrsg.), Informationen zur politischen Bildung, 243, Deutscher Widerstand 1933-1945, Manuskript und Mitarbeit: Verena Artz, Wolfgang Benz, Wolfgang Böge, Jürgen Faulenbach, Manfred Funke, Carola Schüller, Neudruck, Franzis' print & Media, München 2004.

80) Clark C., Preußen. Aufstieg und Niedergang. 1600–1947. Deutsche Verlags-Anstalt, München 2007.

81) Dadrian V. N., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Berghahn Books, Providence 1995:

82) Dallaire R., Handschlag mit dem Teufel. Die Mitschuld der Weltgemeinschaft am Völkermord in Ruanda. 2. Auflage. Zweitausendeins Verlag, Frankfurt am Main 2007.

83) Dallmann W. K. /Hofmann T., Das geopolitische Schicksal Armeniens, Vergangenheit und Gegenwart, BoD ● Books on demand Gmbh Verlag, Hamburg 2024.

84) Das Schicksal von 5 Millionen türkischen Funt. In: *Der Orient,* Jahrgang 1925, Nr. 7, S. 68-70.

85) Deutsch-Armenische Gesellschaft (Hg.), Armeniertum – Ariertum, Verlag der Deutsch-Armenischen Gesellschaft, Potsdam 1934.

86) Deutsche Kolonialgeschichte: Bundestagspräsident Lammert nennt Massaker an Herero Völkermord. In: *Die Zeit*, 8. Juli 2015.

87) Die Armenische Hundertmillionen-Bankguthaben und England. In: *Der Orient*, Jahrgang 1927, September/Oktober, S. 113, 132.

88) Domarus M., Reden und Proklamationen 1932-1945, 1. Bd., Süddeutscher Verlag, Würzburg 1962.

89) Drechsler H., Aufstände in Südwestafrika. Der Kampf der Herero und Nama 1904 bis 1907 gegen die deutsche Kolonialherrschaft, Dietz Verlag, Berlin 1984.

90) Eicker S., Der Deutsch-Herero-Krieg und das Völkerrecht: die völkerrechtliche Haftung der Bundesrepublik Deutschland für das Vorgehen des Deutschen Reiches gegen die Herero in Deutsch-Südwestafrika im Jahre 1904 und ihre Durchsetzung vor einem nationalen Gericht, Lang Verlag, Frankfurt am Main 2009.

91) Elias R., Die Hoffnung erhielt mich am Leben. Mein Weg von Theresienstadt und Auschwitz nach Israel, R. Piper Verlag, München 1988.

92) Erichsen C./Olusoga D., The Kaiser's Holocaust: Germany's Forgotten Genocide and the Colonial Roots of Nazism, Faber & Faber Verlag, London 2010.

93) Estorff L. v., Wanderungen und Kämpfe in Südwestafrika, Ostafrika und Südafrika 1894-1910, Hrsg.: Christoph-Friedrich Kutscher, Windhoek 1968.

94) Eric Stover E./Peress G., Die Gräber – Srebrenica und Vukovar. Scalo Verlag, Zürich 1998.

95) Fink M., Srebrenica. Chronologie eines Völkermords oder was geschah mit Mirnes Osmanović, Hamburger Edition Verlag, Hamburg 2015.

96) Feigel U., Das evangelische Deutschland und Armenien. Die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontrext der deutsch-türkischen Beziehungen, Vandenhoeck & Ruprecht Verlag, Göttingen 1989.

97) Ferriman, Z. D., The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, Armenian Genocide Museum-Institute, Yerevan 2009.

98) Fetscher C., Ehre, wem keine gebührt? Den Haag will den Ruf der Soldaten von Srebrenica wiederherstellen – und löst Proteste in Bosnien aus. In: *Der Tagesspiegel*. 6. Dezember 2006.

99) Forges A. D., Kein Zeuge darf überleben: Der Genozid in Ruanda, 1. Auflage. Hamburger Edition, Hamburg 2002.

100) Gerlach H. v., Die große Zeit der Lüge, Verlag d. Weltbühne, Chralottenburg 1926.

101) Gewald J. B., Herero heroes, a socio-political history of the Herero of Namibia, 1890–1923. Currey, Oxford 1999.

102) Glöckner O./Knocke R. (Hrsg.), Das Zeitalter der Genozide. Ursprünge, Formen und Folgen politischer Gewalt im 20. Jahrhundert, Duncker & Humblot Verlag, Berlin 2017.

103) Gutachten von Dr. Johannes Lepsius. In: *Der Orient*, Jahrgang 1921, Nr. 7, S. 88-95.

104) Gzoyan E. G., "Forcibly Transferred and Assimilated: Experiences of Armenian Children during the Armenian Genocide". In: Childhood during War and Genocide: Agency, Survival, and Representation, ed. by Joanna Beata Michlic, Yuliya von Saal, and Anna Ullrich, European Holocaust Studies 5, Wallstein Verlag, Göttingen 2024), S. 31-51.

105) Hayruni A., Armenien in der deutschen Außenpolitik im Jahr 1918, Verlag der SUJ, Jerewan 2017.

106) Hayruni A., Im Einsatz für das bedrohte Volk der Armenier. Johannes Lepsius und seine Mission, BRILL / Ferdinand Schöningh, Paderborn 2020.

107) Hankel G., Über den schwierigen Versuch der Vergangenheitsaufarbeitung in Ruanda. In: Jörg Calließ (Hrsg.): Zehn Jahre danach: Völkermord in Ruanda, (Dokumentation einer Tagung der Evangelischen Akademie Loccum vom 5. bis 7. März 2004), Evang. Akad. Loccum, Rehburg-Loccum 2005, S. 105-111.

108) Harald F./Reimer U., Alltag der Entrechteten: Wie die Nazis mit ihren Gegnern umgingen, Bd. 2, Rowohlt Verlag, Reinbeck 1980.

109) Harding L. (Hrsg.), Ruanda – der Weg zum Völkermord. Vorgeschichte – Verlauf – Deutung, Studien zur afrikanischen Geschichte, Band 20, Lit-Verlag, Hamburg 1998.

110) Häussler M., Der Genozid an den Herero. Krieg, Emotion und extreme Gewalt in Deutsch-Südwestafrika, Velbrück Verlag, Weilerswist 2018.

111) Heeger C., Die Erfindung der Ethnien in der Kolonialzeit: „Am Anfang stand das Wort“. In: Leonhard Harding (Hrsg.): Ruanda – Der Weg zum Völkermord. Vorgeschichte - Verlauf - Deutung (Studien zur afrikanischen Geschichte, Band 20), Lit-Verlag, Hamburg 1998, S. 23-35.

112) Hitler A., Mein Kampf, zwei Bände in einem Band, 25. Auflage, München 1933.

113) Honig J. W./Both N., Srebrenica, der größte Massenmord in Europa nach dem Zweiten Weltkrieg, Lichtenberg Verlag, München 1997.

114) Hosfeld R., Tod in der Wüste. Der Völkermord an den Armeniern, C. H. Beck Verlag, München 2015.

115) Hovhannisian R., Denial of the Armenian Genocide with some Comparisons to Holocaust Denial, Los Angeles 1996.

116) Johnson D., Kanada ist kein Zufluchtsort für Hetzer mehr. In: *Die Tageszeitung*, 25. Januar 2021.

117) K., Endlich! In: *Der Christliche Orient*, Jahrgang 1909, September-Nummer, S. 135-137.

118) Kévorkian R., The Armenian Genocide: A Complete History, I.B. Tauris & Co Ltd, London 2011.

119) Kofler-Bettschart B., „Ich habe getötet, aber ein Mörder bin ich nicht“. Der Völkermord an den Armeniern, die Rache der Opfer und die Geheimoperation Nemesis, Carl Ueberreuter Verlag, Wien 2024.

120) Kogon E., Der SS-Staat. Das System der deutschen Konzentrationslager, Verlag der Frankfurter Hefte, Frankfurt 1949.

121) Krüger G., Kriegsbewältigung und Geschichtsbewußtsein. Realität, Deutung und Verarbeitung des deutschen Kolonialkriegs in Namibia 1904 bis 1907, Vandenhoeck & Ruprecht Verlag, Göttingen 1999.

122) Künzler J., Im Lande des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918), 2. Auflage, Zürich 2004.

123) Künzler J., Dein Volk ist mein Volk. Das Lebensbild einer Heldin seltener Art, der Dänin Karen Jeppe, Heinrich Majer Verlag, Basel 1939.

124) Kuperman A. J., The limits of humanitarian intervention. Genocide in Rwanda. Brookings Institution Press, Washington 2001.

125) Lepsius J., Armenien und Europa: Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, 3. Vermehrte Auflage, W. Faber & Co Verlag, Berlin 1897.

126) Lepsius J., Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, unveränderte Neuauflage, Tempelverlag, Potsdam 1916.

127) Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Reprint, besorgt von der Deutsch-Armenischen Gesellschaft, der Ausgabe: Missionshandlung und Verlag, Potsdam 1930, Heidelberg 1980.

128) Lepsius M. R., Extremer Nationalismus, Strukturbedingungen vor der national-sozialistischen Machtergreifung, Kohlhammer Verlag, Stuttgart 1966.

129) Luchterhandt O., Berg-Karabachs Selbstbestimmungsrecht: Begründung und praktische Folgerungen. In: Soghomonyan, Vahram (Hg.), Lösungsansätze für Berg-Karabach/Arzach; Selbstbestimmung und der Weg zur Anerkennung, Nomos Verlag, Baden-Baden 2010.

130) Luchterhandt O., Arzachs Untergang – historische Tragödie und Alarmzeichen für die Republik Armenien. In: *Հայագիտության հարցեր*, 1(27), 2024, S. 33-77.

131) Mamdani M., When Victims become Killers. Colonialism, Nativism, and the Genocide in Rwanda. 2. Auflage. Fountain Publ. (u. a.), Kampala 2001.

132) Mandelstam A. N., Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechts, Verlag von Georg Stilke, Berlin 1931.

133) Mantei S., Von der Sandbüchse zum Kommunikationsnetzwerk - die Entwicklungsgeschichte des Post- und Telegraphenwesens in der Kolonie Deutsch-Südwestafrika (1884-1915), Dissertation, Halle (2004).

134) McGregor G., German Medals, British Soldiers and the Kalahari Desert, Namibia Scientific Society, Windhoek 2007.

135) Melber H.: Der Waterberg. In: Jürgen Zimmerer (Hrsg.): Kein Platz an der Sonne. Erinnerungsorte der deutschen Kolonialgeschichte. Campus Verlag, Frankfurt/Main 2013, S. 473-486.

136) Milatz A., Wähler und Wahlen in der Weimarer Repiblik, Schriftenreihe der Bundeszentrale für Poliische Bildung, Heft 66.

137) Müller A./Harutyunyan H. G./Tamcke M. (Hgg.), Das Kulturelle Erbe von Arzach. Արցախի մշակութային ժառանգությունը, Universitätsverlag Kiel, Kiel 2022.

138) Müller R., Ein Vikar als Völkermörder, *Frankfurter Allgemeine*, 12. März 2008.

139) Naimark Neumann M., Flammender Hass. Ethnische Säuberungen im 20. Jahrhundert, C. H. Beck Verlag, München 2004.

140) Nettelfield L. J./Wagner S. E., Srebrenica in the aftermath of genocide. Cambridge University ress, New York 2014.

141) Nicht Hollywood, sondern brutale Wahrheit. In: *Frankfurter Allgemeine Zeitung*, 6. Juni 2005.

142) Pottier J., Re-Imagining Rwanda: Conflict, Survival and Disinformation in the Late Twentieth Century. Cambridge University Press, Cambridge 2002.

143) Power S. „A Problem from Hell“. America and the Age of Genocide. Basic Books, New York 2002.

144) Proklamation des Generals v. Trotha an das Volk der Hottentotten vom 22. April 1905; abgedruckt in Die Kämpfe der deutschen Truppen in Südwestafrika. Bearbeitet von der Kriegsgeschichtlichen Abteilung I des Großen Generalstabes. Zweiter Band: Der Hottentottenkrieg. Mittler und Sohn, Berlin 1907.

145) Rahn W., Sanitätsdienst der Schutztruppe für Südwestafrika während der Aufstände 1904–1907 und der Kalahari-

Expedition 1908, Traditionsverband Ehemaliger Schutz- und Überseetruppen, Dillenburg 1997.

146) Richter H. A., Das Osmanische Reich im Ersten Weltkrieg, Harraspwitz Verlag, Bad Langensalza 2018.

147) Rohde D., Die letzten Tage von Srebrenica. Was geschah und wie es möglich wurde. Rowohlt Verlag, Hamburg 1997.

148) Sahakyan L., Turkification of the toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey" (եռալեզու՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն), Arod Books, Montreal 2010.

149) Serbische Schuldanerkennung in Srebrenica. In: *Neue Zürcher Zeitung*, 14. Juni 2004.

150) Sémelin J., Säubern und Vernichten. Die politische Dimension von Massakern und Völkermorden, Hamburger Edition Verlag, Hamburg 2007.

151) Rohrbach P., Die Wahrheit über Adana. In: *Der Chrisliche Orient*, 1909, Heft 9, S. 145-159.

152) Sukiasyan R., Hasanchelebi: A Killing Station for Armenian Men on the Sebastia deportation Routes, International Journal of Armenian Genocide Studies 9, no. 2 (2024), 1-17.

153) Sarkowicz H., Zwischen Sympathie und Apologie. Der Schriftsteller hans Grimm und sein Verhältnis zum Nationalssozialismus. In: Intellektuelle im Bann des Nationalsozialismus, Hrsg. Karl Corino, Hamburg 1980, S. 120-135.

154) Schäfer R., Mitteilungen. In: *Orient im Bild*, Jahrgang 1933, Oktober-Nummer, S. 51.

155) Schoenberner G., Der gelbe Stern. Die Judenverfolgung in Europa 1933 bis 1945, Bertelsmann Verlag, München 1978.

156) Siebels S., Die Flüchtlingskrise. In: Leonhard Harding (Hrsg.): Ruanda - der Weg zum Völkermord. Vorgeschichte - Verlauf – Deutung, Lit Verlag, Hamburg 1998, S. 183-196.

157) Simon S., 19 500 Beteiligte am Massaker von Srebrenica. In: *Die Welt*, 6. Oktober 2005.

158) Smith, B. F./Peterson, A. F., Heinrich Himmler, Geheimreden 1933 bis 1945 und andere Ansprachen, Propyläen-Verlag, Frankfurt/Berlin/Wien 1974.

159) Straus S., The order of genocide. Race, power, and war in Rwanda. Cornell University Press, Ithaca 2006.

160) Suljagic E., Srebrenica, Notizen aus der Hölle, Zsolnay Verlag, Wien 2009.

161) Stefan T., Unterlassene Hilfeleistung bei Völkermord? Die Vereinten Nationen und der Ruanda-Konflikt. In: Leonhard Harding (Hrsg.): Ruanda - der Weg zum Völkermord. Vorgeschichte - Verlauf – Deutung, Lit Verlag, Hamburg 1998, S. 159-170.

162) Ullrich V., "... deutsches Blut zu rächen". In: *Die Zeit*. 8. November 2013.

163) Wegner A. T., Die Austreibung des armenischen Volkes in die Türkei, Wallstein Verlag, Göttingen 2011.

164) Weinke A., Die Nürnberger Prozesse, C. H. Beck Verlag, München 2006.

165) Willis O., The Forgotten People in a Remembered Land: the Batwa and Genocide. In: Susan M. Thomson, J. Zoë Wilson (Hrsg.): Rwanda and the Great Lakes Region. S. 126–148.

166) Zischka J., Die NS-Rassenideologie: machttaktisches Instrumentoder handlungsbetimmendes Ideal?, Lang Verlag, Frankfurt a. M. 1986.

Համացանցային նյութեր

Հայերեն

167) «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, http://www.genocide-museum.am/arm/cultural_genocide.php

168) Էթնոցիդ. Արցախի մշակութային ժառանգությունը՝ ադրբեջանական վանդալիզմի թիրախ, http://www.genocide-museum.am/arm/24.08.22.php

169) Էրդողան. «Ապրիլի 24-ը հատուկ նշանակություն ունի հայազգի մեր քաղաքացիների և ամբողջ աշխարհի հայերի համար», https://www.amerikayidzayn.com/a/turkey-pm-erdogan-message-on-the-events-of-1915/1899424.html

170) Էրդողանը ցավակցություն է հայտնել ու հայերին և թուրքերին մաղթել «բուժել անցյալի վերքերը», https://arm.sputniknews.ru/20190424/erdoghany-cavakcel-e-hayerin-cexaspanutyan-ory-18250122.html

171) Համբարձումյան Ս., Բռնի տեղահանումից մեկ տարի անց. որ բնակավայրերում են հաստատվել արցախցիները, ինչ օժանդակություն են ստանում նրանք, https://fip.am/26000

172) Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի հայց է ներկայացրել Արդարադատության միջազգային դատարան, https://tert.am/am/news/2023/09/29/icj/4010028

173) Ադրբեջանի ու Ռուսաստանի միջև ստորագրված նոր հռչակագրի հետաքրքրական դրույթները, https://www.civilnet.am/news/651377/ադրբեջանի-ու-ռուսաստանի-միջև-ստորագրված-նոր-հռչակագրի-հետաքրքրական-դրույթները/

174) Տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը, https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2023/05/22/Nikol-Pashinyan-Press-Conference/

175) Բաքուն արձագանքել է Հայաստանի ԱԳՆ-ին |azatutyun.am|, https://infocom.am/hy/Article/115684

176) Այլևս չկա հակամարտություն, չկան հակամարտության կողմեր, կան ոճրագործներ և զոհեր. Արարատ Միրզոյան, https://www.youtube.com/watch?v=r-dJW-i4EvQ

177) 2023 թվականի նոյեմբերի 17-ին հրապարակվել է Արդարադատության միջազգային դատարանի «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով ժամանակավոր միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը, https://rilm.am/2023/12/29/

178) Ձևավորվող Ադրբեջանը և դրա հավակնությունները Արցախի հանդեպ, https://realkarabakh.com/hy/emerging-azerbaijan-and-claims-to-artsakh/

179) Հայաստանը ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի արտահերթ նիստ է պահանջել, https://mediamax.am/am/news/-foreignpolicy/52199/

180) Ովքեր ասում են՝ Ադրբեջանը 86,600 քկմ չէ, միաժամանակ ասում են՝ ՀՀ-ն 29,800 քկմ չէ. Փաշինյան, https://www.civilnet.am/news/701065/նրանք-ովքեր-ասում-են՝-ադրբեջանը-86-600-քկմ-չէ-մինույն-ժամանակ-ասում-են-որ-հի-ն-29-800-քկմ-չէ.-փաշինյան/

181) Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում քննվող գործեր: Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում Արդարադատության միջազգային դատարանում քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական գործ, https://rilm.am/ardaradatutyan-mijazgayin-dataran/

182) Հունգարիան արգելափակել է Ղարաբաղի հարցով ԵՄ 27 անդամների համատեղ հայտարարությունը. Ռիկարդ Յոզվիակ, https://www.azatutyun.am/a/32604870.html

183) Եվրոպական խորհրդարանի RC-B9-0393/2023 բանաձև. Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի հարձակումից հետո և Հայաստանի դեմ շարունակվող սպառնալիքները, https://eap-csf.am/hy/european-parliament-resolution-rc-b9-0393-2023-situation-in-nagorno-karabakh-after-azerbaijans-attack-and-the-continuing-threats-against-armenia/

184) ԵԽ-ն ընդունել է բանաձև՝ պահանջելով բոլոր հայ գերիների անհապաղ և առանց պայմանների ազատ արձակումը, https://armenpress.am/hy/article/1052946

185) Եվրոպական միության խորհրդարանը ընդունեց «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման

մասին» բանաձևը, http://www.parliament.am/committees.php?do=-show&ID=111228&showdoc=3036&cat_id=824&month=all&year-=2022&lang=arm

186) Ռուբեն Վարդանյանին խոշտանգել են. նրա փաստաբանները հայցեր են ներկայացրել Բաքվի դատարան, https://arm.sputniknews.ru/20241003/ruben-vardanjanin-khvoshtan-gel-en-nra-pastabannery-hajcer-en-nerkajacrel-baqvi-dataran--81427831.html

187) Եվրախորհրդարանի 2023 թվականի հունվարի 19-ի բանաձևը Լեռնային Ղարաբաղի շրջափակման մարդասիրական հետևանքների մասին (2023/2504 (rsp)), https://eap-csf.am/hy/եվ-րախորհրդարանի-2023-թվականի-հունվարի-19-ի/

188) Մշակութային եղեռն, https://www.mfa.am/hy/cultural-genocide/

Օտարալեզու

189) Übereinkommen über die Verhütung und Bestrafung des Völkermordes, https://www.voelkermordkonvention.de/ueberein-kommen-ueber-die-verhuetung-und-bestrafung-des-voelkermordes-9217/

190) Der Geschäftsträger der Deutschen Botschaft Konstantinopel, Radowitz, an Reichskanzler Bethmann-Hollweg, Telegramm vom 04.10.1916, Politisches Archiv des Auswärtigen Amtes (PA/AA), http://www.armenocide.net/armenocide/armgen-de.nsf/ $$AllDocs/1916-10-04-DE-002

191) The Crime of Genocide, https://digitallibrary.un.org/-record/209873?v=pdf

192) Die Enteignung aller vertriebenen und deportierten Juden, https://www.berlin.de/sen/finanzen/ueber-uns/architektur-geschichte/-artikel.5181.php

193) Entschuldigung, aber keine Entschädigung, https://www.fr.de/politik/entschuldigung-aber-keine-entschaedigung-11093754.html

194) Es ist Zeit, die Wahrheit zu akzeptieren. In: *Der Spiegel (online)*. 8. Juni 2021, https://www.spiegel.de/ausland/ratko-mladic-traenen-und-erleichterung-nach-genozid-urteil-aus-den-haag-a-8540-4abf-3980-43a5-acd1-80f512730ca1

195) France, Great Britain and Russia Joint Declaration, https://www.armenian-genocide.org/Affirmation.160/current_category.7/offset.50/affirmation_detail.html

196) Geburtssstunde des Völkerstrafrechts, https://museen.nuernberg.de/memorium-nuernberger-prozesse/themen/das-erbe-von-nuernberg/geburtsstunde-des-voelkerstrafrechts

197) Appell/Petition 2015, https://genocide-namibia.net/start/-appellpetition/#page-content

198) Hintergrundinformation: Die Vereinten Nationen und Darfur, https://unis.unvienna.org/unis/de/pressrels/2007/unisinf217.html

199) Jürgen Gispert, Christian Kolter: Betreff: Positionspapier der Arbeitsgruppe Außenpolitik der CDU/CSU-Bundestagsfraktion „20 Jahre Konflikt um Berg-Karabach: Ein neuer Anstoß für eine friedliche Konfliktlösung“, https://www.aga-online.org/wp-content/-uploads/Offener-Brief_CDU-PP_Karabach-Konflikt.pdf

200) Bölsche J., Die Peitsche des Bändigers, in: *Der Spiegel,* Nr. 3, 2004, https://www.spiegel.de/politik/die-peitsche-des-baendigers-a-1ee4b77d-0002-0001-0000-000029665604

201) Opferzahlen des Holocaust, tabellarisch, sortiert nach Ländern, https://www.zukunft-braucht-erinnerung.de/opferzahlen-des-holocaust/

202) Bundestags-Resolution: Erinnerung und Gedenken an den Völkermord an den Armeniern und anderen christlichen Minderheiten in den Jahren 1915 und 1916, https://www.genocide-alert.de/bundestags-resolution-erinnerung-und-gedenken-an-den-voelkermord-an-den-armeniern-und-anderen-christlichen-minderheiten-in-den-jahren-1915-und-1916/

203) Rede von Bundesministerin Heidemarie Wieczorek-Zeul anlässlich des 100. Jahrestages der Herero-Aufstände in Namibia, https://politische-reden.eu/BR/t/683.html

204) Der Völkermord an Sinti und Roma, https://www.dhm.de/lemo/kapitel/der-zweite-weltkrieg/voelkermord/voelkermord-an-sinti-und-roma

205) Florian Stark, „Todesursache: Machete, in den Armen seiner Mutter“, https://www.welt.de/geschichte/article191378491/Genozid-in-Ruanda-1994-37-9-Prozent-wurden-mit-Macheten-getoetet.html

206) The Report Of The International Panel Of Eminent Personalities To Investigate The 1994 Genocide In Rwanda And The Surrounding Events, http://www.aegistrust.org/images/stories/oaureport.pdf

207) Regula Vogt-Kohler, Begegnung mit dem Teufel, https://www.kirche-heute.ch/blog/begegnung-mit-dem-teufel/

208) Serbien: Vucic verurteilt "monströses Verbrechen" in Srebrenica. In: *Zeit-Online.* 11. Juli 2015, http://www.zeit.de/news/-2015-07/11/serbien-vucic-verurteilt-monstroeses-verbrechen-in-srebrenica-11104411

209) Der Nürnberger Prozess, https://www.planet-wissen.de/geschichte/deutsche_geschichte/nachkriegszeit/nuernberger-prozess-100.html

210) The ‘Hutu Ten Commandments’ as published in Kangura, No. 6 (December 1990), https://web.archive.org/web/200605120043-33/, http://www.trumanwebdesign.com/~catalina/commandments.htm

211) Luis Moreno Ocampos zweiter Genozid-Bericht zu Arzach/Berg-Karabach, https://www.aga-online.org/luis-moreno-ocampos-zweiter-genozid-bericht-zu-arzach-berg-karabach/

212) Versöhnung nach 100 Jahren, https://web.archive.org/web-/20051108135610/, http://www.trotha.de/aktuelles.html

213) Völkermord an den Herero und Nama, https://de.wikipedia.org/wiki/Völkermord_an_den_Herero_und_Nama

214) Expert Opinion: Genocide against Armenians in 2023, By Luis Moreno Ocampo, https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/

215) Deutsch-Armenische Juristenvereinigung e.V., Die aktuelle Rechtslage zum Status der Republik Artsakh (Berg-Karabach), https://dearjv.de/wp-content/uploads/2020/12/Rechtslage_Artsakh_-DEARJV.pdf)

216) Erklärung über Grundsätze des Völkerrechts betreffend freundschaftliche Beziehungen und Zusammenarbeit zwischen den Staaten im Einklang mit der Charta der Vereinten Nationen, http://www.un.org/depts/german/gv-early/ar2625.pdf.

217) Gründer M., 1904: Der Herero-Aufstand – der deutsche Sündenfall, https://www.historeo.de/datum/1904-herero-aufstand

218) Reichstagswahl 1907, https://www.spd-geschichtswerkstatt.de/wiki/Reichstagswahl_1907

219) Resolution der Generalversammlung, verabschiedet am 26. November 1968, https://www.un.org/depts/german/gv-early/ar2391-xxiii.pdf

220) Europäisches Übereinkommen über die Unverjährbarkeit von Verbrechen gegen die Menschlichkeit und Kriegsverbrechen, https://rm.coe.int/16800761c8

221) The Lemkin Institute looks back at genocide and prevention in 2023 with 32 news synopses written from a genocide prevention perspective., https://www.lemkininstitute.com/reports-2/2023-year-in-review

222) Herero und Nama. Deutschland erkennt Kolonialverbrechen in Afrika als Völkermord an, https://www.spiegel.de/politik/deutschland/herero-und-nama-deutschland-erkennt-kolonialverbrechen-in-afrika-als-voelkermord-an-a-e0c59c97-4e80-4adc-9f1a-f887fc8fc348

223) Revolution und Räterepublik in Bayern (1918/19), https://hdbg.eu/koenigreich/frontend.php/ereignisse/index/herrscher_id/4/id/121

224) Namibian: Genozid-Einigung steht kurz bevor, https://hitradio.com.na/namibian-genozid-einigung-steht-kurz-bevor/

225) Brandenburgische Landeszentrale für politische Bildung, Holocaust/ Shoah, https://www.politische-bildung-brandenburg.de/-lexikon/holocaust-shoah

226) Internationales Straftribunal für Ruanda (ICTR), https://www.humanrights.ch/de/ipf/grundlagen/durchsetzungsmechanismen/internationale-strafgerichte/ruanda-tribunal/

227) Genozid als „intertemporales“ Völkerstrafrecht: Zur Bewertung historischer Sachverhalte am Maßstab der Völkermordkonvention, https://www.bundestag.de/resource/blob/863464/fec2530b6a8fcb3f751605f88e912d6c/WD-2-053-21-pdf-data.pdf

228) 18. Juli 2016 - Zur Antwort der Bundesregierung auf eine „Kleine Parlamentarische Anfrage“ der Fraktion „Die Linke“ vom 06. Juli 2016, http://www.windhuk.diplo.de/Vertretung/windhuk/de/-07/__Pressemitteilungen/PM__2016/pm-37-antwort-bundesregierung-anfrage-6-july-2016.html

229) Sueddeutsche.de–Gedenken an Herero-Genozid. Gefährliche Versöhnungsreise, https://web.archive.org/web/20071213011513/, http://www.sueddeutsche.de/,ra2m2/panorama/artikel/839/136568/

230) Reichstag des Kaiserreichs 1895–1918, https://www.reichstagsprotokolle.de/rtbiiauf.html

231) Zimmerer J., Widerstand und Genozid: Der Krieg des Deutschen Reiches gegen die Herero (1904–1908), https://www.bpb.de/shop/-zeitschriften/apuz/186874/widerstand-und-genozid-der-krieg-des-deutschen-reiches-gegen-die-herero-1904-1908/

232) Völkerstrafrecht und der Internationale Strafgerichtshof, https://www.auswaertiges-amt.de/de/aussenpolitik/regelbasierte-internationale-ordnung/voelkerrecht-internationales-recht/voelkerstrafrecht

233) Genozid als Politikum, https://www.amnesty.ch/de/ueber-amnesty/publikationen/magazin-amnesty/2004-4/genozid-als-politikum

234) Die Entschädigungszahlungen an jüdische Opfer des Nationalsozialismus, https://www.bundestag.de/resource/blob/410502/23e348e9f5c6c046abd707258f284eae/wd-4-086-07-pdf-data.pdf

235) Amnesty Report: Ruanda 2013, https://www.amnesty.de/-jahresbericht/2013/ruanda#internationalerechtsprechung

236) Völkermord-Klage abgewiesen. In: *Deutsche Welle.* 10. Juli 2008. https://www.dw.com/de/völkermord-klage-gegen-un-abgewiesen/a-3475281

237) Research and Documentation Center Sarajevo zu den Opferzahlen unter den Serben in der Region Bratunac/Srebrenica zwischen April 1992 and Dezember 1995, https://web.archive.-org/web/20080511233924/http://www.idc.org.ba/project/the_myth_of_bratunac.html

238) Srebrenica: Russland blockiert Uno-Resolution zu Massaker. In: *Der Spiegel*, 8. Juli 2015, https://www.spiegel.de/-politik/ausland/srebrenica-russland-blockiert-uno-resolution-zu-massaker-a-1042719.html

239) 26. April 1933 - Die "Geheime Staatspolizei" (Gestapo) wird gegründet, https://www1.wdr.de/stichtag/stichtag7435.html

240) Der Madagaskar-Plan, https://www.dhm.de/lemo/kapitel/-der-zweite-weltkrieg/voelkermord/madagaskar-plan

241) Erstinstanzliches Urteil gegen Krstić, https://www.icty.org/x/cases/krstic/tjug/en/krs-tj010802e.pdf

242) Srebrenica massacre: Dutch peacekeepers partly responsible, court rules. Deutsche Welle, 27. Juni 2017, https://www.dw.com/en/-srebrenica-massacre-dutch-peacekeepers-partly-responsible-court-rules/a-39431423

243) Mein politisches Testament, https://www.spiegel.de/politik/-ich-selbst-und-meine-gattin-waehlen-den-tod-a-687c8090-0002-0001-0000-000046272805

244) Report of the Secretary-General pursuant to General Assembly resolution 53/35, http://repository.un.org/bitstream/handle/-11176/227626/A_54_549-EN.pdf

245) Bosnienkrieg: Niederlande haften für den Tod von drei Srebrenica-Opfern, Zeit (online), 6. September 2013, https://www.zeit.de/politik/ausland/2013-09/niederlande-gericht-urteil-voelkermord-srebrenica

246) Vertrag zwischen Deutschland, Österreich-Ungarn, Frankreich, Großbritannien, Italien, Rußland und der Türkei. (Berliner Vertrag), https://de.wikisource.org/wiki/Deutsches_Reichsgesetzblatt_1878

247) Aserbaidschan: Die Kaviar-Diplomatie. Wie sich der Regierungsclan in Baku die Macht erhält - ohne sich um die Ermahnungen aus Europa zu scheren. In: *Der Tagesspiegel*, 22. Oktober 2012 https://www.tagesspiegel.de/politik/die-kaviar-diplomatie-2221072.html

248) Wandler R., Auf Assads Einladung. In: *taz.de*, 29. April 2017, https://taz.de/Spanischer-Politiker-in-Syrien/!5400026/

249) Lobbyarbeit im Bundestag: Geld aus Aserbaidschan für deutschen Abgeordneten Michael Fuchs. In: *Der Tagesspiegel*, 2. Juni 2013, https://www.tagesspiegel.de/politik/geld-aus-aserbaidschan-fur-deutschen-abgeordneten-michael-fuchs-2375182.html

250) Caviar Diplomacy How Azerbaijan silenced the Council of Europe, https://www.esiweb.org/pdf/esi_document_id_131.pdf

251) Neukirch R., Diktators Traum. Das autoritäre Regime in Aserbaidschan will vor dem Eurovision Song Contest im kommenden Jahr sein Image verbessern. Deutsche Politiker sollen dabei helfen. In: *Der Spiegel*, 2. Januar 2012, https://www.spiegel.de/politik/-diktators-traum-a-3283c582-0002-0001-0000-000083422496?-context=issue

252) Europe's caviar diplomacy with Azerbaijan must end. In: *EUobserver*, 26. November 2012, https://euobserver.com/opinion/-118320

253) UK at centre of secret $3bn Azerbaijani money laundering and lobbying scheme. In: The Guardian, 4. September 2017, https://www.theguardian.com/world/2017/sep/04/uk-at-centre-of-secret-3bn-azerbaijani-money-laundering-and-lobbying-scheme

254) Prochnow M., Karin Strenz: Ich beantworte keine Fragen, https://www.ostsee-zeitung.de/mecklenburg-vorpommern/karin-strenz-ich-beantworte-keine-fragen-PZIEBD7THXYBEKOBJCNX6YOE5U.html

255) DISGRACED AZERBAIJAN AND THE END OF ELECTION MONITORING AS WE KNOW IT, https://www.esiweb.org/pdf/esi_document_id_145.pdf

256) Herr Lintner geht auf Reisen, In: sueddeutsche.de., 5. September 2017, https://www.sueddeutsche.de/politik/lobbyismus-herr-lintner-geht-auf-reisen-1.3652315

257) Harding L./Barr C./Nagapetyants D., Everything you need to know about the Azerbaijani Laundromat. *The Guardian*, 4. September 2017, https://www.theguardian.com/world/2017/sep/04/everything-you-need-to-know-about-the-azerbaijani-laundromat

258) Aserbaidschan-Connection – Neue Vorwürfe im Fall Strenz. ARD (SWR), Report Mainz, 17. Oktober 2017, https://www.swr.de/report/aserbaidschan-connection-neue-vorwuerfe-im-fall-strenz/-/id%3D233454/did%3D20456174/nid%3D233454/-148au5o/index.html

259) Bundestag verhängt hohe Geldstrafe gegen CDU-Abgeordnete Strenz, https://www.goettinger-tageblatt.de/-Nachrichten/Politik/Deutschland-Welt/Lobbyismus-fuer-Aserbaidschan-Bundestag-verhaengt-hohe-Geldstrafe-gegen-CDU-Abgeordnete-Strenz

260) Munziger H./Obermayer B./Ratzesberger P., Die Aserbaidschan-Connection einer CDU-Abgeordneten. In: Süddeutsche Zeitung, 19. September 2017, https://www.sueddeutsche.de/-politik/bundestag-die-aserbaidschan-connection-1.3671979

261) Baku-Connection: CDU-Abgeordnete bekam dubiose Gelder aus Aserbaidschan, https://www.lobbycontrol.de/lobbyregister/baku-connection-cdu-abgeordnete-bekam-dubiose-gelder-aus-aserbaidschan-36378/

262) Immunität von Karin Strenz und Alexander Gauland aufgehoben, https://www.bundestag.de/dokumente/textarchiv/2020/-kw05-de-immunitaet-679458

263) Reyer M., Korruptionsverdacht - Strenz wich Fragen zu Aserbaidschan bereits 2015 aus – heute ermittelt die Staatsanwaltschaft. abgeordnetenwatch.de, 21. März 2020, https://www.abgeordnetenwatch.de/recherchen/lobbyismus/strenz-wich-fragen-zu-aserbaidschan-bereits-2015-aus-heute-ermittelt-die-staatsanwaltschaft

264) Müller-Töwe J., Ermittler werfen Unionspolitikern Bestechung und Bestechlichkeit vor. T-Online, 30. Januar 2020, https://www.t-online.de/nachrichten/deutschland/parteien/id_872493-24/bestechung-razzia-bei-eduard-lintner-csu-und-karin-strenz-cdu-.html

265) Transparency Deutschland begrüßt Ermittlungsverfahren gegen Karin Strenz und Eduard Lintner wegen Korruption, *Transparency Deutschland*, 30. Januar 2020, https://www.transparency.de/aktuelles/detail/article/transparency-deutschland-begruesst-ermittlungsverfahren-gegen-karin-strenz-und-eduard-lintner-wegen-ko/

266) Gavrilis P., Affären um Masken und Aserbaidschan belasten Bürgervertrauen. In: Deutschlandfunk. 11. März 2021, https://www.deutschlandfunk.de/affaeren-um-masken-und-aserbaids-chan-die-cdu-muss-den-sumpf.720.de.html?dram:article_id=493955

267) Aserbaidschan-Affäre: Lebenslanges Hausverbot für deutsche Abgeordnete beim Europarat, *Lobbycontrol*, 28. Juni 2018, https://www.lobbycontrol.de/aus-der-lobbywelt/aserbaidschan-affae-

re-lebenslanges-hausverbot-fuer-deutsche-abgeordente-beim-europarat-50044/

268) Unionspolitiker – Kuscheln mit Diktatoren. In: tagesschaude. 13. März 2021, https://www.tagesschau.de/investigativ

269) WELT: Karin Strenz und Eduard Lintner: Razzia bei Unionspolitikern. In: *DIE WELT.* 30. Januar 2020, https://www.welt.de/politik/deutschland/article205472235/Karin-Strenz-und-Eduard-Lintner-Razzia-bei-Unionspolitikern.html

270) Anklage gegen zwei Ex-Unionspolitiker wegen Korruption. In: tagesschau.de. 29. Januar 2024, https://www.tagesschau.de/inland/innenpolitik/muenchen-anklage-lintner-fischer-100.html

271) Situation in Nagorno-Karabakh after Azerbaijan's attack and the continuing threats against Armenia, https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356_EN.html

272) Turkey's Erdogan: Armenian attitude towards Azerbaijan will have consequences. By Reuters, September 14, 2022, https://www.reuters.com/world/asia-pacific/turkeys-erdogan-armenian-attitude-towards-azerbaijan-will-have-consequences-2022-09-14/

273) Philips D. L., Turkey's Erdogan Is Fueling Aggression Against Armenia, October 16, 2020, https://nationalinterest.org/blog/buzz/turkeys-erdogan-fueling-aggression-against-armenia-170763

274) Azerbaijan's attack on Nagorno-Karabakh raises the risk of genocide against ethnic Armenians in the region, 22 Sep 2023, https://reliefweb.int/report/azerbaijan/azerbaijans-attack-nagorno-karabakh-raises-risk-genocide-against-ethnic-armenians-region

275) After COP 29: What's Fueling Aliyev's Rage?, Dec 17, 2024, https://evnreport.com/politics/aliyevs-rage-after-cop29/

276) Unterschriften und Ratifikationsstand des Vertrags 082. https://www.coe.int/de/web/conventions/full-list;?module=signatures-by-treaty&treatynum=082

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Աշոտ Նորայրի Հայրունի

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Ավետիսյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Տպագրված է «ՄՌԱՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում:
Կոտայքի մարզ, Ջրվեժ, գ. Չորաղբյուր, 99 թաղ, 41

Ստորագրված է տպագրության՝ 17.06.2025:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 26.625:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am